2/062)

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՁԱԽԻ ԹԵՄԻ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դանդատարան

Դ



ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ
ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ
ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

© National Library of Armenia OCR by Portmind



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ http://www.armin.am

Էլ. փոստ՝ info@armin.am

© National Library of Armenia

Հանդէս

Դ 1993

5 Երանելի Ներսէս Լամբրոնացու ներբողն Աստուծոյ Ամենասուրբ Հոգու Գալստեան մասին

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

22 ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ Յաղագս հանդերձելոյ (շարունակութիւն)

45 ԱԲԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՂԼՈՒԳԵԱՆ Համառօտ ակնարկ Հայ Եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութեան գրականութեան

72 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը (շարունակութիւն)

95 ՊԱՐՈՅՐ ՍՈՒՐԱՊԵԱՆ Դաւանական հանդուրժողութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ—ԺԳ դարերի Հայաստանում

109 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Հայ Եկեղեցու աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում (շարունակութիւն)

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

134 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Ս. Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը»

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

136 Ա. Ամենասուրբ Երրորդութեան մասին

138 Բ. Սուրբ Երրորդութեան Անձերի մասին

150 ԺՋ. Մարտիրոսների մասին

154 ԺԹ. Յորդորակ խոստովանական ապաշխարութեան

163 Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ասած աղօթքը, երբ մէկը որոգայթի մէջ է ընկնում

165 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Ս. Բարսեղ Կեսարացու՝ Սուրբ Հոգուն նուիրուած ճառի հայերէն թարգմանութիւնը

174 Սուրբ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացիոց ընդդէմ այնոցիկ...

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

216 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Անանիա Սանահնեցու «Մատթէի մեկնութիւնը»

233 Անանիայի հայոց վարդապետի՝ ի խնդրոյ...

Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ Արամեան

Պատ. քարտուղար՝
Տիգրան Խաչատրեան

Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս Կիզողեան

Վերստուգող սրբագրիչ՝
Շուշան Վարդանեան

Նկարիչ՝
Արմէն Քիւրքչեան

© National Library of Armenia

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

262 Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետի, նրա հետ եւ՝ սուրբ Մարուգէ ճգնաւորի վարքը
283 Սուրբ Բարսեղ Կեսարացու վարքը
295 Սուրբ Յովհաննէս Ոսկեբերանի վարքը

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

306 Թամար Մոկացի
309 Անդրէաս քահանայ
314 Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան

ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

318 ՎԻԳԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ Թուային խորհրդաբանութիւնը խորանների մեկնութիւններում
324 ԼԵՒՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ Միջնադարեան շարականը մշակութաբանական տեսանկիւնից
335 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ Պատկերուսոյց գիրք (շարունակութիւն)



ԳԱՆՁԱՍԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
375019, ԵՐԵՒԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24 Գ
հեռ. 271520

ԵՐԵՒԱՆ 1993

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ.Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ Տ. ՊԱՐԳԵՒԻ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՑ

ՍՈՑՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՈՒՄ Է ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՎԱԶԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

© National Library of Armenia

Ներսէս Լամբրոնացին (1153-1198 թթ.) հայ Եկեղեցու ականաւոր դէմքերից է: Նա յայտնի է ոչ միայն որպէս ազգային-եկեղեցական գործիչ, այլ նաեւ՝ որպէս հմուտ մատենագիր, որի մատենագրական ժառանգութիւնը մեծ ներդրում է աստուածաբանական եւ մեկնողական գրականութեան մէջ[1]:

Լամբրոնացու գրական ժառանգութեան մէջ մեծ տեղ են զբաղեցնում ներբողները, որոնց մէջ առանձնանում է Հոգեգալստեանը նուիրուած ներբողը՝ իր գործնական կիրառութեամբ եւ Հայ Եկեղեցու Ճաշոցում[2] իր առանձնայատուկ դիրքով: Ճաշոցի մէջ մուտք գործած ընթերցուածներից ամենաերկարն է սա, որին կարող է մօտենալ միայն Եղիշէ վարդապետի՝ Այլակերպութեանը նուիրուած ճառը:

Այս ներբողում «ներբողաբանն ի վեր կը հանէ մարդկային ազգի փրկագործութեան խորհուրդն ի ձեռն Որդւոյ եւ յետ այնորիկ գալստեան Սուրբ Հոգւոյն... Մտքի յափշտակութեան եւ հոգւոյ երկնապաց թռիչներու մէջ խորասուզուած անձն է, որ կը գրէ ոգով եւ աւիւնով՝ իւր գրութեան իւրաքանչիւր տողին նորօրինակ կենդանութիւն մը տալով կարծես»[3]: Այս պատճառով Գ. Յակոբեանը չի վարանել իր մատենագրութեան մէջ Լամբրոնացու սոյն ներբողը (միւս ներբողների հետ) տեղադրել չափածոյ ստեղծագործութիւնների շարքում՝ համարելով այն արձակ բանաստեղծութիւն[4]:

Մենք հետու ենք սոյն ներբողը բնագրագիտական, բանասիրական կամ վարդապետական վերլուծման ենթարկելուց: Արդէն իսկ Սմբատ եպիսկոպոսի եւ Գ. Յակոբեանի մէջբերումների եւ Վաղարշապատի Ճաշոցի համապատասխան հատուածների համեմատութիւնից զգացւում է, որ գոյութիւն ունեն բնագրային լուրջ տարբերութիւններ: Ուստի չի կարելի սոյն գործը մանրամասն գիտական քննութեան ենթարկել՝ առանց վերջինիս քննական բնագիրն ունենալու: Մեր մօտեցումը Հոգեգալստեան ներբողի նկատմամբ զուտ գործնական է՝ հիմնուած Եկեղեցու ծիսակարգում իր կիրառութեամբ. այն ընթերցւում է Հոգեգալստեան կիրակի օրը՝ երեկոյեան ժամերգութեան ընթացքում (այժմ գրեթէ չի կարդացւում իր ծաւալի եւ գրաբար տեքստի պատճառով): Ուստի մեր նպատակն է՝ սոյն տեքստի արեւելահայերէն թարգմանութեամբ փորձել վերակենդանացնել բանաստեղծական այս անզուգական գործի կիրառութիւնը մեր Եկեղեցում:

Թարգմանութիւնը կատարուած է ըստ վերոյիշեալ վաղարշապատեան Ճաշոցի:

Միքայէլ վրդ. Աջապահեան

1 Լամբրոնացու կեանքի եւ մատենագրական վաստակի լիարժէք քննութիւնը տե՛ս Սմբատ եպսկ. Սաւատէթեան, «Ներսէս Լամբրոնացի», Անթիլիաս, 1981. նաեւ՝ Գրիգոր Յակոբեան, «Ներսէս Լամբրոնացի», Երեւան, 1971:
2 Տե՛ս «Ճաշոց գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1872, էջ 466-474:
3 Տե՛ս Սմբատ եպսկ. Սաւատէթեան, «Ներսէս Լամբրոնացի», էջ 149-150:
4 Տե՛ս Գ. Յակոբեան, «Ներսէս Լամբրոնացի», էջ 205-208:



ՏՕՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԵՐԱՆԵԼԻ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՆԵՐԲՈՂՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

Սրտիս բաղձանքի սիրուց ստիպուած եմ իմ աղքատ մտքի խօսքերը նուիրել այս մեծ օրուան: Իմ տկարութեան համար աղօթքի պարգեւնե՛ր հանգանակեցէք, հանդիսասդի՛ր ժողովուրդ:

Տուէ՛ք ինձ այսօր աշխարհին տրուած շնորհները, որպէսզի իմ անձն անվեհերութեամբ նետեմ Աստուծոյ գիտութեան իմաստների խորքերը եւ սեղանաւոր լինեմ հոգիները պարարտացնող աննպաստական կերակրին:

Այսօր երկրի վրայ առատ ձիրք հեղուեց. մաղթենք, որ նրա նշոյլներից ճառագայթի մեր մտքի հայեացքների մէջ եւ առաջնորդի աստուածային խօսքերին հետեւելու շաւիղներով:

© National Library of Armenia

Ո՛վ սքանչելիք, այն, ինչ աղօտ ակնարկութեամբ նկատել էին ցանկանում հրեշտակները, այսօր, շնորհով իջնելով ստորին գաւառները, սփոռեց:

Եւ ո՞վ է, որ չի յուսայ Նրա պարգեւները վայելել:

Սուրբ Հոգին, Ում փափագելով՝ բերանաբաց մնացին սերովբէները ու քերովբէները եւ Նրա որպիսութիւնը չկարողացան նկատել, այսօր, իրապէս իջնելով, մարդկանց յագեցրեց Իր անճառ խորհուրդների գիտութեամբ:

Որոնց հետ եւ ես եմ սպասաւորում՝ Նրա առատութիւնից իմաստուն կաթիլներ ընդունելու համար:

Արդարեւ, մարդն իր ձեռքը երկարեց Կեանց ծառին, որից նախկինում հեռու վանուեց, վերցրեց, կերաւ եւ անձին յաւիտենական կենդանութիւն սեփականացրեց:

Եւ ո՞վ է այս շնորհի միջնորդն ու մատակարարը, ուրիշ ո՞վ, եթէ ոչ մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ կեանքը, լոյսը, ճանապարհը, դուռը, հովիւը, քահանայապետը, միջնորդը, բարեխօսը, յոյսը, կարապետը. Ով ինքնիշխան զօրութեամբ անցաւ երկինքների երկինքներով եւ հրաշալի կերպով մտաւ վարագոյրի ներքին կողմը՝ անճառելի հիացմամբ եւ մեզ համար Հայր Աստուծոյ դիմաց բարեխօս դրեց այն առհաւատչեան, որ մարդկանցից է:

Ուստի փոխարէնն առատ պարգեւ վերցնելով՝ տարածեց երկրում, որից զմայլուելով՝ արբեցինք եւ նախամայր Եւայի տրտմութեան երկունքները յաւէտ մոռացանք:

Այսօր աշխարհի պատրանքների խաւարի մէջ ընկղմուածներս ընդունեցինք հոգիները պայծառացնող եւ դէպի անմահների երկիրն առաջնորդող իմանալի լոյսը:

Այսօր այն թախծութեան զգեստը, որն ընդունեցինք մեր հայր Ադամից, դէն նետեցինք, որովհետեւ նոր Ադամը մեզ զարդարեց ոսկեհուռ պաճուճանքով եւ պսակներով:

Այսօր սքանչելի հուրը, երկնաւոր բոցաճաճանչ շողյլներով արտափայլելով երկրի վրայ, բորբոքուելով կիզեց մարդկանց միջից անէծքի մեղքի փուշն ու սաստիկ պատիժները:

Այսօր հրեղէն լեզուների բախտին արժանացած ազգը, որ անմիտ անասունների էր հաւասար, կրկին ստացաւ խօսքի շնորհը՝ պատկերակից գտնուելով իր Արարչին:

Այսօր Հոգու քաղցր ցօղի սաստիկ հնչիւնը որոտաց երկրի վրայ, եւ անէծքի բարբառը, որն Ադամի պատճառով շարժուեց նրա վրայ, օրհնութեամբ փոխանակուեց:

Այսօր անապականութեան անուշահոտ կնդրուկի բուրմունքը, ծաւալուելով եւ մահուան մառախլապատ թանձրութեան ծուխը ցրելով, անմահութիւն հաստատեց:

Այսօր զգալի պատարագը, որին զգալի աշխարհն ուղարկեց դէպի իմանալի գաւառը, փոխարէնն առհաւատչեայ ընդունեց իմանալի Հոգուն, Որը սոյն զգալի տարրը նորոգեց աննիւթական Քաղաքի պատկերի ձեւով:

Ո՛վ երկնայինների եւ երկրայինների մեծ տուրեւառութեան շահ:

Որովհետեւ սրանք մարմին տուեցին եւ նրանցից վերցրին Հոգին. Ադամի տունը Քրիստոսին ընծայեց, եւ Աստուծոյ տունը Նրա փոխարէն միխթարիչ Սուրբ Հոգով հատուցեց:

Մարդիկ մարդուն տուեցին Աստծուն, եւ Աստուած Աստծուն տուեց մարդկութեանը:

Սա է տուրեւառութիւնը՝ Աստուծոյ արդարութեան քարոզը:

Նախ մեզանից՝ խաղաղութիւնն Քրիստոս, Ով, ցանկապատի միջնորմը քանդելով, երկուսին մէկ դարձրեց, եւ ապա՝ Աստուծոյ աւետիքի հնչումը, որը խաղաղութիւն աւետարանեց հեռաւորներին ու մերձաւորներին:

Նախապէս Որդու նուաճած բնութիւնը Հօր կամքը դէպի քաղցրութիւն դրդեց, եւ ապա, Հոգին գալով, երկրաւորներին երկնայինների հանդէսին խառնեց:

Նախ Քրիստոս, խաչի մահուանը հնազանդուելով, թշնամութեանն Իր անձի մէջ նահանջի մատնեց, եւ ապա Հոգին, մեր տկարութեանը թիկունք կանգնելով, Հօր մօտ բարեխօսեց:

Աստուծոյ լայն խորհուրդն ու գիտութեան ընդարձակ առաւելութիւնն է երեւում, եղբայրնե՛ր, քանզի Նրա արդարութիւնը լեռներ են, իսկ իրաւունքները՝ բազում խորութիւններ, ինչպէս վկայեց մարգարէն:

Պօղոսը աշակերտներին մաղթում է ընդունել այս իմաստութեան հոգին, որ հիացնում է քննողներին եւ աւելացնում Աստուծոյ հանդէպ փափագի իղձը:

Ինչի՞ համար էր Որդու մարմնանալը, եւ ինչո՞ւ մարմնանալու հետ չեղաւ աշխարհի փրկութիւնը... Ի՞նչ պատճառով է անպարտին անհրաժեշտ նախատինքի խաչը, եւ ինչո՞ւ դրանից յետոյ մարդիկ կատարեալ չեղան...

Ինչո՞ւ Որդու հետ շրջած եւ բնակուած աշակերտները տգէտ մնացին եւ ի՞նչ պատճառով Հոգու իջնելով միայն, այնքան շնորհներով զարդարուելով, պսակուեցին...

© National Library of Armenia

Ինչո՞ւ Քրիստոսի այնքան մեծամեծ նշանները ոչ մէկին չհամոզեցին, իսկ Պետրոսն այսօր մի ելոյթով երեք հազարին աշակերտ դարձրեց, որն արժի քննել եւ Աստուծոյ իմաստութեան գանձերը սրտի շտեմարաններում ամփոփել՝ կարողանալու համար նախ սրտով արդարութեան հաւատալ եւ ապա՝ բերանով փրկութիւնը խոստովանել...

Որովհետեւ փրկագործութեան եղանակը զօրութեամբ չէ, այլ՝ իրաւամբ ու արդարութեամբ:

Որպէսզի Աստուծոյ ամենակարող զօրութեան հետ նաեւ ամենաբաւ ողորմութիւնը հաստատուի երկնքում եւ երկրում:

Քանի որ Նա, Ով մարդուն Իր բարերարութեան պատկերով բարի արարեց եւ նրան բանսարկուի նախանձից դաւաճանուած ու մեռած տեսաւ, իրաւունքի արդարութեան համաձայն չկամեցա՛ խաբեութեամբ բռնուածին թողնել որսողի ձեռքում:

Ասաց համագոյական Բանին. «Իջի՛ր, հաղորդուի՛ր այն բնութեան հետ, որ բարու մէջ ստեղծեցինք. չլինի թէ բնաւորապէս է բխում չարութեան այն ծուխը, որ Իմ առջեւ է բարդւում:

Իմացի՛ր, որովհետեւ եթէ բնական կրքի համաձայն է տկարանում Իմ օրէնքի նկատմամբ, անմեղ չէ պատուհասից, որը նա չափով լցնում է իր վրայ:

Իսկ եթէ բնութիւնից օտար ու եկամուտ են այդ արկածները, խաբողին դատապարտի՛ր յանդիմանելով, իսկ նրան նորոգի՛ր ողորմութեամբ եւ գթութեամբ»:

Հօրից այս պատուէրն ստանալով՝ Բանը հաղորդուեց մարմնի հետ եւ մարմինը միաւորեց Աստուծոյ հետ. միաւորումը՝ անճառ, եւ էութիւնների յատկութիւնը՝ անշփոթ:

Որպէսզի ճանաչի մարմնի ողջ ընթացքը՝ անձամբ անձի վրայ փորձելով:

Նրանով մնաց երեսուն տարի եւ բնութեամբ օտար ներգործութեան չհաղորդուեց:

Եկաւ Յորդանան եւ, ամենակատար մաքրութիւնը Հօրը նուիրելով, Նրա կողմից դաւանուեց որպէս հաւասարապատիւ սիրելի Որդի:

Հոգու կողմից տարուեց բանսարկու թշնամու մօտ՝ մարտնչելու եւ ճանաչեց թունաւոր օձի նետերի մեքենայութիւնները, որը բնութեան օրէնքի համաձայն մոլորեցնում էր սրանց՝ դէպի մեղքերի վիհը խոտորելով:

Կերակուրներից հրաժարուեց արդարների գնդի դասերին հաւասար եւ մարմնին թոյլ տուեց շարժուել ըստ իր անհրաժեշտ ցանկութեան:

Իսկ թշնամին, առընթեր կանգնած, սպասում էր, եւ որքան Նա անձնիշխան կամքով կերակուրներ փափագելուն չէր ձգտում, նա էլ մեքենայութիւնները նպատակի մէջ ձգել չէր համարձակւում:

Եւ երբ շարժուեց, յոյս դրեց պատկանդարանից[1] դէպի Տէրը սրուած նետեր արձակելու վրայ:

Ասում է. «Քարերը հա՛ց դարձրու Քո զօրութեամբ, որ այդքան պահքի ժուժկալութեան տոկացիր, եւ արարի՛չ եղիր՝ Աստծուն հակառակ»:

Եւ, լսելով, թէ գրուած է, որ ամէն մարդ Աստուծոյ խօսքով առաւել է ապրում, քան հացով, հնար էր փնտրում՝ գրքերով գողանալու Նրան:

Այնժամ ճանաչեց որոգայթները, խայտառակեց մեքենայութիւնները, պատռեց պարուրուած թակարդը, որոնցով մարդկանց էր որսում:

Իր Հօր եւ հրեշտակների առջեւ բացայայտեց եւ ինքնիշխանութեամբ հեռու վանեց խաբողին՝ այս խաբուած բնութեան օրէնքով:

Մանուկ Դանիէլն արդար դատաստան տեսաւ. ամաչեցրեց չար ծերերին՝ մարդկութեան զրպարտիչներին, որոնք իրենց մեղքերը նրա վրայ էին բարդում:

«Դու, որ հնացած ես չարութեան օրերով,- ասում է,- այժմ եկանհասան քո մեղքերը, որ գործում էիր նախապէս, որովհետեւ անիրաւութեան դատաստանով էիր դատում եւ մարդկանց անմեղ բնութիւնը քեզ կցորդ լինելու դատապարտում:

Քո չար նախանձը մոլորեցրեց քեզ, եւ մարդատեացութեան ախտը շրջեց քո սիրտը:

Այդպէս էիք խաբում մարդկանց որդիներին, եւ նրանք վախից ենթարկւում էին ձեր կամքին, սակայն երկնաւոր Հօր Որդին անձի վրայ չընդունեց ձեր անօրէնութիւնները»:

Այս ասելով եւ ոտքի տակ կոխելով ծերացած օձին՝ Իր Հօր եւ հրեշտակների առջեւ յայտնի դարձրեց առաջին յաղթութիւնն ու բնութեան անմեղութիւնը:

Այնժամ, երբ չարին յաղթեց բնական կերպով, հրեշտակները մօտեցան եւ ծառայեցին Նրան պէտք եղածով. եւ մեր բնութեամբ արդարացած Զօրաւորը բազկով տիրեց հակառակորդ դեւերի բնութեան վրայ:

---

1 պատկանդարան - նետադարան, կապարճ, որտեղ պահւում են նետերը

© National Library of Armenia

Արդ, քանի որ միայն Նա չարից անփորձ եւ Աստծուն հաճելի գտնուեց, այդ պատճառով սկսեց մարդկանց կենաց ապաշխարութեան հրաւիրել՝ արքայութեան յոյսով:

Իսկ նրանք, պատրանքներից խաւարած, դժուարանում էին կանչողին հետեւել, եւ երկրի վրայ սաճողների համար դժուարանում էր երկինք նայելը: Աշխարհի ցանկութեամբ մոլորուածները չէին ախորժում վերին փառքը, իսկ բռնութեամբ մօտեցնելը հարկաւոր չէր նրանց անձնիշխան Ստեղծողին. եւ նշաններով ու վարդապետութեամբ քչերը համոզուեցին:

Ապա ի՞նչ էր անում... Ո՛վ սքանչելիք, քանի որ մարդիկ պատժի էին պարտական, պատիժը հատուցել էր պէտք եւ ապա՝ Աստուծոյ արդարութիւնից ողորմութեան արժանի գտնուել:

Նա, որ Իր Հօր առջեւ անպարտ գտնուեց, գործի դնելով բազմապատիկ իմաստութիւնը, մեռաւ բոլոր պարտականներիս փոխարէն եւ ջնջելով պատուեց մեր յանցանքների ձեռագիրը: Իջաւ դժոխք Նա, Ում մահը չէր կարող բռնել, եւ արձակեց մեռեալներին:

Եկաւ ողջերի մօտ նոյն Ինքը եւ հաստատեց նրանց, իսկ ովքեր Ադամի յանցանքով մահուան դատապարտութեան տակ էին, նրանց Իր անմեղութեան շնորհներով տեղափոխեց կենաց արդարութեան եւ անմահների երկրի մէջ:

Որովհետեւ այսպէս ենք իմանում Պօղոսից յայտնուած աստուածպաշտութեան մեծ խորհուրդը. որ երեւաց մարմնով, արդարացաւ հոգով, յայտնուեց հրեշտակներին, քարոզուեց հեթանոսներին, հաւատարիմ եղաւ աշխարհին եւ համբարձուեց փառքով:

Եւ, մտնելով վարագոյրի ներքին կողմը, մեծ Քահանան Իր պատուական Արիւնը պատարագ ընծայեց Հօրը. ցոյց տուեց նաեւ դաւաճանողի խաբէութիւնները եւ բարեխօսում էր՝ մարդկանց հետ խաղաղութիւն հաստատել:

Իսկ բարի Հայրը, բարեհաճ լինելով սիրելի Որդու սքանչելի գործի նկատմամբ եւ քանդելով նախնի հօր դատապարտութեան կնիքը, տուեց Նրան՝ Հոգին սփռելու Արեամբ գնուած Իր հօտի վրայ եւ մտքերի նայուածքները լուսաւորելու վերին յոյսով:

Այնժամ Միածնին վերցնելով՝ Մխիթարիչին ցօղեց Սաղիմի վրայ եւ ձիւն իջեցրեց հաւաքուած թագաւորների վրայ՝ ըստ նախագուշակ երգողի:

Որը եկաւ ու բնակուեց մեր սրտերում եւ լուսաւորեց Քրիստոսի սիրոյ առաւելութեան լայնութիւնն ու երկարութիւնը:

Եւ որովհետեւ ձրի էր շնորհում՝ Քրիստոսի մահուան փոխարէն,

այդ պատճառով հաւասարապէս տարածում է արժանաւորների եւ անարժանների վրայ:

Ուստի եւ Պետրոսի մէկ խօսքով երեք հազար հոգի աշակերտում է այսօր: Ուրեմն, խօսքը յիրաւի վկայեց մեծ օրուայ շնորհի սքանչելի լինելու մասին:

Որովհետեւ ինչպէս սերմանելուց աւելի ժողովելն է ախորժելի, այնպէս եւ Քրիստոսի խորհուրդի բոլոր սերմերի պտուղն այսօր է կթում:

Այս է Սուրբ Հոգին, Ում Ինքը վկայեց ուսուցանել մեզ եւ յիշեցնել Իր բոլոր արածները:

Այս քաղցրութեան ցօղը զուարթացրեց Քրիստոսի խօսքերի բոյսերը եւ օրհնելով պսակեց Իր տնօրինական գործերի տարիները, որի համար աղաղակում է Եկեղեցին. «Ջմեռն անցաւ, մեր այգիները ծաղկեցին եւ բուրմունք արձակեցին»:

Այս առաւօտ երկնաւոր Հայրը նայեց դէպի երկիր, արբեցրեց այն Սուրբ Հոգու յորդառատ գետով եւ բազմապատիկ տունկերի արմատներից առաքինութեան զանազան բոյսեր ծաղկեցրեց՝ փթթեցնելով, ինչպէս մարգարէն է ասում:

Ահա՛ ձիրք, որը չի չափւում, եւ պարգեւ, որին գործերի ոչ մի կշիռ չի զուգակցւում...

Ահա՛ տուրք, որի բնութեան իսկութիւնը չի պարփակւում, եւ շնորհ, որին գերազանց մտքի ոչ մի զեղում չի հաւասարւում...

Ահա՛ առատ ողորմութիւն, որ աշխարհի բոլոր թագաւորութիւններին հաւասարապէս փոքր է գտնում, եւ մխիթարութիւն, որին ոչ մի մարմնաւոր զբաղմունքի ուրախութիւն չի լծորդւում...

Քանզի ո՞վ կարողացաւ աշխարհին տիրելու հետ միասին նաեւ անապականութիւն ստանալ. կամ ո՞ր թագաւորը կարողացաւ ձեռնարկել մահը կեանքի փոխելու. կամ մարմնաւոր ո՞ր երանութիւնը կարողացաւ յաւիտենական կեանք ընդգրկել: Իսկ Նա, այսօր իջնելով առաքեալների դասերի վրայ, զօրացրեց նրանց բազուկները՝ այս բաները հանուր տիեզերքին բաշխելու համար:

Քանզի նրանք, Իրենով առլցուած, ստուերով հիւանդներ բժշկեցին, թաշկինակով ցաւեր փարատեցին, ձեռքերով յարութիւն տուեցին մեռեալներին, քայլեցրին կաղերին, լուսաւորեցին կոյրերին՝ աւելի շատ հոգիների աչքերը, քան մարմինների, երկինք հրաւիրեցին եւ անվախճան փառքի ժառանգորդ դարձրեցին մարդկանց:

Ապա յայտնի դարձաւ, թէ երկրաւորներիցս ոչինչ զուգահաւասար չգտնուեց երկնայինների տուրքին. որ ոչ միայն բանական-

© National Library of Armenia

ներիս ազգը ներընդունակ եղաւ Նրան, այլեւ մարդկանցից առաւել՝ աձշունչ տարրերը Նրանով զօրացած գտնուեցին:

Որով եւ նոյն Ինքը, իջնելով, նախ սքանչելի կերպով տունը լցրեց եւ ապա սիրով հանգչեց այնտեղ նստածների վրայ:

Որովհետեւ ասում է. «Պենտեկոստէի օրերի աւարտին բոլորը միաբան միասին էին, եւ յանկարծակի երկնքից հնչում եղաւ՝ սաստիկ հողմի նման եկած, եւ լցրեց ողջ տունը, որտեղ նստած էին: Եւ նրանց երեւացին կարծես հրից բաժանուած լեզուներ, որոնք նստեցին նրանց վրայ, եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով: Եւ սկսեցին այլեւայլ լեզուներ խօսել, ինչպէս որ Հոգին էր նրանց բարբառել տալիս»:

Ասում է՝ միաբան միասին էին, որպէսզի ցոյց տայ, թէ ոչ միայն տասներկուսն էին, այլեւ Կոյս Աստուածածինն էր նրանց հետ՝ կանանցով հանդերձ, ովքեր ծառայում էին Յիսուսին Գալիլիայում եւ Յարութեան տեսողները եղան, որոնց հետ եւ՝ եօթանասնից գունդը՝ բոլոր ծանօթներով հանդերձ:

Արդ, Սուրբ Հոգին եկաւ նրանց վրայ՝ Քրիստոսի նախնական խոստման համաձայն, որ ասաց. «Ահա՛ Ես ձեզ ուղարկում եմ Իմ Հօր աւետիսը: Եւ դուք նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչեւ որ բարձունքներից զօրութիւն հագնէք»:

Եւ հարուածեց հողմի որոտման հնչիւնը, որով ցոյց էր տալիս հեղման առաւելութիւնը: Դարձեալ, որովհետեւ նոյն Հոգին էր, Ով սկզբում շրջում էր ջրերի վրայով, տունը լցրեց իմանալի զօրութեամբ, իսկ հրի զգալի ձեւը տղայամիտների սքանչացման համար էր:

Եւ ապա այն հրից լեզուներ բաժանուեցին եւ իջան նրանցից իւրաքանչիւրի վրայ, որը խորհրդանշում էր այլատարազ լեզուախօսութեան շնորհի պարգեւները:

Ուստի եւ նրանց զգալի մարմնի զգայարանների վրայ լեզուներով իջնելիս, նրանց միտքն իմանալի զօրութեամբ իմաստնացնելով, սկսեց նրանց լեզուներն այլատարազ խօսքերով շարժել, ըստ որի ասում է. «Խօսում էին այլեւայլ լեզուներով, ինչպէս որ Հոգին էր նրանց բարբառել տալիս»:

Ոչ թէ՝ որովհետեւ լեզուների շնորհը նախամեծար էր, այլ որովհետեւ առընթեր ուրիշ երեւելի նշան չկար շնորհի համար, որով զօրացան քարոզելու:

Իսկ այլատարազ խօսելով, քաղաքի բովանդակ ամբոխին հիացնելով՝ նրանց մօտ հասաքեց:

Ըստ որի ասում է. «Միաբան բազմութիւնը եկաւ ու խռնուեց, եւ բոլորը զարմացած սքանչանում էին, իսկ ուրիշներ սքանչելի այլափոխման մասին ծաղրելով ասում էին, թէ հարբած են»:

Արդ, շնորհն ամէն ինչով այսպէս ճանաչուելով, Հոգին իջնելուց նրանց մէջ ներգործեց ոչ թէ Քրիստոսի խոստմամբ, այլ՝ լեզուներով:

Որովհետեւ Նա չասաց, թէ՝ Հոգով լեզուներ էք խօսելու, այլ թէ՝ սովորեցնելու է ձեզ եւ յիշեցնելու է այն ամէնը, ինչ ասացի ձեզ:

Որոնք եթէ սա ստացած լինէին ի սկզբանէ, ո՛չ այնպէս կամբոխուէին, ո՛չ էլ իրենց այլատարազ խօսքերով բազմութիւն կձգէին՝ ի նշան տեսութեան:

Որի համար Ամենահմաստունը նախ, ինչպէս մանուկներին՝ խաղերի տօնախմբութեան մէջ, զարմանալի փոփոխումով շփոթեցրեց նրանց:

Որովհետեւ նրանք, ովքեր երէկ եւ այսօր գռեհիկ ու շինական գալիլիացի մարդիկ էին, ահա ասում են, ճարտարաբանում են իմաստուն հելլենացիների նման, եւ ուրիշներ պարթեւական տարաշխարհիկ բարբառներով նրանց պատասխանում են:

Պետրոսը, որը կափառնայումում է ծնուել, լսում ենք, որ խրոխտաբար հռոմէական լեզուով է արշաւում: Իսկ Փիլիպպոսը, որը Գալիլիայի Բեթսայիդայից է, իր խօսքը յօդաւորում է արաբների բարբառով:

Ցովհաննէսը, որ Նազարէթում է մեծացել, ինչպէ՞ս է կիլիկեցիների ձայնով մեզ հարցնում: Եւ սրանք Թովմասին են լսում, որ եթովպացիների լեզուով մարգարէի խօսքերն է յիշեցնում:

Այն տգէտ Թադէոսը, տեսէ՛ք, որքա՜ն վայելուչ կերպով Մեծ Հայքի բառերով իր խօսքն է ասում:

Եւ մանուկ Բարդուղիմէոսը, կարծես մարերի մէջ ծնուած լինելով, նրանց խօսքն է հնչեցնում:

Ո՛վ սքանչելիք, զանազան գաւառներում ծնուեցինք եւ աշխատութեամբ վարժուեցինք նրանց բարբառներին, իսկ ահա սրանք, որոնք չտեսան այն քաղաքները, անաշխատ կերպով նրանց ձայներն են հնչեցնում:

Մեծ է, ասում են, սքանչելիքի արուեստը, եւ թէ ինչո՞վ է աւարտուելու, չենք կարող նկատել:

Այնժամ Պետրոսը, վեր կենալով տասնմէկի հետ, բարձրացրեց իր ձայնը եւ սկսեց տարակուսանքներին լուծում շնորհել.

«Հրէաստանցի՛ մարդիկ եւ դո՛ւք, որ բնակւում եք Երուսաղէմում՝

© National Library of Armenia

ամէ՛նքդ, թող ձեզ յայտնի՛ լինի այս, եւ ակա՛նջ դրէք իմ խօսքերիս:

Սա գինու արբեցութիւն չէ օրուայ երրորդ ժամին, ինչպէս դուք էք կարծում, այլ բաժակ է բերկրութեան եւ առհաւատչեայ անապականութեան՝ նախագուշակուած մարգարէների կողմից. եւ այսօր խորհուրդը հասաւ իր լրումին:

Ո՛վ օրէնսուսոյցներ եւ մարգարէների աշակերտներ, սա այն է՝ Յովէլի ասածը, որը միշտ ընթերցում էք, կատարուեց: Քանզի աճա վերջին օրերին Աստուած Իր Հոգուց ճեղեց մարմնաւոր զանազան հասակների վրայ, եւ մարգարէանում ենք:

Այն Յիսուս Նազովրեցին, Ով ձեզ երեւաց նշաններով ու հրաշքներով եւ յանիրաւի խաչուեց, ելաւ երկինք, նստեց Հօր աջ կողմում եւ, Սուրբ Հոգու այս պարգեւներն ընդունելով Հօրից, մեզ վրայ սփռեց: Նա, երբ փառքով երկինք էր համբարձում, ուխտեց մեզ եւ, երկինք մտնելով, Հօր եւ Հոգու հետ հաւասար նստելով, այս ասաց.

«Ես այն գործերը, որ Ինձ վստահեցիք, կատարեցի երկրի վրայ, Ձո՝ Իմ Հօր անունը փառաւորեցի մարդկանց մօտ. չարի խարդախութիւններից եղծուածին՝ Մեր պատկերակցին, Աստուածութեանս բնութեանը խառնելով, սքանչելի կերպով սրբեցի:

Իմ մահը տալով ողորմելի եւ տառապած մարդկային ազգի փոխարէն՝ նրան փրկեցի անէծքից:

Եւ այժմ նոյն մարմնով գալով՝ երկրպագութիւն եմ ընդունում երկնաւորներից:

Այսուհետեւ Ձե՛զ հասաւ գործելու ժամանակը, ո՛վ Իմ փառակից Հոգի. պարտաւոր ես նաեւ Ձո մարդասիրութիւնը ցոյց տալ երկրի վրայ. այսուհետեւ Ձեզ եմ վստահում՝ Մեր Աստուածութեան անունը մարդկանց մօտ յարգել տալու: Իմ Հայրն Իմ Մարմնի պատարագով ներեց եւ թողեց այն պարտքերը, որոնց պատճառով Դու չկարողացար նրանց մօտ ճեղուել:

Սա Ինձ մօտ առհաւատչեայ է նրանցից, եւ Ձեզ խաղաղութեամբ տալիս է նրանց:

Սիրով իջի՛ր այժմ նրանց մօտ, սիրո՛յ Աղբիւր, եւ մխիթարի՛ր նրանց, որոնք պանդխտութեան վայրում տառապում են ճշդեմի ու անցաւոր կեանքով:

Դարձրո՛ւ նրանց սիրտը նաւրութիւններից, որ զուր խոովեցնում է թշնամին, որպէսզի նայեն դէպի այս բազմապատիկ օթեւանները, որ պատրաստեցինք նրանց համար:

Նրանց առատ իմաստութի՛ւն բաշխիր, որպէսզի եղեռնագործը

նրանց չմոլորեցնի:

Հաղորդուեցի նրանց կարիքներին եւ փորձով ճանաչեցի, որ տկար եւ դիւրակործան բնութեան են վիճակուել:

Որի պատճառով աղաչում եմ. նրանցից մի՛ ճեռացիր եւ նրանց զօրացրո՛ւ ընդդէմ բոլոր փորձանքների, նաճանչի՛ մատնիր մարմնի կամքը եւ զօրացրո՛ւ մտքի կամքը:

Ձե՛զ եմ տալիս նրանց, Ձե՛զ եմ յանձնում նրանց, Ձե՛զ խոստացայ նրանց եւ այժմ Ձո մէջ եմ ամրափակում բոլորին, որպէսզի Իմ Արեան ճեղումը զուր չլինի նրանց համար:

Նրանց մէջ առատացրո՛ւ, ո՛վ Իմ համագոյակից Հոգի, բժշկութեան, մարգարէութեան շնորհները, վերինների մասին խորհելը, ստորինն ատելը:

Թէպէտ եւ բազմիցս նրանց հետ երկնքի արքայութեան ճառեր էի խօսում, սիրով չէին ականջ դնում:

Այլ երբ մարմինների բժշկութիւն էի կատարում, մեռեալների յարութիւն տալիս, կաղերի քայլեցնում, կոյրերի լուսաւորում, Իմ հանդէպ բոլորի սէրն աճելով առատանում էր:

Հոգիների հացը՝ իմաստութեան խօսքն էի տալիս, եւ ոչ ոք չէր զգաստանում:

Իսկ երբ առատօրէն մարմինների հաց տուեցի նրանց՝ յագեցնելու համար, այնքան յորդեցին Իմ սիրոյ մէջ, որ մինչեւ իսկ կամենում էին Ինձ յափշտակել եւ թագաւոր կարգել:

Սա է մարդկային ազգի մտքի ճանապարհը, որը փորձեցի. անկարող են դարձել խորհելու իրենց խոստացուած այս վերին բարիքների մասին:

Ծանօթ չեն երկնային փառաւորութեանը, այլ միշտ երկրի վրայ են յածում, կասկածում են այս ճշմարտութեանը, եւ նրանց մօտ այն է վայելուչ կեանք համարւում:

Որի պատճառով Դու նախ նրանց տղայամտութի՛ւնը զարմացրու նշաններով ու սքանչելիքներով եւ նրանց կարծիքը բժշկութեան շնորհով ուղղի՛ր դէպի հաւանութեան հաւատը:

Մի՛ արգելիր բաշխել Ձո առատութեան շնորհները՝ ի փառս եւ ի գովեստ Մեր Աստուածութեան:

Մեծ երեւոյթ է, որ ինչպէս երկինքը, այնպէս եւ երկիրը լցուի Մեր Աստուածութեան փառքով, եւ ինչպէս հրեշտակներին, նոյնպէս եւ մարդկանց ստանանք որպէս Մեր անուան օրհնաբանողների:

Զարմանալի չէ, եթէ Մեր մոլորուած արարածին Մեր բազմապատիկ զօրութեամբ դէպի Մեզ նուաճենք:

© National Library of Armenia

Արդ, իջի՛ր, աղաչում եմ, իջի՛ր, որովհետեւ տարակոյսը պաշարել է Նրանց:

Մաճուան տնօրէնութեան ժամանակ փոքր-ինչ բաժանուեցի Նրանցից, եւ ծննդկանի նման երկունքը պաշարեց Իմ աշակերտներին, մինչեւ որ, արագացնելով Յարութիւնը, մխիթարեցի Նրանց:

Տասնմէկից մէկն այնտեղ չէր եւ Յարութեան մասին տասի վկայութեանը չէր հաւատում, մինչեւ որ դարձեալ յայտնուեցի եւ շօշափել տուեցի կողերիս խոցուածքը՝ [որպէս] ապացոյց Նրա մտքին:

Եւ այժմ, երբ Ես ճանապարհ ընկայ երկինք, թող կարճմտութիւնը Նրանց չգայթակղեցնի՝ Քո յոյսի մխիթարութեամբ:

Որի պատճառով արագացրո՛ւ մխիթարել Իմ որդեակներին ու աշակերտներին:

Գնա՛, բնակուի՛ր Նրանց մէջ, ինչպէս որ խոստացայ, եւ վարդապետելով յիշեցրո՛ւ Նրանց Իմ բոլոր ասածները»»:

Այնժամ ամենակարող Զօրութիւնը, փրկական Առատութիւնը, հեզութեան Աղբիւրը, բարութեան Հոգին, մարդասէր Շնորհը, Աստուծոյ առատութեան Հեղումը, կենդանարար Բխումը, Աստուծոյ Պարգեւը, ճշմարիտ Խաղաղութիւնը, մարգարէների կողմից Քարոզուածը՝ մխիթարիչ Սուրբ Հոգին, սլանալով, աճեղ որոտումով անցնում էր անմարմնականների շարքերի դասակարգութիւններով. եւ սքանչանալով՝ հիացմամբ զարհուրեցին երկնային զօրքերի նահապետութիւնները:

Որովհետեւ Նրան, Ում ցանկանում էին աղօտ տեսնել, նայեցին իսկական Էութեամբ՝ դիմելիս եւ մարդկանց ազգի վրայ սփռուելիս:

Որովհետեւ Հոգու Անձնաւորութիւնն այսօր ամբողջովին իջաւ առաքեալների գնդի դասերի մէջ, ինչպէս Միածինը՝ սուրբ Կոյսի արգանդը:

Եւ Նա, Ով եկաւ, այլեւս չմեկնեց, այլ մնաց Քրիստոսի Եկեղեցում՝ ըստ Իր Փեսայի անսուտ խոստման, որ ասաց. «Ձեզ հետ կբնակուի եւ յաւիտեան ձեզ հետ կլինի»:

Ով եւ այսօր զօրացրեց առաքեալներին եւ Նրանց մատակարարութեամբ՝ ընդհանուր տիեզերքը:

Որովհետեւ Նրա համար նոյնպէս առաւել քաղցրացաւ մարդկանց փրկութեան համը, որոնց հետ մնաց եւ բնակուեց Նրանց մէջ:

Ուստի եւ Պետրոսը, իր մէջ Հոգին կրելով, Անանիայի ստելը ներկայացնում էր ոչ թէ մարդկանց, այլ՝ Աստուծոյ առջեւ: «Ինչո՞ւ, - ասում է,- մտադրուեցիք փորձել Աստուծոյ Հոգուն. կամենալով ինձ

խաբել՝ ոչ թէ մարդկանց ստեցիք, այլ՝ Աստծուն»: Նրա շնորհը, առաքեալների ձեռք դնելով, իջաւ Ստեփանոսի վրայ, որը եւ դրանով զօրացաւ՝ նշաններ եւ մեծամեծ հրաշքներ ցուցադրելու:

Արդարեւ, Նա, որպէս Եկեղեցու Թագաւոր, Պօղոսին եւ Բառնաբասին նշանակում էր Իր խօսքի սպասաւորութեան գործին:

Նա ոմանց ընտրեց առաքելութեան, ոմանց՝ մարգարէութեան, ուրիշներին՝ հովուութեան եւ վարդապետութեան, ինչպէս որ Մատթիային առաքելութիւն վիճակուեց, Ագապէոսին եւ Տիմոթէոսին՝ մարգարէութիւն, իսկ Եփեսոսի Եկեղեցու երէցներին՝ հովուութիւն եւ վարդապետութիւն:

«Զգո՛յշ եղէք,- ասում է,- հօտի նկատմամբ, որի վրայ Սուրբ Հոգին ձեզ տեսուչներ եւ վարդապետներ կարգեց»:

Նա, արձակելով, համարձակութիւն տուեց նիւթեղէն լեզուին՝ Հայր կոչելու Աստծուն, Ով հրեղէն կառքի վրայ նստում եւ պաշտւում է թեւերով սքողուած հրեղէն անմարմնական բանակներից:

Որովհետեւ ստացանք որդեգրութեան Հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր:

Նոյն Ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստուծոյ որդիներ ենք:

Նա մէկին իմաստութեան խօսք է տալիս, միւսին՝ գիտութեան, մէկին՝ լեռները տեղափոխելու հաւատք եւ ուրիշին՝ սքանչելի գործեր կատարելու զօրութիւն:

Նա օծում է մեր մտքերը՝ ըստ Յովհաննէսի, քրիստոնեայ եւ քրիստոսընկալ է դարձնում, եւ այս օծութիւնից զօրանում ենք ամէն ինչ իմանալու մէջ:

Նա լուսաւորում է մեր սրտերի աչքերը՝ իմանալու մեր կոչման յոյսը, փառքի ժառանգութեան մեծութիւնը եւ Քրիստոսի սիրոյ լայնութիւնն ու երկայնութիւնը, որի պատճառով արհամարհեցինք երեւելիները եւ աներեւոյթներն ենք փափագում:

Եւ Քրիստոս, մեր մէջ բնակուելով, Հոգով մեռցրեց մարմնի հեշտութեան մեղքի զգայարանները եւ արդարութեան խորհուրդների յոյսով կենդանացրեց բանական հոգիները:

Որով զօրանալով՝ մարդիկ յաղթեցին նեղութիւնն ու անձկութիւնը, հալածանքը, սովը, մերկութիւնը, սուրը, ներկան եւ հանդերձեալը՝ Քրիստոսի սիրոյ գիտութեան մէջ հոգով պայծառացած:

Նա, Ով քննում է Աստուծոյ խորութիւնները, քննում է եւ մարդկանց սրտերը եւ, տեսնելով բնութեան տկարութիւնը, թիկունք է

© National Library of Armenia

կանգնում մեր տկարութեանը եւ անմոռուչ հեծութիւններով Աստուծոյ մօտ բարեխօս է լինում սուրբ Եկեղեցու համար:

Եւ Ինքը Աստծուն սիրողներին մշտապէս գործակից է լինում բոլոր բարիքների մէջ:

Բոլորի փրկութիւնն է կամենում, բոլորի հաւատքին է սպասում, որպէսզի հաւատքը նուիրելու ժամանակ նրանց մէջ շնորհ եւ հոգեւոր զօրութիւններ սերմանի:

Կամենո՞ւմ ես իմանալ մարդկանց հանդէպ Նրա սիրոյ չափը. միացի՛ր ներքինու կառքին, ինչպէս մի ժամանակ՝ Փիլիպպոսը, եւ տե՛ս, թէ ինչպէ՞ս Հոգին փոխհատուցեց հաւատքով արուած մէկ հարցմանը:

«Տէ՛ր,- ասում է,- աղաչում եմ Քեզ, ասա՛, ո՞ւմ մասին ասաց այս մարգարէն՝ ի՞նր, թէ՞ մէկ ուրիշի»:

Մտքի ուղիղ հարցումը ներքինու անձի մէջ Հոգու համար դուռ եղաւ եւ տեղ պատրաստեց Փիլիպպոսի խօսքերի համար, մինչեւ որ եկան ջրին աղբիւր. եւ իջած Հոգին՝ ներքինու ուսուցիչը, աւելորդ համարեց այլեւս Փիլիպպոսին յոգնեցնելը:

Այսպիսին է Սուրբ Հոգու՝ աշխարհը պաշտպանելը, այնչափ է Նրա՝ մարդկանց մխիթարելը:

Ո՛չ եթովպացիների նկատմամբ է խտրութիւն դնում, ո՛չ հեթանոսներին է անարգում եւ ո՛չ էլ հրեաներին յարգում. ամենքին հաւասար ձիրք է ընձեռում: Միայն Իր շնորհի նիւթը՝ սրտի յօժարութեան հաւատքն է փափագում տալ մեզ եւ զանազան շնորհների նոյն փայլատակուած ջահերով Եկեղեցու մանուկների վրայ է ճառագայթում: Եւ նրանց, շնորհներով գրգռելով, աշխարհի զբաղմունքների հեշտութիւնից ձգում է դէպի երկնաւոր Հօր սէրը:

Որովհետեւ տղաներին Հոգուց խաղալիք են տրուում նշաններն ու լեզուախօսութիւնը, իսկ մանուկներին՝ կաթ՝ բժշկութեան շնորհներն ու զօրութիւնների յաջողութիւնները:

Իսկ կատարեալներին հաստատուն կերակուր է մատակարարում, որն է Աստուծոյ սէրը, ինչպէս աղաղակում է ճաշակողը, թէ՝ «Եթէ ունենամ ողջ գիտութիւնն ու հաւատը՝ մինչեւ իսկ լեռներ շարժելու, եւ սէր չունենամ, ոչ մի օգուտ չունեմ»:

Սոյնը եւ աշակերտներին է ցանկանում՝ ասելով. «Աղօթում եմ եւ ծնրադրում, որպէսզի դուք ստանաք ոչ թէ նշանագործութեան հոգին, այլ՝ իմաստութեան Հոգին, որ լուսաւորում է սրտի աչքերը՝ ճանաչելու Քրիստոսի սիրոյ լայնութիւնը, բարձրութիւնն ու խորութիւնը»:

Որի պատճառով եւ Հոգու՝ նշաններով եւ լեզուներով ազդելը, որպէս անօգուտ մի բան, պակասեց մէջտեղից, իսկ իմաստութեան ու հանճարի Հոգին միշտ ներգործում է Եկեղեցու մէջ. եւ Հոգին նրա որդիների մէջ Քրիստոսի սէրն է պայծառացնում:

Թող ոչ ոք չկարծի, թէ Տէր կանուանի Յիսուսին, եթէ նախ Նրանից ազդում չընդունի: Ապա եթէ մէկն առաջ նետուի առանց սոյն հրամանի կոչման, ինչպէս Սուրբ Հոգուն փորձող կախարդ Սիմոնը, մերժուելու է Դաւթի տաճարից:

Ամուր կնիք է Քրիստոսի սուրբ Եկեղեցու իրաւաքաղչիւր անդամի վրայ, որոնք Նրանով պարապուած են պահում շնորհի իրաւաքաղչիւր պատուի մէջ:

Որովհետեւ Նա, Ով մեզ ձեզանով հանդերձ հաստատեց ի Քրիստոս, Աստուած է, որ եւ կնքեց մեզ եւ մեր սրտերում դրեց Հոգու առհաւատչեան:

Վարդապետ է՝ Քրիստոսի կողմից ասուածները սովորեցնելու եւ յիշեցնելու մէջ, ինչպէս խոստացաւ, որ երբ գայ Նա՝ ճշմարտութեան Հոգին, առաջնորդելու է ձեզ ամենայն ճշմարտութեամբ:

Իմաստուն ճարտարապետ է, որն առաքեալների եւ մարգարէների հիմքի վրայ կառուցում է օտարներով եւ պանդուխտներով՝ Քրիստոսի հասակի չափը լրացնելու համար:

Մարդկանց մտքերը ոռոգող յորդառատ գետ է, որն արբեցնում է մեր իմաստութեան ակօսները եւ Իր ցօղով արթնացնում առաքինութեան ծաղիկների զանազան բոյսերը, ինչպէս ասաց Քրիստոս՝ Իր հաւատացեալների որովայնից Հոգու միջոցով գետերի բխման մասին, որի մասին նախապէս ճառեց մարգարէն:

Արթուն վերակացու է, Եկեղեցու կարգերի հրահանգիչ եւ իրաւաքաղչիւր աստիճանի ու պատուի որոշող, Ով կարգեց նախ առաքեալներին, երկրորդ՝ մարգարէներին, երրորդ՝ վարդապետներին, որոնց հետ՝ զօրութիւններն ու բժշկութեան շնորհները, լեզուների տեսակներն ու նրանց թարգմանութիւնները:

Ներգործութեան Հոգին յօրինում է տաճարի աստիճանների դասակարգութիւնը երկնաւոր դասերի համանմանութեամբ՝ հոգեւոր երգով միշտ Աստուծոյ հետ խօսակցելով:

Այս Հոգին Քրիստոսի Եկեղեցու մանուկներին ծնում է երկնաւոր Հօր որդեգրութեամբ՝ սրբարար Աւազանի արգանդից:

Այս Սուրբ Հոգին զօրացնում է քահանայապետների ձեռքերը շնորհաբաշխութեան, քահանաներինը՝ նուիրագործութեան, սարկաւագներինը՝ սուրբ Եկեղեցու սպասաւորութեան:

© National Library of Armenia

Նա է յարուցում աթոռի ժառանգներին, պատուոյ եկեղեցականներին. ոմանց նշանակում է խօսքի ծառայութեան, ուրիշներին՝ ձայնի հնչման, մի մասին էլ՝ գրքերի ընթերցման:

Նրանով վկաները զօրացան, նահատակները զինուեցին, տղամարդիկ քաջ դարձան, կանայք արիացան:

Նրա զօրութիւնը սքանչելի կերպով բխում է խաչանիշ փայտից, նշաններով՝ կառուցուած յարկերից, շնորհներով՝ սուրբերի ոսկորներից՝ ի բժշկութիւն բոլոր ախտերի:

Ողջ երկիրը լի է Նրա ողորմութեամբ, եւ օդը մաքրուեց Նրա իջնելով: Մեզ հետ է հանապազ, եւ մեր ամէն ինչը Նրա շնորհաձիր պարգեւն է, որի առջեւ արտասուքներով մաղթելու ենք՝ մեր երեսների վրայ ընկած:

Ո՛վ Աստուած Աստծուց եւ բոլորի Տորոգիչ Սո՛ւրբ Հոգի, քաջ Հովիւն Իր հօտը Քո պահպանութեան խնամքին վստահեց եւ Քո ճառագայթներն Իր Եկեղեցու մէջ սփռեց մինչեւ յաւիտեան:

Քեզանով են շարժւում մեր լեզուները օրհնութեան պատարագին, եւ մեր անձերը նշանակուեցին ի սպասաւորութիւն Քո զանազան շնորհների ծառայութեան:

Բոլորս միաբան Քեզ ենք աղաչում եւ համարձակ խօսում ենք Քեզ հետ՝ Քո արգանդի երկունքի ծնունդ որդիներս:

Մի՛ զզուիր Քո հօտից զազիր մեղքերի հոտի պատճառով եւ մի՛ տրտմիր անպարկեշտ խօսքի բարբառումից, այլ հաշտութեամբ մեզ հե՛տ մնա մինչեւ վերջին կէտը եւ ուղեկցի՛ր դէպի Քո երկնային խորանները:

Ո՛վ Տէր, նաեւ ճգնեցութեան վայրերում աքսորուածների՛ս պարսպիր թշնամու նետերի խոցոտումներից:

Զօրութիւն չունենք ճգնութեան մարտի մէջ նահատակուելու. հառաչանքով խնդրում ենք՝ մեզ մի՛ տար դէպի չար դարանակալի փորձանքները:

Ծարաւեալներիս տո՛ւր Քո սիրոյ արբեցման գինին, որն այսօր մատռուակուեց սուրբ Վերնատանը:

Որպէսզի մխիթարուենք մեր տարտամութեան խշտեակների վրայ եւ յոյսով վստահենք հանդերձեալ կեանքիդ:

Ո՛վ Բարերար, եւ այս նուէրը, որ Քո ունեցածից Քեզ է տրւում՝ օրհնութեան բոյրը, հոտոտի՛ր սիրով, Աստուա՛ծ իմ՝ Հոգի՛ հեզութեան:

Եւ մեզանից միաբերան օրհնութիւն Քեզ՝ Հօր եւ Որդու հետ՝ մշտնջենաւոր եւ անվախճան կեանքիդ մէջ. ամէն:



Աստուածաբանական ուսումնասիրութիւններ

© National Library of Armenia

ՅԱՂԱԳՍ ՀԱՆԴԵՐՁԵԼՈՑ
(շարունակութիւն)

235. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Հանդերձեալ կեանքի ճշմարտութեան մասին կը խօսի իմաստասիրութիւնը, երբ հոգիին անմահականութեան եւ անոր անմահութեան վրայ կը ճառէ եւ կը հաստատէ, թէ բանական մարդը չ'ոչնչանար հոգիին՝ մարմինէն ելլելէն եւ մարմինին դիակնանալէն ետքն ալ, եւ թէ անդրշիրիմեան կեանք մը կը սպասէ անոր հանդերձեալին մէջ:

Յայտնապէս նոյնն է քրիստոնէական վարդապետութիւնն ալ:

Աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլար Ս. Գրոց վկայութիւններով հաստատել այս ամէնը: Աւելի կարեւոր պիտի ըլլար մեզի համար քրիստոնէական յայտնութենէն իմանալ, թէ ի՞նչ է հանդերձեալ կեանքի վիճակն ու կացութիւնը, հատուցման ի՞նչ օրէնք կայ, ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի կատարուի ան, ո՞ւր են հոգիին օթեւանները, եւ որքա՞ն են անոնք, մարմիններն ալ պիտի մասնակցի՞ն այդ եղելութիւններուն եւ ի՞նչ կերպով: Սակայն պէտք է կանխենք ըսելու, թէ բովանդակ քրիստոնէութիւնը միեւնոյն կերպով չի խորհիր այս խնդրին մասին, եւ Արեւմտեան ու Արեւելեան Եկեղեցիները կ'անջրպետուին իրարմէ՝ լիապոյն հատուցման ժամանակակէտի սկզբնաւորութեան մասին:

236. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կարելի չէ այստեղ յառաջ բերել այն զանազան դրութիւնները եւ կարծիքները, որոնք միշտ ալ գոյութիւն ունեցած են, եւ մոլորը, երկբայականն ու ուղիղը զատել իրարմէ եւ յետոյ ձեռնարկել հաստատելու մեր Ուղղափառ Եկեղեցւոյ դրութիւնը:

Բայց որովհետեւ բազմամասն է հարցը եւ մահուան բոպէէն կը տարածուի մինչեւ ցյաւիտեան ժամանակաց, եւ իւրաքանչիւր քայլափոխի պէտք է նիւթերու կարգին համեմատ կրկնել կարեւորները, այս պատճառաւ, դիւրագոյնին եւ համառօտագոյնին մտադիր ըլլալով, պանդ կ'ընենք կանխաբանական ընդհանուր տեսութիւնները եւ քայլ առ քայլ յառաջանալու համար կ'ուզենք խօսիլ զանազան կարծիքներու բազմակերպ մասերուն վրայ:

237. ՎԱԽՃԱՆԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Պարտինք յիշեցնել, թէ այստեղ մենք պիտի չխօսինք առաքելական խօսքերուն մեկնութենէն ծագած վախճանաբանութեան (Escatologie) մասին, որ կը վերաբերի աշխարհի մօտալուտ վախճանին եւ Քրիստոսի գալուստին նկատմամբ առաջին քրիստոնեաներու ակնկալութեան, զոր անոնք կը կապէին Աւետարանի յաղթանակին եւ փառաց լրման՝ նմանութեամբ մեսիական փառաւոր գալուստին՝ ըստ նախապաշարմանց հրէից:

Մենք այստեղ պիտի չքննենք թէ ի՞նչ եղած է առաջիններուն կարծիքը այս մասին, եւ թէ արդեօք առաքելական խօսքերը ստուգիւ այդպիսի գալուստի՞ մը կ'ակնարկեն: Այսքանը ստոյգ է սակայն, թէ ակնկալուած գալուստը մօտալուտ բան մը չեղաւ եւ ոչ իսկ ցարդ տեղի ունեցաւ, եւ նոյնիսկ, Առաքեալներուն համեմատ, անորոշ է վերջնական ժամանակը:

Հարկ է, որ մենք մեր խօսքը դաւանաբանականին մէջ սահմանափակենք եւ, ինչ որ հիմա մենք պարտինք իբրեւ քրիստոնէական վարդապետութիւն պահպանել, զայն միայն յառաջ բերենք: Վախճանական հարցերուն մօտ ոմանք բաժանում մը կը դնեն, այսինքն՝ մարդուն եղածները կը զատեն աշխարհի եղածներէն: Բայց որովհետեւ երկուքին մէջ իրարու հետ խօսուած կէտեր շատ կան, մենք պիտանի եւ կարեւոր չենք դտներ այդ բաժանումը:

238. ՄԱՀ ԵՒ ՄԱՀԷՆ ՎԵՐՋ

«Կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ». փորձառական ճշմարտութիւն, զոր կը լուսաբանէ Յայտնութիւնը՝ բացատրելով անոր պատճառը. «Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, եւ ի մեղաց անտի՝ մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ» [Հռոմ. ե 12]: Այլուր եւս կը գրուի. «Գիտեմք, զի եթէ երկրաւոր տաճար չինուածոյս քակտեսցի, չինած յԱստուծոյ ունիմք՝ առանց ձեռագործի յաւիտենական յերկինս» [Բ Կորնթ. ե 1], ուր այնպէս կ'երեւի, թէ բնական բան մըն է մարդուն մահը, որովհետեւ ամէն երկրաւոր ի հարկէ պիտի լուծուի, մեռնի: Անհնար է մեզի չխոստովանիլ, թէ ամէն նիւթական բնութեան համար բնական է իր լուծումը, եւ թէ, ըստ այսմ, մարդուն համար ալ բնական է մահը:

© National Library of Armenia

Միայն թէ Մննդոց Գիրքէն կ'իմանանք, թէ առաջնաստեղծ մարդուն վիճակը զերծ պիտի ըլլար մահէն ոչ թէ իրաց կարգին համեմատ, այլ՝ Արարիչին գերբնական չնորհին համեմատ. ու երբ մեղքին պատճառաւ դադրեցաւ գերբնական չնորհը, մարդը դարձեալ իր բնական վիճակին մէջ ինկաւ, եւ յաջորդեց մահը՝ իբրեւ պատուհաս: Ըստ այսմ ալ՝ մահը կը կոչուի վախճան բնական եւ նոյն ատեն՝ արդիւնք գերբնական:

239. ՄԱՀ ԱՄԵՆՈՒՆ

Արդեօք բոլոր մարդիկ պիտի մեռնի՞ն, թէ ոչ՝ պիտի ըլլան այնպիսիները, որոնք պիտի չմեռնին, այլ ա՛յս կեանքէն նոյնիսկ պիտի փոխադրուին հանդերձեալ կեանքը՝ առանց միջանկեալ մահուան: Պօղոսի վերեւ յիշուած խօսքերը, երբ բառացի իմաստով առնուին, կը թուին մերժել որեւէ բացառութիւն: Բայց որովհետեւ առաքեալը այլուր ինքն իսկ կ'ընդունի ոմանց՝ առանց մահը ճաշակելու՝ ասկից հանդերձեալը փոխադրուիլը եւ կ'ըսէ, թէ՝ «Մեք, որ կենդանիք եմք, մնացեալք ի գալստեան Տեառն ոչ ժամանեմք նոյնգեցելոցն», եւ թէ՝ «Մեք, որ կենդանւոյն մնացեալ իցեմք, նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս» [Ա Թես. Դ 14, 16], այս պատճառաւ չատերուն լաւագոյն թուեցաւ ըսել, թէ մահ չճաշակողներ ալ պիտի ըլլան: Եւ այս մտքով է, որ Հանգանակին մէջ կ'ըսենք, թէ՝ «Գալոց է ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»: Այսուհանդերձ, մինչ արեւելեայք ոմանք կ'ընդունին ոմանց կենդանի մնալը, արեւմտեայք ընդհանրապէս կ'ըսեն, թէ մնացածները թէեւ վայրկենական մահ մը պիտի ունենան, բայց պիտի մնան ընդհանուր դատակնիքէն եւ մահուան պատուհասէն:

Այս կարծիքներու տարբերութիւնը յառաջ կու գայ Պօղոսի կարգ մը խօսքերուն տարբեր ընթերցուածներէն, զի ուր որ մեր սովորական օրինակները ունին՝ «Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան նորոգեսցուք յանկարծակի ի փող յետին, քանզի փող հարկանի» [Ա Կորնթ. ԺԵ 52], ուրիշ կերպ կ'ընթանան ուրիշներ. յոյնը ունի՝ «Ոչ ամենեքեան ննջեսցուք, այլ ամենեքեան նորոգեսցուք յանկարծակի, յական թօթափել ի փող ետին, քանզի փող հարկանի» եւ այլն, իսկ լատինը ունի՝ «Ամենեքեան յարիցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք: Յանկարծակի, յական թօթափել, ի փող յետին, քանզի փող հարկանի» եւ այլն: Յոյնը ըստ իմաստի համաձայն է մերինին եւ տարբեր է տնադրութեամբ միայն. իսկ լատին ընթերցուածը

օտարացած կը թուի բնագրէն, որուն աւելի կը յարմարի հնագոյն հայերուն կարծիքը:

240. ՀՌՈՄԷԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Շատ աւելի կը տարբերին կարծիքները, երբ պէտք կ'ըլլայ որոշել մարմինէն բաժնուած հոգիներուն վիճակը: Լատին Եկեղեցին իր այժմեան վարդապետութեան համաձայն կ'ընդունի, թէ իր մարմինէն զատուած հոգին անմիջապէս կը դատուի եւ վճիռ կ'ընդունի իր գործերուն համար. եթէ ըստ ամենայնի արդար է, նոյն յետայն կը ժառանգէ արքայութիւնը, որ է Աստուծոյ երանաւէտ տեսութիւնը. եթէ ծանր յանցանքներով մեղաւոր է, դժոխքի կը դատապարտուի. իսկ եթէ ոչ մին է եւ ոչ միւսը, այլ թեթեւ մեղքով մեղաւոր է կամ չէ լրացուցած ծանր մեղաց ապաշխարութիւնը, կը դատապարտուի քաւարանի մէջ մնալու ժամանակաւորապէս՝ մինչեւ լրումը սահմանուած արդելականութեան, որմէ վերջ իսկոյն արքայութիւն կը փոխադրուի՝ մաքրուած եւ արդարացած: Իսկ եթէ անկնունք մանուկ է առանց ներգործական մեղքի, կը մնայ Լիմպոսին մէջ, որ է տեսակ մը արգելարան մշտնջենաւոր զրկման՝ առանց տանջանքի: Լրացնելու համար այս խնդրոյն վերաբերմամբ հարկաւոր տեղեկութիւնը, պէտք էր ըսել, թէ իւրաքանչիւր անձի համար կատարելի առանձնական դատաստանը ո՞ւր պիտի կատարուէր արդեօք՝ հոգիին՝ մարմինէն ելած տե՞ղը, թէ՞ հոգիին՝ իրեն յատկացեալ տեղը փոխադրուելէն վերջ: Դարձեալ հարկ էր որոշել, թէ ո՞վ պիտի ըլլայ դատաւորը՝ Աստուա՞ծ ինքնին՝ մարդեղութեան խորհուրդէն անկախաբար, թէ՞ Քրիստոս՝ իբրեւ մարդացեալ Որդի Աստուծոյ: Այս վերջին ենթադրութեան պարագային հա՞րկ է արդեօք կարծել, թէ Քրիստոս իւրաքանչիւր վախճանեալի քով պիտի անցնի եւ դատաստան կարգէ իւրաքանչիւրին համար: Հռոմէականները թէեւ կ'ընդունին այս վերջին պարագաները, բայց չեն պնդեր, թէ ստո՞յգ են անոնք հաւատքի ստուգութեամբ, ինչպէս կը պնդեն վիճակներու անմիջական որոշման մասին:

241. ՀԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բայց այս չէ հին վարդապետութիւնը, որ երբէք չճանչցաւ առանձնական դատաստան իւրաքանչիւր վախճանեալի համար, այլ ճանչցաւ այն դատաստանը միայն, որ ներկայ կեանքի վախճանին պիտի կատարէ Քրիստոս մարմիններու յարութեան ատեն եւ այն

© National Library of Armenia

ատեն միայն պիտի տայ վճիռը արքայութեան յաւիտենական երանութեան եւ դժոխքի յաւիտենական տանջանաց համար: Այդ երկու վերջնական օթարաններէն դուրս, ուրեմն, պէտք է կենաց ուրիշ տեղ մը, ուր սպասեն մարմինէն զատուած հոգիները. այդ տեղն է այն, զոր սովորաբար կը կոչենք կայան հոգւոց: Իսկ որովհետեւ պատշաճ չի թուիր այդ կայանին մէջ խառնաշփոթ կերպով ընդունիլ արդարները՝ ամբարիշտներուն եւ սուրբերը անսուրբներուն հետ, ուստի, թէեւ ոչինչ յստակօրէն գիտենք վարդապետական տեսակէտով, բայց անբանաւոր չի թուիր մտածել, թէ եթէ ոչ դատաստանով եւ որոշումով, բայց գոնէ ընտրանքով կը պահուին նմանները նմաններու հետ. մինչ բոլորովին անդէպ պիտի ըլլար ըսել, թէ ամէնքը առ հասարակ կը տանջուին նոյն անորոշ տագնապով՝ հաւասարապէս հնարաւոր տեսնելով իրենց անձերուն համար. սուրբերը՝ տանջանքները, եւ անսուրբները՝ երանութիւնը: Այս պատճառաւ ընդհանրապէս կ'ընդունուի իւրաքանչիւր հոգիի տրուած մտքի լուսաւորութիւն մը իր վիճակին մասին, որով Դատաստանի օրէն ալ առաջ արդարները կ'ուրախանան երանութեանց ակնկալութեամբ, ինչպէս ամբարիշտները կը տխրին տանջանքի երկիւղով:

242. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Եւ որովհետեւ անյայտ ապառնիներու վրայ կը խօսինք, որոնց մասին ոչինչ կայ Յայտնութեան մէջ, այս պատճառաւ պէտք չէ զարմանալ, եթէ երբեմն ոմանք ըստ իրենց տեսութեան տարբերեալ դրութիւններ կազմեն: Բայց այդ տարբերութիւններուն մէջ իսկ բան մը կայ, որ հաստատուն է մեզի համար՝ իբրեւ կուտան ոտից. այդպիսի իրողութիւն մըն է սա, թէ հոմէականաց առանձնական ըսած դատաստանը եւ անմիջական հատուցումը արտաքոյ է Աւետարանի վարդապետութենէն եւ հետեւաբար օտար՝ Ուղղափառ Եկեղեցւոյ հնաւանդ դաւանութեան. Սուրբ Գիրքն յայտնի վկայութիւններ կը հաստատեն զայդ, ինչպէս Պօղոսի խօսքերը. «Կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ՝ արդարն Դատաւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն, որք սիրեցին զյայտնութիւն Նորա» [Բ Տիմ. Դ 8]. «Հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ» [Գործք ԺԷ 31]. «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի Աթոռոյն Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. Ե 10]:

Այս մտքով կ'իմանան նաեւ ոմանք այս խօսքերը. «Սոքա ամենեքին, վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» [Եբր. ԺԱ 39]: Ու Յովհաննէս կ'ըսէ. «Ցորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զՆա, որպէս եւ էն» [Ա Յովհ. Գ 2]: Քրիստոս Ինքնին ըսաւ. «Երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնում զձեզ առ Իս» [Յովհ. ԺԴ 2]:

Բայց յայտնագոյն եւ վճռական է նկարագիրը Դատաստանին, զոր Ինքն Քրիստոս չարչարանքէն քանի մը օրեր առաջ խօսեցաւ, եւ ուր մի առ մի յառաջ կը բերուին Առեանին բացումը, օրէնքներուն, արժէքներուն բաժանումը, գործերուն քննութիւնը եւ երանութեան ու դատապարտութեան վճիռները եւ սկզբնաւորութիւնը հատուցմներուն՝ մեղաւորաց մտնելը յաւիտենական տանջանքներուն մէջ եւ արդարներուն՝ յաւիտենական կեանքը [Մատթ. ԻԵ 31–46]:

243. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԿԱՑՈՒԹԻՒՆ

Ընդդէմ այս յայտնութեան ըսածներուն, որոնք ուշ կը ցուցնեն հատուցմանց վերջին օրը, անուշտ ոչինչ կը զօրեն այն խօսքերը, որոնց մէջ կը յիշատակուին արդարներուն խոստացուած երանութիւնները եւ մեղաւորներուն սպառնացած տանջանքները, որովհետեւ անոնք մահէն ետքի անմիջականութիւն չեն ցուցաներ, այլ՝ հատուցմանց հաստատութիւնը եւ ստուգութիւնը: Գրուած է, այո՛, Աւետարանին մէջ. «Եղեւ մեռանել աղքատին եւ տանել հրեշտակացն զնա ի գոգն Աբրահամու: Մեռաւ եւ մեծատունն եւ թաղեցաւ: Եւ ի դժոխս ամբարձ զաչս իւր» եւ այլն [Ղուկ. ԺԶ 22–23]: Սակայն նախ՝ առակ է ըսուածը եւ ոչ թէ՝ պատմութիւն, ուստի եւ եղելութեան մասին ոչինչ կը հաստատէ, եւ երկրորդ՝ լատինաց կէտադրութիւնը չի համապատասխաններ յունականին եւ մերինին, զի անոնք կ'ուզեն կարդալ՝ «Եւ թաղեցաւ ի դժոխս», որպէսզի իրենց կարծիքը հաստատեն: Եւ, ի վերջոյ, ի՞նչ է Աբրահամու գոգը, ո՞ւր էր Ղազարոս. ամէն պարագայի մէջ, յաւիտենական վարձուց արքայութիւնը չէր ան, դժոխքն ալ չէ, ուրեմն, յաւիտենական տանջանքի տեղը:

© National Library of Armenia

244. ԱԻԱԶԱԿԻՆ ԽՈՍՏՈՒՄԸ

Հռոմէականները յառաջ կը բերեն Քրիստոսի ըսած խօսքը աւազակին. «Այսօր ընդ Իս իցես ի դրախտին» [Ղուկ. Ի Գ 43], պնդելով «այսօր»-ին վրայ: Սակայն ո՛չ «այսօր»-ը իսկոյնը կրնայ ցուցանել, զի, նոյնիսկ ըստ Հռոմայեցւոց կարծեաց, գոնէ Քրիստոսի Յարութեան եւ Համբարձման պէտք էր սպասել, եւ ոչ թէ «դրախտ»-ի յափտենական արքայութիւնը կրնայ նշանակել ըստ ինքեան, եւ որպէսզի կարող ըլլայինք մեկնողաբար տարածել իմաստը, պէտք էր որ ուրիշ տեղէն իմացած լինէինք ատոյգը: Յառաջ կը բերեն նաեւ Ցայտնութեան Գրքէն արդարներուն համար ըսուածը, թէ՝ «Կային առաջի Աթոռոյն եւ առաջի Գառինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս եւ արմաւենիս ի ձեռս իւրեանց» [Ցայտ. է 9], որուն մէջ յափտենական երանութեան վայելքը կը հաւաստուի՝ սպիտակ հանդերձներով եւ Աստուծոյ Աթոռին առջեւ կենալով: Բայց դիտելի է նախ, որ տեսիլք է այդ գրուածքը, եւ է, որ կը խօսի, ինչպէս ամբողջ Ցայտնութեան հիւսուածքը: Եւ երկրորդ՝ անոնց համար, որոնք սպիտակ հագած են, այլուր յատկապէս կը նշանակուի ակնկալութեան վիճակ. «Տուաւ նոցա ազանելիս սպիտակս եւ ասացաւ նոցա, զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա եւ եղբարք նոցա, որք հանդերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա» [Ցայտ. Զ 11]:

245. ԿԱՑԱՆՔ

Մանաւանդ է նոյնպէս եկեղեցւոյ ընդհանուր մէկ կարծիքը, որ մանաւանդ յայտնուած է եկեղեցական յաղթական երգերուն մէջ եւ ծիսական պարագաներու մէջ անգամ, որոնց մէջ անոնք, որ սուրբ են, կը նկարագրուին արդեամբք վայելող աստուածային տեսութեան եւ ամէն բարեաց եւ երանութեանց, որոնցմով պիտի լրանայ յափտենական հատուցմանց ամբողջութիւնը: Աւելորդ է այս մասին յառաջ բերել վկայութիւններ. ամէն քրիստոնեայ տեղեակ է այս իրողութեան: Հարկ է, ուրեմն, որ ըստ եկեղեցւոյ աւանդութեան ընդունինք, թէ վախճանեալներու հոգիները ունին առժամեայ կացութիւն մը՝ ո՛չ անմահ ակնկալեալ բարիքներէ եւ ո՛չ զերծ երկուցուած չարիքներէ, եւ թէ հոգիներու կայանները տարբերեալ են ըստ հանգամանաց, եթէ չուզենք զատ-զատ որոշուած ըսել տեղւոյ, կամ թէ բաշխուած է ըստ մասանց, եթէ չուզենք ըսել ըստ թուոյ: Մեր վարդապետներուն կարծիքով, ըստ Տաթեւացւոյն, կը զատորոշուին երկու կայաններ՝ մին՝

երկնից վերեւը, միւսը՝ երկնից ներքեւը: Առաջինին մէջ ժողուած են անոնք, որ թողուցին ամէն ինչ եւ գացին Քրիստոսի ետեւէն, իսկ երկրորդին մէջ կը դումարուին անոնք, որ այդպէս չեն ըրած. անոնք են, որոնք, սատանայի գործունէութենէն եւ աշխարհի կիրքերէն գրաւուած, կը մնան՝ սպասելով հանդերձեալ Դատաստանին, որպէսզի դուխով քաւուին եւ ողորմութեան արժանան: Այս երկու կայանները կը կոչուին աջակողմեան խորան: Իսկ ձախակողմեան խորանը այն է, ուր կը ժողվուին հոգիները չարերուն եւ մեղաւորներուն, որոնք Դատաստանով պիտի դատապարտուին: Աջակողմեան եւ ձախակողմեան կոչումը նիւթական գետեղման իմաստով չէ, այլ կը նշանակէ Քրիստոսի քաղցր հայեցողութիւնը, որ աջն է, եւ դառն հայեցողութիւնը, որ ձախն է: Ինք Տաթեւացին է, որ կը յայտնէ այս կարծիքը, թէ բոլոր հոգիները մէկ տեղի մը մէջ են, բայց զանազանութիւն կայ անոնց գործերուն մէջ. ոմն լի է անմահութեամբ եւ խնդութեամբ, եւ ոմն՝ դառնութեամբ եւ յուսահատութեամբ:

246. ԿԱՑԱՆԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Իսկ թէ ի՞նչ բանով առաջին կարծիքը կը տարբերի Հռոմէականներուն կարծիքէն, դիւրին է նկատել, թէ ուրիշ է ընդունիլ նախապատրաստական վիճակ մը յոյսի եւ երկիւղի՝ առանց որոշման Դատաստանի եւ վայելման վերջնական հատուցման, եւ ուրիշ է ըսել, թէ ամէն ինչ վերջացած է, դատաստանը եւ վճիռը հատուցուած են, որով այլեւս տեղի չի մնար Դատաստանի, հետեւաբար այլեւս չեն արդարանար այն խօսքերը, զորս Քրիստոս կ'ընէ Դատաստանի օրուան նկարագրականին մէջ, որովհետեւ այլեւս պէտք չի մնար օղիքը բաժնել այծերէն եւ ոչ ալ՝ գործերը քննելու եւ հետեւաբար՝ բարիները արքայութիւն մտցնելու եւ չարերը դժոխք նետելու, մինչ միւս կերպով սուրբերը արքայութենէն պիտի զրկուէին առեն մը՝ վերստին դատուելու համար, եւ մեղաւորները գոնէ առժամապէս պիտի զերծանէին դժոխքէն՝ կրկին դատուելու համար Դատաստանով: Մարդոց հոգիներու համեմատ պէտք է խօսիլ նաեւ աննիւթական հոգիներուն համար, վասնզի չատեր կան, որ կ'ըսեն, թէ հրեշտակներուն եւ դեւերուն համար ալ դատաստան պիտի ըլլայ, եւ թէ բարի եւ չար հրեշտակաց կայանները նոյն ինքն բարի եւ չար մարդոց կայաններն են, եւ ասկէց է, որ յաճախ արդարները բնականիկ կ'ըսուին հրեշտակներուն, եւ չարերը՝ դեւերուն: Նմանապէս, սուրբերը յաճախ փառաւորեալներ եւ ի փառս հանգուցեալներ կը կոչենք: Բայց փառքը կրկին իմաստ ունի, զի ուրիշ է գործոց փառքը, եւ

© National Library of Armenia

ուրիչ՝ հաստուցմանց փառքը. առաջինը կը պատկանի յոյսի կայանքին, երկրորդը՝ երկնից արքայութեան: Առաջինովը միշտ կը փայլին արդարները Դատաստանէն առաջ, երկրորդովը պիտի փայլին Դատաստանէն վերջ, որով աջակողմեանները փառքէ փառք պիտի բարձրանան, վերանան, երբ լսեն երանական օրհնութեան ձայնը, իսկ առ այժմ ամենուն կը մնայ բարեաց յուսով հանգչիլ արդարոց օթեւանին մէջ՝ մինչեւ Քրիստոսի մեծ Գալուստը:

247. ԴՐԱԽՏԻՆ ԱՆՈՒՆԸ

Ոամիկը դրախտ անունը յաճախ կը գործածէ իբրեւ անուն այն տեղին, ուր է հոգիներուն կայանը, եւ այս անունը կը համեմատուի եդեմական դրախտին հետ՝ կարծուելով նոյն այն տեղը, ուակից արտաքսուեցաւ Ադամ, եւ ուր կը դառնան արդարներուն հոգիները՝ մինչեւ Դատաստանին օրը յուսով հանգչելու համար: Սակայն Տաթեւացին «ի տգիտաց յարմարեալ» կ'ըսէ ատոր համար, որովհետեւ անմարմին հոգիներու համար մարմնաւոր կայանի պէտք չկայ: Այս պատճառաւ խորհրդական իմաստով պէտք է հասկնալ՝ «Էրանեալ աւազակին բացեր զդուռն Ադին դրախտին», եւ՝ «Ցորժամ եղ Ադամն հին, եղ զաւազակն ի մէջ դրախտին», որոնք անշուշտ յարմարցուած են Քրիստոսի «Այսօր ընդ Իս իցես ի դրախտին» խօսքին [Ղուկ. ԻԳ 43]:

248. ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ ԿԱՐԾԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ցոյժ ի դէպ է այստեղ յիշեցնել այն խնդիրը, որ կը յուզուէր Արեւմուտքի մէջ՝ դոմինիկեան եւ ֆրանչիսկեան վարդապետութեանց միջեւ: Վերջիններն կը պաշտպանէին, թէ արդարներուն հոգիները, Յարութենէն եւ Դատաստանէն առաջ թէեւ երկինք վերացած, չեն վայելեր աստուածային երանական տեսութիւնը, այլ միայն կեցած կը մնան Քրիստոսի առջեւ՝ ըստ մարդկային կերպարանին, որ է Գառն Աստուծոյ: Իսկ առաջինները կը պնդէին, թէ մահէն անմիջապէս ետքը, եթէ արդար են, կամ մաքրարանին մէջ սրբուելէ վերջ կը մտնեն արքայութիւն եւ կը սկսին վայելել յատկութենական հաստուցման երանական տեսութիւնը: Ցովհաննէս ԻԲ Հռոմի Հայրապետը հաստատեց ֆրանչիսկեանց վարդապետութիւնը (յամին 1320), իսկ իր յաջորդը՝ Բենեդիկտոս ԺԲ, քանհինգ տարիներ յետոյ (1345) դոմինիկեանց կողմը բռնեց եւ հաստատեց այն կարծիքը, որ այժմ կը տիրէ Լատինաց եկեղեցիներուն մէջ, բայց յայտնապէս կ'երեւի, թէ նորագոյն դաւանութիւն մըն է այդ: Ցայտնի է, թէ դոմինիկեաններէն էին Ունիթորները, որոնք Հայոց մէջ Հռոմէական կարծիքին առաջին պաշտպանները եղան:

249. ՀԱԶԱՐԱՄԵԱՑՔ

Հազարամեայց կամ քիլիաստայց կարծիքը Լուսեցաւ Եկեղեցւոյ առաջին դարերուն՝ իբրեւ վերջին նշխար ակնկալութեան Քրիստոսի մօտալուտ Գալստեան եւ իբր բառական մեկնութիւն Ցայտնութեան խօսքերուն, ուր կը տեսնուին, որ արդարները հազար ամ կը թագաւորեն Քրիստոսի հետ [Ցայտ. Ի 4]: Այդ թագաւորութիւնը պիտի տեղի ունենար երկրի վրայ, ուր Քրիստոս վերստին պիտի երեւէր իբրեւ Թագաւոր: Իր ընտրեալները, որոնք Իր հաւատքին համար նահատակուեցան կամ որոնք չուրացան Անոր հաւատքը, պիտի միասին թագաւորէին առաջին Յարութեամբ մինչեւ երկրորդ Յարութեան ժամանակը, որմէ վերջ երկինց արքայութիւնը պիտի մտնէին: Նախնի հայրերէն ոմանք եւս, ինչպէս՝ Պապրոս, Ցուստինոս, Երանոս եւ Լակրատինոս, հազարամեաններէն կը համարուին, սակայն անոնց կարծիքը տարբեր էր քիլիաստեայց կարծիքէն, որոնք հազարամեայ թագաւորութիւնը երկրաւոր հնչտութեանց մէջ կը հաստատէին, մինչ առաջիններն սուրբ եւ հոգեւոր վայելքներու մէջ կը դնէին զայն: Հազարամեայց կարծիքը նորագուեցաւ Արեւմուտքի մէջ ԺԲ. դ., կալաբրացի Ցովակիմ աբբայի ձեռքով, որ առաջնորդ եղաւ յովակիմեանց աղանդին, ու բողոքականաց ծագումէն ետքը անոնցմէ ոչ սակաւք ընդգրկեցին հազարամեայց վարդապետութիւնը՝ պաշտպանելով զայն Նեռին եւ պոռնկած Բաբելոնի անկման [Ցայտ. ԺԸ 2], որուն մէջ ուզեցին տեսնել Հռոմի Եկեղեցիին պատկերը: Սակայն հիմակ այլեւս չեն երեւիր հազարամեաններ, եւ անոնց կարծիքը պէտք է դասել ի կարգ վաղնջական երեւոյթներու, որոնք արժանի իսկ չեն յիշատակութեան՝ իբրեւ վարդապետական դրութիւն:

250. ԱՇԽԱՐՀԻ ԿԱՏԱՐԱԾԸ

Հաստատելէ վերջ, թէ ո՛չ մէկ վճիռ եւ ո՛չ ալ հաստուցման գործադրութիւն կը լինին ննջեցեալներու վրայ իրենց մահուան րոպէին, կը մնայ խօսիլ այն գործերուն եւ պարագայից մասին, որոնք պիտի կատարուին աշխարհի վախճանին: Շատ են այն խնդիրները, որոնք կը յուզուին կատարածին մասին, եւ Աւետարաններու եւ

© National Library of Armenia

Առաքելական Թուղթերու մէջ եղած կանխասաց գուշակութիւնները, թէեւ ամէնքն ալ, խորհուրդի եւ գաղտնութեան վարագոյրով ծածկուած ըլլալով, տեղի կու տան մեկնութեանց եւ բացատրութեանց՝ իւրաքանչիւր անձի քմահաճոյից համեմատ: Եւ այս՝ ոչ միայն այժմ, այլ նաեւ՝ նախկին եւ առաջին դարերուն: Պօղոս կատարածի ժամանակին մասին երբ կը խօսէր, իբր կանխազգեկոյց նշան կը ցուցանէր Սուտ Քրիստոսի գալուստը, որ է ըսել, թէ պիտի տեղի չունենար Քրիստոսի Գալուստը, «եթէ ոչ եկեսցէ նախ ապստամբութիւն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան» [Բ Թես. Բ 3]: Այս իսկ է, որ կը կոչուի ըստ մեզ Նեռն՝ անունէն Ներոնի, որուն ուրիշներ կը պատշաճեցնեն հակաքրիստոսի մասին Յովհաննու խօսքերը: Նեռին գալուստը եւ անոր ձեռքով կատարելի աստուածամարտ չարութեանց եւ ամբարշտութեանց գործերը, առանց մահը ճաշակելու վերացած Ենովքի եւ Եղիայի երեւիլը եւ անոնց վկայութիւնը, երկնքի անհետացումը, երկրի կործանումը, երկնային մարմիններու համանգամայն խառնակիլը եւ ներկայ տիեզերական դրութեան խանգարումը՝ այդ ամէնը, որոնք կատարածին իբր հանգամանքները կը յիշուին, մեր խօսքին հետ որեւէ կապ չունին, որովհետեւ կարելի չէ զանոնք հաւատոց մասունք նկատել եւ ոչ ալ՝ իբրեւ դաւանական կէտեր՝ յայտնութեան զօրութեամբ, այլ առաւելն՝ իբրեւ ակնկալեալ գուշակութիւններ:

251. ՄԵԼԻԵԼՈՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Սակայն կարելի չէ նոյնը ըսել մարմիններու հանդերձեալ յարութեան մասին, որ իբրեւ դաւանակէտ արձանագրուած է Հանգանակին մէջ: Իսկութեան մէջ հիմնական նկատուածները հետեւեալներն են. նախ՝ թէ ընդհանուր է յարութիւնը. բոլոր մարդիկ, որոնք եղած են աշխարհի վրայ, պիտի կենդանան վերստին: Երկրորդ՝ յարութիւնը պիտի ըլլայ նորոգ մերձեցմամբ մարմիններու հետ եւ այն՝ իւրաքանչիւրին իր սեփական մարմինին հետ ու պահելով էական եւ սեռական հանգամանքները, զոր ունէր մահուան ատեն: Երրորդ՝ յարուցեալներուն մարմինները ի նորոյ պիտի ստանան անապականութեան ձիրքեր, որոնցմով այլեւս պիտի չլուծուին եւ պիտի չմեռնին, թէպէտեւ այդ ձիրքերը տեսակ-տեսակ պիտի ըլլան՝ նայելով, թէ ո՞ւր պիտի մտնեն յարուցեալները՝ յաւիտենական կեանո՞ց, թէ՞ յաւիտենական տանջանաց մէջ: Ուրիշ խնդիրներ եւս յուզուած են, մանաւանդ՝ դպրոցականներուն մէջ, մարմիններու նոյնութեան, բաղկացուցիչ տարրերու հաւաքման, մասերու ամբողջութեան, անդամներու

խեղութեանց եւ թերութեանց, հասակի կամ տարիքի, հասակի երկարութեան կամ չափի եւ մարմնին թանձրութեան եւ ատոնց նման արտակարգ մանրամասնութեանց չուրջ: Բայց ատոնց համար ո՛չ Ս. Գիրքէն կարելի է ստոյգ բան մը քաղել եւ ո՛չ ալ՝ դաւանական ստուգութիւններ ձեռք բերել: Այսպիսի հարցեր՝ դպրոցական մտայնութեան ծնունդ մեծ մասամբ, այժմ հոմմէականներուն մէջ անգամ չեն արծարծեր նախկին չահագրգռութիւնը:

252. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏը

Մեռելոց յարութեան ճշմարտութիւնը աներկբայ է աւետարանական վարդապետութենէ, այնու, զի Քրիստոսի օրով սադուկեցիները կ'ուրանային զայն, եւ Քրիստոս ուղղակի կը մերժէր ատոնց մոլորութիւնը [Մատթ. ԻԲ 31, Ղուկ. Ի 38]: Նոյնպէս Պօղոս ալ քահանայապետին ատեանին մէջ սադուկեցիները յանդիմանելու համար յարութեան խնդիրը մէջ կը բերէր [Գործք ԻԳ 6]: Բայց մենք զայն ուղղակի վարդապետութեամբ ալ քարոզուած կը գտնենք Քրիստոսէ, որ կ'ըսէր. «Եկեսցէ ժամանակ, յորում ամենեքին, որք ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի Նորա եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց» [Յովհ. Ե 28], ու առաքեալ կը գրէր. «Հաւատամք, եթէ Քրիստոս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ Նմա» [Ա Թես. Դ 13]. եւ հարկ է կարդալ, ինչ որ եղբայրօրէն կը գրէ առ կորնթացիս [Ա Կորնթ. ԺԵ] եւ Տիմոթէոս [Բ Տիմ. Բ] յանդիմանելու համար յարութիւնը ուրացողները: Իսկ այն փաստը, զոր կարելի է քաղել աւանդութենէն, հաստատուն է այն ակնկալութեամբ, որ եղած է բոլոր քրիստոնեաներուն մխիթարութիւնը այս կեանքի տառապանաց մէջ, եւ զոր եկեղեցին չարունակ քարոզած է՝ հետեւելով առաքեալին խօսքերուն, ուր հաստատելէ վերջ, թէ «մեռեալք ի Քրիստոս յարիցեն», կը յարէր. «Այսուհետեւ մխիթարեցէ՛ք զմիմեանս բանիւքս այսոքիւք» [Ա Թես. Դ 17], ուր ասոր կ'ակնարկէր Տերտուղիանոս, երբ կ'ըսէր. «Մեռելոց յարութիւն՝ քրիստոնէից ակնկալութիւն»:

253ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԷՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէեւ մենք կը պաշտպանենք մեռելոց յարութիւնը իբրեւ քրիստոնէական վարդապետութիւն, բայց անդէպ չէ աւելցնել նաեւ Հին Կտակարանէն վկայութիւնները՝ ցուցնելու համար զոնէ այս վարդա-

© National Library of Armenia

պետութեան հնութիւնը: Յոբ կ'ըսէր. «Գիտեմ, թէ զի մշտնջենաւոր է, որ լուծանելոցն է զիս յերկրի՝ յարուցանել զմորթ իմ. որ կրեաց զայս ամենայն» [Յոբ ԺԹ 25]: Ու Դանիէլ կը գրէ. «Բազումք ի ննջեցելոցն ի հող յերկրի յարիցեն՝ ոմանք ի կեանս յաւիտենականս եւ ոմանք ի նախատինս եւ յամօթ յաւիտենական» [Դան. ԺԲ 2]: Այս յոյսով կը խօսէր Շամունեայ որդւոց երկրորդը, «Այն, որ աշխարհաց Թագաւորն է, թէպէտեւ մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանն յաւիտենից, ի միւսանգամ ծննդեան ժամանակի կենաց ի կեանս դարձուցանէ», ու չորրորդը կը յարէր. «Ցուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեան յարութեան մեռելոց» [Բ Մակ. է 14]: Ու Մարթա՝ Ղազարոսի քոյրը, կ'ըսէր Քրիստոսի. «Գիտեմք, զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում» [Ցովհ. ԺԱ 24]: Իսկ փարիսեցւոց բովանդակ աղանդը ուժգնապէս կը պնդէր սադուկեցւոց դէմ, թէ կայ յարութիւն [Գործք Գ 8]:

253բ. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԳԻՐՔԷՆ

Գիտենք, թէ Հին Կտակարանի Ս. Գրոց մէջ կան ինչ-ինչ խօսքեր, որոնք երկբայելի կ'ընեն մեռելոց վերանորոգումը: Ըստ այսմ գրուած է Սաղմոսին մէջ. «Ցիչեաց, թէ մարմին են նոքա, հոգի, որ ելանէ եւ ոչ եւս դառնայ» [Սաղմ. Հէ 39]: Դարձեալ՝ «Ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զՔեզ» [Սաղմ. ՃԺԳ 17]: Դարձեալ՝ «Ոչ յարիցեն ամբարիշտք ի Դատաստան» [Սաղմ. Ա 5]: Նման են նաեւ Ժողովողին խօսքերը. «Պատահար է որդւոց մարդկան եւ պատահար անասնոց եւ պատահար յամենեսին ի նոսա, որպէս մահ սորա, նոյնպէս եւ մահ նորա, եւ չունչ է յամենեսին» [Ժող. Գ 19]: Բայց եթէ ճշտութեամբ զննուին այս խօսքերը, անոնք ըսուած են այս աշխարհի կենաց համար, ներկային համար, որ մինչեւ գերեզման կը տեւէ եւ կը դադրի երկրի վրայ: Եւ յետոյ, այդ խօսքերը ըսուած են ոչ թէ իբրեւ վարդապետական խօսքեր, այլ՝ միշտ իբրեւ այլաբանութիւն յառաջ բերուած՝ ցուցնելու համար վիշտերու ծանրութիւնը կամ աշխարհիս անցաւորութիւնը: Ժողովողին վերջին խօսքին ծայրը կը կարդանք. «Ամենայն ի մի տեղի երթայ, ամենայն եղեւ ի հողոյ եւ ամենայն դառնայ ի հող, եւ ո՛վ գիտէ զոգիս ոգւոց մարդկան, եթէ ելանեն ի վեր, եւ զչունչ անասնոց, եթէ իջանէ ի խոնարհ յերկիր» [Ժող. Գ 20, 21], ուր հակառակորդները կը տեսնեն իրենց կարծեաց հաստատութիւնը: Ընդհակառակն սակայն՝ անոնց մէջ յստակօրէն կը տեսնուի մարմինին՝ հոգիէն տարբերութիւնը, եւ մարդուն հոգիին՝ անասնոց հոգիէն տարբերութիւնը, մանաւանդ՝ բնագրին համեմատ,

որ աւելի բացայայտ է. «Եւ ո՞վ գիտէ զոգիս մարդոյն, որ ելանէ ի վեր, եւ զոգի անասնոյն, որ իջանէ ի խոնարհ յերկիր»: Իսկ յարութեան խնդրի խօսք չկայ հոս, զի այդ մասին չէ խօսքը: Նոյնն է նաեւ Սաղմոսին խօսքը. «Ոչ յարիցեն ամբարիշտք ի Դատաստան»: Ըստ բնագրին է. «Եւ ոչ կարասցեն ամբարիշտք Դատաստանի», որ է ըսել «Մի՛ կարասցեն արդարանալ յաւուրն Դատաստանի»:

254. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՆՈՒԹԵՆԷՆ

Ուրիշներ իրաց բնութեան կարգէն կը հանեն իրենց տեսութիւնները, որպէսզի ցուցանեն, թէ մարմիններու յարութիւնը ո՛չ պատշաճ է, ո՛չ հնարաւոր: Վասնզի,- կ'ըսեն,- մարմինը ինչո՞ւ հատուցմանց ենթարկուի, քանի որ մարդկային եւ բարոյական գործոց արժէքն ու արդիւնքը հոգիին են եւ ոչ թէ՝ մարմինին: Եւ դարձեալ կ'ըսեն, թէ ինչո՞ւ այդ երկարատեւ բաժանումը, եթէ մարմինը կարեւոր էր հոգիին համար, պէտք չկար, որ անկէց զրկուէր հոգին մինչեւ կատարածը: Իսկ եթէ կարեւոր չէր, ի զուր էր նորէն միաւորելու երկուքը: Սակայն ո՞չ ապաքէն մարդկային ենթական իր ամբողջութեամբն է մարդ՝ կազմուած հոգիէ եւ մարմինէ, ու՝ եթէ գործերը ենթակայինն են, հատուցումն ալ անորը պիտի ըլլայ, ապա ուրեմն եւ մարմինին մասնակցութիւնը չատ ալ պատշաճ է, այնպէս որ իմաստասէրներէն չ'ատերը, այս պատշաճութեան վրայ հիմնուելով, կը ջանան ապացուցանել յարութեան հարկաւորութիւնը՝ հետեւելով Պօղոսի խօսքին. «Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. Ե 10], իսկ երկարատեւ բաժանումը հետեւութիւն է իրաց բնական կարգին, որպէսզի լրանայ մարդկութիւնը, եւ գայ կատարածը, եւ հատուցմանց ժամանակն ըլլայ: Առարկութեանց երկրորդը գուցէ զօրէ հռոմէականաց դրութեան դէմ, որոնք արդէն հոգիները միայնակ կը մտցնեն յաւիտենական հատուցման մէջ, եւ երբ մէկը արդէն կ'ըսէ, թէ դատաստանները եւ հատուցումները կատարուած են առանց մարմիններու, տկարացուցած կ'ըլլայ արդէն յարութիւնը ապացուցելու հարկը:

255. ՈՒՐԻՇ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրիշներ անլուծելի դժուարութիւններ ցուցնելու համար յարութեան նիւթական գործադրութեան խնդիրներ կը հանեն: Կ'ըսեն. ա) Շատ մարմիններ ուրիշներու մարմիններուն մէջ լուծուած-կորսուած են, զոր օրինակ՝ սովորական կամ պատահական մարդակերութեան

© National Library of Armenia

հետեւանքով: բ) Առանց մարդակերութեան ալ լուծուած մարդկային մարմիններու տարրերը ուրիշ մարդկային մարմիններու կամ բոյսերու կամ օդի մէջ փոխանցուած են եւ վերստին ուրիշ մարդերէ իւրացուած են՝ անոնց անունդ ըլլալով, եւ այսպէս անվերջանալի փոխարկութեանց հոլովմանց մէջ են: գ) Ինք՝ մարմինն ալ, կ'աճի եւ կը նուազի, տարրեր կ'ընդունի իր մէջ եւ կ'արտաքսէ եւ ամբողջ իր գոյութեան ընթացքին միշտ փոփոխութեան մէջ է, այնպէս որ դժուար կ'ըլլայ որոշելը, թէ որո՞նք են իւրաքանչիւր մարմինին իսկական տարրերը, որոնցմէ պիտի կազմուի յարուցեալ մարմինը: դ) Նոյնիսկ հաշիւի կ'առնեն թիւը մարդոց, որոնք եղած են աշխարհի սկիզբէն մինչեւ կատարածը, ու կ'ըսեն, թէ անկարելի է, որ մեր հողագունդը կարենայ պարունակել բոլոր յարուցեալները: Սակայն այս եւ ասոր նման խօսքերուն դիտումն է՝ Յարութեան վարդապետութիւնը տանիլ այնպիսի նիւթական եւ տարրական նոյնութիւններու, որոնց ոչ մէկ խոհական մարդ չի կրնար համամիտ ըլլալ: Չի մենք մարմիններուն նոյնութիւնը յիշեցինք գաղափարին պարզ առումովը, առանց խծբծական պարագաներու, այնպէս որ կարենան յարմարիլ յաւիտենական կեանքի նոր կացութեան, որ շատ կը տարբերի այս կեանքի անցաւոր կացութենէն: Ըստ այսմ, ո՛չ տեղի եւ ո՛չ ալ պարունակութեան խնդիր կարելի է ընել: Չի այսպիսի առարկութիւններ ոչինչ ուելի կը զօրեն, քան ինչ որ եօթը եղբայրներու կնոջ մասին Քրիստոսի կը հարցնէին սադուկեցիները եւ պատասխան կ'ընդունէին, թէ հանդերձեալ կեանքի պարագաները պէտք չկայ կերպարանելու այս կեանքի պարագաներու համեմատ, եւ մանաւանդ՝ մարմիններու պարագայից մէջ կայ եւ կը մնայ այնպիսի այլակերպութիւն մը, որուն գլխաւոր հանգամանքները միայն կը յայտնէ Պօղոս՝ անչունչներու մէջ կատարուած փոփոխութեան նմանութեամբ, երբ կ'ըսէ. «Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան, սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառօք, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զօրութեամբ, սերմանի մարմին չնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր» [Ա Կորնթ. ԺԵ 42-43]:

256. ԴԱՏԱՍՏԱՆ

Յարութենէն վերջ կու գայ Դատաստանը: Ինչ որ մենք պարզապէս կը կոչենք Դատաստան, հռովմէականք կը յարանուանեն ընդհանրական, որպէսզի որոշեն ենթադրական առանձնականէն, որուն մասին խօսեցանք արդէն: Իսկ Դատաստանին կը հակառակին նախանոնք, որ կը մերժեն յարութեան եւ հանդերձեալին հետ կատարուելիք որեւէ դատողական գործ: Կը հակառակին նաեւ անոնք, որոնք, յարութիւնը մերժելով, կ'ընդունին միայն իւրաքանչիւր անձի համար իր մեռած պահուն տրուած որոշում մը: Կը հակառակին նոյնպէս հռոմէականները, որոնք, առանձնական Դատաստանը ընդունելով, կատարածին ոչ մէկ դատողական գործ կը թողուն: Մինչդեռ Դատաստանին ստուգութիւնը աներկբայելի է այն ընդարձակ նկարագրականէն, զոր Քրիստոս ըրաւ՝ ըսելով. «Եկեսցէ Որդի Մարդոյ փառօք Իւրովք... եւ նստիցի յաթոռ փառաց Իւրոց, եւ ժողովեսցին առ Նա ամենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ի միմեանց... կացուսցէ զոչխն ընդ աջմէ Իւրմէ եւ զայծեան՝ ընդ ձախմէ. ասասցէ (ցառջինն). «Եկա՛յք, օրհնեա՛լք, (եւ այլն)». ասասցէ եւ ցայնոսիկ, որք ընդ ահեկէն իցեն. «Երթա՛յք յինէն (եւ այլն)», եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս» [Մատթ. Իե 31-46]: Նոյնպէս եւ Պրոպատիկէի քարոզութեան մէջ մեռելոց յարութենէն վերջ կը յիշուին դատաստանները [Յովհ. ե 21-22]: Պօղոս եւս կ'ըսէ. «Հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ» [Գործք ԺԷ 31], եւ ինքը կ'ըսէ Փելիքսի՝ «վասն հանդերձեալ Դատաստանին» [Գործք ԻԴ 25] ու կը գրէ հաւատացեալներուն. «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի Աթենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. ե 10]: Ու Պետրոս կ'ուսուցանէր անիշխաններուն, թէ Ինքն Քրիստոս «պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն դնել, թէ նա է սահմանեալն յԱստուծոյ, Դատաւոր կենդանեաց եւ մեռելոց» [Գործք Ժ. 42], եւ Յովհաննէս կը տեսնէր «զմեռեալս մեծամեծս եւ զփոքունս, որք կային առաջի աթոռոյն եւ գրեանք բանային, եւ այլ գիրք բացաւ կենաց, եւ դատեցան մեռեալք ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց» [Յայտ. Ի 12]: Իսկ աւանդութիւնը պայծառ է շատ բոլոր դարերու ս. Հարց վարդապետութիւններուն եւ եկեղեցական երգերու եւ աղօթքներու խոստովանութեանց մէջ:

257. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԴԷՄ

Այս ճշմարտութեան ընդդէմ, հակառակորդները կը նկատեն նախ, թէ Դատաստանին այսքան նիւթական եւ զգալի մանրամասնութիւններով պատմուածքը յայտնի է, թէ այլաբանական պատկեր մըն է լոկ, ու իսկական չեն կրնար լինել ամպերը, աթոռը, փողը, գիրքը, կշիռքը եւ Դատաստանին միւս պարագաները: Բայց եթէ այդ մանրամասնութիւնները իբր այլաբանական ընդունինք իսկ, միթէ կրնա՞նք ուրանալ եղելութեան ճշմարտութիւնը: Ստոյգ են Յարութիւնը, Դատաստանը,

© National Library of Armenia

հատուցմունքը, ու այդ զգալի պարագաները տրուած են՝ վարդապետութիւնը հասկնալի դարձնելու համար միայն: Կ'ըսեն նաեւ, թէ, ըստ Քրիստոսի, Դատաստանը պէտք էր տեղի ունենար Երուսաղէմի կործանումէն անմիջապէս յետոյ, եւ կամ նոյնիսկ Քրիստոսի կարծեցեալ Գալուստը եւ Անոր յարակցած մեռելոց Յարութիւնը եւ մարդոց Դատաստանը նոյնիսկ ուղղափառ մեկնիչներ Երուսաղէմի վերջին կործանման մասին է, որ կ'իմանան:

Սակայն հարկ է դիտել, թէ երկու ճշմարտութիւններ կրնան լինել միաժամանակ, եւ նմանօրինակ հնչող բառեր կրնան տարբերեալ իմաստներ ունենալ: Ըստ այսմ՝ Ս. Գրոց վարժ եղողներու համար յայտնի է, թէ Քրիստոսի Գալստեան եւ աշխարհի կատարածին վարդապետութիւնը կ'ակնարկէ արդարեւ երբեմն քրիստոնէութեան յաղթանակին եւ երբեմն աշխարհի բուն կատարածին: Եւ այս աշխարհի կատարածը ատեն մը մօտալուտ կարծուեցաւ: Բայց այս կարծիքը մոռցուեցաւ յետոյ ու անկէ շատ աւելի դիւրաւ՝ հազարամեայ կեղակարծ վարդապետութիւնը, ու աշխարհի վախճանին, յարութեան եւ դատաստանին եւ հատուցման իրագործութիւնը մնաց ժամանակին, զոր «ոչ է մեզ դիտել» [Գործք Ա 7], վասն զի ոչ ոք գիտէ զայն՝ Աստուծմէ զատ [Մատթ. Ի Դ 36]: Անշուշտ, չենք կրնար խօսիլ եւ գիտնալ աւելի, քան ինչ որ Ս. Գիրքէն կը սովրինք, որովհետեւ ո՛չ եղելութեանց մասին որ եւ է խօսք կայ եւ ո՛չ որեւէ գուշակութիւն, այնպէս որ յաճախ ստիպուած ենք մեկնողաբար եւ մակաբերաբար բան մը ըսել:

258. ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Իսկ թէ այդ Դատաստանը պիտի տեղի ունենայ աշխարհիս վախճանին եւ ոչ թէ՝ իւրաքանչիւր մարդու վախճանին՝ ամէն մէկուն համար զատ-զատ, զայդ կրնան հաստատել հանդիսական պարագաներն ինքնին, զորս կարելի չէ անթիւ եւ անհամար կերպով բազմացնել եւ իւրաքանչիւր ակնթարթին աշխարհի զանազան կէտերուն վրայ այդպիսի դատաստաններու կատարում ենթադրել: Իսկ ինչ որ Գօղոս կ'ըսէ՝ «կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ եւ յետ այնորիկ՝ Դատաստան» [Եբր. Թ 27], անհնարին է զայն իմանալ իբրեւ անմիջական հետեւողութիւն, ինչպէս կը պնդեն Հռոմէականները, այլ՝ իբրեւ բոլոր մարդոց մեռնելէն յետոյ, զոր շատ իսկ բացայայտ կերպով կը հասկցնէ առաքեալը՝ ըսուածներուն ի բացատրութիւն յիշելով Քրիստոսի Գալուստը մարդիկը դատելու համար. «Իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ» եւ այլն:

259. ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎՃԻՌՆԵՐՈՒ

Դատաստանէն վերջ կու գան հատուցումները, որոնցմէ երկուքը միայն կը յիշէ Քրիստոս Իր մեծ նկարագրութեան մէջ՝ յաւիտենական կեանք արդարներուն համար եւ յաւիտենական տանջանք մեղաւորներուն համար, զորս սովորական բառով կը կոչենք արքայութիւն եւ դժոխք: Ինչ որ ըսուեցաւ Յարութեան եւ Դատաստանի մասին, եւ վկայութիւնները, որոնք Ս. Գիրքէն յառաջ բերուեցան, բաւական թող ըլլան՝ հաստատելու համար, թէ իրական են արքայութիւնը եւ դժոխքը, որոնք Դատաստանի մէջ արդարներուն եւ դատապարտուածներուն բաժինը պիտի ըլլան: Ուստի եւ կրնանք անոնց վերաբերեալ ապացուցութիւնները զանց ընել եւ քիչ մըն ալ խօսիլ անոնց զանազան հանգամանքներուն եւ իրենց վերաբերած խնդիրներուն մասին:

260. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Արքայութեան էութիւնը, կամ, ինչ որ նոյն է ըսել, արդարներուն երանութիւնը, հաստատուած է տեսութեանը վրայ Աստուծոյ, այսինքն՝ տեսնելու վրայ զԱստուած, որ աղբիւր է բարութեանց եւ լրումն երանութեան, ուստի եւ զայն վայելողը այլեւս պէտք չունի անկէ դուրս որ եւ է բարիի, եւ որովհետեւ, անշուշտ, իմանալին գերագոյն է, քան զգալին, այս պատճառաւ ալ յաւիտենական երանութիւնը իմանալի է բոլորովին, ու զգալին չի յիշուիր այլեւս, որովհետեւ զգալին իմանալիին մէջ կ'ընկղզուի: Իսկ Աստուծոյ տեսութեան վրայ հիմնուած երանութիւնը երկու կերպով կը հասկնան դպրոցականք. մին՝ բնական, միւսը՝ գերբնական: Բնական է պարզ տեսութիւն հոգեբանական ըմբռնումով եւ վերացական ծանօթութեամբ եւ սիրով ու խնդութեամբ՝ ըստ բնական զօրութեանց: Իսկ գերբնականը պայծառ եւ հայեցողական տեսութիւնն է, որմէ կը բղխի սէր եւ ուրախութիւն՝ բնականէն գերազանց աստիճանով, ինչպէս որ պատճառն ալ բնականէն գեր ի վերոյ է: Իսկ այս վարդապետութեան վարդապետական հանգամանքն է այն, թէ արդարները, իրենց մտքին մէջ երկնային լոյսով լուսաւորուած ըլլալով, դէմ յանդիման եւ հայեցողաբար կը տեսնեն զԱստուած, բայց ոչ թէ կատարելապէս կ'իմանան ալ, ու ամէնքն ալ հաւասարապէս չեն վայելեր, հետեւաբար եւ հայեցողական տեսութիւններն ալ հաւասար չափով չեն ըլլար ամենուն մէջ:

© National Library of Armenia

261. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այս բոլորը կը քաղուի առաքեալին խօսքերէն, որ կ'ըսէ. «Այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ-յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ի չատէ, այլ յայնժամ գիտացից, որպէս եւ ծանեաւ ինձ» [Ա Կորնթ. ԺԳ 12], ուր վերջին խօսքերը չափազանցրէն կը ցուցանեն առաւելութիւնը, որովհետեւ անկարելի է, որ սահմանաւոր արարածը անսահման Արարիչին հաւասարի: Ասոր է, որ կը վերաբերի նաեւ Յովհաննու խօսքը. «Գիտեմք, զի յորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զՆա, որպէս եւ էն» [Ա Յովհ. Գ 2], եւ հոս դարձեալ հարկ է տեսնելը որոշել իմանալիէն, որովհետեւ տեսութիւնը որչափ ալ կատարեալ ըլլայ իմացութենէն: Իսկ վարձուց անհաւասարութեան կ'ակնարկէ Քրիստոսի ատ խօսքը, թէ՝ «Ի տան Հօր Իմոյ օթեւանք բազումք են» [Յովհ. ԺԴ 2], ուր յայտնապէս կը վկայէ Փրկոս՝ ըսելով. «Այլ փառք են արեգական եւ այլ փառք՝ լուսնի, այլ փառք՝ աստեղաց. եւ աստղ քան զաստղ առաւել է փառօք» [Ա Կորնթ. ԺԸ 41]: Նոյնը հնար է քաղել նաեւ ատ խօսքէն. «Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ յաւուրն յայնմիկ արդարն Դատաւորն» [Բ Տիմ. Դ 8]: Վաստղի արդարութեան պսակը պէտք է համեմատել իւրաքանչիւրին արդիւնքներուն:

262. ՅԱՐՈՒԾԵԱԼ ՆԵՐՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գալով այն խնդրոյն, թէ արդարները ինչպիսի մարմին պիտի ունենան իրենց արքայութեան մէջ, սովոր ենք ըսել, թէ անոնք պիտի ունենան փառքի ճիրքեր կամ փառաւորեալ մարմիններ՝ նման Քրիստոսի՝ Իր Յարութենէն վերջ ունեցած փառաւորեալ մարմինին: Դպրոցականները այս ճիրքերը սովոր են չորսի բաժնելու՝ անցաւորութիւն, թափանցութիւն, երագութիւն եւ պայծառութիւն, զորս Տաթեւացին եօթնի կ'աճեցնէ եւ կը թուէ՝ գեղեցկութիւն, արագութիւն, ուժգնութիւն, ազատութիւն, կամաւորութիւն, առողջութիւն, անմահութիւն: Իսկ առաքեալը այլուր յառաջ բերած խօսքերուն մէջ կը թուէ անապականութիւն, փառաւորութիւն, զօրութիւն, հոգեւորութիւն [Ա Կորնթ. ԺԵ 42, 43], որոնց մասին պէտք չկայ երկարաբանելու, միայն թէ, ըստ պահանջից իրենց նորոգ ղրութեան, այլեւս պիտի չլուծուին անոնք եւ պիտի չունենան այն պէտքերն ու կարիքները, զորս կ'ունենային այս կեանքին մէջ:

Իսկ մարմնական զգայութիւններին անշուշտ պիտի չկորնչենեն, որպէսզի մարմինին էութիւնն ալ չկորսուի, բայց անոնց առարկաները եւ հանգամանքները պիտի տարբերին այժմեան կացութենէն, եւ երբ, ըստ Պօղոսի խօսքին, հոգեւորութիւն, երկնաւորն ու մարմնաւորը պիտի ընկղմին իմանալիին եւ հոգեւորին մէջ, բայց զգալի վայելքներու գաղափարը անպատեհ է արդարներուն խոստացուած հոգեւորական երանութեան գաղափարին, եւ բոլոր այն խօսքերը, որոնց մէջ զգալի վայելքներու յիշատակութիւն կ'ըլլայ, պէտք է մեկնուին այլաբանական իմաստով՝ սկսելով բաժանումին համար տուած խօսքէն. «Արդիւք զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր Իմոյ» [Մատթ. ԻԶ 29]:

263. ԷՈՒԹԻՒՆ ՏԱՆՋԱՆԱՑ

Իսկ դատապարտեալներուն համար սահմանուած տանջանքները ընդհանուր սկզբունքով բացատրած կ'ըլլանք՝ զանոնք ըմբռնելով իբրեւ հակադրութիւնը երանութեան: Եթէ աստուածային տեսութիւնը լրումն է երանութեանց, աստուածային տեսութենէն զրկումն եւս պիտի ըլլայ լրում դատապարտութեան: Սակայն Ս. Գրոց այս խօսքերը, որոնք կը յիշեն «զտանջանս յաւիտենականս» [Մատթ. Իե 4], եւ, խօսելով գեհեանին մասին, կ'ըսեն «ուր որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ չիջանի» [Մարկ. Դ 49], մեզի կը հասկցնեն, թէ բացի զրկումին դատապարտութենէն, դժոխքին մէջ զգայական տանջանքներ ալ կան, որոնցմով կը տառապին դատապարտեալներուն մարմինները: Արդարեւ, երբ երանութեան մասին է խօսքը, անհնար է ըսել, թէ որեւէ զգալի հաճոյք կրնայ բան մը աւելցնել Աստուծոյ հոգեկան վայելքներուն վրայ, բայց նոյնը չենք կրնար խորհիլ ցաւերուն եւ պատիժներուն վրայ, որովհետեւ զրկումը բացասական բան մը ըլլալով՝ անոր վրայ որչափ ալ ցաւեր ու տագնապներ աւելցուին, միշտ տեղ կը մնայ զգալի տանջանքներու: Բնաւ ուրեմն անտեղի չէ ընդունիլ իրականութիւնը զգալի տանջանքներուն, որոնք հուրով եւ որդով կը պատկերացուին: Որդով սովորական է խղճի խայթը իմանալ, իսկ հուրը կը ներկայացնէ լրումն ու ամփոփումը բոլոր զգալի տանջանքներուն:

264. ՋԳԱԼԻ ՏԱՆՋԱՆՔ

Դժոխքի զգալի հուրը առիթ կ'ըլլայ ինչ-ինչ դժուարութեանց, որոնց մէջ առաջինը այն կը համարուի, թէ ինչպէս աննիւթական

© National Library of Armenia

հոգիները կրնան տանջուիլ նիւթական հուրէն: Բայց այդ դժուարութիւնը, որ յաճախ կը յածի բերաններու մէջ, աւելի հոմէականներու դրութեան դէմ կրնայ ուղղուիլ, վասնզի անոնք նիւթական հուր կ'ենթադրեն դժոխքին մէջ եւ յարութենէն ալ առաջ այդ կրակին կը տանին հոգիները, մինչ մեր հնաւանդ դրութեան մէջ դժուարութիւն չկայ այդ մասին, քանի որ անոր մէջ կ'ըսուի, թէ Դատաստանի համար յարութիւն առած մեղաւորները կը տանջուին գեհենին հուրովը: Բայց այն ատեն ալ կը հարցուի, թէ ի՞նչ կրակ է այդ, որ անսպառօրէն կը վառի եւ անչէջ կը մնայ, ինչո՞վ կ'արծարծի, ինչո՞վ կը սնանի: Թէպէտեւ ոչ մէկ պէտք կայ բաղդատելու յետ Յարութեան կացութիւնը ներկայի պահանջներուն հետ, սակայն եւ այնպէս պէտք է աւելցնել, թէ դժոխքի համար յիշատակուած բոլոր մանրամասնութիւնները՝ կիզիչ հուր, կրճտում ատամանց, չշափելի խաւար, անհամեմատ ժահահոտութիւն, ահագուժիչ տեսիլներ, կապանք, կտտանք, ամէնքն ալ այլաբանական բացատրութիւններն են իմանալի պատիժներուն:

265. ՓԱՍՏ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Թէ՛ պատիժներուն եւ թէ՛ երանութեանց, բայց մանաւանդ՝ պատիժներուն յաւիտենականութեան համար ուրիշ բան չենք կրնար ըսել մենք, եթէ ոչ՝ քաղել ճշմարտութեան յայտնութիւնը այն վայրկեաններէն, զորս քանիցս յառաջ բերինք: Ամենէն աւելի՝ հնար չէ հակառակը հաստատել՝ նիւթին հանգամանքներէն զատելով եւ ըսելով, զոր օրինակ, թէ սկիզբ ունեցած բանը վախճան ալ պէտք է ունենայ: Ոչ մէկ բնազանցական ճշմարտութիւն չի պահանջեր այդպիսի հետեւութիւն մը, ու ոչ մէկ կերպով է՛ապացուցուիր, թէ անընդունակ է նիւթը անընդհատ տեւականութեան, որ սովորական լեզուով յաւիտենականութիւն կը կոչուի կամ աւելի ստոյգ բառով մշտնջենաւորութիւն: Այդ հանգամանքը անցաւոր այս աշխարհիս կը վերագրեն բնագէտները՝ հաստատելով, թէ ոչ ինչ կ'ոչնչանայ, այլ միայն կը բաղադրուի, կը տարբաղադրուի եւ կը վերաբաղադրուի չարունակապէս: Նաեւ աշխարհի կատարած ըսելով՝ պիտի չհասկըննանք անոր ոչնչացումը, այլ՝ այժմեան դրութեան խանգարումը եւ ուրիշ նոր եւ տարբերեալ դրութեան մը փոխանցումը: Իսկ թէ ինչ է լուծուիլը, դիւրաւ կը հասկցուի հանգամանքներու տեւողականութենէն եւ ներքին կապակցութեանց զօրութենէն, այնպէս որ հարկ չի մնար ո՛չ արտաքին եւ ո՛չ ներքին առիթներու, որոնցմէ յառաջ գայ նիւթին իր տարրերուն լուծուիլը:

Բայց թէ այս ամէնը հնարաւոր է, հնար չէ բնաւ ցուցնել ներկայէն, իսկ ինչ որ ապառնին է, հաստատուած է Յայտնութեան հաստատով եւ Քրիստոսի եւ առաքելոց կանխագիտոյց վարդապետութիւններով եւ ոչ թէ՝ բնական կամ նիւթական ցուցմունքներով:

266. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի Դատաստանին նկարագրութեան մէջ պարզապէս յաւիտենական կը կոչէ դատաստանները, ու եկեղեցին պարզապէս յաւիտենական կ'ըսէ դժոխքին համար: Բայց կան մտածողներ, որոնք, հիմնուելով աստուածային արդարութեան վրիժուց լրման եւ աստուածային ողորմութեան յաղթանակին, ինչպէս մարդկային գործոց չափաւորութեան փաստերուն վրայ, կը յօժարին ըսել, թէ ուր ուրեմն պիտի անցնի դժոխքը, եւ բոլոր հոգիները պիտի հասնին երկնային երանութեան: Սակայն այս կարծիքը կը հիմնուի չափաւոր մեղաց անչափ պատիժներու հետ անհամեմատութեան վրայ եւ շատ հիմնաւոր չէ, որովհետեւ անչափ Աստուծոյ դէմ գործուած չարիքը, ըստ ուղիղ բանին, անչափ է: Իսկ եթէ կը հիմնուի աստուածային զթութեան վրայ, աւելորդ է այդ բարեպաշտական զգացումն ալ, զոր կարելի չէ ընդդէմ հանել Քրիստոսի խօսքին, որ յաւիտենական որակեց տանջանքը: Ուստի ընդունելի չէ այդ կարծիքը, թէեւ հիներէն իսկ ոմանք անհնար չեն համարած զայն:

267. ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՕԹԵԻԱՆՆԵՐ

Միեւնոյն նկարագրութեան մէջ երկու են հոգիներու վերջնական օթեւանները, այսինքն՝ «կեանք յաւիտենականք» եւ «տանջանք յաւիտենականք»: Ու յաւիտենական տանջանքները պահուած են անոնց համար, որոնք ներգործական յանցանքներով մեղանչած են, որովհետեւ,- կ'ըսէ Դատաւորը,- «քաղցեայ, եւ ոչ ետուք ինձ ուտել» [Մատթ. Իե 42]: Միւս կողմէ՝ Ինք Քրիստոս ըսաւ. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» [Յովհ. Գ 5]: Արդ, անկնունք մանուկները եւ անոնց նմանները, անկնունք մնացած ապուշները եւ խելայեղները, մէկ խօսքով՝ ներգործական յանցանքի պատասխանատուութենէն զերծ մնացած ամէն անձ, որ չունի ո՛չ մկրտութիւն, որ քաւութեան արժանանայ, եւ ո՛չ ներգործական մեղք, որ դժոխքի մատնուի, ի՞նչ պիտի ըլլան: Հոմէականները այդպիսիներուն համար կ'ենթադրեն յատուկ տեղ մը արքայութեան եւ դժոխքի միջեւ, ուր չեն գտնուիր ո՛չ մէկին եթա-

© National Library of Armenia

նուիրեալները եւ ո՛չ միւսին տանջանքները, եւ այդպիսի զրկման բացասական վիճակի մէջ հաստատեցին անկնունք մանկանց դրութիւնը եւ տեղին անունը կոչեցին Լիմպոս՝ լատիներէն բառէն, որ կը նշանակէ եզր՝ թերեւս ըսել ուզելով իբր գաւիթ դժոխքին եզերքը: Բայց այդ երրորդական տեղը արտաքոյ կը մնայ այն տեղերէն, զորս Քրիստոս իբրեւ վճռական ցոյց տուաւ, եւ ի դէպ չէ բնաւ յայտնեալ վարդապետութենէն դուրս նոր բան մը կազմել: Իսկ անկնունք մանկանց համար, որոնք չունին ներգործական ոչինչ, կան, որ զանոնք բացարձակապէս կ'ենթարկեն դատապարտութեան, ուրիշներ դժոխքի մէջ անոնց լոկ զրկումի դիրք մը կու տան եւ ուրիշներ կը փափաքին ենթադրել, թէ անոնց համար արտասովոր չնորհք մը պիտի ըլլայ երկինքը մուտ ունենալ... Բայց մենք կը բաւականանանք՝ ըսելով, թէ քրիստոնէական վարդապետութիւնը անոնց համար յայտնեալ ոչինչ ունի, եւ անհնար է անյայտ բաներուն համար նոր յայտնութիւններ ստեղծել:

ԳԱՆՁԱՍԱՐ

Աբէլ վարդապետ Օղլուգեան

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Վարդապետական աստուածաբանութիւնը՝ Եկեղեցւոյ ընդհանուր քարոզչութեան մէջ ա՛ինտալայտուող, Աստուծոյ ինքնաբացայայտման կամ Յայտնութեան մասին այն գիտութիւնն է, որ, դաւանուելով քրիստոնէական հաւատքին մէջ, պարտաւորիչ կը դառնայ քրիստոնէական կեանքին համար: Վարդապետական աստուածաբանութիւնը սովորաբար կը կոչուի նաեւ դաւանաբանութիւն կամ դաւանաբանական աստուածաբանութիւն: Սակայն այս երկուքին միջեւ կան որոշակի տարբերութիւններ, որոնք կարելի չէ անտեսել.

ա) Դաւանաբանութիւնը, իր նեղ առումով, վարդապետական աստուածաբանութեան մէջ գիտական առանձին ճիւղ մըն է, որ ուղղակի կը վերաբերի Եկեղեցւոյ «դաւանութեան» հետ կապ ունեցող հարցերուն եւ հաւատալիքներուն:

բ) Իր իմաստին լայն առումով միայն այն կը կիրառուի իբրեւ հոմանիշ վարդապետական աստուածաբանութեան, այսինքն՝ գիտութիւն Եկեղեցւոյ վարդապետած ընդհանուր հաւատալիքներուն մասին:

Դաւանութեան եւ վարդապետութեան միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնը Մաղաքիա արքեպսկ. Օրմանեան այսպէս կը բնորոշէ. «...Հարկ է տարբերութիւն մը հաստատել եւ իրարմէ որոշակի զատել դաւանութիւն եւ վարդապետութիւն կոչուած կէտերը: **Դաւանութիւն** Սուրբ Գիրքէն քաղուած եզրակացութիւն եւ ճշդութեամբ բացատրուած ձախադասութիւն մըն է՝ յստակ եւ որոշ բառերով: Եկեղեցիի կողմէն այս կերպով հռչակուած սկզբունք մը պէտք է, որ

© National Library of Armenia

ընդ Եկեղեցւոյ ամէն հաւատացեալներու կողմէ բացարձակ կերպով ընդունուի՝ չընդունած պարագային ընդ Եկեղեցւոյ ծոցէն դուրս մնալու պայմանով: **Վարդապետութիւնն** ալ ամանապէս Սուրբ Գիրքէն քաղուած եւ ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն մըն է, որ պէտք է միշտ յստակ ըլլայ եւ աւանդութեան մը հետեւողութեամբ հաստատուի, որով, իբր ողջմիտ եւ ճշմարիտ կամ ճշմարտանմանման սկզբունք, կրնայ ընդունելի ըլլալ, բայց երբէք բացարձակ կերպով հաւատացուելու հարկ չի պարունակեր եւ չընդունուած ատեն Եկեղեցւոյ ծոցէն մերժուած ըլլալու հետեւանքը չ'արտադրեր: Ուրիշ բացատրութեամբ՝ **դաւանութիւնը** Եկեղեցւոյ հեղինակութեամբ զօրացած ճշմարտութիւն է, **վարդապետութիւնը** դպրոցներու հեղինակութեամբ հաստատուած կէտն է: Դաւանութիւնը կը պատկանի հաւատքին եւ կրօնքին, վարդապետութիւնը կը պատկանի ուսման եւ աստուածաբանութեան»[1]:

Գրաբարի մէջ **վարդապետեմ** բայի հոմանիշները **ուսուցանեմ, քարոզեմ** բայերն են: Եւ արդէն իմաստներու այս նոյնութիւնն ալ ինքնին կ'ուրուագծէ վարդապետական աստուածաբանութեան բովանդակութիւնը, այսինքն՝ քրիստոնէական վարդապետութեան մասին Եկեղեցիին կողմէ պաշտօնապէս «ուսուցուած» հաւատալիքներու կարգը կը կոչուի վարդապետական աստուածաբանութիւն: Այլ խօսքով՝ վարդապետական աստուածաբանութիւնը կամ դաւանաբանութիւնը աստուածաբանական ձեռնարկ մըն է՝ Եկեղեցիին վարդապետած հաւատալիքները քրիստոնէական ընդհանուր հաւատքի սահմաններուն մէջ հիմնաւորելու եւ զանոնք մեկնաբանելու ուղղութեամբ: Այս առումով, վարդապետական աստուածաբանութիւնը կը հանդիսանայ աստուածաբանական գիտութեանց կեդրոնական առարկան: Եւ ինչպէս աստուածաբանութիւնն ընդհանրապէս, նոյնպէս եւ վարդապետականը, հիմնուելով աստուածաշունչական տուեալներու վրայ, կը փորձէ ծայտնութեան աւետիսը մատչելի դարձնել իր հասցէակիրներուն (մարդոց)՝ համաձայն մարդկային բոլոր չափանիշներուն եւ հնարաւորութիւններուն, ներառեալ՝ բանականը, ինչպէս որ առ յստակօրէն կ'ընդգծուի [Ա Պետր. Գ 15] հատուածի մէջ, թէ քրիստոնեան պէտք է ամէն մարդու հաւատքի մասին հաշիւ տայ. «Պատրա՛ստ իցէք տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ»:

Դասական աստուածաբանութեան մէջ վարդապետական աս-

1 Տե՛ս Մաղաքիա արքեպիսկ. Օրմանեան, «Հայոց Եկեղեցին», Պէյրութ, 1960, էջ 89:

տուածաբանութիւնը կամ դաւանաբանութիւնը հիմնականին մէջ կը ներկայանայ **քրիստոնէական վարդապետութիւն** (լատիներու մօտ՝ doctrina christiana, summa theologica, sacra pagina, institutiones, sententiae եւ այլն) անուան տակ: Սակայն պէտք է ըսել, որ աստուածաբանութեան մէջ դաւանաբանութիւնը, իբրեւ գիտական մասնաճիւղ, յետագայ շրջանի գրուածք է, որ կապ ունի Արեւմտեան Եկեղեցւոյ աստուածաբանական գիտութեանց զարգացման պատմութեան հետ: Dogmatik արտայայտութիւնը, որ հայերէնի մէջ սովորաբար կը վերարտադրենք **դաւանաբանութիւն** բառով, իբրեւ մասնագիտական բացատրութիւն, առաջին անգամ կ'օգտագործուի 1661-ին բողոքական աստուածաբան Reinhart-ի կողմէ՝ "Theologia christiana dogmatica" խորագրութեամբ: Հակառակ այն իրողութեան, որ Արեւելեան Եկեղեցին յանձին Յովհաննէս Դամասկացիի (740/750), որ իր «Ճաղագս ուղղափառ հաւատոյ» ("De fide orthodoxa") գործին մէջ խիստ համակարգուած ձեւով ներկայացուցած է Օրթոտոքս Եկեղեցւոյ հաւատքի հիմնական կանոնները, այսուհանդերձ հարկ է ըսել, սակայն, որ Օրթոտոքս Եկեղեցւոյ մէջ զուտ դաւանաբանական բնոյթի գործեր լոյս կը տեսնեն հազիւ 18-րդ դարուն:

ՊԱՏԿԵՐ Ց. ԴԱՄԱՍԿԱՑԻՈՑ՝ «ՃԱՂԱԳՍ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ» ԳՈՐԾԻ

Ա. Ճաղագս առաջաբանութեան աստուածաբանութեան
Բ. Վասն ճառելեաց եւ անճառելեաց, իմանալեաց եւ անիմանալեաց
Գ. Վասն ցուցմանն, թէ գոյ Աստուած
Դ. Վասն՝ թէ զի՞նչ է Աստուած եւ զի անհաս է
Ե. Վասն յայտնման, թէ մի է Աստուած եւ ոչ՝ բազում
Զ. Վասն Բանին Աստուծոյ
Է. Վասն Սուրբ Հոգւոյն
Ը. Վասն Սուրբ Երրորդութեան
Թ. Վասն ի վեր ասացելոյն
Ժ. Վասն աստուածային միաւորութեան եւ բաժանման
ԺԱ. Վասն մարմնապէս ի վերայ ասացելոյն

© National Library of Armenia

ԺԲ. Վասն ընծա դարձեալ

ԺԳ. Վասն տեղեացն Աստուծոյ, թէ միայն Աստուած է անպարագրելի

ԺԴ. Վասն յատկութեանց աստուածային Բնութեան

ԺԵ. Վասն յաւիտեանցն

ԺԶ. Վասն հրեշտակաց

ԺԷ. Վասն սատանի եւ դիւացն

ԺԸ. Վասն երեւելի եւ զգալի արարածոցս

ԺԹ. Վասն երկնից

Ի. Վասն հրոյ, լուսոյ եւ լուսաւորացն ամենեցուն

ԻԱ. Վասն ոդոյ եւ հողմոյ

ԻԲ. Վասն ջուրց

ԻԳ. Վասն երկրի եւ որ ի նմա է

ԻԴ. Վասն դրախտին

ԻԵ. Վասն մարդոյն

ԻԶ. Վասն ճաշակացն

ԻԷ. Վասն տրտմութեան

ԻԸ. Վասն երկիւղի

ԻԹ. Վասն տրտմութեան (արտմտութեան)

Լ. Վասն անրջոց եւ ցնորից

ԼԱ. Վասն զգայութեանց

ԼԲ. Վասն իմացականին

ԼԳ. Վասն յիշողականին

ԼԴ. Վասն՝ որ ի ներքոյ ներտրամադրական բան, արտաքոյ՝ տարբերական

ԼԵ. Վասն ախտից եւ ներգործութեանց (յոյնն՝ ԼԶ)

ԼԸ. Վասն ներգործութեանց (յոյնն՝ ԼԷ)

ԼԹ. Վասն կամայի եւ ակամայի (յոյնն՝ ԼԸ)

Խ. Վասն որոյ ընդ մեզ ենթակային այս անձնիշխանութիւն (յոյնն՝ ԼԹ)

ԽԱ. Վասն գործեցելոցն (յոյնն՝ Խ)[2]

2 Հմմտ. Ջարբհանալեան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳդդ.)», Վենետիկ, 1889, էջ 576-578:

Ի հակադրութիւն կաթոլիկ Եկեղեցու վարդապետական հասկացութեանց (յաճախ՝ ընդմիտ ըմբռնողութեան հետեւանքով)՝ բողոքականութեան մէջ **դաւանութիւն** գաղափարի դէմ երկար ժամանակ գոյութիւն ունէր որոշակի հակակրութիւն մը: **Դաւանաբանութիւն** բառի փոխարէն նախընտրելի էին **սիստեմատիկ աստուածաբանութիւն** (Systematische Theologie) կամ **հաւատոյ վարդապետութիւն** (Glaubenslehre) բացատրութիւնները: Սակայն այսօր բողոքականութեան մէջ այս հակակրութիւնը այլեւս վերացած է շնորհիւ նորագոյն շրջանի բողոքական աստուածաբաններու, ի մասնաւորի՝ Karl Barth-ի՝ քրիստոնէական վարդապետութեան վերաբերեալ ստուար ստեղծագործութիւններուն:

Վարդապետական աստուածաբանութեան առաջադրանքը Յայտնութեան մէջ արտայայտուող աստուածային տնօրինութեան իմաստը եւ պատմութեան ընթացքին Եկեղեցւոյ մէջ ձեռք բերուած իմաստային փորձառութիւնները համակարգուած օրինաչափութեամբ ներկայացնել եւ այդպիսով անոնք քրիստոնեայի առօրեայ կեանքին մէջ կիրառելի դարձնելն է: Այնքանով, ինչքանով որ վարդապետական աստուածաբանութիւնը հաւատքի վերաբերեալ Եկեղեցիին ցուցմունքները կը մեկնաբանէ իբր խօսք Աստուծոյ մասին եւ անոնց դրական տուեալները կը հետազօտէ պատմաքննական մօտեցումով, այն կը հանդիսանայ իբրեւ աստուածաբանական գիտութիւն մը: Եւ քանի որ վարդապետական աստուածաբանութիւնը հաւատքի բովանդակութիւնը գաղափարական ըմբռնումներու (հասկացութիւններու) միջոցով կը դրսեւորէ, կը դասաւորէ եւ կը զարգացնէ զանոնք, մեկնողական եւ հայեցողական (spekulativ), այսինքն՝ տեսական գիտութիւն մըն է, որ պէտք է անպայմանօրէն ազատ ըլլայ՝ հաւատքի այդ ըմբռնումները ժամանակի ոգիին յարմար եւ հասկնալի կերպով ներկայացնել կարողանալու համար:

Վարդապետական աստուածաբանութիւնը կը ներկայացուի պատմականօրէն, որովհետեւ Աստուած Ինքզինքը մարդկանց «մատչելի» կամ «ճանաչելի» դարձուց պատմութեան մէջ: Ուստի այդ կ'աւանդուի փրկագործութեան պատմութեան շրջագիծին մէջ, որովհետեւ Աստուծոյ տնօրինութեան հասցէակիրը մարդ արարածն է իր շրջաշխարհով: Փրկագործութիւնը ուղղուած է մեղանչական մարդուն եւ մեղքի տակ հեծող աշխարհին:

© National Library of Armenia

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Առարկայի անունը	Նիւթը
Իմացաբանական աստուածաբանութիւն կամ սկզբունքներու գիտութիւն (Erkenntnislehre)	Նկարագրութիւն հիմնական դրոյթներու եւ աղբիւրներու, որոնց միջոցով եւ որոնց հետ վարդապետական աստուածաբանութիւնը կը զարգացնէ իր տեսութիւնը
Աստուածգիտութիւն (Gotteslehre)	Նկարագրութիւն Աստուծոյ Էութեան՝ հիմնաձայն փրկագործութեան պատմութեան մէջ աւանդուող տուեալներուն
Արարչագիտութիւն (Schopfungslehre)	Նկարագրութիւն փրկագործութեան պատմութեան սկիզբի եւ նշանակութեան
Մարդաբանական աստուածաբանութիւն	աստուածաբանութիւն մարդու մասին՝ իբրեւ գագաթ եւ կառավարիչ աստուածային արարչագործութեան, նաեւ՝ դաշնակից Աստուծոյ
Քրիստոսաբանութիւն եւ փրկագործութիւն	Պարզաբանում Յիսուս Նազովրեցիի խորհուրդին՝ իբրեւ Հօր Էակից Որդի եւ Փրկիչ աշխարհի
Մարեմաբանութիւն	Ուսմունք Աստուածամօր մասին՝ իբրեւ Անձի ամբողջական իրականացում՝ ի Քրիստոս կատարուած Աստուծոյ փրկագործ տնօրինութեան
Հոգիաբանութիւն (Pneumatologie)	Ուսմունք Սուրբ Հոգւոյ Էութեան եւ գործունէութեան մասին՝ իբրեւ երրորդ Անձ Սուրբ Երրորդութեան
Եկեղեցաբանութիւն	Ուսմունք Եկեղեցիի մասին՝ իբրեւ խորհուրդ եւ նշան Աստուծոյ փրկագործութեան՝ հաստատուած պատմութեան մէջ

Խորհրդագիտութիւն	Մեկնաբանութիւն եօթ խորհուրդներու՝ իբրեւ Եկեղեցիի՝ դէպի փրկութիւն կատարած ծառայութիւնը իրականացնող որոշակի ձեւեր
Ծնորհաբանութիւն	Ներկայացում Աստուծոյ փրկութեան՝ իբրեւ ազատ գործողութիւն աստուածային փառքի
Վախճանաբանութիւն	Ուսմունք Աստուծոյ մէջ ամփոփուող պատմութեան կատարածի (լրումի) մասին

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Թէեւ այսօր մեր եկեղեցական իրականութեան մէջ կը պակսին վարդապետական աստուածաբանութեան վերաբերեալ համակարգուած պաշտօնական ձեռնարկներ, այնուամենայնիւ այդ չի նշանակեր, որ Հայ Եկեղեցին զուրկ է վարդապետական տեսութիւններէ եւ համապատասխան զարգացումէ: Ինչպէս միւս բոլոր Եկեղեցիները, նոյնպէս եւ Հայ Եկեղեցին, հիմնակէտ ընդունելով նախ Աստուածշունչն ու առաքելական աւանդութիւնը, ապա՝ առաջին երեք Տիեզերական ժողովներու կանոնները, աստուածայայտնութեան մասին մշակած է իր ուրոյն տեսութիւնները՝ մնալով միշտ ներդաշնակ Ընդհանրական Եկեղեցիին մէջ հաստատուած հաւատքի ուղղափառ դաւանութեանց հետ: Անշուշտ, մեր հայրերուն եւ վարդապետներուն կողմէ ներկայացուած վարդապետական աստուածաբանութիւնը, հիմնականին մէջ, յստակ դիրքորոշում մըն է, որ կապուած է Եկեղեցիի կեանքին մէջ հանդէս եկող եկեղեցաբանական-աստուածաբանական ճշգրիտ իրավիճակներու հետ. այսպէս՝ Քաղկեդոնի 451թ. ժողովին յաջորդող քրիստոսաբանական վէճերուն առնչութեամբ, Քրիստոսի երկու բնութիւններու, կամքերու եւ ներգործութեանց վերաբերեալ անդրադարձումներով, Քրիստոսի երկրաւոր մարմնի ապականացու, թէ անապական լինելու հակոտնեայ տեսու-

© National Library of Armenia

թեանց առթիւ ստեղծուած հարցերով, պատկերայարգութեանը առնչուած խնդիրներով, մինչեւ միութենական եւ հակամիութենական այն շարժումները, որոնք յետագայ դարերու ընթացքին մշակուիլ փորձուեցան հայերու, յոյներու եւ լատիններու միջեւ, եւ այլն: Այս առումով, Հայ Եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութիւնը իր ընդհանուր գիծերուն մէջ կա՛մ **ջատագովական**, կա՛մ ալ **հակաճառական** է. ջատագովութիւն՝ սեպհական հաւատալիքներն ու ազգային-եկեղեցական աւանդութեամբ նուիրագործուած ըմբռնումները օտարամուտ ոտնձգութիւններու դէմ պաշտպանելու իմաստով, հակաճառութիւն՝ հիմնուած Աստուածաշունչի տուեալներուն, ինչպէս նաեւ՝ առաջին երեք Տիեզերական ժողովներու սահմանած հաւատքի հիմնական խորհուրդներուն՝ **Սուրբ Երրորդութեան, Քրիստոսի մարդեղութեան** եւ **փրկագործութեան** վերաբերեալ բանաձեւումներուն վրայ: Հերքուած են այն բոլոր վարդապետական տեսութիւնները, որոնք խոտոր են եղած այս աւանդական կարգին ու հաւատոյ ըմբռնումներուն: Եթէ այսպէ՛ս հասկցուած վարդապետական աստուածաբանութեան շրջագիծին մէջ ընդհանրապէս խօսք պիտի ըլլայ **մեկնողական** գրականութեան մասին, մեկնողականի՝ իբրեւ նիւթ դաւանաբանութեան, ապա այդ՝ ոչ թէ «Սուրբ Գիրքի մեկնութեան»՝ այսպէս կոչուած Exegese-ի, այլ՝ ջատագովութեան եւ հակաճառութեան մէջ օգտագործուող Ցայտնութեան տուեալները մեկնաբանելու եւ անոնք սուրբգրական հիմունքներուն վրայ հիմնաւորելու դրոյթով:

Վարդապետական տեսութիւններու զարգացման կապակցութեամբ պէտք է ըսել, որ Հայ Եկեղեցիին դիրքորոշումը միշտ եղած է «ոսկէ միջինը». դաւանական գաղտնիքներուն եւ հաւատալիքներուն մէջ դիմել չափաւորութեան, չյանդգնիլ հաւատքի խորհուրդը վարդապետական զանազան տեսութիւններու բարդոյթով խրթնաբանութեան վերածել, այլ ըսել այնքան, որ այդ հանոյ ըլլայ մարդկային մտքին ու սիրտին՝ իբրեւ բնական անդրադարձ՝ մարդուն ուղղուած Աստուծոյ ձայնին: Այս առումով, մեծագոյն սրբապղծութիւնը խորհուրդի խորհրդազերծումն է. «Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի» [Մատթ. ԺԲ 31]. «Զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ... նոյնպէս եւ ոչ զԱստուծոյն ոք գիտէ, եթէ ոչ՝ Հոգին Աստուծոյ» [Ա Կորնթ. Բ 10-11]: Մեր եռամեծ վարդապետները միշտ զգուշացած են նման հայհոյութենէ՛ ո՛չ իրենց մտաւոր համեստութեան, ո՛չ իմաստասիրական հասկացութիւններու սահմանափակուածութեան եւ ո՛չ ալ մեր

Եկեղեցւոյ ծոցին մէջ ծնունդ առած աստուածաբանական դպրոցներու սակաւութեան պատճառով, այլ՝ սրբութեան նկատմամբ անոնց ունեցած անհամեմատելի բարեպաշտութեան, երկիւղի եւ յարգանքի հետեւանքով, զի «սկիզբն իմաստութեան՝ երկեղ Տեառն, եւ խորհուրդ սրբոց՝ հանճար» [Առակ. Թ 10]:

Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, պատահական կարգով, այստեղ հարկ կը նկատեմ թուարկել վարդապետական արժէք ունեցող գրական ընտրանի մը, որու ուսումնասիրութիւնը յանձնարարելի է իւրաքանչիւր՝ Հայ Եկեղեցիի վարդապետական աստուածաբանութեամբ հետաքրքրուողի.

1. «**ՑԱՄԱԽԱՊԱՏՈՒՄ ՄԱՌ-Ք** սրբոյն Գրիգորի». Իգ ճառերու ժողովածու մը, որոնց մէջ յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել յատկապէս վարդապետական բնոյթ ունեցողներուն վրայ:

Ա. Ցաղագս Ամենասուրբ Երրորդութեան

Բ. Վասն առանձնաւորութեան Երրորդութեան

Գ. Վասն մտաց հաւատոյ

Դ. Վասն յանդիմանութեան մոլար մտաց եւ ընծայութիւն աստուածպաշտութեան

Ե. Վասն հաստատութեան ճշմարտութեան եւ առաքինորդութեան կենաց խրատու

Զ. Վասն յանդիմանութեան ծածկութից իրաց, որ զաներեւոյթսն յերեւելիս ածէ

Է. Վասն յօրինուածոց արարածոց

Ը. Վասն յանդիմանութեան դժնդակ վարուց եւ ընծայութիւն առաքինութեան հանդիսից

Թ. Վասն ամենարուեստ կատարեալ պաճոյ

Ժ. Վասն երախտաւորութեան անզեղջ բարերար կամացն եւ յորդորումն ի լաւն եւ յառաւելն՝ ըստ ճշմարիտ առաքինութեան

ԺԱ. Վասն վարուց առաքինութեան, որ հանդիսիւք լաւութեան պսակեալ երանին

ԺԲ. Վասն խնամոց Արարչին եւ կշտամբութիւն անհնազանդ ստահակութեան եւ առաջնորդութիւն բարութեան բարուցն լաւութեան

ԺԳ. Վասն լաւութեան յիշատակաց ի պէտս օգտից՝ զաներեւոյթսն յերեւելիս ցուցանելով ի գործ առաքինութեան փոխեալ ի յոյս կենացն

ԺԴ. Վասն մարդկութեան, որ յԱստուծոյ խնամք տեսչութեան կան

© National Library of Armenia

ԺԵ. Վասն հոգւոց մարդկան բացայայտութիւն

ԺԶ. Վասն մարտիրոսաց վարդապետութիւն ուսմանց

ԺԷ. Զգուշութիւն զգաստութեան ընդ մտերիմս եւ ընդ դժնդակս պատիւ եւ պատիժս

ԺԸ. Վասն գովութեան Աստուծոյ երախտեացն՝ հանդիսիւք մարտիրոսաց քաջայայտ

ԺԹ. Վասն յորդորման ապաշխարութեան

Ի. Վասն խորագիտութեան եւ մարտից

ԻԱ. Վասն տրոց իմաստութեան, որ ի Հոգւոյն Սրբոյ պարգեւեցաւ

ԻԲ. Վասն անփոփոխ ինքնութեան էութեանն Աստուծոյ

ԻԳ. Վասն խրատու ճգնաւորաց յառաքինութիւնս յորդորումն ի Քրիստոս Յիսուս: Նորին աղօթք[3]

2. **«ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ** սրբոյն Գրիգորի». Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» Բ մասին մէջ զետեղուած աստուածաբանական կարեւոր ստեղծագործութիւն մը, որ մեր եկեղեցական մատենագրութեան, մասնաւորաբար՝ վարդապետական գրականութեան զարգացման պատմութեան մէջ ունեցած է վճռական նշանակութիւն: Մեր վարդապետներէն շատեր իրենց վարդապետական տեսութիւնները ներկայացնելու, զանոնք ջատագովելու կամ օտարամուտն հակաճառելու առիթով յաճախ վկայակոչած են այս գիրքէն: Սակայն արդի բանասիրութիւնը կ'ապացուցանէ, որ «Վարդապետութիւնը» պարզապէս Լուսաւորչի անուան կատարուած վերագրութիւն մըն է: Այն մեծ հաւանականութեամբ գործն է Ե դարու հեղինակ Թէոդորոս Մոպսուեստացիի, որ, ընդառաջելով Մաշտոցի խնդրանքին, յօրինած է «քրիստոնէական ճշմարիտ հաւատքի վերաբերեալ» այս «Վարդապետութիւնը»[4]:

3. «Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի **ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ**». ոսկեդարի հայ աստուածաբանական-իմաստասիրական գրականութեան պսակը եւ փայլուն արտայայտիչը ժամանակի

3 Հմմտ. Ջարբհանալեան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳդդ.)», Վենետիկ, 1886, էջ 176-177: Տե՛ս նաեւ «Ճաճախապատում ճառք», Վենետիկ, 1838, Ս. Էջմիածին, 1894:

4 Տե՛ս Հ. Պ. Անանեան, «Վարք Մեսրոպ Մաշտոցի», Վենետիկ, 1964, էջ 380-403. նաեւ՝ ճ. Պօղոս Անանեան, «Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ», «Բազմավէպ», թ. 1-4, 1989, էջ 43-44. Ագաթանգեղոս, «Պատմութիւն», հրատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ս. կանայեանց, Տիփղիս, 1909. Ագաթանգեղոս, «Հայոց պատմութիւն», թարգմ. Ա. Տէր-Ղեւոնդեան, Երեւան, 1983:

վարդապետական մտածողութեան: Գիրքին կարելի է իրաւամբ տալ նաեւ «Եղծ աղանդոց՝ ի ջատագովութիւն Աստուծոյ ճշմարտի» խորագիրը, որ կը բաժնուի չորս հիմնական մասերու՝ «Եղծ աղանդոց հեթանոսաց», «Եղծ քէշիհ պարսից», «Եղծ կրօնից յունաց իմաստնոցն» եւ «Եղծ աղանդոյն Մարկիոնի», այլ խօսքով՝ հերքումն հեթանոսութեան, պարսկական զրադաշտութեան, յունական բնազանցութեան եւ մարկիոնականութեան: Առասպելախառն կրօնքներ, իմաստասիրական-բնազանցական ուղղութիւններ եւ աղանդաւորական շարժումներ, տարածուելով Հայաստանի մէջ, կը սպառնային խախտել ուղղափառ հաւատքին հիմքերը եւ քակտել Եկեղեցիի միութիւնը: Ահաւասիկ, ստեղծուած այս սուր հակադրութենէն կը ծնին հեղինակիս՝ քրիստոնէական վարդապետութեան վերաբերեալ հաւատքի խորաթափանց եւ հմուտ տեսութիւնները, որոնցմէ մի քանին կ'արժէ այստեղ թուարկել. «Նկարագիր Աստուծոյ ճշմարտի», «Պատճառ չարեաց», «Անհնքնագոյութիւն արարածոց», «Ծագումն չարին» (ընդդէմ վաղենտինեանց):

4. **«ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՑ** ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ, յուղղափառ եւ ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց՝ յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համաձայնաբեալ». գիրքի նախնական վերտառութիւնը, որ աւելի ընդարձակ է, ինքնին կը բացայայտէ ժողովածուի իմաստն ու բովանդակութիւնը. «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ, յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց՝ առ ի պահպանութիւն սուրբ հաւատոյ՝ համաձայնաբելով, զի սովաւ լուծցեն զամենայն հայհոյչացն միաբանութիւն, եղծագործ կործանմանցն հերձուածողացն եւ հաստատեն ի ճշմարիտ սուրբ խոստովանութիւն Երրորդութեանն՝ աներկբայութեամբ ընթանալ զկնի կոչողիս այսորիկ, հոգեւոր սերմանողիս՝ զԱստուածաշունչ Գրոց ասեմ, որ յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համաձայնաբեալ պիտառեցաւ առ ի պահպանութիւն սրբոյ հաւատոյս՝ քրիստոսատուր աւանդութեանն»: Այստեղ վկայութեան կը կոչուին Ընդհանրական, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ ընտրելագոյն ներկայացուցիչներու ստեղծագործութիւններէն դաւանական տեսութիւններ՝ իբրեւ անհերքելի հիմք քրիստոնէական հաւատքի, որու խոստովանութիւնը պարտաւորիչ է իւրաքանչիւր հաւատացեալի համար: Ունի հետեւեալ գլուխները.

Բան Ա. Նախասացութիւն յանհասութեան Սուրբ Երրորդութեանն

Բան Բ. Ցաղագս միոյ գոյ զՏէր մեր եւ զՓրկիչն Յիսուս՝ հանդերձ Իւրով Մարմնովն, եւ Նմա առ բաշխել զամենայն աստուածվայելուչս եւ

© National Library of Armenia

զմարդկայինս, եւ զի յերկուս բնութիւնս բաժանեն զՆա ամբարիշտք .

Բան Գ. Եթէ պարտ է անապական խոստովանել զՄարմինն Քրիստոսի՝ անդստին յարգանդէ կուսական Աստուածածնին Մարիամայ

Բան Դ-ը թերի է եւ վերտառութիւն չունի:

Բան Ե. Եթէ պարտ է զմարդեղութիւնն Քրիստոսի ըստ նախաստեղծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան զյաւիտեանս

Բան Զ. Ցաղագս մարմնական կրիցն Քրիստոսի, եթէ ոչ է Իմքնութիւն ականջ եւ հարկաւոր եւ կարեկցութեամբք, այլ՝ ի վեր քան զկարիս երկրաւորս եւ զմարդկայինն բնութիւնս

Բան Է. Եթէ ոչ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի ըստ տնօրէնութեանն, թէ պարտ է եւ ուրեք ձեւանալ անգիտանալ յաղագս իմիք պատճառի[5]

5. **«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»**. հայ աստուածաբանական գրականութեան անփոխարինելի հաւաքածոյ մը, մեր հայրապետներու եւ վարդապետներու դաւանաբանական տեսութեանց լաւագոյն արտայայտիչը (Ե-ԺԳդդ.): Փաստօրէն, մեր եկեղեցական հայրերուն ճամանկանին, ուր առկայ է աստուածաբանական-դաւանաբանական զանազան հարցերու նկատմամբ Հայ Եկեղեցիի մնայուն դիրքորոշումը, մասնաւորաբար՝ ընդդէմ նեստորական եւ քաղկեդոնական վարդապետութիւններու, եւ, ի վերջոյ, հայ-լատին միութենական շարժման առիթով արծարծուած դաւանական խնդիրները՝ գերագահութիւն Հոովմայ Աթոռի, երկու բնութիւնք, ներգործութիւնք եւ կամք Քրիստոսի, Սուրբ Հոգու ի Հօրէ եւ յՈրդւոյ բխումն (Filioque), քաւարան եւ այլն[6]:

6. **«ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ՝ ԸՆԴԴԷՄ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱՑ»**. Հայ Եկեղեցւոյ կարեւորագոյն դիրքորոշումներէն մին է Քերթող վարդապետիս սոյն թուղթը, երբ Ը դարու սկիզբը բիւզանդական միջավայրին մէջ բորբոքեցան պատկերամարտութեան եւ պատկերապարտութեան վերաբերեալ մինչեւ թ դար տեւող վէճերը: Սոյն վիճաբանութեանց սկիզբ կարելի է համարել Լեւոն Գ կայսեր հրապարակած մէկ հրովարտակը (730թ.), որով ի գիտ ծանր պատիժներու՝ Եկեղեցւոյ մէջ կ'արգիլէր պատկերապարտութիւնը: Արքունի այս որոշումը բնականաբար կը հանդիպի բուռն ընդդիմադրութեան Գերմանոս Ա պատրիարքի, բայց յատկապէս՝ տեղի վանականութեան կողմէ: Պատկերամարտներ կը մեկնէին այն տեսակէտէն, թէ Քրիստոսի ճշմարիտ պատկերը Տիրոջ մարդկային բնութեան հետ միաժամանակ պէտք է ներկայացնէ նաեւ Քրիստոսի աստուածային բնութիւնը. եւ որովհետեւ այդ անհնար է, ուստի Քրիստոսի միայն մարդկային բնութիւնը պատկերելը պարտադիր կերպով՝ նեստորականութիւն է: Պատկերապարտներ, որոնց կարկառուն ներկայացուցիչներէն էին Ցովհաննէս Դամասկացի եւ Թէոդորոս Ստուդիացին, կը հակառակէին վերոյիշեալ տեսութեան՝ փաստարկելով, որ ճիշդ Քրիստոսի մարդեղութեան իրողութիւնը կը հերքէ ամէն տեսակի երեւութականութիւն՝ հնարաւորութիւն տալով մարմնացեալ Աստուած Բանը ներկայացնել տեսանելի պատկերով, որովհետեւ Քրիստոս արդարեւ շօշափելի **«պատկերն** է Հօր»: Պատկերապարտութիւնը իր յարգանքն ու պաշտամունքը կ'ուղղէ պատկերուած նկարի Նախապատկերին կամ Նախատիպին, որ է Քրիստոս: Պատկերը էակից չէ Նախապատկերին, այսինքն՝ Քրիստոսին, սակայն անոնց միջեւ գոյութիւն ունի որոշակի «միութիւն» մը: Ոչ թէ նկարը կը յարգուի իբրեւ այդպիսին, այլ՝ Նկարուածը: Անհաւասիկ, Ընդհանուր Եկեղեցիին կեանքը յուզող այս եւ նման հարցերու նկատմամբ դիրքորոշում մըն է Վրթանէս Քերթողի «Ընդդէմ պատկերամարտացը», ուր հեղինակս կ'առաջարկէ հաւասարակշռուած չափաւորութիւն մը՝ պատկերապարգութեան ընդունում, սակայն պատկերներու հանդէպ ցուցաբերուած թէ հոգեւոր եւ թէ թուային ժուժկալութիւն[7]:

7. Ցովհաննէս Իմաստասէր Օձնեցի, **«ՃԱՌ ԸՆԴԴԷՄ ԵՐԵԻՈՒԹԱԿԱՆԱՑ»** եւ **«ՃԱՌ ԸՆԴԴԷՄ ՊԱՒԼԻԿԵԱՆՑ»**. երկարաշունչ այս զոյգ ճառերը կը հանդիսանան հայ դաւանաբանական մտքի պատմութեան կարեւոր փուլերը: Առաջինը ուղղուած է «երեւութականներուն» դէմ՝ այն հերետիկոսներուն, որոնք Քրիստոսի մարդեղութեան եւ չարչարանաց խորհուրդը, հնչ-որ հոգեւոր-տուալիստական սխալ հայեցակէտերէ առաջնորդուելով, կը համարէին լոկ «երեւոյթ» մը: Այսինքն՝ Աստուածորդին «առաչօք» էր մարմնացած եւ կրած Իր փրկագործ տառապանքները: Տարակոյս չկայ, որ այստեղ կը վճռանգուէր ամբողջ Քրիստոսի ճշմարտութիւնը՝ փրկագործութեան խորհուրդով: Անհաւասիկ, նաեւ Հայաստանի մէջ տա-

5 Տե՛ս «Կանիք հաւատոյ», հրատ. կարապետ եպսկ. Տէր-Մկրտչեան, Ս. Էջմիածին, 1914:

6 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

7 Տե՛ս Վրթանէս Քերթող, «Ընդդէմ պատկերամարտաց», հրատ. Ե. Մանդինեան, Ս. Էջմիածին, 1970, թ. 6-7, էջ 89-93. նաեւ՝ Եզնիկ քհն. Պետրոսեան, «Հայ Եկեղեցւոյ վերաբերմունքը սրբապատկերներու նկատմամբ» (յունարէն), Աթէնք, 1987:

© National Library of Armenia

րածուած այս վտանգաւոր հերետիկոսութեան հերքումն է Օձնեցի Հայրապետիս վերոյիշեալ ճառը, որուն ողջ մեկնակէտը Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններուն «անշփոթ եւ անբաժանելի միութեան» բացարձակ դաւանութիւնն է: Իսկ երկրորդը նմանապէս հակաճառութիւն մըն է, բայց այս անգամ՝ պաւղիկեան հերետիկոսներու դէմ, որոնք, համատեղելով Պօղոս Սամոսատցիի, յուլիանիտներու, ապողինարեաններու, մարկիոնականներու եւ սաբելեաններու մոլորութիւնները, կը մերժէին Եկեղեցւոյ կարգն ու աւանդութիւնները՝ համարելով զանոնք կռապաշտութիւն, ինչպէս օրինակ՝ Խաչին եւ սրբապատկերներուն ընծայուող յարգանքը եւ այլն[8]:

8. «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ». Հայ Եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութեան անփոխարինելի եւ կարեւորագոյն աղբիւրներէն մին կարելի է համարել նաեւ այս գործը, ուր համատեղուած են մեր Եկեղեցւոյ մէջ իբրեւ հաւատքի հեղինակութիւն ճանչցուած ե՛ւ ընդհանուր եկեղեցական, ե՛ւ ազգային եկեղեցական ժողովներու, ինչպէս նաեւ՝ հայ եւ օտարազգի սուրբերու, հայրապետներու սահմանած կանոնները: Այդ կանոններէն շատերը ունին ոչ միայն ծիսական, եկեղեցաբանական, կենցաղային եւ բարոյագիտական արժէք, այլ նաեւ՝ աստուածաբանական ու դաւանաբանական հեղինակութիւն, որ ի հարկէ դեռ մինչեւ այսօր Եկեղեցւոյ մէջ ի զօրու է: Ստորեւ՝ մեզի աւանդուած կանոնախումբերու առանձին-առանձին վերտառութիւնները.

Ա. Սահմանք եւ կանոնք, զոր եդին աշակերտքն Քրիստոսի
Բ. Երկրորդ առաքելական կանոնիս (կանոնք Կղեմայ)
Գ. Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի
Դ. Կանոնք տեառն Փիլիպպոսի առաքելոյն
Ե. Կանոնք յետ առաքելոց հարանց հետեւողաց
Զ. Կանոնք Նիկիական
Է. Կանոնք Անկիւրեայ
Ը. Կանոնք Կեսարեայ
Թ. Կանոնք Նէոկեսարեայ
Ժ. Կանոնք Գանգրայ
ԺԱ. Կանոնք Անտիոքայ
ԺԲ. Կանոնք Լաւոդիկեայ
ԺԳ. Կանոնք Սարդիկեայ
ԺԴ. Կանոնք Կոստանդնուպոլսի ժողովոյն
ԺԵ. Կանոնք Եփեսոսի ժողովոյն
ԺԶ. Կանոնք երկրորդ Անտիոքայ
ԺԷ. Խոստովանութիւն ժողովոյն Անտիոքայ
ԺԸ. Կանոնք երկրորդ Նիկիականք
ԺԹ. Կանոնք Աթանասի
Ի. Կանոնք Բարսղի
ԻԱ. Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ
ԻԲ. Կանոնք տեառն Եփրեմի արդիւնակատար կրօնաւորի
ԻԳ. Կանոնական գիր տեառն Եպիփանու
ԻԴ. Բարսղի գիր կանոնական՝ վասն պէս-պէս եւ բիւրապատիկ ախտից
ԻԵ. Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ՝ Աղուանից արքայի
ԻԶ. Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի
ԻԷ. Կանոնք Մակարայ Առաջնոյ
ԻԸ. Կանոնք երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ
ԻԹ. Յովհաննու Երուսաղէմացւոյ եպիսկոպոսի
Լ. Հիպողիտեայ սրբոյն բան
ԼԱ. Նեկտառեայ Հռոմայ եպիսկոպոսի
ԼԲ. Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ Եւտրեպիոն
ԼԳ. Սրբոյն Աթանասի Մեծի բան
ԼԴ. Սեբերիանոսի
ԼԵ. Ի Սոկրատայ
ԼԶ. Սրբոյն Դիոնեսիոսի Արիեոպագացւոյ
ԼԷ. Մանուէլի
ԼԸ. Կղեմայ Հռոմայ եպիսկոպոսի
ԼԹ. Կանոնք Շահապիվանի

8 Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833. Նաեւ՝ Կ. Տէր-Մկրտչեան, «Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ», Երուսաղէմ, 1938. «Պաւղիկեանց եւ թոնդրակեանց աղանդները արդի քննադատութեամբ», «Արարատ», 1900, էջ 328-333:

© National Library of Armenia

Խ. Կանոնք Դըւնայ սուրբ ժողովոյն

ԽԱ. Կանոնք սուրբ ժողովոյն... Կարնոյ

ԽԲ. Կանոնք սրբոյն Գրիգորի

ԽԳ. Կանոնք սրբոյն Սահակայ հայոց հայրապետի

ԽԴ. Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի

ԽԵ. Սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի գիր աւանդութեան

ԽԶ. Թուղթ Սեւանտեայ եպիսկոպոսի

ԽԷ. Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի

ԽԸ. Սահմանք եւ կանոնք կարգի Եկեղեցւոյ՝ սրբոյն Ներսէսի

ԽԹ. Կանոնք Ցովհաննու Մանդակունւոյ հայոց կաթողիկոսի

Ծ. Ցովհաննու Մանդակունւոյ... բան կանոնական

ԾԱ. Կանոնք Ցովհաննու Մանդակունւոյ

ԾԲ. Ցովհաննու Մանդակունւոյ հայոց կաթողիկոսի՝ Կոչումն ապաշխարութեան

ԾԳ. Կանոնք Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի

ԾԴ. Կանոնք տեառն Ցովհաննիսի Իմաստասիրի հայոց կաթողիկոսի

ԾԵ. Կանոնք Սիոնի հայոց կաթողիկոսի

ԾԶ. Կանոնք Եղիշէի վարդապետի[9]

9. **«ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ»**. Ը դարու մեր ամենահնգնատիպ մատենագիրներէն մին, որ մեզի աւանդած է մեր Եկեղեցւոյ պատմութեան եւ դաւանաբանութեան համար յոյժ կարեւոր երկ մը՝ հինգ գլուխներէ բաղկացած, որոնց մէջ կը քննարկուին քաղկեդոնականներու քրիստոսաբանութեան, յուլիանական եւ սեւերեան վարդապետութեանց, ինչպէս նաեւ՝ երեւութականներու մոլորութեանց վերաբերեալ հարցեր.

Ա. Խոսրովկայ Թարգմանչի հայոց՝ առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ աննձեւ, անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած Բան ի Կուսէն

Բ. Ցաղագս՝ թէ պա՞րտ է զՄարմինն տէրունական համագոյ ասել Աստուածն Բանի, կամ Մարմնոյն եւ Բան ի մի բնութիւն ասե՞լ, թէ՞ ոչ

Գ. Առ այնոսիկ, որ յերկուս զմարդկայինքն անջատեն բնութիւն, այլ

9 Տե՛ս վ. Ցակոբեան, «Կանոնագիրք հայոց», Ա, Երեւան, 1964, Բ, Երեւան, 1971. Մելիք-Թանգեան, «Հայոց եկեղեցական իրաւունքը», Ա, Շուշի, 1903, Բ, 1905:

գոլ ասեն յառաջ քան զյանցանսն եւ այլ՝ զկնի յանցանաց

Դ. Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, թէ՝ բնակա՞ն պարտ է ասել, թէ՞ անբնական: Նախադիր բանից առ Աթանաս Անտիոքացի

Ե. Նորուն Խոսրովու թուղթ առ տէր Սարգիս եպիսկոպոս Գերադիկորայ[10]

10. **«ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆՔ»** Ցովհաննէս Սարկաւագ վարդապետի». այս խորագրի տակ նկատի ունիմ Վենետիկի Մխիթարեանց Մատենադարանի թիւ 504 ձեռագիր մատեանի աւանդած աստուածաբանական այն ստեղծագործութիւնները, որոնք առերկբայ արգասիքն են Հաղբատայ նշանաւոր վարդապետ Ցովհաննէս Սարկաւագի: Ստորեւ՝ այդ գրութեանց ենթավերնագիրները.

Վենետիկ, Մխ. Մատենադարան, թ. 504	էջ
Ցովհաննու քահանայի՝ յաղագս նշանակ հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից	399
Ցաղագս Որդւոյ	403
Ցաղագս Հոգւոյն Սրբոյ	424
Նորին Ցովհաննու քահանայի՝ ի խնդրոյ Գագկայ կրօնաւորի՝ յաղագս քաղկեդոնականացն. գլուխ ԺԸ Առաջին՝ վասն մի եւ ոչ երկուս ասել զՏէր մեր Յիսուս Քրիստոս	432
Վասն տօնից միաբանութեան եւ բաժանման	433
Վասն յիշատակաց վկայից ճշմարտութեանն	435
Վասն մկրտութեան եւ ոչ թէ՝ զիա՛րդ իցէ	435
Վասն քահանայութեան եւ քահանայից	437
Վասն աշխարհականացն ժողովրդոց	438
Վասն տաճարաց աղօթարանաց, որ են եկեղեցիք	439
Վասն վկայարանացն սրբոց եւ անուանելոցն միայն	440
Վասն սրբոյ Խաչին	441
Վասն պատկերաց	448
Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ՝ վասն պատկերաց դարձեալ	451
Նորին Ցովհաննու քահանայի, առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն	465

10 Տե՛ս Գարեգին վրդ. Ցովսէփեան, «Խոսրովիկ Թարգմանիչ», Վաղարշապատ, 1899:

© National Library of Armenia

Նորին յաղագս՝ եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զատուածայնոց ձայնս՝ ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ՝ զան յինքենէ զգործս կամ կիրս 510
Ցաղագս՝ եթէ որք յետ միաձայնոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոս, ի հարկէ հետեւիմ նեստորականաց մտաց 528
Թէ զիարդ չարչարեալ Բանն, մարմին եղեալ եւ անչարչարելի մնացեալ, եւ կամ որպէս դարձեալ ձայնակցեմ չառափառքս 535
Ցարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի 544
Նորին հակաբանութիւն հնագիտական՝ ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայօդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց՝ հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց 554
Եւսերեալ կեսարու յԵկեղեցւոյ պատմութենէն ի հինգերորդ դպրութենէն՝ վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի 555
Նորին յաղագս բնութեան Բանի եւ միաւորութեան 569
Նորին՝ եթէ զիարդ ասի մի բնութիւն Բանին մարմնացելոյ ըստ ճշմարտութեան 575
Ցաղագս կամացն 585
Ցաղագս ներգործութեան 591
Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ եւ յայլ ժամանակս յարանց բղջախոհաց 605
Վկայութիւնք սրբոց, եթէ մի բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ [անկատար][11] 655

11. **«ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»**[12]. Հայ Եկեղեցւոյ դասական աստուածաբանութեան գագաթն է սքանչելիօրէն համակարգուած այս վիթխարի ստեղծագործութիւնը: Եթէ վերը խօսքը այն մասին էր, թէ մեր Եկեղեցիին մէջ խիստ սակաւ է վարդապետական աստուածաբանութեան վերաբերեալ համակարգուած պաշտօնական ձեռնարկներու գոյութիւնը, ապա այստեղ, ի տես Գրիգոր Տաթեւացիի յօրինած «Հարցմանց գիրքի», կարելի է ըսել, թէ ընդհանրապէս դաւանաբանութեան բնագաւառին մէջ, ակնարկուած պակասը

11 Տե՛ս Աբէլ Աբեղայ, «Մատենագրական հետազօտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ», «Հանդէս ամսօրեայ», 1-12, 1991, էջ 75-77:

12 Տե՛ս Գիրգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729:

լրացնելու իմաստով, այն մեծ նշանակութիւն ունի: Նախ խորագիրը՝ «Գիրք հարցմանց», ստուար հատորիս էութեան բնորոշիչն է. այսինքն՝ ամբողջ գործը աստուածաբանական եւ վարդապետական բազմազան հարցերու ընդարձակ անդրադարձ մըն է, որ կ'առաջնորդուի սխոլաստիկական ոճին իւրայատուկ հարց-պատասխաններու (Questitiones disputatae) մեթոտով: Տարակոյս չկայ, որ Տաթեւացին իր սոյն երկը յօրինելու ընթացքին ազդուած է Թովմաս Ակուինացիի, Ալբերտոս Սուարեցիի եւ Սկովտոս Երինացիի նմանատիպ ստեղծագործութիւններէն՝ միեւնոյն զէնքերով մաքառելու համար Հայաստանի մէջ տարածուող ժամանակի լատինադաւան յորձանքի դէմ: Ափսոս, որ, հակառակ իր ունեցած անհերքելի հեղինակութեան, Տաթեւացիին սոյն գիրքը հրապարակային եւ պաշտօնական ճանաչում չէ գտած մեր եկեղեցական պատկան մարմիններու կողմէ՝ իբրեւ ուղեցոյց Հայ Եկեղեցւոյ դասական աստուածաբանութեան: Այստեղ պիտի չուզէի բաժնել Օրմանեանի այն տեսակէտը, թէ «ժամանակին լատիններուն դէմ իրենց զէնքերով մաքառելու հարկը ստիպած է Տաթեւացին՝ «Հարցմանց գրքին» մէջ իւրացնել եւ հայոց սեպհականել տալ նաեւ այնպիսի վարդապետութիւններ, որոնք լատիններէն առաջ կը դրուէին եւ թէպէտ Հայ Եկեղեցւոյ սեպհական չէին... Կ'երեւի, թէ Տաթեւացին ուզած է այնպէս իմն ցուցնել, թէ Հայ Եկեղեցին թերի բան մը չունի իր ընդհանուր վարդապետութեան մէջ»[13]: Պէտք է ըսել, որ ինչքան ալ Եկեղեցիներ ունենան իրենց ուրոյն սովորութիւններն ու ազգային դիմագիծը, հաւատքին վերաբերող հիմնական հարցերու մէջ կղզիացած չեն կրնար ըլլալ, ի մասնաւորի՝ այն Եկեղեցիները, որոնք հաւատոյ աւանդութեան առնչութեամբ ունին ընդհանրական եւ առաքելական համընդհանուր ակունք մը: Հաւատքի ճշմարտութիւններ չեն կրնար ունենալ որեւէ ազգային դիմագիծ եւ դառնալ սեպհականութիւնը ասոր կամ անոր: Կրօնական հաւատալիքներ որդեգրելը քրիստոնէութեան մէջ գործող դրուածք մըն է՝ Եկեղեցիին գոյաւորման եւ զարգացման օրերէն սկսեալ, այնքանով որ անոնք խոտոր չեն եկեղեցական աւանդութիւններուն եւ Աւետարանի հաւատոյ ճշմարտութիւններուն: Արդ, եթէ Տաթեւացին քրիստոնէական որոշ հաւատալիքներ որդեգրած է, ապա այդ կատարած է գուցէ մեր Եկեղեցւոյ մէջ դեռ չբաւնաձեւուած, գրաւոր խօսքի չվերածուած, բայց եւ այնպէս հաւատոյ ըմբռնումներու մէջ առկայ հիմքերու վրայ եւ ազգային-եկեղեցական

13 Տե՛ս Օրմանեան, «Ազգապատում», Բ, Պէյրութ, 1960, էջ 2029:

© National Library of Armenia

աւանդութիւններու սահմաններուն մէջ: Բաց աստի, Տաթեւացիի նախաձեռնութեանը վերագրող Օրմանեանի նշած նորամուծութիւններէն շատեր արդէն իսկ առկայ են մեր կարգ մը վարդապետներու գործերուն մէջ, որոնք ժամանակագրական կարգով աւելի առաջ են, քան Տաթեւացին, ինչպէս օրինակ՝ Վարդան Վարդապետ Արեւելցիի եւ այլն: Սակայն այս մասին՝ ուրիշ առիթով:

12. Գալով Տաթեւացիի՝ աստուածաբանական գիտութեանց վերաբերեալ ըմբռնումներուն՝ նոյն «Գիրք հարցմանցի» երրորդ հատորին մէջ «տիեզերալոյս վարդապետս» ամբողջութեամբ կը խօսի Դիոնեսիոս Արիոպագացիի աստուածաբանութեան մասին՝ հետեւեալ վերտառութիւններով.

Ա. Ճառելի եւ անճառելի: Եւ բնութիւն Աստուծոյ՝ անգիտելի: Եւ թէ՝ անգիտութեամբ գիտելի [է] Աստուած: Եւ տգիտութիւնն է խաւար մտաց

Բ. Ջի՞նչ է հանգիստ մտաց

Գ. Միութիւն եւ որոշումն

Դ. Բաղդատութիւն Բանին Աստուծոյ եւ մարդկութեանն

Ե. Վասն Է՞ր կոչեմք Երրորդութիւն՝ եւ Հայր, եւ Որդի, եւ Հոգի Սուրբ

Զ. Մի եւ միակ եւ բազում

Է. Սկիզբն եւ պատճառ

Ը. Վասն էի եւ ոչէի եւ նախագոյի եւ էր եւ է եւ եղիցի

Թ. Վասն յարացուցի՝ մի է եւ բազում

Ժ. Վասն աննեղութեան եւ եղելութեան

ԺԱ. Անժամանակ է Աստուած եւ յաւիտեան եւ հին աւուրց

ԺԲ. Վասն յաւիտենից

ԺԳ. Վասն կենաց եւ զանազանութեան Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան եւ կենդանեաց

ԺԴ. Վասն տեսութեան Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան: Եւ ամենահայեաց է Աստուած

ԺԵ. Ջի՞նչ զանազանի եւ հաւասարի տեսութեանն Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան

ԺԶ. Զանազանութիւն տեսութեան մտաց եւ զգայութեանց: Եւ բանականութեան սկիզբն եւ կատարումն

ԺԷ. Վասն՝ թէ բան ունի Աստուած: Եւ վասն ճշմարտութեան եւ հաւատոյ: Եւ զանազանութիւն բնական քննութեանն եւ հաւատոյ

ԺԸ. Քանի՞ է եղանակ աստուածաբանութեան

ԺԹ. Զանազանին բացբարձականքն եւ ուրացականքն

Ի. Արեգակն կոչի Աստուած ի յատկութեամբ

ԻԱ. Վասն զարմացմանն Աստուծոյ եւ նախանձուն

ԻԲ. Սէր եւ սիրելի եւ բարի է Աստուած

ԻԳ. Լայն, երկայն, խոր եւ բարձր ասի Աստուած

ԻԴ. Ալֆա եւ Օ

ԻԵ. Ոտք է մարմինն

Անդրադառնալով Դիոնեսիոս Արիոպագացիին՝ ինչպէս ժամանակի բոլոր եկեղեցական հայրերը, անշուշտ Տաթեւացին եւս ընկատի ունի Եկեղեցւոյ մատենագրութեան մէջ քաջածանօթ այն հեղինակը, որ իբրեւ աշակերտ Պօղոսի կը յիշատակուի Գործ. ԺԷ 34 համարին մէջ. «Քանի մը մարդիկ, յարելով [Պօղոսին], հաւատացին. անոնց մէջ էր նաեւ Դիոնեսիոս Արիսպագացին»: Սակայն գիտութիւնն այսօր կասպացուցած է, թէ Դիոնեսիոս Արիոպագացիի անունով մեզի աւանդուած աստուածաբանական բոլոր գրուածքները գրական ժառանգութիւնն են կեղծանունի մը, որ ապրած է Ե դարու վերջը եւ Զ-ի սկիզբը: Բնական է, այս մասին չէր կարող գիտնալ ԺԴ/ԺԵ դարու հեղինակ մը, որպիսին է Տաթեւացին: Այնուամենայնիւ, խիստ հետաքրքրական են այս առթիւ Տաթեւացիին տուած մեկնաբանութիւնները՝ ըստ իւրաքանչիւր մասին: Օրինակ՝ «Ծաղագս աստուածաբանական եղանակաց» ԺԸ ենթավերնագրին տակ Տաթեւացին տեսական աստուածաբանութիւնը կը բաժնէ չորս հիմնական մասերու.

ա) տպաւորական,

բ) պատճառաբանական,

գ) նշանական,

դ) խորհրդական:

«Առաջինն, որ է տպաւորական աստուածաբանութիւն, է ի Դէմս Ս. Երրորդութեան եւ Մի Աստուածութեան, թէ որպէ՞ս է Մի, որպէ՞ս՝ Երեակ եւ Ծնող եւ Ծնունդ եւ ի բխումն եւ վասն մարդեղութեանն Քրիստոսի: Եւ է սա՛ առաջին, զի զոր նախ է, քան զյաւիտեանն եւ զժամանակս. աստուածաբանէ՛ եւ քննէ՛»:

«Երկրորդն է պատճառաբանականն, որ է ի պատճառելեացս,

© National Library of Armenia

այսինքն՝ յարարածոցս զգեղեցիկն տեսանել՝ զՊատճառն եւ զԱրարիչն վերակոչեմք եւ անուանեմք. որպէս է՝ քարի, գեղեցիկ, լոյս, կեանք, իմաստութիւն եւ այլն: Եւ է սա՛ երկրորդ, զի ի պատճառէ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի»:

«Երրորդն է ընդհանրական աստուածաբանութիւն, որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն, թէ զի՞նչ ընդհանուր է մարդ երեւիլն կամ առիւծ, գառն, ճուր, լոյս եւ այլն: Եւ թէ որպէ՞ս ասեմք ննջել, զարթնուլ, արտմտիլ կամ տրտմիլ Աստուծոյ: Եւ է սա՛ երրորդ՝ ըստ կարգի, զի երեւելեաց եւ ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի»:

«Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն, յորժամ, զամենայն զգալի եւ զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք եւ մտանեմք յամպն եւ ի մէգն՝ ըստ Մովսէսի. եւ ապա տեսանեմք զՆա արտաքս որոշեալ յամենայն էից: Զի ո՛չ մարմին է [Աստուած] եւ ոչ ճոգի եւ ո՛չ միտ եւ ո՛չ այլ ինչ, զոր մեք գիտեմք կամ իմանամք: Եւ ապա ասեմք՝ անհասանելի, անքննելի, անճառելի [է Աստուած] ո՛չ միայն մեզ, այլ եւ ամենայն եղական իմացմանց անիմանալի է եւ անյայտ: ...Եւ Նա անտես է ի հրեշտակաց եւ անյայտ՝ ի մարդկային մտաց, թէ որպէ՞ս կամ զի՞նչ է էութիւն եւ բնութիւն Աստուածութեանն: Ա՛յս է ծայրագոյն գագաթն աստուածաբանութեան: Ա՛յս է երանութիւն իմանալեացն: Եւ ա՛յս է կարօտութիւն ամենայն ընտրելոց, այսինքն՝ Անհասին անհասապէս հասանիլ եւ զԱնտես անտեսութեամբ տեսանել: Սա կոչի խորհրդական աստուածաբանութիւն»:

Տեսական աստուածաբանութեան այս չորս եղանակներն, եթէ փորձենք այսօրուայ ըմբռնումներով արտայայտել՝ հիմնական, համեմատական (Analogia entis), խորհրդանշանական (Symbolism), միստիկ կամ ներհայեցողական աստուածաբանութիւնը, սա կամ նա ձեւով կու գան միանալ աստուածաբանական մէկ ճիւղի՝ դաւանաբանութեան մէջ:

Վերոյիշեալ չորս բաժանումներէն բացի Տաթեւացին աստուածաբանութիւնը կը բաժնէ եւս երկու մասերու, որոնցմէ իւրաքանչիւրը դեռ իրենց կարգին կը բաժնուին երկու ստորաբաժանումներու.

«Ծանի՛ր եւ զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի, այսինքն՝ դրութեամբ եւ բացբարձմամբ: Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, որ լինին չորս՝ ըստ Աստուածաբանին Գրիգորի, այսպէս. «Է՛ եւ ասի, ո՛չ է եւ ասի, է՛ եւ ո՛չ ասի, ո՛չ է եւ ո՛չ ասի»:

«Նախ՝ դրութեամբն, որ է՛ եւ ասի, որպէս՝ Հայր, Որդի, Հոգի, Լոյս, կեանք եւ այլն: Այս է, զոր ինչ է ի յԱստուած, դնելով կոչեմք զՆա: Եւ այսպէս է տպաւորականն եւ պատճառաբանականն»:

Այլ խօսքով՝ այն ամէնը, որ Աստուած Իր բնութեամբ եւ էութեամբ է, յայտնութեամբ իմանալով, Աստուծոյ մասին կ'ըսենք, թէ Աստուած Իր երեք Անձերով՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի, անստուեր Լոյս, Կեանք եւ Սէր է եւ այլն:

«Երկրորդն՝ ո՛չ է եւ ասի, որպէս՝ մարմին, ձեռն եւ ոտն կամ ննջել եւ զարթնուլ, որ ո՛չ է ի յԱստուած, այլ, դնելով ի վերայ, ըստ ներգործութեանն տարացոյցի: Եւ այս է ընդհանուր աստուածաբանութիւն»:

Արարիչ Աստուած բոլոր գոյերէն ու արարածներէն գերիվեր է: Աստուած Խորհուրդ խորհի է՝ անհաս եւ անսկիզբն: Կարելի չէ Աստուծոյ որեւէ գոյացական մասնիկ կամ յատկանիշ վերագրել, գործնական ըսել՝ «Աստուած Իր ձեռքով ստեղծեց ամբողջ տիեզերքը», «Աստուծոյ Աջը պաշտպանեց Իսրայէլը», «Եւ եօթերորդ օրը Աստուած հանգստացաւ» եւ այլն: Աստուած ձեռք կամ հանգիստի կարիք ունենալու տուեալներէն ու նիւթական հասկացութեանց չափանիշներէն գերազանց է: Բայց, առաջնորդուելով մարդկային իմացութեան եւ մտածողութեան սահմաններէ, Աստուծոյ մասին խօսելով մարդկային լեզուամտածողութեամբ, կ'ըմբռնենք Աստուծոյ ներգործութիւնը պատմութեան, ժամանակի եւ մարդկային մեր կեանքին մէջ:

«Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է: Նախ՝ որ է՛ եւ ո՛չ ասի, որպէս՝ անսկիզբն եւ անվախճան, ո՛չ բան եւ ո՛չ միտ, ո՛չ է եւ այլն: Եւ այս՝ ոչ ըստ պակասութեան, այլ՝ ըստ գերազանցութեան»:

Այստեղ յոյժ կարեւոր ըմբռնում մըն է Տաթեւացիի գործածած **բացբարձում** բառը, որն այսօրուայ սահմանումով ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ **անդրանցականութիւն**, օտար բառով՝ «Transtendenz» հասկացութիւնը՝ իր իմաստասիրական եւ աստուածաբանական մտածողութեան ամբողջ տարողութեամբ:

Աստուած անսկիզբ եւ անվախճան է, եւ ի վերջոյ ինչպէ՞ս կարելի է իմանալ, թէ ինչ է անսկիզբն ու անվախճանը: «Ի սկզբանէ էր

© National Library of Armenia

Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն» [Յովհ. Ա 1]: Աստուած Խօսք է, բայց այդ Խօսքը որչափ զուգահեռ է մարդկային խօսքին ու ըմբռնումին, անճառելի է. ուստի կարելի չէ նմանը Աստուծոյ վերագրել: Այո՛, կարելի չէ նոյնիսկ Աստուծոյ մասին ըսել՝ Աստուած է կամ գոյ է: Որովհետեւ իւրաքանչիւր գոյութիւն նիւթին գոյացութեան եւ պատահարներու, այսինքն՝ որակի, քանակի, չափի, գոյնի, ձեւի, համի, հոտի յարաբերութեանց մէջ է, որ կ'ըմբռնենք ու կ'իմանանք, մինչդեռ Աստուած գերազանց է այս բոլորէն:

«Երկրորդն՝ ո՛չ է եւ ո՛չ ասի, որպէս՝ այլայլութիւն եւ ապականութիւն, չար. ո՛չ է եւ ո՛չ ասի: Այս է աստուածաբանութիւն դրութեամբ եւ բացբարձմամբ, որ է՝ ստորասութեամբ եւ բացասութեամբ եւ ճառելի եւ անճառելի»:

Աստուծոյ կարելի չէ չարութիւն, այլայլութիւն, ապականութիւն եւ նման այլ ստորոգելիներ վերագրել, որովհետեւ այդպիսիք բացասութեան կամ թերութեան, պակասութեան յատկանիշներ են, մինչդեռ Աստուած անգերազանցելի կատարելութիւն է: Օրինակ՝ մութը պակասութիւնն է լոյսի, չարը՝ բացակայութիւնը բարիին, ապականութիւնը՝ մաքրութեան, եւ այլն: Ով որ նման չարադաղան ստորոգելի մը կը վերագրէ Աստուծոյ, անպայմանօրէն մոլորութեան մէջ է: Իսկ մոլորութիւնը պնդելու պարագային հերետիկոս է եւ մերժելի Եկեղեցիէն:

Աստուածաբանական գիտութեանց վերաբերեալ իր խորհուրդածութեանց աւարտին Տաթեւացին կը ներկայացնէ մեզի հետեւեալ ամփոփոյքը.

«Գիտելի է, զի առաջին աստուածաբանութիւն նեղագոյն է եւ սակաւաբան, որ է տպաւորականն:

Եւ երկրորդն, որ է պատճառաբանականն, առաւել է, քան զառաջինն, զի յաղագս աստուածային անուանցն է քննութիւն:

Եւ երրորդն, որ է նշանական, ա՛յլ առաւել եւ ընդարձակ եւ բազմաբան է, վասն զի խառնի ի զգալիսս, որ բազում է եւ բաժանեալ: Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ, ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս եւ յանհատս իջեալ՝ բազմանայ: Կամ որպէս բունն մի է ծառոյն, եւ ճիւղքն եւ տերեւքն՝ բազում. նմանապէս եւ՝ աստուածաբանութիւնն:

Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ միան ընթանայ, որպէս խորհրդական աստուածաբանութիւնն՝ արտաքոյ թողեալ

զբազմութիւն էից եւ ի միան ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է եւ անիմացութիւն, անճառելի, անիմանալի եւ լռութեամբ պատուի յամենայն արարածոց»[14]:

13. **«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ»**. Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով այստեղ աւելորդ չեմ նկատեր նշել նաեւ Մաղաքիա արքեպսկ. Օրմանեանի «Հայոց Եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրութեան ԻԱ-ԻՁ գլուխները, որոնք ամփոփուած են Հայ Եկեղեցւոյ «Վարդապետութիւնը» ընդհանուր ենթավերնագրի տակ. այսպէս՝ «Դաւանական սկզբունքներ», «Հայ Եկեղեցւոյ դաւանութիւնը», «Հաւատոյ հանգանակը», «Ներողամտութեան հոգին», «Եկեղեցւոյ խորհուրդները» ու «Վարդապետութեան ճշդաբանութիւնը»[15]:

Բնագրային սկզբնաղբիւրներ Մ. Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ, Երեւան

14. Եսայի վրդ. Նչեցի, «Դաւանութիւն», թ. 7255, 8389. նաեւ՝ «Թուղթ առ Մատթէոս», թ. 8245
15. Պօղոս Տարօնացի, «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի», թ. 5787, 6517 եւ այլն. նաեւ՝ «Պատասխանի թղթոյն Թէոփիստեայ», թ. 8482
16. Գրիգոր Սկեւռացի, «Դաւանութիւն հաւատոյ», թ. 1217, 8065
17. Գրիգոր Վկայասէր (Վահրամ Ռաբունի*), «Ցաղագս Սրբոյ Երրորդութեան», թ. 1712, 5586, 6988 եւ այլն
18. «Հարցումն Արձանայ եւ պատասխանիք Եզնկայ», թ. 1999
19. «Զաքարիայի կաթողիկոսի եւ Մովսէս Քերթողի՝ Ի փոխումն Աստուածամօրն», թ. 2042
20. «Վանական վարդապետի՝ Հարցմունք եւ պատասխանիք», թ. 2152
21. «Կոստանդին կաթողիկոսի՝ Դաւանութիւն», թ. 2174
22. «Հաւաքմունք վարդապետաց յաղագս դաւանութեան», թ. 2197
23. «Աղեքսանդր Ջուղայեցւոյ՝ Ցայտարարութիւն ընդդէմ ֆրանկաց», թ. 2197
24. «Սահակայ Միայնակեցի՝ Դաւանութիւն», թ. 2220

---

14 Տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 122-123:

15 Տե՛ս Մաղաքիա արքեպսկ. Օրմանեան, «Հայոց Եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը», Պէյրութ, 1960, էջ 87-111:

© National Library of Armenia

25. «Անանիա Սանահինեցւոյ՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», թ. 2245

26. «Ցաղագս ճշմարիտ դաւանութեան», թ. 2272

27. «Ստեփաննոս Սիւնեցւոյ՝ Պատասխանի առ վարդապետսն աղուանից», թ. 2042

28. «Ն. Շնորհալւոյ՝ Սահմանք հաւատոյ. Ցաղագս դաւանութեան», թ. 2043

29. «Ն. Լամբրոնացւոյ՝ Սակս միաւորութեանց Քրիստոսի», թ. 2106

30. «Պօղոսի Էրզրումացւոյ՝ Վասն հաւատոյ», թ. 2131

31. «Ցաղագս միաւորութեան երկուց բնութեանց. Քանի են խորհուրդք Եկեղեցւոյ. Դաւանութիւն», թ. 2142

32. «Մովսէս Երզնկացւոյ՝ Բան պատասխանատուութեամբ ուղղափառ հաւատոյ», թ. 2174

33. «Հարցումն ընդդէմ երկաբնակացն. Ցաղագս աստուածաբանութեան», թ. 2189

34. «Վկայութիւնք վասն մի բնութեան», թ. 2335

35. «Վասն երկու բնութեան. Ցաղագս Տիեզերական ժողովոցն. Ցաղագս հայրապետացն հայոց, թէ որք կացին հակառակ Եկեղեցւոյն Հռոմայ», թ. 2368

36. Ստ. Օրբելեան, Ակ. Սանահինեցի, Մովսէս Երզնկացի, «Հակաճառութիւնք ընդդէմ երկաբնակաց», թ. 2678

37. «Վարդապետ Կիլիկեցւոյ (Արեւելցի՞)՝ Վկայութիւնք Աթանասի ընդդէմ երկաբնակացն», թ. 1838

38. «Վասն խնդրոյ Հոգւոյն Սրտոյ եւ թուղթ Վանական վարդապետի: Դաւանութիւն քաղկեդոնացւոց. Վկայութիւնք ի հարանց՝ յաղագս դաւանութեան», թ. 1850

39. «Համառօտ հաւաքումն վարդապետաց՝ Ցաղագս դաւանութեան ընդդէմ հերձուածողաց», թ. 1982

40. «Գէորգայ Կ. Պոլսեցւոյ՝ Վասն միոյ բնութեան. Անհաւատութիւն ֆրանկ վարդապետաց. Պատասխանի այնոցիկ, որք երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Քրիստոսի. Գէորգայ Կ. Պոլսեցւոյ՝ Վասն աղանդոցն», թ. 1983

41. «Գրիգոր Նարեկացւոյ՝ Վասն ուղիղ հաւատոյ», թ. 1324

42. «Գրիգոր Նիւսացւոյ՝ Խօսք յինն երանութիւնսն», թ. 1385

43. «Եփրեմի՝ Վասն ամբակ միաւորութեան Բանին եւ Մարմնոյ. Հարցմունք եւ պատասխանիք ընդդէմ երկաբնակաց. Հարցմունք Մամբրէի եւ պատասխանիք Դաւթի. Հարցումն հայոց առ երկաբնակսն. Սահմանք հաւատոյ, որ ի Նիկիայ», թ. 1555

44. «Վասն Եփեսոսի Բ ժողովոյն. Վասն Քաղկեդոնի ժողովոյն. Սակս Բ բնութեան», թ. 1666

45. «Թուղթ Վարդանայ վարդապետին ընդդէմ Հռոմայ պապուն», թ. 1764

46. «Գործք Քաղկեդոնի ժողովոյն», թ. 1777

47. «Ստ. Դաշտեցւոյ՝ Ընդդէմ հերձուածողաց», թ. 673

48. «Ժողովումն Սուրբ Գրոց յաղագս մի բնութեան Քրիստոսի», թ. 736

49. «Հարցմունք եւ պատասխանիք՝ Ցաղագս մարդեղութեան Քրիստոսի», թ. 770

50. «Կիրակոս Երզնկացւոյ՝ Թուղթ առ Կարնեցիս. Մխ. Արծկեցւոյ՝ Ցաղագս միութեան բնութեան եւ Բանին Աստուծոյ. Պօղոս Տարօնացւոյ՝ Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի. Ստ. Օրբելեան՝ Ընդդէմ ապականողաց զխորհուրդն. Հանգանակ Նիկիական. Կարգաւորութիւն ուղղափառ հաւատոյ. Նզովողք ժողովոյն Քաղկեդոնի. Կղեմեսի՝ Վասն հերձուածողաց. Վարդան Արեւելցւոյ՝ Այլ ոճ վիճելոյ ընդ քաղկեդոնիկսն», թ. 774

51. «Պատասխանի ընդդէմ այնոցիկ, որ երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Քրիստոսի», թ. 841

52. «Գրիգորի Տաթեւացւոյ՝ Դաւանութիւն հաւատոյ», թ. 1712, 1850, 5128

53. «Ստ. Սիւնեցւոյ՝ Վասն Բ բնութեան»

54. «Պօղոս Տարօնեցի՝ Վասն մարդեղութեան Քրիստոսի», թ. 714

* * *

Այստեղ հարկ կը նկատեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել հոգշ. տ. Աբրահամ վրդ. Մկրտչեանին՝ Մատենադարանի ձեռագրաց բնագրային սոյն սկզբնաղբիւրներուն համարները նշելու առիթով ինձի ցուցաբերած օժանդակութեան համար:

© National Library of Armenia

Մեսրոպ քահանայ Արամեան

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

(շարունակութիւն)

ԴՐՈՇՄ

Ձեռագրերում Դրոշմի արարողութիւնը ոչ մի խորագրով բաժանուած չէ Ջրի Մկրտութեան արարողութիւնից: Արդէն իսկ Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդների առանձնացումը յատուկ է աւելի ուշ շրջանի դպրոցական (scholastic) մտայնութեանը եւ չունի որեւէ ծիսական յենք, ընդհակառակը՝ ծէսը պահանջում է այս երկու խորհուրդների միեղէն-համաձայնական դիտարկում՝ փրկութեան համար անհրաժեշտ տնօրինական հերթականութեան ծաւալումով: Այստեղ հարկ է նշել, որ ծիսական աստուածաբանութեան համար ելակէտային է Սրբազան Ծէսը, եւ որեւէ աստուածաբանական կամ վարդապետական կառոյց պէտք է անհրաժեշտաբար կառուցուած լինի ծիսական իրականութեան վրայ: Իւրաքանչիւր ծիսական երեւոյթի դիտարկման համար սկզբունքային է նրա սրբազան տարրերի փրկաբանական միասնութիւնը, եւ վտանգաւոր են մեկուսացուած, բեկորային մօտեցումները, երբ ծիսական որեւէ բաղադրամաս չափազանց տարանջատւում է որոշակի ուրոյն, սոսկական իմաստով եւ նշանակութեամբ: Ջրի լուացման եւ Միւռոնի օծման խորհուրդները խորապէս փոխներթափանցուած են. չէ՞ որ օծումը կատարւում է այն իւղով, որը նախապէս հեղուել է ջրի մէջ... Այս առումով անհրաժեշտ է շեշտել, որ Մկրտութիւնը Դրոշմի արարողութեամբ հանդերձ մէկ միասնական ծէս է, որի իւրաքանչիւր տարր բացայայտւում է իր տեղում՝ ծէսի օրինաչափ ընթացքի մէջ:

Այս երկու խորհուրդների լծորդուածութիւնը պատահական չէ, այլ ունի իր աւետարանական նախահիմքը, որը Քրիստոսի Մկրտութիւնն է: Այն, ինչ մէկ անգամ տնօրինաբար կայացել է Քրիստոսի հետ, մեզ հնարաւոր է դառնում Նրա հրաշափառ Յարութիւնից եւ

Հոգեգալուստից յետոյ, որոնց վրայ է խարխսուած մեր փրկութեան ողջ տնտեսութիւնը: Քրիստոսի Մկրտութիւնը մեզ համար փրկական խորհուրդ է դառնում Տիրոջ Մահով եւ Յարութեամբ. նոյնպէս էլ՝ Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու աղաւնակերպ էջքը մեզ համար հնարաւոր է դառնում միայն Սուրբ Հոգու տնօրինական յայտնութեամբ՝ Հոգեգալուստով: Ուրեմն, ծէսի հիմքը աւետարանական իրողութիւնն է, որն իր մէջ հանգուցում է երկու կարեւորագոյն խորհուրդներ՝ Քրիստոսի Յարութեանը տնկակցուելու եւ Սուրբ Հոգու ստացման:

Դրոշմի արարողութիւնը միանշանակ չի եղել Հին Եկեղեցում. գոյութիւն են ունեցել զանազան աւանդութիւններ եւ ծիսական բազմակերպութիւններ: Այսպէս օրինակ՝ վաղ ասորական ծէսում բացակայում է Դրոշմը. օծման արարողութիւն կատարւում է միայն ջրի լուացումը, որն իր բնոյթով դիւահալածութեան (exorcism) եւ նախապատրաստական արարողութիւն է: Ասորական ծէսի մասին տեղեկութիւններ պարունակող հնագոյն բնագրերի[1] համաձայն՝ Ջրի Մկրտութեան եւ Հաղորդութեան միջեւ որեւէ արարողութիւն չկայ: Մկրտութիւնից յետոյ Դրոշմի արարողութեան մասին առաջին յիշատակութիւններն արեւմտեան աղբիւրներից են[2], եւ իրաւացի է ենթադրել, որ Դրոշմն Արեւելք է մուտք գործել Արեւմուտքից, ինչպէս օրինակ ս. Կիւրեղ Երուսաղէմացու խորհրդական (mystagogical) ճառերում[3] կամ Առաքելական հրահանգներում[4] ընկարագրուած արարողութիւններում է:

Հայկական ծէսը ձեւաւորուել է արեւելեան եւ արեւմտեան աւանդութիւնների խաչաձեւումով. աւելի հին ասորական ազդեցութիւններն ընդխառնուել են յետագայ բիւզանդական (արեւմտեան) ներմուծութիւններին[5]: Մկրտութեան արարողութեան մէկ ուշագրաւ

---

[1] "The Acts of Judas Thomas", "Documents of the Baptismal Liturgy", edited by E. C. Whitaker, London, 1979, p. 13-16; "The History of John the Son of Zebedee", նոյն, p. 21-23

[2] "The Apostolic Tradition of Hippolytus", նոյն, p. 2-7; Tertullian, "De Baptismo", նոյն, p. 7-10

[3] Migne, PG, 33, 331-1180; R. M. Woolley, "Instructions on the Mysteries of St. Cyril of Jerusalem", London, 1930: Տակաւին անորոշ է՝ այս ճառերը թարգմանուե՞լ են հայերէն, թէ՞ ոչ:

[4] "The Apostolic Constitutions", "Documents of the Baptismal...", p. 30-35: Այս անվաւեր կանոնախումբը գրուել է մօտ 375 թ.: Հայերէն թարգմանութեամբ չկայ:

[5] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Gabriele Winkler, "The History of the

© National Library of Armenia

աւանդութիւն է եղել մեզ մօտ, որի մասին տեղեկանում ենք Ագաթանգեղոսի վկայութիւնից, ըստ որի՝ օծումը կատարուում էր ուղղակի ջրում՝ սուրբ Իւղի հեղմամբ մկրտուողների[6] վրայ... Սուրբ Իւղի հեղումը նշանակն էր Սուրբ Հոգու էջքի եւ հայելացում էր Քրիստոսի Մկրտութեան հետ, երբ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ Տիրոջ վրայ. «Եւ իւղն օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն, շուրջ զմարդկաւն խաղայր»[7]:

Դրոշմի արարողութիւնը, ըստ իր ընդհանրացած ձեւի, ունի իննօծումներ, որոնցից իւրաքանչիւրն ուղեկցւում է իրեն յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Բացի այս իննօծումներից, եղել են այլ օծումներ, որոնք չեն ընդհանրացել. այսպէս օրինակ՝ ՄՄ թիւ 1001 երկաթագիր մաշտոցն ունի նաեւ թիկունքի օծում. *«Եւ ապա զթիկնամէջն [օծանէ]՝ ասելով. «Կնիքս, որ յանուն Քրիստոսի եղիցի քեզ պարիսպ ամուր շուրջ պատեալ զթիկունս քո Հոգիդ ճշմարտութեան, յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»»*: Թիկունքի օծում ունեն նաեւ օրինակ՝ ս. Ղազարի թիւ 1429, 487, ՄՄ թիւ 3822 մաշտոցները, սակայն՝ այլ բանաձեւերով: Ս. Ղազարի թիւ 182 մաշտոցն ունի երեսի օծում՝ հետեւեալ բանաձեւով. *«Լոյս աստուածային ծագելով ի վերայ երեսաց քոց»*: ՄՄ թիւ 3822 մաշտոցում առկայ է ծնկների օծում՝ այսպիսի բանաձեւով. *«Կնիքս Քրիստոսի ուղղեսցէ զծունկսդ տկարացեալ, զի գնասցես սրբութեամբ ի տան Տեառն ըստ հաճոյից Աստուծոյ»*[8]: Իննօծումները կատարուում են հետեւեալ յաջորդականութեամբ[9].

Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", Pont. Institutum Orientalium Studiorum, Roma, 1978 եւ "Das Armenische Initiationsrituale", նոյն վայր, 1982: Վերջինս ծաւալուն աշխատութիւն է, ուր նաեւ ներկայացուած է մեր Մկրտութեան արարողութեան քննական բնագիրը ս. Ղազարի թիւ 457 հնագոյն ձեռագրի հիման վրայ:

6 Այստեղից հարց է առաջանում, թէ ո՞ր իւղն էր հեղւում ջրի մէջ յետագայ դարերում, երբ մեր ծէսում դեռեւս առկայ էր նախապատրաստական օծումը (մինչեւ Ը դար):

7 «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Երեւան, 1983, էջ 464, ՃԺԸ

8 Ս. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», Վենետիկ, 1972, հ. 4, էջ 386

9 Այս հերթականութիւնը միանշանակ չէ ձեռագրերում, բացի այս, որոշ ձեռագրերում զանց է առնուած այս կամ այն օծումը:

Ձեռ այսորիկ օծանէ սուրբ իւղովն նախ զճակատն՝ ասելով.

«Իւղ անոյշ, հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քո, կնիքն երկնաւոր պարգեւացն»:

Զաչսն.

«Կնիքս, որ յանուն Քրիստոսի, լուսաւորեսցէ զաչս քո, զի մի՛ երբէք նընջեսցես ի մահ»:

Եւ զականջսն.

«Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն»:

Զհոտոտելիսն.

«Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի հոտ անուշութեան ի կենաց ի կեանս»:

Զբերանն՝ ասելով.

«Կնիքս այս եղիցի քեզ ի պահպանութիւն եւ դուռն ամրութեան շրթանց քոց»:

Զափսն՝ կիցս ունելով.

«Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի պատճառս բարեգործութեան, առաքինի գործոց եւ վարուց»:

Զսիրտն.

«Կնիքս աստուածային սրբութեան սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ եւ զհոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում»:

Սրանից յետոյ սուրբ Իւղով նախ օծում է ճակատը՝ ասելով.

«Քրիստոսի անունով քեզ վրայ հեղուած անուշ Իւղը երկնաւոր պարգեւների կնիքն է»:

Ապա աչքերը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբէք չընջես մահով»:

Եւ ականջները.

«Այս սուրբ օծումը թող լինի քեզ լսելութիւն աստուածային պատուիրաններին»:

Հոտոտելիքը.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ անուշահոտութիւն կեանքից կեանք»:

Բերանը՝ ասելով.

«Այս կնիքը թող լինի քեզ պահպանութիւն եւ ամուր դուռ քո շուրթերին»:

Ձեռքերը՝ կից պահած.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ պատճառ բարեգործութեան, առաքինի գործերի եւ վարքի»:

Սիրտը.

«Աստուածային սրբութեան այս կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մէջ եւ ուղիղ հոգի նորոգի քո ներսում»:

© National Library of Armenia

Չքամակն.

«Կնիքս այս, որ յանուն Քրիստոսի, եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

Եւ զոտսն.

«Կնիքս աստուածային ուղղեսցէ զգնացս քո ի յաւիտենից»:

Մէջքը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ ամրութեան վահան, որով կարողանաս չարի բոլոր այրող նետերը հանգցնել»:

Եւ ոտքերը.

«Այս աստուածային կնիքը թող ուղղի քո ընթացքը դէպի յաւիտենական կեանք»:

Օծութեան Իւղի կամ Միւռոնի խորհրդաբանութիւնը նոյնքան բազմանշանակ է, որքան՝ ջրինը: Օծումը[10] վաղնջական ժամանակներից ծառայել է որպէս սրբագործման եւ նուիրագործման միջոց [տե՛ս Ծնունդ. ԻԸ 18, ԼԵ 14]. իւղերը յանուն Աստուծոյ հեղւում էին որոշակի իրերի վրայ եւ սրբութիւն ու նուիրականութիւն հաղորդում նրանց: Սուրբ Օծութեան Իւղը, որի արարչադիր բաղադրութիւնը յայտնուեց Մովսէսին [տե՛ս Ելք Լ 22/24], պէտք է գործածուէր միայն որոշակի պաշտամունքային առարկաների եւ ընտրեալ այրերի օծման համար. նրա գործածութիւնը խստօրէն սահմանափակուած էր *տաճարային, քահանայական* շրջանակներով, այն անմատչելի էր *սովորական* մարդկանց... Սուրբ Օծութեան Իւղով օծուած առարկաները սուրբ եւ նուիրական էին, որովհետեւ նրանց վրայ դրուած էին աներեւոյթ Աստուածութեան կնիքները, նրանց վրայ էր կենդանի Աստուծոյ սրբարար զօրութիւնը, իսկ օծեալները կամ քահանաները Տիրոջ սպասաւորներն ու ներկայացուցիչներն էին, նրանց շնորհուած էր բացառիկ աստուածային պատիւ, նրանք Աստուծոյ ներկայացուցիչներն էին երկրի վրայ:

Աստուածային օծման պատուի էին արժանանում նաեւ թագաւորները [տե՛ս Ա Թագ. Ժ 1, Ա Թագ. ԺԶ 13, Գ Թագ. Ա 39], սակայն՝ ոչ Սուրբ Օծութեան Իւղով[11]:

Հնուց ի վեր օծում էին նաեւ ննջեցեալների մարմինները՝

10 Օծումը նաեւ եղել է անուշահոտութեան եւ համեմունքի միջոց, ինչպէս նաեւ ծառայել է բժշկական եւ այլ նպատակների համար, որը դուրս է մեր քննութեան շրջանակներից:

11 Թագաւորական օծման իւղի մասին որեւէ տեղեկութիւն չկայ Սուրբ Գրքում. հաւանաբար գործածուել է ինչ-որ թանկարժէք իւղ:

նրանց ապականութիւնից զերծ պահելու համար: Բեթանիայում, Սիմոն բորոտի տանը, օծուեց նաեւ Տիրոջ Մարմինը (մինչեւ մահը), որն, ըստ տէրունական վկայութեան, խորհրդանշում էր Իր թաղումը [տե՛ս Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3, Յովհ. ԺԲ 3]: Ուրեմն, օծումը նաեւ վախճանաբանական իմաստ է կրում, օծումով մարդկային մարմինը ներծծւում է աստուածային անապականելիութեամբ եւ կատարելապէս պիտի նորոգուի մեռելների յարութեան ժամանակ: Յիշատակութիւններ կան սրբոց վարքերից, որոնք վկայում են, որ Աստուած որոշ սուրբերի բացառիկ պատուի էր արժանացնում՝ նրանց մարմնին անապականելիութեան յատկութիւններ շնորհելով, ոմանց մարմնից նոյնիսկ միւռոն է արտաբխել նրանց մահից յետոյ[12], եւ այդպիսով Աստուած զարմանալի կերպով փառաւորել է նրանց մինչեւ Երկրորդ Գալուստ:

Այսպիսով, հինկտակարանեան օծումները կարելի է դասակարգել հետեւեալ կերպ.

ա. սրբագործական,
բ. քահանայական,
գ. թագաւորական,
դ. վախճանաբանական:

Հին Կտակարանում որեւէ նիւթական կամ զգայական նշանակ անկատար էր, քանզի այն կատարւում էր Նրա անունով, որ պիտի գար եւ Իր անընդմիջելի մերձաւորութեամբ վերնիւթացնէր նիւթը, զգայականի հետ Իր գոյաբանական միաւորմամբ աստուածացնէր եւ փրկութեան առիթ դարձնէր այն... Օծութեան Իւղի աստուածաբանական իմաստը խորապէս արտայայտուած է «Երգ Երգոցում», որ հինկտակարանեան բարձրագոյն մարգարէութիւնն է Քրիստոսի մասին: Հարսը Փեսային ասում է. **«Քո անունը հեղուած անուշ իւղ է...»** [Երգ Ա 2]: Ըստ Եկեղեցու հայրերի՝ ***հեղուած անուշ իւղը***

12 Օրինակ՝ այդպէս է փառաւորուել ս. Նիկողայոսի մարմինը. «Իսկ զպատուական մարմինն նորա՝ զզարդարեալն ամենայն առաքինութեամբ, տարեալ ամփոփեցին պատուով յեկեղեցին, յորում պահու յանկարծակի բուրեաց անուշահոտութիւն բազում, եւ բխէին այնուհետեւ զօրութիւնք ի տապանէ սքանչելագործ հայրապետին՝ ի բժշկութիւն հիւանդաց եւ ամենայն ախտացելոց, որպէս եւ աւիշկ անսպակաս ի սուրբ մարմնոյ նորա՝ որպէս միւռոն կամ իւղ անոյշ...» («Վարք սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին Զմիւռնոյ, այսինքն՝ Միւռայ», «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», Վենետիկ, 1810, էջ 913): Տե՛ս նաեւ «Պատմութիւն վասն Պաւղոսի Լուսորացւոյ» («Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին», հատոր Ա, Վենետիկ, 1855, էջ 323-324):

© National Library of Armenia

Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իղձը հեղուում է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւորում նրա հետ, օծում եւ աստուածացնում այն: Նախալաւիտեան Բանը հեղուում է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից (Նիւսացի-Տաթեւացի)[13]: Ուրեմն, Մարմնացեալ Բանի անունով էին օծւում մինչեւ Քրիստոս, այդ օծումը կատարեալ չէր, այն ստուերակերպ էր, որովհետեւ դեռ չէր եկել Օծեալը, Որով պիտի ամբողջանային բոլոր հինկտակարանեան կերպերը, եւ Իւղի հեղումը կատարեալ իմաստ եւ աստուածային խորհուրդ պիտի ստանար:

Քրիստոնէական ս. Միւռոնն ամբողջացումն է բոլոր ստուերակերպ օծութեան իւղերի: Միւռոնի աստուածաբանութիւնը ներուած ընդգրկմամբ բացայայտուած է սրբալոյս Միւռոնի օրհնութեան կանոնի աղօթքներում: Աստուծոյ Ամենասուրբ Հոգու զօրութեամբ այն դառնում է *իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, շնորհք հոգեւորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէնն հաւատոյ, ճահճատակ յաղթող՝ ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին, ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական*[14]: Եպիսկոպոսապետը մաղթում է, որ այս *վերստին ծննդեան իղով* օծուածները *երկիւղած լինեն Աստծուց եւ աներկիւղ՝ հակառակորդից եւ Դատաստանի Օրը երկնքի աստղերի պէս փայլեն սուրբերի պայծառութեամբ*[15]: **Ճշմարիտ Օծեալով** Սուրբ Երրորդութիւնը միաւորում է այս անուշ իղի հետ եւ դարձնում այն **Իւղ զուարթ ամբիծ դաւանմամբ**[16] շնորհելով մեզ *ճառագայթ հոգւոց, լուսաւորութիւն մտաց, տեառնագրութիւն երեսաց, պահապան շրթանց, զօրութիւն անձանց, ախոյեան ընդդէմ դիւաց, փարատիչ ցաւոց, պահպանումն կուսից, աճեցումն տղայոց, պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրեալոց եւ պսակ թագաւորաց*[17]:

Բանի մարդեղութեամբ արարածն ի զօրու է դառնում կրել Աստծուն, որն իրականացաւ Հոգեգալստին՝ Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ: Քրիստոսի փրկագործութեամբ մենք ստանում

13 Տե՛ս «Երգ Երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց», «Գանձասար», Երեւան, 1993, էջ 23-24:

14 Տե՛ս «Կանոն օրհնութեան սրբալոյս Մեռոնին», Վաղարշապատ, 1876, էջ 16-17:

15 Տե՛ս նոյն, էջ 17:

16 Տե՛ս նոյն, էջ 28:

17 Տե՛ս նոյն, էջ 30:

ենք Սուրբ Հոգին՝ էապէս հաստատուելով Աստուծոյ թագաւորութեան կատարեալ իրականութեան մէջ. ահա ա՛յս փրկաւէտ հանգուցման վրայ է հիմնուած Մկրտութեան օծումը. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս եւ օծ զմեզ, Աստուած է, որ կնքեացն զմեզ եւ ետ զաւհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր» [Բ Կորնթ. Ա 21-22]:

Քրիստոսի անունով մենք ստանում ենք նոր կեանքի սուրբ եւ աստուածային կնիքներ, այսինքն՝ հաստատւում ենք նոր կեանքով եւ ստանում կատարելապէս նոր գոյավիճակ, որն օտար եւ անհասանելի է այս աշխարհի համար: Մխիթարիչը՝ Աստուծոյ Սուրբ Հոգին, եկել է Քրիստոս-Օծեալի անունով եւ օծել մեզ անախտութեան, սրբութեան, յաւիտենական կեանքի կնիքներով: Մենք դարձել ենք Աստուծոյ որդիներ եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ:

Հոգեգալուստն Աստուծոյ արարչութեան եզրափակիչ վերջնակէտն է. Բանի մարդեղութեամբ արարածը կարողութիւն է ստացել կրելու Սուրբ Հոգին... Սուրբ Հոգին Իր տնօրինական գալստեամբ հիմնում է Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութիւնը երկրի վրայ, եւ արարածը կարողութիւն է ստանում գոյաբանօրէն հաղորդակցելու Աստուծոյ անճառելի խորհուրդներին: Հետեւաբար, Օծումը Մկրտութեան ամբողջացումն է, ինչպէս Հաղորդութիւնը՝ Օծման. այսպիսին է Մկրտութեան արարողութեան ամբողջական եւ անբաժանելի շղթան՝ իր աւետարանական անդրադարձումով եւ արտապատկերումով...

Այսպիսով, Դրոշմը Սուրբ Հոգու ստացման սրբազան նշանակն է. «Իսկ Միւռոնին կատարողականն աւծումն անուշահոտ առնէ զկատարեալն, քանզի սրբազանն կատարումն աստուածայնոյն ծննդեան միաւորէ զկատարեալն Աստուածպետականին Հոգւոյ»[18]: Ուր Սուրբ Հոգին է, այնտեղ աստուածային իրականութեան ամբողջութիւնն է, Նա գալիս է Քրիստոսի անունով եւ լցնում արարչութիւնն Իր սրբարար ներկայութեամբ: Դրոշմը Սուրբ Հոգու խորհուրդն է, եւ երբ ասում է, որ Դրոշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգու շնորհները, նկատի չպէտք է ունենալ շնորհների որեւէ մասնակիութիւն, այլ՝ յատկապէս աստուածային շնորհների ամբող-

18 ս. Դիոնեսիոս Արեոպագացի, "The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, «Ճաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69

© National Library of Armenia

ջութիւնը[19], որն արարածը ստանում է Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ եւ Աստուծոյ արարչութեան կատարեալ եզրափակմամբ...

Արարածը կնքւում է Քրիստոսի կնիքներով, մենք մտնում ենք Քրիստոսի ժառանգութեան մէջ, մարդկային բնութիւնը Քրիստոսի անունով ստանում է աստուածային կնիքներ եւ պայծառակերպւում ու աստուածանում... Մենք մուտք ենք գործում Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութեան մէջ, որը երկինք է երկրի վրայ, իր էութեամբ դուրս է այս աշխարհից:

Ըստ ս. Գրիգոր Նարեկացու՝ սուրբ Աւազանի լուացմամբ ստացած սրբութիւնն ամբողջանում է Հոգի օծումով, որով մենք ստանում ենք Սուրբ Հոգու զօրութիւնը. «Զի որպէս յիջումն լուսարանի սուրբ Աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամբ առնուլ սրբութիւն, սոյնպէս ի յաւծումն Հոգոյն պարարեալ յուսով՝ զՀոգւոյն զաւրութիւն սովիմբ եւ ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի»[20]: Այս փրկութեան լոյսով լի Հոգը, հեղուելով արտաքին մարդու վրայ, ծածկապէս կենդանածնում է ներքին մարդուն. «...սոյնպէս Հոգս այս՝ փրկութեան լուսով կատարեալ, հեղեալ ի մեզ, աւծանէ զարտաքին խորանս, իսկ զներքին մարդս, աներեւակ ծածկապէս մտեալ, նոր կենդանածնէ»[21], քանզի նրանում բնակւում է Տէր Յիսուս Քրիստոսի *կենդանական զօրութիւնը*[22]: Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու տնօրինական յայտնութիւնը մեր շնորհական օծութեան նախահիմքն է. այն, ինչ կայացաւ Տիրոջ հետ յայտնաբար, մեզ հետ կայանում է խորհուրդով, որն ուղեկցում է սրբազնագործուած զգայական նշանակի կիրառմամբ. «...զմերս՝ կաթուածով ինչ շնորհազարդեալ, եւ զՀոգդ՝ իսկութեամբ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ»[23]: Քրիստոսի անունով կնքուելով՝ մենք դառնում ենք **քրիստոնեաններ** կամ **քրիստոնեաներ**, այսինքն՝ **օծուածներ**, ընծայւում Սուրբ Հոգուն եւ

19 Այդ ամբողջութիւնն անուանուել է **շնորհք Հոգւոյն Սրբոյ**, ինչպէս գրում է ս. Գրիգոր Տաթեւացին. «...Հոգովն ի շնորհք Հոգւոյն Սրբոյ միաւորիմք»: Տե՛ս «Գիրք հարցմանց երիցս երանելոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 593:

20 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Երեւան, 1985, Բան ՂԳ, տ. 50-53

21 Նոյն, տ. 57-59

22 Տե՛ս Նոյն, տ. 295-296:

23 Նոյն, տ. 140-143

որդեգրում երկնաւոր Հօրը[24]: Դրոշմով նաեւ մենք նախապատրաստւում ենք յաւիտենական կեանքի. մեզ վրայ հեղուած սուրբ Հոգը լուսաւորութեան աղբիւր է լինելու հանդերձեալում. «Քանզի զոր աւրինակ պատրոյգ, թացեալ ի ճարպում, ոչ երեւեցուցանէ ինչ նշոյլ, մինչեւ հնուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս եւ այս աւծութեան լուսոյ, առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն ջահաւորի»[25]:

Դրոշմի արարողութեան զանազան աւանդութիւնները, որոնք գոյութիւն են ունեցել հին Եկեղեցում, իրենց պատմական օրինաչափ փոփոխութիւններով առկայ են Արեւելեան Եկեղեցիների ծէսում[26]: Թերեւս ոչ մի արարողութեան շուրջ այնքան վէճեր չեն եղել, որքան՝ Դրոշմի: Արդեօ՞ք ջուրն ինքնաբաւարար չէ՝ Սուրբ Հոգին ստանալու համար. ո՞րն է Սուրբ Հոգու ստացման նշանակը՝ Դրո՞շմը, թէ՞ ձեռնադրութիւնը[27]. անհրաժե՞շտ է արդեօք, որ Մկրտութիւնը եւ Դրոշմը միասնաբար կատարուեն... Ահա՛ հարցադրումներից մի քանիսը, որոնք առաջ էին քաշւում հիմնականում բողոքական աստուածաբանութեան կողմից: Այս տեսական ճնշումը պատճառ է հանդիսացել անցանկալի ծիսական փոփոխութիւնների Արեւմուտքում: Կաթոլիկ Եկեղեցում տեղի է ունեցել ծիսական խզում՝ Մկրտութեան եւ Դրոշմի[28] արարողութիւնները բաժանուել են միմեանցից, իսկ բողոքականներն ուղղակի մերժում են Դրոշմի խորհուրդը: Սակայն Արեւելեան Եկեղեցիները, հարազատ մնալով

24 Տե՛ս Նոյն, տ. 278-279:

25 Նոյն, տ. 400-403

26 Տե՛ս "Documents of the Baptismal...". բիւզանդական ծէսի մասին՝ էջ 69-82, ղպտական ծէսի մասին՝ էջ 91-98:

27 Այս կապակցութեամբ շահեկան անդրադարձ ունի Օրմանեանը. «Առաջին խնդիրը այն կրնայ լինիլ, թէ ո՞րն է այս խորհուրդին էական նիւթը՝ ձեռաց դրութի՞ւնը, թէ՞ իւղով օծումը: Չորս կարծիքներ կան այդ մասին. առաջինը այն է, որ ձեռք դնելը կը համարի էական. երկրորդը իւղով օծութիւնը կը համարի էական. երրորդը բաւական կը համարի երկուքն ալ՝ անխտիր եւ առանձնակի առնելով. իսկ չորրորդը էական կը համարէ երկուքն ալ՝ միասին առնուած՝ իբրեւ իրարու ամբողջացուցիչ խորհուրդին լրումի համար: ...մեր կարծիքը այն է, թէ օծումին մէջ է խորհուրդին իսկութիւնը: Իսկ եթէ ըսել ուզուի, թէ կարելի չէ կորսուած եւ խափանուած համարել ձեռաց դրութիւնը, որ սկիզբէն էական էր, այդպիսիները ձեռաց դրութիւնը կրնան տեսնել նոյն իսկ օծումին մէջ՝ իբրեւ երկու նիւթերը խառնուած ըսելով մի միակ օծողական եւ հպողական գործողութեան մէջ» (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Ճաղագս Դրոշմի», «Տեղիք աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1985, էջ 249):

28 Այս խորհուրդը կաթոլիկ Եկեղեցում անուանւում է Հաստատութեան խորհուրդ:

© National Library of Armenia

դարերով ձեւաւորուած ծիսական աւանդութեանը, շեշտադրում են այս երկու խորհուրդների անհրաժեշտութիւնը փրկութեան համար եւ նրանց ծիսական անբաժանելիութիւնն ու փոխադարձ ներթափանցուածութիւնը:

Ինչ վերաբերում է կնիքների թուին եւ յաջորդականութեանը, ապա այստեղ նոյնպէս կան զանազան մարբերակներ. ամէն Եկեղեցի ունի իր յատուկ աւանդութիւնը: Հայկական աւանդութիւնը ձեւաւորուել է երախայութեան օծման եւ բուն Դրոշմի միաւորումով մէկ միասնական արարողութեան մէջ: Երախայութեան օծման հետքերի հարցը մեր Դրոշմի արարողութեան մէջ առանձին ուսումնասիրութեան կարիք է զգում. Տաթեւացու հետեւեալ արտայայտութիւնը շատ առածգական է. «Եւ գիտելի է, զի որ ի ճակատն եւ ի սիրտն եւ ի թիկնամէջն օծանէ, այն Դրոշմ է. եւ որ զհինգ զգայութիւնսն օծանէ, այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: Եւ որ զայլ մասունս օծանէ, յայնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զՄկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից»[29]: *Զայլ մասունս* ասուածը փաստօրէն ձեռքերի եւ ոտքերի մասին է, մինչ նրանց օծումը մեծ մասամբ կցուած է եղել զգայարանների օծմանը: Սրտի եւ մէջքի օծումներ կան նաեւ երախայութեան օծումի արարողութիւններում[30], ուստի այնքան էլ ճիշտ չէ դրանք վերագրել միայն Դրոշմին: Զգայարանների օծումը որոշ աւանդութիւններում երախայութեան օծման մաս է կազմում, սակայն նաեւ անբաժանելի մասն է Դրոշմի արարողութեան եւ լծորդուած է ճակատի օծմանը: Այս օծումների աստուածաբանական իմաստները հակիրճ բացայայտուած են իրենց բանաձեւերում: Այս մասին ուշագրաւ բացատրութիւններ ունի Տաթեւացին, որոնք հիմնականում ճակատի գլխաւոր օծման մասին են. «Եւ նախ՝ ի ճակատն. այն է խորհուրդն, զի ճակատն է տեղի, ուր հաւասարակ զգայութիւնն ժողովի. ի յԵկեղեցիս ճակատ եւ տեսողք են մարգարէքն եւ առաքեալքն: Նախ նոքա ընկալան զՀոգին Սուրբ, եւ ապա՝ այլ հաւատացեալք, որք անդամ են Քրիստոսի: Վասն որոյ նախ զճակատն դրոշմեմք եւ ապա՝ զհաւասարակ անդամսն: Դարձեալ՝ Քրիստոս Քահանայ էր եւ Թագաւոր. զկնիք քահանայութեան շնորհին ընդունիմք Մկրտութեամբն եւ զկնիք թագաւորութեանն՝ դրոշմելով ի ճակատն: Դարձեալ՝ Մկրտութեամբն ծնանիմք ի յԵկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ եւ

29 «Գիրք հարցմանց...», էջ 593

30 Այս մասին տե՛ս "Documents of the Baptismal...". բիւզանդական ծէս՝ էջ 81, դպտական ծէս՝ էջ 92, 95:

դրոշմելովն լինիմք զինուոր Քրիստոսի՝ ընդդէմ թշնամւոյն սատանայի: Եւ նախ զճակատն դրոշմեմք, զի առանց երկիւղի զինեսցին, եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեսցուք: Դարձեալ՝ ճակատն ցուցանէ, թէ առանց ամօթոյ յայտնի եւ համարձակ պարտ է, որ ցուցանեն զդաւանութիւն հաւատոյն առաջի մարդկան եւ ոչ ծածկել եւ թաքուցանել. «Չի սրտիւ հաւատալն արդարութիւն է, այլ բերանով խոստովանիլն փրկութիւն է հոգւոյ» [տե՛ս Հռոմ. ժ 10]: Եւ ապա յետ այնորիկ զբոլոր մարմինն օծանելն նշանակէ զբոլոր առաքինութիւնն ծածուկ ունիլ»[31]: «Օծանելն զգագաթն ցուցանէ, զի շնորհք Հոգւոյն տուեալ լինի ի հոգի եւ ի միտսն խոկալ զԱստուած»[32]:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Եւ յետ այսորիկ ասացէ.
«Խաղաղութի՛ւն ընդ քեզ, փրկեա՛լդ Աստուծոյ»:
Եւ մկրտեալն ասէ.
«Ընդ հոգւոյդ քումն»:

Եւ սրանից յետոյ թող ասի.
«Խաղաղութի՛ւն քեզ, փրկուա՛ծդ Աստուծոյ»:
Եւ մկրտուածն ասում է.
«[Եւ] քո հոգուն»:

Դրոշմին անմիջապէս յաջորդում է **Խաղաղութեան ողջոյնը,** որը եկեղեցական պաշտամունքի բարձրագոյն արտայայտութիւններից մէկն է: Ի՞նչն է պատճառը, որ Եկեղեցին այսպիսի մեծ ուշադրութիւն է ցուցաբերում այս խորհրդական գործողութեան կատարմանը, եւ նրանով ուղղակի ներծծուած են Եկեղեցու բոլոր ծէսերը... *Խաղաղութիւնը,* լինելով Ամենասուրբ Երրորդութեան Անձերի փոխյարաբերութեան եւ Աստուծոյ բնութեան էական յատկանիշը[33], ունէր իր արարչական արտապատկերը: Այս արարչադիր շնորհը խախտուեց չարի *խռովութեամբ* նախ իմանալի աշխարհում,

31 «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն» (Ամառան), Կ. Պոլիս, 1741, էջ 151

32 «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն» (Ձմեռան), Կ. Պոլիս, 1740, էջ 61

33 Այս խաղաղութիւնը ս. Ներսէս Շնորհալին անուանում է *ծայրագոյն խաղաղութիւն.* «Առաջին ծայրագոյն խաղաղութիւն է բնաւորեալ առ Սուրբ Երրորդութիւնն՝ յաղագս Երից Անձնաւորութեանցն՝ մի կամք ունելով եւ իշխանութիւն, ուր ո՛չ խռովութիւն եւ ո՛չ պատերազմ, այլ՝ միշտ խաղաղութիւն» («Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ», Կ. Պոլիս, 1825, էջ 97):

© National Library of Armenia

ապա ներմուծուեց զգալի աշխարհ՝ մարդու կամքով... Մարդկային բնութիւնը կորցրեց աստուածապարգեւ խաղաղութիւնը՝ լցուելով խռովութեամբ, անհանգստութեամբ, շփոթով... Քրիստոսով խաղաղութիւն է հաստատւում երկնքի եւ երկրի միջեւ, մարդը ոչ միայն վերստանում է կորցրած խաղաղութիւնը, այլեւ՝ գոյաբանօրէն ներածւում աստուածային խաղաղութեան մէջ՝ մի բան, որը դեռեւս անհասանելի էր առաջին արարչութեան համար: Այս աշխարհը չունի Քրիստոսի խաղաղութիւնը, այն օտար է այս աշխարհի համար. այն Բանի մարդեղութեամբ էացած նոր արարչութեան ներքին անբաժանելի օրինաչափութիւնն է. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տայ, տամ Ես ձեզ...» [Ցովհ. ԺԴ 27]: Այդ խաղաղութիւնը վեր է ամէն տեսակ մարդկային մտքից եւ իմացումից [տե՛ս Փիլիպ. Դ 7]:

Իւրաքանչիւր աստուածային յատկանիշ, անհասանելի լինելով մարդկային բնութեան համար, մարդու համար հնարաւոր է դառնում շնորհով. Քրիստոսի խաղաղութիւնը բարձրագոյն շնորհ է, որին անմիջականօրէն հաղորդակցւում ենք Սուրբ Հոգու տնօրինական ներկայութեամբ: Սուրբ Հոգով լի է Քրիստոսի Եկեղեցին, որը Քրիստոսի խաղաղութեան թագաւորութիւնն է այս աշխարհում: Այդ թագաւորութիւնը ծածուկ է այս աշխարհի համար, այդ խաղաղութիւնը խորթ է աշխարհիկ ցանկութիւնների կապանքներով ստրկացած հոգիների համար... Սակայն այդ խաղաղութիւնն ամէն օր բաշխւում է Եկեղեցում՝ երկնային սիրոյ բաղձանքով եւ յաւիտենական բարիքների փափագով համակելով մեր հոգիները: Նրանով հաստատուած՝ մենք ի զօրու ենք յաղթահարել ամէն տեսակ սատանայական խռովութիւն ու փորձութիւն եւ հասնել Տիրոջ խաղաղութեան Նաւահանգիստը: Կատարեալ խաղաղութիւնը լինելու է Քրիստոսի Երկրորդ Գալուստով, երբ Աւետ Դատաստանին խաղաղութեան որդիները պիտի զատուեն խռովութեան որդիներից եւ ժառանգեն Աստուծոյ յաւիտենական արքայութիւնը: Ահա թէ ինչու Եկեղեցում **Խաղաղութեան ողջոյնն** ամենակիրառական ծիսական տարրերից է. այդ ողջոյնով մեր սրտերը հաստատւում են Քրիստոսի խաղաղութեամբ [տե՛ս Կող. Գ 15], մենք կարող ենք անվրդով եւ աներկիւղ մարտնչել սատանայական փորձութիւնների դէմ, մենք դառնում ենք աստուածային խաղաղութեան կրիչներ եւ բաշխողներ՝ Աստուծոյ խաղաղարար որդիներ՝ այս կեանքում վայելելով Աստուծոյ արքայութեան ամբողջութիւնը մեր ներսում եւ դառնալով նրա վկան այս աշխարհում:

Առաքելական թղթերում Աստուած յաճախ անուանւում է **խաղաղութեան Աստուած** [տե՛ս Հռոմ. ԺԵ 33, Ա Կորնթ. ԺԴ 33, Բ Կորնթ. ԺԳ 11, Փիլիպ. Դ 9]: Այս առումով խաղաղութիւնը ոչ թէ սոսկ մասնաւոր մի շնորհ է, այլ աստուածային գոյութեան ամենաբնորոշիչ եզրն է: **Խաղաղութիւնն աստուածային խորհուրդ** է, այն մարդկութեանն է պարգեււում Բանի մարդեղութեամբ եւ անմիջական արգասիքն է Սուրբ Հոգու տնօրինական գործունէութեան [տե՛ս Հռոմ. Ը 6, Գաղատ. Ե 22]:

ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒՄ

Ապա զգեցուցանէ եւ ասէ զաղօթս զայս.

«Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ զգեցուցանես ծառայի Քում հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան եւ եդիր սաղաւարտ փրկութեան եւ պսակ շնորհաց ի գլուխ սորա, զէն անվթար ընդդէմ հակառակորդին: Վասն որոյ եւ մեք գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ապա զգեստաւորում է եւ ասում է աղօթքը.

«Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ Քո ծառային հագցնում ես փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան եւ դրեցիր սրա գլխին փրկութեան սաղաւարտ եւ շնորհների պսակ՝ [որպէս] անվթար զէնք ընդդէմ հակառակորդի: Որի համար գոհանալով փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Հնագոյն մաշտոցների զգեստաւորման արարողութիւնն ամբողջանում է քահանային ուղղուած պարզ ցուցումով եւ աղօթքով: Այս համառօտ ցուցումը յետագայ դարերի ձեռագրերում հետզհետէ բեռնաւորւում է. *զգեցուցանէ* պարզ բառին աւելանում են՝ *եւ թագ կապէ* կամ *պսակէ* կամ *զգեցուցանէ սպիտակ հանդերձ* եւ այլն: Որոշ մաշտոցներում առկայ են չընդհանրացած աւելի ճոխ տարբերակներ: Զգեստաւորման արարողութիւնն իր ճոխացման գագաթնակէտին է հասնում Գէորգ Երզնկացու խմբագրութեան ձեռագրերում, ուր զգեստաւորումը թատերական տեսք է ստանում՝ զգես-

© National Library of Armenia

տի իւրաքանչիւր կտորի վրայ յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Զգեստաւորման աղօթքը, բացառութեամբ մի քանի չընդհանրացած ձեռագրերի, գրեթէ ընդհանրապէս պահպանուած է բոլոր մաշտոցներում:

Զգեստաւորման արարողութիւնը Մկրտութեան ծէսի կարեւոր հանգոյցներից է. արարածը վերստացել է իր արարչակերտ գեղեցկութիւնը, որ կորցրել էր մեղքի անկումով. «Իսկ յետ օծանելոյն զգեցուցանեն հանդերձս պայծառս, որ զլուսաւոր վարս եւ զպայծառ հաւատս եւ զանմեղութիւնն նշանակէ»[34], ինչպէս նաեւ՝ «զսուրբ եւ զնոր կեանս»[35]: Սպիտակ[36] զգեստը խորհրդանշում է այն հոգեւոր իրողութիւնը, որ տեղի է ունեցել Մկրտութեամբ. նիւթական նշանակը յայտածում է արարչութեան փրկութեան, աստուածացման վերնիւթական խորհուրդը: Բանի մարդեղութեամբ մարդկային բնութիւնը հագնում է *փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան*: Այդ զգեստը խորհրդանշում է Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ պարգեւուած արարածի յարութիւնը եւ անապականութիւնը՝ ներածելով մեզ Քրիստոսի Երկրորդ Գալստեան խորհուրդի մէջ, երբ մարմինները պիտի յարութիւն առնեն եւ նոր անապականացու գոյավիճակ ստանան: Այս իմաստով սպիտակ հանդերձը վախճանաբանական խորհուրդ է կրում. արդարներն այդպիսի զգեստով պիտի սպասեն Տիրոջը եւ մտնեն Նրա յաւիտենական ժառանգութեան մէջ:

Ըստ ս. Դիոնեսիոս Արեոպագացու՝ Զգեստաւորումը կատարւում է մինչեւ Դրոշմը՝ Մկրտութիւնից անմիջապէս յետոյ. «Եւ զնոյն հետայն լուսատեսակս հանդերձս արկանեն ի վերայ նուիրելոյն: Զանգի այրականիւ եւ աստուածատեսակաւ անախտութեամբ ի հակառակիցն եւ որով առ մի յարաձգութիւնն եւ հետեւումնն, անզարդ զարդարի եւ անտեսակն տեսականայ՝ բոլորովիմբ լուսատեսակ կենաւք պայծառացեալ»[37]: Այս հերթոյթը պահպանուած է բիւզանդական ծէսում:

34 Ամառաւ, էջ 148

35 Տե՛ս Ջմեռաւ, էջ 61:

36 Սպիտակ գոյնի խորհրդաբանութեան մասին տե՛ս «Երգ Երգոց հանդերձ...», էջ 37-38, 92-93, 127:

37 ս. Դիոնեսիոս Արեոպագացի, "The Armenian...", «Ծաղկաց ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69

ՍԵՂԱՆԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ձեռ այսորիկ հանէ ի բեմն եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ Սեղանոյն եւ երիցս անգամ համբուրիւ յերեսին կողմանն. եւ ասէ զաղօթս.

«Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Քեզ խոնարհեցուցանեն հաւատացեալք զգլուխս իւրեանց: Զգեա՛ զաներեւոյթ աչ Քո եւ օրհնեա՛ զսա: Զգործս ձեռաց սոցա յաջողեա՛: Որք ի կուսութեան են, ամրացո՛. եւ զամենեսեան զօրացո՛ ժուժկալութեամբ յամենայն աստուածպաշտութիւն: Պահեա՛ խաղաղութեամբ զտղայս զայս, սնո՛ եւ ա՛ծ ի չափ հասակի. պարապեցո՛ զամենեսեան յիւրաքանչիւր յարկս՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, ընդ Որում Քեզ Հօր փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ հաղորդեցուցանէ սուրբ Խորհրդոյն:

Սրանից յետոյ բարձրացնում է բեմ եւ երկրպագեցնում սուրբ Սեղանի առջեւ. եւ երեք անգամ համբոյրով՝ երեք կողմերը: Եւ ասում է այս աղօթքը

«Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Քեզ են խոնարհեցնում հաւատացեալներն իրենց գլուխները: Մենկի՛ր Քո աներեւոյթ աջը եւ օրհնի՛ր սրան: Սրա ձեռքի գործերն առաջնորդի՛ր: Ովքեր կուսութեան մէջ են, ամրացրո՛ւ եւ բոլորին զօրացրո՛ւ ժուժկալութեամբ աստուածպաշտութեան բոլոր [գործերում]: Խաղաղութե՛մբ պահիր այս մանուկին, սնի՛ր եւ հասցրո՛ւ չափահաս տարիքի, բոլորին պարսպի՛ր իւրաքանչիւր յարկի տակ՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որի հետ Քե՛զ, Հա՛յր, փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ հաղորդեցնում է սուրբ Խորհուրդին:

Մկրտութեան արարողութիւնը բաղկացած է երեք հիմնական փուլերից. **Ջրի Մկրտութիւն, Դրոշմ եւ Հաղորդութիւն:** Այս երեք խորհուրդների ծիսական միասնութիւնը վերստին ակնարկում է

© National Library of Armenia

Մկրտութեամբ զատկական իմաստն ու ծագումը[38] եռաստիճան կարգաւորումով ներկայացնելով մեր փրկութեան տնօրինական ընթացքը՝ **Քրիստոս - Սուրբ Հոգի - Եկեղեցի:** Քրիստոսով արարածն ի գօրու է դարձել կրելու Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին, գալով Քրիստոսի անունով, լցնում է արարչութիւնն աստուածային ներկայութեամբ եւ առաջնորդում դէպի Քրիստոսի հիմնած Եկեղեցու նոր եւ կատարեալ իրականութիւնը: Տիրոջ Արեամբ փրկագնուած նորընծան լի է Սուրբ Հոգով. քահանան նրան բարձրացնում է խորան, այսինքն՝ հոգեւոր երկինք, սրբութիւն սրբոց՝ երկրպագելու Աստծուն՝ այդպիսով նախապատրաստելով ս. Հաղորդութեան: Հաղորդութիւնը եկեղեցական աստուածպաշտութեան կիզակէտն է. հաղորդուելով Քրիստոսի փրկագործ Մարմնին եւ Արեանը՝ մարդը դառնում է Քրիստոսի խորհրդական Մարմնի՝ Եկեղեցու անդամ: Եւ ինչպէս փոքրիկ թթխմորն է խմորում ողջ զանգուածը, այնպէս էլ Տիրոջ Մարմինը եւ Արիւնը, ընդխառնուելով մարդկային բնութեան հետ, աստուածացնում է այն:

Այսպիսով՝ ա) Ջրի Մկրտութեամբ մենք խորհրդաբար մուտք ենք գործում Քրիստոսի մահուան մէջ, այսինքն՝ մենք մեռնում եւ յարութիւն ենք առնում Քրիստոսի հետ, դառնում նոր արարած եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ. բ) փրկագնուելով Քրիստոսի զոհաբերութեամբ՝ մենք պատրաստ ենք կրել Աստծուն. Դրոշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգին. գ) Սուրբ Հոգու տնօրինական ներհաստատմամբ մենք առաջնորդւում ենք դէպի Սուրբ Եկեղեցի՝ գոյաբանօրէն դառնալու Քրիստոսի խորհրդական Մարմնի անդամներ. ս. Հաղորդութիւնը լրումն է իրաքանչիւր խորհուրդի, այն խորհուրդների խորհուրդն է, որովհետեւ նրանով է տեղի ունենում կատարեալ եկեղեցացումը եւ աստուածացումը, որն արարածի փրկագործման վերջնական նպատակն է: Այս է պատճառը, որ Հին Եկեղեցում իրաքանչիւր խորհրդակատարութիւն ծիսապէս լծորդուած է եղել Հաղորդութեան հետ: Ցետագայ դարերում եկեղեցական կարգերի հետզհետէ ածանցման հետեւանքով տեղի են ունեցել ծիսական խզումներ. Հաղորդութիւնը, որը իրաքանչիւր խորհուրդի անհրաժեշտ եզրափակումն է, դուրս է մղուել խորհրդակատարութեան կառոյցից: Այսօր այդպէս է, օրինակ, Պասկի Խորհուրդի դէպքում:

Մենք պէտք է նկատի ունենանք, որ Տիրոջ Մարմնի եւ Արեան Հաղորդութիւնը Եկեղեցու սիրտն է, այն պէտք ունենայ բնական

[38] Տե՛ս սոյն յօդուածի սկիզբը նախորդ հատորում, էջ 64-65:

ներթափանցուածութիւնը իրաքանչիւր խորհուրդի մէջ, քանզի Մարմնաւորուած Բանի զոհաբերութեան կենտրոնական գործողութիւնն է եւ ոչ միայն ծիսական, այլեւ առհասարակ եկեղեցական կեանքի շնորհական եւ խորհրդական աղբիւրն է: Մուտք դէպի Եկեղեցի, մուտք դէպի Քրիստոսի թագաւորութիւն՝ նշանակում է մուտք դէպի հաղորդական կեանք, մուտք դէպի շարունակական աստուածացման վերընթաց: Հաղորդութեամբ մենք միաւորւում ենք մի մարմնի մէջ, մի ենք դառնում ի Քրիստոս Յիսուս: Հետեւաբար, հէնց Տիրոջ Մարմնի եւ Արեան բաշխման միջոցով է կայանում Եկեղեցու հաւաքական միութիւնը եւ եկեղեցացումը, եւ իրաքանչիւր ծիսակարգ, որպէս Եկեղեցու սրբազան գործողութիւն իր փրկաբանական նշանակութեամբ, անհրաժեշտաբար պէտք է ունենայ հաղորդական ուղղորդուածութիւն:

ԱՐՋԱԿՈՒՄ

Եւ յարկեն մինչեւ ի դուռն եկեղեցւոյն՝ սաղմոսելով.

«Երանի՛՝ որում թողութիւն եղեւ մեղաց» [Սաղմ. ԼԱ 1]:

Քարոզէ սարկաւագն.

«Վասն ի վերուստ օգնականութեան եւ փրկութեան եւ հաստատութեան նորակնքիս մերոյ զՏէր աղաչեսցուք»:

Գ «Տէ՛ր, ողորմեա՛»:

Եւ ասէ գաղտ զայս.

«Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաւիտենական, որ աճեցուցանես եւ լցուցանես սուրբ զԵկեղեցի Քո լուսով հաւատոյ անհամար փրկելոց՝ ի ձեռն ճշմարիտ աստուածածանօթութեան Քրիստոսի Քո, զորս հոգեւորական վերածնութեամբ արժանի արարեր որդեգրութեան Քեզ՝ հաղորդելով արժանաւորութեամբ Մարմնոյ եւ

Եւ ուղեկցում են մինչեւ եկեղեցու դուռը՝ սաղմոսելով.

«Երանի՛ [նրան], ում մեղքերը ներուեցին...» [Սաղմ. ԼԱ 1]:

Սարկաւագը քարոզում է.

«Մեր այս նորակնունքիս ի վերուստ օգնականութեան, փրկութեան եւ հաստատութեան համար աղաչենք Տիրոջը»:

Երեք «Տէ՛ր, ողորմի՛ր»:

«Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաւիտենական, որ աճեցնում եւ լցնում ես Քո սուրբ Եկեղեցին Քո Քրիստոսի ճշմարիտ աստուածածանօթութեան միջոցով անհամար փրկուածների հաւատ լոյսով, որոնց հոգեւորական վերածնութեամբ արժանացրիր Քեզ որդեգրութեան՝ արժանաւորութեամբ հաղորդելով Քո Միածնի Մարմնին եւ Արեանը:

© National Library of Armenia

Արեան Միածնի Քո: Եւ արդ, Տէ՛ր, պահեա՛ զսա սրբութեամբ Հոգւոյդ Սրբոյ՝ առնել անարատութեամբ զկամս Քո եւ անմեղութեամբ ժամանել ի կեանսդ յաւիտենից: Եւ զամենեսեան զմեզ՝ զմերձաւորքս, օրհնեա՛ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ, ողջունեալք ի ժողովրդոցն, յուղարկին ի տունս իւրեանց: Եւ ութ օր յեկեղեցւոջն կացցէ, սպիտակազգեստ լիցի եւ զգլուխն ծածկեսցէ սպիտակ փակեղամբք: Զգոյշ կացցէ՝ աղօթից եկեղեցւոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդութեամբ Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի:

Եւ արդ, Տէ՛ր, պահի՛ր սրան Սուրբ Հոգուդ սրբութեամբ՝ անարատութեամբ կատարելու Քո կամքը եւ անմեղութեամբ հասնելու յաւիտենական կեանքիդ: Եւ բոլոր մեզ մերձաւորներիս օրհնի՛ր մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ, ողջոյն առնելով ժողովրդից, ուղեկցում են իրենց տները: Եւ ութ օր թող եկեղեցում մնայ, սպիտակազգեստ լինի եւ գլուխը ծածկի սպիտակ փակեղով: Զգոյշ լինի եկեղեցու աղօթքներում՝ ամէն ժամ պարապելով, հաղորդուելով Քրիստոսի Մարմնին եւ Արեանը:

Հաղորդութիւնից յետոյ սաղմոսելով գնում են դէպի եկեղեցու դուռը, եւ Մկրտութեան արարողութիւնը եզրափակւում է քարոզով եւ աղօթքով, որով քահանան խնդրում է Սուրբ Հոգու պահպանութիւնը՝ այս կեանքում անարատ կենցաղավարելու եւ անմեղութեամբ հասնելու յաւիտենական կեանքին:

Եզրափակիչ աղօթքին յաջորդում է յոյժ ուշագրաւ մի խրատ, որն արտամղուած է այսօրուայ ծիսական իրականութիւնից, սակայն բացառիկ նշանակութիւն ունի եկեղեցական կեանքի համար, եւ նրան պատշաճում է անհրաժեշտ ուշադրութիւն: Նոր մկրտուածն *ութ օր*[39] պէտք է սպիտակ զգեստներով, այսինքն՝ յարութիւնը

39 Ութն, ըստ Եկեղեցու հայրերի, Քրիստոսի թիւն է կամ Յարութեան թիւը: Եօթը խորհրդանշում է հինկտակարանեան եւ առհասարակ երկրաւոր կամ արարչական կատարելութիւնները, որոնք մաթեմատիկական օրէնքներ են, այսինքն՝ հասանելի են յաջորդականութիւնների շնորհիւ: Քրիստոսի բերած փրկութիւնը դուրս է այս աշխարհի կատարելութիւններից, ուստի այն դուրս է եօթենակների փակ պարբերութիւններից: Քրիստոս բերեց նոր կեանք, նոր օրինաչափութիւն, նոր ժամանակ, որն անուանւում է Առաջին Օր կամ

խորհրդանշող զգեստներով լինի եկեղեցում՝ ութ օր ապրելով Յարութեան խորհուրդով: Դա նրա կեանքի առաջին կատարեալ փուլն է կամ յաւիտեանը (էոն), որով նա նախապատրաստւում է քրիստոնէական կեանքի՝ Քրիստոսի Յարութեամբ ապրելու եւ Նրա վկան լինելու այս աշխարհում: Սպիտակ փակեղով գլխի ծածկուածութիւնն, ըստ երեւոյթին, հոգեւոր զգուշութեան համար է, ինչն ակնարկում է խրատի շարունակութիւնը: Այդ ութ օրերը նրա համար աղօթքի եւ հոգեւոր վարժանքի օրեր են, նոր մկրտուածը ճգնաւորական կենցաղավարութեամբ եւ կրօնական պարկեշտութեամբ պէտք է անցկացնի այդ ժամանակը՝ վերապրելու իր հետ կատարուածը, սովորելու իր նոր գոյավիճակին. Մկրտութեան մեծ խորհուրդով ստացած շնորհները պէտք է ամրացուեն հոգեւոր հմտութեամբ եւ շրջահայեացութեամբ:

Հին Եկեղեցում այս օրերի ընթացքում նոր մկրտուածին ներածում էին հաղորդական կեանքի մէջ, որովհետեւ մինչեւ Մկրտութիւնը երախաները կամ Մկրտութեան նախապատրաստուողները չգիտէին, թէ ինչ է կատարւում Պատարագի վերջաւորութեանը, ս. Հաղորդութիւնը գաղտնիք էր նրանց համար: Խրատի վերջաւորութիւնը՝ *պարապելով յամենայն ժամ, հաղորդելով Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի*, հէնց այդ մասին է: Ուրեմն, Մկրտութեան ութօրէքը եկեղեցացման՝ Եկեղեցու խորհրդական կեանքի մէջ հաստատման համար է. Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, որ բաշխւում է Եկեղեցում, պէտք է դառնայ քրիստոնեայի հոգեւոր կեանքի աղբիւրը եւ Աստուծոյ հետ շնորհական-խորհրդական փոխյարաբերութեան կիզակէտը:

Այսօր, երբ եկեղեցական կեանքն անհնախադէպ աղաւաղման է հասել, երբ մկրտուածի քրիստոնէական կեանքի կազմակերպման հարցը մատնուած է կատարեալ անուշադրութեան, ցանկալի է անդրադառնալ անցեալի այս գեղեցիկ աւանդութեանը եւ իրագոր-

Ութերորդ Օր: Սակայն այստեղ *մէկը* եւ *ութը* ոչ թէ թուային, այլ խորհրդական եւ անդրանցական օրինաչափութիւններ են, նրանք դուրս են յաջորդականութիւնների իշխանութիւնից եւ միաժամանակ նոր կեանք են հաղորդում եօթենակներին: Ութը յարութիւն առած եօթն է. ութենակը կատարեալ հոգեւոր պարբերութիւն կամ յաւիտեան (էոն) է: Նաեւ՝ Ութերորդ Օրը պիտի գայ Տէրը՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին. այդ օրն անուանւում է Վերջին Օր կամ Տիրոջ Օր կամ Դատաստանի Օր: Այսպիսով, ութը միաժամանակ խորհրդանշում է-ե՛ւ հոգեւոր յարութիւնը (Քրիստոսի Առաջին Գալուստ)՝ անուանուելով առաջին, ե՛ւ մարմինների յարութիւնը (Երկրորդ Գալուստ)՝ անուանուելով վերջին: Քրիստոնեաները գտնւում են Ութերորդ Օրուայ մէջ. նրանք, արժանացած լինելով Քրիստոսի բերած հոգեւոր յարութեանը, նաեւ մուտք են գործել Երկրորդ Գալստեան մէջ (վախճանաբանական սպասում):

© National Library of Armenia

ծել այն մեր կեանքում, եթէ մենք կամենում ենք մեր ծիսական կեանքին փրկաբանական լիցք հաղորդել: Ծէսի բուն նպատակը պէտք է լինի մարդուն քրիստոնեայ դարձնելը. լինել քրիստոնեայ՝ նշանակում է Քրիստոսի բերած կեանքով ապրել, մշտապէս առնչուել Տիրոջ հետ, որի խորհրդական աղբիւրը ս. Հաղորդութիւնն է:

ՑԱԽԵԼՈՒԱԾ

ՈՒԹ ՕՐ ՅԵՏՈ

Եւ յետ ութ աւուր վերացուցանէ քահանայն զպսակն՝ ասելով զաղօթս զայս ի վերայ նորա.

«Որք մկրտեցաք եւ լուսաւորեցաք, եւ ետուր զսրբութիւն Քո, Տէ՛ր, տո՛ւր եւ հաստատուն կալ ի սրբութեան Քում՝ պայծառացուցանելով ի լոյս Աստուածութեան Քո: Տէ՛ր, պահեա՛ հաստատութեամբ ի շնորհս, զորս ետուր: Հեռացո՛ ի մոլորութենէ թշնամւոյն եւ ի պատրանաց նորա եւ ի գործոց անօրէնութեան, զի լուսով գիտութեամբ գնասցէ ի ճանապարհս Քո եւ ուղիղ վարուք հասցէ ի խոստացեալ հանգիստ Քո: Ջհրեշտակ խաղաղութեան Քո առաքեա՛, որ եկեալ պահեսցէ զսա: Եւ ամենեքեան արժանի լիցուք յուսով ճայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ ութ օր յետոյ քահանան վերցնում է պսակը՝ այս աղօթքն ասելով նրա վրայ.

«Ովքեր մկրտուեցին եւ լուսաւորուեցին, եւ [նրանց] տուեցիր Քո սրբութիւնը, Տէ՛ր, տո՛ւր նաեւ հաստատուն մնալ Քո սրբութեան մէջ՝ պայծառացնելով Քո Աստուածութեան լոյսով: Տէ՛ր, հաստատո՛ւն պահիր այն շնորհների մէջ, որ տուեցիր [նրան]: Հեռացրո՛ւ թշնամու մոլորութիւնից, նրա պատրանքներից եւ անօրէն գործերից, որպէսզի լոյսով [եւ] գիտութեամբ գնայ Քո ճանապարհներով եւ ուղիղ վարքով հասնի Քո խոստացած հանգիստը: Առաքի՛ր Քո խաղաղութեան հրեշտակին, որ գալով պահի սրան: Եւ բոլորս արժանի լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յայտնութեան լոյսով, Որի հետ Հօրը, միաժամանակ եւ՝ Սուրբ Հոգուն, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Այս արարողութիւնը թէպէտ առանձին ծիսական միաւոր է, սակայն բնական շարունակութիւնն է Մկրտութեան արարողութեան եւ ձեռագրերում անմիջապէս յաջորդում է նրան: Ութ օր յետոյ քահանան վերցնում է պսակը (որոշ յետագայ ձեռագրերում՝ նաթօտը կամ թագը)՝ բնականաբար *Միւռոնից հանելով* կամ դրոշմուած տեղերի վրայից լուանալով Միւռոնը: Ութ օր յետոյ նորակնունքը պէտք է մտնի այս աշխարհ՝ որպէս կայացած, եկեղեցացած քրիստոնեայ, որպէս Քրիստոսի վկայ... Մէկ կատարեալ յաւիտենականութիւն՝ ութ օր ապրելով Յարութեան կեանքով, նա պէտք է մտնի աշխարհ որպէս նոր արարած, որը կրում է Քրիստոսի Յարութեան լոյսը: Այս աշխարհը չի ճանաչելու նրան, այս աշխարհում նա լինելու է նեղ եւ անձուկ ճանապարհով Տիրոջը ընդառաջ ընթացող անցուդարձ եւ օտարական. նրան սպասում են փորձութիւններ եւ մեծ պայքար ընդդիմամարտ ուժերի հետ: Խաւարի կրիչները ձգտելու են ունայնացնել Յարութեան լոյսը, սակայն նրանց խարդաւանքներն անզօր պիտի լինեն Եկեղեցու *Հերսում* (ոչ թէ տարածքային, այլ՝ հոգեւոր) գտնուողների համար: Եկեղեցին, հաստատուած լինելով այս աշխարհում, այս աշխարհինը չէ. նրա *Հերսը դուրս է այս աշխարհից*... Մկրտութեամբ մարդը մուտք է գործել Եկեղեցու խորհրդական *Հերսը*, դարձել Անմահի Գառի զոհաբերութեամբ հաստատուած յաւիտենական թագաւորութեան ժառանգորդ. «Եւ շնորհօք թագաւորեցին հաւատովք, որ ի Սուրբ Երրորդութիւնն. եւ գտեալք զթողութիւն լուսաւոր Աւազանաւն եւ Մարմնով եւ Արեամբ Քրիստոսի, ընդունելութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ աղբիւրաբար բաշխեաց զշնորհս յարարածս: Ջի, արդարացեալք ի հաւատոց անտի, զխաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ հաւատչեայ ժառանգութիւնն. զի նորոգեաց ի փառս անեղծութեան կամաւոր խաչելութեամբն Իւրով եւ մահուամբ ելոյծ զմահ եւ Յարութեամբն Իւրով զմեզ ի մեռելութենէ մեղաց յարոյց, զի մեք ի նորոգումն կենաց կացցուք եւ մնասցուք յուսով Յարութեանն ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»[40]:

Սակայն Քրիստոսի ժառանգութեան մէջ մնալու համար մարդուց պահանջւում են աստուածպաշտական ճիգեր՝ մշտապէս արտորոշելու չարի հրապոյրները եւ բացազատուելու աստուածային շնորհի առջեւ: Այս հոգեւոր ներընթացը հունաւորուել է երախայու-

40 «Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Ս. Էջմիածին, 1894, մաս Բ, տ. 490-502

© National Library of Armenia

թեան կարգով, խորհրդականացել Մկրտութեամբ, ապա եկեղեցացել ութօրէքի ներկրթութեամբ... Մկրտութեամբ մարդը ոչ միայն ստացել է աստուածային շնորհներ, այլեա՝ ձեռք բերել անհրաժեշտ ներաձնական հմտութիւն՝ այդ շնորհները պահելու համար. ևս էապէս հաստատուել է հոգեւոր կեանքի ամբողջութեան մէջ, որպէսզի անկորուստ ընթացքով հասնի փրկութեան նաւահանգիստ եւ մասնակից դառնայ Աստուծոյ սուրբերի անեզրական ուրախութեանն ի Քրիստոս Յիսուս:



Պարոյր Մուրադեան

ԴԱԻԱՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՄԻՋԵԱՆ ՀԱՄԵՐԱՁԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՍՏԱՆՈՒՄ

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք իստիր ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղատ. Գ 27-28]:

Տարիներ առաջ հայագիտութեան անխոնջ վաստակաւոր Յակոբ Անասեանը Մատենադարանի ձեռագրերից մէկում (N8356, ընդօրինակուած հեղինակային ինքնագրից 1322թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում) ի յայտ բերեց, հրատարակեց եւ վերահրատարակեց Վարդան Այգեկցու գրչին պատկանող եւ մատենագրութեան պատմութեան համար առանձնակի կարեւորութիւն ներկայացնող մի թուղթ՝ «Վասն չատահաջ քննողացն յանդիմանութիւն»[1]: «Շատահաջ քննողք» նորահնար բնորոշումը վերաբերում է Ասորիքի Դուք գաւառի հայ, ասորի եւ յոյն այն հաւատացեալներին, որոնք բռնուած են ազգային-դաւանական անհանդուրժողականութեան մոլուցքով, «քանզի հայն ասէ, թէ՝ ես եմ լաւ եւ ընտիր քրիստոնեայ, եւ հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն եւ զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ, թէ՝ ես եմ ազգ առաջին, սուրբ եւ գիտնական եւ ուղիղ հաւատ, եւ Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան եւ ոչ ունին առ Աստուած բաժին, եւ այսպէս նախատէ եւ հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ եւ կեղծաւորութեամբ, թէ՝ ես եմ ընտիր քրիստոնեայ եւ ունիմ անարատ հաւատ եւ սուրբ կարգ, եւ Հոռոմն եւ Հայն լցեալ են չար հերձուածաւք, աւտար են Աստուծոյ եւ զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն եւ դժոխոց են ժառանգ»: Եւ մինչ

[1] Ց. Անասեան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ», «Բազմավէպ», 1968, էջ 273-277: Նոյնի՝ «Վարդան Այգեկցին՝ որպէս համերաշխութեան գաղափարախօս», Ս. Էջմիածին, 1969, Է-Ը, էջ 56-58: Նոր վերահրատարակութիւնը տե՛ս դոկտ. Ց. Ս. Անասեան, «Մանր երկեր», Լոս Անջելէս, 1987, էջ 217-220:

© National Library of Armenia

ամէն մէկը զբաղուած է իր հաւատն ու կարգը գովելով՝ «գայ խալիֆայն ի Բաբելոնէ, եւ խատին՝ ի Հալպայ, եւ նախատեն զմեզ... եւ ասեն, թէ՝ դուք՝ ամենայն քրիստոնեայքդ, աւտար էք յԱստուծոյ եւ ոչ ճանաչէք զՆա...»:

Այգեկցին յանդիմանելով խրատում է եւ պարսաւելով յորդորում, թէ՝ դուք բոլորդ՝ հայ, ասորի, յոյն, «ի մի Քրիստոս կոչեցայք եւ ի մի Աւազան մկրտեցայք, ի մի Հայր եւ ի մի Սուրբ Հոգի լուսաւորեցայք եւ դարձեալ նախատէք զիրար եւ հայհոյէք...»[1]: «Ընդէ՞ր ոչ հայիք ի տունն Մալիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաւք եւ կան խաղաղութեամբ եւ սիրով առ իրար՝ ի մի սահման եւ ի կարգ, զոր առաջնորդն իւրեանց՝ Մահմէտ, կարգաւորեաց եւ սահմանեաց զնոսա»:

Իրատես Այգեկցու դատողութեան հիմքում ժամանակի սթափ զգացողութիւնն է դրուած... «Ո՛վ յիմարք եւ անմիտք, չգիտէ՞ք, որ այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել... այժմ որ ունի, այն է, զինչ որ ունի»: Ուրեմն, աւելորդ է վիճարկել, թէ ո՞վ աւելի առաջ «ծանեաց զՔրիստոս», ո՞վ է անարատ հաւատով եւ կարգով. «Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիւր եկեղեցւոյն սահման եւ սովորութիւնն եւ զկարգն՝ զպատարագելն, զտաւնելն, զպահքն, զմկրտելն, եւ առ իրար սիրով կեցիք եւ խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ, եւ վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք եւ բանավէճ լինիք եւ անհանգիստք»:

Խուովարարները՝ հայ, յոյն, թէ ասորի, Այգեկցու համոզմամբ, սատանայի բերանով են խօսում, մանաւանդ որ «սատանայ բնաւ ոչ եթող եկեղեցի եւ ազգ եւ մարդ անարատ եւ անվնաս, այլ դեղեալ ապականեաց զամենայն ազգ եւ զեկեղեցի», «եւ թէ կայ իրք մի չար յեկեղեցիս քրիստոնէից, զայն չհամարի նոցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, եւ սատանայ խաբող է եւ նենգաւոր...»:

Այգեկցին եւս կուզենար, որ՝ «ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգէն առնեն խնամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, եւ յիւր ազգն մկրտի եւ հաղորդի. եւ այս բարի էր»: Սակայն այլ է իրականութիւնը. «Եւ ահա, ի Կեսարիա եւ ի Մելիտինի, յՈւռհա եւ յԱնտիոք եւ ի մեր աշխարհս կիլիկեցոց անխտիր կու խնամեն եւ կու առնուն հարան զդստերս միմեանց Ասորին եւ Հայն եւ Հոռոմն»,

[1] Այստեղ ձեռագրի 153բ եւ 154ա էջերի արանքից մէկ թերթ ընկած է, ուստի բնականոն շարադրանքն ընդհատւում է, որ եւ նկատուած է հրատարակչի կողմից:

ուստի մի՛ յանդիմանէք ու վերամկրտէք իրար, այլ «պաշտեցէ՛ք զամենայն ազգ զիւր կարգն եւ զսահմանն եւ զիւր եկեղեցին»:

Այս ամէնը, իրաւի, ազգամիջեան համերաշխութեան գաղափարի դրսեւորման միջնադարեան մատնացուցելի նմուշն է եւ Կիլիկեան Հայաստանում նախորդ սերնդի մեծերի՝ Շնորհալու, Լամբրոնացու, Գրիգոր Տղայի մտորումների եւ համոզմունքների ակնյայտ զարգացում: Խօսքն աւետարանական համերաշխութեան ու մարդկայնութեան մասին չէ [Գաղատ. Գ 27-28, հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 13], այլ՝ բազմազգի եւ այլազեն պատմական միջավայրում գաղափարական դիրքորոշման:

Այգեկցու սոյն թղթի, ինչպէս նաեւ «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» ժողովածուի յայտնաբերումով Յ. Անասեանը վարդան Այգեկցու ժառանգութեան ուսումնասիրութեան մարզում Ն. Մառից յետոյ մի նոր շրջափուլ բաց արեց եւ մէկ անգամ եւս ապացուցեց, որ հայոց մատենագրութեան ուսումնասիրութիւնը համամարդկային քաղաքակրթութեան արժէք ներկայացնող նոր էջեր կարող է բացայայտել:

Յ. Անասեանն այնուամենայնիւ իր առջեւ խնդիրը չունէր պարզել, թէ 1210թ. յետոյ (բայց՝ մինչեւ 1215թ.) Այգեկցու գրած այս թուղթն իր արծարծած հարցերով եւ աշխարհայեցութեամբ զուտ կիլիկեան միջավայրի՞ ծնունդ է, թէ՞ համերաշխութեան այդ վարդապետութիւնը համակել էր նաեւ Արեւելեան Հայաստանի երեւելի մատենադիրներին: Ասել է թէ՝ անհրաժեշտ էր պարզել. սա մի մասնա՞ւոր դէպք է՝ պայմանաւորուած Կիլիկեան Հայաստանի եւ Ասորիքի տարազգի համայնքների միջեւ ստեղծուած դաւանական կացութեամբ, թէ՞՝ աշխարհայեացքային նոր դիրքորոշում առհասարակ: Առիթը ներկայացել էր՝ հաստատելու կամ մերժելու դարասկզբին Ն. Ադոնցի առաջադրած այն դրոյթը, ըստ որի՝ ԺԲ-ԺԳ դարերի հայոց եկեղեցական գրականութիւնն իր հարստութեամբ մասամբ պարտական է «այն կուսակցական քաշքշուկներին ու ընդհարումներին, որոնք տեղի էին ունենում հայոց կրթականութեան երկու կենտրոնների միջեւ», այսինքն՝ կիլիկեան եւ հիւսիսհայաստանեան: Ըստ Ն. Ադոնցի գնահատութեան՝ «միարարութեան միտքը համակրութիւն էր գտնում եկեղեցու այն ներկայացուցիչների քով, որոնք դաստիարակուել էին կիլիկեան նոր ոլորտում՝ առլեցուն արեւմտեան ոգով», մինչդեռ «հիւսիսային կողմանց» հայոց վարդապետները «վարդապետութեան հարցում բռնել էին ծայրայեղական դիրք՝ կիլիկեցիների լիբերալիզմին հակադրելով Սանահնի դպրոցի նուիրուածութիւնն

© National Library of Armenia

անցեալի պատգամներին»[1]: Այս բնութագրութեան ազդեցութեամբ հայ մատենագրութեան կիլիկեան լիբերալ թեւին հակադրուեց «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» պահպանողական թեւը[2], որ ներկայացնում են Գրիգոր Տուտեորդին, Դաւիթ Ռոբայրեցին, Մխիթար Գոշը եւ այլք: Վարդան Այգեկցու նորայայտ թուղթը լուսին արդարացնում է «լիբերալիզմ» որակումը՝ նշանակալիօրէն ընդլայնելով այդ եզրի դրական ընդգծումը, բայց, ինչպէս կտեսնենք ստորեւ, ամենեւին չի ընդգծում միւս թեւի «պահպանողականութիւնը»:

* * *

Վարդան Այգեկցու անմիջական գաղափարական նախորդը նրա իսկ աւագ ժամանակակից Ներսէս Լամբրոնացին է: Տարսոնի երիտասարդ եպիսկոպոսի 1177 կամ 1179թ. արտասանած «Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցւոյ»[3] ճառը հայոց քաղաքական, մշակութային եւ դաւանական պատմութեան առաւել նշանակալի ճեռքբերումներից է՝ արժանի մասնաւոր ուշադրութեան մեզ հետաքրքրող՝ ազգամիջեան համերաշխութեան եւ դաւանական հանդուրժողականութեան կտրուածքով եւս[4]: 32 եպիսկոպոսների ներկայութեամբ ասուած այդ ճառի շատ դրոյթներ չեն տեղաւորւում միջնադարեան դպրութեան՝ դարերով մշակուած ու որդեգրուած պատկերացումների շրջանակներում: Ահաւասիկ դրանց մի քանի նմուշ.

1) «Մի գլխոյն է անդամ Սպանիա եւ Արեւելք, Ծոյնք եւ բարբարոսք, Հայք եւ Վիրք, Աորիք եւ Եգիպտացիք: Ի նա են յարեալ ամենեքեան հոգւով եւ զնա զգեցեալք հաւատովք» (էջ 35)[5]:

2) «Նա թէեւ առ հաւատոյ բան լսեն հաւանական խոստովանութիւն յայլ ազգաց, ոչ կամին ի սէրն խոնարհել, այլ բուռն հարկանեն զայլ կարծեաց, թէ նոքա զմերս ատեն ազգ, վասն այսորիկ եւ ի մէնջ ատեսցին. կռփեն եւ կեղեքեն եւ հայհոյեն զմեզ, յաղագս այսորիկ եւ ի մէնջ հայհոյեսցին: Ո՛վ մտացի դու, եւ ո՞ւր ուսար վիրօք զվէր բժշկել...» (էջ 43):

3) «Հայն ի Հոռովմին խորչի հաղորդել յօրհնեալ պատարագն, եւ Հոռոմն՝ ի Հայոյն: Եւ զհաց, զոր մի աղօթիւք միով օրհնութեամբ, մի Քրիստոս անուամբ անուանեմք, միոյ Հոգւոյ չնորհիւ իւրաքանչիւրքն կատարեցաք, յետ այնորիկ անգոնեմք զիրեարց» (էջ 51):

4) «Տեսցուք, թէ հատուածեալն ի մէնջ ազգ Վրաց, ի նոսա յեցեալ, որքան օրըստօրէ ի Քրիստոս պայծառանան. արդ, գոնեա անագան եւ մեք զնոյն խոկասցուք» (էջ 65):

5) «Ընդէ՞ր այսչափ գալս խոտեալ՝ խորչիմք եւ խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս: Մինչեւ յե՞րբ անդամքս լեզուօք զիրեարս խոցոտեմք՝ թունիւք իժին լցեալ զբերանս, այսքան երկար ժամանակս անխնայ զմիմեանս հարեալք» (էջ 65):

6) «Հայն միշտ աղաղակէ՝ Աստուած իմ, գոհանամ զՔէն, որ չարարեր զիս Հոռոմ, եւ Հոռոմն զնոյն բան երկրորդէ, թէ՝ որ ոչ արարեր զիս Հայ: Ո՛վ տմարդութեանս եւ անմիտ յանդգնութեանս...» (էջ 66):

7) «Անմիտ, կամք չար ծառացան ոմանք ի մարդկանէ, եւ ոչ բնութիւն ազգին է չար՝ Հոռոմին կամ Հայոյն կամ այլոց սեռից, զի եւ ի Պարսից բազումք հաճոյացան Աստուծոյ եւ ընտրին: Արդ, քո այնքան կուրացեալ յատելութենէն, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլեւ զազգն ողջոյն բամբասես եւ ի նմանէ գոհութեամբ հրաժարես» (էջ 66):

8) «Արդ, այժմ չէ օգուտ ի միմեանց հրաժարելն կամ ընդ անհնազանդն ոչ հաղորդելն...» (էջ 67):

Ի՞նչ է առաջարկում Լամբրոնացին՝ «համաշունչ լինել, միախորհուրդ» (էջ 53), պահել սեփական աւանդութիւնը եւ «ընդունիլ զնորայն». «այդ է գովելի կարծիք» (էջ 60):

Որ այս դրոյթները յաւուր պատշաճի ճեւակերպումներ չեն, այլ՝ համոզմունք ու դիրքորոշում, կարելի է հաւաստիանալ նրանց մեծ մասի կրկնութեամբ նոյն Լամբրոնացու 1194–1195թթ. միջոցին հեղինակած «Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալու-

---

1 Н. Адонц, "Армянская литература", "Новый энциклопедический словарь Брокгауза-Ефрона", т. 3, с. 652-653

2 Տե՛ս Լ. Մելիքսէթ-Բեկ, «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց եւ նրանց ինքնութիւնը» (վրացերէն), Տփղիս, 1928, էջ 3. նաեւ՝ Իլիա Աբուլաձէ, «Աշխատութիւններ» (վրացերէն), հ. Դ, Թբիլիսի, 1985, էջ 5:

3 Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ», Վենետիկ, 1812, հրատ. Հ. Պ. Աւգերեան (նրա իսկ լատիներէն թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով), նաեւ՝ «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւն վասն միութեան Եկեղեցւոյ եւ ճառք», Կալկաթա, 1851:

4 Ժողովի հրաւիրման թուականի մասին տե՛ս Ներսէս վրդ. Ակինեան, «Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսոնի», Վիեննա, 1956, էջ 31, 35:

5 Այստեղ եւ ստորեւ՝ մէջբերումներն ըստ Կալկաթայի հրատարակութեան:

© National Library of Armenia

թեամբ Լեւոնի նուաստ Ներսիսէ, որ ի Տարսոն սրբոյ Եկեղեցւոյն պաշտօնեայ», կարճ՝ «Թուղթ առ Լեւոն» երկում[1]:

Պատասխանելով հայրենի աւանդներից հեռանալու մեղադրանքին եւ նորից արծարծելով Ցոյն, Հայ, Լատին եւ Ասորի եկեղեցիների միջեւ հաղորդութիւն առնել-չառնելու խնդիրը՝ Համբրոնացին անվրան յայտարարում է. «Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց, որ քրիստոնէից ազգք բազմատրին ի միմեանց իւիք-իւիք: Իսկ չնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս սնոտի աւանդութիւնս նոցա գիտութեամբ արհամարհել եւ զսէրն նախապատուել. եւ է ինձ Հայն որպէս Լատինացին, եւ Լատինացին՝ որպէս գՀելլենացին, եւ Հելլենացին՝ որպէս գԵգիպտացին, եւ Եգիպտացին՝ որպէս գԱսորին: Արդ, եթէ ես միոյ ազգի չառաջով էի, ընդ այլոն ե՞րբ էր կար հաղորդել. բայց ընդ իւրաքանչիւր, որ միմեանց թշնամիք են, խառնիմ եւ զբնաւս չհիմ՝ ըստ Քրիստոսի առաքելոյն. եւ ունիմ բան, որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել, թէ ուղիղ ընթանամ. եւ սիրովն Քրիստոսի զամենայն կրճիմն քակեմ, որով բարեհաչակիմ ե՛ւ ի Լատինացւոց եկեղեցիսն, ե՛ւ ի Հելլենացւոց, ե՛ւ յԱսորոց, ե՛ւ կամ ի Հայաստանեայս, եւ ընդ սոսա՝ անշարժ, եւ ի նոցին աւանդութիւնն՝ անփոփոխ»[2]:

Համբրոնացին փաստօրէն մերժում է էքմենիկական եւ դաւանական շրջանակներում ներփակուելու կարելիութիւնը, քրիստոնեաներին իրարից բաժանող դաւանական ու ծիսական տարբերութիւնները «սնոտի աւանդութիւն» հռչակում եւ «գիտութեամբ արհամարհում»:

Կարեւոր է ընդգծել, որ մեր մատենագիրն իրեն միայնակ չի զգում եւ թուարկում է Հայաստանի տարբեր գաւառներում ու թեմերում գործող իր գաղափարակիցներին, որից եւ կարելի է եզրակացնել, թէ լիբերալիզմը չէր շրջանակւում Կիլիկեան Հայաստանի սահմաններով: Նորից վկայակոչենք Համբրոնացուն. «...Արդ, թէ քո աստուածպաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանւոյ, մեր իմաստութիւն՝ ոչ բնաւ. զի իրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի. եւ զի յետին են նոքա, որ յայս յանդգնին՝ բոլոր հարց, որք մերում ճշմարտութեանն չառաջովք են, նոյն ինքն՝ մեր աչխարհս եւ առաքք Լեառնեա եւ որ ի սմա՝ հովիւք առաքք, եւ բոլոր գաւառն Վասպուրականի եւ որ անդ՝ հռչակաւոր ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Սահփաննոս սիրացուն՝ ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն եւ Սահփաննոս՝ մեր ուսումնակից, եւ Քրիստոսասուրբ եւ Տիմոթէոս ճգնաւորք, որք սկանաոս լեալք են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ եւ երանեն, թէ կարող էին ձայնակցել. բոլոր գաւառն Տարոնոյ եւ որ ի նմա՝ իմաստուն եպիսկոպոսն Եսայի, եւ վարժապետ Թէոդորոս, որ զմեզ բարեհաչակեն բարեկարգութիւն եւ երանեն զհաղորդեալսն. գաւառն Եկեղեաց եւ լեառն սրբոյն Գրիգորի եւ որ ի նմա՝ հարքն եւ եպիսկոպոսքն, որք զբովն իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս եւ աւազեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ. իշխանքն Եսէեանոյ եւ որ անդ՝ վոնորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ որպէս զհրեշտակ պատուեն եւ կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն...»[1]:

Հայաստանի աչխարհագրութիւնն այստեղ բաւական հարուստ է ներկայացուած՝ վասպուրական, Տարոն, Եկեղիք, Եսէեն: Նշանակում է՝ Համբրոնացու կուսակիցներ (ուսուցիչներ, աննղակիցներ եւ աչակերտները) կային թէ՛ Կիլիկեան եւ թէ՛ Արեւելեան ու Հարաւային Հայաստանում: Ցաւօք, նրա թուարկած գործիչներից չատերի ինքնութիւնը, ինչպէս նաեւ նրանց գրական արտադրանքները հայագիտութեան մէջ քննութեան չեն առնուել, ուստի «լիբերալիզմի» եւ «պահպանողականութեան» թեւերի բաժանումն աչխարհագրական առումով արդարացուած չէ: Այս իրողութիւնը լաւագոյնս կարելի է հաստատել Արեւելեան Հայաստանի ԺԲ–ԺԳ դարերի խոչորագոյն մատենագիրներից մէկի՝ Մխիթար Գոչի ժառանգութեան քննութեամբ:

* * *

Մխիթար Գոչի գրական վաստակները թուարկելիս Կիրակոս Գանձակեցին յիշում է «Գիրք մի՝ Ցայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ

1 Տե՛ս «Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 203–242:

2 Նոյն տեղում, էջ 215–216

1 Նոյն տեղում, էջ 224–225

© National Library of Armenia

զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ»[1]: *Հաւանաբար սա նոյնն է 1900–1901թթ. «Արարատում» երեք ձեռագրի հիմամբ տպագրուած (պէտք է խոստովանել՝ ընթերցումների բաւական անյաջող ընտրութեամբ) «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր» ընդարձակ ջատագովականի հետ՝ հասցէագրուած յիշեալ զօրավար եղբայրներին եւ նրանց միջոցով՝ վրաց արքունիքին ու կաթողիկոսին*[2]: *Գրութեան ժամանակն աւանդուած չէ, բայց աններկրայօրէն յաջորդել է Լոռէի 1204/5թ. կայացած ժողովին, որին Գոշը ներկայ է եղել, եւ նախորդել 1207թ. Ծննդեան տօնի նախօրէին հրաւիրուած Անիի ժողովին, որին Գոշը նոյնպէս մասնակցել է: Թղթում «յաղթող թագաւորք մեր»՝ Թամարն ու Դաւիթ Սոսլանը, կենդանի են յիշւում, որով վստահ կարող ենք ասել, թէ այն գրուած է 1206թ.: Գրութեան շարժառիթը որոշակի է. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց Եկեղեցւոյ՝ յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի,– դիմում է զօրավար եղբայրներին,– հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»: Վրաց կաթողիկոսին եւ հոգեւորականութեանն ուղղուած նախադրութիւնում ասուած է. «Գրեցաք զթուղթդ՝ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան եւ զիրաւունս իբր դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս յայտ արարաք եւ զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոյս ազգաց եւ զխոտելի իրն ոչ թաքուցաք զմեր ազգիս եւ զիւրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն»: Նշանակում է՝ թղթի հետապնդած նպատակներն են.*

Ա. Ներկայացնել հայոց դաւանութիւնն ու Եկեղեցու ծիսակարգը, բացատրել նրանում եղած ինքնօրինակութիւնները:

Բ. Ինչպէս յոյներն ու վրացիները, այնպէս էլ հայերը հերձուածողներ չեն, ուստի միմեանց հանդէպ կրկին մկրտութիւն կիրառելը «Քրիստոսի է անարգանք»:

Գ. Լաւ կլինէր, եթէ «ամենայն ազգ միակրաւն լինէր», բայց այլեւս միաբանութեան հասնելն անհնար է:

1 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 221

2 Տե՛ս «Արարատ», 1900, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127: Նոյնութեան հարցում կասկածներ ունի Լ. Մելիքսեթ-Բեկը (տե՛ս նշւ. աշխ., էջ 227, 242):

Դ. Ներկայ կացութեան մէջ ի՞նչ պէտք է անել. «Միանգամայն եւ այն ցուցաք, թէ զինչ այժմ հնարաւոր է լինել ազգաց, զորս թէ ձեզ (իմա՝ զօրավար եղբայրներիդ – Գ. Մ.) հաճոյ կարծի, թարգմանեալ ընթեռնոյք նոցա (իմա՝ վրացիներին – Գ. Մ.)»:

Դիտենք, որ Գոշի այս երկի ուսումնասիրութիւնն առ այսօր ընթացել է գերազանցապէս աղբիւրները բացայայտելու ուղիով. Լ. Մելիքսեթ-Բեկը պարզել է, որ Դուինի ժողովի մասին պատմելիս Գոշն օգտւում է Յովհան Օձնեցու «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս» երկից՝ համառօտելով, հայ-վրացական եկեղեցական բաժանումը ներկայացնելիս՝ Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից գրեթէ բառացի քաղուածներով[1]:

1938թ. գրուած մի յօդուածում Ի. Աբուլաձէն հաստատապէս ապացուցեց, որ Գոշի թուղթը պատասխան է Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոնի» հակամիաբնակ դրուագներին, որպիսիք ութն են, մասնաւորապէս՝ նրանցից մէկին՝ «Երեսուն գլուխ հայոց հերձուածի» (վրացերէն): Հայագէտը ցոյց տուեց նաեւ, թէ հակամիաբնակ այս երկը հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանուել է հայերէն, լրացուել թարգմանչի մեկնաբանութիւններով ու ընդմիջարկութիւններով եւ «Պատասխանի առ Հայս» խորագրով եւ Յովհան Դամասկացու հեղինակութեան վերագրումով ժամանակին հրատարակուել Կ. Պոլսի «Լոյս» շաբաթաթերթի 1905–1906թթ. համարներում[2]: *Մի քանի տարի առաջ Զ. Ալեքսիձէն հրատարակեց «Երեսուն գլուխ Հայոց հերձուածի» վրացերէն բնագիրն ու նրա համապատասխան հատուածները Յովհան Դամասկացուն վերագրուած «Պատասխանի առ Հայս» երկից*[3]: *Ի վերջոյ, 1976թ. Ժ. Գարիտը ճշգրտեց, թէ*

1 Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, նշւ. աշխ., էջ 243-245: Անանիա Սանահնեցու երկն այժմ հրատարակուած է. տե՛ս «Անանիա վարդապետի հայոց՝ Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց Վերադիտողի», հրատ. Յ. Քեոսէեան, «Գանձասար», Ա, էջ 204-238; Բ, էջ 168-218; Գ, էջ 174-215:

2 Տե՛ս «Լոյս» (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1905, էջ 1008-1012, 1065-1066 (նախաբան), 1066-1068, 1112-1115; 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 474-479, 589-592, 810-815, 957-960, 981-984, 1075-1079, 1124--1126, 1196-1199. Ի. Աբուլաձէ, նշւ. աշխ., էջ 10-16: Հայերէն տեքստի հրատարակիչը Բաբկէն վրդ. Կիւլէսէրեանն է, որը համառօտ ներածականում չի մերժում Դամասկացու հեղինակ լինելը, բայց եւ դիտում է յետագայ ընդմիջարկութեան առկայութիւնը: Ն. Ակինեանն այն համարում է «Յովհ. Դամասկացւոյ անուան ներքեւ կեղծող հայ-հոռոմի մը» գործ (տե՛ս Ն. Ակինեան, «Կիւրիոն՝ կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 69-70):

3 Տե՛ս Զազա Ալեքսիձէ, «Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոնի» մուծած հակամիաբնակ քերթուածքը եւ նրա արձագանքը հայոց հին մատենագրութեան մէջ» (վրացերէն), «Ճառընտիր», հ. 1, Թբիլիսի, 1977, էջ 133-158:

© National Library of Armenia

Արսէն Վաչեա-ձէի «Դոգմատիկոնի» յիշեալ հակամիաբնակ դրուագի աղբիւրը յունարէն մի աշխատութիւն է՝ հրատարակուած Մինի PG-ի 132-րդ հատորում (սիւնակ 1221-1237)[1]:

Այս ամէնն, անշուշտ, ե՛ւ կարեւոր է, ե՛ւ հետաքրքիր, բայց մուտացութեան չպէտք է տալ ամենաէականը՝ ինչո՞վ է տարբերւում Մ. Գոչի թուղթն այն մատենագրական երկերից, որոնցից օգտւում է կամ որոնց ի պատասխան գրուած է: Մեր խնդիրն այս հարցերին պատասխանելն է:

1. Մ. Գոչին նախորդած հայ հեղինակները, որոնց երկերից նա օգտւել է, իբրեւ կանոն, չանացել են ապացուցել, որ Հայոց եկեղեցու դաւանութիւնն ու ծիսակարգը անխոտոր պահպանել են ուղղափառութիւնը, եւ որ հերձուածողները Քաղկեդոնի ժողովի հետեւողներն են: Գոչը նոյնպէս պաշտպանում է միաբնակ եկեղեցու ուղղափառութիւնը, բայց եւ երկաբնակութիւնը հերձուած չի համարում. «ի ազգաց (իմա՝ յոյներ, հռոմէացիներ, հայեր, ասորիներ եւ վրացիներ - Գ. Մ.) չտեսանեմք այնքան պատճառք, որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ կամ զտուն, եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն», ուստի՝ «այլ թէ ասացեալ հինգ ազգդ ոչ կարեն միաբանել, բայց կարող են թէնամիք միմեանց չլինել, զինաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ», որովհետեւ «Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Հռոմք ճշմարիտ զերրորդութիւնն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի տնաւրէնութիւնն այլայլեն եւ զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զինաչ՝ Աստուծոյ Խաչ. առ Հայս այդ առաւել ճշմարիտ է: Այլ ինչ սակաւ բաժանումն տալնի կամ պահաց կամ կերակրոց չէ հաւասող բաժանումն»: Գոչը լայնախոհաբար նկատում է. «Մի՞թէ ընդ ամենայն աշխարհ Հայ միայն է, եւ կամ՝ Վրացի, եւ կամ՝ Հռոմ: Քրիստոս չէ նախանձոտ. նա ամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուտկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբռնին: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՀուդն լաւ ասէ, քան զՀայն: Այնպիսի ասացողքն չունին թողութիւն ո՛չ աստ եւ ո՛չ ի հանդերձելումն, թէ չապաշխարին. թէ Հայ Վրացոյ ասէ, կամ Վրացի՝ Հայոյ, եւ կամ այլ քրիստոնեայ ազգ՝ քրիստոնէի, զի ամենայն քրիստոնեայք եղբարք են»:

Պատկերացնելու համար, թէ ինչ չօշափելի տարբերութիւն կայ Մ. Գոչի եւ նրա դիմաց կանգնած յոյն եւ վրացի հեղինակների համոզմունքների միջեւ, բաւական է յիշել վերջիններիս գործածած մի քանի արտայայտութիւնները՝ «ամենայն չար Հայք», «անաստուածներ եւ զազրելիներ», «այժմեան Հայք՝ մերժողք, հայհոյիչ եւ փոխեալ են այսպիսի խորհրդոց», Հայոց եկեղեցիները կոչում են «սատանայական ժողովարաններ» եւ այլն: Ի դէպ, նման տեղինները յիրաւի վիրաւորական են ներկայացել յուշարձանի միջնադարեան երկաբնակ հայ թարգմանչին, ուստի նա այս որակումները բաց է թողել[1]:

2. Դաւանութեան չուրջ խօսող Գոչի նախորդները, մանաւանդ՝ յունավրացական միջավայրում, սովորաբար հաւասարութեան նշան են դնում ազգային եւ դաւանական հասկացութիւնների միջեւ: Պատահական չէ, որ յունական եւ վրացական աղբիւրներում երբեմն «Հայք», «Հայոց»-ի փոխարէն գործածւում է «խաչեցարներ» փոխաբերական եզրը: Գոչը որոշակիօրէն տարբերում է այս կամ այն ժողովուրդը եւ նրա դաւանութիւնը: Նա չանում է ապացուցել, որ միաբնակութիւն դաւանող ուրիշ ժողովուրդներ էլ կան, եւ թուարկում է Ասիայում եւ Աֆրիկայում գտնուող չատ երկրներ ու ժողովուրդներ (էջ 503), որոնք «ընդ մեզ ի նոյն կրաւնի կան հաստատուն՝ չընկալեալք զժողովն Քաղկեդոնի», «եւ սոքա, ի նոյն հաստատեալ հաւատս, ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս»: Կայ եւ հակառակը՝ ապրում են Հայոց միջավայրում, հայալեզու են, բայց Հայ չեն ազգային պատկանելութեամբ, որպիսիք են, ըստ Գոչի, «մաքենացիք» (էջ 60): Այս էքմենիմի տակ, թերեւս, Գոչը նկատի

---

1 Gérard Garitte, "La source grecque des "Trente articles" géorgiens contre les arméniens", «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 111-116: Սոյն երկի թարգմանական լինելու շուրջ Արէշ վրդ. Օղլուգեանի յայտնած տարակուսանքը (տե՛ս «Գանձասար», Գ, էջ 53-54) արդիւնք է այստեղ յիշուած մասնագիտական գրականութեան անծանօթութեան:

1 Ի. Աբուլաձէի համոզմամբ՝ «Պատասխանի առ Հայս» երկի հայերէն թարգմանիչն այլ աղբիւրներից քաջ յայտնի Սիմէոն Պղնձահանեցին պիտի լինի (տե՛ս նշւ. աշխ., էջ 18): Վերջինիս մասին հանգամանօրէն տե՛ս Ներսէս վրդ. Ակինեանի, «Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ», Վիեննա, 1951: Եթէ թարգմանիչ Սիմէոնը նոյն Պղնձահանեցին է (Ն. Ակինեանն այդ չի ասում. տե՛ս նշւ. աշխ., էջ 96-98), ապա Մ. Գոշն օգտուած պիտի լինի վրացերէն բնագրից, քանի որ 1206թ., երբ նա իր աշխատութիւնն էր գրում, Պղնձահանեցին ընդամէնը 18 տարեկան էր եւ հազիւ թէ թարգմանութեան մարզում հմտացած լիներ: Ի. Աբուլաձէն եւս այս հարցում կասկածներ ունի (տե՛ս նշւ. աշխ., էջ 16): Ի դէպ, Ն. Ակինեանը «Պատասխանի առ Հայսի» յունարէն բնագրի հեղինակ է համարում Եւտրատիոս Նիկէացուն (տե՛ս նշւ. աշխ., էջ 97): Վերջինիս աշխատութեան բնագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով (յղումը տե՛ս Karl Krumbacher, "Geschichte der byzantinischen Litteratur", München, 1887, S. 85, նաեւ՝ Ն. Ակինեան, ամն), չենք կարող ասել՝ Գարիտի մատնացուցած բնագրի հետ դրանք նոյնանո՞ւմ են, թէ՞ ոչ:

© National Library of Armenia

ունի պաւլիկեաններին: Վրաց Հոգեւորականութեանը դիմելով՝ Գոշ ամփոփում է. «Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսող լինիք Թշնամեաց մերոց, զի չկայ ի Հայք հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունին, յամենայն ազգ այլ շատ կան, եւ տեսանեմք, եւ զայն չէ հերձուած Հայոց»:

Անհրաժեշտաբար կրկնում ենք. իր տուած բնագրութիւններից Գոշը կառուցում է էթնիկական-ազգագրական յատկանիշների եւ ոչ դաւանական ինքնութիւնների վրայ: «Զիք ազգ,- ասում է նա,- որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան». «Ցոյնք իմաստունք են եւ ողորմածք՝ ուսեալք ի Յոհանէ Ոսկեբերանէ, Հոռոմք զգաստք են աղաւթից եւ հնազանդ առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնող, Հայք պահողք են եւ ողորմածք գերելոց եւ եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից մեծարողք եւ անբամբաս առաջնորդաց», եւ ապա՝ «առաջնորդաց անհնազանդ են Հայք, բայց սրբութիւն կրաւնաւորաց ի Հայք առաւել գտանի եւ արժանաւոր պատարագ, քան՝ զայլ ազգ»: Նոյնիսկ ոչ կանոնական դիտուղ, բայց ազգային սովորոյթ դարձած իրողութիւնները նա հանդուրժելի է համարում. «Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայրն, գովելի է, թէպէտ եւ ոչ է կանոնական, եւ զի՞ բամբասեն զՀայսն, թէ զազգականս առնեն կնքահայր»: Նա դիտում է, որ տարբերութիւններ յիրաւի կան. «Ցոյնք եւ Վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, եւ Հայք՝ զխաչ». «որպէս Հայք զխաչ անարգեցին՝ արհամարհանաք յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս Ցոյնք եւ Վիրք՝ զպատկերս, զի զոր գիտեմք, ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցիչ է որպէս պատմութիւն վարուց սրբոցն, բայց զի արք տգէտք պաշտելի կարծեն վասն այն, եւ ոչ փութան առնել Հայք, այլ իմաստունք զարարեալսն ոչ անպատուեն»:

3. Այն գրութեանը, որին պատասխանում է Մ. Գոշը, անծանօթ է միջէթնիկական յարաբերութիւնների հեռանկարի հասկացութիւնը, ինչպէս նաեւ՝ ազգամիջեան համերաշխութեան եւ դաւանական հպնդուրժողականութեան գաղափարը, մինչդեռ իրատես Գոշն իրեն պարտաւոր է զգում ասել, թէ՝ «զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց»: Նրա համոզմամբ՝ վրաց Թագաւորները եւս «նախանձաւորին խաղաղութեան եւ սիրոյ առ միմեանս հաւատացելոց», եւ թէեւ Թամարն ու Դաւիթը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց... այլ Աստուծոյ չնորհաքն կարող են զՀայոց եւ զՎրաց Թշնամութիւնն բառնալ, որ Քրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է աւելութիւն, որ զխաչ եւ զխրատ եւ զեկեղեցի միմեանց

չհայհոյեն եւ նախատեն»: «Եւ դուք բաւական էք,- դիմում է նա զօրավար եղբայրներին,- զաստակացեալ պատերազմդ հայհոյութեան չկործանել իմաստութեամբ եւ հաւանել բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զժողովն լինել զմիաբանութիւն... զի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաքն Աստուծոյ եւ թէ կամիք, ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն»:

Գոշը նման դիմում է կատարում եւ վրաց Հոգեւորականութեանը. «Արդ, մի՛ լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան, այլ՝ առաւել չինութեան եւ խաղաղութեան»: Մարդիկ միմեանց պէտք ու կարօտ ունեն, ուստի նրանց չի կարելի ատելութեամբ բաժանել. «Այլ զայս նախ դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւտս արար զպէտս ունել միմեանց, եւ յաղագս այնորիկ չինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք: Ընդդէմ այսմ է եւ կամք չարին բաժանելն մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս սիրով՝ զբարին Աստուած»: Արմատացած սովորութիւնների եւ գոյացած աւանդոյթների պատճառով «անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն», բայց եւ միաժամանակ «լաւ համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զնաչ եւ զեկեղեցի չանարգեմք», որովհետեւ «եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի Ցոյնն զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հոռոմն՝ զինքն, նմանապէս եւ՝ ազգ ամենայն»: Խելամիտն իրար հանդուրժելն է. «Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չհայհոյէաք»: Գոշն այլ ելք չի տեսնում, քան խաղաղ ու ինքնակամ գոյակցելը. «Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ՝ զմիմեանց հաւանելն եւ կալ իւրաքանչիւր կարգի ամենայն ազգ...»:

Կատարուած քննութիւնը մեզ մղում է մի քանի ակզբունքային եզրակացութիւնների.

Ա. ԺԲ-ԺԳ դարերի հայ իրականութեան մէջ Վարդան Այգեկցին միակ հեղինակը չէ, որ յանգել է դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարին. նրանից առաջ եւ նրա օրօք, բացի Շնորհալուց եւ Լամբրոնացուց, այդ նոյն գաղափարախօսութեան բանիբուն ջատագով է եղել Մխիթար Գոշը:

Բ. Հայոց էթնիկական աշխարհի երկու ծայր հատուածներում՝ Կիլիկիայում եւ Հիւսիսային Հայաստանում, միաժամանակ, բայց մի-

© National Library of Armenia

մեանցից անկախ ձեւաւորուած համերաշխութեան եւ հանդուրժողականութեան այս գաղափարը բարձրակէտ էր, որին յանգեցրել է հայոց էթնիկական, քաղաքական եւ մշակութային զարգացման ողջ նախընթաց շրջանը:

Գ. Վերանայելի է ԺՌ–ԺԳ դարերի հայոց մատենագրութեան եւ նրա կերտողների երկու հակադրուող թեւերի բաժանումը՝ մէկին որակելով լիբերալ, միւսին՝ պահպանողական: Կիլիկեան եւ «հիւսիսային կողմանց» վարդապետների թղթերում եղած փոխյանդիմանութիւնները նման ընդհանրացման հիմք չեն տալիս: Մշակութային ամբողջականութեան զգացումը միջնադարեան էթնիկ ինքնագիտակցութեան կարեւոր բաղադրիչներից է:

Դ. Հայ ժողովրդի ստեղծած մշակոյթի միջնադարն այլ ժողովուրդների մշակոյթներին յարաբերելիս չպէտք է անտես առնել տեղական աւանդների գործուն ներկայութիւնը. իր գոյութիւնն ապահովելու եւ խաղաղ գոյակցելու երազանքը միշտ ուղեկցել է տեւական մաքառումներով ապրող մեր ժողովրդին: Աշտարակի կարմրաւորը կառուցողը չէ դարում փորագրել է. «Տուաք չինել... վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ չինութեան Աշտարակի եւ պազատքերութեան տահմանիք»:

Ե. Մխիթար Գոշի մատենագրական ժառանգութիւնն ուսումնասիրելիս, «Դատաստանագրքում» երեւացող եւ հումանիստական որակուող համոզմունքները գնահատելիս չպէտք է զանց առնել «Գծագրութիւն» կամ «Թուղթ» կոչուող երկի խիստ ուշագրաւ դրոյթները:

Յակոբ Քեոսէեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԵԻ ՏԱՂԵՐՈՒՄ

(շարունակութիւն)

4. ՄԱՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ ԵԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Հայ Առաքելական Եկեղեցու աստուածաբանութեան մէջ կարեւոր տեղ է զբաղեցնում մարդու մասին ուսմունքը՝ մարդաբանութիւնը (անտրոպոլոգիա): Այն առաւել համակողմանիօրէն մշակում եւ յղկում է արեւելաքրիստոնէական մարդաբանութեան որդեգրած սկզբունքային դրոյթները, որոնք, բխելով Սուրբ Գրքից եւ Ցայտնութիւնից, բիւրեղացել են Եկեղեցու հայրերի խորհրդածութիւններում: Քրիստոնէական մարդաբանութեան ճիշտ ընկալման համար ուշագրաւ է թւում ս. Բարսեղ Կեսարացու հետեւեալ խստորոշ միտքը. «Աստուած մարդուն ստեղծեց որպէս կենդանի էակ, որ կոչուած էր աստուած լինել»: Սակայն աստնիհ տրամաբանութեան համար տարօրինակ այն է, որ այդ կոչումը ձեռքբերելու համար հարկ է հրաժարուել դրանից: Այդ հրաժարումը կատարւում է Աստուծոյ կողմից մարդուն տրուած ազատ կամքի արդարացի գործադրումով: Անդրադառնալով այս խնդրին՝ Վ. Լոսսկին նկատում է. «Մարդը ստեղծուեց Աստուծոյ կամքով, սակայն միայն այդ կամքով նա չի կարող աստուածանալ: Մէկ կամք՝ արարչութեան մէջ, սակայն երկու՝ աստուածացման մէջ: Մէկ կամք՝ պատկերն արարելու համար, սակայն երկու՝ այն բանի համար, որպէսզի պատկերը նմանութիւն դառնայ: Աստուծոյ սէրը մարդու նկատմամբ այնքան մեծ է, որ այն չի կարող բռնանալ նրա վրայ...»[1]: Ուստի մեղքից ձերբազատուելու եւ աստուածանալու համար անհրաժեշտ է Աստուծոյ կամքի եւ մարդու կամքի լիակատար մէկտեղում: Կամքի ազատութեամբ, ազատ ընտրութիւն կատարելու շնորհով մարդը բարձր է նոյնիսկ Աստուծոյ փառքի հրեղէն լոյսին հաղորդ, Նրա շուրջը խմբուած, Նրան մշտապէս փառաբանող հրեշտակներից, որոնք, զուրկ լինելով այդ ազատութիւնից,

1 В. Лосский, "Догматическое богословие", "Богословские труды", сб. 8, Москва, 1972, с. 157

© National Library of Armenia

Աստուածութեան սոսկական կամակատարներն ու սպասաւորներն են[2]: Սակայն մարդուն տրուած կամքի ազատութիւնն ու ազատ ընտրութիւն կատարելու շնորհը սատանայի դրդումով չարաշահուեց: Այսպիսով, ինչպէս վկայում է Աստուածաշունչը, Աստուծոյ եւ մարդու կամքի մէկտեղումը, որով մարդը յարատեւում էր դրախտում, ընդհատուեց գայթակղութեան հետեւանքով գլուխ բարձրացրած յաւակնոտ անհնազանդութեամբ ու հպարտութեամբ: Աստուծոյ եւ մարդու երանելի միասնութիւնը խափանուեց. մարդը զրկուեց աստուածային փառքի ներկայութիւնից: Այսուամենայնիւ, մարդու նկատմամբ Աստուծոյ ողորմածութիւնն ու սէրն այնքան մեծ էին, որ Հայր Աստուած Իր Միածին Որդուն առաքեց մարդկանց մօտ, որպէսզի ամէն ոք, ով հաւատայ Նրան, չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Սա նշանակում է, որ Մարդու նորոգումն իրագործւում է Աստուծոյ հետ հաշտուելու, վերամիաւորուելու ճանապարհով, որ կատարւում է Աստուծոյ Միածին Որդու՝ մարմնաւորուած Բանի փրկարար խաչելութեամբ եւ հրաշափառ յարութեամբ[3]: Ուրիշ խօսքով՝ վերամիաւորումն ու փրկութիւնն իրագործւում են Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ առկայ յարատեւ յոյսով, անհուն հաւատով եւ բոցավառ սիրով: Աստուծոյ հետ մարդու վերամիաւորումն ու փրկութիւնն աստուածաբանական գրականութեան մէջ բնորոշւում են *աստուածացում* անունով: Մարդու աստուածացումն անկարելի կլիներ առանց Աստուծոյ մարդացման: Ուրեմն վերամիաւորումն այլ բան չէ, քան Աստուծոյ եւ մարդու փոխներթափանցման մի անվերջանալի գործընթաց, որի նպատակն ադամական անէծքի բարձումով մարդու նախամեղանչական վիճակի վերականգնումը, յաւիտենական կեանքի ժառանգումը եւ աստուածացումն է: Այս միտքն է դրուած Եկեղեցու հայրերի բազմաթիւ խորհրդածութիւնների հիմքում[4]: Ահա դրանցից մի քանիսը. «Աստուած միայն մարդասէր, եւ մարդ՝ միայն աստուածասէր. Աստուած՝ մարդոյ, եւ մարդ՝ Աստուծոյ. վասն մարդոյ՝ Աստուած մարդացեալ, եւ վասն Աստուծոյ՝ մարդ աստուածացեալ»[5]: Ս. Դիոնեսիոս Արեոպագացին գրում է. «Եւ այս ոչ կարէ այլազգ լինել, եթէ ոչ աստուածասցին ապրեալքն: Իսկ աստուածանալն է առ Աստուած նմանութիւն, որպէս հասանելի է եւ միաւորութիւն: ...Աստուածապետականն երանութիւն՝ բնութեամբ Աստուածութիւնն, սկիզբն աստուածանալոյ, յորմէ աստուածանալն է աստուածացելոցն»[6]: Հայ Առաքելական Եկեղեցու մարդաբանութեան հայելացումն են շարականների եւ տաղերի ներքոբերեալ հատուածները.

Զի ի սկզբան մարդն ցանկացաւ աստուածանալ
Եւ անդ ոչ հասաւ,
Իսկ Արարիչն եկեալ մարդացաւ,
Վասն այնորիկ մարդն աստուածացաւ[7]:

Եկա՛յք, որդի՛ք մարդկան, այսօր ողբասցուք զիօրն զվտանգ,
Որ մերկացաւ մեղօք զփառս Արարչին
Եւ զգեցաւ զթզենւոյն ծածկոյթ՝ փոխանակ անճառ լուսոյն,
Գովեցէ՛ք զՈրդին Աստուծոյ այսօր ցնծութեամբ, որդի՛ք Ադամայ,
Որ եկն ի խնդիր եղծեալ պատկերին
Եւ գտեալ նորոգեաց՝
ի փառս առաջին պատմուճանին[8]:

Կերպարանն Հաւր, առեալ զմերս,
Մնեալն տնաւրինաբար մարմնով՝
Խաչիւ եւ արեամբ ազատելով զբնութիւնս:
Զբնութիւնս վայր անկեալ նորոգ Ցարութեամբն Իւրով,
Ընդ Իւր վեր յարուցեալ փառաւք
Վեհից գերագոյն նստոյց յաթոռ փառաց[9]:

Հաւր կամաւ իջեալ՝ Որդին մարմին զգեցաւ,
Արեամբ եւ մահուամբ Իւր գնեաց զորդիս Ադամայ:
Ցարեաւ Ցարութիւն եւ կեանք, յարոյց զբնութիւնս,
Որով պարակից եղեալք վերին զուարթնոցն[10]:

5. ԱՍՏՈՒԾՈՑ ՈՐԴՈՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս արդէն նկատեցինք, Աստուծոյ հետ մարդու հաշտեցումն ու վերամիաւորումն իրագործւում են Աստուծոյ Միածին Որդու՝ մեր Փրկչի՝

2 Տե՛ս Ա. Տէր-Միքելեան, «Հայաստանեայց սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Տփխիս, 1900, էջ 97:
3 Տե՛ս В. Лосский, նշվ. աշխ., 182-183:
4 Այս մասին հանգամանալից նշում տե՛ս И. В. Попов, "Идея обожения в Древне-восточной церкви", "Вопросы философии и психологии", кн. 97, с. 165-213:
5 «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» (=ս. Եղիշէի մատենագրութիւնք), Վենետիկ, 1859, էջ 293, 320
6 «Եթէ գի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ գի՞նչ՝ այնորիկ դիտումն», «The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite", Lovanii, 1987, էջ 57-58
7 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1837, էջ 327
8 [կանոն Մեծի Երկուշաբաթին], «Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ յօրինեալ ի սրբոց Թարգմանչացն մերոց...» (=Շարական), Ս. Էջմիածին, 1861, էջ 236
9 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», Երեւան, 1981, էջ 103
10 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», Երեւան, 1987, էջ 128

© National Library of Armenia

Տէր Յիսուս Քրիստոսի ծնունդով, տնօրինական գործունէութեամբ, խաչելութեամբ եւ յարութեամբ: Ադամորդու գործած մեղքերի պատճառով նրա վրայ ծանրացած անէծքի պարտամուրհակը պատռում է Աստուծոյ տիեզերարծարծ կամքով եւ անսահման ողորմածութեամբ: Այն դրսեւորում է Բանի մարմնաւորումով եւ փրկագործական սխրանքով:

Խոսրով Անձեւացին ժամակարգութեան մեկնութեան մէջ գրում է. «Գթածաբար զմերս զգեցաւ մարմին կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն: ...Կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն եղեւ մարմնաւոր տնօրէնութիւն Որդւոյ»[11]: Նոյն այս միտքն է ընդգծում Սարգիս Շնորհալու Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ. «Կամօք Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն զմարմինն զգեցաւ (Որդին), որով չարչարեցաւն»[12]: Բոլոր ժամանակներից առաջ, պատմութիւնից դուրս առկայող աստուածային Բանը, մուտք գործելով պատմութեան մէջ, մարմնանում, մարդանում է սուրբ Կոյսի արիւնից՝ մարդկային բնութիւնը միաւորելով Իր աստուածային Անձին՝ դառնալով կատարեալ մարդ՝ կատարեալ Աստուածութեամբ: Հաւատոյ հանգանակում կարդում ենք. «Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկինից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով, Որով էառ զմարմին, զհոգի, զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք»[13]: **Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս** բառերով հերքւում է Մարկիոնի եւ Ապեղոսի հերձուածը, ըստ որի ոչ թէ Քրիստոս է ծնուել մօրից, այլ՝ Նրա մարմինը: Հերքման այս նոյն ոգին է տիրում եւ ս. Բարսեղ Կեսարացու «Ապօղինարի հերձուածողի տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին» երկի հետեւեալ տողերում. «Աստուած, կամելով երեւել, միացոյց Ինքեան մարմին՝ զկարելին երեւել. եւ, կամելով չարչարել, միացոյց Ինքեան մարմին անձնաւոր՝ զկարելին չարչարել. ո՛չ յառաջագոյն զգոյացեալն եւ յայնժամ ըստ առաքինութեան միաւորեալ եւ ո՛չ ի մարդոյ պարզաբար Մարիամայ, այլ, յառաջագոյն զնա սրբեալ, յայնժամ ի նմա ընկալաւ Աստուծոյն Բան զմարդկութիւնն եւ միացոյց Ինքեան, ըստ տնօրինութեանն, հոգեւոր մարմին. որպէս զի գոլ զմի եւ նոյն Աստուած եւ մարդ»[14]: Վերբանական այս իրողութեան պերճախօս բնորոշումն են պարունակում ս. Գրիգոր Լուսաւորչի հետեւեալ մտքերը. «Միացաւ ի մարմնի բնութեամբ եւ խառնեաց զՄարմինն Իւր Աստուածութիւնն, ...խառնեաց, միացոյց, ընկղմեաց զմարմինն յԱստուածութեան Իւրում»[15]: Պակաս կարեւոր չեն նաեւ ս. Յովհան Մանդակունի հայրապետի խորհրդածութիւնները. «...Բանին Աստուծոյ եկեալ յերկիր եւ եղեալ մարդ եւ մեռեալ իբրեւ զմարդ, այլ ըստ էութեանն Աստուած կոչի եւ ոչ՝ մարդ. եւ ըստ տեսչութեանն՝ Աստուած մարդացեալ եւ ոչ՝ մարդ աստուածացեալ: Մարդ յերկինս եւ յերկրի մի եւ նոյն Ինքն միացեալ միաւորեալ մարմնով եւ աստուածութեամբ...»[16]: Մամբրէ Վերծանողի ճառերից մէկում նոյն միտքը հետեւեալ կերպ է ձեւակերպուած. «Որ զանհնազանդութիւն մարդկան ընդ հնազանդութեամբն Բանին Աստուծոյ միաւորէ եւ հնազանդի աստուածախառն մարմնովն հաստարակաց Հօրն՝ փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, եւ ըստ Աստուածութեան առնու բարեբանութիւն ընդ Հօր ի հրաբուխ զօրացն»[17]: Քրիստոսի տնօրինական գործունէութիւնն, այսպիսով, իրականացնում է աստուածային եւ մարդկային բնութիւնների միաւորումով: Տնօրինութեան սկիզբը Բանի մարմնացումն է: Խորապէս գիտակցելով այս իրողութեան ճշմարտութիւնը՝ Յովհաննէս առաքեալը զգուշացնում է. «Ամենայն հոգի, որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս՝ մարմնով եկեալ, չէ նա յԱստուծոյ, եւ այս Նեռինն է, զորմէ լուարուք, եթէ գալոց է եւ արդէն իսկ յաշխարհի է» [Ա Յովհ. Դ 3]: Փրկչի տնօրինական գործունէութեան նպատակն Աստուծոյ եւ մարդու հաշտութիւնն ու միաւորումն է, որ կատարւում է Քրիստոսի երեք պաշտօնների գործադրումով՝ մարգարէական, քահանայական եւ թագաւորական: Այս երեք պաշտօնների նուիրագործումով է մարդը հաշտւում Աստուծոյ հետ եւ Աստուծոյ գործում մասնակցութեամբ ու ողորմութեամբ վերականգնում իր նախասկզբնական վիճակը: Ուրեմն, Քրիստոսի պաշտօններով են կատարւում այդ միաւորումը եւ ճշմարիտ կեանքի ոգեկոչումը:

Քրիստոս Իր մարգարէական պաշտօնով պսակն ու լրումն է քարոզխօսութեան: Նա, ի տարբերութիւն հին մարգարէների, որոնք խօսում կամ գործում էին Սուրբ Հոգու ներգործութեամբ, քննում օրէնքները, վերհանում անցեալի բոլոր ուսանելի դէպքերը եւ նախանշում ապագայում կատարուելիքները, գործում է Սուրբ Հոգու հետ՝ իբրեւ Հաւասարը Հաւասարի հետ. Նրանով է վերջանում հին ժամանակը, Նա Իր մէջ է ամփոփում անցեալը, ներկան եւ ապագան, Նրանով է օրէնքն ամբողջանում, էապոխւում եւ սկիզբը դառնում Աստուծոյ եւ մարդու նոր յարաբերութեան, որ իրագործւում է Շնորհի օգնութեամբ: Քրիստոս ոչ միայն Աստուծոյ խօսքի մատակարարն է, այլեւ՝ բուն Աստուծոյ Խօսքը, ոչ միայն մարգարէանում է, այլեւ Ինքը մարգարէութիւնն է, քանզի Նրանով է կատարուելու համընդ-

11 «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ՝ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխատասիրութեամբ Մեսրոպ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ» (=Հրահանգ), Մոսկուա, 1850, էջ 175, 176
12 Նոյն տեղում, էջ 175
13 Նոյն տեղում, էջ ԻԸ
14 «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ, լուղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց» (=Կնիք հաւատոյ), Ս. Էջմիածին, 1914, էջ 85-86

15 «Ագաթանգեղեայ պատմութիւն հայոց» (=Ագաթանգեղոս), Տփխիս, 1909, էջ 189
16 «Ի Սուրբ Երրորդութիւնն», «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի Ճառք», Վենետիկ, 1836, էջ 207
17 «Կորիւն Վարդապետի, Մամբրէ Վերծանողի, Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնք», Բ, Վենետիկ, 1939, էջ 55

© National Library of Armenia

հաւուր Դատաստանը:

Քրիստոսի տնօրինական գործունէութեան միւս ոլորտը քահանայական ծառայագործումն է: Քահանայական պաշտօնավարումով է իրականացւում Աստուծոյ եւ մարդու հաշտեցումը: Սակայն սկզբունքօրէն տարբեր է մինչեւ Քրիստոս առկայող օրինադատ քահանայագործումը՝ Քրիստոսով իրականացած քահանայագործումից: Ինչո՞ւ՝ որովհետեւ «ի հինն քահանայքն հանապազ մեղանչէին». ինչո՞ւ՝ որովհետեւ «ի հանապազ պատարագի կարօտանային: Իսկ Քրիստոս ոչ արար մեղս, այլ վասն մեր մի անգամ մատոյց պատարագ: Երկրորդ՝ զի նոքա մարմնաւոր եւ ժամանակեալ առնէին սրբութիւն, իսկ Քրիստոս՝ հոգեւոր եւ յաւիտենական: Երրորդ՝ զի ճշմարտութիւնն մի է, եւ օրինակք՝ բազումք...»[18]: Այսպիսով, Քրիստոս քահանայագործում է բովանդակ տիեզերքն Իր սրբարար Արեամբ մաքրագործելու եւ Խաչով ազատելու համար [տե՛ս Եբր. Է 27, Թ 14]: Ուրեմն, Քրիստոս եւ՛ քահանայապետ է, եւ՛ զոհ, եւ՛ պատարագիչ, եւ՛ պատարագ[19]: Այս ի մտի ունենալով՝ ս. Գրիգոր Լուսաւորիչն ասում է, որ Աստուծոյ Որդին «էջ ի ծառայութիւն, զի.Իւրով Մարմնովն լցցէ եւ կատարեսցէ զամենայն չափս կարգացն հանդիսի արդարութեանցն, զի միանգամայն բարձցէ զկարիս տկարութեամբ մարմնոյ մեղացն եւ միանգամայն Ինքն Ինքեան քահանայասցի Հօր Իւրում եւ միայն Ինքեամբ հաճեսցէ մատուսցէ զինքն պատարագ հաշտութեան Հօր Իւրում եւ նովին պատարագաւն մատուսցէ ընդ նմին զհաւատսն խոստովանութեան մերոյ»[20]: Աւելի յստակելով այս միտքը՝ Խոսրով Անձեւացին Ժամակարգութեան մեկնութեան մէջ գրում է. «Ցիշեսցո՛ւք զՏեառն մերոյ մարդասիրութիւնն, որ, Աստուծոյ գոլով Որդի... Իւրով մարմնովն կրեաց զչարչարանս խաչին... Ինքն Քահանայապետ եւ Ինքն Պատարագ ի նմա գոլով»[21]: Քրիստոսի փրկագործութեան այս խորհուրդն է ընկած առհասարակ Արեւելաքրիստոնէական պատարագի հիմքում[22]:

Սակայն Քրիստոս ոչ միայն ուսուցանում եւ նուիրագործում է, այլեւ՝ թագաւորում: Քրիստոսի թագաւորական պաշտօնավարութիւնը սկսւում է Նրա հրաշափառ Յարութեամբ: Համաձայն մարգարէութեան՝ Նրա թագաւորութիւնը յաւիտենական է [տե՛ս Դան. Բ 44]: «Թագաւորութեան Նորա

18 ս. Գրիգոր Տաթեւացի, «Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյն քաջ հռետորի աշխատասիրեալ է լուծումն Պարապմանց երգոյն Կիւրղի», կ. Պոլիս, 1717, էջ 651
19 Տե՛ս «Գիրք, որ կոչի Ոսկիփորիկ՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ», կ. Պոլիս, 1746, էջ 194-195:
20 Ագաթանգեղոս, էջ 302
21 Հրահանգ, էջ 205
22 Տե՛ս М. Живов, "Мистагогия Максима Исповедника и развитие византийской теории образа", "Художественный язык Средневековья" (сбор. статей), Москва, 1982, с. 108-127:

վախճան մի՛ լիցի» [Ղուկ. Ա 33],- վաւերացնում է Աւետարանը: Քրիստոս Իր արքայական զօրութեամբ աւերում է դժոխքը, խորտակում խաւարի իշխանութիւնը, ազատում Իրեն յուսացող հոգիներին[23]: Նրա թագաւորական իշխանութեան անվերապահ գործադրումով են բոլոր ժամանակների հանգուցեալ հոգիները ձերբազատւում աղամական անէծքից: Քրիստոսի թագաւորութիւնը չի ճանաչում ո՛չ տարածք, ո՛չ ժամանակ: Աստուծոյ թագաւորութեան մէջ իսպառ վերանում է հոգեւորի եւ նիւթականի հակասութիւնը: Նրանց յարաբերութիւնը վերածւում է լուսէ մի ներդաշնակութեան[24], քանզի Քրիստոս, իբրեւ Թագաւոր թագաւորաց, Տէր տէրաց, Իր մէջ լիովին միաւորում է աստուածութիւնն ու մարդկութիւնը: Այս մտանաւնելով՝ Մամբրէ Վերծանողը նկատում է. «Թագաւորն Ցիսուս, որ թագաւորէ ըստ արարչական զօրութեանն երկնի եւ երկրի, Թագաւոր է ըստ մարմնոյ, զոր ընդ արարչական բնութեան միացոյց»[25]: Քրիստոսի տնօրինական գործունէութեան տեսական բնութագրումից՝ փրկաբանութիւնից են սնւում տաղերի ներքոբերեալ հատուածները, որոնցում արծարծւում է Հօր եւ Որդու անդրանցական, մինչտնօրինական յարաբերութեան բնոյթը.

Որ յառաջ քան զյաւիտեանս, անժամանակ ծնեալ ի Հօրէ,
Անճառելի Բա՛նի Աստուած, որով եղեն երկինք եւ երկիր,
Օրհնեմք զՔեզ, Աստուա՛ծ հարցն մերոց...[26]

Էն՝ ի միշտ Էէն անեղապէս ծնունդ,
Մածկեալն յանքննին ծոցոյ,
Մագեալ ի Հաւրէ լուսոյ՝ աշխարհի լոյս[27]**:**

Էն Էին անէին
Եղանի էակ եղելի անեղիցն աներբից.
Ցաւիտեան անհաս իմանի անկէտ այժմուս հասու.
Մոցածագենի ծագումն ծիր մշտածաւալ անփոխ[28]**:**

Փրկչի ծնունդով սկսւող տնօրինական գործունէութեան նկարագրութիւնն է պարունակուած հետեւեալ հատուածներում.

23 Տե՛ս Ա. Տէր-Միքելեան, նշ. աշխ., էջ 195:
24 Համմտ. ս. Եղիշէի մատենագրութիւնը, էջ 288:
25 «Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի, Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնը», էջ 69
26 [Կանոն Երկրորդ Կիրակէի Աղուհացից], Շարական, էջ 128
27 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 103
28 Նոյն տեղում, էջ 108

© National Library of Armenia

Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար
Եւ մարմնացար ի սուրբ Կուսէն,
Զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ:
Դո՛ւ, Աստուա՛ծ, ի յերկրի երեւեցար
Եւ ընդ մարդկան շրջեցար
Եւ փրկեցեր զտիեզերս յանիծից Ադամայ:

Տնօրինեցար յարգանդի Կուսին իսկակից Հօր եւ Սուրբ Հոգւոյն
Բանն՝ առաքեալ ի Հօրէ յաղագս նախաստեղծ մարդոյն՝
Բառնալով զյանցանս:

Մնաւ ծնեալն ի Հաւրէ,
Զմեզ ազատեաց յանիծից,
Կեանք ի կենաց յայտնեցաւ
Մեզ կեցուցիչ եւ փրկիչ[29]:

Միակն ի Միոյն յանսկիզբն էէն աներեւ՝
Մնեալ նոյնաբար անժամանակ Որդին:
Որդին Աներեւին եղելոց էակ ընդ Հաւր՝
Հոգով ներգործեալ զարարածոց գոյակս[30]:

Ներպարուրակեալ խորհուրդ լուսոյն ի հրեղինաց
Այսաւր, ի յերկրի յայտնեալ, ցուցաւ հողեղինացս:
Էական Բանին բնութիւն մարմնով պարածածկեալն
Այսաւր ի Թաբաւր արտափայլեալ պայծառ ծագմամբ[31]:

Շարականներում եւ տաղերում իրենց արժանի արտացոլումն են գտել Քրիստոսի տնօրինական գործունէութեան երկու կարեւորագոյն ոլորտները՝ քահանայապետութիւնն ու թագաւորութիւնը: Ահա դրանց բնորոշումը պարունակող առաւել ներկայանալի հատուածներից մի քանիսը.

Սարսեցին սանդարամետք ի յաւանդելն առ Հայրն զհոգիդ,
Որ ի դժոխս իջեր ներքին՝
ի բանտ մահու եւ խաւարին,
Կապեալ զիշխանն մահածին՝
Հաներ զհոգիսն, որ ի բանտին,

29 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 46-47
30 Նոյն տեղում, էջ 184
31 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 155

Եւ զիս հանցես, Տէ՛ր, ընդ նոսին՝
Բանտէ մեղաց աղջամղջին[32]:

Արարիչդ արարածոց Քրիստո՛ս՝ այսօր ի խաչին բեւեռեալ,
Եւ զինաւորն, գեղարդեամբն յարձակեալ, զկող Քո խոցեաց,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց:
կենդանիդ յաւիտենից Քրիստոս, այսօր ի գերեզմանի եղար,
Եւ պահապանքն պահէին զգուշութեամբ զգերեզման Քո,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց,
Յարեար ի մեռելոց, Քրիստոս, այսօր՝ զդժոխս աւերեալ,
Եւ կենդանութիւն պարգեւեցեր արարածոց Քոյով Յարութեամբդ...[33]

Ահա՛, ելէ՛ք դուք ի յայրին,
Երկիր պագէ՛ք Թագաւորին:
Ընդ նովիւսն երգեցէ՛ք
Եւ ընդ մոգուցն երկի՛ր պագէք.
Ահա՛ զոսկին Թագաւորին,
Ջխունկն՝ Աստուծոյ Հաւր միայնոյ[34]:

Ճշմարիտ Մելքիսեդեկ՝ անմայրն յառաջ,
Այսաւր անհայր ծնանի:
Մննդեամբն, որ ի Կուսէն,
Զաւրէնս բնութեան ելոյծ զծնելոց[35]:

6. ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Լինելով Աստուածութեան Անձերից մէկը՝ Աստուծոյ Հոգին պատշաճօրէն **Սուրբ** ստորոգելիք է կրում, որով Նա տարբերւում է ադամորդիների հոգիներից: Սուրբ Հոգու գործունէութեան նպատակն Աստուծոյ արքայութեան ստեղծումն է իւրաքանչիւր անհատի մէջ եւ սրա շնորհիւ նրա վերածումն է Աստուծոյ տաճարի: Ուրեմն, Սուրբ Հոգու անձնաւորական գործունէութեան տարածքն անհատ եկեղեցին (հաւատացեալը) եւ հաւաքական Եկեղեցին (հաւատացեալների խումբն) է: Իր ներկայութեամբ Նա արդիւնաւորում է նրանց գործունէութիւնը: Նա աստուածային ծրագրի

32 [Երգ տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի՝ ասացեալ յաղագս Մեծի Ուրբաթու...], Շարական, էջ 272
33 [Կանոն Աշխարհամատրան Կիւրակէիցն], Շարական, էջ 338
34 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 96
35 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 28-29

© National Library of Armenia

իմանենտ գործադրողն ու Քրիստոսի միջոցով Աստուծոյ եւ մարդու յարաբերութիւնը կարգաւորողն է: Սուրբ Հոգու գործունէութեան այս բնոյթը լաւագոյնս մեկնաբանում է Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս. «Եթէ սիրէք զԻս, զպատուիրանս Իմ պահեսջիք: Եւ Ես աղաչեցից զՀայր, եւ այլ Մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցի ի յաւիտեան: ԶՀոգին ճշմարտութեան, զՈր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ո՛չ տեսանէ զՆա եւ ո՛չ ճանաչէ զՆա: Բայց դուք ճանաչէք զՆա, զի առ ձեզ բնակեսցի եւ ընդ ձեզ եղիցի» [Յովհ. ԺԴ 15-17]: Յետոյ աւելացնում է. «Զայս խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզ եմ: Իսկ Մխիթարիչն՝ Հոգին Սուրբ, զՈր առաքեսցէ Հայր յանուն Իմ, Նա ուսուսցանէ ձեզ զամենայն եւ յիշեցուսցէ զամենայն, զոր ինչ ասացի ձեզ» [Յովհ. ԺԴ 25-26]: Քրիստոսի այս խօսքերի մէջ դրսեւորւում է բնոյթով նոյնական Որդու եւ Հոգու անձնաւորական տարբերութիւնը, որ պայմանաւորուած է Հօր նկատմամբ Նրանց փոխադարձ յարաբերակցութեամբ. ինչպէս Հոգին, այնպէս էլ Որդին մխիթարիչ է, սակայն Հոգին առաքուած է յանուն Որդու, որպէսզի վկայի Նրա մասին: Հոգին տարբերւում է նաեւ Հօրից, սակայն Նրա հետ միաւորուած է Իրեն յատուկ բխման յարաբերութեամբ, ի տարբերութիւն Որդու ծնունդով յատկորոշուող յարաբերութեան: Աւետարանում Որդին եւ Հոգին մեզ ներկայանում են որպէս աշխարհ առաքուած երկու Աստուածային Անձեր: Նրանից Առաջինն առաքուած է, որպէսզի միաւորի մեր բնութեանը եւ առողջացնի այն, իսկ Երկրորդը՝ որպէսզի վերակենդանացնի մեր անձնական ազատութիւնը: Այս իրողութեամբ հանդերձ՝ Որդին եւ Հոգին (մերձ լինելով Հօրը) անդրանցական յարաբերութեան մէջ են աշխարհի նկատմամբ[36]: Աստուածաբանական այս կանխադրոյթներն են ընկած Հայ Եկեղեցու Հաւատոյ հանգանակի հիմքում. «Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յԱնեղն եւ ի Կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն»: «Անեղ եւ կատարեալ զՆա դաւանեմք,- ասում է ս. Ներսէս Լամբրոնացին,- անեղ՝ վասն զի ի բնութենէ Հօր բղխումն անճառելի... եւ որ անեղ է, յայտ է, զի արարիչ եղելոց է, վասն որոյ արարչակից Հօր եւ Որդւոյ խոստովանիմք...»[37]: Հօր, Որդու եւ Հոգու այս յարաբերութիւնն է պարզաբանում Սարգիս Շնորհալին Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ. «Թէպէտ անձնաւորութեամբ որոշեալ են Որդի եւ Հոգի ի Հօրէ, սակայն աստուածութեամբն ոչ բաժանին եւ ո՛չ բնութեամբ եւ ո՛չ էութեամբ»[38]: Բնութեամբ լինելով

36 Տե՛ս В. Лосский, նշւ. աշխ., էջ 138:
37 Տե՛ս Հրահանգ, էջ Խ-ԽԱ: Սուրբ Հոգու՝ Հօրից բխելու մասին հանգամանալից տե՛ս «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն» (=Գիրք հարցմանց), Կ. Պոլիս, 1729, էջ 62-66. նաեւ՝ В. Болотов, "К вопросу о Filioque", Санкт-Петербург, 1914:
38 Հրահանգ, էջ 153

նոյնական՝ Սուրբ Երրորդութեան Անձերը հաւասար են Իրենց վայելուչ պատւով. «Խոստովանիմք եւ դաւանեմք, պաշտեմք եւ երկրպագեմք զզուգափառ միութիւն Ամենասուրբ Երրորդութեան՝ Աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ...»[39]: Բխելով Հօրից՝ Նա չի դադարում Աստուած լինելուց. «Զի Հայր ծնաւ զՈրդի եւ ի ծնանելն ոչ փոխեցաւ ի բնութենէն եւ ոչ անկաւ յԱստուածութենէն: Նմանապէս եւ Հոգին Սուրբ, որ ի Հօրէ ելանէ, որոշեալ անձնաւորութեամբ եւ ոչ՝ որոշեալ բնութեամբ կամ Աստուածութեամբ»[40]: Աստուծոյ Միածին Որդին Սուրբ Հոգու ներգործութեամբ է աշխարհ գալիս՝ մաքրելով Տիրամօր արգանդը Սուրբ Հոգու օրհնեալ ներկայութեամբ: Սուրբ Հոգու այդ ներկայութեամբ է օծւում Քրիստոս մկրտութեան պահին:

Սուրբ Հոգու մասնաւոր ֆունկցիան, Նրա իմանենտ գործունէութիւնը շնորհաբաշխութիւնն է: Հայ եւ ոչ միայն հայ վաղ միջնադարեան աստուածաբանութեան մէջ ներկայացւում են Սուրբ Հոգու 7 եւ 9 շնորհներ: Սուրբ Հոգու 7 շնորհներն են իմաստութիւնը, բանականութիւնը, խորհրդազգածութիւնը, հզօրութիւնը, գիտութիւնը, բարեպաշտութիւնը, աստուածավախութիւնը: Յենուելով Ա Կորնթ. ԺԲ 4-11 տեղիքի վրայ՝ հայ աստուածաբանները յայտանշում են Սուրբ Հոգու 9 շնորհները՝ հետեւեալ եռակարգմամբ[41]. ա) վարդապետական, որի մէջ մտնում են իմաստութիւնը, ճանաչողութիւնը եւ հոգիների ընտրութիւնը, բ) աւետարանչական՝ հաւատքը, բժշկութիւնը, հրաշագործութիւնը, գ) հոգեկրական՝ մարգարէութիւնը, լեզուախօսութիւնը, թարգմանութիւնը: Ինչպէս տեսնում ենք, Սուրբ Հոգու շնորհները բազմաբնոյթ ու բազմաբովանդակ են, սակայն նրանց նպատակը մէկ է՝ մարդ-անհատի եկեղեցագործումն ու փրկութիւնը: Սուրբ Հոգու բնոյթի, ներգործութեան վերաբերեալ աստուածաբանական այս խորհրդածութիւնների արձագանքն են շարականների եւ տաղերի հետեւեալ հատուածները.

Որ էակիցդ ես ընդ Հօր եւ փառակից՝ Միածնիդ,
Բաշխող պարգեւաց եւ տուող ողորմութեան,
ԶՔեզ բարեբանեմք, Սո՛ւրբ Հոգիդ ճշմարիտ[42]:

Ի Հաւրէ բղխո՛ւմն անսպառ,
Որդւոյ փառակից Հոգի՛ Աստուծոյ,
Ի ջուրց վերաստեղծի՛չ կենդանեաց՝

39 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Երեւան, 1985, էջ 386 (Բան ԼԴ, Գ)
40 Հրահանգ, էջ 139
41 Տե՛ս Ա. Տէր-Միքելեան, նշւ. աշխ., էջ 243:
42 [Կանոն Չորրորդ Կիւրակէի Աղուհացից], Շարական, էջ 175

© National Library of Armenia

Զգալեաց յառաջնումն եւ իմանալեաց յերկրորդումն,
Առ որ պաղատիմք հայցմամբ մաղթանաց
Ժողովեալքս առաջի Քո՝
Հեղուլ առատապէս զշնորհաց Քոց զանազանութիւն
ի յիւղս այս սրբութեան,
Ըստ էակցի Քո մարդեղութեան ի մեզ ընկարեալ
Զհոգի իմաստութեան եւ հանճարոյ,
Զհոգի խորհրդոյ եւ զաւրութեան,
Զհոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան,
Զհոգի երկիւղի Աստուծոյ եւ որդեգրութեան,
Լինուլ սովաւ դրոշմեցելոցն *եաթնարփեան* շնորհի Քո
առատութեամբ՝
Բարեխաւսութեամբ մաքրեալ հոգւոց Քոց բնակութեան...[43]

Մառագայթ անճառ լուսոյ անքննելի՛ տէրութիւն,
Ցառաջագոյն հրաշացուցեր զտեսողութիւն մարգարէիցն՝
Իջանելով ի ստորինս աստուածային տնօրէնութեամբ:
Որք զտաճար հաւատոյ հիմնեցուցին շնորհօք Սուրբ Հոգւոյն,
Ցոր եմուտ Բանն Աստուած *եօթնարփեան* ճառագայթիւք...[44]

Իսկ ս. Գրիգոր Նարեկացու՝ Սուրբ Հոգու գալստեանը նուիրուած տաղում խօսւում է ոչ միայն Սուրբ Հոգու եօթնարփի շնորհների, այլեւ՝ այդ շնորհներով եկեղեցագործելու, ադամորդուն Աստուծոյ տաճար դարձնելու մասին.

Ցանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն
Հրահոսավտակ բոցաշաւիղ եռանդն, որոյ դրանդն ի յերկինից
Հողմահնչեաց բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուացն:
Ի ձայն բիւրակերպ՝ օդինատիպ լրումն,
Աւետաբարոզ՝ տրտմականաց դասուց,
Պետրոսեան երամ՝ հրաւիրողակ բարեաց:
Հրով մաքրողին վեր առաքեմք
Իննաբար երգ ի նա մէտ՝
Եւթնաղի շնորհաց Հոգւոյն Սրբոյ:
Հոգի Հօր, ելումն ընչնատիպ դիմաց,
Հոգի Աստուծոյ,
Հոգի զօրութեան,
Հոգի հեզութեան,
Հոգի գիտութեան, իմաստութեան,
Հոգի խորհրդոյ եւ հանճարոյ:
Մի՛ իմոյ եւ զիս մի՛ դատապարտեր,
ԶՔո ձեռին շինեալ տաճարս. յի՛ս օթեւանեա,
Քո կամելդ գործ է կատարեալ:
կամեցո՛ղ բարեաց, բարեգործեա՛ յիս՝ ի բազմամեղս,
Երգել երգենից պատիւ միշտ Էականիդ՝ կամաւ Քո,
Եւ զիս վերանորոգեա՛ ի փառս[45]:

7. ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Հոգու ներգործման արդիւնքը ոչ միայն անհատ մարդու տաճարացումն է, այլեւ՝ նման մարդկանցից կազմուած հաւատացեալների խմբի տաճարացումը, որ ոչ այլ բան է, քան Եկեղեցի: Սուրբ Հոգու օթեւան դարձած Եկեղեցին Աստուծոյ արքայութեան տեղավայրն է, ուր մարդ, հաղորդակցուելով Աստուծոյ հետ, վայելում է Տիրոջ արքայութիւնը: Ուրեմն, մարդու եկեղեցագործումից է ծնւում երկրաւոր Եկեղեցին, որ երկնաւոր Եկեղեցու պատկերն է: «Եւ ինչպէս որ Աստուծոյ արքայութիւնն իրականանում է հաւատացեալ անհատի սրտում ու Եկեղեցի դարձնում նրան,- նկատում է Ա. Տէր-Միքելեանը,- եւ ապա ճշմարիտ հաւատացեալի վրայ հիմնւում է իւրաքանչիւր Եկեղեցին՝ որպէս իւրաքանչիւր առաքեալի եւ աւետարանչի վրայ, այնպէս էլ Աստուծոյ արքայութիւնը հաստատւում է երկրում՝ նախ Եկեղեցու մէջ իրագործուելով, եւ ապա իւրաքանչիւր Եկեղեցու վրայ հաստատւում է հանդերձեալ փառաց արքայութիւնը»[46]: Այսպիսով, Եկեղեցին ոչ միայն հաւատացեալների հանդիպավայրը կամ հաւաքատեղին է, այլեւ, որ առաւել կարեւոր է, հոգեւոր մէկտեղումը Քրիստոսով եւ Քրիստոսի մէջ, երբ նրանք, Սուրբ Հոգով լցուած, Քրիստոսը կրելով իրենց մէջ, դառնում են մէկ սիրտ եւ մէկ հոգի՝ իրականացնելով Աստուծոյ արքայութեան տիեզերական ծրագիրը, մի ծրագիր, որ չի ենթարկւում ժամանակի եւ տարածքի սահմանափակումներին: Ի մտի ունենալով այս իրողութիւնը՝ Սարգիս Շնորհալին Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ գրում է. «Ցամենայն ազգաց եւ լեզուաց, որք աշակերտեցան Աւետարանին եւ հաւատովք ի Վէմն մերձեցան եւ մարդասիրութեամբն ի նոյն կենդանութիւն փոխեցան, յամենեցունց մի տաճար հոգեւոր եւ մի Եկեղեցի շինեցաւ»[47]: Բոլոր քրիս-

43 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 327
44 [Կանոն սրբոց Մարգարէից], Շարական, էջ 523

45 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 111
46 Ա. Տէր-Միքելեան, նշվ. աշխ., էջ 247
47 Սարգիս Շնորհալի, «Մեկնութիւն կաթողիկեայ թղթոց», կ. Պոլիս, 1826, էջ 242

© National Library of Armenia

տոնեաները Քրիստոսի մէկ Եկեղեցի են կազմում: Սակայն նրանք սոսկ կրաւորական անդամը չեն Եկեղեցու. քրիստոնեայ հաւատացեալը, որ Աստուծոյ տաճարն է, միաժամանակ անդամն է գիմուորեալ Եկեղեցու, որ մարտնչում է սատանայի դէմ: Այս կապակցութեամբ աւելի քան յատկանշական է Պօղոս առաքեալի կոչը՝ ուղղուած հաւատացեալներին. «Զօրացարո՛ւք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա: Եւ զգեցարո՛ւք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան, որ ի ներքոյ երկնից: Վասն այսորիկ առէ՛ք զսպառազինութիւնն Աստուծոյ... առէ՛ք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէ՛ք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ» [Եփես. Զ 10-17]:

Բայց Եկեղեցի են կազմում ոչ միայն ողջերը, այլեւ՝ Քրիստոսով ննջեցեալները: Պատարագի պահին նրանք եւս մասնակցում են կատարուող Խորհրդին: Սրանք կազմում են Յաղթող Եկեղեցին: Այս մասնաւորելով եբրայեցիներին յղած թղթում՝ առաքեալը նկատում է. «Մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս, եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց եւ յԵկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած եւ յոգիս արդարոց կատարելոց» [Եբր. ԺԲ 22-24]:

Սուրբ Հոգու շնորհներով համալրուած Եկեղեցին իր Հիմնադրի՝ Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած յարաբերութեան բնոյթով չորս էական նշաններ ունի՝ միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, առաքելականութիւն. ա) Եկեղեցին մէկ եւ միակ է, նրա գլուխը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, մէկ եւ միակն է այն առաջնորդող Սուրբ Հոգին: Ուրեմն, Եկեղեցին ունի միաւորող զօրութիւն: Անդրադառնալով այս իրողութեանը՝ ս. Յովհան Օձնեցի հայրապետը գրում է. «Այն աշտարակ զմի լեզուն ի բազումս բաժանեաց եւ զչար միաբանութիւնն յաւիտենից քակեաց ի միմեանց. եւ այս աշտարակ զքակեալսն եւ զանջատեալսն ած ի մի՝ համաշունչ եւ միախորհուրդս զամենեսեան առնելով ի մի յոյս կոչմանն Քրիստոսի»[48]. բ) Եկեղեցին սուրբ է, քանզի սուրբ է նրա գլուխը՝ Տէր Յիսուս Քրիստոս: Ինչպէս Տէր Յիսուս Քրիստոս, այնպէս էլ ս. Եկեղեցին, իր սրբագործութեամբ կամ սրբարար ներգործմամբ նորոգում է հաւատացեալին՝ նրան արժանի դարձնելով արքայութեան. գ) Եկեղեցին ընդհանրական կամ կաթողիկէ կազմակերպութիւն է, քանզի նրա գործունէութիւնը լայն ընդգրկում ունի, իսկ նրա ազդեցութեան ոլորտներն անսահմանափակ

48 «Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 136

են: Նա կոչուած է Աստուծոյ արքայութիւնը տարածել եւ Սուրբ Հոգու ներգործմամբ իրականացնել աշխարհի աւետարանագործումն ու տաճարացումը: Եւ այստեղ արդէն ոչ մի խտրութիւն չի կարող լինել. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք,- նկատում է Պօղոս առաքեալը,- զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղատ. Գ 27-28]. դ) Եկեղեցին առաքելական է, քանզի հիմնադրուած է Քրիստոսի առաքեալների կողմից, որոնք, Սուրբ Հոգով լցուած, Քրիստոսի լոյսը բերեցին ազգերին, ժողովուրդներին: Նրանք որպէս սիւներ հիմնուած են Քրիստոսի՝ որպէս ամրաամուր վէմի վրայ: Առաքեալները Սուրբ Հոգու աւանդութեան կրողներն ու հաղորդիչներն են: Նրանք այդ աւանդութիւնը հաղորդում են Եկեղեցուն, որը, կրելով այն, ձեռք է բերում ե՛ւ միութիւն, ե՛ւ ընդհանրականութիւն, ե՛ւ սրբութիւն: Եկեղեցաբանական այս գաղափարի հաստատագրումն են ս. Եղիշէի՝ Տիրոջ թաղումը նուիրուած ճառի հետեւեալ տողերը. «Շինեցաւ (Եկեղեցին) ի վերայ Պետրոսի հաւատոցն ոչ միայն ի Հռոմ, այլ եւ՝ ընդ ամենայն քաղաքս եւ գեօղս մեծամեծս մինչեւ ցփոքրունս՝ նոյն հաւատք եւ նոյն հիմն եւ նոյն հաստատութիւն, քանզի մի է Տէր, եւ մի՝ մկրտութիւն... Եւ որպէս Պետրոս ի Հռոմ հաստատեաց զԵկեղեցին, նոյնպէս եւ այլ առաքեալքն՝ ըստ իւրաքանչիւր վեճակեցելում աշխարհացն»[49]: Հոգեւոր Եկեղեցին ունի իր նիւթական կերպարանքը, որ Եկեղեցում կիրառուող սրբազան պատկերները, առարկաներն ու եկեղեցական ճարտարապետութիւնն են իրենց համաքրիստոնէական խորհրդանշաններով: «Ոչինչ անվայելուչ եւ անսրբազան է ունել (խորհրդոց Եկեղեցւոյ) զգալի պատկերս,- ասում է ս. Դիոնեսիոս Արեոպագացին,- այլ աստուածարժան տեսութեան է՝ օրինակս կերպարացուցանել բնաւորականօք եւ մարդկավայելուչ պատկերօք»[50]: Ս. Գրիգոր Լուսաւորչի Տեսիլքում ասում է. «Մեծ եւ բարձր է պատիւ Կաթողիկէ Եկեղեցւոյ, քան զամենայն սրբոցն. իսկ կամարքն, որ ի սեանց անտի ի միմեանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ: Իսկ խորանն ի վերայ ունի զօրինակ Վերնոյ Քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեան երկնից»[51]: Եկեղեցաբանական այս խորհրդածութիւնների վրայ են հիմնուած տաղերի ներքոբերեալ հատուածները.

ԶԱստուած ընդ մարդկան ընտանեցուցիչ.
Համանուագ ազանց կուտելոց՝ յոյս քաւութեան պարտաւորելոց,

49 Հրաչեայ, էջ 291
50 Նոյն տեղում, էջ 291-292
51 Ագաթանգեղոս, էջ 389

© National Library of Armenia

Նախացուցակ համարձակելոց,
Կատարելոց անձանց խմբարարն.
Ահա ընկալցիս զաղերս աղաւթից՝ յարմարեալ խնկաւք
Ցայս յարկ նուիրեալ, սո՛ւրբ Եկեղեցի, աղաչեմք[52]:

Քառանկիւն տաճար՝ գերահրաշ ծագմամբ,
Չքափանցիկ լուսով ճառագայթեալ
Ի մէջ տիեզերաց այսաւր, սո՛ւրբ Եկեղեցի.
Աւրինակ տապանակին, զոր Մովսէս կազմէր
Ի մէջ իսրայէլազունդ ժողովոյն՝
Դնելով ի նմա զբուրվառն ոսկի շուրջանափայլ խոյակաւք...[53]

Եկեղեցի-երկինք աստուածաբանական զուգահեռից են ծնուել ս. Ներսէս Շնորհալու՝ Եկեղեցուն նուիրուած տաղի հետեւեալ քառեակները.

Բարունիքն քեւ պարծին
Սրբոց սրբասնեալ անձինք,
Որ ես գերագոյն երկնից՝
Նորահրաշ յերկրի յայտնեալ[54]:

Առաքելական հիմն,
Մարգարէից քարոզ,
Երկնանման երկինք
Ի քեզ հաստատեալ սեղան[55]:

Հայ եւ ոչ միայն հայ միջնադարի եկեղեցաբանութեան մէջ եկեղեցու ճարտարապետական մանրամասների լայնօրէն յայտնի խորհրդանշական մեկնաբանութիւններից է սնուել հեղինակը հետեւեալ տողերում.

Եղեալ ի հիմունս քո քարինք պատուականք՝ յասպիս, կարկեհան՝
Չդասս առաքելոցն եւ մարգարէից.
Քաղաք Աստուծոյ ուրախացեալ գնացիւք գետոց, ո՛վ սուրբ Եկեղեցի:
Սիւնս եաւթն կանգնեալ ի քեզ ճարտարապետն՝
Զեաւթնարփեալ շնորհն պէս-պէս պարգեւաւք Հոգւոյն

52 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 168
53 Նոյն տեղում, էջ 186
54 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 177
55 Նոյն տեղում, էջ 173

բաժանմամբ.
Տուն իմաստութեան, յորում խառնի գինին ուրախարար, ո՛վ սուրբ Եկեղեցի:
Ի նոյն պարիսպ քո շինեալ աշտարակ ոսկեղէնս.
Պատուար արծաթի, դրունք երկոտասան մի մի մարգարտեայ.
Մայրաքաղաք Վերին Երուսաղէմ, ո՛վ սուրբ Եկեղեցի[56]:

8. ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Եկեղեցու խորհուրդն անխզելիօրէն կապուած է Տիրամօր անուան հետ: Տիրամայրը Եկեղեցու նախատիպն է: Ինչպէս Եկեղեցու վերածնուած հաւատացեալն է իր մէջ կրում Քրիստոսին, այնպէս էլ Տիրամայրը, որպէս սրբազնասուրբ Եկեղեցի, իր մէջ կրում է Աստուածորդուն: Տիրամայր-Եկեղեցի աստուածաբանական զուգահեռն է ընկած, մասնաւորաբար, ս. Գրիգոր Նարեկացու՝ Աստուածածնին նուիրուած ներբողի տեսական դրոյթներից մէկի հիմքում: «Մարդեղացած Բանն Իր պատկերին ձեւած է Մարիամն ու Եկեղեցին՝ Իր փրկարար շնորհով,- այս կապակցութեամբ մեկնաբանում է Թ. Տասնապետեանը:- Անոնք կը վերաբերին Քրիստոսի եւ կ'առնչուին իրարու: Անոնց նմանութիւնները հոսկէ կը բխին: Երբ մեծացուցէն լեցուց Զաքարիայի տունը, Մարիամ Եկեղեցիին սկզբունքն ու տիպն է (տե՛ս գլ. ԺԲ)... Այնուհետեւ Մարիամ երեւան կու գայ իբր «պսակ պիտանական Եկեղեցւոյ գեղեցկութեան». ան Եկեղեցւոյ մէկ հոյակապ իրագործումն է...»[57]: Սակայն Կոյսն, ըստ Նարեկացու, նաեւ Եկեղեցու մի սովորական անդամն է: Եւ, այնուհանդերձ, նա աւելի քան անդամ է. «Մարիամ մայր է Եկեղեցիի նկատմամբ»: Եւ իրապէս, ներբողի ԻԵ գլուխը Տիրամօրը ներկայացնում է որպէս «մայր հիմնադրութեան Եկեղեցւոյ»: Ուրեմն, պատահական չէ, որ Աղօթամատեանի ՀԵ բանում Եկեղեցին Աստուածածնի պատկերն է համարւում[58]: Ինչպէս Բանն է մարդեղանում Տիրամօր մէջ եւ մաս կազմում Տիրամօր՝ անդամակցելով նրան, այնպէս էլ հաւատացեալն է ոգեղինանում Եկեղեցու մէջ եւ մաս կազմում Եկեղեցու՝ անդամակցելով նրան: Երկու դէպքում էլ ի յայտ է գալիս որդիական յարաբերութիւն, որ այս պարագային յարաբերութիւն է *ոչ միայն երկնաւոր Հօր նկատմամբ, այլեւ՝ Մարիամի՝ Տիրոջ երկրաւոր*

56 Նոյն տեղում, էջ 170: Պէտք է նկատել, որ եթէ «Եկեղեցի=Մայրաքաղաք=Վերին Երուսաղէմ» զուգահեռը գալիս է եկեղեցաբանական գրականութիւնից (տե՛ս Յ. Քեոսէեան, «Յովհան Մայրագոմեցին եւ հայ միջնադարեան խորհրդանշանի աստուածաբանութեան մի քանի հարցեր», Ս. Էջմիածին, 1986, Ա, էջ 50-62), ապա պատկերի միւս մանրամասները՝ Յայտ. ԻԱ 17-18-ից:
57 Թ. Տասնապետեան, «Գ. Նարեկացի, «Ներբող Աստուածածնին»», «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 141-142
58 Տե՛ս նոյն տեղում, էջ 142:

© National Library of Armenia

մօր եւ քրիստոնեաների հոգեւոր մօր ընկատմամբ: Ուրեմն, Աստուածածնի միջոցով է իրականացւում հաւատացեալի եւ Աստուածութեան հոգեւոր փոխյարաբերութիւնը: Սա ի յայտ է բերում Աստուածածնին-Եկեղեցու շարունակական գործունէութեան իմանենտ մակարդակը: Սակայն այս մակարդակն ինքնաճին չէ. այն պայմանաւորուած է անդրանցական խորախոր իրականութեամբ, այսինքն՝ նրանով, որ Տիրամայրն Աստուածածնին է: Այս միտքը կարմիր թելի նման անցնում է Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաբանութեան միջով: Տիրամօր՝ **Աստուածածին, Աստուածընկալ** լինելը, որ ըստինքեան պարզ ու հասկանալի է, առանձին ուժգնութեամբ շեշտուեց Եփեսոսի տիեզերաժողովի (431թ.) ժամանակ՝ ժխտելու համար Նեստորականների այն պնդումը, թէ Տիրամայրը մարդածին է: *Աստուածածին* եւ *Աստուածընկալ* պատուանունների լոյսի տակ է միայն կարելի տեսնել Աստուծոյ մարդեղութեան յայտնութենական խորքը: Իսկ այդ մարդեղութիւնն իրականութիւն է դառնում Տիրամօր աստուածային մայրութեամբ: Մարիամն այդ մայրութիւնը յանձն է առնում՝ Աստուծոյ կամքին անվերապահօրէն ենթարկուելով («ընդունարան ընտրական կամացն աբբաւին»). ս. Գրիգոր Նարեկացու որակմամբ՝ «նա միւթ գործօնեայ է»: Սա մատնանիշ է անում ոչ միայն Տիրամօր՝ մարդեղութեան գործիք, այլեւ՝ *ուղղակի եւ դրական պայման* լինելը[59]: Հայ Եկեղեցու մարեմաբանութեան մէջ Մարիամի մայրութեան գաղափարը երկու հիմնական սկզբունքներով է դրսեւորւում՝ աստուածաբանական եւ քնարերգական: Այսպէս՝ Նարեկացու ներբողում գերակշռում է աստուածաբանական կողմը, իսկ Ներսէս Լամբրոնացու ճշմարտութ «Ներբողեան ի վերափոխումն ամէնօրհնեալ Աստուածածնին»[60] երկում՝ քնարերգականն ու ընկարագրականը: Սակայն թէ՛ մէկ եւ թէ՛ միւս դէպքում այդ կողմերը չունեն անխառն դրսեւորում. աստուածաբանական ներբողն ազատ չէ քնարերգականութիւնից, իսկ քնարերգականը՝ աստուածաբանութիւնից: Այսպէս են նաեւ շարականներն ու տաղերը: Ելնելով դրանցում առկայ տուեալներից՝ Մարիամի մայրութիւնն ունի երկու գլխաւոր հանգրուաններ, որոնց մէջ նա ներկայանում է յղացման պարագաներով եւ մայրութեան իրաւունքներով: Այս երկու իրողութիւնները վաւերացումն են Բանի մարդեղութեան:

Բանի մարդեղութիւնից է սկսւում փրկագործական ընթացքը: Ուրեմն, փրկագործական տնօրինութեան «պայման» հանդիսացող Տիրամայր Աստուածածինը դառնում է գործուն մասնակիցը փրկագործութեան: Եւ իրապէս, ինչպէս նկատում է Ցովհան Դամասկացին, «**Աստուածածին** անունը (թէոդոկոս) յինքեան կը բովանդակէ աստուածային տնտեսութեան լրիւ

59 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 125:
60 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 360-366, 442-462:

պատմութիւնն աշխարհի մէջ»[61]: Նա իր շնորհական ազդեցութեամբ վերացնում է նախամայր Եւայի վրայ ծանրացած անէծքը՝ դառնալով բոլոր *կենդանեաց* ճշմարիտ մայրը (Եպիփան Կիպրացի): Աստուածածնին վերապահուած այս կարեւորագոյն առաքելութիւնն ու բացառիկ շնորհը նրան գերադաս են դարձնում նոյնիսկ հրեշտակների եւ քերովբէների նկատմամբ, որոնք անկարող են ըստ պատշաճի գովերգել Մարիամի մայրութիւնը: Ինչպէս արդէն նկատեցինք, դա սովորական մայրութիւն չէ, այլ՝ աշխարհը վերափոխող, տիեզերքը փրկագործող մայրութիւն:

Մարեմաբանութեան միւս կարեւորագոյն կէտը Մարիամի կուսութեան աստուածաբանական ընկալումն ու արժեւորումն է: Կ. Պոլսի տիեզերաժողովի (381թ.) կողմից ընդունուած եւ Եփեսոսի տիեզերաժողովում վաւերացուած ու արբագործուած այս գաղափարը («ի Մարիամայ Կուսէն») դրսեւորուել է հայ բանաստեղծութեան մէջ նմանապէս: Այսպէս՝ ս. Գրիգոր Նարեկացու յիշեալ ներբողում Մարիամի կուսութեան այդ գաղափարը հետեւեալ բնորոշումներով է պատկերագծում՝ *պսակ ընտրութեան անփորձ գովութեան* (գլ. Դ), *պատուար բոցակոչոյ անհուպ եւ անհաս մատուցման դժնեայ դժրողացն, պատուար ամենահրաշ ըստ նզեկիելի, որ, աղխեալ զմուտ քո, ճշգրտապատումս գրեաց* (գլ. ԻԴ)[62]: Մարիամի կուսութիւնը, սակայն, դիսկուրսիւ տրամաբանութեան համար պարադոքսալ կերպով կապւում է հարսնութեան, ամուսնութեան հետ: Այս միտքը շեշտւում է Նարեկացու «պսակ կուսութեան մաքուր հարսնութեան» բնորոշումով, որ իր դաւանաբանական ենթիմաստով ուղղուած էր ընդդէմ թոնդրակեցիների, որոնք, մերժելով Եկեղեցուց ներս ամուսնութիւնը, թոյլ են տալիս «զպսակին ամուսնութեան անգոսնութիւն, զոր Տէրն Ինքեան սքանչելեաւք եւ մարդն Աստուածածնաւ յարգեաց եւ պատուեաց»[63]:

Մարիամի կուսութեան հետ անխզելիօրէն կապուած է նրա սրբութիւնը: Աստուածաբանական գրականութեան մէջ այն յայտնի է **կատարեալ սրբութիւն** անուամբ: Այդ տեսութիւնը գալիս է ս. Գրիգոր Աստուածաբանից, ըստ որի՝ Քրիստոս ծնուել է «Սուրբ Հոգիին կողմէ նախամաքրուած (προκαθαρθεισης) Կոյսէն՝ մարմնով եւ Հոգիով»[64]: Սրբութեան, անարատ յղիութեան մասին խօսող **նախամաքրուած** եզրը, հակառակ իր երկդիմի բնոյթի, Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաբանութեան մէջ միանշանակ մեկնաբանութեան է արժանացել: Այսպէս՝ ս. Ներսէս Շնորհալին Մատթէոսի Աւետարանի Մեկնութեան մէջ ասում է, թէ՝ «Հոգին... մաքրեաց զԿոյսն յամենայն մարմնական կրից»: Աւելի յստակելով այս միտքն իր թղթերից

61 Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 128
62 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 129:
63 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 499:
64 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 132:

© National Library of Armenia

մէկում՝ նա հաստատում է. «Կոյսն Մարիամ, յորմէ մարմին առ Քրիստոս, ի մեղանչական Ադամայ բնութենէն էր»: «Ցառաջէ գայ Հոգին ի Կոյսն եւ սրբէ զնա յամենայն մարմնական ցանկութեանց»,- ասում՝ է Իգնատիոս Սելեւոնցին Ղուկասի Աւետարանի իր Մեկնութեան մէջ: Աստուածաբանականացնելով անարատ յղութեան խնդիրը՝ ս. Գրիգոր Տաթեւացին գրում է. «Կոյսն Մարիամ Աստուածածին էր՝ ազատ ի մաճացուէն եւ ի ներելոյն, բայց ոչ՝ ի սկզբնականէն, զոր Հոգւով Սրբով մաքրուեցաւ, ...զի գալ Հոգւոյն Սրբոյ պատճառ էր կրկին ներգործութեան, այսինքն՝ սրբութեան արմատոյ մեղաց եւ պտղաբերութեան, կուսածին զաւակին՝ ծնանիլ եւ կոյս մնալ յետ ծննդեանն»[65]: Այսպիսով, **նախամաքրուած** եզրը կապուած է Սուրբ Հոգու ներգործելուց եւ Աստուածածնին ադամական մեղքից մաքրագործելուց յետոյ Բանի անապական մարմնացումը նախապատրաստելու իրողութեան հետ: Աստուածային մարմնի գոյացումը Կոյսի արգանդում՝ կատարւում է Սուրբ Հոգու մասնակցութեամբ, այսինքն՝ Աստուածութեան ազդեցութեամբ[66]: Բանի մարդացումից յետոյ Փրկչի տնօրինական գործունէութեանն իր գործուն մասնակցութիւնն է բերում Աստուածածինը: Դա նրա մայրական իրաւունքի անկապտելի մասն է: Այդ իրաւունքի հետ՝ օրգանական կապի մէջ է Տիրամօր միջնորդական ֆունկցիան: Նա հաւատացեալի ցաւն ու ակնկալութիւնները Տիրոջը հասցնող, աղօթողի ձայնին ունկնդիր, նրա համար Տիրոջը բարեխօսող էակ է: Իր մայրական անսահման գութով եւ մեղմութեամբ նա Տիրոջ ողորմութիւնն է հայցում ադամորդու համար: Աստուածաբանական այս հիմնադրոյթների վրայ են ձեւուած ս. Մարիամ Աստուածածնին նուիրուած շարականներն ու տաղերը[67]: Ահա Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաբանութեան հիմնադրոյթներն արտայայտող առաւել յատկորոշ հատուածներից մի քանիսը.

Այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն՝
Ի զաւակէ նոցին օրհնիլ ամենայն ազգաց,
Ջի յարմատոյ նոցին բղխեաց կոյսն սուրբ,
Որ ծնաւ զԲանն՝ բարձող մեղաց նախահօրն.
Փա՛ռս տացուք Տուողին մեզ զօրհնեալն ի կանայս:
Այսօր բուսաւ յԱննայէ մորենին Մարիամ,

65 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 133. նաեւ՝ Գիրք հարցմանց, էջ 463:
66 Հմմտ. Հրահանգ, էջ Լ Դ-Լ Ե:
67 Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսի օրօք (1293-1307թթ.) գրուած շարականներից մէկում ասւում է. «Երկու խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի, Աստուածածի՛ն. յղութիւն աներմնական, ծնունդ անարատ, կուսութիւն յետ ծննդեան մնալով անարատ»: Ձեռնուելով *յղութիւն աններմնական* որակումի վրայ՝ Թ. Տասնապետեանը յատկին մարեմաբանութեան ազդեցութեան դրոշմ է նշմարում այնտեղ (տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 129, տողատակ): Միչդեռ այդ որակումը նկատի ուն ոչ թէ Աննայի, այլ բացառապէս՝ Մարիամի յղութեան որակը:

Ցոր վառեցաւ Հուրն աստուածային,
Ջոր ետես Մովսէս զօրինակ կուսին՝
Ի Սինա լցեալ լուսով անմատոյց...[68]

Որ մաքրեցեր Հոգիդ Սուրբ
Ջսիրտ եւ զարգանդ մօր Քո Փառակցին,
Այսօր ամուլ ծնողաց նորին
Ետուր զմայր Բանին՝ զօրհնիչն Եւային...[69]

Դրա՛խտ աստուածային եւ արեւե՛լք իմանալի,
Այսօր Մարիամ հրաշագեղ՝ ծնեալ ի յԱննայէ,
Ի մայրութիւն Քո հրաւիրեալ,
Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ...

Տապանա՛կ ապրեցուցիչ եւ տաղաւա՛ր աբրահամեան աստուածընկալ,
Այսօր, Մարիա՛մ լուսապայծառ, միածին ծնունդ յայտնեալ ծնողաց,
Ի ծնողութիւն քո կոչեցեալ Միածին Որդի Աստուծոյ...

Անճառելի՛դ Աստուած՝ անզննական ի հրեղինաց,
Այսօր հաճեցար ի հողեղինաց՝ յայտնել թարգման
Աստուածութեան Քո զմիշտ կոյսն Մարիամ.
Աղօթիւք սորա ողորմեա՛ մեզ, Աստուա՛ծ:
Անժամանակ ծոցոյ ծնո՛ւնդ Հօր էական,
Այսօր սրբեցեր յորովայնէ ժամանակաւ
Մայր ի մօրէ անճառ մարդեղութեամբ...[70]

Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին՝
Ի գիրկս բառնալով զԱստուածն ամենեցուն,
Որ նստին ի քերովբէս.
Առ նա միշտ բարեխօսեա՛՝ կեցուցանել զմեզ[71]:

Նեստորի դէմ դաւանաբանական արդէն յայտնի դիրքորոշման բացորոշ արձագանքն է ս. Ներսէս Շնորհալու Ծննդեան տաղի Փոխի հետեւեալ

68 [կանոն Ծննդեան Աստուածածնին ի ծնողաց իւրոց՝ ի Յովակիմայ եւ յԱննայէ], Շարական, էջ 2
69 Նոյն տեղում, էջ 4-5
70 [կանոն Ծննդեան սուրբ Աստուածածնին], Շարական, էջ 9-10
71 Նոյն տեղում

© National Library of Armenia

քառեակը.

Աստուածածին դաւանեմք,
Զմնեալդ Աստուած քարոզեմք.
Ընդ հրեշտակին քեզ գոչեմք,
Ջուրախութիւնն աւետեմք[72]:

Աստուածածինը տարբեր կերպարանքներով եւ խորհուրդներով է ներկայանում հինկտակարանային մարգարէներին եւ իմաստուններին: Դրանցից իւրաքանչիւրը դրսեւորում է Աստուածածնի այս կամ այն արժանիքը.

Զքեզ տեսանողքն տեսեալ,
Մովսէս՝ մորենի ոչ կիզեալ,
Եսայիաս՝ կոյս յղացեալ,
Եզեկիէլ՝ դուռն աղխեալ:
Լեառն վիմածին՝ Դանիէլ,
Բլուր կնդրկի՝ Սողոմոն,
Աղբիւր կնքեալ պաճողին,
Պարտէզ փակեալ տնկողին:
Նման գեղման՝ Գեդէոն,
Դաւիթ՝ իշման աւձրեւոյն,
Եւ Միքիաս՝ զտեղւոյն
Ի Բեթղահէմ ծնանելոյն:
Նոյեան տապան կենարար,
Աբրահամեան տաղաւար,
Կտակագրին տապանակ,
Անճառ լուսոյն աշտանակ[73]:

Ինչպէս բիւզանդական գրականութեան մէջ, հայկականում նմանապէս լայնօրէն կիրարկւում է Տիրամօր **աննկարագրելի** որակումը[74], որ աստուածաբանական պարադոքսալիզմի ամենաբնորոշ դրսեւորումներից է.

Անարա՛տ տաճար եւ առագա՛ստ լուսոյ,
Մա՛յր աննկարագրելի,

72 Ներսէս Շնորհալի, «Ճաղեր եւ գանձեր», էջ 22
73 Նոյն տեղում, էջ 23-24
74 Հայկական եւ բիւզանդական մատենագրութեան մէջ Տիրամօրը տրուած որակումների մասին տե՛ս Ա. Գ. Դրուտ-Աբգարեանի յօդուածը. "Кавказ и Византия", N 6, Ереван, 1989, с. 173-183:

Աստուածածի՛ն միշտ կոյս...

Նոր քերովբէ՛ հողանիւթ, աթո՛ռ Էից բարձողին Աստուածածին՝
սուրբ տաճար Բանին, ը՛, Հաւր, երկինք երկնից ի յերկրի ցուցար,
ո՛վ սրբուհի կոյս, Մարիամ՝ Մայր Աստուծոյ աննկարագրելի[75]:

75 Ներսէս Շնորհալի, «Ճաղեր եւ գանձեր», էջ 161, 165

© National Library of Armenia



ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

© National Library of Armenia

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ «ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄԸ»

Ս. Գրիգոր Լուսաւորչի «Ցաճախապատումը»[1] հայ աստուածաբանական մտքի ամենաճշգամակալից դրսեւորումներից մէկն է, որի իր եզակի ազդեցութիւնն է թողել մեր հոգեւոր ժառանգութեան սկզբնաւորման եւ ձեւաւորման վրայ: Ցաւօք, այն պատշաճ ուսումնասիրութեան ենթարկուած չէ: Հայագիտական շրջանակների ուշադրութիւնն աւելի սեւեռուած է եղել Ագաթանգեղոսի անունով յայտնի պատմութեան մէջ զետեղուած «Սուրբ Գրիգորի վարդապետութեանը», որի հեղինակային պատկանելութեան հարցի շուրջ տարակարծիք վարկածներ են առաջ քաշուել[2]: Սակայն «Ցաճախապատումն» աւելի հարուստ եւ խոր աստուածաբանական աւանդներ ունի, քան «Վարդապետութիւնը»[3], ուստի նրա ուսումնասիրութիւնը ոչ միայն լոյս կսփռի Դ-Ե դդ. մեր պատմութեան ինչ-ինչ կարեւոր խնդիրների վրայ, այլեւ էապէս կնպաստի մեր դաւանական գիտակցութեան ամրացմանը եւ հոգեւոր կեանքի հաստատմանը:

Երկը բաղկացած է քսաներեք ճառերից, որոնց կցուած է Լուսաւորչի յայտնի զօրաւոր աղօթքը: Լեզուն իւրօրինակ է, երբեմն առանձնայատուկ խրթնութիւններ ունի, որոնք անխուսափելի են աստուածգիտութեան խորհրդական ճշմարտութիւնները բառային հագուստով ներկայացնելիս: Ճառերն արգասիքն են բազմերախտ հօր ճգնաւորական փորձառութեան եւ վերերկրային իմաստութեան, նրանցում հայեցողական խորութիւնները, հոգեւոր կեանքի ազդու

1 Երկի հեղինակային պատկանելութեան եւ թուագրման հարցերին չենք անդրադառնում թողնելով այն ապագայի քննութեանը:
2 Տե՛ս Հ. Հ. Տաշեան, «Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին», Վիեննա, 1891, էջ 86. Գ. Տէր-Մկրտչեան, «Ագաթանգեղոսի աղբիւրներից», «Արարատ», 1896, էջ 428-429. Ն. Բիւզանդացի, «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք», Տփխիս, 1900, էջ 14. Հ. Ն. Ակինեան, «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ», «Հանդէս ամսօրեայ», 1949, ֆ. 4-12, էջ 3-58. Հ. Ն. Ակինեան, «Պատմութիւն վարուց ս. Մաշտոց վարդապետի», «Հանդէս ամսօրեայ», 1949, ֆ. 4-12. Հ. Պ. Անանեան, «Վարք Մեսրոպ Մաշտոցի», Վենետիկ, 1964, էջ 380-403. Հ. Պ. Անանեան, «Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ», «Բազմավէպ» 1989, ֆ. 1-4, էջ 43-44. G. Garitte, "Le traite' ge'orgien "Sur la foi" sttribute' a` Hippolyte", Le Muse'on, t. 78, 1-2 (1965), p. 119-172. "The Teaching of Saint Gregory: an Early Armenian Catechism", by Robert W. Thomson, Cambridge, Massachusetts, 1970, էջ 1-38:
3 Այս է իրաւացիօրէն հաւաստում Ա. Տէր-Միքելեանը «Ցաճախապատումի» իր հրատարակած քննական բնագրի առաջաբանում (Ս. Էջմիածին, 1894):

յորդորները, կանոնական խիստ գիտակցութիւնն իրենց ներդաշնակ միասնացումն են գտել:

Թարգմանաբար[4] ներկայացնում ենք չորս ճառ՝

Ա. «Ամենասուրբ Երրորդութեան մասին»,

Բ. «Սուրբ Երրորդութեան Անձերի մասին»,

ԺԶ. «Մարտիրոսների մասին»,

ԺԹ. «Ցորդորակ խոստովանական ապաշխարութեան»[5]:

Ճառերի ընտրութիւնը պայմանաւորուած է ս. Գրիգորի ժառանգութիւնն առաւել համակողմանի ներկայացնելու ցանկութեամբ. Ա եւ Բ դաւանական ճառերը զուգադրուել են ծիսական եւ ներանձնական աղերսներ ունեցող ԺԶ եւ ԺԸ ճառերի հետ: Կից ներկայացուած է նաեւ վերոյիշեալ աղօթքի թարգմանութիւնը: Մօտ ապագայում համապատասխան ուսումնասիրութեամբ լոյս կտեսնի «Ցաճախապատումի» ամբողջական թարգմանութիւնը: Ցուսով ենք, որ սոյն հոգեշունչ ճառերի հրապարակումով մենք առաւել կմերձաւորուենք մեր քրիստոնէական ակունքների սրբազան աւանդներին:

Մեսրոպ քահանայ Արամեան

4 Թարգմանութիւնը կատարուել է ըստ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի յաճախապատում ճառք եւ աղօթք» (Վենետիկ, 1954) հրատարակութեան: Նկատի ենք ունեցել նաեւ Ա. Տէր-Միքելեանի հրատարակած բնագիրը (Ս. Էջմիածին, 1894):
5 Սոյն ճառի թարգմանութիւնն իրականացրել է Մեդա Ստամբօլցեանը:

© National Library of Armenia

ՀԱՑՈՑ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԱԾ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԵՐԸ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԼՍՈՂՆԵՐԻ ՕԳՏԻ ՀԱՄԱՐ

Ա

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի է Ամենասուրբ Երրորդութեան բնութիւնը եւ գոյութիւնը, եւ Իրենն է [Իր] ինքնութիւնը եւ ոչ՝ այլ գոյութիւնից: Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու անսկիզբ պատճառն է. անծին իսկութիւն է եւ անսկիզբ էութիւն, անսահման մշտնջենաւորութիւն եւ անփոփոխելի ճշմարտութիւն, կեանք եւ կեցուցիչ բոլոր կենդանի [էակների]. Հայր է Որդու եւ բխում՝ Հոգու, Աստուած է եւ Արարիչ երեւելի եւ աներեւոյթ արարածների: Ասում է Որդու պատճառ՝ ծննդեամբ, եւ Սուրբ Հոգու բխում: Իսկ Ինքը՝ անծին Էն, ծնեց Անսկիզբը, անսահման Մշտնջենաւորը ծնեց անփոփոխ Ճշմարտութիւնը, կեանքի Կենարարը ծնեց կենդանատու Կեանքը, կենդանի Լոյսը ծնեց կենդանի Լոյսը, Բարին ծնեց Բարերարը, Արարիչը ծնեց բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածների Արարչին: [Նա] է ստեղծել երկինքը եւ երկնային զօրութիւնները, երկիրը եւ նրա վրայ [բնակուող] արարածներին: Լի է եւ կատարեալ եւ ամէն ինչ կատարելապէս լցնում է, Ինքը չի թերանում, ո՛չ նորոգւում է եւ ո՛չ ճնանում, ո՛չ լցւում է եւ ո՛չ պակասում, որ նոյնն է միշտ Իր լիութեան եւ անբաւութեան մէջ: Եւ այլ տեղից չկայ օտարամուտ կամ յաւելուած բան անհաս, անբաւ, անսահման եւ ամենակատար բնութեան մէջ: Նրան չի կարող հասնել միտքը, նաեւ անիմանալի է հրեշտակների համար, թէպէտեւ մարդկանց մտքի պէս արագընթաց են, այլ ուր ակնարկում է Արարչի կամքը, ա՛յն բաների սպասաւորութիւնն են կատարում երկնաւորների եւ երկրաւորների մէջ: Քանզի ինչպէս Աստուծոյ Բանով են հաստատուած երկինքը եւ նրա բոլոր զարդերը, եւ Հոգով՝ բոլոր զօրութիւնները, նոյնպէս էլ երկիրը՝ լեռներով, դաշտերով, ծովերով, գետերով, աղբիւրներով եւ անտառախիտ ծառերով:

Եւ չկայ այլ Արարիչ, բայց միայն՝ Սուրբ Երրորդութիւնը, ամենազօր Տէրութիւնը, յստակ եւ պարզ ամենակալ Զօրութիւնը, որ

ասաց, եւ եղան, հրամայեց, եւ հաստատուեցին: Որ նստում է երկինքների երկնքում եւ խնամում բոլոր արարածներին, որ կանխահաս գիտութեամբ եւ անբաւ իմաստութեամբ մատակարարում է երկնաւորներին եւ երկրաւորներին, կեանք է ու կեցուցիչ բոլորի համար եւ ամէն ինչում՝ անբաւ, անհաս եւ անճառ: Սէր է՝ կենդանի երանութեամբ լի, անմատոյց լոյս՝ աճեղ եւ զարմանալի: Գիտութիւնը եւ իմաստութիւնը Նրանից են ճշմարտապէս իմացւում, [որ] կենդանի է եւ կենդանարար, ողորմած եւ բարերար՝ շնորհներով, ներողամիտ եւ դարմանիչ: Ինքը Սրբութիւն Սրբոց է Իրեն սրբութեամբ եւ արդարութեամբ մերձեցողների համար, միշտ լուսաւորիչ՝ մեր բանական բնութեան. կատարելապէս ճշմարտութիւն է՝ մեզ յանդիմանելով եւ խրատելով մեղանչածներին, որպէսզի փրկուենք բարկութիւնից, որ գալու է ամբարիշտների վրայ: Այլեւ յորդորում է բարիքների խոստմամբ, որպէսզի արժանաւոր լինենք յաւիտենական ամենաշահութիւնների փառքին ու պսակներին: Քանզի Իր սուրբ սիրոյ խնամքով հանգստարար նաւահանգիստ է ճգնաւորների համար, որ հոգով առաքինացածներին վայելել է տալիս անճառ երանութիւնների մէջ: Քանզի անքնին Մեծութիւններ են, անսկիզբ Էութիւն, վեր, քան իմանալի [աշխարհները]՝ անսահմանութեան եւ անբաւութեան մէջ. եւ Իր տեսչութեան խնամքով [Աստուած] լցնում է բոլոր արարածներին: Որ գիտի սրտի խորհուրդները եւ քննում է երիկամները եւ կենդանարար Հոգու օրէնքով առաջնորդում է անմահներին դէպի անմոռաց ուրախութիւնները, անդադար խնդութիւնները, անճառ ու անպատում բարիքները՝ ժառանգութիւն տալով Աստուծոյ արքայութիւնը:

Արդ, անսահմանելի մշտնջենաւորի այս բոլոր ինքնաբոյս հոգածութիւնները դարմանիչ միջոցներ են արարածների համար՝ ըստ Իր արարչութեան բարերարութեան, քանզի կեցուցիչ է Իր խնամքով, որ անբաւ է ու անքնին: Հոգեւոր [էակների] իմաստութիւնը չի կարող հասնել Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այլ Մի Աստուածութիւնը եւ ամենազօր Տէրութիւնն անմարմինների եւ մարմնաւորների համար Իր գործերից եւ երախտիքներից է իմացւում ու ճանաչւում: Քանզի ինչպէս մի արեգակի մասին է ասւում արեւ, լոյս եւ ջերմութիւն, եւ ոչ՝ տարբեր, եւ ինչպէս մի բնութիւնից են ասւում աղբիւրը, ջուրը եւ գետը, նմանապէս էլ միտք, խօսք եւ հոգի է իմացւում [մի] մարդու մէջ, նոյնպէս էլ այստեղ պէտք է իմանալ Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու Մի Բնութեան եւ Աստուածութեան մասին: Քանզի արեգակն առանց լոյսի եւ ջերմութեան չէ, ոչ էլ աղբիւրը՝

© National Library of Armenia

առանց ջրի եւ բխման, ոչ էլ միտքը՝ առանց խօսքի եւ հոգու. նոյնպէս էլ Հայրը [երբեւէ] առանց Որդու եւ Սուրբ Հոգու չէր:

Բ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՆՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Կատարեալ է Հայրն անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ. եւ ամենակալ է Իր անձին իսկութեամբ: Կատարեալ է Որդին անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, Որը եւ ամենակալ է անսկիզբ էութեամբ: Կատարեալ է եւ Սուրբ Հոգին անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ. եւ ամենակալ է անսկիզբ էութեամբ: Մի է Աստուածութեան եւ անփոփոխ Իսկութեան բնութիւնը. մի արարչութիւն, մի բարերարութիւն, մի տէրութիւն, մի զօրութիւն. եւ այլ տեղից չկայ փառքի ներմուծում եւ յաւելում անսկիզբ Երրորդութեան մէջ: Քանզի Նա է բոլոր բարիքների աղբիւրը, եւ Նրանից են բոլոր արարածներին բաշխւում արարչութեան բոլոր պարգեւները: Որ Իր բարերարութեամբ, Հոգով եւ ճշմարիտ վարդապետութեամբ յօրինում, խնամում եւ սնուցում է երեւելի եւ աներեւոյթ [արարածներին] եւ առաջնորդում դէպի Իր արքայութիւնը եւ փառքը [նրանց], ովքեր հաւատում են Նրան եւ սրբութիւն են գործում Աստուծոյ աւով, սուրբ սրտից եւ անկեղծաւոր հաւատքից, ինչպէս եւ գրուած է:

Այսպէս ընդունեցինք հաւատքի խօսքը, եւ դուք այսպէս հաւատացէք Ամենասուրբ Երրորդութեանը՝ արարիչ Աստծուն եւ ստեղծող Տիրոջը, եւ [Նրա] կենսատու շնորհներին: Որ կենարար լոյսով եւ սուրբ սիրով Իր անճառ արքայութեան ժառանգորդներ է դարձնում եւ յորդորիչ լինում՝ խոստացած անպատում պարգեւները յիշելիս, որ միշտ պահւում է հաւատով եւ յոյսով Նրան յուսացածների համար: Քանզի արարչութեան սէրը ստիպեց Արարչին ստեղծել բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածներին. ոչ թէ ի պէտս Իր Աստուածութեան արարեց, այլ՝ որ երեւայ Նրա փառքը, որ, արարածներով ճանաչուելով, տեսանելի լինէր անմարմինների եւ մարմնաւորների [տե՛ս Հոմ. Ա 20]: Ինչպէս ոչինչ չի վերցնում կենդանի էակներից, այլ կենդանութիւն է տալիս նրանց, ինչպէս

աչքը լոյս չունի, այլ լոյսից է լուսաւորւում եւ տեսնում իրեն, այնպէս էլ Տէրն է պահպանում եւ լուսաւորում Իր մտաւոր եւ բանաւոր արարածներին եւ շնորհները բաժանում նրանց այնպէս, ինչպէս որ կամենում է: Թէպէտեւ շնորհների զանազանութիւն կայ, սակայն Աստուած նոյնն է, որ ուղղում է ամէն ինչ ամէն ինչում [տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 4]: Եւ հրեշտակներին եւ մարդկանց պատուեց իշխանական կամքով, որպէսզի փառաւորեն բարեգործ Աստծուն, որ ոչնչից լինելութեան մէջ դրեց եւ Սուրբ Գրքով ուսուցանեց բարեպաշտութեան հանգամանքները, որպէսզի կարողանան խոյս տալ չարից եւ կատարել բարին եւ դարձեալ փառաւորուել փառքով:

Այս բաների մէջ է երեւում Աստուծոյ սէրը մեր հանդէպ, քանզի մեզ համար արարեց երկինքը եւ երկիրը եւ նրանց արարածներին եւ այսպիսի խնամքով ցոյց տուեց Իր սիրոյ բարերարութիւնը: Նոյնպէս էլ արարածները ճշմարիտ սիրով, հաւատով, յոյսով եւ պատուիրանապահութեամբ պէտք է մօտենան Աստծուն, եւ [Նա] պարգեւատու կլինի: Որպէսզի, ամէն ինչում գոհանալով [Արարչի] բարերար խնամքի համար, լինենք ճշմարտութեան եւ՛ խոստովանողներ, եւ՛ դաւանողներ, նաեւ հնազանդ լինենք Տիրոջը հաճելի գործերում, նեղութեան եւ անդորրի մէջ միշտ անքակ մնանք աո Աստուած սիրուց՝ յատկապէս հոգու եւ մարմնի ամենայն սրբութեամբ: Արարչի անունով չկոչենք արարածներին եւ ճշմարտութիւնը չմոլորեցնենք ստի մէջ, այլ սիրոյ ամբողջական, անբիծ եւ անարատ երախտիքով միշտ մտերմութեան մէջ մնանք [Տիրոջ] հետ: Եւ Արարչի արարածների նկատմամբ իրաւունքների եւ արդարութեան այս բոլոր յօրինուածքները միշտ հաստատուն են մնում:

Ուստի լռենք դատարկ եւ աւելորդ քննութիւնից եւ հետեւենք Հին եւ Նոր Կտակարանների խրատներին: Եւ չկայ այլ մէկը, որ պատմի իրաւունքների մասին, քանզի Նրանով ենք ապրում, շարժւում եւ կանք [տե՛ս Գործք ԺԷ 28]: Նրա՛ն լսենք եւ Նրա՛ն յուսանք, որ փրկեց մեզ ամենայն վտանգից եւ տանում է երկնքի արքայութիւն: «Արդ, .եկէ՛ք, որդեակնե՛րս, եւ լսէ՛ք ինձ. եւ ձեզ կուսուցանեմ Տիրոջ երկիւղը» [Սաղմ. ԼԳ 12],- ասում է սաղմոսերգութեան մէջ, որ բոլորին հնազանդութեան է կոչում հոգեւոր օրէնքներին: Եւ որովհետեւ՝ «Ով պահում է Իմ պատուիրանները,- ասում է Տէրը,- նա է Ինձ սիրում, եւ ով սիրում է Ինձ, կսիրուի Իմ Հօր կողմից. եւ կգանք ու կօթեւանենք նրա մօտ» [տե՛ս Յովհ. ԺԴ 23]: Ինչպիսի՛ անճառ սիրով պատուեցինք:

Արդ, խոտան չհամարուե՛նք Աստուծոյ կողմից, որպէսզի

© National Library of Armenia

չընկնենք երանելի կեանքից, որ խոստացաւ սուրբերին: Քանզի արդարները պիտի ժառանգեն բարիքները, իսկ մեղաւորները պիտի կրեն պատիժները: «Ովքեր Աստուծոյ Հոգով են ընթանում,- ասում է,- նրանք են Աստուծոյ որդիները, իսկ ովքեր ըստ մարմնի են ապրում, չեն կարող Աստծուն հաճոյ լինել» [տե՛ս Հռոմ. Ը 13-15], որպէսզի այս կեանքում հոգեւոր վարքով վայելենք բոլոր երկնաւոր բարիքների մէջ: Որքա՜ն է այն անվախճան կեանքի անմահ, անհամեմատ եւ անկշիռ մեծութիւնը, քանզի անպատում է՝ Սուրբ Հոգով, Արարչի սիրով պատրաստուած, որ ո՛չ լսւում է, ո՛չ էլ իմացւում, որը տալիս է Իրեն սիրողներին, որպէսզի Նրա կենարար սիրով վայելենք բարիքների մէջ, որ վեր են, քան բոլոր մտքերը, խորհուրդները եւ երկնային զօրքերը, որպէսզի ամփոփի անմահների կարգերում: Որին եւ ըստ արժանաւորութեան ընտրելու են օթեւաններում, [ուր] անքնին վայելչութիւն է:

Քանզի ինչպէս մտաւոր[1] հոգիները կենդանի են եւ չունեն տարիքի պայման եւ ընթացքի սահման, քանզի թէպէտեւ երկնքից էլ վեր բարձրանան եւ ծովից էլ այն կողմ անցնեն իմաստութեան գիտութեան յիշատակներով, որ Սուրբ Գրքի առաջնորդութիւնից է, սակայն ակնթարթօրէն այնտեղից ամփոփւում են մարմնական կեանքի կայաններում, այնպէս էլ մարմինները յարութեան ժամանակ փոխւում են դէպի անճառ եւ անպատում կեանքը, բիւրակերպեան ճառագայթները, կենդանի լոյսը եւ փառքը. եւ Հոգու հրով վառւում են անշիջանելի լոյսով: Եւ ինչպէս անարգ եւ տխուր է այս մարմնի պատկերն անմահ կենդանի [էակների] հոգիների համեմատութեամբ, այնպէս [էլ] բոլոր երեւելի արարածներիս բոլոր գոյներն ու ճառագայթները լուսաւորներից են, որ հանգելու են, քանզի հաստատուն չեն եւ չեն մնում [միշտ], այլ՝ փառքի արդարութեան Արեգակի կենդանի եւ անանց ճառագայթները, որ հագնելու են սուրբերն անմահական կեանքում՝ հաւասարապէս հոգիներով եւ մարմիններով. ինչպէս մէկը, հագնելով արեգակի լոյսը, ի զօրու լինի տեսնել արեւելքից արեւմուտք, որը [դեռեւս] շիջանելի լոյս է՝ ըստ Տիրոջ խօսքի. «Արեգակը եւ լուսինը կխաւարեն,- ասում է,- եւ աստղերը կծածկուեն, եւ արդարները արեգակի պէս կփայլեն Աստուծոյ արքայութեան մէջ» [տե՛ս Մատթ. ԻԴ 29]: «Քանզի երբ յայտնուի Քրիստոս՝ ձեր կեանքը,- ասում է առաքեալը,- այնժամ դուք էլ Նրա հետ կյայտնուէք փառքով» [Կող. Գ 4]՝ աստուածային հրից

[1] մտաւոր- իմանալի, հոգեւոր, հրեշտակային

լուսավառուելով անշիջանելի եւ սուրբ լոյսով: Եւ երբ [Աստուած] Իր անշիջանելի լոյսով հագցնի արդարութեան Արեգակի լոյսը, եւ [նա] վայելի սուրբերի պայծառութեան մէջ, [այդպէս] հաստատուն կմնայ միշտ՝ կենդանի եւ լուսաւորուած: [Այդպիսին], սուրբ սիրուց երանաւէտուած եւ փառքով փառաւորուած, Քրիստոսի կատարման տարիքով կամ ոչ (քանզի ոչ ոք չի կարող ասել այս), որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչում [տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 28]), լի է անմահ բարիքներով՝ ըստ Տիրոջ խօսքի, որ խնդրում է Հօրից. «Քանզի ինչպէս Դու եւ Ես մի ենք, այնպէս էլ հաւատացեալները եւ սուրբերը Մեզ հետ թող լինեն» [տե՛ս Յովհ. ԺԷ 21]: Քանզի Աստուած այնպէս սիրեց մարդկանց, որ եւ Աստուածութեան պատիւը եւ փառքը շնորհեց մեզ: Աստուած այս աշխարհն արարեց մարդկանց համար՝ ծննդաբերութեան, աննդաւորութեան, իրաւացի եւ արդար կեանքի համար. եւ առաքինութեան գործերով, պատուիրանապահութեամբ այն անմահ եւ անուշակ աստուածեղէն փառքն է շնորհում՝ փոխելով անանց բարիքների եւ անսպառ ուրախութիւնների մէջ:

Եւ այս, որի մասին ասացինք, չնչին մասն է բիւրաւոր բարիքների: Ինչպէս մանուկներն իրենց մօր որովայնում չգիտեն, թէ ինչպիսի տարիքի են փոխուելու, թէ տեսնելու են Աստուծոյ արարածներին եւ վայելելու, այնպէս էլ մենք չգիտենք: Այլ [իրաւացի է խորհել] ըստ առաքեալի խօսքի, որ ասում է. «Ծատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում, սակայն երբ գայ վախճանը, շատից քիչը կխափանուի» [Ա Կորնթ. ԺԳ 9]: Քանզի ամէն ինչի մէջ գերազանց է եւ անճառ, եւ անմարմինները չեն կարող ճանաչել [Նրան], ուր մնաց մարմնաւորներս՝ խորհել եւ ասել, թէ մէկը կարող է [ճանաչել]: Քանզի ինչպէս խաւարը փախչում է լոյսից, այնպէս էլ երկրաւորներս [հեռու ենք] երկնաւորներից եւ անմահ կեանքից: Այս բարիքների համար, մեր մէջ ունենալով բոլոր բարիքների ջանքերը, [պէտք է] հաստատուն մնալ Աստծուն հաճելի մշակութեան մէջ, որ լի է բարիքների խոստումներով: Եւ փախչենք աղտեղի յուզ գարշ ցանկութիւններից եւ չարիքից, որի պատուհասը վշտագին սպառնալիքների տակ է, այլ մաքուր վարքով հետեւենք վերինների ընթացքին: Սիրով երախտաւոր լինենք եղբայրների նկատմամբ կեանքի բոլոր պէտքերի մէջ, մշակենք բարի աւանդը հոգիների եւ մարմինների փրկութեան համար, որպէսզի հրաւիրուած եւ կոչուած լինենք որդեգրութեան շնորհների: Քանզի Աստուած է մեր մէջ տնկել բարին, նաեւ՝ իշխանական կամքը, որպէսզի կամենանք միշտ բարին գործել: Որպէսզի

© National Library of Armenia

մեր սրտերում հաստատուի հոգեւոր օրէնքը. յոյս, սէր, հաւատք ալ [առաքինութիւններով հանդերձ]՝ հրեշտակների եւ մարդկանց աննձնիշխանական կամքի մէջ: Որպէսզի ժառանգենք փառաւորեալ կեանքը եւ անճառելի երանութեամբ պատուենք Արարչից:

Եւ աննձնիշխան արարածներիս ինչպէս որդու երկու դաստիարակ տուեց՝ սպառնալիքը եւ աւետիսը՝ երկնչելու սպառնալիքներից ու փախչելու վնասակարներից եւ ցանկալու աւետաւոր բարիքներն ու հետեւելու արդարութեանը: [Նաեւ] ճշմարիտ Սուրբ Գրքերի խրատների միջոցով բարեձեւութեան համար [պէտք է] հնազանդ լինել օրէնքին եւ իշխանութեանը: Քանզի սրա համար տուեց մարգարէներին, առաքեալներին, հայրապետներին, վարդապետների եւ ուսուցիչների, որպէսզի մեզ տեղեակ, հմուտ եւ հասու դարձնեն Աստուծոյ բարի կամքին, որ կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն եւ ճշմարտութեան գիտութեան գան եւ արդարութեան գործերով երախտաւոր լինեն Երկնաւոր Հօրը, Միածին Որդուն եւ Սուրբ Հոգուն, որ Իր արարածներին կենդանութիւն է տալիս՝ գործակից լինելու Աստուծոյ բարերար կամքին: Այս իրաւունքով եւ արդարութեամբ ներածեց, մտցրեց Իր Աստուածութեան ժառանգութեան մէջ, [որոնց], ըստ առաքեալի խօսքի, ասում է «Աստուծոյ ժառանգներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ» [Հռոմ. Ը 17]: Եթէ նմանակից լինենք Քրիստոսին, կցորդ [կլինենք] նաեւ [Նրա] փառքին: Ուրեմն չծուլանանք մեր այս կեանքում, այլ , յառելով միտքը կոչման կէտին, անվեհեր փութով [պէտք է] ուսուցանել եւ կատարել Նրա կամքը, որպէսզի [այդպիսին] մեծ կոչուի Աստուծոյ արքայութեան մէջ:

Եւ այսպէս վարդապետեց՝ Իր տնօրէնութեան ժամանակ կատարելով եւ ուսուցանելով Իր ընտրեալներին, որպէսզի, նայելով մեր Փրկչի կեանքի իրադարձութիւններին, նմանուողներ լինենք [Նրան]: Եւ մարգարէութեամբ, առաքելական քարոզութեամբ եւ հայրապետութիւններով ճանաչենք ամենակալ Հօրը՛ եւ համագոր Որդուն եւ համագործ Հոգուն: Եւ [բոլորն] ուղղափառ հաւատով [պէտք է] ծանօթանան, գիտենան եւ մերձաւորուեն Աստուծոյ կամքին՝ անքակ մնալու Արարչի սիրուց [եւ՝] ընդութեան, եւ՝ անդորրի մէջ եւ արդարացած երախտաւորներ [լինելու] Բարերարի կամքով: Ծգնութիւնների վաստակը [պէտք է] վկայ կանգնեցնել Աստուծոյ առաջ եւ մտերմութեամբ օրհնել Տիրոջը՝ բոլոր բարիքները տուողին, եւ գոհանալով փառաւորել Նրան: Այլեւ Տէրն Ինքնին Իր սիրոյ եւ բարերարութիւնների համար [որպէս] Իր երախտիք վկայ ունի ընտրեալներին եւ կատարեալներին, որոնց վրայ է

զեղում Աստուծոյ շնորհը: Այլեւ հոգով երախտացածների նկատմամբ, ովքեր խոստովանութեամբ դարձել են դէպի ապաշխարութիւն, ներում, խնամում եւ բժշկում է ողորմութեամբ եւ, ըստ Իր բազում գթութեան, ներում մեղքերը: Իսկ չարութեամբ ամբարտաւանացած ամբարիշտներին եւ անիրաւներին, որոնց միտքը խաւարել է, եւ օտարացել են սուրբերի եւ արդարների կեանքից, համբերում է, որպէսզի դառնան դէպի զղջում: Հակառակ դէպքում նրանց բոլորի վրայ Արարչից բարկութիւն եւ զայրոյթ է հաստատուած մնում՝ ըստ առաքեալի խօսքի [տե՛ս Հռոմ. Բ 8]:

Այսպիսին են կեանքի կենարարի եւ Ստացողի արուեստները, եւ Իր սիրոյ երեւելի եւ աներեւոյթ հոգածութեամբ հանապազ խնամում է արարածներին: Եւ Իր բարերարութեամբ յօրինում է [միջոցներ]՝ սնուցելու եւ հոգալու Իր պէս-պէս շնորհներով, գիտութեամբ եւ իմաստութեամբ, որպէսզի խելամուտ եւ փութաջան դարձնի Իր պատուիրանի պահպանութեան համար: Եւ Իր զօրութեամբ կարող եւ հաստատուն է պահում, որպէսզի զօրացած ընդդիմակայեն սատանայի հնարներին եւ սիրով անշարժ ու հաստատուն մնան ճշմարտութեան նկատմամբ՝ յորդորելու բարի առաքինութիւնների եւ պիտանի գործերի, որ փառքով է պսակում: Եւ այսպէս վայելում ենք բարիքների մէջ: Քանզի երանութեան կենդանի աւետիսների համար ճշմարիտ հաւատով ու յոյսով առհաւատչեայ են ստանում հանդերձեալը՝ կենդանի Սիրոյ ճաշակմամբ, որ անբաւ է եւ անքննին, որպէսզի Նրանով Նրա մէջ վայելեն երանութիւնները եւ Նրա խնդութեամբ լցուեն Նրա անճառ ուրախութիւնների մէջ: Քանզի Իր գթութեամբ հոգ է տանում հոգու եւ մարմնի պէտքերի համար՝ ըստ Իր մեծ ողորմութեան, որպէսզի զօրացած շնորհներով եւ աստուածատուր պարգեւներով վայելեն առողջութեան եւ խաղաղութեան մէջ:

Եւ բարի Աստուծոյ՝ նորոգման համար տածած այս ներողամտութիւնը տեսնելով՝ ձգտում է դէպի երեւելի եւ աներեւոյթ բարիքները եւ, Սուրբ Աստուծոյ կողմից սրբուելով աղտից, տիրական ազատութեամբ ազատւում է եւ լուսաւորւում փառքով, անհպելի լինում թշնամուն եւ, զերծ մնալով մեղքի մահուանից, յարութեան յոյսով լուսաւորուած, միշտ մնում է անբիծ ու սուրբ: Եւ խոնարհութեան համար բարձրանում է փառքով, [եւ] Տիրոջ յարգանքով կործանւում է ամբարտաւանութիւնը: Քանզի խոնարհները, հնազանդները եւ հեզերը բարձրանում են, իսկ ամբարտաւանները, խստասիրտները եւ անհաւատները կկործանուեն Տիրոջ աչի առաջ:

© National Library of Armenia

Քանզի [արքայութեան] աւետիսների բոլոր բարբառները հաւատացեալներին, լաւերին եւ առաքինիներին հրաւիրում են դէպի ճշմարտութեան դռները, [որոնք] վայելում են Նրա մեծարանքների եւ փառքի պսակների մէջ: Քանզի [Տիրոջ] խնամքը ողորմութեան եւ գթութեան շնորհիւ է [տրւում մարդկանց], որոնք էլ կատարեալ ապաշխարութեամբ թողութիւն են ստանում միայնոր Տէրութիւնից:

Եւ սպառնալիքների աճաւոր բարբառներն ամբարիշտներին, անառակներին, ցանկասէրներին, անհնազանդներին եւ մեղքի մէջ անարգելներին հրաւիրում են դէպի յաւիտենական տանջանքները, դէպի անմահ սատակումը, դէպի դժոխք: Քանզի արհամարհեցին Արարչի գութն ու խնամքը եւ հեռանալով օտարացան ստոյգ ապաշխարութիւնից, որ պիտի արբէր նրանց, արդարացնէր եւ մերձաւոր դարձնէր անմահ կեանքին: Որի համար ընդունելու են ամօթը եւ անշէջ հուրը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա դեւերի համար:

Եւ այս ամէնը բարերար Աստուծոյ կամքով կարգուած է [արարչութեան] կարիքների եւ խնամքի համար: Սուրբ եւ բարի կողմից [պիտի տրուեն] Տիրոջից աւետուած խոստումները, իսկ չար եւ անհնազանդ կողմից՝ բարկութեան եւ զայրոյթի սպառնալիքները, եւ չար հրեշտակի միջոցով պիտի ընդունեն վրէժը: Քանզի եթէ կամենայինք, կարող էինք բորբոքուած բարկութիւնը մարել եւ ճշմարիտ ապաշխարութեամբ ջնջել [մեղքերը]՝ ըստ Արարչի մեծ ողորմութեան: Եւ այսպէս՝ բարու խոստումով եւ սպառնալիքով, հոգում է [մեր] ուղիղ ընթացքի համար, քանզի կամենում է, որ բոլորն ապրեն եւ հասնեն արքայութեանը: Այլեւ որպէսզի մեր միջի ընտիրները երեւան գան՝ արդարութեան օրէնքով կենցաղավարելով: Քանզի Նա, որ յաւիտեաններից առաջ բնութեամբ եւ իսկութեամբ Բարին է, Նրանում՝ կատարեալ Բարերարութեան մօտ, չկայ օտարամուտ բան, այլ հաստատապէս մնում է միշտ բարի:

Իսկ որ ասում է Աստուծոյ ցասման կամ բարկութեան կամ սպառնալիքի մասին, օրէնքի իրաւունքի մասին է ասում, որպէսզի անհրաւներին եւ անզգամներին բարկութեամբ լի սպառնալիքներով ուղղութեան բերի: Քանզի կատարեալ Բարերարութեան եւ քաղցրութեան մօտ չկայ արատ կամ բիծ. Նրանից չարութիւն չի բուսնում, ոչ էլ որեւէ տեղից ներմուծւում է Նրա մէջ, քանզի Նրա ամէն ինչն իսկութեամբ բարի է, եւ Նրանում չարութեան նշոյլ չկայ: Քանզի մեր մեղքերը բարկացնում են Աստծուն, եւ Նա խրատում է մեզ պատիժներով եւ բարկութեան մէջ ողորմութիւնը յիշելով,

որպէսզի խրատուելով այցելութեան արժանանանք Արարչից: Քանզի վայել է մեզ ատել մեղքերը եւ սիրել արդարութիւնը, սրբութիւնը եւ ճշմարտութիւնը, որ ուրախացնում են Արարչին երկնային զօրքով հանդերձ:

Եւ այս իսկ է Նրա սիրոյ ապացոյցը, որ ուրախանում է մարդկանց ուղիղ եւ արդար ընթացքով, որոնք դառնում են չար վարքից: Քանզի Ինքը կեանք է, կեցուցիչ եւ սէր՝ իր ամենալից պարգեւներով, քանզի ոչ ոք չի կարող արժանին ասել Նրա ամենազօր մեծութեան մասին՝ ոչ մէկը երկնաւոր բանակների բիւրաւոր զօրքերից, ոչ էլ՝ մարդկանցից, որոնցից հաճեց օրհնութիւն եւ երկրպագութիւն ստանալ: Քանզի դեւերի, հեթանոսների, ամբարիշտների եւ մեղաւորների ոչ մի հայհոյութիւն չի հասնում Աստուածութեան անհպելի լոյսին: Եւ հրեշտակների բոլոր բիւրաւոր բանակները, որ անդադար փառաբանում են, եւ Տիրոջ կողմից ընտրուած մարդկանց որդիները չեն կարող արժանաւորապէս օրհնել Աստծուն: Քանզի Աստուածութիւնը ո՛չ մեծարւում է որեւէ մէկի կողմից, ո՛չ էլ՝ անպատւում, քանզի Իր բուն փառքից չի փոխւում. քանզի կեանք է եւ անփոփոխելի լոյս, որ չի անցնում:

Բայց զարմանալի է այս, քանզի Իր առաւել սիրոյ համար Անանուն անուն է ստանում, քանզի ոչ ոք չկար Անսկիզբի հետ, որ կոչէր անունը, այլ Ինքն Իր բարերարութեան եւ բարերար կամքի համար անուանւում է արարածների Արարիչ: Քանզի արարիչ, բարերար, լոյս, կեանք անունները ստանում է արարածների նկատմամբ խնամքով, սակայն Իր անունն Ինքը միայն գիտի: Քանզի լոյսի մէջ անշիջանելի լոյս է եւ կենդանիների մէջ կեանք, աննիւթ հուր եւ նիւթական հրի արարիչ: Իսկ ինչպէս էր եւ է եւ կայ յաւիտեան, Ինքը միայն գիտի, սակայն Իր սիրով յայտնուեց արարածներին եւ Իր խնամքով ճանաչուեց:

Այլեւ Իր բարերարութեամբ աշակերտութեան կանչեց [Իր] արարած մարդկանց. «Նախ՝ առաքեալներին,- ասում է Պօղոսը,- ապա՝ մարգարէներին, ապա՝ վարդապետներին» եւ սրանց յաջորդողներին [տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28]: Որոնց Սուրբ Հոգին բաժանում է շնորհները կոչման գործի համար, որով արքայութիւն հրաւիրեց: Ցայտնեց Իր սիրոյ տեսչութեան խնամքը, որպէսզի արդարանանք հաւատով, որով պիտի մտնենք Քրիստոս Աստուծոյ փառաւորեալ ժառանգութիւնը: Քանզի Իր հաւատացեալներին այգի անուանեց, Երկնաւոր Հօրը՝ մշակ, նաեւ մշակներ [անուանեց] առաքեալներին, որով սրբում եւ հաւաքում են յաւիտենական հնձանաններում: Որ

© National Library of Armenia

առաջին ժամից մինչեւ վերջին ժամը գործեցին եւ, ըստ յօժար կամքի, առաջին [քրիստոնեաներով] հաճոեցան վարձատրուեցին դիտողից: Որովհետեւ նրանք, ովքեր չնմանուեցին Աստուծոյ սիրուն, որ ծագեցնում է արեգակը չարերի եւ բարիների վրայ, այլ նախանձեցին, Աստուծոյ որդիների պէս չվարձատրուեցին: Իսկ բոլոր սուրբերն արդարութիւն եւ հոգեւոր մշակութիւն գործեցին եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան [կատարուած] ճշմարիտ քարոզութեամբ հասան խոստացուած ժառանգութեանը, որ ի Քրիստոս Յիսուս է: Եւ կենաց խօսքով լցրին տիեզերքը եւ ջրով ու Հոգով վերստին ննորոգեցին հաւատացեալներին: Այլեւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ փրկութիւն քարոզեցին՝ Աստուծոյ Որդու շնորհների միջոցով:

Քանզի բնութեամբ Հայր է Իր Միածին Որդու. եւ [Որդին] կեանք է կեանքից, լոյս լոյսից, բարութիւն բարութիւնից: Այլեւ ըստ շնորհի Հայր է անուանւում մեզ եւ լոյս, որ լուսաւորում է մեզ հաւատով, եւ ՝ կեանք, որ կենսագործում է մեզ: Ինչպէս մարդկանց մօտ է այսպիսի ճշմարտութիւն դիտւում. ոմանց՝ բնութեամբ, մի մասին էլ որբերի խնամածութեամբ է հայր [կոչւում]: Այսպէս մեզ մերձաւորներ է դարձնում, նաեւ արարչական խնամածութեան ընտանեաւորներ՝ բարերար Հօր շնորհով մոլորեալներին դէպի աստուածգիտութիւն դարձնելով եւ բարերարութիւնների հետ [մէկտեղ] Նրա պէս գթասիրտ լինելով: Մեղաւորներին [պէտք է] ուսուցանել, որպէսզի իսպառ չկորչեն, այլ խորագիտութեամբ, աստուածային օրէնքով ուղղութեան բերել՝ ուսանելու, գիտենալու, ճանաչելու իմաստութիւնն ու խրատը, եւ նշաններով ու հրաշքներով ուղղել թիւրեալներին: Աշակերտողներին [պէտք է] հաստատել հաւատքի մէջ եւ՝ ճշմարտութեան մէջ անշարժ մնալու՝ մեծ համբերութեամբ ամէն տեսակ փորձութիւններում: Եւ Տիրոջ սիրոյ օրինակով [պէտք է] յորդորել Նրա կոչման սիրով, գթութեամբ խնամել ու դարմանել, վերցնել բազում [հոգսերի] բեռներն ու կարիքները եւ կանչել դէպի Աւազանի եւ ապաշխարութեան շնորհները: Եւ համբերութեամբ եւ ճարտարութեամբ հոգեւոր ուղկանով [պէտք է] որսալ բոլորին առ բարեպաշտութիւն: Եւ [պէտք է] լուսաւորել մեղքով եւ անհրաւութեամբ խաւարածներին, սրբել, մաքրել եւ ազատել սատանայի ծառայութիւնից եւ նորոգել նորով, որ ըստ Աստուծոյ է՝ [ի] լուսաւորութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն եւ մերկանալու հին մարդուց իր չար գործերով, որպէսզի արժանի լինեն պսակների եւ փառքի:

Այս արուեստը Հօրից, Որդուց եւ Սուրբ Հոգուց են սովորել, որ միշտ գործակից է դարձնում Իր բարերար կամքին՝ ըստ ճշմարտութեան աւանդների, որ ժողովուրդներին անվրէպ հաւատով մերձաւորում է սուրբերի օթեւաններին: Եւ այսպէս [մարդիկ] աշակերտեցին օրէնքի ընտրութեամբ հաւատքի, յոյսի եւ արդար սիրոյ մէջ՝ ըստ վկայութեան առաքինիների, ճշմարիտ առաքեալների, մարգարէների, ուղղափառ վարդապետների. նաեւ՝ [նրանց], ովքեր ուսանեցին նրանցից՝ վկաները՝ տանջանքներում համբերութիւնը, խոստովանողները՝ ժուժկալութիւնը, ճգնաւոր կոյսերը՝ սրբութիւնը եւ առաքինութիւնը, ապաշխարողները՝ թողութիւնը: Եւ այս ամենով Աստուած մարդկանցից ժողովուրդ ընտրեց Իրեն՝ նախանձաւոր լինելու բարութեան գործերում եւ Իր բարերարութիւնից ստանալու անեղծութեան պսակը: Քանզի սիրեցին Արարչին եւ սիրուեցին Նրա կողմից. եւ [Աստուած] Իր շնորհներով փառաւոր եւ անուանի դարձրեց երկրի վրայ եւ երկնքում, որ հաստատապէս մնում է միշտ:

Քանզի եթէ ընտրութիւններ չլինէին Տիրոջից՝ ըստ արդարութեան օրէնքի, ի յայտ չէին գայ առաքինութիւնների մտերմութիւնները ու քաջութիւնները, կխափանուէին նահատակների վկայութիւնները, որ տանում են դէպի երանելի կեանք, սուրբերը կզրկուէին կենդանի երանութեան ժառանգութիւնից, ինչպէս նաեւ՝ հոգեղէնների զօրքերը, որոնք Աստուծոյ սիրոյ մէջ են: Քանզի ովքեր հեռացան Արարչի խնամքից, Անեղ Դատաւորից ընդունեցին պատիժները, որ հատուցում է ըստ արժանիքների, որպէսզի արդարները գնան դէպի յաւիտենական կեանք, իսկ մեղաւորները՝ դէպի յաւիտենական տանջանքներ: Իրաքանչիւրին աստուածային խօսքը յայտարարում է. «Եկէ՛ք,- ասում է,- Իմ Հօ՛ր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը» [Մատթ. ԻԵ 34] եւ «Գնացէ՛ք Ինձանից, անիծեալնե՛ր, դէպի յաւիտենական հուրը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար» [Մատթ. ԻԵ 41]: Քանզի նախ յարդարում է եւ կոչում բարի գործերի. «Եկէ՛ք,- ասում է,- Ինձ մօտ, բոլոր վաստակածնե՛ր եւ բեռնաւորուածնե՛ր, եւ Ես կհանգստացնեմ ձեզ. վերցրէ՛ք Իմ լուծը ձեզ վրայ եւ սովորէ՛ք Ինձանից հեզութիւնն ու խոնարհութիւնը եւ հանգիստ կգտնէք ձեր անձերի համար» [տե՛ս Մատթ. ԺԱ 29]: Եւ առաքեալն ասում է. «Նմանուեցէ՛ք Աստծուն ինչպէս սիրելի որդիներ եւ գնացէ՛ք սիրով, ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ եւ Իր Անձը մատնեց ձեզ համար [որպէս] պատարագ Աստուծոյ» [տե՛ս Եփես. Ե 2]:

Քանզի Աստուծոյ Որդին մարդկանց որդիներին Իր ժառան-

© National Library of Armenia

գորդներ դարձրեց եւ մեզ վրայ առատաբար սփռեց Սուրբ Հոգու շնորհները: Քանզի բարերար բարբառով մեղաւորներիս խոստովանութեամբ կանչեց ապաշխարութեան եւ հնազանդութեան աւետարանական կեանքին, որպէսզի լուսաւոր Աւազանով հաւատացեալներիս նորոգի որդեգրութեան Իր Հօրը: Որ բնութեամբ է Որդի, շնորհով մեզ Իրեն եղբայրներ դարձրեց: Եւ Հոգուց Աւազանով նորածնուածներից լուծարում է մեղքի արատն ու բիծը եւ ազատում չարի ծառայութիւնից: Քանզի ովքեր ի Քրիստոս Յիսուս մկրտուեցին, Քրիստոսով զգեստաւորուեցին՝ արու եւ էգ, թէ՛ հրեայ լինի եւ թէ՛ հեթանոս, թէ՛ ծառայ լինի եւ թէ՛ ազատ, բոլորը մի են շնորհով՝ Աստուծոյ որդիներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ [տե՛ս Գաղ. Գ 27], ովքեր Ամենասուրբ Երրորդութեան պարգեւներով իջան հոգեւոր Աւազանի արգանդը՝ օրհնութեամբ եւ քահանայական խորհրդածութեամբ, օծմամբ եւ Հոգով ի Քրիստոս լուսաւորուած՝ ըստ Տիրոջ խօսքի. «Ստացէ՛ք Սուրբ Հոգի՛» յորդեգրութիւն Քրիստոսի Հօրը» [տե՛ս Յովհ. Ի 22]: Քանզի քահանաները Նրանով ունեն կապելու եւ արձակելու իշխանութիւն, քանզի մկրտուողին հրաժարեցնում են սատանայից եւ [ուղեկցում] մեռնելու մեղքերի մահուան համար, որպէսզի մեղքով չապրեն երկրի վրայ: Քանզի ինչպէս մեռածն է լոում բոլոր [երկրաւոր] ունակութիւններից, նոյնպէս էլ մկրտուածը պիտի մեռած լինի մեղքերի համար եւ կենդանի՝ արդարութեան, քանզի Սուրբ Երրորդութեան շնորհներով Քրիստոսի կերպարանքն է առնում. այնուհետեւ [հարկ է] խորհել վերինը՝ ըստ Աւետարանի քարոզութեան ճշմարտութեան եւ անմահ Թագաւորի հաճութեան, արդար, ճշմարիտ եւ սուրբ վարքով հասնել անմահ կեանքի օթեւաններին, որ ի Քրիստոս Յիսուս է: Քանզի այսպէս է հոգեւոր Աւազանի վերստին ծնունդը, որ Ամենասուրբ Երրորդութեան շնորհով եւ մարդասիրութեամբ ախտաւոր ծնունդը վերստին դարձնում է առանց ախտի: Որոնք ո՛չ՝ արիւնից, ո՛չ էլ՝ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին [Յովհ. Ա 13]՝ [որպէս] առհաւատչեայ՝ Քրիստոսի ժառանգութեան մէջ: Քանզի այսպէս ծնւում են Աստուծոյ որդիներն Աստուծոյ Որդու կերպարանքով եւ դառնում ճշմարտութեան վկայողներ [ե՛ւ] ընդունելութեան, ե՛ւ անդորրի մէջ. եւ ուղիղ սրտով եւ ուղղափառ խոստովանութեամբ անսասանելի են մնում Աստուծոյ սիրոյ մէջ. եւ կենարար Հօր որդիներն անճառ շնորհներով ընծայւում են երկնաւոր [կեանքին]: Եւ այնուհետեւ Աստուծոյ գործն են կատարում եւ Նրա կամքն իրագործում՝ ըստ Բարերարի երախտիքի, եւ Արարչի շնորհով կցորդակից

են լինում երկնաւոր զօրքերին մարդկանց սպասաւորութեան մէջ, նրանց, ովքեր ժառանգելու են յաւիտենական փրկութիւնը, որ ի Քրիստոս է:

Եւ ինչպէս Աստուծոյ Որդին մարդու որդի դարձաւ եւ հագաւ մեր բնութիւնը եւ հոգով ու մարմնով կատարեց ամենայն արդարութիւնը, այնպէս էլ մենք հագնենք ուղղութիւնը եւ կատարենք ամենայն արդարութիւնն ի Քրիստոս, որպէսզի սիրով Աստուծոյ որդիներ լինենք եւ աստուածներ: Քանզի Աստուծոյ Որդին կամովի մարմնացաւ եւ յանձն առաւ մեր մարդկային բնութեան բոլոր կարիքները, բացի մեղքից: Նոյնպէս թող լինի եւ մեզ՝ աստուածեղէն զօրութեամբ անցնելու բոլոր կրքերի միջով առանց յանցման, որպէսզի կարող լինենք հասնել Քրիստոսի կատարման հասակին. եւ այնպէս, Աստուծոյ կերպարանքով ճշմարտացած, ժառանգենք Քրիստոսի արքայութիւնը: Եւ [մեզ] մշտապէս պէտք է Աւետարանի դաստիարակութիւնը, որ հրահանգում է մեզ դէպի առաքինութեան կարգը, որպէսզի, յանձանձելով Սուրբ Հոգու շնորհներից, սուրբ սրտով, ուղղափառ հաւատով առ Աստուած եւ ճշմարտութեամբ աճեցնենք արդարութեան վաստակները: Եւ Աստուծոյ նախախնամական սիրոյ տեսչութեամբ միշտ արթուն եւ զուարթուն լինենք բանասարկուի պատրանքներից. եւ հաստատուն յոյսով եւ առաքինութեամբ, սուրբ վարքով, մաքուր հոգով եւ մարմնով հասնենք խաղաղութեան նաւահանգիստը, յաւիտենական կեանքը, անպատում կայանները, որ Աստուծոյ անճառ սիրով պատրաստուեց սուրբերի համար: Եւ ինչպէս այս արեգակը, որ լուսաւորում է երկիրը եւ նրա վրայի արարածներին, որ ապրում են ծովում եւ ցամաքի վրայ, այնպէս էլ ճշմարիտ հաւատքի խօսքը եւ սրբութիւնը լուսաւորում են Աստծուն ցանկացողների միտքը: Եւ անձնիշխան կամքով երկնաւորները եւ երկրաւորները՝ մարդիկ եւ հրեշտակները, Սուրբ Հոգու շնորհներով ճշմարտութեան ուսուցիչներ եղան՝ ստոյգ գիտութեամբ եւ անմոլար իմաստութեամբ՝ ըստ օրէնքի արդարութեան: Եւ այնպէս, առաջնորդուելով Երրորդութեան լոյսով, ստոյգ պատմութիւններով, արարչական էութիւններով, արեգակի լոյսի պէս լցրին երկիրը եւ երկինքը ճառագայթներով՝ երկնաւորների եւ երկրաւորներիս կեանքի եւ փառքի համար: Իսկ սատանան, որ իր կարծիքով կամեցաւ աստուածանալ, իրեն տեսնել պայծառութեան մէջ եւ ամբարհաւաճեց, վրիպեց փառքից եւ վայր ընկաւ պատուից, որսաց մարդկանց ի կորուստ եւ, անոտի յոյսով թիւրելով, մոլորութեան

© National Library of Armenia

հոգով Աստուծոյ սիրուց գցեց ամբարշտութեան պէս-պէս ցանկութիւնների մէջ:

Իսկ եթէ մէկն ասի՝ ինչպէ՞ս Աստուած թոյլ տուեց սատանային տարածելու մոլորութեան աւօրէնութիւնները, իմացի՛ր, որ մարդիկ եւ հրեշտակներն իշխանական կամք ունեն, որ շնորհուած է Աստծուց, որպէսզի ընտիրները երեւան գան նրանց մէջ եւ ըստ արժանիքների բոլոր արարածների Արարչից ժամանակին ստանան հատուցումը՝ փառքը եւ տանջանքները:

Քանզի ինչպէս մաճը թագաւորեց Ադամի յանցանքի միջոցով, այնպէս էլ սատանան մեղաւորների վրայ տիրեց: «Քանզի մարդիկ,- ասում է,- սիրեցին մոլորութիւնը, որի համար Աստուած մոլորութեան ազդեցութիւն ուղարկեց, որպէսզի դատապարտուեն, քանզի համաձայնեցին չարի հետ» [տե՛ս Յովհ. Գ 19]:

Սակայն իսպառ չթողեց արարածներին Իր նախախնամական սիրուց, այլ ուղարկեց Իր Որդուն, որ եկաւ աշխարհ՝ փրկելու մեղաւորներին սատանայի ծառայութիւնից՝ հաւատքով [վերադարձնելով] Աստուծոյ Որդու փառքի ազատութեան մէջ, քանզի Փրկչի գալստեամբ լուծարուեց սատանայի բռնութիւնը մարդկանց որդիներից, որ տիրում էր մեղքով: Եւ Սուրբ Երրորդութեան հաւատքի շնորհներով պիտի թագաւորեն՝ թողութիւն գտնելով լուսաւոր Աւազանով, Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ, Սուրբ Հոգու ընդունելութեամբ, որ աղբիւրաբար բաշխեց շնորհներն արարածներին: Որպէսզի, արդարացած հաւատքով, Յիսուս Քրիստոսի միջոցով պահենք խաղաղութիւնն առ Աստուած՝ [որպէս] ծառայութեան առհաւատչեայ, որպէսզի Իր կամաւոր խաչելութեամբ նորոգի աներեւ փառքով: Եւ Մահով լուծարեց մաճը եւ Իր Յարութեամբ մեզ յարութիւն տուեց մեղքի մեռելութիւնից, որպէսզի եւ մենք յարութեան յոյսով միշտ նորոգման մէջ մնանք ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԶ

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսուհետ սկսենք նաեւ խօսքով ճառել մարտիրոսների մասին, որպէսզի պատուենք նրանց յիշատակը եւ երանի տանք նրանց

ճշմարիտ վկայութեան եւ սիրոյ համար եւ նրանց բարեխօսութեամբ բազում վարձք ստանանք մեզ համար: Այլեւ սաղմոսներով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով մատուցենք Աստուծոյ պաշտօնը[2] սուրբ սրտով գովելով անսկիզբ Էութիւնը եւ ամենազօր Տէրութիւնը, որպէսզի արժանի դարձնի մեզ սուրբ ժառանգութեան բաժնին, [արքայութեան] խոստումներին՝ Տէրութեան լոյսի եւ փառքի մէջ: Եւ բոլոր մարդիկ, որ հաւաքւում են սուրբերի յիշատակութեան ժամանակ, թող հաւատքով եւ սուրբ սիրով ճանաչեն նրանց նահատակութեան հանդէսը: Եւ նրանց բարեխօսութեամբ [պէտք է] աղաչել Աստծուն՝ ջերմեռանդ արտասուքներով, սուրբ սրտի պաղատանքներով օր ու գիշեր հսկելով, որպէսզի առաքինասէր վարքով զերծ պահի մեզ այս աշխարհի չարից: Այն սուրբերի պէս, որոնց յիշատակը կատարւում է ի փառս Աստուծոյ, նաեւ [նրանց պէտք է] իրենց մտերմութեան հանդէսը ցոյց տալ բոլորի Տէր եւ արարիչ Աստծուն, որ նրանց այնպիսի յաղթութիւն տուեց բռնաւորների եւ ճշմարտութեան հակառակորդների հանդէպ: Որպէսզի մեզ էլ տայ շնորհներ՝ յաղթելու մեզ վրայ բարձրացող երեւելի եւ աներեւոյթ բոլոր ճակատամարտերի դժուարութիւնները. եւ երկրպագութեամբ փառաբանութեան պաշտօն ընծայելու Աստծուն:

Քանզի այս իսկ է սուրբերի կամքը, որ ժողովուրդը նոյնպէս նրանց բարեխօսութեամբ Աստծուց յորդորուի պաշտօն [մատուցելու]. եւ այսպէս աշխատութեան փոխարէն [վարձք] են Ամենասուրբ Երրորդութիւնից: Քանզի Պօղոսը եւ Բառնաբասը Տէր Յիսուս Քրիստոսի անուամբ նշաններ գործեցին՝ ի ծնէ կաղին բժշկելով, եւ զարմացրին բոլորին, մինչեւ որ քուրմերը նրանց երկնքից իջած եւ մարդու կերպարանք ստացած աստուած համարեցին: Ուստի զոհելով կամենում էին պատուել նրանց՝ որպէս աստուածների: Եւ այս պատճառով [նրանք] պատառեցին հանդերձները եւ աղաղակելով ասում էին. «Մենք ձեզ նման մարդիկ ենք՝ ծառաներ բարձրեալ Աստուծոյ, որ արարեց երկինքը եւ երկիրը եւ նրանց արարածներին. եւ սա Նրա անունո՛վ բժշկուեց»: Այսպէս ասելով՝ հազիւ լռեցրին ամբոխին, որովհետեւ աւելի լաւ համարեցին մեռնել, քան Աստուծոյ պատիւն իրենց վերագրել եւ փառաւորուել մարդկանցից [տե՛ս Գործք ԺԴ 7-17]:

---

[2] Աղօթքների, ընթերցուածների, հոգեւոր երգերի որոշակի կանոն է: Այժմ կատարւում է Պատարագին նախորդող Գիշերային ժամերգութեան ժամանակ նշեցեալների յիշատակի համար:

© National Library of Armenia

Նման բան արեց սատանան, որովհետեւ Աստուծոյ պատիւն իրեն վերագրեց եւ բաժանուեց Իր Արարչի խնամքից, ընկաւ հրեշտակային դասերի փառաւորեալ կարգերից, լոյսի փոխարէն դարձաւ խաւար եւ գեհենի պատժի ժառանգորդ: Քանզի Աստուծոյ ծառաներ սուրբ առաքեալներին, մարգարէներին եւ ճշմարիտ վարդապետներին անարգում էր, քանզի գիտէին սատանայի վայր ընկնելու մասին՝ հպարտութեամբ ամբարտաւանելու եւ ամբարհաւաճելու պատճառով, եւ՝ խոնարհների ու հեզերի՝ ընկածների տեղերը բարձրանալու մասին: Մանաւանդ Քրիստոս, քանզի ըստ տնօրէնութեան առաւել յայտնի կերպով ցոյց տուեց Իր անճառ խոնարհութիւնը, որի մասին էլ ասում է. «Սովորէ՛ք Ինձանից, քանզի հեզ եմ եւ խոնարհ սրտով, եւ հանգիստ կգտնէք ձեր անձերի համար» [Մատթ. ԺԱ 29]:

Եւ բոլոր սուրբերն իրենց առաջնորդութեամբ, ճշմարիտ խոնարհութեամբ բոլոր Աստծուն հաւատացողներին ուղեկցում են դէպի բարձունքները՝ Տիրոջ մօտ, որպէսզի սուրբերի բարեխօսութեամբ փրկութեան եւ սխալանքների քաւութեան արժանանան բոլորի Փրկչից եւ այլեւս չվերադառնան դէպի սատանայի դժնդակ վարքը: Այլեւ [պէտք է] լսել հիւրաքաղչիւրի նահատակութեան եւ առ Աստուած կատարեալ սիրոյ մասին, [իմանալ], որ նրանց համբերութեան յոյսն Աստուծոյ նկատմամբ է, եւ նախանձախնդրութիւն ձեռք բերել Քրիստոսով: Որ հրով ու ցրտով, ջրով ու սառնամանիքով, քերանքներով[3] ու հարուածներով, բանտերով ու կապանքներով, սովով ու ծարաւով, սրով ու մահով, սպառնալիքներով ու ողոքանքներով[4] [փորձուեցին], որպէսզի երկչոտը զարհուրի, եւ արիւն փափկի: Այլ այսպիսի կարիքների, չարաչար տանջանքների վշտերը, նեղութիւնները եւ մարմնի տանջանքները ոչնչով [չկարողացան] քակտել ու խզել սուրբ սէրն Ամենասուրբ Երրորդութեան նկատմամբ: Եւ Աստուծոյ սիրոյ առաւելութեան պատճառով համարձակութիւն ստացան բարեխօսելու Տիրոջը: Քանզի բազում համբերութեամբ հակառակորդներից ընդունեցին այս ամէն տեսակ դժնդակ տանջանքները՝ Նրա երախտաւոր սուրբ սիրոյ համար, որ սիրեց մարդկանց, որ հրաւիրեց ու կանչեց:

Արդ, սուրբ սիրով սուրբերի հետ հետեւենք Կանչողին, այստեղի աշխատութեամբ, ջերմեռանդ շնորհալից արտասուք-

3 քերանք- մաշկը քերելու տանջանքի գործիք

4 ողոքանք- անուշ խօսքեր, յորդորանք, աղաչանք

ներով փնտրենք այնտեղի հանգիստը, Սուրբ Հոգու հրով հանգցնենք ցանկութեան հուրը, չար խղճմտանքից սրբենք մեր անձերի երեւելի զգայարանները եւ աներեւոյթ հոգու շարժումները: Որպէսզի, առ Աստուած սիրով ճշմարտապէս հաստատուած, կարողանանք սուրբերի ժառանգութեանը, [արքայութեան] խոստումներին արժանանալ այս աշխարհի կեանքի վախճանից յետոյ: Որպէսզի այսպէս հաղորդակցուենք սուրբերի ժողովին եւ տօնենք [նրանց յիշատակն] ի փառս ամենակալ Աստուծոյ, որ յաղթութիւն տուեց նրանց չար բռնաւորների նկատմամբ. եւ յաւիտենապէս փառաւորուեցին երկնքում եւ երկրի վրայ:

Այսպէս [պէտք է] յուսալ եւ հաւատալ սուրբերի ժողովին եւ բարեխօսութիւններին՝ որպէս քահանաների, որ կանգնած են Նրա առջեւ, որ նստած է Հօր աջ կողմում, եւ թող իւրաքանչիւրին աղօթքով պատարագ ընծայեն՝ կենդանի եւ վախճանուած հաւատացեալ ժողովրդի կամաւոր եւ ակամայ սխալանքների հաշտութեան համար: Եւ իրենց ճշմարիտ հաւատով, հանդիսաւոր ճգնութեամբ, առաքինասէր վարքով, արդար, սուրբ եւ ճշմարիտ բաղձանքով, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանքով թող հաւատան, որ բոլորի Փրկչից կստանան խնդրելին՝ ըստ հաւատացեալ ժողովրդի յոյսի, մանաւանդ՝ փրկական Խորհուրդի սրբապէս կատարումով ի Քրիստոս Յիսուս:

Այսպէս պէտք է իմանալ սուրբերի բարեխօսութիւնը հաւատացեալ ժողովրդի համար: Քանզի իրենց մտերիմ վաստակներով, իսկ որոնք իրենց մարմինները երկրի վրայ որպէս անուշահոտութիւն պատարագեցին Աստուծոյ անուան համար, նաեւ նրանց սուրբ հոգիները հոգեւոր բարեխօսութեամբ Աստծուն մղում են ողորմելու աշխարհին: Եւ նրանց ոսկորների նշխարները փրկութեան շնորհ են ընծայում հաւատացեալների ժողովին, ինչպէս քաջ յայտնի է բոլորին, որպէսզի նրանց նշխարներում բնակուող Աստուծոյ սէրը երեւայ եւ նշաններով իմացուի երկրի վրայ:

Իսկ արդ, [սուրբերն] իմանալիներով ունեն յուսացած բաների հաստատութիւնը եւ Աստուծոյ մերձաւորութեան ներկայութիւնը, բարեխօսութեան համարձակութիւնը, որ անտեսանելի է մարմնաւորներիս. իսկ [մենք] նրանց նշխարների եւ սուրբ ժողովների մէջ [գործող] Աստուծոյ շնորհատուր զօրութեան երեւելի [նշաններով] պէտք է իմանանք աներեւոյթները՝ [որպէս] առաւելագոյն այցելութիւն Տիրոջից: Քանզի հոգիները, ասում է, առաւել են, քան մարմինները և՛ Արարչի, և՛ արարածների համար: Քանզի այստեղ՝

© National Library of Armenia

երկրի վրայ, եւ երկնքում Արարչից այսպիսի շնորհներ տրուեցին առաքեալներին, մարգարէներին, մարտիրոսներին եւ բոլոր ընտրեալ սուրբերին: Որպէսզի նրանց առաջնորդական վկայութիւններով եւ առաքինասէր վարքով հաճոյ լինենք Աստծուն, եւ նրանք իրենց մշտատեւ բարեխօսութեամբ պատճառ լինեն մեր փրկութեան եւ կեանքի: Եւ մենք երանի տանք Աստծուց փառաւորուածներին, որ Աստուծոյ սիրոյ համար իրենց անձերը չարչարանքների ու մահուան մատնեցին եւ անմահ Թագաւորից ստացան անապական պարգեւներ եւ պատիւ: Այլեւ Աստուծոյ բոլոր սուրբերի վկայութեան յիշատակներին Ամենասուրբ Երրորդութեանը պաշտօն եւ փառաբանութիւն մատուցենք: Քանզի այսպէս է բոլորի Տիրոջ եւ Նրա բոլոր սուրբերի կամքը, քանզի Նա՛ է արժանի փառքի եւ պատուի բոլոր սուրբերից եւ արարածներից այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԹ

ՅՈՐԴՈՐԱԿ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Մեծ են Տիրոջ պատուիրանների մեծապատուութիւնները, եւ անբաւ՝ բարերար Աստուծոյ շնորհները, քանզի որոնց նախապէս ճանաչում էր, նրանց էլ կանչեց դէպի անվախճան կեանքի յոյսը եւ արդարացրեց ու փառաւորեց: Ովքեր հաւատքով ու երկիւղով պահեցին Նրա պատուիրանները եւ ճնազանդուեցին Նրա ամենախնամ սուրբ սիրուն, ընդունեցին կեանքի խօսքն իրենց անձերի մէջ եւ պտղաբերեցին ու աճեցին առաքինութեան վաստակներով, որոնց վարձքն անփոփոխ պահւում է հանդերձեալ կեանքում: Իսկ ծոյլերն ու անհնազանդները, որոնք արհամարհեցին ճշմարտութեան խօսքը եւ խափանեցին արդարութեան պտուղը, չարաչար սերմերն ընդունեցին թշնամուց եւ, մոլորուած ուղիղ ճանապարհներից, մեղանչեցին ճշմարտութեան աւանդի եւ խնամակալ սիրոյ առջեւ, նրանց վախճանը կորստեան վիհի մէջ է:

Սակայն բարերար Աստուծոյ խնամքը չի անտեսում նրանց, ովքեր դառնում են դէպի Նա: Բացում է ողորմութեան շնորհի դռները, ընդունում է գթութեամբ, երախտաւոր սուրբ սիրով եւ յանձնձում Նրա գթութեանն ապաւինածներին: Եւ երբ սգաւորը

զղջում է ճշմարիտ խոստովանութեան խոնարհուած ու փշրուած սրտով, Փրկիչը գթում է նրան, ողորմում եւ այցելում: Քանզի ծածկուած դառը մաղձը դուրս փսխեց եւ ցոյց տուեց, թէ՝ «Ատեցի մեղքերը եւ անարգեցի, սիրեցի Քո օրէնքները» [տե՛ս Սաղմ. ՃԺԹ 113]՝ առողջանալու, սրբուելու եւ արդարանալու:

Եւ, ըստ ունակութեան, ցաւերի համար մարդասէր Բժշկից թող ընդունի առողջութեան դեղերը, [այսինքն]՝ արդարութեան վարքը՝ ընդդէմ իր ունեցած մեղքերի եւ դժնդակ ցաւերի, որպէսզի այլեւս չընկնի նոյնի մէջ. եւ [գուցէ] այլեւս չգտնի մարդասէր Բժշկին:

Քանզի Տիրոջ խօսքը ծանրաբեռնուածներին խոստովանութեամբ դէպի ապաշխարութիւն է կանչում, մեղքերով խաւարածներին՝ դէպի արդարութեան լոյսը, մոլորուածներին՝ դէպի ճշմարտութեան գիտութիւնը, արդարութեան ճանապարհներից շեղուածներին ուղղութեան բերում՝ խոստովանութեամբ մահաբեր վարքը վերստին նորոգելու կեանքի մէջ եւ սատանայի բոլոր խարդախութիւնները լուծարելու: Քանզի «կամենում է, որ ամէն մարդ ապրի,- ասում է առաքեալը,- եւ ճշմարտութեան գիտութեանը հասնի ամենագիւտ սիրոյ տեսչութիւններով» [տե՛ս Ա Պետր. Գ 9, Ա Տիմ. Բ 4]:

Քանզի խոստովանութիւնը, ասում է մարգարէն, մեծ վայելչութիւն է Աստուծոյ եւ Նրա քահանաների առաջ [Սաղմ. ՂԵ 6]. ահա թէ ինչու՝ «Ասացի, թէ ինքս կպատմեմ իմ մեղքերը, եւ Դու կներես իմ մեղքերի բոլոր ամբարշտութիւնները» [Սաղմ. ԼԱ 5]: Որովհետեւ վէրքերն է բանում եւ ցաւերը յայտնում, զղջմամբ վրան է դնում բժշկութեան դեղը՝ ապաշխարութիւնը՝ հոգեւոր եռանդով, հանապազորդ արտասուալից աղօթքների մէջ՝ օր ու գիշեր անդադար: Եւ [ապաշխարողը], մարմինը պահքով ճնշելով, [պէտք է] խղճալի կերպարանք ստանայ, որպէսզի Աստծուն բազմախնամ շնորհներով գթալու խոնարհեցնի՝ մեղքերի թողութեան համար: Որովհետեւ ապաշխարութիւնը ոչ թէ մի բանով է կարգում, այլ բազում իրերով է շինւում եւ արդարութեան որոշակի չափի կանգնեցնում ընկածին ու յափշտակուածին:

Ապաշխարութեան ժամանակ նախ, առաջինը, [պէտք է] զղջալ, յանցանքները խոստովանել, անձը արտասուքի ընդունարան դարձնել անդադար աղօթքներով, տքնութեամբ ու միշտ պահքով եւ մեծ ապաշաւանքով հանապազ սգալ գործած յանցանքները: Երկրորդ՝ ըստ բոլոր վնասների ատել մեղքերն ու մեղքերի գործակիցներին եւ կշտամբել միտքն ու զգայութիւնները, որոնք դէպի չարը

© National Library of Armenia

հակամիտեցին եւ չպահեցին հոգեւոր օրէնքները, որոնք Նրանց աւանդուեցին Արարչից: Երրորդ՝ սիրել արդարներին ու առաքինիներին եւ Նրանց գործակիցներ դարձնել առ Աստուած աղօթքներով ու բոլոր բարի գործերում, որ յորդորում են դէպի ճշմարտութեան կարգերի աւանդները: Չորրորդ՝ յանցաւորներից խորշել մտքով, խօսքով, ամօթով ու պարկեշտ տեսութեամբ, աւելի լաւ համարել ընդհութիւն կրել արդարների հետ, քան հանգիստ՝ անիրաւների հետ: Հինգերորդ՝ Տիրոջ աճի ու երկիւղի մէջ կրթուել, մտքից բաց չթողնել վախճանի օրը, այլեւ՝ մեղաւորների պատիժները, եւ մեռցնել անդամները կրքերով ու ցանկութիւններով [հանդերձ] [տե՛ս Գաղ. Ե 24]: Վեցերորդ՝ օր ու գիշեր հսկել անձի փրկութեան համար, թէ ինչպէս կարելի է մեղքերը խափանել եւ փրկուել բարկութիւնից, որ գալու է չապաշխարողների վրայ: Եօթերորդ՝ չմոռանալ սեփական անձի անկումը, չպղերգանալ բարեպաշտութեան ճգնութիւններում, չվերադառնալ նոյն վնասին՝ չկարենալով վերստին բժշկուել: Ութերորդ՝ առողջացած, զգաստացած, սրբուած՝ ճանաչել ներքին ու արտաքին մարդում եւ ճշմարիտ ապաշխարողներին խոստացած աւետիսների յիշատակները: Իններորդ՝ ըստ հոգեւոր օրէնքի եւ Քրիստոսի Աւետարանի կատարելով բոլոր հրամայուածները՝ վերստին նորոգման սպասել քաւութեան Պատարագի միջոցով: Տասներորդ՝ երեւելի եւ աներեւոյթ [առաքինութիւններով] աճելով բոլոր բարեգործութիւնների մէջ, հոգու եւ մարմնի մեղքերի սպիերը ջնջելով եւ ապաշխարութեան հանդէսում յաղթող դառնալով՝ կարենալ համարձակութիւն ունենալ մեղսաքաւիչ, կենդանարար Խորհրդի հանդէպ եւ հաղորդակից, մարմնակից ու կցորդ լինել անճառելիներին: Եւ այնուհետ վերինը խորհել, ուր Քրիստոս է նստում, Նրա հետ նաեւ՝ սուրբերը՝ [որպէս] երանութեան առհաւատչեայ:

Ճշմարիտ խոստովանողներն ու ապաշխարողներն ազատւում են Քրիստոսի փրկաւէտ Մարմնով ու Արեամբ: Քանզի դա է մեր յոյսն ու քաւութեան առիթը, եւ դրանով են լինում ազատութիւն եւ մուտք դէպի արդարների ուրախութիւն ու ժառանգութիւն՝ Քրիստոսի սուրբ սիրոյ երախտիքներով, որն արդարացնում է ապաշխարող մեղաւորներին: Որովհետեւ ինչպէս [երբ] սուրը հատում է մարմինն ու վտանգ հասցնում անձին, [վերջինս] բժշկի կարիք է ունենում, որպէսզի որոշ դեղերով վերացնի վտանգները՝ առողջացնելու համար, այդպէս նաեւ ցանկութեան հարուածներն ու աղտեղի յիշողութիւններն ապաշխարութեան դեղերով [են բուժւում], վէրքերը ջերմեռանդ արտասուքով լուացւում եւ անարատ սրբութեամբ բժշկւում: Քանզի արտասուքի դռներ են ընդհութիւնների վշտերն ու ախտերի ցաւերը, վնասների կսկիծները, հոգիների տագնապները, շահից վրիպումները, թշուառ պատահարները, բռնաւորների կողմից վտանգները, յանկարծահաս տնանկութիւնը, սիրելիների կորուստը, դժնդակների անտանելի պէս-պէս ցաւերը եւ սրանց նման այլ [չարիքներ]: Իսկ հոգու շարժումները, չար դեւից յափշտակուելով ամէն տեսակ ցանկութիւնների մէջ, վշտացնում են միտքը դժնդակ, ապերախտ խորհուրդներով, որոնք չունեն արդարութեան կայացներ:

Ուստի պէտք է արտասուալից պաղատանք [մատուցել] Փրկչին, որ զերծ պահի այդքան վնասներից: Եւ վրէժխնդրութեան հետ հոգեւոր [կեցուածքով] նայել նրանց, առաքինութեան զէնքերով վայր կործանել նրանց եւ զօրավիգ ունենալ մեր կեանքի ապաւէն Յիսուս Քրիստոսին: Եւ այստեղից, բարիքների ցանկութիւններով, Աստուծոյ այցելութիւնը ստանալ, հաւատքով ընտանիների հանդէպ՝ գութը, Աստծուն սիրող հեռաւորների կարօտը, հոգեւոր գիւտերի մտերմութեան ծարաւը, սուրբերի հանդէպ փափագումը, խաղաղութեան քարոզը, խոնարհութեան խոկումը, խրատների քաղցրալից խօսքերը, որոնք կարծրացած միտքը յորդորում են առաքինութեան: Բոլորին օգտուելու [յանձնել] փրկութեան սիրոյ խնամքին եւ [յորդորել] դէպի հոգեւոր [բարիքների] լրման եւ բարի վայելքների օգուտները եւ ընդհութեան մէջ համբերելու՝ վայելելու համար շնորհների պարգեւները, որ տրւում են կեանքի յստակ Աղբիւրից: Ուստի ամբողջ սրտից մտերմութեամբ [կատարուող] աղօթքներն ու խնդրուածքները շնորհներով տանում են դէպի Նաւահանգիստ:

Եւ, միտքն արտասուքով զղջմամբ ճնշելով խոստումների յիշատակներով, խնամալից պաղատանքով, եռանդասէր խանդաղատանքով [պէտք է] շնորհալից արտասուք հեղել՝ մաքրելու միտքն ու մարմինը, որոնք իբրեւ անմաքրութիւն ստացել էին չար ու աղտեղի ցանկութիւնները: Քանզի արտասուքը մեղքերի հարուածների դառնութիւնը սրբում ու ողջացնում է, խոտանը դէն նետում մտքից ու զգայութիւններից, եւ [զղջացողը] Փրկչի նախախնամական սիրոյ հովանու ներքոյ է լինում եւ յոյսով ստանում [Տիրոջ] մխիթարութիւնը: Արտասուքը միտքը շարժում է դէպի Աստուած, մեղքերի թմրածութիւնից, ասես քնից, արթնացնում եւ հոգեշահ օգուտների սիրով վառում զգաստութեան զգուշութեան համար: Արտասուքը խմեցնում է հոգեւոր ըմպելիքը՝ սուրբ սիրոյ խնամքով,

© National Library of Armenia

Բարերարի տեսչութեամբ քաղցր կամքի յիշատակների գութով՝ բխած շնորհալից աղբիւրից՝ ազատութեամբ եւ յաւիտենական կենդանարար յոյսի ժառանգութեամբ համան:

Այսչափ են օգուտներն արտասուքով զղջումից, որոնք [մարդկային] հոսանուտ բարքը շարժում են դէպի փրկութեան գիտերն ու Աստուծոյ կամքի պահպանութիւնը եւ միտքն ամփոփում Աստուծոյ հաճութեան մէջ: Եւ որքան բարիքների շահ [կայ] արանցից, այնքան առաւել վնաս [կայ] ծուլութիւնից եւ սրտի խորքից առաջ եկող արտասուքի [հանդէպ] արհամարհանքից: Եւ, պղերգութիւնից արգելափակուած, չարի ազդման պատճառով դժնդակների մուտք է լինում, որոնք միտքն ու անդամները շարժում են դէպի ամէն տեսակ չարիքները, եւ զղջումն ու արտասուքը հեռանում են ծուլութիւնից ու խստացած, ամբարտաւան սրտից, որը քամահրում է շնորհների զեղջն ու չի հոգում նրա համար, ինչից զրկուեց: Եւ բարիքների փոխարէն ընդունում է չարիք, արհամարհութիւն, ամբարտաւանութիւն, ապիրատութիւն, յամառութիւն, ամբարշտութիւն, սնափառութիւն, ագահութիւն, որկորստութիւն, ցանկութիւն եւ չարի այլ ներմուծութիւններ: Եւ սրանցից բոնուածը դժուարութեամբ է բժշկում:

Սակայն մարդասէր Բանն անյոյս չի թողնում [նրանց], ովքեր զղջում են, հնազանդում Աստուծոյ աիով եւ ընդդէմ մեղքերի ցոյց տալիս ուղղութիւն, [ընդդէմ] անիրաւութեան՝ իրաւունք, [ընդդէմ] անարբութեան՝ սրբութիւն, [ընդդէմ] ամբարտաւանութեան՝ խոնարհութիւն, [ընդդէմ] բարկութեան՝ հեզութիւն, [ընդդէմ] որովայնամոլութեան՝ պարկեշտութիւն, [ընդդէմ] հեղգութեան՝ պնդութիւն, [ընդդէմ] ստութեան՝ միշտ ճշմարտութիւն, [ընդդէմ] անհնազանդութեան՝ հնազանդութիւն, [ընդդէմ] ագահութեան՝ չափաւորութիւն, [ընդդէմ] կեղծաւորութեան՝ պարզամտութիւն, [ընդդէմ] երդմնաճարութեան՝ չերդուելը, [ընդդէմ] մախանքի՝ բարերարութիւն, [ընդդէմ] ոխակալութեան՝ անոխակալութիւն, [ընդդէմ] խստութեան՝ քաղցրութիւն, [ընդդէմ] ատելութեան՝ միշտ սուրբ սէր, [ընդդէմ] անզղջութեան՝ արտասուքով զղջում, [ընդդէմ] առանց խղճմտանքի անխոստովանութեան՝ մեղքերի ինքնայանդիմանական խոստովանութիւնը, [ընդդէմ] անյուսութեան՝ ճշմարիտ յոյսը, [ընդդէմ] թերահաւատութեան՝ ճշմարիտ հաւատքը հաստատել [սեփական] անձում եւ քարոզել ճշմարտութիւնն ուրիշներին:

Այս է ապաշխարութեան ստոյգ աւանդների դէմքը. գործել [այն] ամէնը, ինչ հակառակ է մեղքերին՝ բոլոր տեսանելի եւ

անտեսանելի արդարութիւնները՝ ստոյգ ապաշխարողների մտերիմ խորհուրդներով ու խոստումների յիշատակներով եւ դարձեալ՝ ամենքի Տիրոջ կողմից չապաշխարողներին [սպասուող] սպառնալիքներով: Սրանցում [պէտք է] զգուշանալ եւ Տիրոջ աիով պատրաստ լինել [այն ամենին, ինչ] հաճելի է Աստծուն՝ Աստուծոյ անվրէպ գիտութեան [եւ] Դատաստանի Օրը (երբ խորհուրդներից, խօսքերից ու գործերից ոչինչ չի ծածկուելու) արդար Դատաւորի հաշիւ պահանջելու յիշատակներով:

Քանի որ առաքինիների ու պղերգների, հաւատացեալների ու անհաւատների ընտրութիւն եւ ըստ արժանիքների հատուցում [պիտի լինեն]: Պատիւները, մեծարանքներն ու երանութիւնները յաղթողներին են, ովքեր մարտնչեցին ընդդէմ մեղքերի ու հակառակորդի եւ յաղթեցին ու պսակուելով փառաւորուեցին: Այլեւ [նրանցն են], ովքեր ճշմարտապէս ապաշխարեցին իրենց յանցանքները: Իսկ տանջանքների աիաւոր սպառնալիքը պաշարում է անիրաւներին ու ամբարիշտներին [եւ տանում] դէպի պատիժների տոչորումը, որովհետեւ չապաշխարեցին: Եւ ապաշխարութեան կարգի տակ խոնարհուածներին ու հնազանդուածներին, ըստ Իր բազում ողորմութեան, ընդունում է կեանքի օթեւանները՝ ըստ մաքրման արժանաւորութեան: Այսպէս, ընդունածներն ու վտանգուածներն ինչ-ինչ սխալանքների համար արտասուքով ու բարի շարժումներով ողորմելու են դարձնում մարդասէր Տիրոջը:

Եւ ինչպէս մանուկներն են, որ չգիտեն պէտք եղած բաները խօսքով ստանալ մայրերի խնամքից, այլ դրանք խնդրում են արտասուքով ու ստանում սիրոյ խնամքից, որովհետեւ չեն դադարում լալուց, մինչեւ մայրական ողջ խնամքը չի կատարւում, ապա դադարում են [լալուց], զուարճանում ու հանգստանում, այսպէս էլ մե՛զ պէտք է լինել բարեգութ Տիրոջ հանդէպ, որ մեզ աներեւութապէս խնամում է արարչական սիրով, ընտում անարուեստ Աթոռներին եւ Իր բարերարութեամբ խնամում արարածներին: Որ նախահայրերի միջոցով յայտնի դարձրեց աստուածգիտութիւնը եւ մարգարէների միջոցով ցոյց տուեց ապաշխարութեան հանգամանքները [նրանց], ովքեր դարձի են գալիս: Իսկ Իր գալստեամբ բացեց ողորմութեան դուռը եւ ասաց. «Ձեկայ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին ապաշխարութեան» [Ղուկ. Ե 32]՝ խոստովանութեամբ, արարչական խնամակալ սիրով: Որպէսզի, աւետիսների կոչմանը փութալով, պարգեւներ ստանանք ապաշխարութեամբ քաւութիւն Ծնորհողից, որ բժշկում է աներեւոյթ հոգիներն

© National Library of Armenia

ու երեւելի զգայարանները:

Հաւատացեալների թողութիւնը նախ Աւազանից է՝ Ամենասուրբ Երրորդութեան ճշմարիտ խոստովանութեամբ: Որովհետեւ ասում է աշակերտներին. «Գնացէ՛ք, մկրտեցէ՛ք հաւատացեալներին յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու եւ սովորեցրէ՛ք պահել Քրիստոսի բոլոր պատուիրանները» [տե՛ս Մատթ. ԻԸ 20]: Որովհետեւ «ովքեր ի Քրիստոս մկրտուեցին, Քրիստոսով զգեստաւորուեցին» [Գաղ. Գ 27] եւ վերստին ծննդեամբ դարձան լուսոյ որդիներ ու արքայութեան ժառանգներ: Քանզի շնորհներով դառնում են ցերեկուայ որդիներ գիշերային ծննդից՝ ազատուելով խաւարի իշխանութիւնից, եւ Բարերարի օգնականութեամբ ապրում են երկրի վրայ լուսաւոր վարքով: Եւ, ըստ Նրա շնորհների արուեստների, հեռաւորները դառնում են մերձաւորներ, եւ օտարացածներն ընտանենում են ճշմարիտ հաւատքով ու անբիծ սիրով: Եւ սատանայի կողմից մեղքերի ու, մեղքերի պատճառով, մահուան մէջ բոնուածներին [Տէրն] արդարացնում, կենսագործում եւ հրաւիրում է դէպի Իր արքայութիւնն ու փառքը, որ պատրաստեց [Իրեն] սիրողների համար:

Դարձեալ՝ մեղաւորների համար ցոյց տուեց նաեւ ապաշխարութեան պարգեւները եւ յայտնի դարձրեց առաջին [արդարների օրինակներով]: Ինչպէս լսում ենք Դաւթի մասին, որ մեղանչեց, դարձաւ խոստովանեց ու ապաշխարեց. նա լալիս էր ողջ գիշերն ու խմելիքն արտասուքով խառնում Տիրոջ բարկութեան պատճառով, նրա աչքերից արտասուքի վտակներ էին հոսում, որովհետեւ Տիրոջ պատուիրանը չպահեց, եւ ցանկասէր աչքերն էր մաշում արտասուքով եւ սրբուեց մեղքերից: Նոր [Կտակարանի] մէջ էլ Պետրոսն է, որ ուրացաւ եւ չլիշեց Տիրոջ նախապէս ասածը, մինչեւ որ, աքաղաղի ձայնից սթափուելով, յիշեց եւ «ելնելով,- ասում է [աւետարանիչը],- դառնապէս արտասուեց» [Մատթ. ԻՋ 75]: Եւ ջերմ արտասուքի համար թողութիւն ստացաւ, եւ առաքելական շնորհները վերստին մնացին, ինչպէս Դաւթի մարգարէական [շնորհները]: Էլ չեմ ասում Հին եւ Նոր [Կտակարանների] այլ մեղանչածների ու ապաշխարածների մասին (ինչպէս պատմում է աստուածային Գիրքը), որոնք ցոյց են տալիս ստոյգ ապաշխարութեան օրինակներ:

Եւ այսպէս, ապաշխարութեան կեանքի դուռը չի փակուելու մինչեւ աշխարհի վախճանը: Որպէսզի [ապաշխարութեան] աւազանի հաճապազորդ արտասուքով լուանանք ու սրբենք հաճապազորդ

սխալները, որովհետեւ ամէն օր մեղանչում ենք՝ թէ խորհրդով, թէ խօսքով, թէ լսելով, թէ տեսնելով [եւ] թէ որեւէ շարժմամբ: [Ուստի] թող հաճապազորդ աղօթքներն ու արտասուքի լուացումները չպակասեն:

Քանզի, որ մեղքերը կտակով են, այսինքն՝ օրէնքի ներքոյ, նրանց համար ժամանակ է սահմանւում, հեռացնում են Եկեղեցուց, ժողովրդից ու Սեղանից, որովհետեւ մեծ վնասների դիմաց նաեւ մեծ ջանք ու աշխատութիւն են հարկաւոր: Եւ ովքեր քիչ սխալներ ունեն, բժշկութիւնն է արտասուքով սրբելը: Իսկ եթէ սրտի խորքում աղտ կայ, ապականուած է անդամներով, այնտեղ արտասուքի վտակներ, հոգու հուր ու եռացում են հարկաւոր, որ [աղտը] սրբում, հալեցնում ու հեռացնում են: Եւ ով ակամայ վրիպած քիչ սխալներ ունի, [պէտք] է զղջայ, հառաչի եւ արտասուքով իսկոյն կսրբուի:

Ում մեղքերի վէրքերը սաստիկ են, եւ ինքնակամ է բոնուել [նրանցից], որ օրէնքով ունի Տիրոջից տրուած [քրիստոնէութեան] անունն ու կարգը, [այդպիսին] ունի սպառնալիքների հանգամանքներ: [Ուստի], ըստ յանցանքների [չափի], թող մեծ ջանք, ջերմեռանդ արտասուք, սրտի փշրուածութիւն ձեռքբերի՝ որոշակի ժամանակով հեռացուելով [Եկեղեցուց]՝ խափանելու համար խիստ մեղքերի դժնդակ ձմեռը: Որպէսզի Հոգու հարաւային տաք քամու փչմամբ ժամանի հոգեւոր գարունը, սաստիկ անձրեւի պէս վերից [թափուեն] արտասուքի հոսանքները, որ թարմ հողը ծլեցնի բոյսեր ու ծաղիկներ, տունկերը սաղարթաւորուեն ու պտուղներ [տան], որոնք վայելելով՝ թագաւորներն ու ռամիկները զուարճանում են: Սոյնպէս էլ ով Հոգու ջերմութեամբ հեղում է արտասուքի հոսանքներ եւ խզում ձմեռային մեղքերի կապանքները, առաքինութեան բոյսեր են արձակւում, եւ արդարութեան տնկիները պտուղներ [են տալիս], որով երկնաւորներն ու երկրաւորներն ուրախանում են Աստուծոյ փառքի համար:

Ապաշխարողներն այսպիսի միտք եւ բարք պէտք է ստանան, որպէսզի ազատուեն գեհենի անշէջ հրի եւ անմահ որդերի հարուածների պարտքից: Եւ, հաստատուելով արտասուքի աւազանով՝ ստոյգ ապաշխարութեամբ, արքայութեան ժառանգաւորներ լինեն՝ հագնելով սրբութեան լոյսով ճառագայթող, առաքինութեան վկայութիւններով [զարդարուած] պատմուճանը՝ սուրբերի հետ պսակուելու եւ վայելելու անվախճան երանութիւնների մէջ:

Ապաշխարութիւն է սեփական անձը ամբաստանելը եւ վնասակար ու չար ցանկութիւններից հրաժարուելը: Եւ ամէն չարիքի

© National Library of Armenia

փոխարէն ընդդէմ դնել արդարութիւնը, որպէսզի խափանի մեղքերը եւ սուրբ սիրով ու արտասուալից աղօթքներով աճեցնի արդարութեան [գործերը], պաճքով ցամաքեցնի գիջութեան պղտոր, անժոյժ[5] բխումը, որն ապականութիւն է անդամներում: Որովհետեւ [ինչպէս որ] աղբիւրների ջրերն ու աւձրեւների սրսկումները հանգցնում են երեւելի հուրը, [նմանապէս] եւ Աստուծոյ հանդէպ սէրն ու ջերմեռանդ արտասուքը հանգցնում են ցանկութեան հուրը եւ խափանում մարմնի կամքն [ու] ինքնագործութեան շօշափելիքներով աղտեղի շարժումների հոսումները: Եւ այլեւս չմերձենա՛լ ախտերի նոյն գարշութիւններին, այլ մաքուր մտքով ստանալ մաքրութիւն: Որպէսզի անարբութեան սպառնացող պատուհասը վրայ չհասնի այն օրը, երբ չգիտի, եւ այն ժամին, երբ չի կարծում, եւ, ըստ վնասների, վրէժխնդիր լինի:

Այլ [պէտք է] սիրել սրբութիւնը, որ բնակւում է Տիրոջ եւ սուրբերի մէջ: Իսկ անսուրբերի մասին ասում է. «Նրանց որդը չի մեռնում, եւ հուրը չի հանգչում. եւ խայտառակութիւն կլինի բոլոր մարմնաւորների համար» [Ես. կԶ 24]: Եւ մեղքի բոլոր մթերումները [պէտք է] թօթափել մտքից եւ մարմնից, մինչեւ որ կարողանայ ասել. «Գալիս է այս մեղասէր աշխարհի իշխանը եւ իմ մէջ մեղքի նշոյլ չի գտնի, այլ [միայն]՝ Քրիստոս՝ ըստ Աւետարանի կեանքի, որ վերստին նորոգեց մեզ ստոյգ խոստովանութեամբ եւ արտասուքով, ապաշխարութեամբ եւ տնանկների հանդէպ գթով՝ ամենայն աստուածահաճ եւ առաքինասէր վարքով»: Եւ [պէտք է] ճշմարտութեան այգու մշակներ լինել հաւատքի եւ ուղիղ վարքի գլխաւորութեամբ, որով ապրում է երկրի վրայ եւ առաքինանում: Եւ, ելնելով այս աշխարհից, իր հետ է տանում բոլոր արդարութիւնները՝ երեխայութեան անմեղութիւնը, մանկութեան անարատութիւնը, երիտասարդութեան աննշութիւնը, ծերութեան մաքրութիւնը՝ ըստ իւրաքանչիւր տարիքի դասելով բոլոր առաքինութիւնները. եւ ժամանակների փոփոխման համաձայն, ըստ իւրաքանչիւր վաստակի, հաւատքի այգու մշակները վարձք են ստանալու ամենքի Տիրոջից: [Պէտք է] յորդորել դէպի վերին կոչումը, ուր Քրիստոս նստում է Աստուծոյ աջ կողմում՝ Վերին Երուսաղէմում, որ բոլորի մայրն է. ուր նաեւ նախապէս ամբարուեցին բարի առաքինութիւնների գանձերը, ուր հաստատուած է մեր յոյսը՝ անմահ երանութիւնները, անսպառ վայելչութիւնները, անվախճան ուրախութիւնը, անզգջ բարիքները՝ Քրիստոսի հետ վայելելու: Միաձայնո՛ւն խնդութիւն երկնաւորների եւ երկրաւորների, երանութի՛ւն Քրիստոսի փառքի մէջ՝ սուրբ սիրոյ բարերար երախտիքների գործակցութեամբ: Որ [մեզ] որդեգրութեան ընծայեց Հօրը, յանձնեց Սուրբ Հոգու խնամքին եւ իր արքայութեան ժառանգորդներ դարձրեց: Որ այստեղ արդարացրեց եւ այնտեղ, թագով պսակելով գլուխը, փառաւորում է աստուածային խրախճանքներում, մշտապէս [հաստատում արքայութեան] հրճուանքներում. Ամենասուրբ Երրորդութեան բարիքներում: Քանզի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

5 անժոյժ - անժուժկալ, անկարգ, անտանձ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՍԱՑ ԱՂՕԹՔԸ, ԵՐԲ ՄԷԿԸ ՈՐՈԳԱԾԹԻ ՄԷՋ Է ԸՆԿՆՈՒՄ[6]

Օրհնեա՛լ է Քո անքաւ մարդասիրութիւնը, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս. ինչո՞ւ ես ինձ լքում: Եթէ՝ մեղքերի համար, Դո՛ւ ես միայն առանց մեղքերի, եւ Քո անունը անհնարելութիւն եւ մարդասիրութիւն է յայտնում: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ ես միայն մարդասէր: Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մէջ ընկածիս, քանզի Դո՛ւ ես միայն առանց մեղքերի: Հանի՛ր ինձ իմ անօրէնութեան տիղմից, որպէսզի յաւիտեան չընկղմուեմ: Փրկի՛ր ինձ իմ թշնամուց, քանզի անա առիւծի պէս մռնչում է՝ կամենալով կլանել ինձ: Արդ, Տէ՛ր իմ, շողացրո՛ւ Քո փայլատակումները եւ կործանի՛ր նրա զօրութիւնը. թող երկնչի եւ խաւարի Քո երեսից, քանզի տկար է եւ անզօր՝ կանգնելու Քո եւ Քեզ սիրողների առջեւ: Տեսնում է Քո Խաչի նշանի զօրութիւնը եւ զարհուրում եւ ամաչելով դուրս հալածւում նրանցից, որ կանչում են Քեզ: Այժմ, Տէ՛ր, պահպանի՛ր ինձ եւ փրկի՛ր, քանզի Քեզ ապաւինեցի. հանի՛ր ընդերքից իմ անձը, որպէսզի ծածուկ հնարներով ինձ հետ մարտնչող ննջգաւորն իսպառ չկործանի ինձ: Որ խորհուրդների Տէր ես եւ քննում ես

6 «Գանձասար» մատենաշարով լոյս տեսած «Աղօթագրքում» (Երեւան, 1992, էջ 236-239) զետեղուած այս աղօթքի բնագիրը զգալիօրէն տարբերւում է «Ճաճախապատումի» հնագոյն ձեռագրի բնագրից, որը լոյս է տեսել Վենետիկում 1954 թ.: Ուստի պատշաճ նկատուեց նոր թարգմանութիւն կատարել՝ ըստ վերոյիշեալ հրատարակութեան:

© National Library of Armenia

սրտերն ու երիկամները, սրբի՛ր իմ սիրտը եւ խորհուրդները զգեղ ու պիղծ խորհուրդներից, որպէսզի իսպառ չկորչեմ յաւիտենական կորուստով: Որ կարողդ ես ամէն ինչի մէջ, ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ իմ. մեղաւոր հոգուս արտասուքի շո՛ռի տուր, որպէսզի լուանամ մեղքերի բազմութիւնը՝ փրկուելու աւազորմ հրեշտակների ձեռքից, որոնք գեհենի հուրն են գցում ամբարշտին: Երանի՛ թէ լայի հաճապազ՝ աղաչելով Քեզ, Աստուա՛ծ, որպէսզի անարժան չգտնուեմ այն ժամին, որ գալու ես: Ձլսե՛մ աճաւոր ձայնը, թէ՝ հետո՛ւ գնա, մշա՛կդ անօրէնութեան, չգիտեմ՝ որտեղից ես: Բարձրեա՛լ Աստուած՝ միայն՝ առանց մեղքերի, այն օրը շնորհի՛ր ինձ՝ մեղաւորիս, Քո բազում գթութիւնը, որպէսզի իմ ծածուկ անօրէնութիւնները չյայտնուեն տեսնող հրեշտակներին եւ հրեշտակապետներին, մարգարէներին, առաքեալներին եւ արդար սուրբերին: Փրկի՛ր ինձ՝ ամբարշտիս, Քո ողորմութեան շնորհով, ընդունի՛ր ինձ փափուկ դրախտի մէջ կատարեալ արդարների հետ, ընդունի՛ր Քո մեղաւոր ծառայի աղօթքները Քեզ հաճելի դարձած սուրբերի բարեխօսութեամբ, Յիսո՛ւս Քրիստոս, Տէ՛ր մեր, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԳԱՆՁԱՍԱՐ

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՃԱՌԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցու հայրերի աշխատութիւնների հրատարակումը կարեւոր է քրիստոնէական մտքի, Տիեզերական եկեղեցու պատմութեան առումել համակողմանի ուսումնասիրման համար: Դրանց մէջ առանձին չահեկանութեամբ աչքի են ընկնում, մասնաւորաբար, այն աղբիւրները, որոնք լոյս են սփռում դասական շրջանի, յատկապէս՝ Գ-Դ դարերի եկեղեցու աստուածաբանութեան, հերձուածողական գաղափարաբանութեան հետազօտութեան կարօտ կողմերի վրայ: Այս առումով խիստ ուշագրաւ է ս. Բարսեղ Կեսարացու (+379թ.)՝ Սուրբ Հոգուն նուիրուած ճառը[1], որն ուղղուած է այդ ժամանակ բաւական տարածուած սուբորդինացիոն տեսութեան դէմ: Այն չարադրուած է Ամֆիլոքիոս Իկոնացու (+394թ. յետոյ) խնդրանքով: Երկի յունարէն ձեռագրերի թիւն անցնում է երեսունից: Դրանք թուագրւում են Թ-ԺՋ դդ.: Բնագիրն առաջին անգամ հրատարակել է D. Erasmus Basileae-ն 1532թ.: Քննական բնագիրը հրատարակել է C. F. H. Johnston-ը ("The Book of Saint Basil the Great, Bishop of Caesarea in Cappadocia on the Holy Spirit", Oxonii, 1892) եւ B. Pruche-ը ("Basil de Césaree, Traité du Saint-Esprit", Text grec. introduction et traduction [Sorces Chrétiennes, 17, Parisiis, 1968]): Երկասիրութեան ասորերէն թարգմանութիւնը յայտնի է երկու ձեռագրով՝ Brit. Mus. Add. N 14542 (509թ.) եւ N 17143 (ե դ.): Այն տակաւին անտիպ է: Լատիներէն թարգմանութեամբ պահպանուել է մի փոքր հատուած (Migne, PG, t. 32, col. 149BC), որ զետեղուած է հայրաբանական մի ժողովածուի մէջ՝ «կեղծ» Դիոնիսիոսի անունով[2]:

Երկասիրութեան հայերէն թարգմանութիւնը յայտնի է երկու

1 Տե՛ս Migne, PG, t. 32, col. 67-218:

2 Մատենագիտական տուեալներն՝ ըստ J. Gribomont-ի, տե՛ս Migne, PG, t. 32, p. 1-2, նաեւ՝ M. Geerard, "Clauis Patrum Graecorum", v. II, "Ab Atanasio ad Chrysostomum", Brépols-Turnout, 1974, p. 143 (N 2839):

© National Library of Armenia

ընդօրինակութիւններով, որոնք պահպանւում են Մաշտոցի անուան Մատենադարանի N *1315, 1798 ձեռագրերում: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հայերէն թարգմանութիւնը զգալիօրէն տարբերւում է յունարէն բնագրից: Տարբերութիւնների ծաւալն ու որակը յայտորոշ դարձնելու նպատակով զուգադրաբար վկայաբերենք առանձին հատուածներից մի քանիսը.*

1. εἴπερ καθ᾿ ὅν τρόπον τὰ ἐν γενέσει καί φθορᾷ πρότερα εἶναι ἀλλήλων λέγεται, κατὰ τὸν αὐτὸν τρόπον ὁ Θεὸς καί Πατὴρ τῷ Υἱῷ καί Θεῷ τῷ ὑπάρχοντι πρὸ τῶν αἰώνων παραμετρούμενος ὑπερέχοι. Ἀλλὰ γάρ ἡ πρός τὸ ἄνω ὑπεροχή τοῦ Πατρὸς ἀθεώρητος, τῷ ἀπαξαπλῶς μήτε ενθύμησιν, μήτε τινὰ ἔννοιαν τὴν τοῦ Κυρίου γέννησιν ὑπεραίρειν, καλῶς τοῦ Ἰωάννου διὰ δύο φωνῶν εἴσω περιγράπτων ὅρων τὴν διάνοιαν ἀποκλείσαντος, ἐν τῷ εἰπειν. Ἐν ἀρχῇ ἦν ὁ λόγος.

Արդ, բնութիւն այս կենդանեաց է, որ սահմանի ի ներքոյ ժամանակաց եւ աշխարհաց, եւ կեանք Աստուծոյ սահմանի ժամանակօք եւ տեղեօք: Իսկ զԱստուած զիա՞րդ առեալ դնիցեմք ի չափ սահմանի եւ կշռեմք ընդ բովանդակութեամբ բանի, որ ցուցանէ վասն վայրի եւ տեղւոյ, զի չիք յայսմ ամբարշտութեանս համեմատ եւ կոիւ եւ կուրութիւն տխմարութեան ի գիտութենէ, որ ընդ խաւար համարի, զի որ ինչ ժամանակաւ գտեալ է, ապականացու ազգիս ասի եւ սմա մերձաւոր եւ հեռաւոր տեղի ասի եւ աշխարհ՝ ձգմամբ երկարութեան եւ կարճութեան, բարձրութեամբ եւ խորութեամբ, երկայնութեամբ եւ լայնութեամբ: Եւ այսոքիւք, որ ինչ արարեալս է, ի պէտս արարելոցս եւ եղելոցս: Եւ մեկնեալ է Հ․յր եւ **Որդի եւ Հոգի Սուրբ**[1] ի մերմէ նմանութենէս, զի պատճառ լինելոյ արարելոցս եւ աշխարհ եւ նոքա, որք աշխարհի յարարչութենէ երրորդութեան են:

(...Բայց կեանքի կեցութիւնը, որ գերազանցում է ամէն տեսակ ժամանակ եւ յաւիտենութիւն, ոչ միայն անպատիւ կլինի չափել ներկայ ժամանակից սկսած, այլեւ՝ չափից աւելի անմիտ, եթէ միայն պատկերացուի, թէ ինչպէս կարելի է խօսել սկիզբ եւ ապականութիւն ունեցող իրերի մասին, երբ մէկը միւսից առաջ է, ճիշտ այդպէս էլ՝ ասել՝ Աստուածը եւ Հայրը, որ համեմատելի է յաւիտենութիւնից

1 . Այս եւ յետագայ ընդգծումները մերն են - Ց. Ք.:

առաջ գոյող Որդու եւ Աստուծոյ հետ, գերազանցում է Նրան: Ընդհակառակը՝ աւագութեան յարաբերութեամբ Հօր այսօրինակ գերազանցութիւնը յարմար չէ, որովհետեւ ո՛չ բանականութիւնը, ո՛չ հասկացողութիւնը ոչ մի կերպ չեն ծաւալւում Տիրոջ Ծննդից անդին, երբ Յովհաննէսը երկու խօսքով ամփոփեց այդ հասկացութիւնը բերուած սահմանում՝ ասելով. «Ի սկզբանէ էր Բանն») (Migne, PG, t. 32, col. 89A)*:*

Արդ, եթէ անկանիցի Հայր ի միտս արարելոցս քննութեամբք, լքցի առ այս եւ մնասցէ ի հարցուածոց, եւ լինի վասն նորա պապանձեալ միտք եւ ամենեւին ի դողումն, եւ եթէ անկանիցի ծուփս այս ի միտս նոցա, եթէ ծնունդ Որդի Հօր է, ամաչեսցեն, կուրասցին խորհուրդք ամենայն՝ ի քննել զյեղանակ այսր կարծեաց, վասն զի ոչ ինչ կարիցեմք ասել, քանզի բարձրութիւն Նորա վեր է, քան զամենայն բնութիւնս, եւ չիք չափ անբաւութեան Նորա, զի ծածուկ եւ աներեւոյթ է յամենայն արարածոցս քննութիւն Նորա: Արդ, զարմանք սքանչելեաց է բարբառն Յովհաննու, քանզի երկու բանիւք արգել պաշարեաց զամենայն միտս եւ ցանկեաց, փակեաց զամենայն խորհուրդս եւ սահմանեաց, կացոյց զամենայն շարժմունս...

2. ... μυρίαις αὐτὸν ἑτέραις προσηγορίαις ἀποσημαίνει ποτὲ μὲν ποιμένα λέγουσα

(...բիւրաւոր անուններով է կոչում Նրան. մէկ՝ Հովիւ...) (col. 96D-97A)*:*

Վասն այսորիկ բազում անուամբք, որ առ մեզ, յորջորջեցաւ, որք լի են նշանօք փրկութեան: Անուանեցաւ Հովիւ...

3. ...ἣν ἐκ τῆς περί τὸ ἴδιον πλάσμα εὐσπλαγχνίας κατὰ τὸ τῆς χρείας ἰδίωμα, τοῖς δεομένοις παρέχεται.

(...որոնք, ըստ Իր արարչագործութեան նկատմամբ եղած ողորմութեան, տալիս է պահանջողներին՝ համաձայն իրենց պէտքի) (col. 97A)*:*

...զի իբրեւ յԱրարչէ առ արարածս Իւր ցուցցէ զյորդառատ ողորմութիւն Իւր բիւրօք պարգեւօք, զի լինութիւն Նորա ի կարօտեալս ընծայեցուսցէ զփառս Իւր:

© National Library of Armenia

4. Ὁπότε τοίνον καὶ ἐφ' ὧν διορίσθη το <<δι' οὗ>> κυρίως λέγεσθαι, ἐπὶ τῶν αὐτῶν τούτων το <<ἐξ οὗ>> μετελήφθη, τίνα λόγον ἀφορίζειν τὰς λέξεις.

Արդ, յամենայն ժամ, յոր եւ ասի «նովաւ», մարթի պատշաճել ի վերայ նորին խորհրդոյ եւ «ի նմանէն»: Արդ, զի՞նչ ինչ է այն բանք զրպարտութեան ի վերայ Աստուածութեան այսու սիղղոբա-յիւք, որ ոչ անջրպետին եւ ընտրին ի միմեանց:

(Իսկ եթէ որեւէ բանի մասին որոշակի խօսենք իրական իմաստով, դա «նրանով»-ն է, որի նոյն իմաստն ունի «նրանից»-ը, ապա ինչպիսին է բարեպաշտութիւն զրպարտող հիմքը, որ վճռապէս բաժանում է այդ բառերը) (col. 85C)*:*

5. Τί δὲ ἡ δύσις ἅπασα μικροῦ δεῖν, ἀπό τοῦ Ἰλλυρικοῦ μέχρι τῶν ὅρων τῆς καθ' ἡμᾶς οἰκουμένης, οὐχὶ τὴν φωνὴν τούτην πρεσβεύει.

Եւ ամենայն Արեւմուտք մինչեւ ի ճիւսիս եւ քրիստոնէութիւն ընդ ամենայն տիեզերս այսու ճշմարիտ օրհնութեամբ առնեն զխնդրուածս իւրեանց առ Աստուած:

(Եւ գրեթէ բովանդակ Արեւմուտքը՝ Իլլիրիայից մինչեւ մեր կողմից բնակեցուած երկրների սահմանները, արդեօ՞ք չի նախընտրում այս բարբառը) (col. 208C)*:*

6. Ἀλλ' ἡ μὲν παρασκευὴ τοῦ καθ' ἡμῶν πολέμου ἐξήρτυται, καὶ πᾶσα διάνοια πρὸς ἡμᾶς τέταται, καὶ γλῶτται βλασφημῶν ὧδε τοξεύουσι σφοδρότερον βάλ-λουσαι ἢ τὸν Στέφανον τότε τοῖς λίθαις οἱ χριστόφονοι μὴ λανθανέ τωσαν δέ, ὅτι πρόσχημα μεν ἡμᾶς ὁ πόλεμος ἔχει, ἡ δὲ ἀλήθεια τῶν γινομένων πρὸς τὸ ὕψος βλέπει.

Արդ, ի նոցուն բանից անտի մարտ պատերազմի կազմեցաւ ընդդէմ մեր պէս պէս հակառակու-թեամբք, եւ խորհուրդք վատախորհ-ուրդք եւ չարք ներածեն եւ ընդ կրակն դարձուցանեն զճշմարտու-թիւն, եւ լեզուք շանալեզուք ապի-րատութեամբ հանդերձ առ մեզ ձգտեցան եւ բարկութեամբ եւ հայ-հոյութեամբ ձիգ առեալ տարածեալ թանձրատարափ նետս նանրու-թեան եւ առ մեզ առաքեն սլաքիւք, որ ոչ իբր զամենայն երկաթ, այլ ի հուր անդր ներկեալ եւ արեալ: Բայց մեք յերկեղէ նոցին ոչ ինչ երկնչիմք, այլ Տէր զնոյն զԱստուած զՍուրբ Հոգին առնումք ի սիրտս մեր ուղիղ խոստովանութեամբ…

(Մեր դէմ է ուղղուած պատերազմի նախապատրաստութիւնը, մեր դէմ է ուղղուած ամէն տեսակ խորհուրդ, եւ հայհոյող լեզուներն այստեղ տէգեր են նետում աւելի մեծ լարումով, քան քրիստոսասպաններն էին քարեր նետում Ստեփանոսի վրայ: Թող չքողարկուի՛ այն, որ նրանց յարձակումները մեր նկատմամբ ունեն սոսկ երեւութական պատրուակ, մինչդեռ իրականում մղուած են դէպ վեր) (col. 112C)*:*

Հայ թարգմանիչը ձգտում է դաւանաբանական յստակութիւն մտցնել բնագրի մէջ: Այդ նպատակով նա յաւելում է Սուրբ Երրորդութեան վերաբերեալ բառեր, որոնք մի տեսակ մեկնաբանելով լրացնում, պարզաբանում են բնագիրը·

7. Καί Καππαδόκαι δε οὕτω λέγομεν ἐγχωρίως, ἔτι τότε ἐν τῇ τῶν γλωσσῶν διαιρέσει τὸ ἐκ τῆς λέξεως χρήσιμον προβλεψάμενον τοῦ πνεύματος.

Նաեւ մեք՝ կապպադովկացիքս, ըստ լեզուիս մերում ուղիղ առնեմք զօրհնութիւնն մեր, եւ գաւառք ամենայն ըստ իւրաքանչիւր լե-զուաց լի բաւանդակ զկատարեալ օրհնութիւն համեն Երրորդութեան:

(Եւ մենք՝ կապպադովկացիներս, `այդպէս ենք արտայայտւում մեր բնիկ լեզուով, որովհետեւ Հոգին լեզուների բաժանման ժամանակ արդէն կանխատեսեց յօգուտ այս-օրինակ արտայայտութեան) (col. 208C)*:*

Յունարէնում բացակայում են (col. 95B) *«…որ անկն է մերոյ բնութեանս զՇբրհս Անձնաւորութիւնան՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, զի չիք բնաւ միջնորդութիւն ի նա…» նախադասութեան ընդգծուած բառերը (տե՛ս նաեւ 1. վկայութեան ընդգծուած բառերը):*

Յաւելում-պարզաբանումներից զատ, հայերէն թարգմանութեան մէջ նկատւում են բազմաթիւ, բազմաբնոյթ բացթողումներ: Այդպիսիք են, օրինակ, սուրբգրային հետեւեալ տեղիների բացթողումները՝ Սաղմ. ՂԱ 16, ՃԳ 27, ՃԹ 1, ՃԼԸ 8, Յովբ ԼԳ 4, Մատթ. ԺԸ 10, Յովհ. Ա 16, Հռովմ. Բ 17, Զ 4, Եփես. Բ 22: Հայ թարգմանիչն ակնյայտ վրիպումով բաց է թողել Դիոնիսիոս Աղեքսանդրացու՝ Դիոնիսիոս Հռովմայեցուն յղած թղթի վերնագիրը·

© National Library of Armenia

Περί ἐλέγχου καί ἀπολογίας (Ճաղագս յանդիմանութեան եւ ջատագովութեան. col. 201B): Բաղդատումը ցոյց է տալիս, որ հայերէն թարգմանութեան մէջ զգալիօրէն համառօտուած են բնագրի Զ-է, ժ-ժԶ գլուխները[1]:

Այսպիսով, առկայ փաստերը ցոյց են տալիս, որ այսօրինակ տարբերութիւնները պայմանաւորուած են բնագրի նկատմամբ թարգմանչի որդեգրած ազատ, միանգամայն անկախ վերաբերմունքով: Դա արտայայտւում է բնագրի վերապատումով, իմաստի մեկնաբանութեամբ, աստուածաբանական նրբերանգների յաւելումով: Ակնյայտ է, որ խնդրոյ առարկայ երկի հայերէնը ոչ այլ բան է, քան յունարէն բնագրի վերապատում-փոխադրութիւնը:

Ի՞նչ միջավայրի ծնունդ է բնագրի հայերէն «թարգմանութիւնը»: Մի շարք փաստեր վկայում են, որ այն իրագործուել է ասորերէնից հայերէն կատարուած թարգմանութիւնների քաջատեղեակ (գուցէ եւ՝ մասնակից) թարգմանչի կողմից.

ա) Ծունարէն բնագրի Φιρμιλιανῶς (col. 208B) անունը հայերէն թարգմանութեան մէջ դարձել է «Եփրեմ»: Թւում է՝ այսօրինակ «թիւրիմացութիւն» կարող էր կատարուել հայ-ասորական թարգմանական միջավայրում: Հայ թարգմանիչն օտարահունչ Φιρμιλιανῶς անունը փոխարինել է իրեն քաջ յայտնի եւ հարազատ «Եփրեմ» անուամբ:

բ) Հայերէնում առկայ մի շարք բառեր անմիջապար աղերսւում են, մասնաւորապէս, հայ-ասորական թարգմանական աւանդոյթի հետ: Այսպէս, ըստ Նոր հայկազեան բառարանի տուեալների, թարգմանութեան մէջ առկայ **բացաձիգ, բանաքաղ, բանակրկիտ, կրօնք, նշոյլազարգ(ութիւն), վառապանք, վարդապան** բառերը գլխաւորաբար օգտագործուած են Ափրաատի նշանաւոր Զգօնգրքի[2], ինչպէս նաեւ՝ ս. Եփրեմ Ասորու եւ Եւսեբիոս Կեսարացու երկերի՝ ասորերէնից կատարուած հայերէն թարգմանութեան մէջ[3]: Ի դէպ, ս. Բարսեղի երկասիրութեան յունարէն բնագրում առհասարակ բացակայում են **բանաքաղ** եւ **բանակրկիտ** բառերի համարժէքները: Նկատառելին այն է, որ ինչպէս ս. Բարսեղի՝ խնդրոյ առարկայ երկում, այնպէս էլ Զգօնգրքի հայերէն թարգմանութեան մէջ այս բառերը հանդէս են գալիս մէկ նախադասութեան մէջ. «Բանաքաղք, բանակրկիտք, ագահք եւ պիղծք...» (տե՛ս Զգօնգիրք, գլ. ԺԹ), «բանակրկիտս, բանաքաղս եւ բանչգիւտս անուանեն զմեզ» (ս. Բարսեղ): **Բացաձիգ եւ նշոյլազարգ(ութիւն)** բառերն օգտագործուած են նաեւ ս. Բարսեղ Կեսարացու Վեցօրեայ ճառերում[1], որոնք, ըստ նորագոյն հետազօտութեան, թարգմանուած են ասորերէնից[2]:

Ցենուելով այս դիտումների վրայ՝ կարելի է ենթադրել, որ յիշեալ «ասորաբանութիւնները» կարող էին կենցաղավարել միայն հայ-ասորական թարգմանական աւանդոյթի շրջանակներում: Հայերէն թարգմանութիւնն այնքան հեռու եւ անկախ է այժմ առկայ յունարէն բնագրից, որ այն պէտք է համարել ս. Բարսեղ Կեսարացու երկասիրութեան տեղայնացուած տարբերակը[3]:

Ս. Բարսեղի այս երկի հայերէն թարգմանութիւնն իր որոշակի նպաստն է բերում հայ թարգմանական մատենագրութեան հետազօտմանը: Վաղ շրջանի եկեղեցու հայրերի տարբեր երկերից այստեղ վկայաբերուած շատ հատուածների հայերէնն առհասարակ բացակայում է հայ թարգմանական մատենագրութեան մէջ. այդպիսիք են Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Դիոնիսիոս Հռոմայեցուն (Գ դ.) յղած Թղթի մէկ հատուածը, Կղեմէս Հռոմայեցու (Գ դ.) մի երկից քաղուած փոքրիկ պարբերութիւնը, Որոգինէս Ալեքսանդրացու (շուրջ 185-253/4)՝ Յովհաննու Աւետարանի եւ Գողոսի՝ Հռոմայեցւոց Թղթի մեկնութեան հատուածները, Ափրիկանոս Ժամանակագրի այժմ անյայտ պատմագրական երկի մի պարբերութիւնը[4]: Գտակս չհեկեան չեն նաեւ վարքագրական, վկայաբանական բնոյթի նիւթերը.

---

1 Համառօտումների մէջ յաճախ դիտեւորւում է բառաշինարար թարգմանիչը. այսպէս՝ բնագրի καινοτόμος ... καὶ νεωτέρων, ῥημάτων δημιουργός. (col. 208C, «Նորամուծիչ եւ նոր խօսքեր յօրինող») բառակապակցութեան փոխարէն հայերէնն ունի մէկ համարժէք՝ «Նորոգախօս»

2 Տե՛ս «Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ սրբոյն Ցակոբայ երիցս երանելոյ հայրապետին Մծբին քաղաքի...», կ. Պոլիս, 1824, գլ. Է, ԺԱ, ԺԷ, ԺԸ, ԺԹ:

3 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1118:

1 Բարսեղ Կեսարացի, «Ճաղագս Վեցաւրեայ արարչութեան», աշխատասիրութեամբ՝ Կիմ Մուրադեանի, Երեւան, 1984, գլ. Բ, Դ:

2 Տե՛ս Լ. Տէր-Պետրոսեան, «Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերէն թարգմանութեան նախօրինակը», «Պատմաբանասիրական հանդէս», 1983, N 2-3, էջ 264-278:

3 Ի դէպ, տեղայնացուած է թուի նաեւ ս. Բարսեղի՝ Տեառնընդառաջին նուիրուած ճառի հայերէն թարգմանութիւնը (տե՛ս «Գանձասար», Երեւան, 1992, Բ, էջ 30-66):

4 Ի դէպ, Ափրիկանոսի ժամանակագրութիւնն օգտագործել է Մովսէս Խորենացին իր Հայոց պատմութեան մէջ (տպ. 1913, գիրք Բ, գլ. ժ, էջ 120):

© National Library of Armenia

դրանցից են Աթանագինէսի (Դ դ.) վկայաբանութիւնն ու ս. Գրիգոր Սքանչելագործի (+264/270) վարքի առանձին հատուածները[1]*:*

Ճառի հայերէն թարգմանութիւնը շահեկան է նաեւ հայոց լեզուի ուսումնասիրման, նրա բառագանձի մէջ առկայ միաւորների առաւել լիակատար հաշուառման եւ գնահատման առումով: Ուշադրութեան արժանի են Նոր հայկազեան բառարանում բացակայող այնպիսի միաւորներ, որպիսիք են առաքինարար, բանչգիւտ, եպերաժողով, իմացուցիչ, յանդերձիչ, յանկակից, խաղաշրջել, կամագէտ, մեծավաղ, յոտանշան, նորոգախօս, նուաճիչ, շանալեզու, շրջկոտել, շքաթափել, չարահաւանութիւն բառերը:

Ճառի հայերէն թարգմանութիւնը, ցաւօք, վերջից թերի է. երկու ձեռագրերում էլ ճառն աւարտւում է «...ոչ բղխէ արտասուք տրտմութեան յանձանց ոմանց ի տեսլեան անդ տկարահաւատից, այլ ցամաքեցաւ» "...οὐκ ἔστιν ὁ τὸν ἀσθενοῦντα τῇ πίστει προσλαμβανόμενος, ἀλλὰ τοσοῦτον" *(*col. 216C*) բառերով: Պակասում են բնագրի վերջին երեք պարբերութիւնները: Ինչպէս երեւում է, երկու ձեռագրերն էլ ընդօրինակուել են նոյն թերութիւնն ունեցող մի նախագաղափար օրինակից:*

Պարբերութիւնների համարակալումը կատարել ենք ըստ յունարէն բնագրի:

Ստորեւ ներկայացնում ենք ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը.

N *1315*=A

***Ժամանակ** ԺԴ դ.: **Գրիչ** Յովհաննէս արքայեղբայր, Յակոբ: **Ստացող**՝ Յովհաննէս արքայեղբայր: **Թերթ**՝ 451: **Պրակ**՝ Ա-Լ՝* x*12 (անկանոն): **Նիւթ**՝ թուղթ: **Մեծութիւն**՝ 34,5*x*25: **Գրութիւն**՝ երկսիւն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 35: **Բովանդակութիւն**՝*

Ա. 2ա-5բ Պատմութիւն յաղագս մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի...

Բ. 5բ-9ա [Յաղագս Վարագայ սուրբ Խաչին]

---

1 Տե՛ս «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 28, 241-243:

Գ. 9բ-20ա Ներբողեան՝ պատմագրաբար ասացեալ սրբազան եպիսկոպոսի եւ վարդապետի տէր Կարապետի Սասնացւոյ...

Դ. 21ա-59բ Խաւսք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոյ՝ ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդւոյ Աստուծոյ...

Ե. 60ա-452ա [Մեկնութիւն Գործոց առաքելոց]

N *1798*=B

***Ժամանակ**՝ ՌՃԱ (1652): **Գրիչ**՝ Պօղոս: **Թերթ**՝ 456: **Պրակ**՝ Ա-ԼԸ 12: **Նիւթ**՝ թուղթ, արեւելեան: **Մեծութիւն**՝ 19,6*x*13: **Գրութիւն**՝ միասիւն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 24: **Բովանդակութիւն**՝*

Ա. 2բ-46ա Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի՝ վասն մարմնանալոյ Միածնին

Բ. 46ա-321 [Թուղթ եւ ճառք Կիւրղի Աղեքսանդրացւոյ]

Գ. 321ա-453ա [Բանք զանազանք]

Յակոբ Քէոսէեան

ԳԱՆՁԱՍԱՐ

© National Library of Armenia



ԽՕՍՔ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ ԿԱՊՊԱԴՈՎԿԱՑԻՈՑ* ԸՆԴԴԷՄ ԱՑՆՈՑԻԿ, ՈՐՔ ԹԵՐԱՑՈՒՑԱՆԵՆ ԶՓԱՌՍ ՈՐԴՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ ՔԱՆ ԶՀՕՐՆ, ԵՒ ԻՋՈՒՑԱՆԵՆ ԶՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ Ի ՀՆԱՁԱՆԴՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԱՒԱՍԱՐԵՆ ԸՆԴ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻԻՆ ԱՐԱՐԱԾՈՑ

Ա. Գովեցի ես զփոյթ յօժարութեան ուսումնասիրութեան քո եւ զմեծ աշխատութիւն վաստակոյդ, զոր ունիս դու՝ յաւելուած ի վերայ վարուցդ քոց, եւ ուրախութիւն մեծ եղեւ ինձ վասն քո, այսինքն՝ վասն գիտութեան եւ յորդոր արիութեան մտաց եւ խորհրդոցդ քոց այն, զի եւ ոչ զմի բան ի բանից անտի, որ վասն այն ցուցանեն, թողուս առանց քննութեան եւ ի խնդիրն, որոյ յոյժ մեծապէս պիտոյ է ճշմարտութիւնն[1] պէս-պէս չափօք կերպարանաց դու յատակ գաս գլխաւոր սիրելի եւ պատուական ամենայնի Ամփիլաքէս բարւոք[2] լուսաւ աստղիկ զիրատն հաւանութեան ի բանէն այն, որ ասէ.

* Խոր. Ա Կապպադովկեցոյ

«Ամենայնի, որ խնդրէ, առնու, եւ որ հայցէ, գտանէ[3]», քանզի խնդիրն յորժամ լինի ստէպ փութով, եւ զհեղգացեալսն յարուցանէ տալ զայն, ինչ որ խնդրենն ի նմանէ: Արդ, ես[4] այսու կարի սխրանամ ի քեզ, զի ոչ որպէս թէ փորձեացես արարեր զհայցուածդդ[5] քո առ մեզ, որպէս եւ բազումք այսօր, որք փորձիւ համայելով առնեն զհարցուանս իւրեանց, այլ զճշմարտութիւն ճշդրտութեամբ իսկ խնդրեցեր գտանել առ մեզ բանիւդ քո: Իսկ այլք ոմանք, որ այսօր պատրաստեալ են զլսելիս իւրեանց ի լուր եւ լինին առ մեզ հարցողք, մեծ աշխատութիւն մաքառմամբ հարցուածոց իւրեանց արկանեն մեզ: Իսկ մարդ ուսումնասէրն, որ փութացեալն է լինել խնդրող ճշմարտութեան առ ի բժշկութիւն անգէտ տխմարութեան, դժուարաւ գտանի, քանզի որպէս ծուղակն[6], որ պատրաստեալ է յորս, եւ ինքն յինքն մարտ պատերազմի ունի ծածկութեամբն իւրով՝ դարան ունելով գաղտ նենգութեամբն իւրով, որ է ի նմա. սոյնպէս են այսօր հարցուածք բազմաց ի ճառս իւրեանց, զի ոչ եթէ որ ինչ պատշաճ եւ պիտոյ է, նոցա ունին փոյթ յանձինս գտանել եւ կամ առնուլ ի նոցանէն, այլ միայն զի[7] թէ դէպ լինիցի ըստ ցանկութեան կամաց իւրեանց առնուլ զհարցուածսն յայնցանէ, առ որս հարցողքն լինին: Եւ այս է պատճառ պատերազմիս, որ ի միջի մերում է, զի հարցուածքն ոչ եթէ առողջ ինչ ի ցեն, վասն օգտի թէպէտ եւ ի տգիտութենէ մեծի առ իմաստուն անդր**, սակայն եւ ոչ այնպէս իմաստութեան հաւանի առ հարցուածոցն լուծումն եւ զզարմանի հաւանութիւն խնդրոյն տանի յարէ յանձն իւր***: Իսկ այն, որ առնէ զհարցուածս իւր ստուգապէս, որքան պարտ է մեզ խորհիլ, զի ըստ մեծութեան փութոյ յօժարութեանն առնել բերրուք հոգեբարձութեամբ զհարցուածոց լուծումն[8] եւ մեծաւ չանիւ ուշ եդեալ նկրտութեամբ զհարցուածոց լուծումն

Աստուծոյ, այլ զգաստից եւ պիտնոց եւ աստուածախաւս ոգոց քննել, գիտել եւ ճանաչել, եթէ զինչ է:

Արդ, հրամայեալ է մեզ ի բանէն ճշմարտի՝ նմանել Աստուծոյ, որչափ եւ մարթ է մարդկային բնութեան եւ համարձակեալ է, զի նմանեսցուք եւ բերել մեզ զնմանութիւն Աստուծոյ առանց ընտրողութեան գիտութեամբ չէ հնար, եւ գիտութիւն եւ հանճարն ումեմք բղխի ի մէնջ: Իսկ բանն գլուխ է ումեմն, որ ի վարժելոյն պայծառանայ առ մեզ գիտութեամբ մեծամեծ եւ փոքր բանից մասամբք:

Արդ, հարցուածս այս, որ եղեւ առ մեզ, ոչ եթէ արտաքս ինչ է, քան զնպաստակն բանիցս այսոցիկ, զոր եդաք մեք, որովք յայտնեմք, զի բանք, որով որ կարգեալ են սակաւ եւ դոյզն նշանագրօք իւրեանց վասն այսորիկ անգոսնելոյ արժանի ինչ են: Եւ վասն զի դժուարին է առ գիւտ մեծութիւն ճշմարտութեանն, պարտիմք մեք քննել պէսպէս չափօք կերպարանաց զնա ի պէտս այնոցիկ, որոց անհաս է, զի որպէս արուեստից գիտութիւնն ի նուաստ աշտիճանացն, որ ի նոսա փոքր-փոքր բազմանալ յաւելուած ումեմն եւ՝ աճեալ գայ վարժմամբն ի կատարելութիւն, եթէ ոչ լինի հեղգութիւն ծուլութեան աչակերտելոցն: Սոյնպէս պարտ եւ պատշաճ է այնոցիկ, որք մերձենան առ գիտութիւն Աստուծոյ, ոչ լինել հեղգութեամբ ի նմա եւ արհամարհել զփոքր նշանագիրն, որք գլխաւորին զգեղն իմաստութեան առ կատարեալ[9] սիղղոյքայիցն են «այո»-ն եւ «ոչ»-ն, եւ մի-մի ի նոցանէն հաստատեալ կայ գեղեցկութիւն ճշմարտութեանն եւ ստութեան տգեղութիւն: Այսուհետեւ յայս փոքր բանքս է խորոց ճշմարտութեան եւ ստութեան: Եւ արդ, տե՛ս՝ զի՞նչ ինչ իցէ լրումն բանիս իմոյ վասն այսր խնդրոյ սակաւ եւ դոյզն բանի ճշմարտութեան մեծութեան եւ ստութեան կործանմանն: Զի թէ դէպ լիցի, եւ կալցին զոք վասն Քրիստոսի ի վկայութիւն եւ փոխանակ բանի զգլուխ իւր միայն չարժեցէ եւ ակնարկելով պատրաստելով ի մահ անդր կատարեալ լի հաւատովք երեւեցաւ աստուածապաշտութիւն փոքր ակնարկելով, որ եղեւ ի նմանէն: Եւ արդ, եթէ այսոքիկ այսպէս իցեն, որ բան՝ իցէ ի բանիցն Աստուծոյ, որ փոքր կարծեսցի, զի արժանի է եւ օրէն՝ երեւել գեղոյ կերպարանաց նորա, եւ այն, որ դժուարին իցէ ի նմա, քանզի տան իսկ ձեռն ակնարկմունքն, զոր ունէին մի-մի ի բանիցն Աստուծոյ վասն իւրաքանչիւրոյ գեղոյ կերպարանաց: Եւ եթէ «ի յօտանէնն մի յօրինացն ոչ անցցէ»*, քանզի

* Մատթ. Ե 18

եւս պիտոյ է մեզ եւս քան զեւս զդուշանալ, զի մի՛ անցանիցեմք արհամար[հ]ութեամբ զմիով միով յայնցանէ, որ գրեալ են: Արդ, այսուհետեւ զոր դու ի մէնջ խնդրեցեր, գամք ասել, թէ զիարդ իմացեալ լիցի մանուկք նշանագրօքն եւ փոքր բարբառով պարզ եւ ուղիղ ի լեզուէ ասացեալ, որ ի տգիտաց եւ յանխմարաց կարծեալ լինին, իբրու թէ չունին մեծ բարութիւնս ինչ քանս, բայց գիտնոցն բիւրապատիկ մեծութեամբ խոստովանեալ լինին մեկնութեամբն իւրեանց եւ, ըստ նմանութեան փոքր հատոյ մանանխոյ, ունին զզօրութիւն իւրեանց, զի յորժամ եղիցի փոյթ հոգաբարձութեան փոքրկութեան նորա, աճէ բարձրութիւն հասակի նորա լի բովանդակ եւ անցանէ զանցանէ ըստ ամենայն սերմանիս եւ ըստ ամենայն կողմանս արձակէ զոստս իւր եւ մորմոքեցուցանէ իւրով կծու զօրութեամբն զամենայն ճաշակողս*: Արդ, եթէ կամիցի այսպանող ոք զերգս հոգեւոր սաղմոսացս**, որ ի մէնջ երգի ի փառս Աստուծոյ, դուզնաքեայ չափով բանի ճշմարտութեան ի խեղկատակութիւն ձգել, ինքն այսու զպտուղ անօգուտ կթէ ի վնասէ այպանելոյ իւրոյ, եւ նա յիւր ճշմարտութիւն անկեղտ մնայ: Այլ մեք մի՛ մոլորեսցուք յայսպիսի նախատինս եւ յեպերանս, որ յանխրատից լինի, եւ պարտաւորութիւն ամբարշտութեան նոցա առ մեզ մի՛ հասցէ եւ մի՛ յեռնեալ գտցուք ի հաստատուն քննութենէ անտի, որ արժանի է բանին Աստուծոյ: Այլ ես յայնցանէ հեռի եմ յամօթոյ եւ ի պատկառանաց, որք նուազութիւն տան առաւելութեան՝ վասն սիղղոյքայիցն փոքրկութեան: Զի թէպէտ եւ մեկնութեանց նոցա չեմ հաստ, սակայն գիտեմ եւ զգամ, զի որ դոյզն ինչ բան է ի նոցանէ, յոյժ բարձր եւ վերագոյնն հայելով՝ արժան է ի նոսին նկրտել: Իսկ այն, որ փոյթ ունի վասն նոցին քննութեան բարիօք օգտից եւ չահից պարգեւաց դիպի անդստին ի նոցանէ, եւ զայս գիտեմ ես յանձին իմում, զի պտուղ մեծ չահիցէ յիս բանին[10] Աստուծոյ քննութիւն, եւ այնոցիկ դարձեալ, որ լսենն օգուտ մեծ կենաց նոցա:

Արդ, ես այժմ վասն զօրութեան Հոգւոյն Աստուծոյ ցուցանեմ բանիւս իմով եւ նովաւ ի պատմութիւնս յայս նկրտիմ ես: Սակայն, թէ կամեցիս, դարձցուք անդէն ի սկիզբն[11] ճանապարհի բանիս մերոյ՝ առ ի ցուցանել, թէ ուստի եղեւ այս հարկ գալ ի պատմութիւն այսր բանից:

* Տե՛ս Մատթ. ԺԳ 31-32:

** Տե՛ս Սաղմ. ՃԺԸ 85:

© National Library of Armenia

Մինչդեռ անցեալ կայի ես ի գլուխ ժողովրդեանն իմում եւ ի մի աւուրց մատուցանէի աղօթս եւ փառս եւ օրհնութիւնս հանդերձ ամենայն ժողովրդեամբն Աստուծոյ մատուցանէաք «ընդ Հօր եւ զՈրդին» փառաւորէաք, «ընդ Որդւոյ եւ զՀոգին» անուանէաք, եւ դարձեալ ի ձեռն Որդոյն Հոգւովն Սրբով օրհնութիւն փառաւորութեան մերոյ կարգեալ եւ յօրինեալ լինէր, յաճախեցին, բազմացուցին ոմանք ի վերայ մեր զեպերանս, որք մերձ առ մեզ գալստեամբն իւրեանց պատահեցին եւ ասացին, թէ այլազգ բարբառով, որ օտար են միմեանց, մեզ վարիք դուք եւ բանիւք, որ ընդդէմ են միմեանց, մատուցանէք զօրհնութիւնդ ձեր: Արդ, այնոքիկ, եթէ կամին լսել եւ հաւանիլ վասն օգտի իւրեանց, օգուտ մեծ գտանել յասացեալս մեր, ապա թէ ոչ՝ կամին բժշկել յայնմ իմեքէ, յոր մեծ վնաս կայ ի նոսա, մեք զբանս մեր, որ առ քեզ ի զգուշութիւն արարաք այնոցիկ, որ պատահէնն նոցա, որպէս խնդրեցեր ի մէնջ, զի քննեսցուք եւ ցուցցուք զուղիղն եւ զարժանն, եւ թէ զինչ ինչ իցէ զօրութիւն բանիցն Որդւոյ ի մէջ պատգամացն երկուք եւ կամ երիք սիղղոյբայիւք: Եւ զի ուսցիս, եթէ կան ի հաւասարութիւն փոփոխմամբն իւրեանց, արդ, ասեմք մեք սակաւ բանիւք, որչափ ինչ եւ կայ ի կարի մերում, եւ զսկիզբն խոստովանութեան բանիս մերով ցուցանեմք, թէ զինչ է:

Բ. Եւ մեծամեծ բանիւք զփոքրաբանութիւն մարդոցս այսոցիկ երեւելի առնեմք, զի ոչ եթէ դուզնաքեայ ինչ թերութիւն հաստատի ի ձեռն[12] բանից նոցա, եւ ոչ եթէ փոքր ինչ կշիռ չարութեան վճարի նոքօք, այլ լի է խորին խորհրդօք մեզաց, որ ծածկեալ է չքով աստուերին ամբարշտութեան եւ հակառակ է ամենայն ճշմարտութեան, եւ նոյն ինքն հակառակութիւն նոցա բազմադիմի է, զի ոչ ասեն՝ նման է Հայր Որդւոյ, որպէս ցուցանեն բանքն՝ ըստ կարգի, որ վասն Նոցա, քանզի այլաստարազ են խօսքն, որ վասն Նոցա ասեն, որով յայտ է, եթէ բնութիւնք Նոցա ի Միմեանց այլափոխք են: Այս իմաստութիւն Նոցա, որպէս երեւի, հին է, եւ յԱյետիոսէ առնու[13] սկիզբն, զի զայս պաշտօն ի մի ի Թղթոցն իւրոց գրեաց այսպէս՝ յասելն իւրում, եթէ՝ «Զինչ,– ասէ,– որ ոչ նման են բնութեամբ, ոչ կարեն գալ ի նմանութիւն, վասն զի եւ ոչ նման են միմեանց բնութեամբն իւրեանց», եւ ի վկայութիւն բանին իւրոյ բերէ զբանն եւ վարէ բռնութեամբ զասացեալն. «Մեզ մի է Աստուած Հայր, յորմէ ամենայն, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն»*: Արդ, որպէս

* Ա Կորնթ. Ը 6

առնմանեն բարբառքս միմեանց, սոյնպէս յայտ առնեն, թէեւ ոչ բնութիւնք նոցա նմանեն միմեանց, եւ ոչ նման է, ասէ՝ «այն, յորմէ ամենայն», այնորիկ, «որով ամենայն», ուրեմն ոչ նման է Որդի Հօր:

Այսուհետեւ ի ցաւս բանից եւ ի հայհոյութիւնս պատրաստեալ են արքս այսոքիկ ճառիւք իւրեանց, որք ի սոցանէ յայտ բանից տան Աստուծոյ Հօր իբրեւ ինչ մի աւելի զայն, որ «ի Նմանէն է»: Եւ Որդւոյն զատուցին ետուն միւս եւս այլ պարգեւ զայն, թէ՝ «ի ձեռն Նորա է»: Եւ Հոգւոյն Սրբոյ բաշխեցին, ետուն զայն, որ «Նովաւ» յասելն իւրեանց, եթէ ոչ է մարթ չլինել որոշումն եւ այլայլութիւն, քանզի որպէս այլեւայլ են բնութիւնքն, սոյնպէս եւ այլեւայլ են բանք նորա վասն Նոցին ասացեալ են: Արդ, նուրբ ամբարշտութեամբ բանից իւրեանց ստացան զօրութիւն վատթար. եւ ծածկեցաւ ճշմարտութիւն ի կամակորիցն, քանզի զայն, որ «ի Նմանէ», արարիչ եղին, եւ զայն, որ «ի ձեռն Նորա», հնազանդեալ կոչեցին, եւ զայն, որ «Նովաւն է», տեղի–տեղի եւ ժամանակ ասացին եւ արտաքոյ քան զայս մեծութիւն ոչ ետուն Արարչին, զի կարծեալ լիցի եւ ոչ Որդոյն աւելի, քան զայս պատիւ, եւ ոչ Հոգւոյն Սրբոյ աւելի, քան զայս փառս:

Գ. Նաեւ արտաքնոցն բանք հելլենացոցն իմաստնոց ձեռնատու եղեւ նոցա մոլորութեան, զի միաբանեցան բանից նոցա, քանզի զայն, որ «ի Նմանէն» եւ «ի ձեռն Նորա» վասն իրաց, որ ի բնութեան աստ ասեն հելլենացիքն, զի զայն, որ «ի Նմանէն» տան վասն ամենայնի, որ ինչ ի գործոցն կազմի արտաքին իմաստասէրքն, եւ զայն, որ «ի ձեռն Նորա», պատճառ ասեն կազմութեան, որ եղեւն, ըստ որում եւ իցէ գործ արուեստագիտութեան, զի ի ձեռն Նորա կազմի այն, ինչ որ գայ ի գործ անդր: Բայց զի՞նչ արգելէ ոչ բերել ի մէջ զամենայն բանս հելլենացւոցն եւ զօրինակ ճշմարտութեան մերոյ, քանզի այսոցիկ մարդկան ո՛չ գոյ հաստատ առ ճշմարտութիւն անդր եւ ո՛չ միաբանութիւն: Վասն որոյ այնոցիկ, որք բանիւք նոցին վարին, լինել յանդիմանիչ յայսմ յամբարշտութեան յոյժ փոյթ եւ հարկ է:

Արդ, այնոքիկ, որք հանապազ Որդին ի մորոսութիւն փիլիսոփայութեան այսպէս մեկնեալ ընտրեն, թէ պատճառ առաջին[14] այն է, որ ի կազմելն գայ եւ առ մեր, իբր առեալ բերեն զմեկնութիւն իւրեանց: Արդ, ղնա, որում «ի Նմանէն» է, սկիզբն եւ պատճառ ղնեն լինելոյ, եւ որ ինչ պատճառին գործոյն գործի է, յորմէորէն զնա «գործակից», եւ ասեն, թէ առանց Այնր, «յորմէ լինի», եւ առանց Այնր, «Որով լինի», չիք ուրեք բան գործոյ, եւ զմի մի յայսցանէ

© National Library of Armenia

ընտրեն եւ որոշեն եւ յայտնեն բանիւն իւրեանց, քանզի զարուեստագէտն յայսմ վայրի դնեն, թէ «ի Նմանէ» լինի ճշմարտապէս իրքն, որպէս եւ ոք, զի ասէ, եթէ՝ ի հիւսանէ անտի կազմեցաւ աթոռ, եւ կազմուածն անօթոյն ի ձեռն ուրաքին ի փայտէ եղեւ արուեստագիտութեամբն եւ գործուվն:

Արդ, գործն յայնմ իմիք է, որ գործեն, նախ մտածեալ լինի ի ձեռն ներքին խորհրդոց եւ կամ ի ձեռն նայելոյն խորհրդով յարտաքին օրինակս, քանզի երկոքինս են արուեստագիտին, այսինքն՝ կա՛մ խորհեցաւ առնել ի նկարուց, որ ի միտս նորա զեռայ, եւ կա՛մ պատահեցաւ նմա օրինակ արտաքուստ, որում նմանեցուցանէ, եւ տացէ գործոյն իւրոյ կատարումն ի ձեռն այնոցիկ, զոր տեսանէ: Արդ, պէտք են արուեստագիտին յետ ճարտարութեան եւ անօթոյն, որով կազմէ զնիւթն տեղւոյ եւ ժամանակի, զի ժամանակաւն եւ տեղովն առցէ գործովն զկատարումն, քանզի յորժամ հարցանեմք, եթէ ո՞ւր եղեւ իրս այս, ասի՝ ի նմանէն, թէ՝ յայս անուն տեղւոջ[15], եւ ե՞րբ, ասէ, ժամանակն, յոր եւ իցէ: Արդ, եթէ այսոքիկ ոչ են, գործն առանց կատարման եւ առանց ազդման է, քանզի առանց սոցա գործոյ կազմել չէ մարթ, վասն զի արարողքն կարօտին ժամանակին եւ տեղւոյն, որովք հաստատի իրն, որ լինի:

Արդ, ըստ բանի սոցա, Աստուծոյ[16] հօրէ է, որ եղենն, քանզի զայն, որ «ի Նմանէն», Նմա եւտուն իբրեւ արուեստաւորի, եւ արարին զՈրդին անօթ կազմիչ, վասն զի ի ձեռն Նորա կազմեցաւ այն, ինչ որ եղեւն: Եւ եղեւ Հոգին Սուրբ տեղի եւ կամ ժամանակ, զի ի ձեռն այսոցիկ գայ գործն ի կազմուածն:

Զայս այսուհետեւ ունայն եւ նոր մոլորութիւն յիմաստութենէ հելլենացոցն ուսան այնոքիկ եւ զպարզ ճշմարտութիւն եւ զանքնին՝ ըստ բնութեան իւրում, զոր Հոգւովն Սրբով առ մեզ խօսեցան, առեալ լծեցին ի մոլորութիւն անդր հելլենացւոց եւ եղեն զրկողք Որդւոյն, որ Նա Ինքն է Բանն Աստուծոյ՝ այսպիսի անուանելով զՆա, եւ զրպարտեցին զՀոգին Սուրբ այնու, որ ոչն էառ Նա հուպ: Եւ բերին ի վերայ փառաց Աստուածութեան զիօսս, որ ի վերայ անչնչոցն ասացաւ, որք կան ի հնազանդութիւն եւ ի փոփոխման: Եւ զբանսն, որ ասացեալ է վասն Աստուածութեան ի լուր ունկնդիր մարդկան, ըստ արտաքնոցն բարբառէ խառնեցին զնա, եւ ոչ ձանձրութիւն կամ դողումն եմուտ ի նոսա, զի զոհբութիւն, որ ոչ անկանի ճշմարտութիւն փառաց Նորա, ըստ մարդկեղէն գիտութեանն խառնեն ընդ բանսն, որ վասն նիւթոց, եւ ոչ ամաչեն եւ ոչ կորանան, զի անուանեալ կոչին քրիստոնեայք եւ

մոլորեալ են զարտուղի ընդ հետս կորստական՝ ստերիւրեալ հելլենացոցն իմաստնոցն:

Դ. Արդ, ասեմք մեք, եթէ վարի ճշմարտութիւն այսոքիւք բարբառովք իբրեւ թէ լծեալ է ի կցորդութիւն մարդկային հաւասարութեան, քանզի ունիմք մեք զճշմարիտ խոստովանութիւն ճշմարտութեանս մերոյ, եւ ոչ թէ թերութեամբ ինչ եղեալ են այսոքիկ բանք: Եւ այսու ասացուածովքս ոչ կարեմք մեք զմեծութիւն Հոգւոյն Աստուծոյ դնել ի ծառայութիւն՝ ըստ բանից արտաքին իմաստասիրութեան, քանզի բանք նոցին, զորս յիշատակեցաք, ասացեալ լինին ըստ պատշաճի կարօտութեան մարդկութեանս եւ վասն այլայլութեան մերոյ: Իսկ «զմի Աստուած, յՈրմէ ամենայն» ոչ դնեմք մեք, թէ գործոյ իրիք, որ կազմի, ի Նմանէ[17] ցուցանէ, այլ սովորութիւն է Գրոց՝ անուանել զսկիզբն պատճառ իրաց այսպիսի բանիւք, զի որպէս այն, որ ասէ, թէ՝ «Մի է Աստուած, յՈրմէ ամենայն»*, դարձեալ գրէ. «Այլ ամենայն ինչ Աստուծոյ է»**: Այլեւ ի Գրոց իսկ ճշմարտին այսոքիկ բանք, զի խօսին նոքա ըստ այմ նմանութեան կերպարանաց*** ՝ ըստ այնմ, որ ասացեալն է. «Արասջի՛ր զտապանակն յանփուտ փայտէ եւ արասցես զաչտանակն ընտիր[18] ոսկոյ»#, եւ ըստ այնմ. «Մարդն առաջին յերկրէ հողեղէն»##, եւ, ըստ այնմ, դարձեալ, եթէ՝ «Ես եւ դու ի հողոյ ստեղծաք»###: Արդ, այսպիսի բարբառ բարժանիչ ի վերայ Աստուածութեան որպէ՞ս ասի, զոր նոքա իբրեւ գիւտ ինչ մեծ գտին եւ ընտրեն տան Հօր միայն զԲանն պատուականն, իբր թէ ի վերայ Նորա միայն պատշաճի ասացեալս եւ զսոյն զայս յարտաքին իմաստութենէն եւ ի գնացից վարուց նոցին առին կալան: Թէ այսպիսի ասի ի նոցանէ, ուրեմն յայտ է, թէ այսոցիկ ասողքն հելլենացոցն կարգի հնազանդին ի պէսպէս աշխատութիւն մոլորութեան իւրեանց, որք եւ ըստ նոցին հելլենացւոցն եղեն պարգեւաբաշխ Որդւոյ եւ յորջորջեցին Նմա անուն զգործոյ արուեստականաց, «ի ձեռն Որոյ» ասեն եւ զՀոգին Սուրբ՝ յանուն տեղւոյ եւ ժամանակի, եւ առին եւտուն Աստուծոյ Հօր զայն, որ ամենայն «ի Նմանէ է»:

---

* Ա Կորնթ. Ը 6

** Ա Կորնթ. ԺԱ 12

*** Տե՛ս Ծննդ. Զ 14:

\# Ելք ԻԵ 10

\#\# Ա Կորնթ. ԺԵ 47

\#\#\# Հմմտ. Ցովբ ԼԳ 6:

© National Library of Armenia

Արդ, եթէ զճառան հելլենացոցն առնուն ի մէջ, ընդէ՞ր ոչ միաբանին նոցին եւ ընդէ՞ր խառնակին զճշմարտութիւն առաքելոյ հելլենական խօսիւքն, որք նոքօք վարին, զի նա ահա դարձեալ գրէ զայս եւս. «Զի ի Նմանէ էք դուք ի Քրիստոս Յիսուս»*, եւ զմիւսն, որ ասէ. «Ամենայն ինչ յԱստուծոյ»**: Արդ, զի՞նչ միաբանութիւն ունի այս առ ճարտարութիւն բանից նոցա, որք ասեն, թէ այլ է բնութիւն, այլ՝ նորա, որ պատճառն է, եւ այլ՝ բնութիւն գործոյն արուեստագիտութեան, եւ այլ՝ տեղւոյն եւ ժամանակին, եւ ի ձեռն այսպիսի ասացելոցս այլափոխեն, թէ օտար է Որդի Հօր, որպէս օտար է անօթ արուեստագիտին, եւ օտար է դարձեալ Հոգի Սուրբ՝ Որդոյ, որպէս անկրպետեալ է տեղին եւ ժամանակն յանօթոյն եւ յարու[հա]տագիտէն:

Ե. Արդ, այս ամենայն ասացեալքս մարդկան են, որք ընդդէմ քրիստոնէութեանս կան եւ անուանն Քրիստոսի յագգէ անտի հելլենացոց: Սակայն մեք ոչ եթէ միայն Հօր առնումք զայն, որ ամենայն «ի Նմանէ», եւ տայցեմք միայն Որդոյ զայն, որ ամենայն «ի ձեռն Նորա», եւ Հոգւոյն Սրբոյ միայն զայն, որ ասէ բայ «Նովաւ»՝ ըստ բանին նոցին, զի ոչ թէ օտար է այս բարբառ ամենայն նովաւ Որդոյն Աստուծոյ եւ Հոգւոյն Սրբոյ, քանզի անհնար է, թէ ոչ պատշաճի այս բանք Երից Անձնաւորութեանցն, եւ ոչ թէ ըստ նոցա չափէ եւ սահմանէ զբնութեանցն որոշմունք, վասն զի «Մի է Աստուած Հայր, յորմէ ամենայն, եւ Մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն»***: Ոչ թէ խորոց եւ կամ օրէնք ինչ իցէ, յորժամ առեալ լինի քննութեամբ մտաց յօրինեալ կարգ բանին, քանզի ցուցանէ եւ յայտ առնէ զճշմարիտ Անձնաւորութիւնն միում Աստուածութեան եւ ոչ թէ զայլ ինչ մուծանէ, զի արասցէ բաժինս ի փառաւոր բնութեան, զի չիք մեծութեան Նորա այլակերպութիւն փոփոխման: Եւ զի անչափոթ կարգաւ տացէ մեզ առաքեալ նոցա զմիտս ճշմարիտս վասն Հօր եւ Որդոյ այսպէս կարգեաց զՆոսա: Եւ այսպէս բարբառք ոչ են ընդդէմ միմեանց, եւ ոչ եթէ ի նշանակէ բանիցն գտանին սոքա բնութեանց ցոյցք, զի առնիցեն մարտ պատերազմի այսպիսի կարգաւ եւ յօրինուածով իւրեանց, քանզի առաքեալն Աստուծոյ, ի մի Աստուածութիւն անդր կարգեալ, ժողովեաց զայս ամենայն՝ յասելն

* Ա Կորնթ. Ա 30
** Ա Կորնթ. ԺԱ 12
*** Ա Կորնթ. Ը 6

իւրում. «Ի Նմանէ եւ Նովաւ եւ ի Նոյնն ամենայն»*: Եւ այսու բանիւ գուշակեաց մեզ միտք Գրոյն եւ խորհուրդ զՈրդոյն Աստուծոյ: Վասն զի, թէ քննեմք ստուգութեամբ զմիտս բանին, անյապաղ գտանեմք, եթէ զՏեառնէ մերմէ առեալ ցուցանէ: Նաեւ առաքեալ զԵսայեա[յ] մարգարէի երկրորդեաց զբանն, զի եւ անտի առեալ ունէր զընթացս[19] ճառին, որով յառաջ մատուցեալ Պօղոս ասէ այսպէս, թէ՝ «Ո՞վ գիտաց զմիտս Տեառն կամ ո՞վ եղեւ Նմա խորհրդակից»**: Եւ յաջորդ ածէ զկնի. «Վասն զի ամենայն ի Նմանէ է եւ ամենայն Նովաւ է եւ ամենայն ի Նա է»***: Եւ ի դէմս երեսաց միոյ Աստուածութեան աւարտեաց զբանս զայս, որով ծանուցանէ վասն Բանին Աստուծոյ, եթէ Նա Ինքն է Որդի Հօր եւ Արարիչ ամենայնի՝ ըստ վկայութեան մարգարէին բանիւքն, որ կանուխ, քան զնոսա, յորում ասէ. «Ո՞ չափեաց ափով զջուրս եւ զերկինս թզաւ իւրով եւ զերկիր ամենայն քլաւ, կշռեաց զլերինս կշռորդօք եւ զբլուրս ամենայն ի լուծ կշռոց եւթարձ եւ ո՞ գիտաց զմիտս Տեառն կամ ո՞ եղեւ Նմա խորհրդակից»#: Իսկ այն, որ ասաց բայով, զամենայն արարեալքս մերժեալ հեռացոյց ի Նմանէն, եւ այն, զի ասաց դարձեալ, թէ՝ «Ո՞վ յարիցէ ընդ Իս ի վերայ չարեաց»##, զի «չիք ոք,- ասէ,- ի մարդկանէ, որ մարդոյ փրկիչ կարէ լինել ի չարեաց, բաց ի Ջէն»###: Եւ զի ասաց աստ, թէ՝ «Ո՞վ գիտաց[20] զմիտս Տեառն, կամ ո՞ եղեւ Նմա խորհրդակից յարարելոց աստի»$: Արդ, եթէ «Հայր սիրէ զՈրդի եւ զամենայն ինչ յարարելոց աստի»$: Արդ, եթէ «Հայր սիրէ զՈրդի եւ զամենայն ինչ ցուցանէ Նմա»$$, եւ ամենայն ինչ, որ Հօր Որդւոյ Իւրում է, օտար է այն, որ ասէ բայով՝ «առ յՈրդւոյ Իւրմէ»: Արդ, այս այն է, որ զերկինս հաստատեաց եւ ձգեաց զՆա եւ հաստատեաց զերկիր եւ զամենայն ինչ, որ ի նմա է, եւ այն, որ պատրաստեաց եւ արար զայս ամենայն եւ կոչեաց[21] զազգս ի սկզբանէ եւ կարգեաց կացոյց զամենայն ինչ ի գեղ կարգին իւրոյ եւ արար կատարումն ամենայնի յակնարկել իմաստութեան Իւրոյ. այն, որ կարգեաց կացոյց զմեծութիւն երկնից եւ էառ կալաւ զչափ մեծութեան Նորա ի ձեռն նշանի թզաչափոյն փոքր ակնարկելոյ զօրութեան Իւրոյ: Եւ բանն

* Հռովմ. ԺԱ 36
** Հռովմ. ԺԱ 36
*** Եսայի Խ 13, Հռովմ. ԺԱ 34
\# Եսայի Խ 12-13
\#\# Սաղմ. ՂԳ 16
\#\#\# Հմմտ. Սաղմ. ԼԳ 13:
$ Եսայի Խ 13
$$ Ցովհ. Ե 20

© National Library of Armenia

մարգարէութեան էառ ետ զնչան Ամենակալին անդամոց չափ կերպարանաց. եւ չափեցան ջուրք ափով Նորա եւ կալան զչափ ի ձեռն Թզոյ Նորա, եւ եղեւ չափ հողոյ երկրիս բռամբ Նորա, եւ եդան լերինք ի կշիռս Նորա, կշռեցան բարձունք կշռորդօք Նորա*: Արդ, զայն Ինքն, որ էննն ճշմարիտ, առեալ բերէ առաքեալ եւ ասէ ստուգութեամբ, թէ՝ «Ամենայն ի Նմանէ է եւ ամենայն Նովաւ[22] է»** եւ ամենայն ի Նոյնն է եւ Նովաւ կրի, քանզի Նա է պատճառ լինելոյ այնոցիկ, որ եղենն, եւ Նովաւ կարգեալ կայ ամենայն, զի կեանք ամենայնի եւ տեսուչ ամենայնի Նա Ինքն է: Եւ վասն Նորա, որք եղենն եւ որք հանդերձեալ են լինել, կատարին եւ Նովաւ առնուն զհաստատութիւն եւ զվախճան կատարածի: Արդ, ամենայն ինչ ի Նմանէն եղեւ եւ ամենայն՝ Նովաւ եւ ամենայն առ Նա դառնայ: Եւ կամք Աստուծոյ Հօր Նա Ինքն է, զի ամենայն ինչ Նովաւ եղեւ, քանզի զօրութիւն բանի Նորա ածէ զամենայն ինչ ի չգոյէ ի գոյ սիրով: Այսուհետեւ, որ ոչն ըմբռնի եւ ոչ նուազի յանպատում խնամոց գթոյ Իւրոյ, ի Նա ձգտի ամենայն հայեցուածք կենաց նոցա, որպէս եւ գրեալ է, թէ՝ «Աչք ամենեցուն ի Քեզ նային»***, զի «Ինքն է, որ բանայ զձեռն Իւր եւ լցուցանէ զկամս ամենայն կենդանեաց»#: Արդ, եթէ հակառակեսցին այսուհետեւ ընդդէմ այսր զրկողքն Որդոյ, եթէ ոչ է այսպէս, զոր ասա(ցա)քս, զի՞նչ այն բանից է, որ բաւական լինի հաւանութեան նոցա, որք յայտնապէս անձամբ զանձինս դղրդեալ կործանեն ըստ կամաց իւրեանց, զի թէ ոչ տացեն զայս երիս բանս ի վերայ Տեառն մերոյ[23], զոր «ի Նմանէն» եւ «զՆովաւն» եւ «զոր Նոյնն», եւ Աստուծոյ Հօր անկ վարկին զսոսա բռնութեամբ: Եւ յայսմիկ յայտ երեւի, զի անկանին նոքա ի կարծեաց, զոր ունին վասն Հօր, զի ոչ եթէ միայն զայն, որ ամենայն ի Նմանէ է, գտանեն մերձ նմա, այլեւ՝ զայն, թէ «ամենայն Նովաւ է»: Արդ, եթէ ոչ է այսմ բանի լուրն խոնարհագոյն, ընդէ՞ր առեալ բերեն զսա իբր փոքր ինչ բան զկնի Որդոյ, ապա թէ զլուր պաշտողի եւ զհնազանդեցելոյ ունի սա, տացեն մեզ պատասխանի վասն այսր բանի, որով երեւի, թէ Աստուած փառաց Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որքան զբան առաւել է սպասաւոր, եւ արբանեակ կոչի ի նոցանէ, ուրեմն անձամբ անձին լինի կորանք ամօթոյ արանցս այսոցիկ ի ճառս իւրեանց: Իսկ ի մէնջ, ըստ երկուց կողմանց, զօրաւոր է բան

* Տե՛ս Եսայի Խ 12:
** Հռոմ. ԺԱ 34
*** Սաղմ. ՃԽԴ 15
\# Սաղմ. ՃԽԴ 16

մարգարէութեան ի վերայ նոցա եւ կարող է ճշմարտութեամբն իւրով լինել վարապան անձին: Արդ, եթէ յաղթին ի բանէս խոստովանեալք ի դէմս Որդոյն Աստուծոյ զասացեալսս «ի Նմանէ» եւ «ի Նոյնն ամենայն»: Ահա՛ գտաւ այսուհետեւ բանիւս, թէ «ամենայնիւ ամենայն» Որդւոյ է: Ապա եթէ կամեսցին դարձեալ հակառակել, թէ բանն մարգարէութեան վասն Աստուծոյ Հօր ասաց զնա, երեւի իսկ աւասիկ, թէ ամենայն վասն նորա օրէն է, զի առեալ լիցի, եթէ պատուականք եւ եթէ խոնարհագոյնք եւ զկնի նորա պատշաճապէս եկեսցէ՝ ըստ բանին նոցա: Արդ, որ առ դէմս երեսաց եւ կատարեսցի բանս այս մեզ տայ ձեռն եւս օգնէ ամենայնիւ յամենայնի: Բայց մեք ի բանն, վասն որոյ արկեալ է մեր զճառս զայս, դարձցուք անդրէն պատմութեամբս մերով:

Առաքեալ աւասիկ այսպէս գրէ առ եփեսացիսն. «Զի եղիցուք ճշմարտեալք սիրովն Քրիստոսի եւ զամենայն աճումն սննդեան մերոյ ի Նմա արասցուք, զի Ինքն է գլուխ ամենայնի, եւ ի Նմա կատարի ամենայն մարմին եւ յօդեալ պատշաճի ամենայն խաղալեօք տարբերութեան»*: Դարձեալ եւ առ կողոսացիսն սոյնպէս գրէ. «Վասն այնոցիկ, որք օտարացեալք էին ի գիտութենէն Քրիստոսի, թէ ոչ ունին զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօդեալ եւ պատշաճեալ խաղալեօք տարբերութեան աճէ զաճումն Աստուծոյ»**: Այսուհետեւ գլուխ եկեղեցւոյ ամենայն ճշմարտութեամբ Քրիստոս է, որպէս ուսաք յառաքելոյ, զի «Նա է գլուխ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ»***՝ ըստ այնմ, զոր ասէ. «Ցիմմէ անտի առնու, եւ Նա պատմեսցէ ձեզ զամենայն ճշմարտութեամբ»#: Արդ, մարդ, որ փոյթ ունիցի խնդրել զբարբառս զայսոսիկ, զի «Նմանէն» եւ «զՆովաւն» գտանէ «զՆոյնն» հաւասար չափով բարժանել ի վերայ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ Տէրն մեր դարձեալ ասաց, եթէ՝ «Զօրութիւն ել յինէն»##: Եւ վասն Հոգւոյն ասացեալ է, թէ՝ «Որ հոգովն սերմանէ, ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից»###: Եւ Յովհաննէս

* Եփես. Դ 15–16
** Կող. Բ 19
*** Կող. Ա 18
\# Յովհ. ԺԶ 14
\## Ղուկ. Ը 46
\### Գաղ. Զ 8

© National Library of Armenia

ասաց, թէ՝ «Այսու գիտեմք, զի ի Հոգւոյ անտի Աստուծոյ գոյ ի մեզ»*: Եւ դարձեալ՝ ի բանէ հրեշտակին, որ պաշտեցուն առ Մարիամ, թէ՝ «Այն, ինչ որ ի Նմա է, ի Հոգւոյն Սրբոյ յղացեալ է»**: Եւ որպէս ասաց Տէր մեր, թէ՝ «Որ ինչ ի Հոգւոյն,- ասէ,- ծնանի, Հոգի է»***: Եւ դարձեալ՝ վասն այնր, որ ասացեալ է՝ «ի ձեռն Նորա»՝ վասն Հօր եւ վասն Որդւոյ եւ վասն Հոգւոյն Սրբոյ, գտանի ի Գիրս, զորս առանց յապաղելոյ եւ անխափան յօժարութեամբ յայտ արասցուք: Արդ, ի ճառս Որդւոյ ի հարկէ փոյթ եղեւ մեզ, զի բերցուք զվկայութիւն զայն, որ ասացեալ է վասն Հօր, զի զոր Քէնամիքն ասեն վասն Նորա, մեք ունիմք ցուցանել, զի եւ վասն Հօր գրեալ է «զայն», որ ասէ. «Հաւատարիմ է Աստուած, Որով կոչեցայք դուք ի հաղորդութիւն Որդւոյ Նորա»#: Եւ «Գոյոս՝ առաքեալ,- ասէ,- Յիսուսի Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ Հօր մերոյ»##: Եւ այսուհետեւ ասէ. «Ոչ էք դուք ծառայք, այլ՝ որդիք, եթէ որդիք եւ ժառանգ Աստուծով»###, այսինքն՝ ի ձեռն Աստուծոյ: Եւ ըստ այնմ դարձեալ, զոր ասաց Եսայի. «Վա՛յ, ոյք խորհին խորհուրդք չարք եւ ոչ՝ ի ձեռն Տեառն»$: Եւ վասն Հոգւոյն մեք դարձեալ ունիմք բազում վկայութիւնս ցուցանել, զի եւ վասն Նորա ասացեալ է բայով. «Ձեզ,- ասէ,- յայտնեաց Աստուած ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»$$, եւ՝ «Զաւանդս զայս պահեա՛ զգուշութեամբ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»$$$, եւ՝ «Ումեմն տուեալ է բան իմաստութեան ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»+:

Եւ զնոյնս դարձեալ ունիմք ցուցանել, զի ի վերայ Հօր առեալ լինի բանս այսպիսի. «Աստուած,- ասէ,- փրկութիւն իմ եւ փառք իմ»++, եւ՝ «Ծանուն Քո ցնծասցուք զօր հանապազ»+++: Եւ Գոյոս

---

* Ա Ցովհ. Գ 24
** Մատթ. Ա 20
*** Ցովհ. Գ 6
\# Ա Կորնթ. Ա 9
\#\# Բ Կորնթ. Ա 1
\#\#\# Գաղատ. Դ 7
$ Տե՛ս Եսայի ԻԹ 16:
$$ Ա Կորնթ. Բ 10
$$$ Բ Տիմոթ. Ա 14
\+ Ա Կորնթ. ԺԲ 8
\++ Սաղմ. ՃԷ 14, Հ 6
\+++ Սաղմ. ՁԲ 17

դարձեալ ասէ. «Աստուած այն, որ հաստատեաց զամենայն»*: Եւ դարձեալ՝ «Գոյոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս Եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց, որ յԱստուած Հայր մեր է»**, եւ՝ «Զի բացցի ինձ,- ասէ,- դուռն, եւ ի կամս Աստուծոյ եկից առ ձեզ»***: Ոչ ունիմք մեք այսուհետեւ բազում վկայութեամբք ցուցանել զսոյն, ոչ թէ զի ածիցեմք նոքօք զձախողակիսն ի հաւանութիւն, այլ զի յանդիմանութիւն անձանց նոցա տացուք, զի ոչ եթէ ճշմարիտ եւ հաստատուն է կամ ստոյգ եւ արժանի քննութեան խորհուրդք նոցա եւ բանք վասն Որդւոյ եւ կամ վասն Հոգւոյն Սրբոյ, վասն որոյ եւ մեք ածաք զվկայութիւնս, որովք յայտ արարաք երեւելապէս. զի առնուն Գիրք զբանս զայսոսիկ՝ ըստ պիտոյից փոփոխապէս ի վերայ Աստուածութեան Անձնաւորութեանց, եւ իմաստ լսողի եւ ստոյգ միջնորդի բաւական են այսոքիկ, որ ասացանս՝ լինել զգուշութիւն յայնցանէ, որք ընդդէմ Աստուածութեանն առնուն զփոփոխումն բանից բնութեանց որոշիչ, զի թէ ամենայն, որ մի անգամ մեծ եւ փոքր բարբառք են, փոփոխմունք առնեն բնութեան՝ ըստ բանից նոցա: Բաւական է այս ի կորանս ամօթոյ նոցին, զոր ասացաք, զի ոչ փոփոխի բնութիւն ըստ բարբառոյ այսր, որ լինի վասն Նորա: Նաեւ ոչ իսկ դարձեալ, թէ որպէս բնութիւնքն են, այնպէս են եւ բարբառք[24] ըստ նոցա:

Արդ, ոչ եթէ ի վերայ Աստուածութեան միայն բարբառքս այսոքիկ փոփոխեն զիրեարս, այլ փոփոխին բազում անգամ եւ ծանուցանեն զմարդկութեանն մերոյ զիրս եւ զօրութեամբ իւրեանց նոյն են նոքա, քանզի անկանին ի միմեանց վերայ առնուլ զտեղի իրերաց: Աւասիկ ասացաւ ի գիրս Օրինացն, եթէ՝ «Ստացայ մարդ Աստուծով»#, եւ ոչ՝ «յԱստուծոյ իրրեւ», զի ի բանէն Ադամայ, եւ այն, որ ի ձեռն Տեառն յԱստուծոյ է: Եւ «բազում ինչ է ի Մովսիսէ ասացեալ առ Իսրայէլ հրամանաւ Տեառն»##, զի «ի ձեռն Տեառն» ասէ եւ ոչ՝ «ի Տեառնէ»: Եւ դարձեալ իրրեւ մեկնեցաց Ցովսէփ զերազն ի տան բանտին, ոչ ասաց, եթէ «յԱստուծոյ են» մեկնութիւնք, այլ թէ՝ «ի ձեռն Տեառն են», քանզի բանս այս, որ ասէ «ի Նմանէ»,

---

* Եփես. Գ 9
** Բ Թեսաղ. Ա 1
*** Հռովմ. Ա 10
\# Մմուն. Դ 1
\#\# Թիւք ԼՋ 5

© National Library of Armenia

զօրակից է այնր, որ ասէ «Նովաւ»*: Արդ, յորժամ ասաց առաքեալ վասն Տեառն մերոյ, թէ «եղեւ ի կնոջէ»**, յայտ է, թէ՝ «ի ձեռն կնոջ»: Եւ զայս դարձեալ Գիրն մեկնեաց մեզ ուղիղ, հաստատուն եւ ասաց, թէ «եղեւ կին յառնէ, եւ այր ի ձեռն կնոջ տեսանիմք»***: Արդ, աւասիկ[25], զի այսոքիկ երկու[26] բարբառս զմի պէտս լինուն միով օրինակաւ, եւ սովին դարձեալ այսու պատմութեամբս, զոր արարեալ է մեր, ճեպ ի ճեպոյ ուղղեացուք զայնոսիկ, որք թերացանն եւ կամակորք գտան այսու կարծեօք՝ զմարմին Տեառն մերոյ ոչ հողեղէն համարելով: Արդ, զի յայտ արասցէ եւ ցուցցէ առաքեալ, եթէ ի ստեղծուածոյ աստի որդոց մարդկան է Աստուածութիւն զմարմինն եւ առ Ինքն ընծայեցոյց, ծանոյց մեզ յայտնապէս բանիւ զգիտութիւն ճշմարտութեան, զի թէ ասացեալ էր, թէ «ի ձեռն կնոջ», ցուցանէր, թէ անցաւ էանց նա ընդ Տէր մեր ծննդեամբն Իւրով: Իսկ այն, զի ասաց, թէ՝ «ի կնոջէ է», գիտութիւն տայ ճշմարտութեամբ եւ յայտ առնէ վասն այնր, որ ծնաւն, թէ հաղորդէ բնութեան այնմ, որ ծնաւն զնա:

Արդ, այսոքիւք, զոր ասաց Գիրս, ոչ եթէ ընդդէմ անձին իւրոյ մարտնչէր, այլ ցուցանելով եցոյց, եթէ մերձ են եւ մօտ են այսոքիկ բարբառք առ միմեանս զօրութեամբք իւրեանց: Արդ, յամենայն ժամ, յոր եւ ասի «Նովաւ», մարթի պատշաճել ի վերայ Նորին խորհրդոյ եւ «ի Նմանէն»:

Արդ, զի՞նչ[27] է այն բանք զրպարտութեան ի վերայ Աստուածութեան այսու սիղղոյքայիւք, որ ոչ անլրպետին եւ ընտրին ի միմեանց:

Զ-Է. Եւ նոյնիսկ նոքին ոչ իբրեւ արք տգէտք եւ տխմարք ի գիտութենէ արժանի են առ այս թողութեան: Այլ դարձադարձ առնեն չրջանակաւ արուեստագիտութեան իմն ճարտարապէս եւ պարտաւոր են զխորհուրդս ճշմարիտս այսոքիւք սիղղոյքայիւք, որով յայտնապէս ցուցանեն[28] զդարժան[29] դառնութիւնս իւրեանց մեզ, եւ զի ընդ Հօր առնեմք մեք զխոստովանութիւն Որդւոյն Միածնի հանդերձ Հոգւովն Սրբով՝ ոչ մուծանելով օտարութիւն ինչ ի բնութիւն երրորդութեան, տխմարս, չմարթուս, ճառագիրս կոչեն զմեզ եւ նորամուծիչս, նորաբարոյս[30] յորդորչեն զմեզ եւ բանակրկիտս,

* Տե՛ս Մնուճդ. խ 8

** Գաղատ. Դ 4

*** Ա Կորնթ. ԺԱ 12

բանաքաղս եւ բանչգիւտս անուանեն զմեզ, եւ ո՞ր նախատինք են, զոր ոչ ածեն ի վերայ մեր Քրնամանիչ, դարուիչ բանիւք իւրեանց: Սակայն ես ոչ ինչ ընդ միտ ածեմ կամ տրտմիմ վասն անարդութեան բանից նոցա, զի թէ ոչ բազմանային, կուտէին ի վերայ իմ տրտմութիւնք, եւ հաչեալ մաչէի վասն տրտմութեան անճանց նոցա եւ թերութեան պակասութեան ի ձեռն հայհոյութեան իւրեանց այնպէս համարէի ինձ զնոսա, իբրեւ զմարդս հոգաբարձուս, որք փոյթ ունէին վասն երանութեան անձին իմոյ ամբարշտութեամբն իւրեանց, քանզի երանութիւն տուաւ մարդոյ, որ նախատինքն իւր վասն Աստուծոյ իցեն*: Արդ, ամենայն աշխատութիւն եւ տառապանք նոցա [յ]այսմէ, զի համարիմք մեք զՈրդի ընդ Հօր ի մի պատիւ, իսկ նոքա զայս ասեն, եթէ ի ձեռն Որդւոյ մեք զօրհնութիւն տամք Հօր, այլ ոչ եթէ ի մի փառս հաւասարեմք մեք զՆոսա, քանզի, թէ տամք հաւասարութիւն Որդւոյ, պատուակից եւ բարձակից ընդ Հօր համարիմք զՆոսա: Եւ ահա այս, որ գրեալս է ի ձեռն Նորա, զնչան կրտսերութեան ցուցանէ Նմին: Արդ, ոչ զՈրդի ընդ Հօր համարիմք մեք եւ ոչ զՀոգի ընդ Որդւոյ դնեմք մեք, վասն զի զկնի Հօր Որդին է ի հնազանդութեան, եւ զկնի Որդւոյ Հոգին է ի կրտսերութեան, եւ ընդ Հօր ոչ Որդին պատուի երկրորդական թուովն, քանզի ոչ համեմատի ընդ Նա հաւասարութեամբ, այլ՝ իբրեւ զկրտսեր քան զՆա կարգի եւ յետին թուովն: Եւ այս բանք եւ չրջչրջումն դարձուածոյ նուրբ ամբարչտութեան օտար է ճշմարտութեան եւ պարզ եւ յստակ Աստուծոյ հաւատոցն, զոր սոքին այսոքիկ դարձուցանեն չրջեն զճշմարտութիւնն ի ստութիւն անօրէնութեամբ եւ զրպարտող բանիւք իւրեանց աչխատեն զմարդ, որ սոցին պատահէ: Եւ թէ ոչ իցէ փորձ երկիւղի եւ հանճարով ընկղմի ի նոսին, ապա թէ ոք ոչ իցէ վարժ եւ կիրթ յայս մոլորութիւն, զոր արկեալ է նոցա, ձեռն ձգեն եւ կործանեն զնա:

Բայց մեք նախ զայս հարցանեմք զնա, թէ իբրեւ պատուով[31] այլակերպ ինչ առ ի Նմանէն, կամ թէ իբր զի՞ անլրպետութիւն ինչ իցէ ընդ Հայր եւ ընդ Որդի վայրիւ եւ տեղեաւ, քանզի ասել զՈրդի երկրորդ առանց ժամանակի չէ հնար, եւ Նա Ինքն եւ Արարիչ ժամանակաց եւ աչխարհաց: Եւ արդ, ո՞վ իցէ այսպէս առանց իմաստութեան եւ մերկացեալ ի մտաց, որ ասէ[32] զԱմենայնարարչն սահմանեալ տեղեաւ եւ ժամանակաւ, Որոյ չիք ինչ ընդ մէջ, որ անլրպետէ, եւ որ ոչ է, որ անկն է մերոյ բնութեանս զերիս Անճնաւորութիւնսն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, զի չիք բնաւ միջնորդութիւն ի Նա, եւ ոչ ի

* Տե՛ս Մատթ. Ե 11:

© National Library of Armenia

միոս որդւոց մարդկան մարթ է, զի եղիցի կամ ասասցի, եթէ կրտսեր է Որդի քան զՀայր, եւ ոչ թէ ի միմեանս են անճնաւորութեամբ, այլ այս, զի չիք ժամանակ, որ անջրպետիչ լիցի ի մէջ Նոցա երկոցունց, քանզի չիք տեղի կամ ժամանակ մօտաւոր կամ հեռաւոր յայսոսիկ. անուանս, քանզի մեր է այս ժամանակաւ եւ տեղեաւ բացաձգիլ մերձաւորութեամբ եւ հեռաւորութեամբ աշխարհականս կենաց, որպէս թէ ասիցէ ոք, թէ ժամանակ դարուն Նոյի կանուխ եւ վերագոյն է, քան զժամանակս սոդոմայեցւոցն, եւ ժամանակ սոդոմացւոցն յոյժ բացարձակ եւ հեռագոյն է, քան զմերս, եւ ժամանակք այսր աւուրցս յետինք եւ վերջինք են, քան զՀնոցն, եւ առաջին ժամանակացն լինել մերձաւոր այսոցիկ, որ այժմս են, չէ հնար եւ մարթ, զի անցին զանցին նոքա: Արդ, բնութիւն այս կենդանեաց է, որ սահմանի ի ներքոյ ժամանակաց եւ աշխարհաց, եւ կեանք Աստուծոյ սահմանի ժամանակօք եւ տեղեօք: Իսկ զԱստուած զիա՞րդ առեալ դնիցեմք ի չափ սահմանի եւ կշռեմք ընդ բովանդակութեամբ բանի, որ ցուցանէ վասն վայրի եւ տեղւոյ, զի չիք յայնմ ամբարշտութեանն համեմատ եւ կռիւ եւ կուրութիւն տխմարութեան ի գիտութենէ, որ ընդ խաւար համարի, զի որ ինչ ժամանակաւ գտեալ է, ապականացու ազգիս ասի եւ սմա մերձաւոր եւ հեռաւոր տեղի ասի եւ աշխարհ ճգմամբ երկարութեան եւ կարճութեան, բարձրութեամբ եւ խորութեամբ, երկայնութեամբ[33] եւ լայնութեամբ: Եւ այսոքիւք, որ ինչ արարեալս է ի պէտս արարելոցս եւ եղելոցս: Եւ մեկնեալ է Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ ի մերմէ նմանութենէս, զի պատճառ լինելոյ է արարելոցս եւ աշխարհ եւ նոքա, որք աշխարհի յարարչութենէ երրորդութեան են: Արդ, եթէ անկանիցի[34] Հայր ի միոս արարելոցս, քննութեամբք լքցի առ այս եւ մնասցէ ի հարցուածոց եւ լինի վասն նորա պապանձեալ միտք եւ ամենեւին ի դողումն, եւ եթէ անկանիցի ծուխս այս ի միոս նոցա, եթէ ծնունդ Որդի Հօր է, ամաչեսցեն, կուրասցի խորհուրդք ամենայն ի քննել գիեղանակ այսր կարծեաց, վասն զի ոչ ինչ կարիցեմք ասել, քանզի բարձրութիւն Նորա վեր է քան զամենայն բնութիւնս, եւ չիք չափ անբաւութեան Նորա, զի ծածուկ եւ աննրեւոյթ է յամենայն արարածոց քննութիւն Նորա: Արդ, զարմանք սքանչելեաց է բարբառն Ցովաննու, քանզի երկու[35] բանիւք՝ արգել պաշարեաց զամենայն միոս եւ ցանկեաց, փակեաց զամենայն խորհուրդս եւ սահմանեաց, կացոյց զամենայն չարժմունս եւ սանձ արկեալ նահանջեաց[36] յառաջագոյն զամենայն մտածմունս, որք առեալ ունին զմարտ հակառակութեան եւ զչրջուածս եւ դարձուածս բանից եւ

* Տե՛ս Ցովհ. Ա 1

մեղաց, քանզի խորհուրդք որոշեալ մարդկան եւ միտք բանից նոցա առեալ ունին զատուար ապականութեան, յոր թեւակոխեալն կրթին, քանզի խուսափին յառ[ջ]նմէ օրհնութենէ հարցն մերոց, ըստ որս եւ մերս խառնեալ հաւասարի, վասն զի գովեստ օրհնութեան հաւասար տուաւ ի նոցանէ Հօր եւ Որդւոյ: Եւ մեք, որ զայսոսիկ ունիմք, ոչ եթէ միայն բաւականանամք ի վկայութենէ բանից հարցն մերոց բանիս մերում, այլեւ յաստուածեղէն Գրոց ունիմք ցուցանել վկայութիւնք յանկակիցք եւ յարակիցք բանից մերոց: Արդ, լո՛ւր զայն, որ ասացն Ցովհաննէս. «Նա էր ի սկզբանէ առ Աստուած»*: Նոյնպէս եւ առաքեալս. «Նա Ինքն է ճաճանչ լուսոյ փառացն Նորա եւ կերպարան մեծութեան Նորա»**: Արդ, ո՞ւր է բաժինքն ընդ լոյսն փառացն Նորա եւ ընդ նկարագիր էութեան Նորա, զի ոչ թէ նմանութիւն կերպարանաց այնմ իմիք է, որ յառաջն էր, եւ Նա եղեւ յետոյ, այլ հաւասար միով բնութեամբ է առ կերպարանին յամենայն ինչ եւ ամենայնիւ, քանզի ի Նմանէ է եւ իբրեւ զՆա եւ ընդ Նմա՝ զօրութեամբ եւ փառօք, այսինքն՝ ի Հայր ճշմարիտ, զմի մի է զօրութիւն Նոցա միով մեծութեամբ Իւրեանց: Այսոցիկ ոչ հետեւիլ հաւանին նորամուտ կորստականքն ժառանգակցութեան անուանց Հօր եւ Որդւոյ եւ ոչ՝ զի մի են բնութիւնք, եւ զօրութեամբ եւ մեծութեամբ խոստովանին:

Ը. Սակայն ոչ է քնաւ օտարութիւն կամ թերութիւն Անճնաւորութեանց Նոցա՝ յասելն առաքելոյ. «Գոհանամք զԱստուծոյ Հօրէ ի ձեռն Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի»***: Եւ դարձեալ, թէ՝ «Ի ձեռն Նորա ընկալաք մեք չնորհս եւ առաքելութիւնս ի լուր հաւատոյ հեթանոսաց, եւ ի ձեռն Նորա եղեւ մեզ մուտ ի չնորհս յայս, յորում կամք եւ պարծիմք յընծայութիւն օգնութեանց Նորա»#: Արդ, այսու ամենայնիւ, որ ասաց բայ «ի ձեռն Նորա», ցուցանէ, զի Նա Ինքն է ծանուցիչ Հօր, առ որ մատեաքն, եւ ի ձեռն Նորա եղեւ մեզ ընտանութիւն առ Հայր երկրպագութեամբն, որ ի մէնջ, եւ ի Նմանէ եղեւ պարգեւք առ մեզ գիտութիւն Հօր Նորա: Արդ, ունիմք մեք զիոստովանութիւնս զայս, զի Նա Ինքն է պատճառ ամենայն բարութեանց, եւ նուագեցուցանել չանամք զփառս Նորա, որ առաւել եւս փառաց արժանի էր ի մէնջ այնու, զի ի ձեռն Նորա եղեն գիտք

* Ցովհ. Ա 2

** Եբր. Ա 3

*** Հռոմ. Ա 8

\# Հռոմ. Ե 2

© National Library of Armenia

ամենայն բարութեանցս մեզ: Այսուհետեւ ցուցանեն եւ յայտ առնեն Գիրք յորդորմամբքն իւրեանց ի բազում տեղիս ոչ թէ վասն անուանցն միայն, որ է մեծութիւն փառաց բնութեան Աստուածութեան Նորա՝ իբր «Բան Աստուծոյ» եւ «Ճառագայթ» եւ «Պատկեր», այլեւ՝ զոր ընդ տնօրինութեան է, ընդ որում ասէ. «Տուաւ Նմա անուն, որ առաւել եւ վերագոյն, քան զամենայն անուն է»*. «Եւ Որդի եւ ճշմարիտ Որդի Աստուծոյ»** եւ Միածին Աստուծոյ եւ «Միածին ի ծոցոյ Հօր Իւրոյ»***: Արդ, զի յամենայն ձեւ կերպարանաց յայտ արասցէ զօգնութիւն Իւր առ մեզ, որ ի մեծութենէ բարձրութեան Նորա տուաւ եւ ի փառաց իմաստութենէ Նորին տկարութեանս մերում, վասն այսորիկ բազում անուամբք, որ առ մեզ, յորդորեցաւ, որք լի են նշանօք փրկութեան: Անուանեցաւ Հովիւ եւ Թագաւոր, Բժիշկ եւ Փեսայ, Ճանապարհ եւ Դուռն, Աղբիւր եւ Հաց, Տապար եւ Վէմ#: Եւ այսոքիւք այլափոխ անուամբք երեւելի եւ յայտնիչք Նորա մեկնեցան եւ յայտնեցան առ մեզ, եւ ոչ եթէ բնութիւն ինչ Նորա նոքօք պատմեցաւ, զի իբրեւ յԱրարչէ առ արարածս Իւր ցուցցէ զյորդառատ ողորմութիւն Իւր բիւրօք պարգեւօք, զի լիութիւն Նորա ի կարօտեալս ընծայեցուսցէ զփառս Իւր:

Արդ, զայնոցիկ, որ ի Նայն ապաւինին եւ ի Նմա միաբանին եւ զկատարելութիւն սիրոյն իւրեանց առ ճշմարտութիւն անդ Նորա ցուցցանեն, զգուշանայ պահել. վասն որոյ եւ ոչխարս Իւր անուանեաց զնոսա, զի զբարբառս ճշմարտութեան Նորա գիտեն լսել եւ զկնի օտար բարբառոյ այլոյ ման ոչ վարին եւ երթան, որպէս եւ ասաց իսկ, թէ՝ «Ոչխարք Իմ զբարբառ Իմ լսեն, վասն զի ես եմ Հովիւ քաջ»**: Իսկ Թագաւոր, զի անուանեցաւ ի ձեռն օրինացն, զոր եդ ծառայից Իւրոց, զի մեծամեծ պարգեւս առցեն, եթէ պատահեսցեն զնոսա: Իսկ Դուռն կոչեցաւ, զի առանց ճշմարտութեան հաւատոցն Նորա չիք ոք, որ կարէ մտանել ի գանձանակն կենաց, քանզի ամենայն, որ միանգամ ելանէ եւ մտանէ ի ձեռն պատուիրանաց Նորա եւ յանուն Նորա Հովիւ գտանէ զնա, որոց յուսովն Նորա[37] զօդեալ եւ պարհանդակապահ են: Իսկ Վէմ անուանեցաւ, քանզի Նա Ինքն է[38]

* Փիլիպ. Բ 9

** Ա Ցովհ. Ե 20

*** Ցովհ. Ա 18

\# Տե՛ս Ցովհ. Դ 14, Զ 52, ժ 7, 11, ԺԹ 19, Մատթ. Թ 12, Գ 10, ԻԱ 42, ԻԷ 37, Մարկ. Բ 17, 19, ԺԵ 26, Ղուկ. Ե 35, ԻԳ 2:

\#\# Ցովհ. ժ 27

ապառաժ[39], վասն զի չիք բնաւ ամենեւին չարժուման զօրութեան Նորա եւ ոչ խրամատ՝ ի ճշմարտութիւն Նորա: Եւ ամենայն, որ միանգամ ի վերայ Նորա չինեալ է, եւ ի վերայ հաւատոցն Նորա եղեալ հաստատութիւն յուսոյ նոցա, չիք ինչ, որ կարիցէ յաղթահարել զնոսա: Իսկ ճանապարհ կոչեցաւ, զի ի ձեռն Նորա եւ վասն Նորա են գնացք ճանապարհի մերոյ[40] առ Հայր Իւր, որպէսզի ի ձեռն Նորա Որդւոյ երեւեսցի, զի մի են փառք երկոցունց ի բնութեան միով երկրպագութեամբն, զի «յանունն Յիսուսի Քրիստոսի,- ասէ,- կրկնեսցի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց, եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր Իւրոյ»*: Արդ, ի կիր արկանեն Գիրք զերկուս[41] կերպարանս անուանց զայսոսիկ[42] եւ վարին սոքօք՝ իբրեւ առաջնորդօք, զի մինն ցուցանէ վասն չնորհացն, որ ի ձեռն Նորա եղեն, եւ միւսն եւս քարոզէ վասն փառաց Աստուածութեան Նորա, որ ի Հօրէ անտի է, վասն զի չիք օգնութիւն, որ եղեւ առ ազգս մարդկան կամ կերպարանք տեսչութեան խնամոց գործադրութ ողորմութեանց, որոց ոչ Նա Ինքն իցէ պատճառք նոցին: Այսուհետեւ մարդկան, որք յանուն Նորա խօսեալ իցեն, եւ չկացցէ ինչ ի նոսա նշան եւ կամ սպիք անօրէնութեան, եւ իցէ ինքն յինքն անբիծ անարատ, իբրեւ զկոյս սուրբ Փեսայի նմանութեամբ, այսպիսեացս անուանեցաւ: Եւ դարձեալ՝ յորժամ լինիցիմք չարչարեալ ի խիստ ցաւս չարեաց ի հարուածոց անտի թշնամւոյն, Բժիշկ եւ Քաւիչ մեզաց անուանեցաւ, որ բժշկէ ի չարեաց անտի եւ ի հարուածոց թշնամւոյն: Զայս փոյթ մեծ տեսչութեան Աստուածութեան, որ էառ ընկալաւ յինքն զայսոսիկ զանուանս վասն մեր, մեք աւասիկ, չարախորհուրդս առեալ, իղուցանեմք մտօք մերովք ի խոնարհութիւն կրոսերութեան եւ ընդդէմ կամք զարմանալի եւ սքանչելի մեծի չնորհի երախտեաց[43] Նորա, որ առ մեզ պաշտեցաւ եւ երեւի ինձ, զի ընդ գտակ կենաց մերոց ի կուիւ իջեալ մարտնչիմք այսուամենայնիւ եւ ընդ այնմ, որ յանձն էառ լինել խոցեալ վիրաւոր եւ էառ ընկալաւ յինքն զպախան վասն մեր յորդառատ ողորմութեամբ Իւրով, գոռալով ոգորիմք եւ Նմա, որ խոնարհեցոյց զբարձրութիւն մեծութեան Իւրոյ եւ են առ մեզ, վասն վատթարութեան մերոյ զայս ամենայն հաստուցանեմք մեք փոխարէնն: Սակայն ես ասեմ, թէ չիք համեմատ այսր աքանչելեացս, որ եղեւ ի Նմանէ առ մեզ՝ ո՛չ երկինք եւ ո՛չ երկիր՝ իւրեանց կազմուածքովն, ո՛չ արեգակն եւ ո՛չ լուսինն եւ ո՛չ աստեղք եւ ո՛չ ծով՝ հանդերձ ամենայն զեռնօք իւրօք, եւ ո՛չ օդ՝ հանդերձ ամենայն

Փիլիպ. Բ 10-11

© National Library of Armenia

թէ՛ նօք, եւ ո՛չ գազանք երկրի՝ հանդերձ ամենայն տնկովք, եւ ո՛չ
ջուրք աղբեր ականց՝ հանդերձ յօրինուածովք կարգաւոր բղխմանց,
եւ ո՛չ ամենայն արուեստք սքանչելեաց, որ են ընդ ամենայն տիե-
զերս, ոչ գոն ի կշիռ համեմատել հաւասարել այսորիկ, զոր ինչ գոր-
ծեաց Աստուած եւ զոր ինչ արար, զի բնակեցոյց ի մարմինս վշտալից,
զի առցէ համբերե[ս]ցէ զկարիս նորա, որպէս զի, խառնելով զանմա-
հութիւն Իւր ի մահկանացուիւթիւն մեր, արասցէ զմեզ անմահս Իւրօք
կենօքն՝ ըստ այնմ, զոր ասաց առաքեալն. «Ցայսմ ամենայնի առաւել
յաղթեմք Նովաւ, որ սիրեացն զմեզ»*: Ոչ եղեւ բաւական այս մեզ
զարմանալի սքանչելիքս, զի յաղթեսցուք խոնարհութեան Նորա, այլ
յանդգնիմք զզարմանալի փառս Աստուածութեան Նորա երեւելի[42]
խոնարհութեամբքս յորջորջել: Բայց զինչ մօտ են բարբառք
այսոքիկ, որ ըստ ողորմութեան Նորա առ փառս Աստուածութեան
Նորա, զի վասն փրկութեան մերոյ եղ զսէր Իւր առ մեզ մինչեւ ի մահ
եւ յաղագս այս մարդկեղէն կոչմամբք անուանեցաւ: Արդ, զոր ինչ
մեծութիւն Նորա ոչ ունի ի բնութեան Իւրում, մեք ի տկարութենէ
անտի առեալ զգեցուցանեմք Նմա եւ ոչ ի միտ եդեալ նայիմք ընդ
զարմանալի զօրութիւն Աստուածութեան Նորա, թէ զիա՞րդ կապեաց
զհզօրն եւ էառ աւարի զինչս նորա, զի մեք էաք անօքք չարութեան
Նորա չարաչար գնացիւքն, որ առ մեզ վարէր զմեզ[45] ստելութեամբ
յանհնարին թշնամութիւնս առ Աստուած, իսկ Նա անօթոցն բարկու-
թեան, որ պատրաստեալ էին ի կորուստ, արար մեզ անօթս պատուա-
կանս պէսպէս բարեօքն Իւրօք ի պէտս պիտոյից Տեառն իւրեանց եւ
պատրաստեաց յամենայն գործս բարիս կամօք իւրեանց: Արդ, բանս
այս, զոր ասաց առաքեալ, եթէ ի ձեռն Նորա եղեւ մեզ մուտ առ
Հայր, եւ թէ ի ձեռն Նորա փոխեցաք յիշխանութենէ խաւարի ի մասն
Նորա, հասեալ է սրբոցն ի լոյս յաւիտենից, կատարեցաւ առ մեզ**:
Մի՛ այսուհետեւ գուպարեսցուք, վիճեսցուք առ Նորա բնութիւն եւ
տացուք Նմա զխոնարհութիւն կրտսերութեան, որ ոչ է մերձ եւ մօտ ի
փառս մեծութեան Նորա, քանզի ոչ է վերակացութիւն տեսչութեան
Նորա մեզ տեսչութիւն բռնութեամբ[46], ըստ նմանութեան կարգի, որ
պաշտի առ մահկանացուս: Այլ է փոյթ տեսչութեան չնորհաց եւ
ողորմութիւն յորդաբուղխ, յորդառատ քաղցրութեամբ սիրոյ Իւրոյ,
որ առ ազգս որդւոց[47] մարդկան, զի ի կատարումն կամաց Հօր Իւրոյ
եցոյց զգուշ չնորհաց Իւրոց առ ստեղծուածս Իւր օգնել նոցա:

* Հոով. Ը 37

** Տե՛ս Կողոս. Ա 12-13:

Արդ, բանիցն ստուգութեամբ, զոր լուաք, տացուք անուան Նորա
զայն, ինչ որ անկ եւ արժանաւոր իցէ մեծութեանց Նորա, եւ հաւա-
նեսցուք մեք ճշմարիտ վկայութեանցն, որք քարոզեն զառաւելութիւն
զօրութեան Նորա. եւ բնաւ մի՛ արասցուք բարժինս օտարութեան
հերձուածոց ի մէջ փառաց մեծութեան Նորա:

Արդ, զի՞ կոչեցաւ Տէր մեր ճանապարհ*. եթէ ըստ աստուածեղէն
փառացն այսմ միտ դիցուք, գտանեմք, զի առանց ճանապարհին, որ ի
Նմանէ լինի, եւ առանց նշանի գնացից Նորա ոչ ունիմք մերձենալ առ
լոյս գիտութեան ուման վարդապետութեան Նորա, զի եթէ ոչ Նա
լինի մեզ օթեւանն, տանի հասուցանէ զմեզ ի ձեռն հետամուտ
կետապիւտ[49] սկիզբն ճանապարհի ճշմարտութեան Իւրոյ, երթալ
հասանել մեզ ի կատարումն ճշմարտութեան ոչ է կարելի, քանզի
մեկնութեան յորջորջման ճանապարհին այս է յորդորումն աշտիճա-
նաց, որ տանի յառաջ, զի իբրեւ առ սակաւ սակաւ գնայցեմք նովաւ ի
ճշմարիտ օթեւանն, տանի հասուցանէ զմեզ ի ձեռն հետամուտ կետա-
պիւտ[50] առաջնորդին ճշմարիտ նշանաւ մեծութեան անուն եւ վար-
ձուք արդարութեան եւ կատարեալ նշան Նորա յերանելի հանգար եւ
յիմաստութիւն մտաց ածէ զմեզ, քանզի ճանապարհ բարի է Տէր մեր,
յորումն չէիք խոտորումն, եւ ոչ զարտուղի ինչ ստերիւթ եւ
աստանդէ, քանզի ի բանակետղ Հօրն ածէ՝հասուցանէ ճանապարհն,
որ ի Նմանէ է. «Ոչ,- ասէ,- գայ ոք առ Հայր Իմ, եթէ ոչ՝ Ինեւ»**,
քանզի չէիք այլ ճանապարհ, որ տանի առ Աստուած Հայր՝ առանց
Նորա, զոր օրինակ՝ Որդի սկիզբն է ի մարդ անդ առ գիտութիւն
Աստուծոյ, սոյնպէս եւ Հայր ի ձեռն Որդոյ Իւրոյ տայ զամենայն ըստ
իւրաքանչիւր մարդոյ, քանզի Որդովն Իւրով առնէ զամենայն եւ
այցելու է ամենայնի եւ դարձուցանէ ամենայնի զամենայն ինչ, որ
պիտոյ է Նմա ոչ միայն այսու երեւելի արարածաւ, այլեւ՝ այնու, որ
կայ յուշ անդր մեր յիշատակ Նորա:

Արդ, փոյթ վերատեսչութեան Որդոյ զարմանէ զարարածս
վերինս եւ ներքինս, եւ ամենայն, որ հաստատեցաւ, Նովաւ է հաստա-
տեալ, եւ կարգեալ կան զօրութեամբն Նորա, քանզի Միածին Բանն
Աստուծոյ է Արարիչ ամենայնի, եւ ի Նմանէ առաքին ամենայն
օգնութիւնք, եւ չափք հաստատման ամենայն գործոց ի ձեռն Նորա
բաշխին ամենայն մարդոյ, որպէս ակն ունին պէսպէս յուսով, եւ Նա
Ինքն է, որ առնէ եւ կատարէ զամենայն ամենայն հաստատութեամբ

* Տե՛ս Ցովհ. ԺԴ 6:

** Ցովհ. ԺԴ 6

© National Library of Armenia

եւ կատարելութեամբ եւ միաբանութեամբ առ Իւրում, եւ ամենայն ինչ, որ Նորա է, Հօր Իւրոյ է, եւ Հօր Իւրոյ՝ Նորա է. եւ ամենայն մարդոյ, ըստ իւրաքանչիւր արժանեաց, սոյնպէս եւ դարձուցանէ եւ տայ նոցա փոխարէնս հատուցմանց անաչառ ստուգութեամբն Իւրով: «Հայր,- ասէ,- զոք ոչ դատէ, այլ զամենայն դատաստանն Որդւոյ Իւրում ետ»*, քանզի Նա Ինքն է կանգնիչ, որոց անկանն, կործանեցան ի մեղս անդր ի մեծաքանչ բարձրութենէ կենաց իւրեանց: Եւ զի Նա եղեւ կանգնիչ, վասն այսորիկ անուանեցաւ «Ցարութիւն մեր»**, քանզի յակն արկել զօրութեան Իւրոյ առնէ զամենայն ինչ եւ յերագընթաց կամս Աստուածութեան Իւրոյ օգնէ ամենայնի, որ խնդրեն զՆա, քանզի հովիւ մեր է եւ հանդերձիչ եւ լուսաւորիչ եւ առաջնորդ եւ բժիշկ եւ զօրացուցիչ եւ կանգնիչ մեր եւ ամենայնի, որ ոչ գոյր: Նա Ինքն է պարգեւող եւ կազմիչ եւ ներգործող յեղեալսս եւ ամենեցուն այնոցիկ, որ հաստատեցանն: Նա Ինքն է, որ առեալ ունի զկանգնումն հաստատութեան նոցա ակնարկութեամբ զօրութեան Իւրոյ, եւ ամենայն, որ եղենն եւ կամ որ հանդերձեալ են լինել բարեբարութեամբն, որ ի Նմանէ, նիւթին եւ պատրաստին եւ, իբրեւ զծագ ամենայն ճառագայթից, թեթեւ եւ երագ են, որ ի Նմանէ ներգործին, զի անագանութիւն ի յամելոյն համարեալ լինի, այլ ակնարկումն Նորա երագընթաց ճեպի քան զլոյս՝ փայլատակեալ յարեգակնէ, որ ընդ օդս խառնի: Եւ խազաչրջի երագընթաց քան զքթիթ ակնարկելոյ աչաց եւ նուրբ է եւ երագահաս քան զաստղութիւն մտաց մերոց վաղահաս խլրտմամբն իւրով, քանզի ամենայն թեթեւութիւնք երագութեանց, որ առ մեզս են, ծանրութիւնք համարեալ են առ այն երագութիւն, որ Աստուծոյ, զի չիք բան, որ կարող է ասել, թէ որչափ ինչ է երագութիւն Նորա[51] առ արարչութիւն անդր, քանզի որպէս ծանրագոյն են գազանք եւ անասունք ի չարժմունս անդամոց իւրոց, քան զընթացս սաստկութեան մտաց ի խլրտմունս իւր, որ թռչի սլանայ ընդ լերինս բացաձիգս հեռուստս ի տարաչխարհս, յորս ոչ կարէ երթեալ գազանն եւ անասունն մարմնոյ չատղօք, այսպէս երագ է Աստուած ամենայնիւ առ ամենայն ինչ, քան զերագութիւնս, որ պաշտին առ մեզ, զի չիք ինչ նշան եւ ոչ ժամանակ ակնարկելոյ Նորա: Արդ, որ կրէ «զամենայնի զօրութիւն բանի Իւրոյ»*** ոչ թէ ժամանակաւոր բան է, որ անկանի ընդ գրով ըստ մերս պատշաճի, այլ այնու ճշմարիտ բանին զօրութեամբ բառնայ, զորոյ ճշմարտութիւն ոչ

Ծովհ. Ե 22

* Տե՛ս Ծովհ. ԺԱ 25:

** Տե՛ս Եբր. Ա 3:

ոք գիտէ, զինչ իցէ. քանզի բարձր եւ վերագոյն է գործն Աստուծոյ ի նշանաց անտի, որ ի վերայ տարրեղինացս պաշտի: Զիք այսուհետեւ կամացն Նորա նշան յապաղիչ կամ կասեցուցիչ կամ ագանեցուցիչ, եթէ կայցէ մնասցէ ի լքումն խորհրդոց, այլ յարամնացեալ եւ յարեալ են ի զօրութիւն ակնարկելոյ Նորա, որ ինչ լինելոց են եւ լինին, որով եւ լինին իբր յանկարծակի արդեամբք, զի անդէն եւ անդ ընդ ակնարկել ակնարկելոցն կարգ կացին գոյք ի չգոյից, եւ չիք յայտնութիւն երագութեան ակնարկելոյ Նորա, որպէս եւ ասաց Ծուդիդայ վասն Աստուծոյ, թէ անդէն իսկ եւ իսկ ընդ խորհիլն խորհրդով, զի արասցէ կարգէ ցանկացին արդեամբք[52] եւ գործով, զոր ինչ խորհեցաւն*:

Արդ, զի մի՛ ձգձգեսցէ զմեզ եւ քարշեսցէ առ մեծապատում մեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, եւ ելանիցեմք մեք ի ճառէ աստի մեր սքանչելագործ փառաւորութեամբ նոցա, ասասցուք նախ զայն ինչ, զոր եղեալ կարգեցաք նպատակ բանիս մերում: Արդ, զի մի՛ կարծեսցի Որդի, եթէ չիք Նորա Հայր, եւ Նա Ինքն միայն իցէ առանց Աստուծոյ Հօր Իւրոյ: Վասն այսորիկ, որ Ինքն անճամբ կեանք է եւ բարերարութիւն, ասէ. «Ես կենդանի եմ վասն Հօր»**. աղէ, տեսէ՛ք այսուհետեւ զայն ինչ, զոր ասաց Նա Ինքն, որ է զօրութիւն Աստուծոյ, ոչ կարէ գործել ինչ ի կամաց Անձին Իւրոյ. եւ Նա Ինքն, որ է կատարեալ իմաստութիւն Հօր Իւրոյ: Դարձեալ ասէ, եթէ՝ «Հրաման առի ի Հօրէ Իմմէ»***: Զի՞նչ ասացից կամ զի՞նչ խօսեցայց եւ այսուամենայնիւ, զոր ասաց, յայտ է, զի ճանապարհ ուղղեաց եւ պատրաստեաց եւ եցոյց մեզ, որ տանի առ Հայր Իւր, զի յայտ լիցի ամենայն մարդոյ, թէ այս Որդի այնր Հօրէ, զի Ինքն վասն Նորա յամենայնի կամեցաւ ցուցանել մեզ նաեւ զքանչելիսն, զոր առնէր Միածինն զօրութեամբն Իւրով, առ Նա գումարեալ առաքէր զնոսա, զի յայտնութիւն Հօր եղիցի ի մեզ ի մեծաքանչ զարմանալի նշանացն Որդւոյ: Արդ, ոչ եթէ զարմանալի եւ զքանչելի զգործան, զոր առնէր Որդի, քննէր եւ բաւանդակէր Հայր յաներեւոյթ ծածկութեան Իւրում, այլ վասն զի յանկակից է Բան Նորա, յամենայն ժամ առ Նմա, ասէ զամենայն ինչ, զոր տեսանէ Որդի զՀայրն, զի գործէ, եւ Ինքն նման Նմին ցուցանէ եւ զքանչելիսն, զոր առնէր առ Հայր Իւր, առաքէր օրհնութեամբ, որպէս զի երթիցեն ամենայն գործքն զկնի Հօր Իւրոյ.

* Տե՛ս Ծուդիդ Թ 13-19:

** Ծովհ. Զ 58

*** Ծովհ. Ժ 18

© National Library of Armenia

եւ մեծութիւն մեծասքանչութեան այնմիկ, յոյր անուն անուանէին, Նմա մթերեալ լինէր, զի այնոքիկ, ոյք Որդւոյն ունկն դնէին, իբր ի սքանչելեացս անտի Նորա եկեսցեն ի հաւանութիւն Նորա վասն Հօր Իւրոյ, յՈրոյ անուն ուսուցանէր զնոսա, զի Ինքն Հայր գործէր ի ձեռն Նորա զՏեառն, զի ամէն ասի ի Նմանէն եւ ամէն ի ձեռն Նորա եւ Տեառն վասն Նորա*: Վասն այսորիկ եւ Որդի այսպէս ասաց, եթէ՝ «Ամենայն, որ ինչ Իմ է, Քո է»**, քանզի առ Հայր առաքէր Նա զարարչութիւն սքանչելեացս Իւրոց: Եւ Հայր դարձեալ Որդւոյ Իւրում առնէր զսքանչելիսն՝ յասելն. «Ամենայն, որ ինչ ի Հօր Իմոյ է, Իմ է»***: Եւ պատճառ սքանչելեացս զՀայր դնէր, ոչ թէ իբր օգնէր Հայր Որդւոյ այնու իւիք, զոր ոչն ունէր Նա ի բնութենէ Հօր Իւրոյ, եւ ոչ եթէ փոյթ եւ ստիպումն ի գործոն տայր Նա Նմա՝ իբր զհրամայել կամ պատուիրել[53] եւ ակնարկել, զի արասցէ զնոսին, եւ ոչ թէ դարձեալ հաւատարիմ ինչ լինէր՝ որպէս զարարածս ի վերայ այնոցիկ, որ Աստուածութենէն, այլ ի բովանդակ կատարեալ են առ Նմա եւ ի Նմա գտեալ կան, որ ինչ Հօր Նորա են, եւ նոյնպէս են ընդ իշխանութեամբ եւ ընդ հրամանաւ Նորա, զի ոչ թէ իբր պարգեւօք ինչ են Նորա, այլ՝ իբրեւ ի բնութենէ Հօր առ Որդի անդր, քանզի ամենայնիւ նման Հօր Իւրում էր Նա եւ ի նմանութիւն Հօր Իւրոյ գործէր զամենայն: Արդ, եթէ չիք փոփոխումն ի բնութիւն Նոցա եւ ոչ ի զօրութիւն Նոցա, այսուհետեւ ուր մի է բնութիւն Նոցա եւ զօրութիւն, յայտ է, թէ[54] միաբան եւ հաւասար են սքանչելիօք ամենայն գործոց միով կատարեալ մեծութեան Իւրեանց. «Քրիստոս՝ սա է, զօրութիւն է Աստուծոյ եւ իմաստութիւն Աստուծոյ»#, եւ ամենայն ինչ Նովաւ եղեւ եւ Նովաւ հաստատեցաւ, ոչ եթէ իբր արարեալ եւ հնազանդեալ անօթով եղեն ի ձեռն Նորա, որք եղենն, այլ իբրեւ Արարիչ ամենայնի միով կատարեալ կամօք, զոր ունի Հայր առ Որդի անդ Իւր, ամենայնի կարգեալ զայր արարչութիւն Նորա: Վասն այսորիկ, զոր ասաց Տէր մեր, եթէ՝ Ես ի կամաց Անձին Իմոյ ոչ խօսեցայ, այլ, զոր ինչ ասաց Հայր Իմ, զայն Ես Ինքն խօսիմ. եւ բանն, ասէ, զոր խօսեցայ Ես, ոչ եթէ Իմ է, այլ՝ Առաքչին Իմոյ**, դարձեալ ասաց, թէ՝ «Որպէս հրամայեաց Ինձ Հայր, այնպէս գործեմ Ես»***: Եւ այնուամենայնիւ, զոր ասաց, ոչ

* Տե՛ս Ցովհ. ԺԳ 3:
** Տե՛ս Ցովհ. ԺԷ 10:
*** Ցովհ. ԺԶ 15
\# Տե՛ս Ա Կորնթ. Ա 24:
\#\# Տե՛ս Ցովհ. Զ 38:
\#\#\# Տե՛ս Ցովհ. Ժ 37, 38:

թէ իբրեւ չգիտէր Նա, մինչեւ ընդունէր, զոր ինչ ասացեալ լինէր առ Ինքն, եւ ապա պատմէր զկամս Հօրն, այլ զի սոքումբք այսոքիւք, որ այսպէս ասացեալ լինէին ի Նմանէ, ցուցցէ զկատարելութիւն միաբանութեան առ Հօր Իւրում. զի միով զօրութեամբ, միով կամօք է Հայր առ Որդի Իւր, ի մի հաւասարութիւն, եւ յանուն Հօր պատմէ զամենայն, որ ինչ Իւր է, զի ի բնութենէ Հօր Իւրոյ է: Արդ, լուաք աւասիկ, զի ասաց, թէ՝ «Զոր ինչ պատուիրեաց Ինձ Հայր, զայն խօսիմ Ես»*: Զի՞նչ ասիցեմք այսուհետեւ, թերեւս, ըստ լրոյ բանիցս, որ գան կատարին, եւ լսին բարբառք յօդապատ լսելիօք մերովք, սոյնպէս ընդունիցիմք եւ զարդիւնս նոցա իբրացն եւ առ Աստուած զայսոսիկ յարեմք եւ յարմարեմք բան, որ յանդամոց բաչխելն լինի. եւ երբեմն մնայ, աղտեղի առնու եւ լքեալ գտանի ի բարբառոյ անտի եւ երբեմն բարբառով երեւի եւ, որ ինչ ծածկեալ է գիտութիւն, նովաւ մեկնի: Սոյնպէս ասիցեմք եւ վասն Որդւոյ, եթէ Նա ըստ Նմին նմանութեան ընկալաւ ի Հօրէ Իւրմէ: Լուր պատմութեան եւ ընդունելութեան խրատու եւ այն, ինչ զորս ոչ գիտէր, այսոքիւք ցուցաւ Նմա:

Արդ, զայս ամենայն, զոր խօսեցաւս, եթէ՝ «Որպէս հրամայեաց Ինձ Հայր, այնպէս խօսիմ»**, ոչ իբր թէ չգիտէր Նա, մինչեւ ընդունէր, զոր ինչ ասացեալ լինէր առ Նմա, այլ զի սոքումբք այսոքիւք, որ ասացեալ լինէին ի Նմանէ, ցուցցէ զկատարելութիւն միաբանութեան առ Հօրն Իւրում, զի միով զօրութեամբ եւ միով կամօք Հայր առ Որդի Իւր ի մի հաւասարութիւն պատմի, եւ որ ինչ Նորա է, բնութեան Հօր Իւրոյ է: Արդ, որք լուաք, զի ասաց, թէ՝ «Զոր ինչ ասաց Հայր Իմ, զայս ասեմ Ես», աստուածապէս պարտ եւ պատշաճ է, զոր ինչ աստուածեղէն բնութեան է իմանալ, եւ որպէս պարտ եւ արժան է յԱստուծոյ, սոյնպէս եւ անկցին ի սիրտս մեր, որք անբաւ եւ անքնին են: Եւ ոչ գոն առակք օրինակաց ի մերայոց աստի, եթէ կարգեսցէ եւ պատմեսցէ զՆորայն, որպէս արժան իցէ մեծաչուք մեծապատում, մեծապատիւ փառաւորութիւնքն Աստուծոյ: Եւ որպիսի նմանութիւն առցուք ի գաւաւ եւ յաղքատ բնութենէ մերմէ առ ի գիտել զկամս Հօր առ Որդին Իւր առանց թերութեան, որպէս ոք, թէ ի փոքր ժամու ունիցի զհայելին ընդդէմ իւր, եւ իսկ եւ իսկ յակնարկ անդէն ի նմին ժամու երեւի գեղ ամենայն[55] կերպարանաց այնորիկ, որ եղն զնա առաջի աչաց իւրոց, սոյնպէս յայտնի կամք Հօր առաջի Որդւոյ Իւրոյ: Արդ, որովհետեւ մի են կամքն, զի՞նչ յայտնութիւն

* Տե՛ս Ցովհ. ԺՒ 50:
** Տե՛ս Ցովհ. ԺՒ 50:

© National Library of Armenia

պիտոյ է լինել միում կամացն, զի Հայր սիրէ զՈրդի Իւր եւ զամենայն ինչ ցուցանէ Նմա, եւ ամենայն ինչ, որ Հօր է, Նորա: Արդ, զի՞նչ ինչ իցէ Հօր, որ օտար է յՈրդւոյ Իւրմէ, եւ ոչ բովանդակեաց Նա զամենայն: Վասն զի ամենայն ինչ, որ Նորա է, Որդւոյ Իւրոյ է, քանզի ամենայն Հայր որդւոյ է, եւ ամենայն որդի Հօր է ճարտարութիւնքն, որք ուսեալ լինին ի մարդկանէ. ժամ պիտոյ է նոցա եւ դեգերումն[56] անճանճրոյթ հանապազորդութեամբ եւ թեւակոխութիւն բազում կրթութեամբ, զի առ սակաւ-սակաւ արմատացի ի յուշ յիշատակի, զոր ինչ վարժի, եւ, զտեսեալն առեալ, զբերեն ի գործս զնիւթեալսն ի միտսն աշխատութեամբն, զոր ուսանին: Իսկ լի կատարեալ իմաստութիւն Աստուծոյ, որ Արարիչն է ամենայնի, Որդի է, վասն զի կատարեալ ամենայնիւ իբրեւ զՀայր Իւր է, եւ ոչ եթէ ուսմամբ է իմաստութիւն Նորա, այլ զօրութիւն Աստուծոյ է, որպէս եւ առաքեալ իսկ ասաց, եթէ՝ «Նովաւ յայտնեցան ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան»*, մի՛ այսուհետեւ առեալ դիցուք վատթար գիտութեամբս մերով եւ դատարկութեամբ մտաց զգեղ կերպարանաց եւ զչափ եւ զնկար տարրեղինացս յօդապատից առ այնմ Աստուածութեան եւ մի՛ առեալ բերցուք զկնի այնր անբաւ եւ անքնին իմաստութեան զնշանակս եւ զառակս օրինակաց խրատու մարդկութեանն եւ զկարգ ումանն, ըստ որում նստի վարդապետն, որ ուսուցանէ, եւ առեալ ընդունին ի նմանէ աշակերտեալքն զուսումն եւ տայցէ չըմարթու տխմարութեան նորա զհիմանիւթս գիտութեան, եւ յաւելուածով առ սակաւ-սակաւ ումանն ելանէ աշակերտն յաշտիճան իմաստութեան եւ աւարտի ի հաստատութիւն կատարեալ ումանն: Արդ, մի՛ առեալ բերցուք զայսոսիկ ի միտս մեր եւ այսու նմանութեամբ վարկցուք զՈրդին, իբր թէ ուսանող իցէ եւ ոչ՝ ուսուցիչ կատարեալ, քանզի չէք սկիզբն եւ ոչ կատարած ումանն Նորա, վասն զի անբաւ եւ անհիւթ եւ անթերի է յիմաստութենէ Հօր Իւրոյ, եւ տանել բովանդակել զնա ինչ ոչ կարէ, այլ զամենայն ինչ Իւր կատարելութիւն բովանդակէ, զի լի, կատարեալ է Նա՝ իբրեւ զՀայր Իւր, եւ որպէս Հայրն անսահման է եւ Որդին, որ առանց սահմանի է, իբրեւ զՀայր Իւր ընդ սահմանաւ լինել չէ մարթ:

Ամաչեմ ես աւասիկ ի ճառս այնոցիկ, որք զսկիզբ եւ զխոնարհ բնութեանս մերոյ կիրս առեալ բերիցեն ի վերայ Աստուծոյ եւ մերովքս այսոքիւք զգեցուցանեն զնա: Արդ, ընդ այսոսիկ, որ ասացան վասն Նորա, ի նորին ճշմարիտ բանիցն արժան է մերձենալ առ

---

* Տե՛ս Կողոս. Բ 3:

Նա, որովք ասէ. «Որ հետս զիս, հետս զՀայրն Իմ»*: Սակայն Տեառն մերոյ բանս ոչ եթէ վասն նուազագեղ նմանութեան է եւ ոչ թէ վասն գեղոյ երեսաց նշանակ հաւանութեան Ի[ւ]րոյ, քանզի ի նկարագեղ կերպարանաց երեսաց եւ յօչապատ ճեւոց ազատ եւ հեռի է մեծութիւն բնութենէ այնր փառաւքն Իւրոք, այլ վասն զի բարի եւ բարերար է, եւ զայն, ինչ որ բարի է, ի բնութեան Իւրում ունի, ասաց յորդառատ ողորմութեամբն, զոր ունի առ արարածս Իւր, թէ՝ զոր ինչ տեսանէք դուք, որ լինի յինէն, փութացեալ հաստուցանէ զձեզ առ գիտութիւն Հօր Իմոյ, զի եւ Նա, ասէ, Ինձ նման է ամենայնիւ, որ ի բնութեան Իւրում է, եւ տեսլեամբս Իմով տեսիլն Հօր երեւի միով հաւասարութեամբ եւ միով նմանութեամբ, որ հաստատեալ կայ ի մի բնութիւն անդր:

Եւ զի՞նչ[56] ասիցեմք դարձեալ վասն այնորիկ, որ գրեցաւն, եթէ ունկնդիր եղեւ Հօր մինչեւ ի մահ: Եւ դարձեալ ասէ առաքեալ. «Փոխանակ մեր ամենեցուն մատնեաց զՆա»**, եւ այսոքիւք ցուցանէ Հայր զփոյթ տեսչութեան Ի[ւ]րոյ առ արարածս՝ յորդառատ չնորհօք ողորմութեան Իւրոյ, սքանչելի գործովք, որ բարձր եւ վերագոյն է յազգէ աստի որդւոց մարդկան. «զի այնպէս,- ասէ,- Աստուած սիրեաց զաշխարհս, մինչեւ զՈրդին Իւր Միածին ետ»***: Լո՛ւր, արդ, աւադիկ, զի զոր ինչ ունկնդրութիւն է Որդւոյ Հօր Իւրոյ, յաղագս սիրոյն է, որ առ որդիս մարդկան: Եկ լո՛ւր եւ այժմ, արդ, զոր ինչ իշխանութեան Աստուածութեան է Որդւոյ, զի Քրիստոս գնեաց զմեզ յանիծիցն օրինացն: Եւ դարձեալ ասէ. «Մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ»#: Փոյթ լիցի քեզ այսուհետեւ նայել ճշմարտութեամբ ի բանս Տեառն մերոյ, զի յորժամ յարէ զԻւրն ընդ Հօր Իւրում վասն հաւասարութեան սիրոյն Իւրեանց, որ է առ մարդիկ ցուցանէ, եւ յորժամ զիշխանութիւն Անձին Իւրոյ կամի ցուցանել, ասէ. «Կամիմ, սրբեա՛ց»##, եւ՝ «Դադարեա՛, կարկեա՛ց»###, եւ՝ «Քեզ հրամայեմ, հա՛մր խուլ այս»$: Արդ, երբեմն Տէր մեր զհաւասարութիւն, որ է ընդ Հօր Իւրում, իւիք իւիք ծանուցանէ մեզ եւ

---

* Ցովհ. ԺԴ 9

** Համմտ. Հռովմ. Դ 25:

*** Ցովհ. Գ 16

\# Տե՛ս Հռովմ. Ե 8:

\#\# Մատթ. Ը 3

\#\#\# Մարկ. Դ 39

$ Տե՛ս Մարկ. Թ 24:

© National Library of Armenia

երբեմն զմիածնութիւն Առանձնաւորութեան Իւրոյ ածէ բանիւք Իւրովք, զի յայտ արասցէ եւ ցուցցէ, թէ զօրաւոր է առ արարածս իւր արարչութեամբն Իւրով ամենայնիւ, որով կամի, եւ ամենայն աստուածային բանիւք ճշմարտութիւն երեւեցաւ որդւոց մարդկան առ ի հաստատութիւն կենաց իւրեանց, եւ զի Հայր Որդւով երեւեսցի, եւ Որդի ի ձեռն Հօր ցուցցի: Եւ զի Որդւոյ է արարչութիւն արարածոցս, ոչ թէ վասն զի չէ լի կատարեալ Հայր արար ի ձեռն Որդւոյ Իւրոյ զեղեալս եւ ոչ թէ, վասն զի ոչ կարէր, Հայր Որդւովն ուղղեաց կատարեալ զարարածս, այլ վասն զի այսպէս վայել էր բնութեան Նոցա, զի Միմեամբք երեւեսցին ի ստեղծուածս արարածոց Իւրեանց: Արդ, վասն այսր բանի, զոր ասաց բայ ի ձեռն Նորա խոստովանութիւն է առանց եպերանաց. զի Նա Ինքն է պատճառ եւ սկիզբն ամենայնի արարչութեամբն Իւրով, եւ ոչ է արարածքս Արարչին պատճառ ամբաստանութեան:

Թ. Եկեսցուք այժմ եւ վասն Սրբոյ Հոգւոյն արասցուք[57] զհարցուածս մեր եւ տացուք Նմա զվկայութիւնս, զոր ի Գրոց ժողովեալ է մեր, եւ զոր ինչ ի տուչութենէ անտի սուրբ Հարցն մերոց ունիմք մեք առանց գրոց վասն Նորա: Եւ նախ զայս իսկ ասեմք, եթէ ով ոք երբէք լուիցէ զանուանս զայսոսիկ եւ ոչ հիացեալ զահի հարկանիցի յանձն իւր, յոչ տալն այսր անուանց զժառանգակցութիւն բնութեան Աստուածութեան: Արդ, Հոգի Աստուծոյ՝ ասի, «Հոգին,- ասէ,- Ճշմարտութեան, որ ի Հօրէ Իմմէ ելանէ»**, եւ Հոգի Գետութեան եւ Հոգի Առաջնորդութեան եւ Հոգի Սուրբ***: Արդ, անուն Հոգւոյն Սրբոյ՝ անուն միանձն կոչմամբ Իւրով եւ անուն է ճշմարիտ մեծութեան, ուր ոչ մերձենայ զննումն տարրեղէն առ մեծասքանչ փառաւորութիւն Նորա, եւ չէ Նա մասն ինչ յարարելոցս եւ բարձր եւ վերագոյն ամենայն եղանակաց ունի զանունն: Եւ Տէր մեր եցոյց բանիւ Իւրով, զի Աստուած երկրպագելի ոչ իբր ի տեղւոջ երկրպագեալ, քանզի ոչ տեղի այնմիկ, որ ընդ ամենայն տեղիս ունի զՏէրութիւն Իւր, քանզի ասաց, եթէ «Հոգի է Աստուած»#: Արդ, որովհետեւ լուար դու զՀոգին Սուրբ անուանեալ զընութիւն Նորա, գիտել եւ տալ Նմա զչափ կերպարանաց կարծեօք մտաց ի խորհուրդս քո դու ոչ կարես, քանզի ոչ է Նա հնազանդեալ ընդ այլակերպութեամբ փոփոխմանց, վասն զի չիք ի վերայ Նորա չտեմարանք նմանութեանց ի նշանաց աստի արարածոցս, քանզի բարձր եւ վերագոյն է խորհուրդ Նորա, քան զամենայն չարժմունս մտաց, եւ ի միտս միայն անկանի ուշ յիշատակի Նորա փոքր ի չատէ՝ ըստ մերում բաւելոյս, եւ ոչ բովանդակի[58] ճշմարտութիւն Նորա ընդ օրինակաւ բովանդակ Անճամբ եւ փառօք Իւրովք, վասն զի յայնմ վերին բնութեան Աստուածութենէ, Որոյ[59] ո՛չ գայ մեծութիւն ի քննութիւն, եւ ո՛չ զօրութիւն Նորա՝ ի բովանդակութիւն, եւ ո՛չ ժամանակօք եւ աշխարհօք երեւի չափ Նորա եւ ամենայնի, որ կարօտ է սրբութեան: Նա Ինքն է սրբիչ նոցա, եւ ամենայն գեղք ի Նմանէ պարգեւին արարածոցս առանց նախանձու եւ չարակնութեան: Եւ ամենայն, որ միանգամ ի կեանս անդ բարեաց է եւ յանուն ճշմարտին Աստուծոյ լի կատարեալ հանգչի, սիրովն Նորա է, որ առ Նմա, քանզի զօրութեամբն, որ առ ի Նմանէ առնէ զմերձաւորութիւնս Իւր Աստուած առ աստուածասէր միտս, զի եղիցի նոցին վերակացու, տեսուչ, ուժատու եւ օգնական աներեւոյթ եւ անքնին ծածկութեամբ: Ինքն իսկ է Արարիչ թերացելոց կատարելութեամբն Իւրով, եւ ամենայն տեղի ոչինչ է պակաս ի զօրութենէ Նորա, քանզի ոչ թէ արարեալ կենօքս հաստատուն եւ կանգուն է, որ տուողն եւ արարող է կենաց, զի ոչ թէ յաւելուածով հաստատի գեղ իմաստութեան Նորա եւ ջանիւ աշխիճանաց ընդունի զաճումն Նորա, այլ լի կատարեալ ի փառաւոր բնութենէ Աստուածութեան է, եւ է իսկ եւ Նորա են ազգ, քան[60] ամենայն պէսպէս սրբութեանց ընդ ամենայն տեղիս, քանզի լոյս է անբաւ եւ անքնին, որ լուսաւորէ զամենայն միտս եւ զխորհուրդս զօրութեամբն Իւրով, եւ ամենայն ինչ, որ հաստատեալ եւ կարգեալ է նշան բանաւորացս՝ ճանաչել եւ գիտել եւ ուսանել զճշմարտութիւն Աստուածութեան, Նա Ինքն է իմացուցիչ եւ իմաստարար նոցա:

Արդ, բնութիւն Հոգւոյն Սրբոյ աներեւոյթ է, բայց ի ձեռն ողորմութեան բարերար տեսչութենէն Իւրոյ յամենայն տեղիս ցուցանէ զինամս դարմանոյ մատակարարութեանն Իւրոյ, քանզի ի զօրութենէ Նորա բարձանին ընդ ամենայն տեղիս օգնութիւնք Նորա: Բայց հաղորդութիւն Նորա յարժանաւորս Իւր ցուցանի այլակերպ զօրութեամբն, որ յաներեւոյթ ծածկութենէ Նորա չնորհի նոցա, եւ ոչ է միով չափով հաղորդութիւն Նորա ի բազումս, այլ՝ ըստ չափոյ հաւատոց իւրաքանչիւր մարդկան: Սոյնպէս բարձանէ զպարգեւս Իւր յամենեսեան, եւ բնութիւն Հոգւոյն Սրբոյ պարզ է, սակայն առ ամենեսեան մերձ է պէսպէս օգնութեամբք եւ յամենայնէ հեռի է եւ բարձր եւ վերագոյն փառօք բնութեան Իւրոյ, եւ որ ինչ ի Նմանէ պարգեւի,

---

* Տե՛ս Մատթ. Գ 16:

** Տե՛ս Ցովհ. ԺԵ 26:

*** Տե՛ս Սաղմ. Ը 12-14:

\# Ցովհ. Դ 24

© National Library of Armenia

առանց պակասութեան առաքի ի հաղորդելն Իւր ընդ ամենայնի[61] մեծասքանչ զօրութեամբն Իւրով, սակայն ոչ մթերի ի տեղւոջ ուրեք՝ իբր բովանդակեալ ի բաւանդակեալսս, եւ է զօրութիւն փութոյ տեսչութեան Իւրոյ եւ յորդառատ պարգեւաց Իւրոց՝ իբրեւ զնշան կերպարանաց արեգականն, որ յորժամ զնշոյլսազարդ, պայծառագեղ ծայրս իւր առաքէ, ի լուսոյ անտի իւրմէ հանդիստ եւ ուրախութիւն այնոցիկ, յորոց վերայ ծագէ, տարածանի, ամենեքին նմա հաղորդին, իբր թէ առ մի մի ի նոցանէն ամենեւին նա ամփոփեցաւ, որք ունին ի լուսաւորութենէ նորա զանպակաս եւ զանթերի հանգիստն ի նմանէ եւ նովաւ՝ առ իւրեանս, սա, որ զամենայն երկիր լուսաւորէ առհասարակ եւ տարածանի ի վերայ ծովու մեծաւազ ճառագայթիւքն իւրովք եւ խառնի ընդ օդս անչափ մեծութեամբ ծայրակարմիր նշոյլսազարդութեամբն իւրով, եւ է նշանաւ անձն իւրոյ նոր մեծութիւն բացաձիգ հեռաւոր երկարութեամբ, զի առ ճշգրիտ բոլորակ լուսոյ արեգականն չէիք ակն, թէ ժպրհիցի պչնուլ եւ հայել ընդ նա, որպէս զիարդ եւ իցեն: Սոյնպէս եւ՝ Հոգին Սուրբ. փառք Անճինն Նորա բարձր եւ հեռի է ամենայն արարելոցս, բայց չնորհօք եւ օգնութեամբ Իւրովք իբրու թէ առ մի մի ի նոցանէն ծագէ, որչափ կարեն առնուլ ի Նմանէ հաղորդութիւն, սակայն անյայտ ի զգայարանաց զննելոյ նշանակի, քանզի անզնին է եւ անտարր, եւ չէ տեղի, որ բաւիցէ Նմա ի տեղւոջ, եւ ոչ ազդմամբ զգայութեան նուրբ զօրութիւն, բայց առնէ օթեւան իմացականապէս ի բնակութիւն անդր, որք միաբանին եւ արժանաւորին[62] Նմա: Իսկ յորժամ ըստ վշտի կարեաց մարմնոց զեղու մարդ մոլորմամբ ի մեղս սիրով եւ ցանկութեամբ եւ նշանակի ի պատուիրազանցութիւն, օտարացուցանէ զընտանութիւն[63] իւր ի Հոգւոյ անտի Սրբոյ: Իսկ յորժամ լուսացի եւ սրբեսցի ի ժահահոտութենէ անօրէն չարեաց եւ ի ձեզ պայծառութեան արդարութեան կերպարանի սիրովն Աստուծոյ եւ նկարէ յինքն զնկարագրութիւն պատկերի կամացն Աստուծոյ արժանաւոր վարուք, ա՛յս է նշան բանակետղութեան Հոգւոյն Սրբոյ, յորս ընդունին զնա: Եւ զոր օրինակ ակն, որ առողջ, քաջատես, սրահայեաց իցէ եւ յանկարծակի տեսանիցէ յարեգական անդր, ինչ որ երագրեալ անցանէ եւ ոչ երեւեսցի նմա հանապազ հայեցուածով տեսութեան իւրոյ, սոյնպէս ի փոքր նշանակէ ծագման պարգեւացն Սրբոյ Հոգւոյն ի ձեռն ճշմարիտ եւ առաքինի վարուց մարթ ես դու նշմարել զայն, որ ինքն բնութեամբ Իւրով ոչ քննի եւ ոչ բովանդակի:

Այսուհետեւ Հոգւովն Սրբովն եւ ի ձեռն Նորա զեռան եւ յորդին միտք առ Աստուած, եւ ի Նորա յանկարծաթռիչ փայլմանէն խօսեցան

եւ լեզուք ճարտարախօսք, ճարտարարանք, եւ պայծառագիրք եղեն եւ սքանչելիք մարդք տգէտք, ի ձեռն Նորա բժշկութիւն տուաւ հիւանդաց, եւ թերացեալքն լցան, կատարեցան եւ յառաջ եկին յուսովն իւրեանց, եւ ելին վերացան յաստիճանս Նորա պարգեւօքն մարդք դուզնաքեայք, տկարամիտք, եղեն տուողք օգնութեանց եւ պարգեւաբաշխ բժշկութեանց զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ, եւ չուք ստուերի Նոցա ուղղէր կարգէր զհնարս բժշկութեան ի մարդս ցաւոտս երկարախտեայս, եւ այս ամենայն՝ վասն նշանի հաւատոց մարդկան, որով Աստուծոյ պատրաստեցան՝ Սիրոյին ամենայն բարեաց: Արդ, զմարդիկ մարմնաւորս արար հոգեւորս Հոգին Աստուծոյ, եւ զոր օրինակ նիւթ քարանց թափանցիկ պայծառագեղք, ըստ որակութեան իւրեանց զանազանք, զորովք նշոյլ ծագմանն արեգական յորժամ տարածանի, փայլեցուցանեն զանազան գունով զճաճանչ լուսոյն նորա, սոյնպէս եւ մարդք, յորս մթերեալ բնակեցաւ ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ, յարգեցին մեծացան իւրք չնորհօք, զոր արժանի եղեն ընդունել ի Նմանէ եւ յայնմանէ[64], զոր ընկալան, առատացուցին, բաշխեցին եւ հասուցին կարօտելոց, քանզի ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ պատմեցաւ առ յապայն եւ հանդերձեալն յոմանց կանուխ գիտութեամբ, եւ խորհուրդք հանճարովն Նորա մեկնեցան, եւ օգնականութիւնք պարգեւօքն Նորա բնախօսեցան, եւ վայելչութիւն երկնաւոր պայծառութեան իշխանական հրամանաւն Նորա ի հոգեւորսն յայտնեցաւ: Սա Ինքն է ուրախութեան վայելս դասուց հրեշտակացն, քանզի ցնծութիւն անյագ առ բանաւորս, վերինս ակնարկելով իւրով ազգէ, եւ բանակետղ Աստուծոյ եւ նմանակից Նորին զնոսա ամենայն ուսեալ յօրինէ: Նաեւ զայս ամենայն վկայութիւնքս, զոր ունիմք մեք վասն մեծութեան Հոգւոյն Սրբոյն եւ վասն պարգեւացն Նորա, նոյն Ինքն է, որ ուսուցանէ մեզ եւ ի բազում օրինակաց, զորս ունիմք վասն Նորա, սակաւս ինչ ցուցցուք մեք եւ ցուցանեմք, որք եւ բաւականեն ի յանդիմանութիւն այնոցիկ, որք կան ընդդէմ Նորա: Եւ զխորհուրդն, որ ղօդեալ է յանճինս նոցա ճշմարտութիւն նահանջեալ[65], կարճէ փսօսիւքս[66] մերովք, եւ զոր ինչ ի նոցանէ չարաչար[67] ասացեալ լինի անդրէն, ձեռակոծ զնոքիմբք[68] դարճուցանեմք եւ արկանեմք:

Ժ–ԺԶ. Արդ, ասեն աւասիկ այսոքիկ գտողք հայհոյութեանց, զի ոչ օրէն եւ արժան է, եթէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ համարեսցի եւ ասասցի Հոգին Սուրբ, վասն զի[69] օտար է բնութիւն եւ փառք Նորա ի փառաց Նոցա: Պարտ եւ արժան է, արդ, զբանն առաքելոցն ածել ընդ բանիս մերոյ, որք ասացին, եթէ՝ «Աստուծոյ արժան է անսալ առաւել,

© National Library of Armenia

քան մարդկան՝: Ընտրեցէք արդ, ո՞ւմ է արժան լսել եւ հաւանիլ՝ Աստուծո՞յ, թէ՞ որդւոց մարդկան, զի Ինքն Տէր մեր ի մեծապարգեւ տուչութիւն Աւետարանին Իւրոյ իբրեւ առեալ տայր զնչան փրկութեան մերոյ Աւազանաւն Իւրոց աշակերտացն: Այսպէս տայր պատուէր նոցա եւ ասէր, զի աշակերտեսցեն եւ ուսուսցեն եւ մկրտեսցեն յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ* : Եւ ոչ ինչ արար զօտարութիւն Նորա ի հաղորդութենէ անտի Իւրմէ եւ Հօր Իւրում ի կեանս անդր, զոր չնորհեաց որդւոց մարդկան յորդառատ ողորմութեամբ Իւրով, եւ սոքա զիա՞րդ ասեն, եթէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ չէ արժան համարել զՀոգին Սուրբ: Եւ այսու ոչ ահա յայտ է ամենայն բանք իւրեանց, եթէ ընդդէմ Աստուծոյ կռիւ եդեալ մարտնչին: Իսկ եթէ իցեն, ոչ ինչ մերձ է ի կարգս յայս եւ ի հնազանդութիւն Հօր եւ Որդւոյ Հոգին Սուրբ: Աւիցեն դարձեալ, եթէ՝ եւ զի՞նչ իցէ պատճառ յատելոյ Նմա յանուանս յայսոսիկ եւ զի՞նչ իցէ մեծ քան զայս ժառանգակից առնել[70] զորդիս մարդկան, զոր չնորհէ անուն Հոգւոյն Սրբոյ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ:

Արդ, եթէ ոչ էր հաւասարեալ եւ յարմարեալ Տեառն մերոյ ի ժառանգակցութիւն ընդ Հօր Իւրում զՀոգին Սուրբ ի պարգեւ անդ մկրտութեան, ոյր նոցա ասել ինչ արդեօք ճչմարիտ, իսկ գոլով ընդ նոսա, զբամբասանս[71] զայս զկնի մի՛ածցեն, քանզի Հոգին Աստուծոյ յար եւ ժառանգակից է ընդ յորջորջեալ անուամբ եւ բնութեամբ Իւրով, եւ վասն զի մեք զկնի բանից Սուրբ Գրոց երթամք, եւ զոր ինչ մերձ եւ մօտ է առ նոսա, փոփոխումն եւ այլակերպութիւն ոչ խորհիմք եւ մտածեմք ի կենաց բանն, որ գրեցան եւ տուան մեզ: Արդ, ո՞ իցէ այսպէս պակչոտեալ եւ խելագար եւ կորուսեալ ի մտաց իւրոց, զի զոր ինչ Աստուած հաւասարեաց եւ հաղորդեաց, ինքն կամիցի բարժինս արկանել եւ որոշումն որոշել:

Արդ, ի նոցուն բանից անտի մարտ պատերազմի կազմեցաւ ընդդէմ մեր պէսպէս հակառակութեամբք, եւ խորհուրդք վատախորհուրդք եւ չարք ներածեն եւ ընդ կրակն դարձուցանեն զճչմարտութիւն, եւ լեզուք չանալեզուք ապիրատութեամբ հանդերձ առ մեզ ձգտեցան եւ բարկութեամբ եւ հայհոյութեամբ ձիգ առեալ տարածեալ թանրատարափ[72] նետս նանրութեան եւ առ մեզ առաքեն սլաքիւք, որ ոչ իբր ամենայն երկաթ, այլ՝ ի հուր անդր ներկեալ եւ սրեալ: Բայց մեք յերկեղէ նոցին ոչ ինչ երկնչիմք, այլ զՏէր զնոյն զԱստուած

* Տե՛ս Գործ. Ե 29:

** Տե՛ս Մատթ. ԻԸ 19:

զՍուրբ Հոգին առնումք ի սիրտս մեր ուղիղ խոստովանութեամբ, որպէս զի եղիցի մեզ յերկիւղ, որով եւ զօրք վերինք հոգեղէնք եւ հրեղէնք կան ի պաշտօն դողութեամբ, զորս եւ Հոգիս արարածս անուանէ մարգարէն՝ յասելն. «Արար Աստուած զհրեշտակս Իւր հոգիս եւ զպաշտօնեայս Իւր ի հուր կիզելոյ»*, որք եւ կան ի տեղւոջ կայանի բնութեան իւրեանց՝ ի փառաւորութիւն Աստուծոյ, եւ արժանաւորաց ի մարդկանէ երեւին, որպէս պատշաճ լինի, սակայն սրբութիւն նոցին արտաքս է քան զբնութիւն սոցա, եւ ի Հոգւոյն Սրբոյ պարգեւ նոցա՝ անքաւ եւ անքնին գիտութիւն, եւ նորին պահպանութեամբ մնան ի հոգեւոր գեղեցկութիւն, յորում կան, սիրոյն Աստուծոյ զգուշացեալք մնան ի նոյն լոյծ եւ արձակ կամօք, զոր ստացեալ ունին բանաւորութեամբն իւրեանց եւ յայնմ երանութենէ, յորում կանն, անկանիլ ոչ է նոցա՝ զօրացեալք ի Հոգւոյն վարչութենէ: Իսկ եթէ մնասցէ Հոգին Սուրբ ի վերայտեսչութենէ նոցա, վերին պաշտօն հոգեղինացն քակտի եւ խափանի, եւ բիւրաւոր գունդք հրեշտակաց, անդստին եւ՝ կարգք հրեշտակապետացն, մնան ի չփոթութիւն ամենայն յօրինուածոց իւրեանց եւ կան մնան առանց օրինաց եւ կորնչին ի սահմանէ կենաց իւրեանց: Եւ լինի աղմուկ խռովութեան ամենայն զարմանալի սքանչելութիւն նոցա, եւ խառնակի ամենայն կարգ յօրինուածոյ նոցա, քանզի երգել վերնոցն օրհնութիւն ի բարձունս Աստուծոյ ի յայտնութենէ անտի Հոգւոյն է հանճար օրհնութեանս այսորիկ: Ոչ ոք, ասէ, կարէ ոք ասել, եթէ Տէր է Յիսուս, եթէ ոչ՝ Հոգւովն Սրբով, եւ չիք ոք, որ ասէ, թէ նզովեալ Յիսուս, եւ իցէ ի նմա Հոգի Սուրբ, քանզի իրք նորա, որ ինչ[73] յայտնեցաւ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, երեւեցաւ վերնոց եւ ներքնոց, վասն զի Գաբրիէլ[74] ասել վասն հանդերձելոցն առանց Հոգւոյն Սրբոյ ոչ կարէր, քանզի մի ի պարգեւաց անտի Հոգւոյն Սրբոյ նշան մարգարէութիւն է, քանզի ոչ ունէր Գաբրիէլ պատմել ցանկալի առն զաներեւոյթն եւ զառյապայն եւ զմեկնութիւնս տեսլեանցն, բայց թէ՝ յակնարկելոյ անտի ուսմամբ Հոգւոյն Սրբոյ, քանզի Նորա են ամենայն ծածուկք Աստուածութեան Նորա: Եւ առաքեալ ասաց, եթէ՝ «Մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն Սրբով Իւրով»**, եւ Աթոռք եւ Գետութիւնք եւ Տէրութիւնք եւ Իշխանութիւնք*** անդադար են յօրհնութիւնս Հոգւոյն Սրբոյ: Եւ զօրօրինակ ի հեռանալ լուսոյ ի տանէ մնայ ամենեցուն հայեցուածք, որ ի տանն իցեն ի խաւար մթին, եւ այժ զօրութեանց լքեալ գտանիցի

* Եբր. Ա 7

** Տե՛ս Ա Կորնթ. Բ 10:

*** Տե՛ս Կողոս. Ա 16:

© National Library of Armenia

յամենայն գործոց, վասն զի չէ լոյս, որ ցուցանէ զճանապարհ եւ զտեսիլ գործոյն, եւ իրք ցանկալիք պայծառ տեսլեամբ խափանին յերեւելոյ, եւ արծաթ ընդ երկաթոյ խառնակ անկեալ կոխիչ գիտութեամբ, սոյնպէս ամենայն զօրք վերինք զօրութեամբն, զոք որ ունին ի Հոգւոյն Սրբոյ, առանց Նորա խափանին, եւ ծածկի գեղ մեծապայծառ վայելչութեան, որով զարդարին, քանզի ըստ որում բարւոք պահի յօրինուած կարգի առ զորս ի հրամանէ անտի զօրագլխին: Սոյնպէս եւ կարգք վերնոյն առեալ ունին զգեղս իւրեանց իւրաքանչիւր կայանս փառաւոր տեսչութեամբ եւ առաջնորդութեամբ Հոգւոյն Աստուծոյ, քանզի սերովբէիցն ուսուցանէ եւ վարդապետէ՝ ակնարկելովն Իւրով, զի անսկզբնական էութեան երգեցեն զայս օրհնութեամբն իւրեանց՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ»*, քանզի Նա է, որ ուսոյց նոցին զերիցս երրորդել բարբառոյն այսորիկ, եւ զի այն էր, որ ասէր. «Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն հրեշտա՛կք Նորա, եւ օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն զօրութի՛ւնք Նորա»**: Ինքն է ուսուցիչ եւ իմացուցիչ օրհնութեանցս այսոցիկ, քանզի ամենայն բանաւոր արարածքս յումանէ անտի իմաստութեան Աստուածութեան ուսանին զայն, որ ինչ Նոցայն է, ոչ է, յայտ է եւ այն հազարք հազարացն, որք կան առաջի Նորա, եւ բիւրք բիւրոցն, որք պաշտեն զՆա, ի զօրութենէ անտի Հոգւոյն կարգի փառաւոր յօրինուած դասուց պաշտամանն իւրեանց***:

Արդ, ամենայն արարած վերինք հոգեղինացն, որ ոչ պատմի գեղեցկութիւն յօրինուածոյ կարգի նոցա, լի բովանդակ կատարելութեամբն իւրով է զարդարեալ հաստատութիւն իւրեանց, կան անչարժ տեսչութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ զնոսին լուսաւորէ: Ցետ այսր եւ ընդ ամենայն արարածս է Հոգին Աստուծոյ, նաեւ՝ ընդ այնոսիկ, որք ոչ աշխատութեամբ ունին զառաւելութիւն իւրեանց, այլ գտանի ի բոյսս բարւոց կատարելութիւն նոցին, որք յանզգայութիւն անճանց իւրեանց ընդունին զօգնութիւնս ի նմանէ եւ կատարին յԱստուածութենէ անտի, յոր ինչ է եւ կարգ սահմանի իւրեանց: Եկեսցուք իմացուք, արդ, բանիւս մերով առ ազգս մարդկան եւ քննեալ տեսցուք՝ քանիսն իցեն օգնութիւնք ի փոյթ տեսչութենէն Աստուծոյ ի վերայ նոցա ի ձեռն առաջնորդութենէ Հոգւոյն, որ պատճառ կենաց նոցա է, եւ մատիցուք յառաջ առ Հին կտակարանաց պատմութիւն, զոր

* Տե՛ս Եսայի Ջ 3:
** Սաղմ. ՃԲ 20-21
*** Հմմտ. Ցայտ. Ե 11:

յարարածս գործեցաւ, քանզի ի նոսա է գիտութիւն հարցն առաջնոցն, եւ դիցուք կարգեացուք զօրէնս յօգնականութիւն որդւոց մարդկան ի Նմանէ տուեալ, եւ զի տպոց եւ առակոց Նա Ինքն է զօրհիչ եւ յօրինիչ, եւ մարգարէութիւնք մարգարէիցն Նովաւ գայր զանազան կերպարանօք, եւ նահատակութիւնք, որ եղեն արդարոցն առաջնոցն ի մարտ պատերազմի, Ինքն եղեւ առաքինարար նոցա, եւ նշանքն եւ արուեստքն, որ ի նոցանէ երեւէին, ի Նմանէ պարգեւէին եւ չնորհէին նոցա, եւ զմտանելն Տեառն մերոյ յաշխարհ մարմնով կանուխ կարապետէր Նա աւետեօք Իւրովք եւ վասն առաջնորդութենէ Նորա, որ ի մէջ արարածոցս երեւելոց էր, աւետարան քարոզիչ էր Նա: Նաեւ Մարիամ իսկ այսպէս աւետարանեցաւ ի հրեշտակէ անտի. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի եղիցի ի վերայ քո»*: Արդ, Հոգին Սուրբ է Իւր ծնման Որդւոյ, որպէս եւ գրեալ է. «Զոր տեսանես դու, զի իջանէ Հոգին եւ հանգչի ի վերայ Նորա»**, «Սա է Որդի Իմ սիրելի»***: Եւ Ցիսուս ի Նազարեթէ այն, զոր էօծն Աստուած Հոգւովն Սրբով եւ յամենայն սքանչելիսն, զոր առնէր Տէր մեր, զօրութիւն Սորա գնայր ընդ գործս Նորա: Եւ յորժամ փորձուէր Նա ի սատանայէ, Ինքն եհան զնա յանապատ, զի փորձեսցի ի նմանէ: Եւ առանց Հոգւոյն Սրբոյ ոչ էր Տէր մեր յամենայն սքանչելիսն, զոր առնէր, որպէս եւ ասաց, զի թէ՝ «Եւ Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեւս»#, «Հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ»##: Եւ յորժամ յարեաւ ի մեռելոց, Հոգին Սուրբ առ Նմա եւ ընդ Նմա էր, որպէս եւ ասաց Պետրոս ի պրակս Առաքելոցն. «ԶՑիսուս ի Նազարեթէ, զոր Աստուած յարոյց ի մեռելոց Հոգւովն Սրբովն»###: Եւ իբրեւ կատարեաց զմարդկութիւն, զոր զգեցեալ էր նորոգութեամբ զչնորհն, զոր կորոյս Ադամ ի դրախտի անդ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ: Զնոյնն դարձեալ ետ Տէր մեր աշակերտացն Իւրոց ի փչելն յերեսս նոցա եւ յասելն. «Ընկալարուք Հոգի Սուրբ», զկնի որոյ ասաց. «Որում թողուք[75] դուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եւ զորս կապէք՝ կապեալ լիցի»$: Նաեւ ամենայն զարդարանք յօրինեալ կարդաց Եկեղեցւոյ, ի պարգեւաց անտի Հոգւոյն Սրբոյ տուաւ

* Տե՛ս Ղուկ. Ա 35:
** Տե՛ս Ցովհ. Ա 33:
*** Տե՛ս Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22:
\# Տե՛ս Մատթ. ԺԲ 28:
\## անդ
\### Տե՛ս Գործ. Ժ 38:
$ Տե՛ս Ցովհ. Ի 22-23:

© National Library of Armenia

մեզ, որպէս ասաց առաքեալ, եթէ՝ «Եղ Աստուած յԵկեղեցւոջ նախ զառաքեալս, երկրորդ՝ մարգարէն»*՝ հանդերձ ամենայն պարգեւօք Իւրովք, զորս բերէ ըստ յօրինեալ կարգին իւրեանց եւ ասպրէ՝ ասելով, եթէ՝ «Զայս ամենայն յաջողէ միեւնոյն Հոգի եւ բաժանէ, որպէս եւ կամի»**: Եւ զոր օրինակ ի գործակցութիւն Տեառն մերոյ, մինչդեռ ի մարմնի էր, յարեալ էր Հոգին Սուրբ, սոյնպէս եւ Հոգին Սուրբ յօրն յեսին Ցարուքեան Նորա ինքն է պսակատու ամենայն մարդոյ, վասն զի առհասարակ կենաց ի Նմանէ պարգեւեցաւ: Նոյնպէս եւ զօրութիւնն ինքն պատրաստեաց ի տան Հօր Իւրոյ*** եւ զհատուցումն իւրաքանչիւր մարդոյ՝ ըստ չափոյ իւրեանց. ըստ որում աստղ զաստղ առաւել է լուսովն իւրով, զի որպէս յօր փրկութեան մերոյ Նովաւ կնքեցաք, ըստ որում առաքեալ ասաց, նոյնպէս եւ յօր հատուցման մերոյ ի ձեռն Նորա առնումք պղծութեանց եւ առանց արատոյ եւ առնէ ի նմանէ զշահս օգտի կենաց իւրոց, «ծառայ պիտանի եւ իմաստուն» անուանի, որ պատրաստեալ մտանել յուրախութիւն Տեառն իւրոյ, զի ի փոքուն հաւատարիմ գտաւ, ի վերայ բազմաց կացուցանէ զնա**: Իսկ որք արհամարհեցին զՀոգին Սուրբ չար գործովքն իւրեանց, եւ յայնմ իմիք է, որ տուաւ նոցա, ոչ արարին զշահ եւ զօգուտ ի կեանս անճառից իւրեանց, զայն, որ տունայլն է, առնուն ի նոցանէ, որպէս ասացեալ է յԱւետարանին, եւ բարժանեն զնա*** եւ գնեն զմասն նորա ընդ թերահաւատս: Բայց զի ասաց, թէ բաժանեսցեն, ոչ թէ զմարմինն առանց Հոգւոյն առնուն եւ մատնեն ի տանջանսն, որպէս ոմանք ասեն, քանզի ոչ է այս արդար Դատաւորին, եթէ զմարդն, որ յամենայնիւ մեղանչէ, զկէս նորա միայն մատնէ ի տանջանսն, քանզի Հոգի եւ մարմին միով խորհրդով[76] զմի գործ գործեցին միաբանութեամբ, այլ այն, որ ասացաւ, բարժանեսցեն, զի զպարգեւ Հոգւոյն Սրբոյ առնուն ի Նմանէ, եւ եղիցի ամենեցունց օտար ի կենաց իւրեանց, թէպէտ եւ ոչ է Հոգին ընդ այնոսիկ, որք ոչն են արժանի Նմա, այլ վասն զի դրոշմէ ի վերայ նոցա եւ դէտ ակն ունի աշխատութեան նոցա, զի գարճցին յայն ինչ, զոր ընկալան ի Նմանէ: Իսկ այն, որ

* Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28:
** Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 11:
*** Տե՛ս Ծովհ. ԺԴ 2:
# Տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 41-42:
Տե՛ս Մատթ. ԻԵ 21:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 46:

ամենեւին զլանայ զՆորհս Նորա եւ պղծէ զմարմինն իւր ի չարիս եւ յանօրէնութիւնս առնու զյիշատակ իւր ի նմանէ օգնութեամբքն իւրովք, քանզի Դատաստանն, որ հանդերձեալ է լինել, առանց Նորա չէ հնար, զի թէ ինքն սկսաւ ընդ որդիս մարդկան առհասատչէիւ մկրտութեան Աւազանին, եւ ինքն կատարի: Ընդ նոսա իւրաքանչիւր յաղթութեամբքն եւ իւրաքանչիւր պարտաւորութեամբ եւ պէսպէս հատուն բաշխէ, որ պահեալն է նոցա. եւ վատթարութիւն պարտաւորութեան մեղաւորաց նախ այս է, զի զայն, ինչ զոր կարծեն, թէ գոյ նոցա, առնու ի նոցանէ: Բայց օրինակ առ ի ժառանգակցութիւն Հոգւոյն Հօր եւ Որդւոյն ոչ ունիմք մեք, միայն ասեմք, թէ որպէս տոհմակից է միոյ միոյ Հոգի մեզ յանձինս մեր, սոյնպէս ժառանգակից է Սուրբ Հոգին Հօր եւ Որդւոյ: «Ո՞վ,- ասէ,- գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ՝ Հոգին, որ ի նմա, սոյնպէս եւ զԱստուծոյն ոչ ոք գիտէ, եթէ ոչ՝ Հոգին Աստուծոյ»*:

Ժէ. Արդ, այսոքիկ թիւրաբարք եւ կամակորք ասեն իմաստութեամբ աշխարհիս ի վերայ ճշմարտութեան Աստուծոյ, եթէ բազում անգամ մի անունն ի վերայ բազում իրաց ասի, եւ յորժամ գայ յընտրութիւն[77] գիտութեան, ինչ ինչ ցուցանէ, որք զօրութեամբ իւրեանց անջրպետին ի միմեանց, քանզի մի անուն ասացեալ լինի ի վերայ չնչաւորաց եւ ի վերայ այնոցիկ, որք անշունչք են, ըստ որում բնութիւն անուան կոչումն է, բայց ընդ անուամբս ստոր անկանին մարդիկ եւ անասունք եւ անշունչք, որք այլաւորապէս են ի միմեանց, եւ ի բացաճայնութեամբ անուանելն ոչ երեւի ընդ սովաւ, որ պատեւականն է եւ անարգն, եւ անուանս լուր ի վերայ բանաւորացս եւ անբանից մի է, եւ որպէս Պետրոս եւ Պօղոս եւ Յոհաննէս մի բնութեամբ են, նոյնպէս եւ չնչաւորն եւ անշունչն բնութեան կոչմամբ քանակին մինչեւ բացատրես յատկութեամբ յանուանն թէ՛ մարդոյ բնութիւն[78], թէ՛ անասնոյ բնութիւն: Արդ, թէպէտ եւ ոչ է բնութեամբ հաւասար Հոգի Հօր եւ Որդւոյ, թուել ընդ նոսա բացակայ անուամբ չէ անպատշաճ, սակայն ես ոչ ակն ունէի մարդկանս այսոցիկ, թէ այսպէս կոծեսցին եւ բանդագուշեալ բերցեն ի վերայ Աստուծոյ զայսպիսի խորհուրդս եւ մարդկեղէն քննութիւն արասցեն ի վերայ Աստուծոյ ամենակալի: Արդ, այսուհետեւ խորհրդովք, զոր ունին վասն Աստուծոյ, ոչ ահա յայտ է, զի մոլորեցան նոքա եւ զկազմուածս հակառակութեան ի խորհուրդս իւրեանց առեալ խօսին վասն Աստուծոյ, եւ ոչ է մեզ օրէն առ ամբարիշտ[79] բանս նոցա լռեալ եւ

* Տե՛ս Կորնթ. Բ 11:

© National Library of Armenia

դաղարել հեղգութեամբ, զի մի՛ կարծեալ գտանիցիմք, եթէ պարտաւոր եմք մեք ի բանից նոցա եւ յաղթահարիմք:

Արդ, փոյթ սիրոյ ժողովրդեանս Աստուծոյ ոչ թողու զմեզ լռել, որպէս զի բանն մեր նոցա օգնեսցէ, եւ զծանրութիւն չարեաց նոցա թեթեւացուսցուք ի սոցանէ յաղթութեամբ ճշմարտութեան մերոյ, լուարուք զբանս ամբարհաւաճութեան նոցա, թէ զի՞նչ ասեն. մեք, ասեն, զպատուակիցսն միմեանց ընդ միմեանս համարիմք, իսկ զքերացեալն ի պատուոյ փոփոխեմք եւ զհնազանդելոյ առնեմք զթիւ համարոյ նորին[80]: Արդ, ես ոչ խառնեմ զանճն իմ յեղծեալ իմաստն նոցա, որք զայսպիսի բանս յառաջ բերեալ[81] խօսին, քանզի ասեն, զի ոսկի[82], յորժամ համարեալ թուի եւ կապարն ի հաւասարին ընդ նմա ի թիւ, համարեն[83] թերի է, քանզի նա անարդութեամբն իւրով եւ խոնարհագոյն է քան զնա, թէեւ ընդ նմա համարի, եւ ամենայն ինչ, որ այլափոխ է եւ թերի, քան զընկեր իւր էութեամբ բնութեան ոչ վասն թուելոյն համարոյ հաւասարի ընդ նմա փառաւորութեամբ, ըստ որում եւ ականք պատուականք պայծառ գունովն իւրեանց լքանեն զոսկւոյ ազնուութիւն գեղով վայելչութեան, զի երեւի նուազ, քան զնոսա, եւ ոչ համարի ընդ նոսա:

Արդ, մարդիկս այսոքիկ այլում իմիք չեն պարապ, եւ այլ խօսք չիք առ նոսա, բայց միայն՝ զի ասացեն ինչ եւ կամ լուիցեն նոր բանս. այս՝ հետեւ ըստոյիկեանս[84] եւ եպիկուրեան[85] փիլիսոփայսն յունաց օրէն է, զի համարեսցին սոքա եւ ընդ խորհուրդսն ամբարշտութեան, որք ի քոյդ էութենէ զօդին, բայց զինչ մերձ են երկրաւորք իրաց մեծութիւն կամ փոքրկութիւն եւ կամ թիւ համարոյ նոցա անճառն Աստուածութեան: Արդ, լռեմայ մի պղինձոյ ընդ ատեղն ոսկւոյ նուազագոյն համարի առ նմանութիւն, սակայն ասես դու, թէ մի բնութիւն եւ զկնի նորա երկրորդն յայլ եւ յայլ բնութեան եւ ի թիւ մի երկոքեանն ոչ համարին, այլ ասին այսպէս մի եւ մի, բայց համարով ոչ թուին ընդ իրեարս, այլ՝ ընդ այն, որոյ հաւասար է, եւ զուգակից թուի անորիւ ի կարգի, եթէ յիրս մեծամեծս եւ թէ յանարգս իւրաքանչիւր ոք առ ընկեր իւր յարի եւ գայ ի թիւ համարոյ բնութիւնակցին իւրոյ, եւ ոչ այնմ, որ այլափոխ է, քան զնա: Արդ, եթէ ի պղնձոց անտի թուեսցի, ոսկի ոչ կարգեալ թուի ընդ պատուականին: Այսուհետեւ անփոյթ արասցուք զախմարութիւն արանց այսոցիկ, զի նոյն ինքն է յանդիմանութիւն անիմաստութեանց, զի թէ ամենայն բնութիւն, որ եւ է ընդ ընկերին իւրում համարի, ուստի եկն այս, զի համարեսցի պատուականն ընդ կրտսերին: Արդ, ո՞վ երբէք ուրեք սկսաւ ի դահեկանէ եւ ասաց ի նոյն կարգ թուոյ անորիւ

զլումայ, այլ մի դահեկան ասի եւ մի լումայ եւ ոչ թէ՝ երկոքեանն դահեկանք, սակայն զայս բանս առնեն, զի եւ ի վերայ Որդւոյ դիցեն զնուազութիւն եւ հնարին ասել ոչ նման զՈրդի Հօր եւ ոչ զՀոգի Որդւոյ եւ երիս բնութիւնս կամին տալ ի վերայ երից անուանց, զի Որդի թուովն կրտսեր համարեալ լիցի ի Հօրէ, եւ Հոգի՝ յՈրդւոյ, բայց ճշմարտութիւնս մեր ոչ թէ թուով համարոյ է, այլ ստոյգ Աստուածութեամբն վկայեալ է: Արդ, այն, որ թուականքն են, թուեն զմինն, զի իցէ երկու, եւ զբան, զի լիցի երեք[86], քանզի այսպէս են աշտիճանք, որք ծնանին զթիւս համարոյ, թերեւս եւ մեր ճշմարտութիւն թիւք են, որք պահանջեն զընկերս[87] ածել զկնի, զի մեք զՀայրն եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին ասեմք, սակայն ոչ ըստ նոցա՝ մի եւ երկուս եւ երիս եւ չորս՝ հանդերձ այլովքն, այլ ունիմք զճշմարտութիւն, որպէս եւ տուաւ մեզ. Հայր՝ հանդերձ Որդւով, եւ Որդի՝ հանդերձ Նոքօք, այլ ոչ եթէ ի քննութենէ աստի ոչ են նման Միմեանց, որպէս նոքայն ասեն, զի առաւելութիւն եւ կրտսերութիւն համարեսցի, զի ոչ եթէ նմանէին միմեանց Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ միով բնութեամբ, կարդ Նոցա ոչ կայր յերորդութեան: Արդ, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ մեզ այսպէս տուան, զի մի Հայր միոյ Որդւոյ եւ միոյ Հոգւոյն ի մի Աստուածութիւն անդր, եւ չիք ի մեծութեան աստ յայսմ թիւ միոյ եւ երկուց եւ երից, քանզի ոչ եթէ յաւելն մի բնութիւն հնազանդեսցի առաջնումն երկրորդն եւ երրորդն՝ երկրորդումն, այլ մեք զժառանգակցութիւն անուանցս այսոցիկ ի մի Աստուածութիւն անդր կարգեմք եւ ոչ առնումք մեք զթիւ Նոցա ի հնազանդս ի այլ, որպէս տուաւ մեզ ի Տեառնէ մերմէ պատուիրանն, զոր ընկալաք վասն մկրտութեան ի Հայր եւ Որդի եւ ի Սուրբ Հոգին՝: Եւ այսպէս հաստատեալ կամք ի նմա, եթէ ընդ Հօր համարեալ է Որդի, եւ ընդ Որդւոյ հաւասարեալ է Հոգին: Յայտ է, զի ի մի բնութիւն ոչ դատարկ անուամբք, այլ՝ ճշմարիտ անճամբք, եւ ոչ թէ թուով միայն է այս ճշմարտութիւնս, այլ ի յօրինեալ փառս ժառանգակցութեան Իւրեանց հաստատեալ կան:

Տե՛ս Մատթ. ԻԸ 19:

© National Library of Armenia

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1. Ա Կապպադովկեցւոյ

1 Բ ճշմարտութիւն: 2 Բ բարեւօք: 3 Բ գտնէ: 4 Բ եաս: 5 գիայցուածսդ: 6 Բ ծօղակն: 7 Բ զի՝ լուսանցքում: 8 Բ «լուծումն»-*ից յետոյ՝* «եւ զզարմանալի», *որ իբրեւ սխալագրութիւն՝ կէտագծերի մէջ:* 9 Բ բ եւ Գ: 10 Բ բանիւ բանիւ: 11 Բ սկզբն: 12 Բ ձեռ: 13 Բ առնա: 14 Բ աջիւ է: 15 Բ տեղեւոջ:16 Բ Աստուծոյ՝ *լուսանցքում:* 17 Բ Նըմանէ: 18 Բ յընտիր: 19 Բ զնթացս: 20 Բ գիաց: 21 Բ «Եւ արար... կոչեաց»՝ *լուսանցքում:* 22 Բ Նովաւ նովաւ: 23 Բ Տեառն մերոյ, Տեառն մերոյ 24 Ջ բարբառքն: 25 Բ աւաճաւսիկ:26 Բ Բ: 27 Բ զինչ *փխ* զինչ ինչ: 28 Բ յայտնացուցանեն: 29 Բ դարժան: 30 Բ նորաբոյս: 31 Բ պատով: 32 Բ զայս է: 33 Բ երկայնայնութեամբ: 34 Ա անկցի: 35 Բ Բ: 36 Ա նիանջեաց: 37 Բ Նորա՝ *լուսանցքում:* 38 Բ «Նա Ինքն է»՝ *ջնջուած:* 39 Ջ ապառայժ: 40 Բ մերո մերոյ: 41 Բ զԲս: 42 Բ զայսոիկ: 43 Բ երեխտեաց: 44 Բ էր եւ փխ երեւելի: 45 Բ զմեզ՝ *լուսանցքում:* 46 Բ ի բռնութեամբ: 47 Բ որդոց: 49 Բ մեզ մեզ: 50 Բ յետագիւտ:51 Բ նոր: 52 Բ զորդեամբք: 53 Բ պատուիրերել: 54 Բ թէ թէ: 55 Բ ամենայն՝ *լուսանցքում:* 56 Բ որդեգրումն՝ *լուսանցքում:* 56 Բ զի՞նչ զի՞նչ: 57 Բ արարասցուք: 58 Բ բովաանդակի: 59 Բ որ, *լուսանցքում* լրաց.՝ ոյ: 60 Բ քան՝ *լուսանցքում:* 61 Բ ամենայն: 62 Բ արժաւորին: 63 Բ զնտանութիւն: 64 Բ յայնմանէ մանէ:65 Բ նիանջեալ:66 Բ խօսիմքս: 67 Բ չարչար: 68 Բ զնոքիմքք: 69 Բ *չիք* զի: 70 Բ առնել առնել: 71 Բ զբան բան: 72 Բ թանձարատարափ: 73 Բ ինչ՝ *լուսանցքում:* 74 Բ Գաբրէլ: 75 Բ թողուք թողուք: 76 Բ խորհրդով: 77 Բ յնտրութիւն: 78 Բ բնութիւն՝ *լուսանցքում:*79 Բ ամբարշ: 80 Բ նորա:81 Բ յառաջ բերեալ՝ *լուսանցքում:* 82 Բ զի ոսկի զի ոսկի83 Բ համարեն: 84 Բ ընտոյիկանս: 86 Բ Գ: 87 Բ զնկերս:



ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

© National Library of Armenia

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ «ՄԱՏԹԷԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ»[1]

Հայ միջնադարեան գրականութեան Սանահնի դպրոցի նշանաւոր ներկայացուցիչն է ԺԱ դարի մատենագիր Անանիա վարդապետ Սանահնեցին (Հաղբատացի): Նա հեղինակ է դաւանաբանական («Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»), մեկնաբանական («Մեկնութիւն չորեքտասան Թղթոցն Պօղոսի առաքելոյն», «Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու», հատուած), ճառագրական («Ցաղագս Յովհաննու Մկրտչի», «Ի խաչելութիւն Պետրոսի») եւ ներբողական («Ներբողեան՝ ասացեալ ի սուրբ Կաթողիկէ եկեղեցի...») երկերի: Ժամանակի պահանջով շարադրուած այդ երկերում կարեւոր դեր էր վերապահուած, մասնաւորաբար, մեկնաբանական աշխատութիւններին, որոնք լայնօրէն օգտագործուել են Հաղբատ-Սանահնի, աւելի ուշ՝ Կիլիկիայի եւ Էջմիածնի ուսումնագիտական օջախներում: Հասարակական, գիտական, իմացական նշանակութիւնից զատ, մեկնաբանական այդ աշխատութիւնները աչքի են ընկել նաեւ գաղափարաքաղաքական ուղղուածութեամբ: Դրանք իրենց գործուն մասնակցութիւնն են բերել դարի հոգեւոր կեանքին: Մեկնութիւններում լայնօրէն մէկտեղուած են ուսուցողական, մանկավարժական եւ տեսական-դաւանաբանական գաղափարներ, որոնց նպատակը եղել է սանների հայրենասիրական դաստիարակումն ու գիտական պատրաստութիւնների ամրապնդումը: Սանահնեցու մեկնաբանական աշխատութիւնները շարադրուած են կենսականօրէն անհրաժեշտ այդ գաղափարների ու նպատակների յստակ գիտակցմամբ: Այս գիտակցմամբ է շարադրուած հեղինակի կարեւորագոյն երկերից մէկը՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը: Անանիա վարդապետը սոյն աշխատութիւնը գրել է իր ուսուցչի՝ Դիոսկորոս Սանահնեցու խնդրանքով: Այդ մասին երկի ընդարձակ խորագրում հետեւեալն է ծանուցում Մաշտոցի անուան Մատենադարանի (ՄՄ) N2686 ձեռագրի գրիչը. «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի Անանիայի հայցք վարդապետի՝ ի խնդրոյ հաւր Դիոսկորոսի, զոր յետոյ իմ աղաչեալ զուսաւորիչ} վար(դապե)տն Սարկաւագ ըստ մականուէեան (այսպէս) եւ երկրորդ լուսաւորիչ} հայ ազգին եւ

1 Հեղինակի եւ նրա մատենագրական ժառանգութեան մասին տե՛ս Ց. Ց. Զեռսէեան, «Անանիա Սանահնեցու մատենագրութիւնը», Երեւան, 1988 (անտիպ):

յաղագս սիրոյն, զոր էր առ իմ անպիտանութիւն, բազում չանիւ եւ աշխատութիւն կրեաց յաղագս այսր տառիս», որից տեղեկանում ենք, թէ խնդրոյ առարկայ մեկնութիւնը յետագայում խմբագրուել եւ որոշակի բարեփոխման է ենթարկել Յովհաննէս Սարկաւագը՝ հաւանաբար իր իսկ աշակերտներից մէկի խնդրանքով: Մեկնութեանը նախորդում է Դիոսկորոսին յղած Անանիայի թուղթը, որն այստեղ ոչ այլ բան է, քան մի ընծայական՝ նուիրուած բազմերախտ ուսուցչապետին. «Ընկալայ զհրաման տեառն իմոյ հաւր Դիոսկորոսի եւ հոգելիր վարդապետի՝ Սանահնի սուրբ առաջնորդի, զորոյ յոյժ ըղձաւ եւ սիրական աղաչանաւք հայցեալ պահանջեցեր ի մէնջ վասն բացայայտութեան տերունեան բանից կենսաբեր Աւետարանին...» (Ա 2ա-3բ, Բ 1ա-4բ)[1]: Անանիա Սանահնեցու տակաւին անտիպ[2] ընծայական-թուղթը մեկնութեան համար նաեւ ինքնօրինակ նախադրութիւն է:

Ելնելով Անանիա Սանահնեցու այս թղթի մի արտայայտութիւնից՝ «Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նոյն եմ աստ հոգւով, այլ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութիւն կատարի...» (Ա 2բ, Բ 1բ) (որ ոչ միայն նորկտակարանային յայտնի դարձուածքի [Մատթ. Ի 41, Մարկ. ԺԴ 38 հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 19] իմաստով է այստեղ գործածուել, այլեւ պարզորոշ մի ակնարկ է իր առաջացած տարիքի մասին)՝ կարելի է ենթադրել, թէ սոյն տողերի հեղինակը տարիքն առած մի մարդ է եղել: Այս մասին են վկայում նաեւ Դիոսկորոսին յղած թուղթ-ընծայականի հետեւեալ տողերը. «...Հարկիցի ձեռնարկել ի գործ վեհագոյն քան զկար մեր...», «...Ձերովք աղաւթիւք տացէ եւ ինձ կարողութիւն՝ ախանել եւ կատարել զհայցուածս Ձեր՝ առ ի յաւգուտ բազմաց...»: Զբացառելով, որ այսօրինակ «վեհերոտութիւնը» սովորական մի տուրք կարող էր լինել միջնադարի գրական աւանդոյթին՝ պէտք է այսուամենայնիւ կարծել, թէ միայն տարէց մարդը կարող էր այսպիսի երկութեամբ սկսել իրեն յանձնարարուած գործը՝ այն աւարտի հասցնել չկարենալու մտավախութեամբ: Պարզ է նաեւ, որ նման աշխատանք կարելի էր վստահել գիտամանկավարժական տարիների վաստակ ունեցող մի անձնաւորութեան: Այն նախատեսուած էր ծառայելու «յաւգուտ բազմաց», այ-

1 Շարադրանքում բերուած այս եւ յետագայ թերթահամարները ՄՄ N2686 (Ա), 2859 (Բ) ձեռագրերինն են:

2 Ընծայականից երկու փոքր հատուած հրատարակել եմ Ե. Տէր-Մինասեանը («Հաղբատ եւ Սանահին», «Արարատ», 1901, էջ 275) եւ Գ. Ցովսէփեանը («Ցիշատակարանք ձեռագրաց», Անթիլիաս, 1951, էջ 291):

© National Library of Armenia

սինքն՝ օգտագործուելու իբրեւ դասագիրք ուսումնագիտական մի այնպիսի հաստատութիւնում, որպիսին էր Սանահնի բարձրագոյն տիպի դպրոցը: Եւ, վերջապէս, թւում է՝ միայն տարիների փորձ ու հեղինակութիւն ունեցող մի գիտնական վարդապետի պէտք է դիմէին «յոյժ ըղձիւ եւ սիրական աղաչանաւք», «անձնայորդոր փութով... ոչ՝ մի անգամ եւ երկիցս, այլ՝ բազում թախանձանաւք»: Իսկ երբ մտաբերում ենք, որ «աղաչական» խնդրուածքների հեղինակն Անանիա Սանահնեցուց անհամեմատ համբաւաւոր մի հոգեւորական եւ գիտնական վարդապետ էր, պատկերն էլ աւելի է պարզւում: Այստեղից՝ եզրակացութիւն. քանի որ Սանահնի վիմական արձանագրութիւններից մէկում Դիոսկորոսի՝ իբրեւ այդ աթոռի հոգեւոր առաջնորդի անունը վերջին անգամ յիշատակւում է 1063թ.[1], ապա հաւանական է, որ Անանիա Սանահնեցին Մատթէոսի մեկնութիւնը շարադրել է մօտաւորապէս 1060-1063թթ.:

Ընծայականից յայտնի է դառնում, որ ինչպէս նախորդ, այնպէս էլ այս Մեկնութիւնը շարադրելիս հեղինակն օգտուել է ս. Յովհան Ոսկեբերանի եւ ս. Եփրեմ Ասորու համաբնոյթ աշխատութիւններից: Բայց քանի որ Սուրբ Գրքի մեծահամբաւ մեկնիչների երկերի «յորդառատ (յորդահոս) բանիցն յաճախութենէ եւ ի բազմադուռն տեսութեանց բազմաց միտք թարթափին՝ ոչ բերելով զբոլորից իմաստութեան տեսութիւն», ընթերցողներին մատչելի դարձնելու համար հեղինակը պատշաճ է գտել պարզեցնել եւ համառօտել աստուածաբանական այդ տեսութիւններն ըստ հայեցողութեան:

Ելնելով մեծապէս խաթարուած այս ընծայականի փոքրիշատէ ընթեռնելի հատուածներից՝ կարելի է մէկ անգամ եւս հաւաստել, որ մեր հեղինակը քաջատեղեակ է ոչ միայն անտիկ մշակոյթին, այլեւ՝ առասպելաբանութեանը: Խօսելով մարմնի բուժումից գերադասելի հոգու ապաքինման կամ հոգեկրթանքի կարեւորութեան եւ անհրաժեշտութեան մասին՝ Սանահնեցին գրում է. «Վարժարանս այս (կամքի կրթումը համբերութեամբ - Յ. Ք.) նոյն է մարտարան հրաշակերտս հոգեաց՝ կարգեալ ի պէտ բժշկաց՝ ոչ ըստ Ասկղեպիասայ եւ Գաղիանոսի... իմն եւ համրուսումն յարմատոց տկարագունիցն աւժանդակեալ, ըստ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն ցուցաւ ցամաքում արհեստիցն, այլ զի սա ոչ տարաշխարական մասն գոլով նուաստ եւ ոչ ի դեգերումն դեմետրական հնարիլ հնացելոց վիրաց

1 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, «Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները», Երեւան, 1957, էջ 187:

խորհել խոխոտումն եւ սրտովք զքուժականն մերձեցուցանել յուխտազանցութիւն...»:

Թուղթն ուշագրաւ է նաեւ իր բառամթերքով: Այստեղ առկայ **եռազատակ, խորխուզութիւն, հոգազանք, յազնահոծեալ, տառադրոշմ, պարտաշնորհ** բառերը բացակայում են Նոր հայկազեան բառարանում:

Թուղթ-ընծայականին անմիջաբար հետեւում է մեկնութեան Նախադրութիւնը. «[...*] իմաստասիրաց Փիղոմն վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսութեան ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ այլոց հնագունից հոգեւոր վարդապետաց առեալ... եւ արդ, այսչափ բաւական լիցի իմաստասիրաց՝ առ ի ծանուցումն խորհրդոց չորից Աւետարանչացն. եկեսցուք այսուհետեւ ի բանս Աւետարանին, զոր Մատթէոս գրեաց եբրայեցւոցն յասելն իւրում այդպէս» (Ա 4ա-10ա, Բ 5ա-10ա): Նախադրութեան մէջ աղբիւրագիտական հետաքրքրութիւն են ներկայացնում Եփրեմ Ասորու եւ Եղիշէի երկերից բերուած հատուածները: Առանձնակի շահեկանութեամբ աչքի է ընկնում յատկապէս Եղիշէի անուամբ բերուած հետեւեալ հատուածը. «Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են. ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ միշտ Աստուած եւ միշտ արարող է, յորժամ կամեցաւ... եւ դարձեալ ասէ՝ զիմաստութիւն խաւսիմք, զոր յառաջ քան զյաւիտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր» [Ա Կորնթ. Բ 7] (Ա 5բ-6ա, Բ 6ա-բ): Քննութիւնը պարզում է, որ հատուածը բացակայում է Եղիշէին պատկանող կամ վերագրուող երկերում[1]: Դատելով հատուածի բովանդակութիւնից՝ այն բերուած է, հաւանաբար, հեղինակի Արարածոց մեկնութիւնից: Վերջինս հատուածաբար պահպանուել եւ մեզ է հասել Վարդան Արեւելցու Արարածոց խմբագիր մեկնութեան միջոցով: Սակայն Եղիշէի անուամբ բանաքաղուած հատուածների մէջ եւս խնդրոյ առարկայ հատուածը բացակայում է[2]: Սա նշանակում է, որ Սանահնեցու վկայակոչուած հատուածը, ունենալով աղբիւրագիտական նշանակութիւն, իր համեստ նպաստը կարող է բերել Եղիշէի մատենագրական վաստակի քննութեանը:

Նախադրութեանը հետեւում է բուն մեկնութիւնը՝ «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, Որդւոյ Դաւթի... Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ... այնպիսի իմն մեղադիր լինէր եւ

1 «Եղիշէի վարդապետի մատենագրութիւն», Վենետիկ, 1853

2 Տե՛ս ՄՄ, ձեռ. N1267, թ. 3ա-98բ:

© National Library of Armenia

յայնպիսի կարծեաց, զոր ունէր, մերժէ եւ ուսուցանէ, թէ ոչ կարաւտ է յոմանէ առնուլ, այլ Ինքն է աղբիւր բարեաց» (Ա 10ա–109բ, Բ 10բ–120բ): Մեկնութեան անակնկալ աւարտը խօսում է այն մասին, որ խմբագիր այս երկն ունեցել է իր չարունակութիւնը: Սակայն, դժբախտաբար, մեզ է հասել Աւետարանի առաջին ութ գլուխների մեկնութիւնը միայն:

Դիոսկորոսին յղուած ընծայականում ծանուցւում է, որ այս մեկնութիւնը չարադրուել է «վասն դիւրահասութեան ընթերցողաց»: Արտայայտութիւնը վկայում է այն մասին, որ Անանիա Սանահնեցու սոյն մեկնութիւնն ուսուցողական բնոյթի աշխատութիւն է: Եթէ Ստեփանոս Սիւնեցու համաբնոյթ երկասիրութիւնը Քառաւետարանի ընդհանուր մեկնութիւն է, ապա Անանիա Սանահնեցու այս գործը միայն մէկ Աւետարանի առաջին հանգամանալից խմբագիր մեկնութիւնն է հայ մատենագրութեան մէջ: Ստեփանոս Սիւնեցու նշուած մեկնութեան նման Անանիա Սանահնեցու այս երկն օգտագործուել է նաեւ իբրեւ դասագիրք: Ուրիշ խօսքով՝ երկը նախապէս ծրագրաւորուել, իսկ յետոյ խմբագրուել եւ չարադրուել է ոչ միայն ընդհանուրի համար, այլեւ՝ «վասն դիւրահասութեան ընթերցողաց», այսինքն՝ ուսումնագիտական հաստատութեան պահանջներին համապատասխան մակարդակով՝ հանգամանք, որ պայմանաւորում է Ոսկեբերանի, Եփրեմի մեկնութիւններից քաղուած հատուածների բնոյթը եւ ընտրութեան այն եղանակը, որով առաջնորդուել է Անանիա Սանահնեցին: Այս է պատճառը, որ, ի հակակշիռ աստուածաբանական դժուարընկալելի տեսութիւնների, մեկնութեան մէջ զետեղուած հատուածների զգալի մասը յատկանշւում է մի կողմից վարդապետական եւ մանկավարժական, միւս կողմից էլ՝ ճանաչողական ուղղուածութեամբ: Ոսկեբերանի եւ Եփրեմի համաբնոյթ երկերի հատուածների փոխագուցում-խմբագրումը[1], ինչպէս նաեւ խմբագրական ծաւալը եւ սկզբունքը բացորոշ դարձնելու նպատակով բերնք խմբագրուող հատուածների սկիզբն ու վերջը՝ համապատասխան տեղիների նշումով:

1 Հայ եւ ոչ միայն հայ մեկնաբանական գրականութեան մէջ լայնօրէն կենցաղավարած այս սկզբունքը յայտնի է «շղթայածեւ» (cateno) անուամբ (տե՛ս. Անթապեան, «Հայ մեկնաբանական գրականութեան տեսական նախահիմքերի շուրջ», «Բանբեր Մատենադարանի», 1986, N15, էջ 86): Այդ սկզբունքի առաջին կիրարկողներից մէկն Անանիա Սանահնեցին է:

2 Ձեռագրի լուսանցքներում բացակայում են խմբագրուած հատուածների ճեղինականիշ անունները:

Ա. Անտիոք, Ա 10ա–25բ, Բ 10բ–30ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի՝ Որդւոյ Դաւթի» (Ա 1)[1]: Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհել ի գալստեան Իւրում... եւ տեսս, եթէ սա եւս նմանեալ է այնմիկ, եւ նա՝ այսմիկ,- ասէ,- Նազովրեցի կոչեցի:

Բ. Ոսկեբերան, Մեկնութիւն Մատթէի[2], էջ 139–146, Ա 25բ–28ա, Բ 30ա–33ա. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ...» (Գ 1): «Յաւուրսն այնոսիկ», ոչ մինչդեռ մանուկն էր եւ ի Նազարէթ սնանէր, այլ յետ երեսուն ամի... Եւ այսպէս եւ արքայութեան եւ ապաշխարութեան էին ուրիւնակ այնպիսի կերպարանք:

Գ. Անտիոք, Ա 28ա, Բ 33ա. Եւ յայնժամ մինչդեռ ոչ մեղք լուծեալ էին, եւ ոչ անէծք բարձեալ, եւ ոչ Հոգին իջեալ, զոր եւ Քրիստոս հրաշանալով ասէր. «Զինչ ելէք տեսանել յանապատի». նա զի եւ ունէր մեծն ի ծնունդս կանանց զբնաւ խոնարհութիւն եւս եւ զգեստուն տեսակաւ յաւրինակ խոնարհութեան մեծին Կուսորդւոյն եւ վասն մեր թափելոյ Հովիւն առ ոչխաբս համարեալ: Սակս որոյ մնայր կարապետն կտրելոյ ոչխարին, որով սգատես սգեստիւն սպասէր սգեցուցանողին զաչխարհս զերծուլ ի նմանէ զբուրձն աւրինական, որ զաւետիսն անդր ի դժոխս ընկալաւ զոյս ի յարուցելոյն զգեցեալ եւ իբր զաւթոց արկեր (այսքան) (Համմտ. Ոսկեբերան, էջ 147):

Դ. Եփրեմ[3], էջ 34–38, Ա 28ա–30ա, Բ 33ա–35բ. Մարգարէութիւն առ Յովհաննէս եւ խորհուրդ մարգարէութեան առ Տէրն Յովհաննու, որ քահանայութիւն առ որդին Զաքարիայ... Յովհաննէս եցոյց յականէ Յորդանան գետոյ զՓրկիչն մեր: «Ահաւասիկ Սա է Գառն Աստուծոյ, Սա է, որ գայ բառնայ զմեղս աշխարհի» [Յովհ. Ա 29]:

Բ. Ոսկեբերան, էջ 154–163, Ա 30ա–35ա, Բ 35բ–42ա. «Իբրեւ ետես զգազում ի փարիսեցւոցն...» (Գ 7): Զիա՞րդ ասիցէ Քրիստոս, եթէ Յովհաննէս ոչ հաւատացին... Վասն որոյ ածէ զնովիմբ զհաւատին, եթէ «որոյ հեծանոցն ի ձեռին է» (Գ 12):

Գ. Անտիոք, Ա 35ա–բ, Բ 42ա–բ. Եւ զի ցորեանն եւ ցաւղոն միապէս սփռին ի միում կալի, եւ կամնասայլն հասարակաբար կոխեալ կասու զնոսա, այլ հատն ոչ ինչ վնասի ի կամնասայլիցն, այլ

1 Առանց Աւետարանագրի անուան բերուած գլխահամարներն ու տնահամարները Մատթէոսի Աւետարանինն են:

2 Տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին», Վենետիկ, 1826:

3 Տե՛ս «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», հ. Բ, Վենետիկ, 1836:

© National Library of Armenia

առաւել աւգտի... Եւ խոնարհք, որ ոչ ունին զկերպարանք աշխարհի, հանդերձ ողորմութեամբ եւ նուաստութեամբ ընդունին զԱստուած բնակեալ ինքեանս:

Է. Եփրեմ, էջ 38–39, Ա 36ա–բ, Բ 42բ–43բ. «Եւ Ինքն Յիսուս էր,– ասէ,– ամաց իբրեւ երեսուն ի ժամանակին, իբրեւ եկն Նա կնիք առնուլ ի Յովհաննէ» [Ղուկ. Գ 23]: Եւ այս վասն ամաւթոյ մարկիոնացոցն... Եւ քանզի ի մկրտելն նորա է Հոգին, վասն այսորիկ մկրտութեամբ նորա տուեալ լինէր Հոգին:

Ը. Ոսկեբերան, էջ 171–177, Ա 36բ–38բ, Բ 43բ–45բ. Վասն այնորիկ եւ Յովհաննէս յառաջագոյն ասէր, զոր պարտն էր ասել, եթէ՝ «Ջեմ արժանի լուծանել զխրաց մի կաւշկաց Նորա» [Մարկ. Ա 7]... Քանզի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտակապետս առնէ, այլ որդիս սիրելիս Աստուծոյ պատրաստէ եւ այնպէս ձգէ զմեզ յայն հանգիստ:

Թ. Եփրեմ, էջ 40–46, Ա 38բ–42ա, Բ 45բ–49բ. «Նոյն ժամայն,– ասէ,– Հոգին Սուրբ վարեաց հան զՆա յանապատ, զի փորձեսցի Նա ի սատանայէ» (Դ 1): Եւ վասն էր մինչ յերեսուն ամ անդր ոչ փորձեաց... զի տացէ մեզ աւրինակ, թէ զկնի մկրտութեան մտանեմք ի փորձանս եւ յետ փորձանացն՝ ապա եւ յարքայութիւն երկնից:

Ժ. Ոսկեբերան, էջ 182–186, Ա 42ա–44բ, Բ 49ա–51բ. «Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն փորձել ի սատանայէ» (Դ 1): Ե՞րբ: Յետ Հոգւոյն իջանելոյ... Բերեալ հին վկայութիւն ի Գրոց՝ խրատէ, զի թէպէտ եւ սովամահ լինիցիմք կամ այլ եւս պէս-պէս չարչարանաւք տանջիցիմք, սակայն ի Տեառնէ մի՛ հեռասցուք:

ԺԱ. Անտոնուն, Ա 44բ, Բ 51բ. Եւ զի առաջին մարդն մոռացաւ զպատուիրանն՝ զտուեալն յԱստուծոյ, եւ վասն այնորիկ ըմբռնեցաւ ի չարէն... որպէս Դաւիթ այն՝ զԳողիադ:

ԺԱ 1. Ոսկեբերան, էջ 186–190, Ա 44բ–46բ, Բ 51բ–52բ. Եւ զի չէր տեղեակ նա, թէ Որդի իցէ Աստուծոյ... ի գոգն Աբրահամու:

ԺԱ 2. Անտոնուն, Ա 46բ, Բ 52բ. Եւ զի նախ կերակրոցն արար սկիզբն պատերազմի... իբր զնահատակ քաջ մտցէ յառագաստն լուսոյ, որպէս Տէր ի հարսանիսն կանայ գալիլեացւոց՝ իբր յաղթող պսակեալ:

ԺԲ. Ոսկեբերան, էջ 198–201, Ա 47ա–48բ, Բ 53բ–55ա. «Իբրեւ լուաւ Յիսուս, եթէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս ետ ի կողմանս գալիլեացւոց» (Դ 12): Եւ ընդէ՞ր, ասեն, ետ խոյս: Զի եւ այնու եւս ուսուցանիցէ զմեզ... թող նախ երթիցուք ի տուն եւ ընդ ընտանիս խաւսեցուք, այլ զամենայն ինչ թողեալ՝ երթային մտադիւր զկնի, որպէս եղիչայն զհետ եղիայի:

ԺԳ. Եփրեմ, էջ 46–48, Ա 48բ–49ա, Բ 55ա–բ. Եւ զի լուան աշակերտքն Յովհաննու, մինչդեռ խաւսէր նա ընդ Տեառն մերոյ, եւ թողին զվարդապետն իւրեանց եւ գնացին զկնի Տեառն մերոյ... Տեղի ետ իմաստութիւն աշխարհիս այնմ իմաստութեան, զի Նա Ինքն է իմաստութիւն իմաստութեանց:

ԺԴ. Անտոնուն, Ա 49ա–51ա, Բ 55բ–57ա. «Եւ, տեսեալ Յիսուսի, ժողովուրդ բազում ել ի լեառն» (Ե 1): Նախ սկիզբն արար մարմնոյ բժշկութիւն, զի ի ձեռն երեւելի բժշկութիւն զսորա աչաւք տեսանէին, բացին աչք ոգւոց կուրացելոցն, հաւատայցեն եւ ոգւոցն բժշկութիւն... Եթէ ոչ մեծամեծս ինչ հաստատութիւն էին գնմանէ, վասն որոյ տանի զնոսա յանապատ տեղիս եւ յորդորականացն սկսանի այսպէս:

ԺԵ. Ոսկեբերան, էջ 210–217, Ա 51ա–53բ, Բ 57ա–59ա. «Երանի իցէ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից» (Ե 3): Եւ զինչ իցէ ասել աղքատս հոգւով, այլ՝ զխոնարհս եւ զբեկեալս սրտիւք... Քանզի արդարութիւն միշտ զամենայն իսկ զառաքինութիւնս ոգւոցն սովոր են կոչել Գիրք: Եւ աստ եւս հոգւեւոր հատուցումն դնէ. «Զի նոցա է,– ասէ,– արքայութիւն երկնից»:

ԺԶ. Անտոնուն, Ա 53բ, Բ 59ա–բ. Ի ժամանակի, իբրեւ տայր Տէր մեր երանութիւնս, ընդ աշակերտսն հայէր. «Բարձ,– ասէ,– Յիսուս զաչս առ նոսա եւ սկսաւ ասել... Վասն որոյ ոչ պարզաբար երանեաց աղքատս, այլ յաւել՝ «զհոգւոյն», որոց ոգիքն աղքատ ի չարեաց են եւ փարթամք արդարութեամբ: Եւ զի միմիայն միով առաքինութեամբ բարձրացին, յաւել եւ զմիւսն եւս:

ԺԷ. Եփրեմ, էջ 57–58, Ա 53բ–54ա, Բ 59ա–բ. «Երանի հեզոց» (Ե 5): Հեզ էր Մովսէս, քան զամենայն որդիս ազգին իւրոյ... Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ, եւ գտջիք հանգիստ անճանց ձերոց» (ԺԱ 29):

ԺԸ. Անտոնուն, Ա 54ա–55բ, Բ 59ա–61ա. Զի բարկութիւն ախտ է բնական եւ ընդոյծին, որ իբր վառի, հրդեհեալ ապականէ զամենայն բնութիւն ամբոխեալ զաւրէն մրրկի, որ խուովէ զծով... վարժ՝ աշխատութեամբ հանդերձ, եւ հաւատացեալն՝ գործաւք հանդերձ, եւ ցասումն՝ պակասութեամբ հանդերձ, եւ պատիժն՝ յանցանաւք հանդերձ:

ԺԹ. Ոսկեբերան, էջ 217–227, Ա 5բ–60ա, Բ 61ա–65բ. «Երանի իցէ ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն բան չար զձէնջ սուտ»

© National Library of Armenia

(ե 11): Կամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ ժպնտագործս կամ թէ այլ ինչ կոչիցեն... չատ է ձեզ մխիթարութիւն այն իսկ, զի վասն իմ բամբասիցիք, եւ աստ զՀայր դնէք, զի ամենայն ուրեք զզուզական հաւասարութիւն զիւր ընդ Հաւր յայտ առնիցէ:

Ի. Եփրեմ, էջ 59, Ա 60ա, Բ 65բ. Առ դպիրսն եւ փարիսեցիսն ասաց, որ կայինն եւ խնդրէին պատճառս, ասէ. «Ես ոչ եկի լուծանել զԱւրէնս կամ զՄարգարէս, այլ՝ կատարել» (ե 17) (այսքան):

ԻԱ. Անանիա, Ա 60ա–61ա, 65բ–66բ. Եւ զստուերսն Հանել ի ճշմարտութիւն, ամենայն, որ ինչ միանգամ ասրինակքն էին, կատարեցան ժամանակք ազգէ յազգ եւ բովանդակեցան առաջին յԱդամայ... տանի յարէ յառաջինսն, թէ լրումն է այս ամենայն առաջնոցն, եւ նա՝ ի սմա ծածկեալ, եւ սա՝ ի նմա նկարագրեալ, զի է նոյն եւ ի մի կատարումն ածեն զմարդն:

ԻԲ. Ոսկեբերան, էջ 237–249, Ա 61ա–65ա, Բ 66բ–71ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն, եթէ մի՛ ապանանիցես, բայց ես ասեմ ձեզ, թէ եւ մի՛ բարկանայք իսկ» (ե 21). եւ այսու աստուածեղէն իմն եւ երկնաւոր առաքինութեան հորդէ ճանապարհ ... եւ արդ, որ զարմանան հատանէ, յայտ է, թէ առաւել զոստան կոճռպիցէ, մանաւանդ, զի եւ բուսոյն իսկ սկիզբն չտայցէ լինել:

ԻԳ. Ոսկեբերան, էջ 253–262, Ա 65ա–68բ, Բ 71ա–75ա. Ոչ ամենեւին ի միջոյ բառնայ զիրան, զի չէ հնար մարդոյ բնաւին ի կարեաց ազատանալ, բայց կարճել մարթի, այլ ամենեւին առանց կարեաց լինել անհնար է... յորժամ յատենից եւ ի բանտից եւ յամենայն տառապանաց զանձն ազատիցէ:

ԻԴ. Ոսկեբերան, էջ 266–273, Ա 68բ–70բ, Բ 75ա–77ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն...» (ե 21): Յորժամ կատարեաց զառաջին պատուիրանն եւ ի գլուխ առաքինութեան եւ զգաստութեան տարաւ հասոյց... անտի երեւի առաւել մարդասիրութիւն, զի ամենայն կողմանց զքոյ աւգուտ խնդրէ:

Իե. Եփրեմ, էջ 59–65, Ա 70բ–773ա, Բ 77ա–80բ. «Ես ոչ եկի լուծանել զԱւրէնս կամ զՄարգարէս, այլ՝ կատարել» (ե 17). եւ կատարումն թերութեան լինի պիտոյ... Ոչ անիրաւեցաւ, վասն այնորիկ ոչ պարտի եւ ոչ խնդրեաց զվրէժ Իւր, վասն այսորիկ առնու զՀատուցումն եւ յաւել ետ, վասն այսորիկ պսակի:

ԻԶ. Ոսկեբերան, էջ 273–277, Ա 73ա–75ա, Բ 80բ–83ա. «Ասացաւ,– ասէ,– թէ որ արճակէ զկին իւր...» (ե 3): Ոչ նախ եւս յառաջագոյն մատչի, մինչ չեւ զառաջինսն բարւոք սրբիցէ... զի այն

յայտնի իսկ է, եւ չէ ոք կարաւտ ուսանել, թէ ոչ ի չարէն իցէ, եւ ոչ եթէ աւելի ինչ է, այլ հակառակ աւելւոյն, այլ աւելի երդումնն է:

ԻԷ. Ոսկեբերան, էջ 279, Ա 75ա, Բ 83ա. Մի եւ երդմանն ալրէնք ի հնումն վասն այնորիկ դնէին... զի հաստատուն կերակուր գալ նոցա, եւ այն իսկ փութոյ ալրինացն լինէր գործ:

ԻԸ. Անանիա, Ա 75ա, Բ 83ա. Զի որ զառաջին երանութիւնս լուիցէ եւ այնպիսի ինչ յարդարիցէ զանձն, որպէս եւ Քրիստոս պատուիրեաց, եւ ոչ մի ինչ հարկ յումեքէ ստիպիցէ երդնուլ, յորժամ համաստ եւ պարկեշտագոյն յամենայն իրս գտանիցի (այսքան):

ԻԹ. Ոսկեբերան, էջ 284–297, Ա 75ա–79ա, Բ 83ա–87բ. «Լուարուք, զի ասացաւ՝ ակն ընդ ական...» (ե 40): Տեսանես, զի ոչ վասն ական ասացաւ զառաջինսն... զի եւ տեղեաւն իսկ պարթուցանիցէ զմիտս նոցա, քանզի դեռ եւս տկարագոյնք եւ ծանրամիտք էին:

Լ. Ոսկեբերան, էջ 300–316, Ա 79ա–85բ, Բ 87բ–95ա. «Զգո՛յշ լերուք ողորմութեան ձերում...» (Զ 1): Զբռնատրագոյնն իսկ քան զամենայն ախտսն մերժէ Հանէ այսուհետեւ... յերախտեացն, զոր Հանապազ առնէ եւ ի պատուիրանացն, զոր տայ, յայտ է:

ԼԱ. Ոսկեբերան, էջ 321–329, Ա 85բ–88բ, Բ 95ա–99ա. «Յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն...» (Զ 16): Բարւոք է աստ հեծել եւ յոդւոց Հանել դառնապէս... Եւ յայտնագոյն զսոցին վնասն ի փչոցն առակէ եցոյց: Բայց սակայն եւ աստ ընդ աղաստ ակնարկեաց:

ԼԲ. Եփրեմ, էջ 65, Ա 88բ, Բ 99ա. «Եթէ լոյսն, որ ի քեզ է, այն խաւար է» (Զ 23): Այսինքն՝ եթէ որովք մեղանչես դու, զի լուսաւոր է նա... այս է, զոր ասէ. «Ուր գանձք ձեր, անդ իցեն եւ սիրտք ձեր» (Զ 21):

ԼԳ. Ոսկեբերան, էջ 334–340, Ա 88բ–91բ, Բ 99ա–101բ. «Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել...» (Զ 24): Տեսանե՞ս՝ զիարդ առ սակաւ–սակաւ ամենայն յիմեքէ մերժէ... եւ ոչ այլ ինչ նոյնպիսիք երեւեցին երբէք, այլ ամենայն ի դերեւ ելեալ գնայցէ:

ԼԴ. Ոսկեբերան, էջ 343–351, Ա 91բ–95ա, Բ 102բ–106ա. «Նայեցարո՛ւք ընդ չուշանն վայրենի...» (Զ 28): Յորժամ ասաց վասն կարեւոր կերակրոցն եւ եցոյց, եթէ ոչ վասն այնր ինչ պարտ էր հոգալ... որչափ ի մարմնաւորացս ցուցանեմք փոյթ, նոյնչափ ի հոգեւորսն՝ ծուլութիւն:

© National Library of Armenia

Լե. Ոսկեբերան, էջ 357-372, Ա 95ա-102ա, Բ 106ա-113ա. «Մի՛ դատիք, զի մի դատիցիք» (Զ 1): Եւ արդ, չիցէ պարտք սասեմ յանցաւորաց... առաւել դառն տանջանք այն են, յորժամ յարքայութենէն ոք վրիպիցի:

ԼԶ. Ոսկեբերան, էջ 379-387, Ա 102ա-105ա, Բ 113ա-116ա. «Ոչ ամենայն, որ ասէ ցիս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն...» (է 21): Եւ ընդէ՞ր արդեաք ոչ ասաց, թէ՝ որ առնիցէ զկամս Իմ... որ խթանի ընդդէմ աքացիցէ, ինքն խոցի, նոյնպէս եւ՝ որ զառաքինին նենգիցէ, ինքն պատժի:

ԼԷ. Ոսկեբերան, էջ 390-395, Ա 105ա-107բ, Բ 116ա-118բ. «Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ...» (է 28): Թէպէտ եւ տաղտկեալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն... քանզի ընդ ամենայն ծագս տիեզերաց տարածեցաւ բանն աստուածապաշտութեան:

ԼԸ. Եփրեմ, էջ 66-67, Ա 107բ-018բ, Բ 118բ-119բ. «Որ ունիցի,- ասէ,- տացի նմա...» (Ի 29): Իբրեւ զայն, զի ասէ. «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ» (ԺԱ 15, ԺԳ 9, 43, Մարկ. Դ 9, Ղուկ. Ը 8, ԺԴ 35)... մինն ոչ աճեցոյց, եւ միւսն ոչ պահեաց:

ԼՔ. Ոսկեբերան, էջ 405-408, Ա 108բ-109բ, Բ 119բ-120բ. «Իբրեւ եմուտ Նա ի կափառնաում...» (Ը 5, Ղուկ. Է 1): Բորոտն, յորժամ էջ ի լեռնէ անտի Յիսուս... մերժէ եւ ուսուցանէ, եթէ ոչ այլ ումեքէ կարաւտ առնուլ, այլ Ինքն է աղբիւր բարութեանց:

Համեմատութիւնից պարզւում է, որ Անանուն անուամբ բերուած Ա, Գ, Զ, ԺԱ, ԺԱ 2, ԺԴ, ԺԶ, ԺԸ, ԻԸ հատուածներն, ամենայն հաւանականութեամբ, Անանիա Սանահնեցու գրչին են պատկանում: Բանն այն է, որ խնդրական հատուածները բացակայում են ոչ միայն Ոսկեբերանի ու Եփրեմի խմբագրուող երկերում, այլեւ՝ հայ եւ օտար մեզ յայտնի համաքնոյթ մեկնութիւններում: Այդ հատուածների զատորոշումն ու արձանագրումն իր նպաստն է բերում Անանիա Սանահնեցու ոչ միայն հեղինակային խօսքի, այլեւ՝ նրա մատենագրական ժառանգութեան մէջ այս երկասիրութեան ըստ ամենայնի պնաեհատմանը:

Խմբագրուող հատուածների ճնշող մեծամասնութիւնը քաղուած է Յովհան Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութիւնից: Սա նշանակում է, որ Անանիա Սանահնեցին Մեկնութիւնը շարադրելիս առաջնորդուել է գլխաւորապէս Ոսկեբերանի այդ երկասիրութեամբ՝ հանգամանք, որ դրսեւորւում է ոչ միայն բառացի քաղուածներով (Ե, Ը, Ժ, ԺԲ, ԺԵ, ԺԹ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԶ, ԻԷ, ԻԹ-ԼԱ, ԼԳ-ԼԷ, ԼԹ), այլեւ՝ մասամբ բառային, մասամբ իմաստային յառաջաբերութիւններով: Աւելի յստակ ցոյց տալու համար Սանահնեցու՝ աղբիւրներից օգտուելու կամ դրանք խմբագրելու սկզբունքը՝ ներկայացնենք Ոսկեբերանի եւ Սանահնեցու նոյնանուն մեկնութիւնների համապատասխան հատուածները.

ՈՍԿԵԲԵՐԱՆ, էջ 145-146

«Եւ Յովհաննէս,- ասէ,- ունէր հանդերձ ի ստեւոյ ուղտու...» (Գ 4): Տեսանե՞ս, զի է ինչ, զոր մարգարէին յառաջագոյն ասացին, եւ է, ինչ զոր աւետարանչացն թողին: Վասն որոյ եւ Մատթէոս եւ մարգարէութիւնս դնէ եւ զիւրսն յաւելու: Քանզի եւ զպատմութիւն հանդերձից արդարոյն չհամարէր գործ դատարկութեան ասել: Զի զարմանալի իսկ եւ սքանչելի էր ի մարդկեղէն մարմնի այնպիսի ժուժկալութիւն տեսանել, որ մանաւանդ եւ զհրեայսն իսկ ճգեալ ածէր՝ ինքեան ցուցանել զմեծն Եղիա, եւ յերանելւոյն յիշատակ առաքէր զմիտս նոցա՝ իրաւքն, որ յայնժամ ի նմա եբեւէին, մանաւանդ՝ զի եւս մեծամեծ զարմանալիս: Զի նա ի քաղաքէ եւ ի տունս մտանէր եւ ուտէր, եւ սա ամենեւին անդրս տին ի խանճարրոցն յանապատ տեղիս բնակէր: Քանզի պարտ եւ պատշաճ իսկ էր կարապետին այնորիկ, որ զհինն ամենայն լուծանելոց էր զաշխատութիւնս, զանէծս, զտրտմութիւնսն, զքրտունսն, աւրինակ ինչ զայսոսիկ, եւ զնորոգելոցն զհանդերձս, զի ոչ ինչ ընդ հինին կարասցի ընդ նորոյն:

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Ա 28ա-բ, Բ 32բ-33ա

Զի մարգարէքն է, ինչ զոր ասացին, եւ էր, ինչ զոր աւետարանչացն թողին. զգեստին աւրինակն, զոր Մատթէոս գրեաց առյիշատակ ածել զհրեայսն մեծին Եղիայի եւ եւս մեծագոյն քան զնա, զի նա ի քաղաքս բնակէր եւ կերակուր ճաշակէր, եւ սա ի խանճարրոցն յանապատի բնակէր՝ ոչինչ ճաշակելով, զի պարտ էր կարապետին, յոր զհինն ամենայն լուծանելոյ էր զաշխատութիւն, զանէծս, զքրտունսն աւրինակ ինչ այսպիսի յանձին ցուցանել, զի ո՛չ զերկիր գործէր եւ ո՛չ քրտամբք երեսաց ուտէր, այլ դուզնաքեայ սեղանով եւ հանդերձիւ վարէր: Զի ո՛չ տան եւ ո՛չ սեղանոյ կարաւտէր, այլ հրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր, որպէս Ադամ մինչ չեւ էր յանցեալ, զի ապաշխարութեան եւ արքայութեան էին աւրինակ այնպիսի կեանքս...

© National Library of Armenia

պխսի պարգեւեաց յանձին ցուցանել եւ վերագոյն գտանել, քան զայնր ամենայնի դատապարտութիւն: Քանզի ո՛չ երկիր գործէր եւ ո՛չ ակաւս հատորէր եւ ո՛չ քրտամբք երեսաց ուտէր հաց: Այնպէս վարկպարազի եւ դիւրին իմն կազմէր իւր սեղան եւ առաւել քան զսեղանն՝ դիւրագոյն հանդերձն եւ եւս առաւելագոյն՝ առանց պաճուճանաց զբնակութիւնն: Քանզի ո՛չ յարկի եւ ո՛չ մահճաց եւ ո՛չ սեղանոյ եւ ո՛չ այլ իմիք այնպիսեաց կարաւտանայր, այլ զհրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր: Վասն այնորիկ եւ ստեւոյ ուղտու ունէր զհանդերձն, զի եւ այնպիսի կերպարանաւք խրատեսցէ զմեզ՝ թողուլ զիրս մարդկաւրէնս եւ մի ինչ ամենեւին հաղորդութիւն ունել ընդ երկրի, այլ անդրէն յառաջին ազնուականութիւնն ընթանալ, յորում էր Ադամ, մինչ չեւ էր լեալ կարաւտ հանդերձից եւ վերարկուաց:

ՈՍԿԵԲԵՐԱՆ, ԷԶ 199-200

«Յայնմ հետէ,- ասէ,- սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»»: Յայնմ հետէ՝ յորմէ՞. յորմէ զՅովհաննն արկին ի բանտ: Եւ ընդէ՞ր ի սկզբանէ ոչ իսկ քարոզէր կամ զի՞ բնաւ կարաւտանայր Յովհաննու, ուր գործոցն վկայութիւն քարոզէր զնմանէ: Այլ զի այսու եւս զպատիւն Նորա ուսանիցիս, զի զոր աւրինակ՝ Հայր, նոյնպէս եւ Նա ունէր մարգարէս, զոր եւ Զաքարիա եւ հրեշտակն գուշակէին: «Եւ դու,- ասէ,- մանո՛ւկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր»: Եւ զի մի՛ պատճառս ինչ տայցէ անամաւթ ազգին հրէից, զոր եւ Ինքն իսկ ասէր, եթէ՝ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ. ուտէ եւ ըմպէ, եւ ասեն՝ ահա՛ այր կերող եւ արբեցող եւ բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց, եւ արդարեցաւ իմաստութիւն յորդւոց իւրոց»: Եւ այլազգ եւս՝ զի հարկ էր այլում ճառել նախ զնմանէ, եւ ապա Իւր՝ վասն Իւր: Եթէ յետ այնչափ վկայութեանց եւ ցուցանելոյ զնա ի մատնէ Յովհաննու ասէին, եթէ՝ «Դու վասն անձին Քո վկայես, եւ վկայութիւն Քո չէ ճշմարիտ», զի եթէ չէր ի մէջ անցեալ Յովհաննու եւ զայն ամենայն վկայեալ վասն Նորա, որչափ եւս ամպարշտագոյնս խաւսէին: Վասն այնորիկ իսկ ոչ քարոզեաց յառաջ քան զնա եւ ոչ նշանս ինչ արար, մինչեւ մատնեցաւ նա ի բանտն, զի մի՛ եւ այնու եւս բաժանիցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչինչ արար նշանս, զի առ Յիսուս պահիցին ամենայն արուեստք նշանացն: Թէ այն-

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Ա 47բ-48ա, Բ 52ա-բ

«Յայնմ հետէ սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»»: Յայսմ հետէ, յորմէ արկին զՅովհաննէս ի բանդ: Եւ ընդէ՞ր ոչ ի սկզբանն Ինքն քարոզէր, այլ կարաւտէր Յովհաննու վկայութեանն, զի վկայութիւն նշանչանացն բացայայտ քարոզէր զնմանէ: Այլ զի այսու եւս պատիւ Նորա յայտ լիցի. զի որպէս Հայր, սոյնպէս եւ սա ունուցանէր զմարգարէսն, զոր եւ Զաքարիա եւ հրեշտակն գուշակէին, թէ՝ «Դու, մանո՛ւկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր», զի մի՛ պատճառս ինչ տացէ անամաւթ ազգին հրէից, զոր եւ Ինքն իսկ ասէր, եթէ՝ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասէին՝ ահա՛ կերող եւ արբեցող»: Եւ այն եւս զի հարկ էր այլում նախ ճառել զնմանէն, եւ ապա Իւր՝ վասն Իւր, զի եթէ յետ այնչափ վկայութիւն Յովհաննու եւ մատամբն ցուցանելոյ ասէին, թէ՝ «Դու վկայես անձին Քո, զվկայութիւն Քո ոչ է ճշմարիտ», եթէ չէր այնչափ վկայեալ Յովհաննու, որչափ եւս ամբարշտագոյն խաւսէին: Վասն այնորիկ ոչ քարոզեաց զյառաջ քան զնա եւ ոչ՝ նշանաբար, մինչեւ մատնեցաւ նա ի բանդ, զի մի՛ այնու բաժանեսցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ արար նշանս, զի առ Յիսուս պահեսցին արուեստք նշանացն, քանզի զՅովհաննէս կարծէին, թէ Քրիստոս իցէ:

© National Library of Armenia

պիսի յայտնի իրք մատակարարեցան եւ յառաջ քան զմտանելն Յովհաննու ի բանտն եւ յետ մտանելոյն, սակայն այնպէս նախանձ ընդդէմ իմն թուէին նմա աշակերտքն Յովհաննու ի միտս բազմաց, քանզի զՅովհաննու կարծէին, թէ Քրիստոս իցէ:

Բնագրի եւ խմբագրուող համապատասխան հատուածների բաղդատումից պարզւում է, որ Անանիա Սանահնեցին (առանձին պարբերութիւնների բացթողումով) համառօտելով եւ համառօտուած հատուածները մէկմէկու կցելով է խմբագրում մեկնութիւնը: Ոսկեբերանի երկը խմբագրելիս Սանահնեցին ձգտում է որոշ բառեր եւ արտայայտութիւններ փոխարինել ուրիշներով՝ խուսափելով մեկնութեան նոյնական հատուածների բառացի քաղումից: Այսպէս օրինակ՝

ՈՍԿԵԲԵՐԱՆ	ՍԱՆԱՀՆԵՑԻ
Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն... (էջ 163):	Վասն որոյ հարկանէ սպառնալեաւքն (Ա 35ա, Բ 42ա):
...զզուգական հաւասարութիւն զիւր ընդ Հաւր յայտ առնիցէ (էջ 227):	...զի այսու զիւր զուգականութիւն ընդ Հաւր ցուցցէ (Ա 60ա, Բ 65բ):
...բուսոյն իսկ սկիզբն չտայցէ լինել (էջ 249):	...բուսոյն սկիզբն ոչ տայ առնուլ (Ա 65ա, Բ 71ա):
Մի եւ երդմանն ալրէնք ի հնումն վասն այնորիկ դնէին... (էջ 279):	Իսկ աւրէնքն ի հնումն հրամայէին երդնուլ (Ա 75ա, Բ 83ա):
...տարածեցաւ բանն աստուածպաշտութեան (էջ 395):	...տարածեցաւ բանն աստուածպաշտութեան, եւ որք ընկալան զնա կամաւորութեամբ, յաւելլի զնոսա եւ զշնորհս Իւր (Ա 107ա, Բ 118բ):

Բացառելով մասնակի տարբերութիւններն ու ընդհանրութիւնները՝ կարելի է արձանագրել, որ Սանահնեցին կատարում է մեկնութեան այսպէս կոչուած իմաստային խմբագրումը՝ զանց առնելով ոչ էական դատողութիւններ պարունակող երկրորդական նախադասութիւններ եւ առանձին պարբերութիւններ:

Ինչպէս տեսանք, Սանահնեցու՝ Մատթէոսի սոյն մեկնութիւնը կազմուել է ոչ միայն համաբնոյթ աշխատութիւնների խմբագրաբար բանաքաղուած առանձին, այլեւ՝ լիովին ինքնուրոյն հատուածներից: Վերջիններս ցոյց են տալիս, որ Անանիա վարդապետը սոսկ խմբագրող չէ, այլ նաեւ՝ ուրոյն մտածող: Պարզ է՝ հէնց այդ ինքնուրոյն մասերում են դրսեւորւում հեղինակի տեսական կարողութիւնն ու գիտական պատրաստութիւնը:

Շեշտելով Աստուծոյ մշտնջենականութեան եւ ամենազօրութեան գաղափարը (հետեւելով Որոգինէսի, Իրինէոսի, Գրիգոր Աստուածաբանի, Յովհան Ոսկեբերանի եւ այլոց երկերում բազմիցս արծարծուած՝ մարդու աստուածանմանութեան գաղափարին, որն իր ակունքներով կապւում է Աստուածաշնչին եւ նորպլատոնեան ուսմունքին[1])՝ Սանահնեցին ընդգծում է աստուածանմանութեան գաղափարի կարեւորութիւնն անհատի հոգեւոր բարեփոխման եւ կատարելագործման ճանապարհին: Մարդու այսօրինակ աստուածացումը, որն իր դրսեւորումը գտաւ առաւելապէս Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեամբ յատկորոշուող ժամանակի գրականութեան մէջ, արդիւնք էր մի կողմից Ժ-ԺԱ դդ. քաղաքական եւ տնտեսական նպաստաւոր պայմանների ծնունդ հոգեւոր զարթօնքի, միւս կողմից՝ աւանդական այդ գաղափարի նորովի ընկալման: Այդ գաղափարն է ընկած Սանահնեցու հետեւեալ տողերի հիմքում. «Արդ, զխորհուրդն, որ Ադամայ յառաջին Ադամ նկարագրէր Աստուած,- գրում է հեղինակը,- յասել մարգարէին, թէ՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր» [Ծնունդ. Ա 27], եւ **պատկեր Աստուծոյ տուած** է՝ զբոլոր ինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատիպին ճշգրտաքատակ նմանութիւն, զի թէպէտ եւ չարնախանձ հակառակութիւն սկզբնաչար աւձին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեամբ տեսակ եւ զանապականութեամբ պատկերն զինէր մարթ եղծանել գրոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարագրեցաւ: Զի թէպէտ եւ ներեաց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ աւձէն, եւ ապա ընկալցի ըստ արժանին զհատուցումն դատապարտութեան, եւ թէպէտ ի հող դարձաւ մարդ Ադամ առաջին, սակայն խմոր

---

[1] Տե՛ս Հռովմ. Ը 29, Ա Կորնթ. ԺԱ 7, ԺԵ 49, Բ Կորնթ. Գ 18, Բ Պետր. Ա 4, Նաեւ՝: С. С. Аверинцев, "Поэтика ранневизантийской литературы", Москва, 1977, с. 78, 79; В. Живов, ""Мистагогия" Максима Исповедника и развитие византийской теории образа", "Художественный язык средновековия" (сбор. статей), Москва, 1982, с. 115. М. Старокадомский, "Неоплатонизм и христианство", "Богословские труды", сб. 12, Москва, 1974, с. 214:

© National Library of Armenia

անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, յապաղանաց
ընդ երկար ժամանակս փոխադրեսցէ զանգուածն յիւր նմանութիւն,
զի նորոգումն կենաց չրջեսցի» (Ա 6բ, Բ 6բ–7ա):

Մարդու մէջ անթեղուած աստուածային նախասկզբի մասին
Անանիա Սանահնեցու պաշտպանած միտքը յայտնանշում է
աստուածանմանութեան գաղափարի նկատմամբ հեղինակի անթաքոյց
համակրանքը, որն այստեղ աչքի է ընկնում չատագովական
ընդգծուած տրամադրութեամբ: Այն իր դրական (կատաֆատիկ)
միտումով ենթադրում է աստուածճանաչման մասնակի հնարաւորու-
թիւն: Վերջինս, որ Հայ եւ ոչ միայն Հայ Եկեղեցու մարդաբանական
համակարգի առանցքն է կազմում, այս պարագային Անանիա
Սանահնեցու մարդասիրական աշխարհայեացքի իմաստասիրական
բարոյական յենակէտն է: Հեղինակը խորապէս հաւատում է մարդու
բարձր կոչմանը: Թէպէտ բազում են մարդկային մեղքերը, այսու-
ամենայնիւ, իր մէջ կրելով «անապականութեան խմորը», նախա-
սկզբնական մի մղումով նա նմանւում է Աստծուն[1]:

* * *

Անանիա Սանահնեցու՝ Մատենադարանի մեկնութիւնը
հրատարակւում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի N 2886
ձեռագրի[2]: Ինչպէս ժամանակին իրաւացիօրէն նկատել է Ց. Ս.
Անասեանը, «այս օրինակը, որ ԺԲ–ԺԳ դարերի գրչութեամբ է, չատ է
եղծուած եւ չատ մասերում անընթեռնելի դարձած: Նոյն Մատենա-
դարանի N 2859 ձեռագիրը, որ երկրորդ ծանօթ օրինակն է՝ ԺԹ դարի
գրչութեամբ, յիշեալ N 2686 եղծուած օրինակից է արտագրուած եւ
եղծուած մասերում նոյնիսկ տեղ-տեղ փոքր այլայլումների ենթար-
կուած»[3]: Այս պատճառով N 2859 ձեռագիրը զանց է առնուած:

Հրատարակուող բնագրի եղծուած չատ հատուածները
վերականգնել ենք ըստ ս. Ցովհան Ոսկեբերանի եւ ս. Եփրեմ Ասորու
երկերի համապատասխան հատուածներում առկայ ընթերցումների:

Ցակոբ Քեոսէեան

---

1 Արեւելաքրիստոնէական աստուածպաշտութեան այս կարեւորագոյն պաճի մասին հանգամանալից տե՛ս И. В. Попов, "Идея обожения в Древне-восточной церкви", Москва, 1909:

2 Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա, Երեւան, 1965, էջ 855:

3 Ց. Ս. Անասեան, «Հայկական մատենագրութիւն», հ. Ա, Երեւան, 1959, էջ 777



[Ա]ՆԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՒՐ ԴԻՈՍԿՈՐՈՍԻ, ԶՈՐ ՑԵՏՈՑ ԻՄ ԱՂԱՉԵԱԼ ԶԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՐ[ԴԱՊԵ]ՏՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԸՍՏ ՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ] ՀԱՅ ԱԶԳԻՆ, ԵՒ ՑԱՂԱԳՍ ՍԻՐՈՑՆ, ԶՈՐ ԷՐ ԱՌ ԻՄ ԱՆՊԻՏԱՆՈՒԹԻԻՆ, [Բ]ԱԶՈՒՄ ԲԱՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻԻՆ ԿՐԵԱՑ ՑԱՂԱԳՍ ԱՑՍՐ ՏԱՌԻՍ

[Ընկալա[յ] զհրաման տեառն իմոյ հաւր Դիոսկորոսի եւ հոգեւիր վարդապետի Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի, զոր յոյժ ըղձիւ եւ սիրական բաղձանաւք հայցեալ պահանջեցեր ի մէնջ՝ վասն բացայայտութեան տերունեան բանից կենսաբեր Աւետարանին՝ համառատաբար չարագրել զսրբոց վարդապետացն վերայճառութիւն, որք տեսութեամբ Հոգւոյն բացափայլեցին ի մէջ զատալոյս գիտութեան եւ զծածկեալ խորհուրդ Հոգւոյն, որ ի բազմաց զանխլաբար թաքչիւր:

© National Library of Armenia

Զի Թէպէտ եւ պատմող բանին Աստուծոյ Յովհան եւ [...][1] տրին, վարդապետն ասորւոց [Ե]փրեմ լուսաւորագոյնս բացայայտեցին մեզ զիմաստս Աւետարանին, այլ ի յորդառատ բանիցն յաճախութենէ եւ ի բազմադուռն տեսութեանց[ն] բազմաց միտք Թարթափին՝ ոչ բերելով զբոլորից իմաստութեանն տեսութիւն, որ է ուր կասեցեալ ըստ մաքուր տեսութեան ձեր, հակիրճ[2] ուսումնասիրաց, վերահասու լինել տերուն[ական բան]իցն: Եւ յայսոսիկ ոչ մարդկեղէն մտաց զտ[...][3] չարաչարժեալ ձեր: Այլ յազդմանէ Հոգւոյն Ս[րբոյ], զոր ունիք անչեղաբար առ Աստուած, ըստ Տեառն բանին. «Որ սիրէ զիս, զբանս Իմ պահեսցէ, եւ Հայր Իմ սիրեսցէ [զնա]» [Յովհ. ԺԴ 23]: Եւ յայսոսիկ յաւժարեալ ձեր եռանդնայորդոր փութով ստիպեցիք զիս ոչ մի անգամ եւ երկիցս, այղ բազում Թախանձանաւք հարկեցի ձեռնարկեալ ի գործ վեհագոյն, քան զկա[ր] մեր՝ նաւարկել յանդունդս խորոց աստուածային իմաստից: Այղ իմ ապաստան եղեալ ի զաւրութիւն Աստուծոյ, որ ոչ միայն աւետարանչաց, այղեւ արտաքնոցն բացայայտէ գծա[ծ]կեալ խորհուրդ կամաց Իւրոց, յապագայսն՝ վասն աւգտի բազմաց. հաւատամ, Թէ եւ Ձերովք աղաւԹիւք տացէ ինձ կարողութիւն՝ սկսանել եւ կատարել զհայցուածս Ձեր առ ի յաւգուտ բազմաց: Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նուաստ՝ հոգւով, «այղ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութեան կատարի» [Բ Կորնթ. ԺԲ 9]: Եւ արդ, պարտ եմ [այլ*] արժանապէս խորհել եւ ընդ միտ ածել զտուչութիւն կենսաբեր Աւետարանին, որ սկիզբն առ խաւսելոյ ի Տեառնէ եւ ի ձեռն ականատես մաքրեցելոցն ի մեզ հաստատեցաւ զաւրութեամբ Հոգւոյն: ԵԹէ ոչ [...][4] [բաշխա]ղանաւք ի վախճանի Աստա[ր]տայ[...][5] յամանակիս պարգեւեցաւ մեզ աւետիս կենաց, այղ անսկզբնաբար ընդ [մեզ*] բանին ծածկեալ խորհուրդս են այն յաւիտենա[կան*] [...][6] ըստ խորհրդ[...][7] աւարտս մեծատես տառիդ դորին գրաւղի [...][8] մին յանապատաւորս եւ քան զամե-

1 Բազմակէտով նշուածները անընթեռնելի են: Այսուհետեւ զանց ենք առնում «անընթեռնելի» բառը. փոխարէնը՝ 2-3 տառ:

2 օգտագործումից մէկ տող մաշուած, պատռուած

3 4-5 տառ

4 1-2 բառ

5 մի քանի տառ

6 3-4 բառ

7 4-5 բառ

8 1-2 բառ

նեսեան բազմամեղս [...][1] սղութիւն գծկոյս այսոցիկ զմակերեւութիւնս, զոր նիւԹ [...][2] զուգածազգեստիցն: Վերբերական զխորհրդոց արտից [...][3] գոհութիւնս զտերունեան փրկագործութիւնս բնաւից եւ բա[ն]որից*] եռագատակ որոնաջան, խոհեմաբար եւ խորխուզողութեամբ, որ [...][4] հա[յր]ապետաց բանն ի բարձանց: Ի բլուրս մեր մասին բանականաց տտ[...][5] անեղուելեաք(*) դեգերիւր սուտասահիցս, ստերիւրելոցս ի կեն[...][6] եւ գաւառէն: Եւ սովագին պարտասելոցս ի ճարակէ կենացն դեղմանն: [Եւ] սատ ասեմ զամենաչացն լուսալրութիւնն, որ ի սուրբ սրբարանէ, եւ ի սրոբէաբնակա[ւ]Թեւանէ, քառասերից, աննայեաց աԹոռոցն, եւ ի յար խորհրդակցութենէ առ մերս կարկառակն յազնահոծեալ եւ անհլու, ապերասան եւ բազմադիմի, դիւախաբ բախմամբ ի բարձրաբերձ բլուրս, ի սորս եւ անտառախիտս, անձանձրանալի ձա[յ]նարկութեամբ: Եւ այն, Թերեւս ի մեզ եւ զմեզ զգենլով, հովիւն զոչխարս մոլորեալ, յանվայրն լերինս, ուր ոչ առնէր այցելութիւն Տէր: Այլ մեք՝ մարդք հողազունք եւ ի գուբս գլոր կացեալ, զորս յանեզրական բարեաց Բարերարին, տառադրոշմ գծիւք եւ ի քարտի զանքանակ մեծութիւնն վերբերեսցուք: Առ որ տեսութիւն մեծ տեսանաւղին տատանիւր,- ասէ,- մարդ է, բայց ո ծանիցէ զնա, որում Թէ նոյն իսկ վերնակերպեալ յաւէտ յարժանն կոյս կեցեալ միաւորութեամբ: Եւ այնքան յինքեան, իբր ի տախտակսն նկարելով եւ զիւդբերեալ բբաց մտացն եւ սուրբ սեննակ եւ առագաստուն յաւրինեալ, զանխուլ զինքն ի բնա[ւ]ին բարեպաշտութենէն կարծելով եւ ի վերա[յ] ինքեան գահոյից ընկողմանեալ անմահին մահիճս պատշաճելով: Եւ անդէն, անշուշտ, զշաղապատութիւնն գրկախառնեալ գտանելով զնոյն եւ անքակ քատակեալ առ աստուածաբուռն այր գիշերամարտ գաւտեկռութեամբ: Ոչ ասեմ, Թէ բերցէ յանըմբռնելոցն բան ինչ պատմողական, որոյ անունն ի խնդրոյ քաղցրապատում կամաց Կենարարին պարտաշնո[ր]հ իւր, ասէ, նա է սքանչացման արժանի: Զայս անաս եւ անպատումն, որ պատմագրեցին մեզ գետքս յառաջագա[յ]եալք, քառադէմ յեդեմական բղխեալ դրախտէ, յաչամէտ դրախտէ կամ ի ծովահայեաց գիտութենէ գերիմաստն Հոգւոյն, որ աւետաբեր այսր բանի առագմամբ զուարԹա-

1 1 բառ

2 1 բառ

3 1 բառ

4 մի քանի բառ

5 մի քանի տառ

6 1-2 բառ

© National Library of Armenia

ցուցին զանձամուտս մեր խորովակ լուսաւորեալ: Լսելով, թէ անմարմինն Աստուած մարմնակից մեզ ելով գրեն, թէ Գիրք լինելոյ է այս Որդւոյ Աստուծոյ եւ նոյն Որդւոյ մարդոյ Աբրահամու: Զայսքան եւ զայսպիսի լուր լսելով մեր ի վեր քան զպատաքաքսեցեալս ի ծարա[ւ]1 յանհաւատութենէն, ոտոզանիմք ի քաւութիւ վիճանաց ցրուելոցս[...]β անցս սրսկելով յիմանալի գիտութիւն՝ գրովս զմիզ զովացուցանելով: Ցորս եւ ամենայն իսկ ցուցեալ ի սմանէ մերն կենաց: Գի[...]β առկայումնն գաս [...]β ենաբերն բարի. զի սորին խրատական առ այժմ եմք մեք, որ կերպարան Աստուծոյ [...]β:

Գերակիր նուէր եղեալ Աստուծոյ ազն եւ ժողովուրդ. սեպուհ ըստ աստուածաբան [...]β ովք ի ստորնոցս, այլ ի վերուստն եկելոյ զամենայն ինչ ուսեալք [...]γ [յարու]թիւնն Աստուծոյ իմացեալք ծանեալք, որք ի նորոգութեան կեանս չրջեալք [...]βք եւ անդ [ամենայնի՞] դաստիարակեալ դաւանիմք. դարան եւ դաստակի [...]β խորան խաղաղական զանձինս պատրաստելով: Մեզ եւ այժ հրա[...]10ուցեալ է ի բազմադիմի ըղձմանց, դիւականաց [դ]իրաւղուածոց, ք[արա]կերտից եւ ի փայտից փտելոյ, անփառունակից նկուն կորագործաց [կամ]11 յամենից արեամբ չնչաւորացն պղծեալս: Եւ զննմամբ չորքոտանեաց պաճարեաց եւ գազանաց սպանմամբք, եւ ի նոյն իսկ զատիմք, յորոշող խորհրդոց գունակ, որ քան յերկին ի վեր եւ որ յերկիր խոնարհ եւ որ քան զչուրս ստորեւ երկրի: Այլ այսմ որպէս զիարդ եւ է, պահեմք զառ ի Ցիսուսն նա[խա]ձեալի պատկեր պետականին, զի առաւել երեւելագոյն գեղեցկագոյն լեալ կազմեսցի: Ցամենայնի անցեալ կամք համբերութեամբ, զի վարժարանս այս, նոյն եւ մարզարան բժշկակերտս հոգեաց՝ կարգեալ ի պետէն բժշկաց. ոչ ըստ Ակղեպիադա[յ] եւ

1 ձեռագրում՝ ծարաւր
2 1-2 տառ
3 1-2 տառ
4 1-2 տառ
5 1 տող
6 1-2 բառ
7 1-2 բառ
8 1-2 բառ
9 1 բառ
10 3-4 տառ
11 Վերջին երեք անկիւնագծերինը՝ ըստ ձեռագրի համար պահպանակ ծառայող 1բ թերթի բնագրի, որից մոյնութեամբ ընդօրինակուել է 3բ-ն:

Գալիանոսի անարու որականաւք իմն եւ յամրուսումն յարմատոց սկարագունից, աւժանդակեալ ընդ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն, ցուցաւ ցամաքումն արհեստիցն: Այլ զի սա ոչ ասրրաչխարական մասն գոլով նուաստ եւ ոչ ի դեգերումն դեմետրական հնարիլ հնացելոցն վիրաց խորհել խոխոտումն խոտովք զբուժականն մերձեցուցանել զդեղն աղետակցութեամբ: Այլ սա, զի ունի ոչ տեղի, այլ պատուանդանի զբարձունս արփի անբաւս, եւ որ զերկիրս զայս չուրջ փակեալ ունի խոնաւ գրկաւք, եւ զայնով՝ երկրի կառք եւ բարձիչք, եւ յերկրի ունելով զնիստ: Այլ զի այս իսկ ի սոյն ոչ առգրեցի յիմաստս տեսականից: Զի ի հաստեալ եւ ոչ փաստակոց ուժգնութիւն ինչ ծախեցաւ, եւ ոչ առկայելն կացուրդս կոչնականաց կամ համարատուաց պահանջումն կարգելոյն թիւ սահմանելոցն չնորհել, այլ բան աւետական, եւ այս տիեզերական, ոչ եզակի ինչ, որ յատկատես ճկութեաց եւ մատին. միոյ եւ անկեան տան տալոյ զբժշկութիւն, այլ բանս բոլորից բերէ զդեղ փրկութեան, եւ այն զի զուշ մտառուադիր հաւանական հաւատով յայս բժշկարան կարկառեսցուք, որոց եւ նախքան առ որս յանդամս մերձաւորել, կանխէ, բերէ զբժշկութիւն, զի բան է ի բանին Աստուծոյ, եւ ի բանի բերէ զբնաւ բարիս ի բարձանց ուղերձեալ գեղեցիկ Տէր: Սակաւ գործի չնչաւոր զմարդն գործեաց ըստ իւրում կերպարանին: Քանզի եւ Ինքն գործիւ Հաւր ամենայարմարական նո[...]γ գաւորն սուրբ իմաստութիւն գերաշխարհիկ երկնաւոր բան: Արդ, որ մեզ զի [...]βանէ ներգործական զտնաւրինութիւնս իմաստուք, կամի զաչս արձակել զկուրաց եւ զականջս բանալ խլից եւ զբիծոտս ոտամբ, զմոլորեալս յարդարութիւն առաջնորդել, զԱստուած մարդկան անզգամից ցուցանել, դադարեցուցանել [զանզ]գամութիւն, յաղթել մահու, զորդիս անհաւանս հաշտեցուցանել ընդ Հաւր [...]β գործիս այսմ գրէր եւ բժիշկ, ոդորմի, խրատէ, յորդորէ, մի [...]γնէ եղ[...]βցան, պահէ [...]β մեզ ուսմանն առաւելութենէ, զարքայութիւն երկնից չնորհէ [...]β,

1 1-2 տառ
2 1-2 տառ
3 1 բառ
4 2-3 տառ
5 1-2 տառ
6 1 բառ
7 2-3 բառ

© National Library of Armenia

զոր ապրիմք: Քանզի զաւուրքիւն ի վերա[յ] մարդկան [...]1 ճշմարտութիւն զաւրէն մեղուի, զնա ին [...]2:

Մովահայեացն [...]3 ումբս ի միասին հաւաք[...]4 ասացուք սուտ ինչ պատճառական բազմաց դրուատելեաց եւ ատենական[ա]ց եւ որք յաթենացւոցն վարժարանէ փաստական [...]5 իւրտաւք՝ լինէին [...]6 [լ]եալք արժան անբանից գովասանոց [...]7:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻԻՆ ՄԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

[...]8ցն յիմաստասիրաց Փլոլոն վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսութեան ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ յայլոց հնագունից հոգելիր վարդապետաց առեալ: Ոչ սկսանել, ասեն, Աստուծոյ զաչխարհ յառաջ առ աչխարհիս արարչութեան, այլ միշտ առնել զամենագեղեցիկ զաչխարհս զայն: Քանզի ոչ արժանին ասացին [լին]ել երբեք անգործ զաստուածութիւնն, քանզի դատարկութեան եւ անգործութեան է այնպիսին: Այլ անակիզբն ասացին զԱստուած զամենայն ինչ առնել Արարիչն միշտ զաս իմանալով զարդարեր: Քանզի Աստուած ոչ յառաջ իմանալ սկսաւ ինչ, այլ առնել, եւ ոչ երբեք յորժամ Աստուած ոչ առնէր տեսակաց սկզբնութեամբ նմին եղ[ել]ոց: Զի կամք Աստուծոյ ոչ յետոյ դէպ լինին խորհել, զի միշտ ընդ Նմա են կամքն, զի բնական շարժմունքն ոչ երբեք պակասեն. եղիցի ապա իմանալովն միշտ առնել: Իսկ զգալեացս սկիզբն լինելոյ տուեալ, զի զգալի աչխարհիս լինելութիւն առ իմանալի աչխարհն ցոյց լինել ասացին, զի հարկ է աչխարհիս այսմիկ կերպարան ուրուք գոլ, զի Արարչին զայս ցոյց ասացեալ զզգալիս իմանալեացն, որով յայտ է, եթէ ամենայն ինչ անակզբնաբար նկատեալ են ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Որպէս Դաւիթ ասէ,

---

1 1–2 բառ

2 5 տող

3 1 բառ

4 1–2 տառ

5 վերջին պարբերութիւնը («Մովահայեաց... անբանից գովասանոց»)՝ լուսանցքում, «Մովահայեացն... սուտ ինչ» հատուածը՝ բերուած Ip-ի լուսանցքից

6 1 բառ

7 3–4 տառ

8 3–4 տառ

թէ՝ «Զանկերպարանս իմ տեսին աչք Քո»: Եւ գիրս կենաց դպրութեան գրեալ են. «Եւ ի տուէ Ստեղծչիդ յայտնի են, մինչ ոչ ոք էր ի նոսա» [Սաղմ. ՃԼՀ 16–17]: Ապա ուրեմն, ամենայն ինչ անակզբնաբար յայտնի են տպաւք եւ կարգուածովք իւրեանց ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Եւս առաւելապէս՝ խորհուրդ տնաւրէնութեան Բանին: Որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Ընտրեաց զմեզ Նովաւ յառաջ, քան զլինել աչխարհի» [Եփես. Ա 4]: Վասն որոյ անդրանիկ ասէ գոլ զնա ամենայն աչխարհի եւ զմեզ ընդ Նմա անդրանիկս անուանէ՝ դասեալ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս: Զի թէպէտ եւ ներգործութեամբ ի վախճան ժամանակիս եհաս մեզ վիճակ ընտրութեան, այլ զաւրութեամբ եւ իմաստութեամբն Աստուծոյ՝ յառաջ քան զամենայն հաստեալք ի կամս Աստուծոյ: Եւ զայս մեզ գեղեցկապէս բացայայտէ տէր Եփրեմ ի հաւատոց գիրսն զայն բանն, թէ՝ «Պատրաստեալ է ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աչխարհի»: Զամին եկեղեցւոյ ասաց, [զի] Հանդերձեալ էր յառաջ քան զաչխարհս, զոյն ասէ արքայութիւնն եւ երուսաղէմ Վերին ազատ մայր մեր եկեղեցի սուրբ, եւ ի նմա կատարի կանխութիւն, զոր գուշակեաց Սողովմովն, եւ յայտնեաց առաքեալ, եւ կնքեաց Տէր մեր՝ իբր զգիտակ: Վասն որոյ ամենայն ինչ, որ եղեւ եւ որ լինելոց է, այն ինչ է, որ էր առ Նմա ի կանուխ գիտութեան Իւրում յաւիտենից: Վասն որոյ չէք ժամանակ, եթէ ոչ ամենայն ինչ էր Նմա ի գիտութիւն, բայց ոչ եթէ անճամբ եւ տպաւք եւ կարծովք, այլ՝ գիտութեամբ: Եւ ոչ եթէ երբեմն բնից խոհումն վասն լինելոյ աչխարհի, զի խոհուն նոցա յաւիտենից առանց սկզբան էր: Իսկ կարգուած նոցա երբեմն յերեւել անճանց իւրեանց էր: Ապա ուրեմն, արարածք ի բնէ եւ յաւիտենից էին ի գիտութեան Նորա, մինչ չեւ էին: Եւ այսպէս, զի են իբրու չեն Նմա, մինչ է Նա առ այն գիտութեան, որ հաստէ զամենայն յոչնչէ եւ լուծանէ յոչինչ: Ապա ուրեմն, մինչ չեն արարածք եւ գիտութեան Արարչին ի բնէ եւ յաւիտենից, եւ երեւէին Նմա անճինք եւ կարգուածք, եւ թէպ նոցա մինչ չէին: Եւ թէ ասիցեն, թէ ոչ ի բնէ եւ յաւիտենից էին արարածք ի գիտութեան Նորա, մինչ ոչն էր, ցոյց են, թէ ոչ է Նա Աստուած կատարեալ, այլ յայլմէ էառ զգիտութիւնն եւ կատարեցաւ: Եւ թէ կատարեալ Աստուած է, ա[յ]ա ի բնէ եւ յաւիտենից ամենայն արարածք էին ի գիտութեան Նորա, մինչ չէին, եւ գիտէր զնոսա, որպէս մինչ են, եւ մինչ չէին, ինքեանք ինքեանց էին Նմա: Եւ իբրեւ եղեն ինքեանք ինքեանց եւ ոչ եթէ՝ Նմա, զի միշտ էին ի գիտութեանն Նորա: Եւ չէք ժամանակ, թէ գիտութիւն Նորա չարժեսցի հաստել ինչ, որ չէր ի գիտութեան Նորա, այլ առ Նա զամենայն ինչ, որ ստացեալ ունէր ի գիտութեան Իւրում

© National Library of Armenia

յաւիտենից, գտանի, զի այլուստ ծագեաց ի Նա գիտութիւն, իբր պարգեւ ուրուք: Եւ սուրբն Եղիշա ասէ. Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են, ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ՝ միշտ Աստուած եւ միշտ Արարող, յորժամ կամեցաւ, զոր միշտ ունէր յիմանալւոյն եւ ած ի գիտութիւն զիմանալեացն, իբր Հայր եւ եղելոցս Արարիչ, բնական իմացութիւն՝ նիւթ, իսկ արարչական զաւրութիւնն՝ զարդ. Նիւթ՝ անմարմին, որ է գիտութիւն Նորա, իսկ արարչութիւն զանմարմին գիտութիւնն մարմնացոյց եւ ած ի տեսութիւն զգալի, ի յայտ լիցի իմաստութիւնն, որ ծածկեալ էր ի գիտութեանն Աստուծոյ, որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Աներեւոյթք ի գիտութեանն Աստուծոյ եղելովք ճանաչի մեզ»: Եւ դարձեալ ասէ. «Զիմաստութիւն խաւսիմք, զոր յառաջ քան զյաւիտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր»: Այլ զայս, զի գրեցի զիմաստս Հոգեկիր վարդապետացն, զի ծանիցես, ո՛վ սիրելի եղբայր, եթէ պատիւ փառաց, զոր ընկալաք ի վախճան կատարածի աստ, անսկզբնաբար նախախնամող ողորմութիւնն Աստուծոյ սահմանեալ էր ի փառս մեր եւ կնքեալ պահէր ի գանձու իմաստութեան Իւրոյ, զոր Առաքեալ «խորհուրդ ամբածածուկ»[1] անուանէ զսա առ Հաւր, որ այլոց ազգաց ոչ ցուցաւ, որպէս այժմ իսկ յայտնեցաւ սրբոյ Իւրոց, որոց կամեցաւ Աստուած յայտնել: Արդ, զխորհուրդն, որ Ադամա յառաջին Ադամ նկարագրէր Աստուած՝ յասել Մարգարէին, թէ՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր» [Ծնունդ. Ա 27], եւ պատկեր Աստուծոյ Աստուած է՝ զբոլորն յինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատպին ճշգրտաքատակ նմանութիւնն, զի թէպէտ եւ չարնախանձ հակառակութիւն սկզբնաչար աւձին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեան տեսակ եւ զանապականութեան պատկերն, զի չէր մարթ եղծանել զդոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարեցաւ, զի թէպէտ եւ ներեաց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ յաւձէն, եւ ապա ընկալցի ըստ արժանին զհատուցումն դատապարտութեան: Եւ թէպէտ եւ ի հող դարձաւ մարդն առաջին, սակայն խմոր անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, զի յապաղանաւք ընդ երկար ժամանակս փոխադրեսցէ զզանգուածն յիւր նմանութիւն, զի նորոգումն կենաց շրջեսցի, զոր առաքեալ մեզ բացայայտէ՝ ասելով. «Եղեւ առաջին մարդն ի շու[ն]չ կենդանի, իսկ երկրորդ Ադամ՝ ի Հոգի կենդանարար: Առաջին մարդն՝ հող յերկրէ, երկրորդ մարդն՝ տէր երկնից: Եւ որպէս

1 Հմմտ. Ա Կորնթ. Բ 7:

զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին» [Ա Կորնթ. ԺԵ 45–49]:

Արդ, ճաշակումն, ըստ խրատու աւձին, եղեւ նմա դեղ յիմարութեան, եւ փոխեալ շրջեցաւ ի կարգ անասնոյ՝ ըստ այնմ, եթէ՝ մարդ ի պատուի էր, հաւ[ա]սարեաց անասնոց անբանութեամբն[1]: Եւ այս դեղ տայն այն հնազանդեալ ծառայեցոյց զմա[րդ*] իբրեւ զանբան անասուն՝ ըստ ներելոյն Աստուծոյ: Սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց Բարերարն, այլ ի դարս դարս հրաշագործէր զփրկութիւն մարդոյն՝ խրատելով զչարսն եւ բարեգործելով զարդարսն, զի կրթեսցէ այսուիկ ատել զչարն եւ ստանալ զբարին: Եւ ծածկապէս զաւետիս կենաց ծանուցանէր սիրելեաց Իւրոց եւ զխորհուրդ տնաւրէնութեան Տեառն մերոյ նկարէր ի նոսա. որպէս ծանոյց Աբրահամու սիրելոյ Իւրոյ միածնաւն իւրով, զոր յառակս ընկալաւ, եւ ծանեաւ զփրկութիւն աշխարհի գալստեամբ Միածնին Աստուծոյ: Եւ դարձեալ՝ ի ձեռն Մովսէսի նկարագրէր զբոլոր խորհուրդ տնաւրէնութեան Բանին, զի «ստուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնքն եւ ոչ՝ ճշմարտութիւն իրաց» [Եբր. Ժ 1], զոր եւ Տէր յԱւետարանին առակէ, թէ՝ «Նա ոչ գիտէ, որ սերմանէ, եթէ նախ խոտ բուսանի, եւ ապա՝ հասկ, եւ ապա՝ ցորեան ատոք ի նմա» [Մարկ. Դ 28]: Եւ այսու ուսուցանէ, զի նախ խոտոյ նմանեցան մարդիկ մինչեւ ի տուչութիւն աւրինացն: Եւ ի ձեռն աւրինաց ձեւացաւ ստուերակերպութիւն զոհիցն եւ լուալեացն զաւրէն հասկի, զոր եւ առաքեալ «կղկղանս»[2] անուանէ զարդարութիւն աւրինացն: Եւ ընկալաք ի ձեռն մարգարէիցն քարոզութեան, յոր ձեւ ընտրի զհատն կենաց, որով կերակրեցան ամենայն արարածք անսպառ հացիւն կենաց եւ փոխադրեցան յանմահութիւն կենաց: Զի իբրեւ էհաս լրումն աւրինաց եւ մարգարէից, եւ կատարեցան առակք աւրինակաց, եկն էհաս Կատարիչն աւրինաց եւ մարգարէից, զի լցցէ զամենայն, որ նկարագրեցան վասն գալստեան Նորա, եւ յԻնքն գլխաւորեսցէ զբոլոր ստուերս հանդերձելոց բարեացն: Զի իբրեւ էհաս լրումն ժամանակաց, առաքեցաւ Բանն ի Հաւրէ, որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ աւրինաւք, զի ազատեսցէ ի ծառայութենէ աւրինացն՝ յազատութիւն յորդեգրութեան Հաւրն երկնաւորի: Եւ եկեալ Աստուածորդոյն, ըստ գուշակելոյ մարգարէիցն, ժողովեաց զառաքեալս՝ զորսորդս մարդկան, որոց անուանք գրեալ էին ի դպրութիւն կենաց ի կանուխ

1 Հմմտ. Սաղմ. ԽԸ 13, 21:

2 Հմմտ. Փիլիպ. Գ 8:

© National Library of Armenia

գիտութեանն Աստուծոյ: Եւ կրթեալ զնոսա բանիւ վարդապետութեան Իւրոյ՝ տալով իշխանութիւն հալածել զդեւս եւ ազատել զմարդիկ ի բռնութենէ չարին, որ տիրեաց մարդկութեանս: Եւ այսպէս, լուսաւորեալ զնոսա մինչեւ յաւրն վերանալոյ առ Հայրն, պատուէր տուեալ նոցա ոչ մեկնիլ յԵրուսաղէմէ, մինչեւ զգեցցին զաւրութիւն ի բարձանց: Եւ, ամբարձեալ առ Հայրն, առաքեաց զաւետիս Հաւր՝ զարդարիլ ի հասանել Հոգւոյն ի վերա[յ] նոցա, որով, ընկալեալ զՆորհս Հոգւոյն, եղեն աւետաքարոզք կենաց աշխարհի եւ ոչ միայն աւետարանիչք բանիւ եղեն, այլ եւ հազարապատք բաշխողք Հոգւոյն Սրբոյ՝ լցուցանելով զբոլոր սեռս հաւատացելոց:

Վասն որոյ ոչ կամէին գրով տալ նոցա զՆորհս Հոգւոյն, որպէս Մովսէսն այն ի հնումն՝ ի տախտակս քարեղէնս գծագրեալ զգիր դատապարտութեան, այլ՝ ի գրեալ տախտակս սրտի մարմնեղէնս զգիտակցութիւն Հոգւոյն: Իսկ հաւատացելոցն իմացեալ, թէ ոչ զաւրէն անմոռաց գիտութեամբ կուրուցեն զլուսաւոր գիտութիւն .չնորհացն Հոգւոյն: Վասն այնորիկ ինքնայաւժար կամաւք հայցեն յառաքեալսն գրով թողուլ նոցա զոր բանիւ աւետարանեցին: Եւ նախ Մատթէոս գրէ հեբրայեցւոցն յԵրուսաղէմ, ասի, իսկ Մարկոս Աղեքսանդրացւոյն գրէ յետ հինգետասան ամի: Իսկ Ղուկաս յետ ԻԲ ամի գրեաց զԱւետարանն, եւ Յովհաննէս յետ Հ ամի գրեաց զԱւետարանն՝ զանճառ Մնունդն բացայայտեալ մեզ: Եւ ի բազում աշակերտացն ընկուզն միայն գրեցին զԱւետարանն՝ Մատթէոս եւ Յովհաննէս, եւ այլք յաշակերտաց նոցունց՝ [խոր]հրդաբար, չորս առաջս բղխեալ յաղբիւրէն կենաց ի չորեքծագեաւ յոլորտս աշխարհի, զի զհրդեհեալ բոց մեղացն, որ վառեցաւ ի կողէն Ադամա[յ] ի ծագս տիեզերաց, շիջուցեն: Եւ զաղին դրախտն, զոր կորուսաք ի ձեռն ադամածին կողին, կուսածին Ադամայս վերստին առցուք, որ է եկեղեցի Նորա, յորում տնկեցաւ ծառն կենաց եւ անմահութեան: Եւ Ինքն Տէր մեր աղբեւր կենաց բղխեալ ի սմա առ ի յարբուն պաւսպասեալ ծարաւեացս, զորս կոչեաց առ Ինքն եւ չորս առաջս՝ ծաւալեալ ի Նմանէ: Առաջինի՝ Փիսոնն, որ կոչի բերան հրոյ, զոր Մաթէոս աւետարանեաց հրեղէն լեզուաւն, զոր ընկալաւ ի վերուստ եւ լուսաւորեաց զբոլոր ծագս արեւելեանն, որպէս բանականն ի մեզ լուսաւորէ զբոլոր դէմս զգա[յ]ութեանց մերոց, եւ զիմաստս Հոգւոյն, որ կոչին արեւեա[յ]ք: Եւ երկրորդն՝ Գեհոն, որ կոչին լանջք, որ բխեաց յԱղեքսանդր եւ զգիպտոսի եւ, մաքրեալ, լուսաւորեաց զբոլոր կողմն հարաւոյ՝ մինչեւ զԳադիրոն եւ յարձանս Հերակղեանց. որպէս սրտմտականն ի մեզ արիաբար մաքրէ զախտս նուաստութեան եւ կենատ խորհրդոց՝ զաւրէն

խրոխտ կենդանւոյն արի[ա]բար վարելով: Եւ երրորդն՝ Տիգրիս, որ բխեաց ի Հռովմ եւ յԻտալիս եւ մաքրեալ լուսաւորեաց զբոլոր կողմ արեւմտից, որպէս ցանկականն ի մեզ վերամաքրեալ հոգւով զտխրալի ախտիցն նսեմութիւն: Իսկ չորրորդ գետն Եփրատէս, որ բխեաց յԱսիա եւ յամենայն Միջերկրեայս եւ լուսաւորեաց հրով Հոգւոյն զբոլոր ծագս ասիացւոց եւ ամենայն հիւսիսոյ: Որպէս արդարութիւն ի մեզ կալով ի միջոցի եռամանեայ ոգւոցս առաքինութեան զբոլորան ուղղելով յիւրոսն հաստատապէս առկայիլ ներգործաբար: Եւ այսպէս զչորեքծագեան տիեզերս լցին երկնատեղեաց ցաւղոյ իմամբ: Սմին համաքաւակ եւ եզեկիէեղեան կառք գուշակեն մեզ զխորհուրդ եկեղեցւոյ եւ զնմանութիւն աւետարանչացն, զի չորից կենդանեացն իւրաքանչիւրոցն չորս դէմք առանճնացեալք ունէին: Առաջնոյ կողմանցն՝ դէմք մարդոյ, եւ ընդ նմին լծակցեալ՝ դէմք առիւծուն, եւ միւս կողմ՝ դէմք զուարակի եւ ընդ նմին լծակցեալ զարծուին, որ մեզ նկարագրէ Մաթէոս զդէմս մարդոյն, որ է բանականն ի մեզ, զի մարդանալ Տեառն մերոյ քարոզ[եաց] մեզ պատմութեամբ Որդոյն Դաւթի եւ Աբրահամու: Վասն որոյ առաջին իբրեւ զդեմս մարդոյ այլոց Աւետարանչացն զնա կարգեցին, զի ականատես եղեալ բոլոր գործոց եւ վարդապետութեանն, գեղեցկապէս չարագրեաց զկարգ բանից եւ նշանաց Տեառն մերոյ: Եւ ընդ սմին չարալծեալ՝ զմարկոս զաւրէն առիւծուն, որ է սրտմտութականն ի մեզ, որպէս եւ ինքն գրեաց, թէ՝ «Ել նա ի Յորդանանէ իբրեւ զառիւծ[1], զի ընդ բանին պարտ է չարալծել զսրտմտականն զաւրութեամբ, եւ աներկիւղ աւետարանեսցէ զբանն կենաց եւ խրոխտ ճոխութեամբ պակասէ զընդդիմակայն: Իսկ երրորդ կենդանին՝ զուարակ, որ է Ղուկաս, որ աւետարանեաց մեզ զուարակ ածեալ ի սպանդ՝ ի խրախունս Հաւր յաղագս տարամերժեալ որդւոյն: Եւ սմին չարալծեալ՝ զարծուին, որ է գիտութիւն ընդ ծանուն եւ ընդ վայրաքարշին զթթեւն եւ զվերաբերողն, զի ցանկականն մեր մի՛ թողացուցեալ ցնդեսցի, այլ՝ սրբեալ մաքրութեամբ հրով Հոգւոյն, զի ճշմարտապէս փափագեսցուք Վերնագունին: Զի եւ Յովհաննէս, փարելով զսարսափելի պարանոցսն, վերամաքրեալ ի բարձանց, որոտալով քարոզեաց մեզ զանակիզքն Մնունդն յանակզբնական Հաւրէ: Ցայս խորհուրդ ետես եւ Յակոբ՝ զսանդուխտսն յերկրի հաստատեալ եւ զվէմն ածեալ, յայտնեաց մեզ զմարմին Բանին, որ ածաւ յերկրի՝ ըստ Մաթէոսի, որ ծանոյց մեզ զԿրիստոսի մարդեղութիւնն եւ զնոյն Տէր ի ծայրս սանդեղոցն՝ ըստ Յովհաննու, զաստուածութիւնն Նորա գեր ի վերոյ ամբարձեալ, եւ

1 Հմմտ. Երեմ. Խ Թ 19:

© National Library of Armenia

զեւեէչա հրեշտակացն Տէրն մեկնեաց մեզ, թէ՝ «Տեսանիցէք զհրեշտակս, զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերա[յ] Որդւոյ մարդոյ [Ցովհ. Ա 51]:

Եւ արդ, այսչափ բաւական լիցի խմաստասիրաց առ ի ծանուցումն խորհրդոց չորից աւետարանչացն:

ԳԻՐՔ ԼԻՆԵԼՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՈՐԴՒՈՑ ԴԱԻԹԻ[1]

Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ ի գալստեան Իւրում, որպէս Մովսէս հակիրճ բանիւ փակեաց զբոլոր արարածոց լինելութիւն՝ յասել, թէ՝ «Այս է գիր արարածոց երկնի եւ երկրի, զամենայն եղեալս երկնաւորաց եւ երկրաւորաց» [Մնունդ. Բ 4], ի սմա ծածկեալ յայտ արար: Սոյնպէս, յասելն լինելոյ բանին, յայտ արար զբոլոր չնորհսն, որ հեղաւ ի մեզ, զի եթէ անլուա[...]քիք եղեն Աստուծոյ մարդ լինել, զիա՞րդ ծնաւ, ասեն, [...]ց այն, ինչ չնորհեցի մեզ, եւ անդէն յանուանէն յայտ արար զմեծ փրկութիւն մեր ի չարէն: Զի երեք կար[ծ]եմն անուանադրութեան՝ յիրէն, ի ներգործութենէ, ի ձայնէ, զորս ընկալաւ Տէր մեր. նախ ի ներգործելոյն ի մեզ փրկութիւն կոչեցաւ Յիսուս, երկրորդ՝ յիրէն, զի աւծաւ միաւորութեամբ Աստուածութեանն եւ մարդ[ղ]կութեամբն, երրորդ՝ ի ձայնէն, զի կոչեցաւ Բան, զի զմեզ փրկեացէ եւ աւծցէ Հոգւոյն հեղմամբ եւ Բանիւ վարդապետութեամբն կերակրեացէ ի ճաշակս անմահութեան: Իսկ ասելն «Որդւոյ Դաւթի եւ Աբրահամու»՝ զի յերկոսեան ի սոսա եղեն աւետիք յազ[գ]էն Աբրահամու, թէ՝ Ջաւակի քում «աւ[ր]հնեացին ամենայն ազգ երկրի» [Մնունդ. ԺՒ 4], եւ թէ՝ քեզ եւ Ջաւակի քում, որ է Քրիստոս: Իսկ Դաւթի երդմամբ ուխտեաց ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա[4], զոր եւ հրեշտակն աւետարանեաց, թէ տացէ Նմա Աստուած զաթոռն Դաւթի՝ հաւր Իւրոյ[5], եւ մարգարէն, թէ՝ «Ցաթոռն Դաւթի նստիցի» [Եսայի Թ 7]: Եւ նախ զԴաւիթ յիշէ, զի զարթուացէ զլսողն ի լուր բանից իւրոց, զի աւետիքն Աբրահամու ծածուկ էր ի բազմաց, իսկ Դաւիթ այն նորոգ

1 Մատթ. Ա 1
2 1-2 տող
3 1-2 բառ
4 Տե՛ս Սաղմ. ՃԼԱ 11:
5 Համմտ. Գ Թագ. Բ 4:

եւ յայտնի էր ի մէջ նոցա: Վասն որոյ ամենեքեան զՆա Ցիսուս՝ Որդի Դաւթի կոչէին: Եւ հարց [առ Տեառն] մերոյ զփարիսեցիան, թէ ո՞յր Որդի է Քրիստոսն, եւ նոքա ասեն՝ Դաւթի[1]: Վասն այնորիկ նախ զԴաւիթ յիշէ, որ ախորժելի էր հրէից լսել, թէ խոստումն Դաւթի ի գլուխ ելին, զի համարձակ լիցի հաւատալ ի Նա: Եւ ապա անցանէ յաղբերն աւրհնութեանց յԱբրահամ, զի նա է մայր աւետեաց եւ բղխումն պարգեւաց աշխարհի, զի նախ ի ծնունդս նորա նկարեցաւ ծնունդ Բանին. զի ամուլ էր Սառայ, որպէս եկեղեցի հեթանոսաց: Եւ աւետեաւք ի ծերութեան ծնաւ զմիածինն, որպէս եկեղեցի հեթանոսաց յամլութեան ընկալաւ զաւետիս ծնունդեան Միածնին: Եւ ի ծերութեան ծնաւ զանդրանիկն արարածոց: Եւ որպէս ծերութիւն նոցա ի մանկութիւն դարձաւ, եւ ամլութիւն՝ յանթիւ բազմութիւն յառակեալ յաստեղս: Եւ եկեղեցւոյս կնդրակի[2] բազում են որդիք, քան զարամբարսն: Եւ այսպէս, միածին Իսահակ զկամս հաւր իւրոյ կատարէր՝ ինքնայաւժար կամաւք զփայտ պատարագին բարձեալ դիմեալ երթայր ի մահ՝ ըստ նմանութեան Տեառն մերոյ: Ուստի եւ յառակս ընկալաւ զնա Աբրահամ:

Արդ, «Աբրահամ,– ասէ,– ծնաւ զԻսահակ»՝ յառաջինակ Քրիստոսի, եւ «Իսահակ ծնաւ զ[Ց]ակոբ» [Մատթ. Ա 2]:

Բարձրագոյն եւս խորհուրդ նկարեալ ի սմա, զի Ռեբեկայի հեթանոսաց թողոյր զո[րդ]իս եւ զծնողս իւր՝ ըստ այնմ «Լո՛ւր, դո՛ստր, եւ [տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛] զժողովուրդ եւ զտուն հաւր քո» [Սաղմ. ԽԴ 11]: Եւ եկեալ յարեցաւ յի[շատա]կ, որպէս եկեղեցի հեթանոսաց: Եւ նա եւս յետ ամլութեան յղանայր երկատորիմ, որ գուշակէր յերկուս ժողովուրդ մ(՞), զի ասի, թէ նախ Ցակովբ նկարեցաւ յարդանդի, թէ Եսաւ բնութեամբ առ զանդրականութիւնն. առ սոց[ա] ժամանակ եւ Ցակոբ բուռն յարեալ զգա[ր]չապարչէն Եսաւայ, թէպէտ եւ առ ժամայն ոչ յաղթեաց, յետոյ առ զանդրականութիւնն: Եւ զի որս Եսաւայ էր կերակուր հաւր իւրոյ, որպէս աւրէնքն պահանջէին ի հրէից, որպէս զհեթանոս ի սուր սուսերի եւ ոչ խնամեցեալ նոցա: Եւ ի վախճանել հաւրն, առ Ցակովբ զանդրանկութիւնն եւ զաւրհնութիւն եւ հեռացաւ ի չարութենէ եղբաւր իւրոյ: Այսպէս եւ հեթանոք ի վախճանել աւրինացն ընկալան զանդրանկութիւն եւ զաւրհնութիւն հրէից եւ, հալածեալ ի չա-

1 Տե՛ս Մատթ. ԻԲ 42:
2 գուցէ՝ կենդանի

© National Library of Armenia

րուքենէ նոցա, որոշեցան ի նոցանէ, զի եաւ ատեցաւ, եւ նորն Յակովբ սիրեցաւ ի Տեառնէ:

«Իսկ Յակովբ,- ասէ,- ծնաւ [զՑուդան եւ զեղբարս նորա» [Մատթ. Ա 2]:

Եւ յայտնիկ ցուցանէ մեզ այլ եւս խորհուրդ, զի ոչ յիշեաց Նոյ զանդրանիկան զՌուբէն եւ Շմաւոն եւ զԼեւին, [զի պատժ]եցան յ[ակա՞]ռակութենէն վասն չարութեան իւր[եանց]. [Ռուբէն՝ վասն պղծութեան հարճին, եւ Շմաւոն եւ Ղեւի՝ վասն անաւրէնութեանցն, որպէս եւ ազգ հրէիցն՝ վասն պոռնկութեան կռապաշտութեանն: Եւ դպիրքն եւ փարիսեցիքն վասն նախանձու եւ սպանութեան Տեառն մերոյ քահանա[յ]ից հոլոնեալ(*) գնեցին զարիւն նորա արձակելով: Իսկ երջանիկն Յուդա առնոյր զանդրանկութիւնն եւ զաւրհնութիւն՝ ըստ նմանութեան Տեառն մերոյ՝ վասն ուղիղ դատաստանին ի վերա[յ] Թամարայ, զի զինքն պարտաւորեաց եւ զնա արդարացոյց: Որպէս եւ Տէր մեր զինքն դնէր պարտապան յանցանաց եկեղեցւոյ Իւրոյ եւ զնա արդարացոյց, այլ եւ խրատուու իւր զերծոյց զՅովսէփ ի ձեռաց եղբարց իւրոյ: Վասն որոյ ասէր Յակովբ՝ յաւրհնութեանն յարենէ ելեր, որդեա՛կ, զի ոչ պարտաւորեցար ի մահու Թամարայ եւ Յովսէփայ: Վասն որոյ ընկալաւ զաթոռ Թագաւորութեանն աննուազելի՝ մինչ ի ծագումն յուսոյ հեթանոսաց: Դարձեալ՝ վերագոյն, քան զընութիւն յեղանակի ծննդեան կանանց,

«ծնանի Ցուդա զՓարէս եւ Զարա ի Թամարայ» [Մատթ. Ա 3],

զի հայեցեալ Աստուած ի ցանկութիւն Թամարայ, այն, որ ծարաւի էր աւրհնութեան զաւակի ի սուրբ(*) յազգէն. եւ զրկեցին զնա չարաչար որդիքն Ցուդա[յ]ի, ինքեանք չարամահ սատակեցան եւ ոչ [ցանկա]ցան աւրհնութեան սերմ որդեծնութեան, եւ ի պատիր [...]՝ էութեան կերպարանաց գողացաւ զգանձն, որ ծա[ն]եալ կայր ի Ցուդայ: Եւ, փոխանակ միոյ, կրկին ընկալաւ պարգեւս Աստուծոյ՝ ըստ իւրում ցանկութեանն, եւ նկարագրեցաւ ի նմա խորհուրդ եկեղեցւոյ. զի ձեռն Զարայի, որ յայտնեցաւ, ցուցանէր զգործս հաւատոց, որ յայտնեցաւ ի Նոյ եւ Աբրահամ, յԻսահակ եւ Յակովբ: Եւ դարձեալ ծածկեցաւ, եւ եմուտ բռնութիւն աւրինացն առ ժամանակ մի, եւ խրամարտեցաւ ցանկ հաւատոյն, որով արդարացան առաջինք, եւ եմուտ հարկ բռնութեան աւրինացն: Եւ դարձեալ խափանեցաւ իշխանութիւն նորա, զի մեք զորդեգրութիւն ի հաւատոցն առցուք: Եւ արդ, տե՛ս դու, թէ որչափ նկատէր Աստուած, քանզի այս

1 1 բառ

մեր ցանկացեալ, զոր կատարեաց գալստեամբ Իւրով: Եւ այսպէս, ի կարգ անկեալ՝

«Փարէս ծնաւ զԵզրովմ, Եզրովմ ծնաւ [զԱրամ, Արամ ծնաւ] զԱմինադաբ, Ամինադաբ ծնաւ զՆասսովն» [Մատթ. Ա 3-4]:

Զսորա քոյրն էառ Ահարովն կին: Եւ խառնեցաւ քահանայութիւնն եւ թագաւորութիւնն ի մի ազգ, զի ի ծնանելն [զՆասսով]մին առցէ զքահանայական եւ զթագաւորականն [իշխանութիւնն:

«Նասսովն ծնաւ զՍաղմովն, Սաղ[մովն] ծնաւ Բոյոս ի Հռաքաբա[յ]» [Մատթ. Ա 5]:

Աստ դարձեալ յիշէ [զՌ]ահաբ պոռն[իկ], որ եղեւ աւրինակ եկեղեցւոյ, զի իբրեւ լուաւ նա զանուն Ցեսովա[յ] կուսանի, ուրացաւ զազգ իւր եւ սրբեցաւ ի պոռնկութենէ եւ անարգեաց զկուռս իւր եւ ընկալաւ զլրտեսան Ցեսովայ եւ խոստովան եղեւ յԱստուած նորա եւ ասէ. «Նայէ Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր խոնարհ, զի խաւարեցոյց զլուսաւորս երկնից եւ իջոյց մանանա[յ] ի բարձանց եւ պատուեաց զանդունդս եւ անցոյց զժողովուրդն եւ արբոյց ի վիմէն, պոռնիկ հեթանոսն խոստովանիւր զաւրէն եկեղեցւոյ: Եւ ժողովուրդս, որ տեսին զսքանչելիսն, որթուն երկրպագեալ, ասէին. «Այս են աստուածք քու, Իսրաե՛ղ»» [Ելք ԼԲ 4]: Նա, ընկալեալ զլր[տեան], իջոյց վանդակաւ ընդ պատուհանն, որպէս եկեղեցին ի Դամասկոս զՊաւղոս իջուցանէր. նշանաւ կամի ով որ ի փայտին, ապրեցաւ ամենայն տարի իւրով: Եւ եկեղեցի նշանաւ խաչին եւ Արեամբ Միածնին ապրեսցի ի լուծման աշխարհի: Վասն որոյ ի Գիրն կենաց Աւետարանին գրեցաւ եւ Դաւիթ[յ] յիշատակեցաւ: Եւ հրէայքն չնչեցան ի դպրութենէ կենաց, որպէս զԱքար ագահ[1]:

«Բոյոս ծնաւ զՈվբեդ ի Հռութայ» [Մատթ. Ա 5]:

Աստանաւր [էին բար]ձրագոյն խորհուրդ եկեղեցւոյ, զի Հռութ՝ յազգէն Ղովթայ, թողոյր զազգս եւ հայրենիս իւր եւ պանդխտութեամբ մուրացիկ չրջէր[3] զկնի սկեսրոջ[4] իւրոյ, զի մի՛ զրկեսցի նա յաւրհնեալ ազգէն Ցուդա: Եւ հայեցեալ Աստուած ի ցանկութիւն նորա, արկանէր գութ ի կամս Բոյոսի՝ առնուլ իւր կնութիւն եւ

1 Հմմտ. Ցես. Զ 18, Է 1-26, Ա Մնաց. Բ 7:

2 ձեռագրում Հէութավաք

3 ձեռագրում շրաէր

4 ձեռագրում սկներջին

© National Library of Armenia

ծնանէր ի նմանէ զՅեսսէ՝ զհայրն[1] Դաւթի: Եւ Յեսսէ ծնանէր զԴաւիթ արքայ: Դաւիթ ծնանէր զՍողոմոնն ի Բերսաբէէ, զի Ուրիա՝ այր նորա, ի հեթանոսաց եկամուտ էր ի հրէութիւն: Եւ Բերսաբէ գիտէր զաւրհնութեան ծնունդս, որ ի Յուդա[յ]է ի Դաւիթ հաստատեցան աւրհնութիւնք Յակովբայ: Եւ ցանկայր գողանալ ի նմանէ, որպէս թամար՝ ի Յուդայէ, վասն որոյ եւ եհաս իսկ, որում ցանկայրն: Իսկ Դաւիթ ոչ այսպիսի մտաւք մերձեցաւ ի նա, այլ յաղթահարեցաւ ի գեղոյ նորա: Վասն որոյ իբր զչնացող պատժեցաւ, իսկ Բերսաբէէ ոչ պատժեցաւ, այլ ընկալաւ յԱստուծոյ իւրում, ցանկացաւ զՍողովմոն ի իմաստութեամբ եւ չնորհաւք Աստուծոյ եւ ի մարդկանէ:

Զաւրաբաբէղ ծնաւ ի գերութեանն բաբեղացւոց՝ յաւրինակ Քրիստոսի, որ եղեւ Փրկիչ ժողովրդեանն, որպէս Մովսէսն՝ յԵգիպտոս, զի Մովսէս փրկեաց զնոսա ի բռնութենէ փարաւովնի եւ [յաւանչնորդ՞]եաց ժողովուրդն յամպն եւ ի ծովն, փրկե[աց ի չա]րեացն Եգիպտոսի: Սոյնպէս եւ Զաւրաբաբէղ առաչնորդեաց ժողովրդեանն ի գերութենէն բաբեղացւոց եւ չինեաց զտաճարն կրկին եւս առաւել փառաւք, քան զհինն՝ յաւրինակ Քրիստոսի, որ ծնաւ ի գերութեան մերում եւ արար դարձ մեզ առ Վերինն Երուսաղէմ եւ չինեաց զտաճար մարմնոյ Յարութեամբն Իւրով: Եւ տաճար առաչինն, որ վեց ամ չինեցաւ՝ յաւրինակ Ադամայ, որ ստեղծաւ ի վեցերորդ աւուրն: Եւ որպէս այրեցաւ տաճարն ի Նաբուղարդանայ, որպէս եւ բնութիւն մարդոյ ի ցանկութենէ պոռնկութենէ մեղացն ապականեցաւ: Իսկ զի Զ ամ վերջին չինեաւծն՝ յաւրինակ մարդոյս, որ յարդանդի ի Ի եւ ի Զ աւուրս չինի բոլոր մարմնովն եւ առնու զկենդանութիւն: Իսկ Քրիստոսի եկեալ քակեաց զձեռագործ տաճարն եւ չինեաց Յարութեամբն Իւրով, որ երեքաւրեայ, եւ արար նաւակատիս խնդութեան անվախճան յաւիտենից:

«Զաւրաբաբէղ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱզովր, Ազովր ծնաւ զՍադովկ, Սադովկ ծնաւ զԱքին, Աքին ծնաւ զԵղիուդ, Եղիուդ ծնաւ զ[Յ]ակովբ, Յակովբ ծնաւ զՅովսէփ՝ զայրն Մարիամու, որ խաւսեցեալ էր Մարիամ կոյս» [Մատթ. Ա 13–16]:

Եւ թէ ընդէ՞ր Մատթէոս ի վերուստ սկսանի զազգաւհամարն, եւ Ղուկաս ի ստորուստ ի վեր հանէ յԱդամ, այլ զի Մաթէոսէ խնդրեցին, որ ի հրէից աշակերտեալն էին: Եւ դէպ եղեւ նմա երթալ յայլ գաւառ, հարկ եղեւ տալ նոցա գրով զԱւետարանն: Եւ գրեաց ըստ

1 ձեռագրում զբաղկ

[...]ացն ախորցից, թէ Դաւթայ եւ յԱբրահամէ [...]՝ ըստ աւետեացն: Իսկ Ղուկաս ամենայն աշխարհագրաց, որոց փոյթ այն էր, եթէ Աստուած եւ յԱստուծոյ է Բան՝ առաքեալ ի փրկութիւն մարդկան: Վասն այնորիկ նախ բազում բանս խաւսի վասն ծննդեան Նորա եւ այլ գործոց, որ եղեն ի ծննդեան Նորա, ապա՝ ազգաւհամարն: Եւ թէ ընդէ՞ր ոչ Մատթէոսի, այլ ընդ այլ ազգս կարգէ, եւ զայս եւս բացայայտեացուք: Գիտա՛, զի հրէական ազգն յոյս յարութեան ոչ ունէին աւետարանել յաւրինացն: Վասն այնորիկ աստէն էր նոցա ամենայն յոյս աւետեացն եւ աւրհնութեան յորդեծնութիւն էր, եւ ի հայրենիս ժառանգութիւն նոցա աստէն յերկրի: Վասն այնորիկ հրաման ետ Մովսէս եղբաւրն՝ առնուլ զանժառանգ կին եղբաւր իւրոյ եւ յարուցանել ժառանգ եղբաւր իւրոյ, եւ յերկուս բաժանեալ էին ծնունդք նոցա՝ էր, որ ըստ բնութեանն, եւ էր, որ ըստ աւրինացն չնորհաւք յեղբաւրէն ստացեալ: Արդ, Մաթէոս գրեաց, որ ըստ բնութեան էր ծնունդն, իսկ Ղուկաս՝ որ ըստ աւրինացն: Արդ, առաջ ի կին Մատթան, որ ի Սողոմոնէ էր ազգաթիւ, որոյ անուն էր Աթա. եւ ծնաւ զ[Յ]ակովբ ըստ բնութեան, եւ իբրեւ մեռաւ Մատթան, առ զկին նորա Մեղքի՝ այն, որ ի Նաթանա[յ] ազգէ կարգեալ գայր: Եւ ծնաւ զՀեղի ի նմին մաւրէ: Արդ, Յակովբ՝ որդի Մատթանայ, որ ի Սողոմոնէ, իսկ Հեղի ի Մեղքա[յ] ծնեալ ի նմին մաւրէ՝ այն, որին արժան այն էր յազգէն, եւ առ Հեղի առ այն, որ ի Նաթանա[յ] էր: Եւ մեռաւ անորդի, եւ, ըստ հրամանի աւրինացն, առ զկին նորա Յակովբ՝ այն, որ ի Սողոմոնէ էր յարուցանել զաւնակ եղբաւր իւրոյ, եւ ծնաւ զՅովսէփ՝ զայր Մարիամու: Եւ Յովսէփ՝ բնութեամբ որդի Յակովբայ՝ այն, որ ի Սողոմոնէ էր եւ, ըստ աւրինացն, որդի Հեղեայ՝ եղբաւր նորա՝ այն, որ յազգէն Նաթանայ էր: Իսկ Ղուկաս իբրեւ սկսէր մ[կր]տութենէն ունել զազգաւհամարն՝ տեսանել հոգւով, եթէ ծնունդ Աւազանին ոչ բնութեամբ, այլ չնորհաւքն են, որ [...]ª այս այսք, որ ի Քրիստոսէ ծնան, որպէս Ինքն ոչ յարէնէ եւ ոչ ի կամաց [...]ª թին, այլ ի Կուսէն ծնաւ Հոգւով եւ յերկրորդ ծննդեանն: Այսպէս, որդիք Աղամայ յերկրորդ ծննդեանն ոչ յարենէ եւ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնանի փոյթ Աւազանէ ի Հոգւոյ եւ ի Ջրոյ, զի եղեւ Ինքն ճշմարիտ Որդի Դաւթի եւ Աբրահամու, արար մեզ ճշմարիտ որդիս Աստուծոյ: Վասն որոյ,

1 3–4 տող
2 1 բառ
3 1 բառ
4 1 բառ

© National Library of Armenia

ընկալեալ ի Յորդանան վկայութիւն ի Հաւրէ եւ ի Հոգւոյն, ի դէմս ասէր, թէ՝ «Դա է Որդի Իմ սիրելի» [Մատթ. Գ 17, Ժէ 5, Մարկ. Թ 6]: Եւ զայս ձայն որդեգրութեան ի մեզ տպաւորեալ Ինքն լինի ոչ բնութեամբ, այլ՝ շնորհաւք որդի Յովսէփու: Եւ զայս նկարագրեալ յաւրէնս, եթէ գոյ հնար, որք ոչ բնութեամբ են ծնեալ, լինել շնորհաւք որդիք: Եւ Ղուկաս, հայեցեալ Հոգւով, եթէ եղեն մարդիկ ոչ բնութեամբ, այլ շնորհաւք՝ որդիք Աստուծոյ, գրեաց զՔրիստոս՝ Որդի Յովսէփու շնորհաւք եւ ոչ՝ բնութեամբ, եւ զՅովսէփ՝ որդի Հեղեայ ոչ բնութեամբ, այլ շնորհաւք՝ ըստ աւրինացն: Եւ ի կարգ անկեալ հանէ եւ Նաթան եւ ի Դաւիթ եւ կատարէ յԱդամ եւ յԱստուած: Եւ զայս խորհուրդ յառաջագոյն նկարեաց Աստուած ի հնուն ի ձեռն տապանակին, որ աւրինակ էր Մարմնոյն Քրիստոսի՝ դարձուցանել յետո[յ] զՈրդանան, զի աւրինակ էր նա մարդկութեանս՝ հոսեալ ի բարձանց Լիբանանու, իջանէր ի Մեռեալ ծով Սոդովմայ, զի Սոդոմ կուրութիւն թարգմանի, եւ ծովն, զի եւ Մեռեալ է, յայտ ցուցանէ մեզ զկիրս դժոխոյս: Այսպէս եւ մարդկութիւնս զաւրէն Յորդանանու հոսեալ ի բարձանց բացամերժեալ յԱստուծոյ աստիկ ոլորմամբ եւ յանդուդն ալեաւք մեղացն իջանէր ի դժոխս: Արդ, որպէս չէր հնար ումեք դարձուցանել զյորձանս Յորդանանու, մինչեւ եկն տապանակն, որ ունէր յինքեան զԲանն Աստուծոյ՝ գծագրութեամբ տախտակացն, եւ եկա[ց] ի մէջ նորին եւ դիւրաւ դարձոյց ի տեղին, յորում կայր: Եւ չէր հնար ումեք դարձուցանել մարդկութիւնս անդրէն առ Աստուած, յորմէ յարամերժեալ որոշեցաւ, մինչեւ եկն էհաս տապանակ Մարմինն՝ այն, որ ունէր յինքեան ծածկեալ զԲանն Աստուծոյ, եւ անդրէն դարձոյց զմարդն առ Աստուած: Վասն այնորիկ զազգահամարն, որ Մատթէոս ի վերուստ իջուցանէ, զգալուստ Նորա յաշխարհի գուշակեալ, դարձուցանէ անդրէն Ղուկաս զմարդկութիւնս ի վեր հանելով, ասէ՝ «որ Ադամայն, որ Աստուծոյն» [Ղուկ. Գ 38]: Արդ, գրէ Մատթէոս, որպէս ասացաք ի խնդրոյ հեբրայեցւոյն նոցին գրով: Իսկ Մարկոս ի Հռոմ գրեաց ի հոռոմ լեզու ի Պետրոսէ: Իսկ Ղուկաս զպատճառս իւրոյ գրութեան յայտ առնէ, թէ՝ «բազումք կամեցան թեթեւութեամբ գրել»[1], եւ երկուցեալ, զի մի՛ թերի պատմութեամբ կրճատեսցեն զբարեբաղդն ճառս Աւետարանին, կամ եղեւ ինչ, որ ստէպ զհետ եղեալ էի Պաւղոսի ի նմանէ կատարելապէս գրել: Իսկ Յովհաննէս տեւեալ մինչեւ ի ժամանակս Տրայիանոսի կայսեր եւ յետ երանելոյն Պատմոս կղզոյ գրեաց զաւետարանն՝ հայեցեալ յառաջին Աւետարանիչն, զի մարմնաւորութենէ Նորա պատմե-

1 Հմմտ. Ղուկ. Ա 1:

ցին եւ զմի ամ, որ ի գործոն միայն, որ յետ Յովհաննու ի բանդ մատնելոյն գործեաց, զի Մատթէոս ասէ. «Իբրեւ լուաւ Յիսուս, թէ մատնեցաւ Յովհաննէս ի բանդ, գնացեալ եկն ի Գաղիղեա» [Մատթ. Դ 12]: Եւ Մարկոս նոյնպէս ասէ, թէ՝ «Յետ մատնելոյն Յովհաննու եկ Նա ի Գաղիղեա» [Մարկ. Ա 14]: Եւ Ղուկաս ասէ. «Յետ ամենայն չարեացն, որ գործեաց Հերովդէս, կալաւ զՅովհաննէս եւ եդ ի բանդի» [Ղուկ. Գ 20]: Իսկ Յովհաննէս գրեաց, որ յառաջ քան զայս էին, զի ասելն, թէ՝ «Արար զԶուրն ի գինի» [Յովհ. Դ 46], զայս՝ առաջին նշանս արարեալ[1]: Եւ այս յառաջ քան զմատնելն Յովհաննու էր: Եւ դարձեալ ասէ. «Եկն Յովհաննէս Սաղիմ առնել մկրտութիւն»[2]: Եւ այլ բազում բանս ասէ, որ յառաջ քան զմատն[ելն] Յովհաննու էին:

Արդ, սկսաւ նա գրել զԱւետարանն, որպէս Մովսէսն ի սկզբանն արարածոց լինելութեան: Այլ, ընթացեալ թեւաւք Հոգւոյն, ըստ Յովբայ, որ ասէ, թէ՝ «Մի՞թէ երթեալ իցես յակն ծովու եւ մտեալ ի խորս աստուածային իմաստից», սկսաւ գրել նա, թէ՝

«Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ նոյն իսկ Աստուած էր Բանն» [Յովհ. Ա 1]:

Մովսէս զյետոյն Աստուծոյ ետես եւ ոչ հանդուրժէր տեսլեանն, իսկ սա համարձակութեամբ զլանջաքն անկեալ համբուրէր զնա: Անդ, յետ իջանելոյն Աստուծոյ ի լեառն, ընդունէր զտախտակսն, իսկ աստ, յետ ամբառնալոյ մերոյ բնութեան յերկինս, իջանէր Հոգին ի լեզուս հրեղէնս: Ոչ գրէր ի տախտակս քարեղէնս, այլ՝ ի տախտակս սրտի, ոչ՝ գիր դատապարտութեան, այլ՝ գիր որդեգրութեան: Վասն որոյ Աւետարան անուանէ զսա, զի ունի աւետիս՝ զպատժոց ազատութիւն, զմեղաց թողութիւն, զարդարութիւն, զսրբութիւն, զորդեգրութիւն, զժառանգութիւն, ընդ Որդւոյն Աստուծոյ ազգակցութիւն: Եկեալ տայ աւետիս, եթէ Աստուած յերկրի եւ մարդիկ յերկինս՝ խառնուրդ հրեշտակաց եւ մարդկան: Երկայն պատերազմ քակեալ Քրիստոսի եղծեալ եւ զհանդերձելոց բարութեանցն առեալ յուսով զաւետիս: Վասն այսր ամենայնի կոչէ Աւետարան:

Արդ, բաժանէ զազգահամարն յերիս կարգս յԱբրահամէ ի Դաւիթ, զի առ սոսա եղեւ աւետիք աւրհնութեանցն, եւ ի Դաւթայ ի գերութիւնն, որ վասն մեղաց գրեցան: Եւ անտի խակ, զի յամենայն

1 Տե՛ս Յովհ. Բ 11:

2 Հմմտ. Յովհ. Գ 23:

© National Library of Armenia

կողմանց յայտնի արասցէ զգալուստ Նորա: [...][1] ուստի սկսաւ յայտնութիւն գալստեան Նորա եւ յորմէ ազգէ եւ ուր կատարեցաւ, եւ որչափ Աստուած խնամակալեաց նոցա ուխտեաւք եւ աւրինաւք եւ մարգարէաւք, խրատիւք բարեգործութեամբք, սպառնալեաւք գե-րութեամբ քա[...][2]աւք եւ ոչ կարաց դարձուցանել զնոսա ի չարեաց յԵգիպտ[ոսի], այնչափ զսքանչելիս եցոյց, մինչ խառնիճաղանճ ժողովուրդն եգիպտացւոց հաւատացին եւ ելին ընդ նոսա: Եւ խառնեցաւ ազգ նոցա եւ յանապատին յետ այն չափ սքանչելեաց որթուն եւ Բահաղիմա ծառայեցին եւ առ դատաւորաւքն միշտ ի կռապաշտութեան չէին: Մինչեւ յարոյց Աստուած զԴաւիթ արդա-րութեան թագաւոր եւ զտաճարն շինեաց եւ երգս նուագարանաց կարգեաց: Եւ ամենայն պայծառ զարդուք զտաճարն յարդարեաց, զի ի ձեռն այսպիսի պատարագաւք եւ հրաշալի երգաւք պարտեսցէ զմիտս նոցա՝ թողուլ զկուռս մեռելոտիս եւ պաշտել զԱստուած կենդանի: Եւ ոչ կարաց մերժել զնոսա յորթոյն պաշտամանէ: Այլ փոխանակ միոյն, որ յանապատին, երկուս որթս կանգնեցին ի Դան եւ ի Բեթեղ եւ ի չորեքդիմի պատկերին Մանասէի տաճարին, մինչեւ բարկացեալ Աստուծոյ ի սպառ կոտորեաց զնոսա եւ այրեաց զտա-ճարն, սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց, այլ առաւել հրաշագոր-ծեաց ի Բաբելովն, քան որ յԵգիպտոս, մինչեւ զարիւնարբու գազանն զՆաբուգոդոնոսոր հաւանեցուցանէր հնոցին հրաշիւք: Եւ դարձեալ ի կերպս գազանի փոխադրէր զթագաւորն, մինչ ի հարկէ խոստովան լինէր՝ հաւանեալ մեծի սքանչելեացն: Եւ բազում հրաշք ի ձեռն Դանիէլի գործեաց եւ այնպէս մեծազաւրութեամբ եւ բարձր բազկաւ հանէր զնոսա ի Բաբեղովնի ի ձեռն Կիւրոսի, մինչ բազումք ի բարբարոսացն ելանէին ընդ նոցա՝ լինել նոցա ի ծառայս եւ յաղախնայս: Որպէս ասէ Եսայի, թէ՝ «Եկեսցեն ի Քեզ այլազգիք մշակք եւ այգեգործք»[3], եւ թէ այր «բուռն հարցեն զդրաւշակէ միոյ հրէի եւ ասասցեն՝ տիրեա՛ մեզ, եւ ծառայեսցուք քեզ»[4]: Եւ այսպէս, մեծաւ յաղթութեամբ հանեալ սոսա(*), դարձեալ ի կռապաշտութիւն դառնային առ անա[...][5]իոքու եւ ոչինչ աւգտեցան այնչափ՝ զփորձ առեալ զաւրութեանն Աստուծոյ. զի եթէ ի կատարեալն այնչափ յանցանս գտանէր ի Յուդայ, որ նահապետն ազգին էր, եւ ի Դաւիթ

1 1 բառ

2 2-3 տառ

3 Հմմտ. Եսայի ԿԱ 5:

4 Հմմտ. Զաք. Ը 23:

5 2-3 տառ

եւ ի դատաւորն եւ ի թագաւորսն, ի մի՛տ առ, թէ ի խառնիճաղանճն զինչ ինչ մնայր, որ ոչ գործէին: Ապա ուրեմն միոյ կարաւտէին ամենայն արարածք Միածնին գալստեամբն: Քանզի տկարացան աւրէնք եւ մարգարէք ի բազում վաստակ աշխատեալք վասն մարդոյն փրկութեան եւ ոչ զաւրեցին փրկել զնա, այլ առաւել վիրաւորեցին անիծիւք եւ դատապարտութեամբ, որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Ամենեքեան ընդ անիծիւք էին» [Գաղատ. Գ 10]: Ապա ուրեմն մեծագունին կարաւտէին դեղից, որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Որ անհնարինն էր աւրինացն, որով տկարանայր մարմնով, Աստուած զՈրդին Իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ դատապար-տեաց զմեղս ի մարմնի իւրում» [Հռովմ. Ը 3], զի մարմինն այն, որ տկարացաւ ի մեղաց ապականութեամբ, ի ձեռն առ Աստուած միանա-լոյն զաւրասցի եւ յաղթեսցէ թշնամւոյն զաւրութեամբ Աստուածու-թեանն. զի զգեցաւ Տէր մեր զմարմինն, զի ինքն մարմինն ճաշակեսցէ զյաղթութիւնն եւ իմացեալ գիտասցէ զպարգեւսն. զի թէ Աստուած առանց մարմնոյ յաղթէր, զի՞նչ գովեստ լինէր Նմա: Եւ երկուցի յայտ արասցէ, թէ ոչ նախանձելով ինչ նախանձեցաւ ընդ Նմա զառաջինն լինել Նմա Աստուած: Զի, աՀաւասիկ, այս մեծ է, որ խոնարհեցաւ Նովաւ, քան զայն, որ մինչդեռ մեծ եւ փառաւոր էր, բնակեալ էր ի Նմա, եւ վասն այսորիկ՝ «Ես ասացի,- ասէր,- անաստուածք իցէք» [Եփես. Բ 12]: Արդ, եկն Բանն եւ զգեցաւ մարմին, զի այնու, որով ըմբռնին, ըմբռնէ, եւ այնու, որ ոչն ըմբռնին, ապստամբեսցէ մարմինն յըմբռնելեաց անտի իւրոց, զի Տեառն մերոյ արժանի էր լինել նոսա հանգիստ ամենայն [...][1]աց, զի առ Նա ժողովեսցեն եւ տեղի ժամանակ ելից [...][2] խորհրդոց, զի ամենայն տեղեաց առ Նա ընթասցին եւ ժողովեալ ամենայն առակաց, զի յամենայն մարդոյ թուեցեալ վերասցին եւ ի վերայ Նորա եւ, այն հանգուցեալ, դադարեսցեն, զի այս է իմաստութիւն: Զի յանկանել այնորիկ, որ անկաւն, անկաւ ընդ նմա այն, որ յարուցանելոցն է զնա: Եւ քանզի երէց էր մարմինն Ադամա, քան զչարչարանսն, վասն այնորիկ մերկացաւ նա զչարչարանսն, զոր զգեցաւ, քան զյաւելուած իմն տկարութեան եղեն ի վերա[յ] առողջ բնութեանն: Արդ, զառողջ բնութիւնն, որ զառողջութիւնն իւր կորոյս, զգեցաւ Տէր մեր, զի Նովաւ գտցէ զառողջութիւն առ[եալդն*] բնութիւն նորա: Զի թէպէտ սուրքն աւազակաց յԱնանայ խոցոտեցին, սակայն դեղք Բարերարին փութացան կեցուցանել զմեզ: Պատեցան Նովաւ պատանք ձրի, քանզի

1 2-3 տառ

2 4-5 տառ

© National Library of Armenia

եւ Հարուածք Նորա ձրի են, զի ոչինչ մեղաւ Նա սատանայի, որ էհարն զՆա: Նա եւ ինչ ոչ Բարբարին, որ բժշկեաց զնա: Ճմչողն իշոյն ծնաւուին կատարեաց զքաղումս, այլ ուժն Եւայիւ կատարեաց զամենայն ազգս Ադամայ: Արդ, առ Տէր մեր զայս զէն, որով յաղթեաց ախոյեանի, եւ պարտաւորեացաւ աշխարհ, եւ էջ ի մարտ պատերազմի եւ մարմնովն, որ ի կնոջէն, յաղթեաց աշխարհի, յաղթեալ պարտեցաւ ախոյեանն: Մինչդեռ Եկեղեցի ի ծածուկ էր, խորհուրդք քարոզէին զՆա, իբրու Ինքն առ կայր, այլ իբրեւ ինքն Եկեղեցի [յ]այտնեցաւ, դարձաւ սկսաւ թարգմանել զխորհուրդսն [...][1] թարգմանիչսն Իւր, որ վասն յայտ[ն]ութեան անդ Նորա լռեցին:

[Ասաց]ուք[2] այսուհետեւ ի բանս Աւետարանին, որ ասէ, թէ՝ [...][3] այսպէսն, քանզի ասաց, թէ Յակոբ ծնաւ Յովսէփ՝ զայրն Մարիամու, որում խաւսեցեալ էր զԿոյսն, որ ծնաւ զՔրիստոս: Զի մի՛ ասիցեն լսողքն, եթէ ի Յովսէփայ իցէ մանուկն, բառնայ զայսպիսի կարծիս՝ յայտ առնելով զյեղանակ ծննդեանն՝ ասելով, եթէ՝

«Մինչ չեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգոյն Սրբոյ» [Մատթ. Ա 18]:

Նաեւ հեթանոսաց իմաստունք առասպելաբանեն, թէ չաստուածք նոցա խոնարհեցան ի խառնումս ցանկութեան կանանց եւ ծնան աստուածորդիս: Կամեցաւ յերկոցունց կողմանց բառնալ զկարծիս, վասն այնորիկ ասէ՝ «ի Հոգւոյն Սրբոյ»: Բայց թէ ընդէր պիտոյ եղեւ խաւսն՝ այր ունել զՅովսէփ, պարտ է հանդիսանալ եւ յայտնի առնել փոքր ի շատէ՝ ըստ մերում կարի: Նախ՝ այն իսկ է, զի ի մէջ հրէիցն կին առանց գլխոյ անարգ էր, եւ թէ ինչ պատճառս վնասու գտանէին, դառն դահիճ եղեալ, առանց խուզիւ քարկոծ առնէին, իսկ որոյ Տէր գոյր, չէր ուրուք իշխանութիւն քննել զգործս նորա, բայց միայն՝ այր իւր, յորժամ տեսանէին զնա, զի առանց խուզիւ քարկոծ առնէին: Եւ պարտ էր Նմա ի Բեդղահեմ երթալ եւ անդ ծնանիլ յանտառին եւ անտի ի տաճարն գալ եւ դարձեալ ի յԵգիպտոս փախչել եւ դառնալ յանդրէն, որպէս գուշակեցին մարգարէքն: Զիա՞րդ մարթ էր Կուսին՝ անտերունջ շրջել ընդ այս ամենայն: Եւ միւս պատճառն Բարսեղ յայտ առնէ, թէ առ ի բազումն չարին կոչեցաւ նա այր Կուսին, զի յորմէ հետէ լուաւ նա յԵսայեայ, թէ՝ «Ահաւասիկ Կոյսն յղասցի» [Եսայի Է 14]:

1 1 բառ

2 3-4 տառ

3 1-2 բառ

Ցայնմ աւրէ հետէ որսայր զԿոյսն եւ արկանէր ընդ մեղաւք կամ ընդ պատժովք: Ցայսմիկ կուրացաւ նա եւ ոչ ծանեաւ, թէ կուսութեամբ ունի զյղութիւնն, որպէս ասաց ցՅոբ, թէ՝ «Մի՛ տեսցէ զնա [զարուսեակն] անդեղ» [Յոբ Գ 9], եւ Սողոմովն, թէ՝ «Հետս ուձի մի՛ գծեսցէ ի վերայ [վիմի]» [Առակ. Լ 19]: Դարձեալ եւ այլ խորհուրդ բարձրագոյն եւս [Նկարես]ցուք, զի Եկեղեցի փոխանակ դրախտին շինեցաւ վասն երկրորդ Ադամայ, զի աւրհնութիւնն, որ ի դրախտին՝ աճել եւ բազմանալ անախտաբար, աստ կատարեսցի ի ձեռն երկրորդիս Ադամայ, զի չէր մարթ լրոյն եղծանել, զի այն աւրհնութիւնն անիծիւք ապականեցաւ ի մեղացն: Արդ, որպէս էին ի դրախ[տ]ին Ադամ եւ կինն՝ մերկ ի ցանկութեանց եւ ոչ ամաչէին, զի անմեղք էին, զի ամաւթ եւ երկիւղ մեղաց մտին, զի լուեալ զձայն գնալոյ Տեառն ի դրախտին եւ երկեաւ, զոր ոչ էր կրեալ յառաջ, եւ թաքեաւ յամաւթոյն, զի մերկ էր ի գործոց առաքինութեան եւ անմեղութեան: Սոյնպէս եւ Յովսէփ եւ Մարիամ ի դրախտի Եկեղեցւոյ մերկք ի մեղաց եւ առանց խղճի եւ ամաւթոյ, զի ոչ գիտէին զցանկութիւն, որպէս ասաց աւետարանիչն, թէ՝ «Ոչ գիտէր զնա»: Արդ, որպէս անդ ամաւթ չարին եղեւ ուձն զխորհուրդ, սկզբնաչար ուձին անկելոյ ի բարձանց արկ յականջ Եւայի զդեղ մահուն եւ կապեաց զնա ցանկութեամբ մահուն եւ արտաքսեաց անիծիւք ի դրախտէն եւ ի կենաց փայտէն եւ որոշեաց յԱստուծոյ: Սոյնպէս եւ աստ Գաբրիէլ, փոխանակ ուձին, գայ առ կոյսն՝ բերելով զաւետիս կենաց ի բարձանց: Եւ, գտեալ զնա ի բոցեայ յառնէն, արկանէ ընդ ականջն նորա զկեանսն, որ բղխեաց ի Հաւրէ: Եւ եկ լուծաւ յարգանդ Կուսին՝ անդ, ուր անէծք մահին, եւ արմատացան՝ բերելով զպտաւղ մահուն, զի ջրեսցէ զարմատ անիծիցն եւ ապականեսցէ զպտղաւղ մահու նորա: Եւ զի եկն Գաբրիէլ առ Կոյսն աւրհնեալ, որ կարճեալ էր զլսելիսն իւր ի հրապուրանաց պատրանաց նենգաւորին, զի մի՛ անկցի ի բախանս ալեաց նորա. զի գիտէր, թէ զինչ անց ընդ առաջին Կուսի, որ ունկնդիրս խրատու նորա: Զի Մարիամ Կոյս սուրբ հիմն է նորոյ աշխարհիս, զորոյ ոչ քա[յ]քայեաց, արարեն զգիրն զճշմարտութիւն նորա: Վասն այսորիկ առաքեցաւ առ նա հրեշտակն բարձանց եւ աւետարանեաց Նմա վասն նոր ծննդեանն, զի բնութիւն նորա սուրբ էր ի չարին [...][1]: Որպէս մորենին այն առ Մովսէսիւ, որում ոչ ոք երբէք պաշտաւն պղծութեան մատոյց եւ ոչ դրաւշեալ պատկեր ի նմանէ նկարեցաւ: Եւ ոչ դիւթին կախարդութեան հմայից ի նա սերմանեցաւ վասն տկարութեան բնութեան

1 1 բառ

© National Library of Armenia

նորա, որ էր աւրինակ խոնարհութեան Կուսին, յորում ոչինչ ախտ չարութեան բանեարկուին ի նմա գծեցաւ: Վասն որոյ եղեւ այս[1] տեղի բնակութեան Բանին, զի Մնունդ է Նա զարմանալի, որ ոչ թարդմանի, եւ Նովաւ աւարտին ամենայն մարգարէութիւն մարգարէից, եւ ստուգին քարոզութիւնք առաքելոցն: Եւ ասէ հրեշտակն՝ «Ողջո՛յն քեզ, աւրհնեալ դու միայն յամենայն կանայս» [Ղուկ. Ա 42], որ անիծեցան Եւայէ եւ այսր, զի ի ձեռն նորա մտանէ խաղաղութիւն յարտածս, եւ բառնայ թշնամութիւն, որ մտին յԵւայէ, եւ մտանեն կեանքն, որ կլանեն զմահ Եւայի, եւ խաղաղութիւն, որ բառնայ զթշնամութիւն, եւ աւրհնութիւն, որ չնչէ զանէծս եւ լուծանէ զամենայն դաժանութիւն: Բայց Կոյսն, իբրեւ լուաւ, ի հիացման մեծի եղեւ, զի իբրեւ հուր յամենայն անդամս նորա վառեցաւ, եւ թնդեալ սկսան ամենայն խլրտմունք խորհրդոց նորա. զի հարցեն, թէ կին չէիցէ ողջոյնն այն, որ մի ի դարուց անտի ոչ անկաւ յունկն կնոջ, զի ճաշակ կենաց վայլէր ի նմա, զի գուշակէր յԱստուծոյ, որ ծագէր արգանդ նորա, զի իբրեւ զփայլական զգեցաւ ի նա: Ցայնժամ դարձոյց [...][2] առ հրեշտակն, զի ստուգեսցէ զճշմարտութիւն նորա, զի լուաւ, թէ արքայ է եւ վախճան ոչ ունի, այլ ոչ եցոյց, թէ ի խորութենէ, թէ ի բարձրութենէ: Վասն որոյ պահանջեաց ի նմանէ, թէ՝ «Ուստե՞ գիտացից զայդ, զի զայր ոչ գիտեմ»: Ցայնժամ հրեշտակն մեկնեաց յայտնապէս, թէ ի նմա կախեալ կան կեանք ամենայն արարածոց [...][3] ետ գաս նորա, նմանէ սերմանն, որ անկան ի յերկիր, զի մէկն [...][4] Բանին նման անձրեւոյ, առանց որոյ ոչ բուսանի հաս, անկաւ ի նմա պատգամս՝ իբր սերմ: Եւ էջ մեկնութիւն Նորա իբրեւ զան[ձր]ն, եւ յայտնեցաւ ճշմարտութիւն Նորա իբրեւ հաս, եւ կերակրեցան հնձողք ի կենաց հացէ անտի:

Ասէ՝ «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանասցի քեզ» [Ղուկ. Ա 35]: Եցոյց, եթէ Որդի է Նա Բարձրելոյն, եւ նա ասէ՝ «Ահաւասիկ աղախին քո եղիցի ինձ ըստ բանի Քումմ» [Ղուկ. Ա 38]: Եւ այս հնազանդութեան խզեալ եւլոյծ զկապանս անհնազանդութեան Եւայի: Եւ «մինչ չեւ եկեալ առ միմեանս, գառաւ,- ասէ,- յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»: Ոչ եթէ Հոգին Սուրբ ստեղծ զմարմինն, եւ ապա Բանն բնակեաց ի նմա՝ ըստ կարծեաց

1 ձեռագրում այ

2 1 բառ

3 1 բառ

4 3-4 տառ

երկաքնակացն, այլ միայն մաքրեաց զկոյսն յամենայն խլրտմանց մարմնոյ: Եւ ապա Բանն, մտեալ ի մաքուր արգանդին, յարենէ Կուսին մաքրեցելոյ շրջաստեղծեաց Իւր մարմին՝ միացեալ յերկուց անչփոթ խառնուած, եւ անդէն փոխաշրջէր յանապականութիւն: Որպէս շրջեաց զկուրն ի գինի ի մէջ թակուկացն, զի զվեց թակոյկան յայտնիս միոյ Կուսին, որ անյայտն էր, վկայս կացոյց. զի ոչ ըստ բնութեան ի մէջ որթուն շրջեցաւ կուրն ի գինի, այլ արտաքոյ բնութեան՝ ի մէջ թակուկացն: Այսպէս եւ ոչ ըստ նմանութեան այլոց տնկեցաւ որթն ճշմարիտ յարգանդի անդ ամուսնութեան, այլ՝ արտաքոյ բնութեան ի վեր, քան զա[յ]ս եւ զիմաստս, զի որպէս զառաջին Ադամն ստեղծ ի կաւոյ եւ յաւրհնեալ եւ յանապական երկրէ, եւ ոչ պիտոյ եղեւ գործակցութիւն ամուսնութեան, այլ անապականաբար ի պատկեր Աստուծոյ ստեղծաւ յԱրարչէն: Այսպէս եւ երկրորդ Ադամն առանց գործակցութեան ամուսնութեան ստեղծաւ աւրհնեալ Կուսէն: Վասն այնորիկ հրեշտակն նախ եբարձ զանէծսն, որ յ[Եւ]այէ, զի [...][1] լիցի աւրհնեալ երկիր բանաւոր առ ի յառնուսն երկրորդս Ադամայ: Եւ զի զառաջին Ադամն եկն նա բժշկել, վասն այնորիկ ոչ ստեղծ զմարմին զայն յերկրէ կամ յայլ իմիք, եւ [ի] նմի[ն] այլ ոմն Ադամ իցէ, եւ այլ ոմն՝ Փրկիչ նորա, այլ ի նմին զանգուածոյ ստեղծանէ զմարմինն զայն, զի նոյն իցէ արմատն եւ պտուղ նորա անմահացուցիչ:

Եւ զի ասաց աւետարանիչն, թէ՝ «Ի Հոգւոյն էր ծնունդն» [Մատթ. Ա 20], զի մի՛ անհաւատ թուիցի լսողաց, ածէ զՅովսէփ վկայ բանից իւրոյ. զի թէ ոչ էր ի Հոգւոյն, ոչ հաւանէր այրն այն, որ վերագոյն էր արդարութեամբ, քան զաւրէնս[2], վերակացու լինել նմա: Եւ հրեշտակն փարատէր զերկիւղն, զի ի մեծի տարակուսի կայր եւ ոչ գիտէր զինչ գործիցէ, զի յայտնել մահ գործէր Կուսին, եւ պահել մեծաւ խղճիւ տագ[ն]ապէր զնա: Հաճէր հաւանեցուցանէր Մարիամ զՅովսէփ վասն յղութեան իւրոյ, թէ «ի Հոգւոյն է»: Պատմէր զաւետիս հրեշտակին եւ զյղութեան եղիսաբեթի եւ զիսաղալն Յովհաննու եւ զպապականձումն Զաքարիայի: Եւ այս ամենայն վկայութիւնք յայտնի էին, եւ զի տեսանէր զերեսս կուսին զուարթ եւ առանց ամաւթոյ, եւ երբէք ոչ ետես ի նմա խորհուրդ լկտութեան, խորհեցաւ ի միտս իւր, թէ վերագոյն է Մնունդն այն, եւ ոչ արժան է ինձ հայր անուանել Նմա, կամ գուցէ կորուսանիցեմ զանուն

1 1 բառ

2 ձեռագրում զաւրէսն

© National Library of Armenia

կուսորդւոյն, եւ ծածկի ի բազմաց հրաշափառ Մնունդ Նորա: Արդարութիւն զայն համարեցաւ ի բաց կալ ի նմանէ ի մեծի ակի եղեալ: Վասն այնորիկ ասաց հրեշտակն, թէ՝

«Մի՛ երկնչիր, զի ծնունդ Նորա Փրկիչ աշխարհի է, զի Նա փրկեսցէ,- ասէ,- զժողովուրդ Իւր ի մեղաց իւրեանց» [Մատթ. Ա 21]:

Վասն այսր ամենայնի խորհեցաւ արդարութեամբ արձակել զնա, զի թէ գիտէր, թէ չէ ի Հոգւոյն, ոչ էր նմա արդարութիւն լուծեալն արձակել ըստ հրամանի աւրինացն. «Զեռք քո,- ասէ,- նախ [...]ն արասցեն քարկոծել զնա»[2], զի էր արդար աւրէնքն գ[...]ծ ուղիւ ըստ գործոցն հատուցանել: Եւ ընդէ՞ր ոչ յառաջ յայտնեցաւ հրեշտակն կամ Մարիամ, այլ երկիւղէր միգուցէ, ո[ր] հաւատայց, եւ պատժե[ս]ցի իբր Զաքարիան: Այլ յորժամ ի խոյզ եղեւ իրացն՝ յահէն ըմբռնեալ, ապա հրեշտակն փարատէր զերկիւղն. «Մի՛ երկնչիր,- ասէ,- զի որ ի նմանէ ծնեալ է, ի Հոգւոյն է»: Եւ չասաց, թէ յղացեալն, այլ՝ ծնեալն, յայտ արար զկատարելապէս առնուլ զմարմինն, եւ ոչ որպէս մերս ի խ աւուր կատարի ամենայն զգայութեամբ, այլ՝ ամենայն պիտոյիւք առ զմարմինն կատարեալ զգայութեամբ և՛ չնչով, և՛ հոգւով անդ ի ստեղծմանն, որպէս ասէ սուրբն Բարսեղ:

«Մնացի,- ասէ,- Որդի, եւ կոչե[ս]ցես զանուն Նորա Ցիսուս» [Մատթ. Ա 21]:

Այսու հաղորդ արար զՑովսէփ ծննդեանն այն, որ ոչ ինչ ունէր հաղորդութիւն անուանադրութեանն, արար զնա Տէր, զի հաւրէ աշտիճան կոչել անուանս որդւոց: Արդ, որպէս Աստուած հաղորդ արար զԱդամ արարչութեանն յանուանակոչութեան եղելոց, որ ոչ ինչ էր կցորդ արարչութեանն, սոյնպէս եւ աստ ասէ՝ «Կոչեցաւ զանուն Նորա Ցիսուս», զՈրոյ անուանակոչութիւն Մովսէս նկարագրեաց յառաջագոյն. մինչ հանդերձեալ էին ժողովուրդն մտանել յերկիրն աւետեաց, փոխեաց զՈվսէէ Ցեսու, զի նա փրկեսցէ զժողովուրդն յամենայն պատերազմաց, իսկ սա՝ ոչ ի պատերազմաց, այլ՝ ի մեղաց եւ ի դ[ժո]խոց: Եւ այսու յայտ արար, թէ Աստուած է ծնեալ Մանուկն, զի Աստուծոյ միայն է ի մեղաց ազատել զմարդիկ: Նա յետ վախճանին Մովսէսի մկրտեաց ի Ցորդանան եւ ժառանգեցաւ զերկիրն աւետեաց: Եւ այս յետ վախճանի աւրինացն մկրտեաց ի Ցորդանան եւ ժառանգեցոյց զարքայութիւնն: «Նա փրկեսցէ,- ասէ,-

1 3-4 տող

2 Հմմտ. Բ Օրէն. ԻԲ 21:

3 3-4 տող

զժողովուրդ Իւր ի մեղաց»: Եւ անդէն կնքեաց բան իւր վկայութեամբ մարգարէին. ասէ՝

«Այս ամենայն եղեւ, զի լցցի, որ ասաց[եալն ի Տեառնէ [...]՝ արէն, այլ յԱստուծոյ՝ ի ձեռն եսայեայ. «Ահաւասիկ կ[ոյսն յղասցի եւ ծնցի Որդի]»՝ [Մատթ. Ա 22-23] ամենայն ասելովն: Միով բանիւ յայտ առնէ զանբաւ չնորհսն Աստուծոյ ի մարդիկ հեղեալ, զի թէ Որդին Աստուծոյ մարդ եղեւ, ապա ամենայն ինչ տուաւ մեզ, ազատութիւն ի մեղաց, որդեգրութիւն, արդարութիւն, երկնից արքայութիւն, յԱստուած միաւորութիւն: Եւ այս ամենայն անթիւք պարգեւք տուան մեզ, զի լցցի ասացեալն ի Տեառնէ: Եւ մի՛ կարծիցես, թէ այժմ ինչ եղեւ. անդուստ ի վերուստ երկնէր գայր խորհուրդ մերոյ փրկութեանն: Որպէս առաքեալ ի բազում տեղիս ջանայ յայտնի կացուցանել, թէ անսկզբնաբար էր նկարագրեալ առ Աստուծոյ մեր փրկութիւնս եւ ծածկեալ յամենայն ազգաց առ Աստուծոյ, որ զամենայն առնէ: Արդ, զբանէ, նայեաց, յուշ առնէ նմա, զոր միշտ ընթեռնոյր, զի թէ մոռացի կամ թերացի ի բանէն, որ հաստատեցի, զի թէպէտ բերանն չեսայեայ[2] էր, որ խաւսէր, այլ բանն Աստուծոյ էր, որ ազդէր ի նա:

«Կոչեսցես զանուն Նորա Էմանուէլ» [Մատթ. Ա 23]:

Զի թէպէտ եւ ոչ եղաւ այս անուն, այլ յորժամ իրքն արդեամբք ի գլուխ ելին, չէր պիտոյ անուանակոչութիւնն: Վասն որոյ, հաւանեալ Բանին Ցովսէփայ,

«Աւ,- ասէ,- յինքն, եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զՈրդի» [Մատթ. Ա 24]: Արդ, «մինչ»՝ ոչ երբէք սահման ինչ է, այլ Գրոց սովորութիւն է. ասէ՝ «Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշխարհի» [Մատթ. ԻԸ 20]: Դարձեալ՝ «Մինչեւ զիցին թշնամիք ի ներքոյ ոտից Նորա» [Սաղմ. ՃԹ 1]: Բայց եւ այլ իմն խորհուրդ մեզ յայտնէ, զի յաւրէ, յորմէ բնակեաց Բանն ի նմա, բարձաւ ամենայն խորհուրդ մար[դ]կութեան յերկոցունց, զի մտածութիւն անգամ խորհրդոց ոչ ծնանէր ի նոսա, զի որպէս գազանաց չարութիւն բարձաւ ի տապանին ի կենդանեացն՝ ի պատճառս նոյն այն, որ անձաւց զամենայն խլրտմունս բնութեան մարմնոյ ազատութեամբ իւրով: Սապէս բռնութիւն այնորիկ, որ բնակեալ էր յարգանդ Նորա, սանձաւց զցանկութիւն սոցա, մինչեւ ծնունդն իւր իբրեւ կատարեցաւ սահման

1 1-2 քառ

2 ձեռագրում չնտտնվ

© National Library of Armenia

բռնութիւնն ի ծնանելն, զմինչն եղ ի միջի, եւ յայնմհետէ ազատութեանն իւրեանց էր սրբութիւնն:

(շարունակելի)



ՎԱՐԴ ՍՐԲՈՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՍԱՄՈՒԷԼ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ,
ԷԴՈՒԱՐԴ ՍԱՖԱՐԵԱՆԻ ԵՒ
ՄԱՐԹԱ ԱՐԱԲԵԱՆԻ

© National Library of Armenia

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ, ՆՐԱ ՀԵՏ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԱՐՈՒԳԷ ԾԳՆԱՒՈՐԻ ՎԱՐՔԸ

(որտեղ յիշատակւում է նաեւ նրանց տօնակից բարեկամ պարսից եպիսկոպոս սուրբ Մելիտոսը)[1]

Եկեղեցու լուսաւորների մէջ մեծը, մեր սուրբ Լուսաւորչի նմանակիցն ու ազգակիցը՝ Յակոբը՝ մականուանուած Զգօն, ըստ այլոց՝ Իմաստուն եւ Մեծ, պարթեւական ազգից էր, մեծն Գրիգորի Հօրաքոյր Խոսրովուհու՝ Անակի քրոջ որդին:

Արդ, երբ Անակ Պարթեւն իր ողջ ընտանիքով բնաջնջուեց Հայոց Խոսրով արքայի՝ Տրդատի Հօրը դաւելու պատճառով, մանուկ Գրիգորի պէս նրա ցեղակից Յակոբը եւս դայեակների ձեռքով փախցուեց Կապադովկիայի Կեսարիա քաղաքը եւ այնտեղ դայեակի մօտ սնուեց Հաւատքով եւ բարեպաշտ վարքով: Իսկ միւս մանուկը՝ Լուսաւորչի եղբայրը՝ Սուրէն անունով, մանկաբարձների կողմից Պարսկաստան տարուեց և դաստիարակուեց Խոսրովուհու՝ Յակոբի մօր ձեռքի տակ, որի պատճառով նախնիների մէջ կարծիք է եղել, թէ Սուրէնը Յակոբի եղբայրն է, կամ թէ Յակոբն է Լուսաւորչի եղբայրը: Յակոբը Սակդէն անունով մի մեծահասակ քոյր ունէր, որը նրա Հետ էր ապրում Կեսարիայում: Երբ փոքր-ինչ մեծացաւ, քոյրը բռնադատելով նրան իր Հետ տարաւ Պարսկաստան, որտեղ, ամուսնանալով, ծնեց Հրաչեային: Եւ ինչպէս ասւում է, թէ Սուրէնը թագաւորել է Ծենաց երկրում[2] եւ Դարբանդում[3], այնպէս էլ Հրաչեան թագաւորել է սկիւթացիների[4] կամ գոթերի[5] վրայ: Իսկ Յակոբը, մեծանալով, չկամեցաւ մնալ պարսկական արքունիքում, այլ, մանկութիւնից ստացած ախորժելի սնունդի՝ աստուածային պատուիրանների համար Հոգ տանելով, թողեց իր ազգականներին ու աշխարհի բոլոր առարկայապաշտութիւնները եւ, իբրեւ անհայր, անմայր եւ օտար, ընտրեց միայնակեցութիւնը: Այս նպատակով գնաց Ասորեստանի եւ Ասորական Միջագետքի կողմերը, առանձնացաւ մարդկանց անծանօթ լեռներում ու անտառներում՝ ոչ Հեռու Մծբին քաղաքից:

Այնուհետեւ Յակոբն առանձնացաւ անապատում: Նա բնակւում էր բարձրաբերձ լեռների կատարներում: Գարնանը, ամռանը եւ աշնանը անօթեւան էր մնում՝ Հովանի ունենալով միայն անտառներն ու երկնքի ծածկոյթը, իսկ ձմռանը բնակւում էր փոքրիկ խուղի նման մի այրի մէջ: Նրա կերակուրը ոչ թէ աշխատանքով սերմանուածներից ու տնկուածներից էր, այլ՝ ինքնաբոյս տնկիներից, քանզի Հաւաքում էր վայրի ծառերի պտուղներ, բանջարեղէն եւ դրանցով բաւարարւում՝ Հրաժարուելով կրակի ծառայութիւնից: Հանդերձն այծի կոշտ մազեղէնն էր, թիկնոցը՝ նոյնպէս, քանզի ընդունայն էր Համարում բուրդը:

Եւ, այսպիսի խստամբերութեամբ ճնշելով մարմինը, Հոգով պարարտանում էր, մտքի տեսողութիւնը պայծառացնելով՝ Աստուծոյ Հոգուն անբիծ Հայելի էր լինում եւ, ըստ առաքեալի, ինչպէս հայելու մէջ տեսնելով Տիրոջ փառքը, նոյն պատկերով նորոգւում էր փառքից փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգով) [Բ Կորնթ. Գ 18]: Այսպէս, Հանապազօրեայ աղօթքով աստուածամերձ ընտանութիւն ձեռք բերելով, ինչ որ խնդրում էր Աստծուց, անմիջապէս տրւում էր նրան: Ուստի եւ մարգարէաբար կանխապէս իմանում էր լինելիքի մասին եւ Սուրբ Հոգուց ընդունում էր սքանչելագործ զօրութիւնը: Եւ ո՞վ կարող է պատմել Աստուծոյ սուրբի ողջ տաժանակեցութիւնը, քանզի երբ ծերացած Հասակում վախճանուեց, մարմնաւոր լինելով՝ անմարմին Համարուեց: Նրա տեսքը Հրեշտակի նման էր՝ պայծառ, շնորհալի, ցամաքած: Նա երբեք գրաստի վրայ չէր նստում, այլ ողջ կեանքը բոկոտն ապրեց: Նրա՝ միտքը, մշտապէս դեգերելով, գտնւում էր սերովբէների բանակներում՝ մտքի աչքը չհեռացնելով Քրիստոսի դէմքից: Եւ այնքան անհատնում էին նրա մտածումներն Աստուծոյ մասին, որ դեւերի ոհմակը, պաշարելով, անզբաղ չէր գտնում նրան, որպէսզի մօտենար: Ապա նրան մարգարէութեան Հոգի տրուեց: Իսկ նրա կենցաղավարութիւնը՝ լեռների կատարներում ու ժայռերի նեղ ծերպերում, նաՀատակութեան վկայական Հանդէս էր դառնում: Եւ Աստուած մեծ ներքին մխիթարութեամբ սփոփեց նրա սիրտը՝ տեսնելով նրա սոսկալի ճգնութիւնները, սուրբ մարմնի անխնամութիւնը եւ անծածկոյթ վայրում ցրտի ու շոգի պատճառած այն դժուարութիւնները, որոնց պատճառով Հանապազ մեռնում էր: Իսկ նա իր աղօթքներում այսպէս էր ասում.

«Մի է Աստուած՝ ամենալուսաւոր, ամենակալ, Մի է [Նրա] իշխանութիւնը՝ ամենայն կարիքից զերծ, եւ զարմանալիների զարմանքն է, քանզի ոչնչից ստեղծեց բոլոր գոյաւորներին: Մի՞թէ Քեզանից բացի ուրիշ աստուած գոյութիւն ունի, ո՛վ Հզօր, Փրկիչ, Ազատարար, Քաւիչ, Բժշկապետ, Անոխակալ, Բարի եւ Խնամակալ ոչ միայն արդարների, այլեւ՝ մեղաւորների եւ բոլոր գոյաւորների: Ո՛վ Մեծդ ու Ծաւալիցդ, որ մեռար մեղաւորների համար, եւ ո՛վ Անկարիքաւորդ, որ խաչի վրայ մի բաժակ ջրի կարօտ եղար, ու ոչ

1 Այս եւ յաջորդ վարքերը որոշ կրճատումներով աշխարհաբարի են վերածուած «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց» ժողովածուից (Վենետիկ, 1810):

2 Ծենաց երկիր — Չինաստան (սակայն համանուն երկրամաս է եղել Բարձր Հայքի հիւսիսում)

3 Դարբանդ — գիւղ Սիւնիք նահանգում

4 սկիւթացիներ — մերձսեւծովեան ժողովուրդ

5 գոթեր — արեւելագերմանական ցեղեր

© National Library of Armenia

ոք չտուեց: Եւ ոչ միայն այսքանը, այլեւ ջրի փոխարէն Քեզ, որ ովկիանոսների ստեղծողն ես, լեղի եւ քացախ մատուցեցին: Ո՛վ Դու, որ անհաս մեծութիւն ես, եւ անարգ յետին ծառան ապտակեց Քեզ: Դու անմար արեւ ես, եւ ձորձ գցեցին սուրբ գլխիդ: Դու նախքան արարածների լինելութիւնն ամէն ինչի մասին մէկ առ մէկ գիտեցողն ես, եւ խաչ հանողներն ասում էին, թէ՝ «Մարգարէացի՛ր, ո՛վ Յիսուս, թէ ո՞վ էր, որ հարուածեց Քեզ»: Դու, որ անէծքով կապուածների արձակողն ես, եւ Քո անկապելի ոտքը, որը ծովը չկարողացաւ թրջել կամ սուզել, ահա՛, հրեաների կողմից բեւեռուել է խաչին: Դու, Ադամի կողոսկրը վերցնելով, կնոջը ստեղծեցիր, եւ ահա՛, Քո կողքից խոցուեցիր, սակայն խոցողին դարձեալ թողութիւն շնորհեցիր, որովհետեւ նա պատռուածքից տեսաւ Մարմնիդ վարագոյրով շղարշուած աստուածային լոյսը: Այլեւ պատանի մէջ ես փաթաթւում եւ, որպէս Պիղատոսի կողմից մահուան դատապարտուած, յանձնւում ես Քո ստեղծած հողին: Դո՛ւ, Աստուա՛ծ, մշտնջենաւոր լինելով՝ այնքան ես համբերում մեզ փրկագործելու համար, որ մինչեւ իսկ մահուան անպարտականդ մահուան խաչի վրայ զոհում ես Քո Անձը: Իսկ ինձ, որ դատապարտուած եմ մեղքերով, թոյլ չես տալիս լեռների կատարներում սառնամանիքից ոչնչանալ, այլ իմ հոգու սպանողիս ողորմում ես եւ բարեխառն ամպով հովանի անում: Մի՛ խնայիր ինձ, Տէր, որովհետեւ մարմինս հոգուս ներհակ է եւ Քեզանից հեռացնող ու Քո բարերարութիւններին հակընդդէմ»:

Մինչ սուրբ Յակոբը լեռան կատարին այս աղօթքն էր անում, նրան յայտնուեց Տէրն Իր հրեշտակներով, որոնք փարուեցին երանելու սուրբ պարանոցին եւ ասացին.

–Ո՛վ երջանիկ, խնայի՛ր մարմինդ, քանզի տկար է եւ ոչնչով չի մեղանչել: Իսկ մենք աղաչում ենք Տիրոջը քեզ՝ Աստուծոյ սուրբիդ համար:

Եւ Տէրն այսպէս ասաց հրեշտակներին.

–Ահաւասի՛կ, տեսնո՞ւմ էք, անմարմի՛ն հրեշտակներ, այս մարմնաւոր հրեշտակին, որ Իմ գութը շարժեց իւրաքանչիւր մարդու հանդէպ:

Իսկ Յակոբին ասաց.

–Իմ սիրելի՛ որդեակ, ահաւասիկ Ինձ ուղղուած քո խնդրանքները Քող կատարուեն:

Եւ սուրբ Յակոբը պատասխանեց.

–Քեմ խնայի իմ հոգեսպան մարմինը, մինչեւ որ կեանքս աւարտուի: Իմ կեանքի օրերում չպիտի յագենամ հաց ու ջրով: Զարմանալին

այն չէ, որ Դու մեծամեծ հրաշքներ ես գործում, քանզի Աստուած ես, այլ՝ այն, որ ինձ՝ մեղաւորիս, ողորմում ես:

Ապա Տէրն Իր հրեշտակների գնդի հետ վերացաւ երկինք, իսկ երկու հրեշտակների (որոնց յետագայում տեսաւ Կոստանդիանոս բարեպաշտ թագաւորը) հրամայեց պահապան կանգնել սուրբ Յակոբին:

Իսկ սուրբ Յակոբը Տիրոջ մեկնելուց յետոյ, լեռան կատարին արտասուելով, բարձրաձայն գոչում էր ողբալով: Եւ մինչեւ իսկ գազաններն ու թռչունները այդ բարձր աղաղակից հաւաքուեցին եւ ակնապիշ նայում էին սուրբին: Իսկ նա ձեռքով իւրաքանչիւրին հրամայեց գնալ իր տեղը, ապա ինքն իրեն ասաց. «Վա՛յ քեզ, տե՛ս, որ անասունները պահում են բնութեան սահմանուածը, իսկ դու ամբարտաւանութեամբդ փոփոխում ու այլանդակում ես: Արդ, ո՛ր խաւարն ես գնալու...»: Այսպիսի շատ այլ թերութիւններ էր վերագրում իր սրբամաքուր անձին եւ Տիրոջն այսպէս աղաչում.

«Տէր Յիսուս, օգնի՛ր որբացածիս, Դու, որ համբարձուեցիր Հօր մօտ: Ո՞վ պիտի օգնի ինձ, քանզի այժմ Եւայի օձը Քո՝ ինձ ուղղուած մխիթարական խօսքը լսեց եւ ինչպես նախաստեղծին, այնպէս էլ ինձ է սպասում: Քանի որ մարմին ունեմ, ուստի բազմաթիւ կորստաբեր զէնքեր գտնուեն սրանում, ինչպէս որ սուրբերից շատերին աշխատանքի պտուղներից անմասն թողեց եւ դեռեւս պատերազմում է: Եւ արդ, Տէ՛ր իմ, զարհուրում եւ դողդողում եմ նրա նետերից, քանզի որտեղ էլ սկսում եմ պահ տալ ինձ՝ Աստծուդ տաճարիդ, նա կամենում է յափշտակել, ինչպէս Ադամին: Օգնի՛ր ինձ, Տէ՛ր, եւ առաքի՛ր Քո Սուրբ Հոգին, Որը, հրեղէն Աստուածութեամբ իջնելով առաքեալների վրայ, ախտասպան հուր խմեցրեց, եւ, ըստ Քո խօսքերի, նրանք այլեւս այս աշխարհից չէին, քանզի նրանց միջի ախտը ոչնչացաւ: Բարերա՛ր Տէր, թող Քո Սուրբ Հոգին չհեռանա՛յ ինձանից, մինչեւ որ գամ Քեզ մօտ, որպէսզի նոր առագաստի պատմուճանը մաքուր մնայ, եւ թեւաւոր օձի աչքը չնկատի ինձ: Ինձ Քո պատուիրանները մինչեւ վերջ կատարե՛լ արժանացրու եւ Քո անուան համար, ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, ինձ զօրութի՛ւն տուր: Իսկ ես ի՞նչ պիտի տամ փոխարէնը, բացի այն, որ ճգնութեան բաժակը պիտի խմեմ եւ փառք տամ Քո անուանը այժմ եւ յաւիտեանս յաւիտենից»:

Ապա երանելին, մարմինը խոնարհեցնելով, ծնրադրում էր եւ գոհանում Տիրոջից, Ում տեսաւ բաց աչքերով: Եւ այն հրեշտակը, որ նրան իբրեւ պահապան տրուեց, մօտեցաւ ու քաղցրաձայն ասաց. «Ո՛վ երանելի Յակոբ, Տէրն այսպէս է ասում. «Քո աղօթքի խնդրանքները կկատարուեն, եւ այսուհետեւ հրաշագործ կլինես, քեզ առաքելական շնորհ կտրուի, եւ քո կեանքը հրեշտակների հետ կլինի, իսկ դեւերի խաբէու-

© National Library of Armenia

Թիւնները քեզանից բոլորովին կհեռանան»»: Այս լսելով սուրբ Յակոբ գոհութիւն յայտնեց Ամենասուրբ Երրորդութեանը: Եւ ողջ ամեան անց կացրեց երկարաձիգ աղօթքների եւ ծոմի մէջ՝ նմանուելով մեծն Մովսէս մարգարէին, որ Տիրոջ պատուիրանները ճգնելով ընդունեց: Քանզի Տէր Յակոբին էլ յետագայում պէտք է ազգերի պատգամատու դարձնէր՝ ի պարծանս Իր փառաւորեալ անուան:

Այնուհետեւ Տիրոջ հրեշտակի նման նա իջաւ այն լեռից՝ զիմելով Մծբին քաղաքի սահմանները՝ հանդիպելու սուրբ այր Մարուգէ կոչուած վանահօրը, որը հոգեւոս էր ու մարգարէութեան շնորհ ունէր եւ միայնացել էր մի քարայրում: Ծանապարհին ասորիները, ձայն տալով միմեանց, հաւաքուեցին նրա մօտ՝ իբրեւ լեռնակեաց ճգնաւորի: Իսկ նա անխօս անցաւ-գնաց դէպի Սաթիթմա կոչուած գետի ակունքը: Ապա քաղցրալուր բարբառով ձայնեց գետի այն կողմում՝ այգիներում աշխատող գիւղացիներին.

–Մվ այգեգործներ, որտե՞ղ է գտնւում այս գետի անցուղին:

Այգեգործները, տեսնելով նրա անշուք տեսքը, ծաղրելով պատասխանեցին.

–Ծգնաւոր մէկն ես, ջրերի վրայով գնալ չե՞ս կարող:

Այն ժամանակ սուրբը հանեց աղաբողոնը[1], նաւակ սարքեց եւ անցաւ գետի վրայով: Ապա աղաբողոնը գցեց ցամաքին, եւ ջրերի ցայտումից տաններկու արմաւենի առաջացաւ: Իսկ յիմարացած ականատեսները բոլորովին չզարմացան ու չճանաչեցին Աստուծոյ սուրբին: Դրանից յետոյ գնաց նրանց աշխատելու վայրը, ողջունեց եւ ասաց.

–Այդ ի՞նչ եք մշակում:

Նրանք ծաղրելով պատասխանեցին.

–Փուշ, ինչպէս Իսրայէլի այգում:

Եւ Յակոբն ասաց.

–Թող փշո՛տ մնայ, մինչեւ այգու Տէրը գայ:

Եւ որքան անմիջապէս փշաքեր դարձաւ, իսկ այն այգին, ըստ սուրբի խօսքի, մնաց փշոտած՝ առանց պտուղ տալու: Բայց նոյն որթի տերեւները, որպէս նշան, սաղարթաւորւում էին... Իսկ երանելին, ճանապարհ ընկնելով, հանդիպեց մի միայնակեացի, որի անունը նոյնպէս Յակոբ էր: Եւ որովհետեւ այդ այրը կորովի ճգնող էր, նրա մօտ քառասուն օր դադար առաւ: Այնուհետեւ եկաւ սուրբ Մարուգէին ողջունելու եւ նրա մօտ անցկացրեց ուրիշ օրեր եւս: Զրուցելիս սուրբ Մարուգէն ասաց, որ այդ կողմերի բնակիչներից շատերը Քէպէտեւ հաւատքի են եկել, սա-

1 աղաբողոն — թիկնոց

կայն նրանց մէջ կան նաեւ անհաւատութեան նշաններ, մինչեւ իսկ ծաղրում են Սուրբ Գիրքը, առաւել եւս՝ ջրհեղեղը եւ սուրբ Խաչը խորհրդանշող Նոյեան տապանի պատմութիւնը, քանզի ասում են, թէ նոյնիսկ տապանի կառուցման տեղն անյայտ է. սակայն տապանը գոյութիւն ունի, եւ ոմանք ասում են՝ Կորդուաց լեռներում է, միւսները՝ Մասիս լեռում է, որն Արարատեան գաւառում է գտնւում:

Այնժամ սուրբ Յակոբը, հրաժեշտ տալով սուրբ Մարուգէին, դժուարութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Խաչը խորհրդանշող Նոյեան տապանը՝ նրանից մի կտոր գտնելու եւ բերելու համար իր ամրոցի մօտ: Եւ ինչպէս որեւէ աստուածային գործ չէր կատարում առանց այն հրեշտակների մասնակցութեան, որոնք սպասաւորում էին իրեն, այնպէս էլ այժմ նրանց առաջնորդութեամբ հասաւ մինչեւ Արարատեան գաւառ: Բայց նրա ելքը Մասիս սար չկայացաւ, որովհետեւ երբ յոգնեց ու քնեց լեռան ստորոտում, Տէրը, խնայելով իր սիրելի սուրբ Յակոբին, կանխեց նրա վերելքը դէպի լեռան կատար, ուր գտնւում էր սառցապատ տապանը. այլ հրեշտակը, տապանից մի կտոր վերցնելով, դրեց սուրբի գլխատակին: Երբ Յակոբն արթնացաւ, հասկացաւ կատարուած խորհուրդը եւ գոհացաւ Աստծուց: Ապա, վեր կենալով, ուրախութեամբ վերադարձաւ՝ իր հետ բերելով օրհնուած փայտը, որը խաչի կերպարանք ունէր:

Երբ նա մօտեցաւ Արտամետ գիւղին, որ Մասիսի ստորոտում էր (Տոսպ գաւառում), ճանապարհին մի աղբիւր տեսաւ, իսկ աղբիւրի մօտ՝ լուացուող աղջիկների եւ կանանց, որոնք նրանից չհնազանդեցին ու չծանկեցին իրենց սրունքները, այլ, արհամարհելով նրան, անամօթաբար անխռով էին, իսկ ոմանք նոյնիսկ ծաղրեցին Աստուծոյ սուրբին: Եւ սուրբն անիծեց աղբիւրը, որն անմիջապէս ցամաքեց, իսկ աղջիկների մազերը պառաւածների մազերի նման սպիտակ դարձրեց: Այդժամ հաւատքուածների բազմութիւնը, տեսնելով նրա գործած հրաշքները, ընկաւ նրա ոտքերը: Իսկ նա, հանելով խաչը, կրկին բխեցրեց աղբիւրը, սակայն աղջիկների մազերը չդժշկեց՝ ի յիշատակ իրենց մեղքերի:

Այնուհետեւ սուրբ Յակոբը եկաւ ասորիների երկիր՝ Մծբին քաղաք, եւ Մարուգէին տուեց խաչանշանակ տապանի մասը: Մարուգէն, տեսնելով, շատ ուրախացաւ, վերցրեց-դրեց աչքերին եւ համբուրեց: Նա նաեւ տապանախաչից խնդրեց փրկել իրեն այն կրակի հեղեղից, որ Տիրոջ գալստեանն է լինելու՝ ասելով.

–Դու այն գալստեան կարապետն ես եւ ծովացած հրեղէն գետերի վրայով արդարներին Աստուծոյ մօտ հասցնող նաւակը:

Ապա Մարուգէն օրհնեց արժանաշատ սուրբ Յակոբին՝ ասելով.

–Թող Տէրն ընդունի՛ քո աշխատանքը, եւ օրհնեա՛լ լինես մեր Տէր Աստծուց:

© National Library of Armenia

Այնուհետեւ նրանք շուքով հաստատեցին սուրբ վայրը եւ միաբան սաղմոսերգութեամբ ու երկարաձիգ աղօթքով փառաբանեցին Աստծուն:

Այս տապանի կտորի միջոցով եւ սուրբ Յակոբի շնորհիւ քաղաքում մի ուրիշ, առաւել հրաշալի ու փառաւոր հրաշք եւս կատարուեց.

Մի մարդ, նախանձելով Մծբին քաղաքին, գնաց պարսից արքայի մօտ եւ ասաց.

–Ասորիների երկիրը լցուել է քրիստոնեաներով, եւ ո՛չ աւազանի, ո՛չ զօրք եւ ո՛չ էլ զօրավար գոյութիւն չունեն: Քո անյաղթ թագաւորութիւնն արհամարհում են եւ հռոմէացիներին օգնում:

Երբ Շապուհ արքան այս լսեց, ժողովեց պարսկական զօրքերը եւ մեծաթիւ բազմութեամբ եկաւ ասորիների երկիր ու պաշարեց Մծբին քաղաքը, որտեղ գտնւում էր նաեւ սուրբ Յակոբը՝ տապանի կտորն իր մօտ: Պարսիկները, քաղաքի շուրջ գետի հունը փոխելով, թուլացրին պարսպի մի կողմը. ուստի եւ քաղաքը վտանգուել էր, եւ մօտ էր նրա կործանումը: Այդժամ քաղաքի զօրքը եկաւ–ընկաւ սուրբ Յակոբի ոտքերն ու ասաց.

–Ով տէր եւ Աստուածոյ սո՛ւրբդ, օգնի՛ր մեզ, քանզի անօրէն պարսիկների զօրքից մեզ բոլորիս ոչնչացում է սպասւում:

Յակոբը, տեսնելով նրանց մեծամեծ աղերսները, ջերմագին արտասուքները, աղօթքներն ու հաւատքը, վեր կացաւ, վերցրեց տապանի սուրբ կտորը եւ ելաւ–կանգնեց պարսպի վրայ՝ զօրքերին դէմ–յանդիման: Ողջ քաղաքն ակնապիշ նրան էր հետեւում... Ապա, յաղթութեան նշանը պահելով իր լուսանշոյլ դէմքի առջեւ, լուռ ու անշարժ շուրթերով եւ արտասուախառն աչքերով սկսեց Աստծուց հայցել, որ քաղաքը փրկի անօրէններից, քանզի բազմամբոխ ժողովրդի՝ տղաների ու երիտասարդների աղաղակն ալեկոծում էր իր սիրտը:

Եւ ահա, պարսից արքային մեծ նշան երեւաց. նա տեսաւ սուրբ Յակոբին՝ իբրեւ մի զօրաւոր թագաւորի, եւ շուրջը՝ այրուձիի բազմութիւն, քանզի երկնաւոր զօրքը Յակոբին օգնութեան էր եկել: Եւ արքան կանչել տուեց այն մարդուն, որը յորդորել էր արշաւել այդ քաղաքի վրայ, եւ ասաց.

–Ով մարդ, ինչո՞ւ ինձ խաբեցիր՝ ասելով, թէ այստեղ ո՛չ աւազ կայ, ո՛չ էլ՝ զօրք: Ահաւասիկ, այստեղ տասներկու հեծելազօրով շրջապատուած թագաւոր եմ տեսնում: Դու կամենում էիր ինձ վերացնել երկրից, ուրեմն ես քեզ կվերացնեմ,– եւ հրամայեց զօրքի առջեւ սպանել նրան:

Այդ ժամանակ պարսիկները, իրենց խորհուրդներում խուճապահարուելով, ոչ մի ելք չէին գտնում, եւ նրանց բանակում խռովութիւն ընկաւ: Իսկ սուրբը, հասկանալով Տիրոջ հրաշքը եւ խնայելով մարդկանց,

որպէսզի թշնամուն վանելիս երկու կողմից էլ զոհեր չլինեն, խնդրեց Աստծուց, որպէսզի պարսկական ձիերի երամակի վրայ պիծակներ ուղարկի: Եւ անմիջապէս, ինչպէս ուժգին հողմը, բանակի վրայ հասան պիծակների, բոռերի, գոռեխների եւ մեղուների պարսերը, որոնք ձիերին կապալոյծ արեցին, իսկ հեծեալներին հետիոտն սուրահանդակի վերածեցին: Եւ այսպէս մազապուրծ թագաւորն ու իր զօրքը դէպի իրենց երկիրը ճողոպրեցին: Քաղաքացիները, տեսնելով այս անպատում սքանչելիքները, փառաւորեցին Աստծուն եւ այդուհետեւ մեծարում էին սուրբ Յակոբին՝ իբրեւ իրենց փրկչի, եւ համարում իրենց մէջ հաստատութեան սիւն:

Այն ժամանակ Մծբինի եպիսկոպոսը մահացաւ, եւ քահանաների առջեւ ընտրելու հարց ծագեց, թէ ով արժանի կլինի հայրապետական աթոռը ժառանգելու: Այստեղ կային հինգ այրեր, որոնք արժանի էին նկատուել եպիսկոպոսութեան, եւ քաղաքում մեծ խռովութիւն էր առաջացել այն պատճառով, թէ նրանցից որ մէկը պէտք է շարունակէր աթոռակալել, որովհետեւ մէկը մի անուն էր տալիս, միւսը՝ ուրիշ. այս պատճառով տրտմութեան մէջ էին եւ չէին կարողանում համաձայնութեան գալ: Այդժամ քաղաքի մեծերը որոշեցին գնալ անապատ՝ սուրբ Մարուգէի մօտ՝ տեսնելու, թէ նա ինչ խորհուրդ կտայ այս առթիւ: Երբ Հասան խցի դռանը, սուրբ Մարուգէն, ըստ իր սովորութեան, աղօթում էր: Այն ժամանակ աշակերտը դուրս եկաւ ու ասաց.

–Գնացէ՛ք եկեղեցու գաւիթ, մինչեւ որ աղօթքը վերջացնի եւ գայ ձեզ մօտ:

Իսկ սրանից երեք օր առաջ սուրբ Յակոբը եկել էր սուրբ Մարուգէի մօտ, եւ վերջինս մարգարէացել էր նրան ու ասել. «Այսօր քեզ իբրեւ ճգնաւորի եւ եղբօր եմ համբուրում, իսկ քիչ օրեր անց պիտի համբուրեմ իբրեւ Հովուի եւ Քրիստոսի Հօտի առաջնորդի»: Իսկ սուրբ Յակոբն ասել էր. «Ների՛ր, եղբա՛յր, սակայն ասածդ բանին անարժան եմ»:

Արդ, մինչդեռ հաւաքուածները, խումբ–խումբ նստած, խոժոռադէմ սպասում էին գաւթում, սուրբ Մարուգէն մօտեցաւ նրանց: Երբ տեսան երանելուն, զուարթութեամբ վեր կացան եւ ընդառաջ գնացին, որովհետեւ նրա դէմքը հրեշտականման էր: Իսկ նա նրանց խնդրեց նստել, մինչեւ որ ինքը եկեղեցում շարունակի աղօթքը: Ապա, աղօթքից յետոյ, բազմութիւնը հաւաքուեց երանելու մօտ, եւ համբուրում էին նրա ձեռքերն ու ոտքերը: Իսկ նա նրանց հրամայեց նստել ու իրեն լսել: Նախ հանգստացրեց նրանց՝ ասելով.

–Գիտեմ, որ տրտմում էք ձեր առաջնորդի ընտրութեան պատճառով ծայր առած տարաձայնութիւններից: Բայց ասում եմ, որ առաջադրուած այրերից ոչ ոք եպիսկոպոսութեան արժանի չէ: Վե՛ր կացէք,

© National Library of Armenia

գնացէ՛ք Ամիդ[1], որովհետեւ այնտեղ են եպիսկոպոսաց ժողովն ու կաթողիկոսը, նոյն ինքը՝ Անտիոքի պատրիարքը, եւ այնտեղ Սուրբ Հոգին նրանց միջոցով կծանուցի այն մարդու մասին, ով արժանի է նստել Մծբին քաղաքի Հայրապետական գահին:

Նրանք, այս ընդունելով իբրեւ Տիրոջ հրեշտակի խօսքեր, ճանապարհուեցին դէպի այն քաղաքը: Մի քանի օր անց Հասան կրօնական խորհրդի մօտ եւ ողջունեցին պատրիարքին ու եպիսկոպոսներին: Ապա պատրիարքն ասաց նրանց.

–Մե՞մ ընտրեցիք ձեզ առաջնորդ:

Նրանք պատրիարքին պատմեցին սուրբ Մարուգէի ասած խօսքերը, թէ՝ Սուրբ Հոգին ժողովի միջնորդութեամբ ձեզ առաջնորդ կտայ: Այդ ժամ բոլոր ժողովականները, ապաւինելով աղօթքին, գիշերն անցկացրին սաղմոսներով, օրհնութեամբ եւ արտասուքով: Երբ վրայ հասաւ կէսգիշերը, կաթողիկոսն առանձնացաւ եւ այդ խնդրի համար սկսեց արտասուալից աղաչել Աստծուն: Եւ Նա, Ով կատարում է Իրենից ակնածողների կամքը եւ աղօթքը լսում, մտայայփշտակութեան մէջ գցեց կաթողիկոսին, եւ վերջինս ինչպէս երազում տեսաւ մի լուսաւոր երիտասարդի, որն իրեն ասաց.

–Այն մարդը, որի մասին պատասխան էք փնտրում Տիրոջից, սուրբ Յակորն է:

Ապա հրեշտակը յայտնեց նրան այն տեղն ու քարայրը, որի մէջ բնակւում էր Աստուծոյ սուրբն ու սքանչելագործ միայնակեացը: Կաթողիկոսն, արթնանալով, գոհացաւ Աստծուց եւ անմիջապէս վեր կացաւ, գնաց եկեղեցի, կանչեց Մծբինից եկածներին ու եպիսկոպոսներին եւ պատմեց հրեշտակի երեւման մասին, որը յայտնել էր սուրբի անունը եւ տեղը: Եւ բոլորը միաբան դիմեցին Մծբին, որտեղից եպիսկոպոսաց ժողովը վստահելի անձանց առաքեց սուրբ Յակորի մօտ, որպէսզի նրան, ծանուցելով խնդրի մասին, կանչեն ժողովի: Սակայն սուրբ Յակորն արդէն տեղեակ էր հայրապետների Մծբին գալուն, քանզի Սուրբ Հոգին նրան յայտնել էր այդ, եւ նա վախենում էր ընդդիմանալ Աստուծոյ հրամանին, ինչի մասին սուրբ Մարուգէն կանխագուշակել էր իրեն: Եւ այսպէս, Սուրբ Հոգու ազդմամբ իջաւ Մծբին, որտեղ ժողովականներն ու քաղաքի ողջ բնակչութիւնը սպասում էին սուրբի գալուստին: Եւ երբ նա գալով մօտեցաւ հայրապետներին, սկսեցին ողջունել միմեանց, իսկ նրան պատուիրեցին նստել եպիսկոպոսական աթոռին: Սուրբ Յակոբն ասաց նրանց.

–Ինչի՞ համար էք կանչել ինձ:

1 Ամիդ – քաղաք Միջագետքում

–Մեզ Տիրոջից քո մասին յայտնուեց, որ արժանի ես այս քաղաքի եպիսկոպոսական աթոռը ժառանգելու,– պատասխանեցին նրան:

Իսկ նա ասաց.

–Այդ բանին արժանի չեմ:

Բայց ժողովուրդը շտապեցնում էր հայրապետին եւ չէր թողնում, որ խօսքը շարունակի: Եւ ապա եպիսկոպոսներն ու հայրապետը, վերցնելով Յակորին, իսկոյն մտան եկեղեցի եւ նրա վրայ եպիսկոպոսութեան կարգ կատարեցին: Սուրբ Յակորի ձեռնադրման առթիւ քաղաքում մեծ ուրախութիւն եղաւ, քանզի բոլորը նրան գիտէին իբրեւ Աստուծոյ սուրբի:

Մի քանի օր անց, կիրակի օրը, սուրբ Մարուգէն իր մեծաթիւ բարեկամներով գնաց ողջունելու նորընծայ եպիսկոպոսին եւ օրհնուելու նրանից: Եկեղեցում միմեանց ողջունելուց յետոյ սուրբ Մարուգէն սկսեց օրհնաբանել Աստծուն, որ Իր Եկեղեցու վրայ այդպիսի արթուն ու զգաստամիտ հովուի կարգեց: Այնուհետեւ, երբ սուրբ լծակիցները՝ Մարուգէն եւ տէր Յակորը, վերադառնում էին ժողովից, եկեղեցու գաւթում տասնհինգ տարեայ մի անդամալոյծի տեսան, որի մարմնի բոլոր անդամները թուլացել էին այդքան տարիների ընթացքում: Այդ պահին սուրբ Մարուգէն ասաց սուրբ Յակորին.

–Եկ աղօթենք այս անդամալոյծի համար:

Ապա, սարկաւագներին պատուիրելով, որ նրա երեսն արեւելք դարձնեն, որպէսզի նա էլ աղօթի, խոնարհուեցին եւ միասին ծնրադրեցին՝ ասելով.

«Ո՛վ զօրութիւնների Տէր Աստուած, որ հրեաների եւ կռապաշտների մէջ այս քաղաքը Քո անուան քարոզութեանն արժանացրիր: Արդ, ինչպէս Քո առաքեալների միջոցով, այնպէս էլ այժմ նուաստ ծառաներիս միջոցով ցո՛յց տուր Քո զօրութիւնը, որպէսզի իմանան, որ միայն Դու ես զօրութիւնների ճշմարիտ Աստուածը, հաւատան Քո սիրելի Որդու՝ Յիսուս Քրիստոսի անուանը, եւ Քո անունն առաւել եւս քարոզուի, եւ սուրբ Խաչդ փառաւորուի: Եւ արդ, բարերա՛ր Տէր, բժշկի՛ր այս անդամալոյծին եւ պապանձեցրո՛ւ նրանց լեզուները, ովքեր անարգում են Խաչդ, որը սուրբ Եկեղեցուդ պարծանքն է»:

Ապա աղօթքը վերջացնելուց յետոյ սուրբ Յակորը սուրբ Մարուգէին ասաց.

–Մօտեցի՛ր եւ դրա անդամների վրայ խաչ հանիր:

–Դու ես արժանի, եւ քեզ է վայել նրա վրայ խաչ հանել ու աղօթել, քանզի դու եպիսկոպոսական շնորհ ունես,– պատասխանեց սուրբ

© National Library of Armenia

Մարուքէն:

Այդժամ սուրբ Յակորն ասաց.

–Ես աջից, իսկ դու՝ ձախից:

Եւ բռնելով կանգնեցրին նրան՝ ասելով.

–Մվ մարդ, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վէր կաց, կանգնիր:

Նոյն պահին նրա անդամներն ամրապնդուեցին, եւ նա, ձեռքերը երկինք պարզելով, փառաւորում էր Քրիստոսին: Այս տեսնելով՝ ժողովուրդը զարմացաւ: Երեսնիվայր ընկան եւ երկրպագում ու, բարձրաձայն Աստծուն օրհնելով, ասում էին.

«Օրհնեալ ես, ո՛վ Քրիստոս, որ միշտ լսում ես Քեզ հաճելի եղողների ձայնը եւ Քո ծառաների միջոցով հրաշքներ ես գործում: Արդ, թող մեծարուի՛ եւ փառաւորուի՛ Քո սուրբ անունը, քանզի Դու ես միայն Աստուած, եւ ուրիշ ոչ ոք չկայ»:

Այստեղ սուրբ Մարուքէն ասաց անդամալոյծին.

–Արի հազի՛ր պատմուճանդ, գօտեպնդուի՛ր եւ քարոզի՛ր Քրիստոսի զօրութիւնը, որ Քեզ վրայ ցոյց տրուեց:

Իսկ հրեաներից ոմանք, այս մասին լսելով, չհաւատացին եւ ասում էին, թէ նա անդամալոյծ չէր: Ոմանք էլ, քանի որ չէին կարող ուրանալ, զարմացան հրաշքի վրայ, որ Աստուծոյ զօրութեամբ կատարուեց Յակոբի միջոցով, եւ սկսեցին ակնածել սուրբ եպիսկոպոսից:

Այս օրերում մի հրաշք եւս կատարուեց.

Երբ սուրբ Յակորն անցնում էր մի գիւղի կամ քաղաքի միջով, այստեղի մուրացկաններից ոմանք, կամենալով նրանից խաբէութեամբ ողորմութիւն ստանալ, իրենցից մէկին մեռած ձեւացրին եւ ապա գալով աղաչեցին սուրբ եպիսկոպոսին իրենց այնքան ողորմութիւն տալ, որքան որ հարկաւոր է մեռածին թաղելու համար: Սուրբ Յակորը, առաւել նրա հոգուն ողորմութիւն անելու մտահոգութեամբ, ձեռքը դրեց նրա վրայ եւ մեղքերին թողութիւն խնդրեց: Երբ փոքր–ինչ հեռացաւ այնտեղից, մուրացողներն իրենց ընկերոջը ձայն տուեցին, որ ելնի՝ ասելով, թէ՝ եպիսկոպոսն անցել–գնացել է: Սակայն այն մարդուն իսկապէս մեռած տեսան: Եւ ահաբեկուած վազեցին սուրբի ետեւից՝ աղաչելով, որ վերադարձնի նրա հոգին.

–Թողութիւն տուր մեզ,– ասում էին նրանք,– որովհետեւ չքաւորութեան պատճառով կատարեցինք այդ:

Սուրբը, անսալով նրանց աղաչանքներին, կրկին յարութիւն տուեց մեռածին:

Այն ժամանակ Մծբին քաղաքում ապրում էին երկու պոնտացի

եղբայրներ, որոնք երկրում մեծանուն այրեր էին, սակայն՝ հեթանոսներ: Սրանք ցնորամտաբար հետեւում էին Մարկիոնի աղանդին եւ մի մարկիոնական կախարդի: Եղբայրներից մէկը վաղուց մեծն Կոստանդիանոսի արքունի դռանն էր եւ հաճելի՝ ինքնակալի աչքին, ում կողմից իսկ յորդորելով՝ ընդունեց սուրբ Հաւատքն ու Քրիստոսի պատուական կնիքը: Այնուհետեւ, թագաւորից ստանալով եպարքոսի[1] կոչում, ուղարկուեց Մծբին քաղաք: Իսկ միւս եղբայրը, որ Մարկիոն վարդապետի անունով կոչւում էր Կերդոն կամ Կեդրոն, բազմիցս Կոստանդիանոսից յորդորուելով, յանձն չառաւ մկրտուել եւ նոյնպէս մեծ պատուի արժանանալ, այլ, մնալով Մծբինում, իր տանը ոսկուց, արծաթից եւ թանկագին քարերից սարքած կուռքեր էր պահում եւ նրանց պաշտամունքից չէր հեռանում: Նա քաղաքում երեւելի ու մեծահարուստ էր եւ ունէր մի խեղ ու ի ծնէ անդամալոյծ որդի, որի ոտքերը փոկի[2] նման միմեանց էին փաթաթուել, իսկ մարմնի միւս անդամները գօսացել[3] էին, որի հետեւանքով անկողին էր ընկել: Սակայն տղան խիստ գեղեցիկ էր, գանգրահեր եւ միշտ զուարթերես:

Երբ Կերդոնը լսեց, թէ սուրբ Յակորը սուրբ Մարուքէի հետ եկեղեցու գաւթում մի բազմամեայ անդամալոյծի է բժշկել, չհաւատալով տարածուած լուրին՝ ուղարկեց եւ կանչել տուեց բժշկուած մարդուն, որպէսզի նրանից իմանայ իսկութիւնը: Ապա նրան հարցրեց.

–Ո՛վ եւ ինչպէ՞ս բժշկեց քեզ:

–Դուք եւ ողջ քաղաքը գիտէք, որ տասնհինգ տարի անդամալոյծ էի, սակայն Աստուծոյ ծառաները՝ սուրբ Յակորն ու Մարուքէն, Յիսուս Նազովրեցու անունով բուժեցին ինձ,– պատասխանեց նա:

Կերդոնի մօտ եղող մարկիոնական կախարդը, նրա վրայ բարկանալով, ասաց.

–Դու անդամալոյծ չէիր, ստախօ՛ս, այդ քեզ քրիստոնեաները սովորեցրին:

Իսկ այս մարդը՝ ցաւսումով լի, պատասխանեց.

–Մվ խաբեբայ եւ անօրէն, ստախօսը դու ես, քո աղանդը եւ կախարդութիւնը, որ շուտով մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը պիտի բնաջնջի իսպառ, իսկ քո հայր սատանան՝ ամօթահար լինի: Այժմ ասում եմ քեզ. քե՛զ համար չէ, որ քարոզում եմ Աստուծոյ փառքը, որ ցոյց տրուեց ինձ, այլ՝ բոլոր նրանց, ովքեր լսում ու հասկանում են: Եւ վստահ եմ, որ եպարքոսի բարի եւ իմաստուն եղբայրը, որ ինձ փնտրել

1 եպարքոս կամ հիպարքոս — կուսակալ, կառավարիչ
2 փոկ — կաշուից պարան
3 գօսանալ — չորանալ, փայտանալ

© National Library of Armenia

տուեց ու կանչեց այստեղ, իր որդու համար է կամենում համոզուել իմ բժշկութեան մէջ, որպէսզի, ճշմարտութեանը տեղեկանալով, հաւատքով դէպի լոյս գայ եւ պատրաստուի ձեր մոլորութիւնն այս քաղաքից դուրս վոնդելուն:– Այս ասելով՝ իր երեսը շրջեց կախարդից եւ Կերդոնին ասաց.– Լսիր ինձ, տէր Կերդոն. քանի որ ես քո կամքով այստեղ եկայ, հարկ է, որ քո տանը քարոզեմ Քրիստոսին, որ իմ միջոցով յայտնուեց: Ես իսկապէս, ինչպէս որ տեսնում էիք գալիս, անդամալոյծ էի եւ սուրբ Յակոբի ու Մարուգէի կողմից բժշկուեցի: Եւ եթէ դու էլ հաւատաս սուրբ Կոյս Մարիամից ծնուած մեր Տէր Յիսուս Քրիստոսին եւ գնաս Նրա ծառաների մօտ ու լսես Աւետարանի քարոզութիւնը, այն ժամանակ քո որդին կբժշկուի:

Այդժամ Կերդոնը սթափուեց եւ, բարի գործ խորհելով, արհամարհեց կախարդի խօսքերն ու ասաց.

–Այսուհետեւ ես կամենում եմ տեղեկանալ ճշմարտութեանը եւ հեռանալ խաբէութիւնից:

Եւ, իսկոյն վեր կենալով, վերցրեց իր որդուն ու գնաց եկեղեցի, միւսներն էլ՝ նրա ետեւից: Իսկ ոմանք գնացին եւ սուրբ Յակոբին ու Մարուգէին պատմեցին՝ ասելով.

–Եպարքոսի եղբայր Կերդոնը դրսում կանգնած է եւ կամենում է ձեզ տեսնել:

Այնժամ սուրբները նրան պատուիրեցին խաղաղութեամբ տաճար մտնել: Նրա եպարքոս եղբայրը նոյնպէս այնտեղ էր: Կերդոնը, մտնելով սուրբերի մօտ, ողջունեց, ապա կանգնեց նրանց առջեւ ու բարձրաձայն ասաց.

–Տեա՛ր, ես կարծում էի, թէ ճշմարտութիւնն եմ սեփականել եւ ոչ թէ՝ մոլորութիւնը: Եւ մինչեւ իսկ թագաւորի շնորհից եմ հրաժարուել, որպէսզի, իմ եղբօր նման, ինձ էլ մկրտել չտար: Իսկ այժմ, տարակուսած, ճշմարի՛տ ճանապարհը չեմ գտնում: Այս անդամալոյծի բժշկութեան վրայ է միայն վստահութիւնս, քանզի եթէ, ինչպէս որ նա ձեր աղօթքներով բժշկուեց, այնպէս էլ իմ որդին բժշկուի, իմ միտքը կհաստատուի ճշմարիտ հաւատքի մէջ, եւ Մարկիոնը, որ ասում է, թէ Քրիստոս չի մարմնաւորուել Կոյսից, կամ թէ՝ մեռելների յարութիւն չկայ, ամօթահար կլինի: Քանզի այնժամ ինձ պարզ կդառնայ, որ ճշմարիտ է այն, ինչ որ ասում էք Յիսուս Նազովրեցու մասին՝ թէ ծնուել է Մարիամ Կոյսից, խաչուել, թաղուել եւ յարութիւն առել եւ մեռեալներին յարութեան յոյս պարգեւել: Արդ, այսուհետեւ հաւատքի հաստատման ոչ մի միջոց չունեմ, բացի իմ որդու բժշկութիւնից, որովհետեւ Ով որ նրա գօսացած մարմինը բժշկի, Նա էլ ճշմարիտ Աստուած է: Դրանից յետոյ իմ Հոգին ու մարմինն էլ կառողջանան:

Մարկիոնական կախարդը, լսելով Կերդոնի ասածները, ասաց նրան.

–Մի՛ լսիր գալիլեացիներին[1], քանզի ո՛չ կաղերին կարող են բուժել եւ ո՛չ էլ՝ անդամալոյծներին առողջացնել:

Այդ ժամանակ սուրբ Յակոբն ամբողջ ժողովրդի առջեւ դիմեց կախարդին՝ ասելով.

–Թէպէտեւ մենք ոչնչութիւն ենք, սակայն անօգուտ բաներ չենք խօսում, այլ ինչ որ խօսում ենք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով ենք խօսում, որ ծնուեց սուրբ Կոյսից, խաչուեց, թաղուեց եւ մեռեալներից յարութիւն առաւ՝ Իր հետ յարութիւն տալով մեր բնութիւնը: Ապա Իր աշակերտներին տուեց Իր Սուրբ Հոգին եւ առաքեց՝ բոլոր հեթանոսներին մկրտելու Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ: Այնուհետեւ ասաց, թէ «ով հաւատայ եւ մկրտուի, կփրկուի, իսկ ով չհաւատայ Իրեն, կզատապարտուի», եւ դարձեալ՝ «Ով որ հաւատայ Ինձ, Ինձ պէս հրաշքներ կգործի եւ Իմ անուամբ դեւեր կհանի»: Արդ, մենք հաւատացել եւ հաւատում ենք, որ այն ամէնը, ինչ որ խնդրենք, ըստ Իր խոստման, կտայ մեզ: Ուստի եւ Նրա անուամբ առանց երկիւղի վիշապի գլուխը պիտի՛ չախչախենք, իսկ ձեր մոլորութիւնը՝ սուրբ խաչով խորտակենք: Այժմ դու եւ ձեր քուրմը դիմեցէ՛ք ձեր աստծուն, որպէսզի բուժի այդ մանկանը: Եւ եթէ ձեր աստծները ճիշտ չլինեն, այդժամ թող ձեզ վիճակուի այն, ինչ որ վիճակուեց Սիմոն կախարդին Հռոմում: Իսկ մենք մեր Աստուծոյ առջեւ ենք ընկնում եւ այս մանկան համար բժշկութիւն հայցում, սակայն՝ ոչ թէ մեզ համար, այլ՝ այդ ժողովրդի, որպէսզի հաւատայ Նրա անուանը:

Իսկ մարկիոնականը ցածրաձայն ու վախուորած պատասխանեց.

–Մե՛նք եւ ո՛չ էլ դուք դրան չենք կարող բժշկել:

Այնժամ սուրբ Մարուգէն ժպտալով պատասխանեց նրան.

–Ապաւինում եմ Հայր Աստծուն, Նրա Միածին Որդուն եւ Սուրբ Հոգուն, քանզի ինչ որ հաւատքով խնդրենք, պիտի ստանանք:– Այնուհետեւ համարձակօրէն դիմեց մանկան Հօրը.– Հաւատում եմ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը, որ եթէ սուրբ Յակոբը դրան մկրտի, նա այդ Աւազանից բժշկուած պիտի դուրս գայ:

Այդ ժամանակ Կերդոնն ասաց.

–Այս պահին կամենում էի իմ ամբողջ ընտանիքով մկրտուել, սակայն, համաձայն քո խօսքի, նախ թող որդիս մկրտուի, եւ ապա՝ ես ու իմ ընտանիքը:

Ապա սուրբ Մարուգէն ասաց սուրբ Յակոբին.

1 Նկատի են առնուած քրիստոնեաները:

© National Library of Armenia

–Տէ՛ր, քահանաներիցդ մէկին պատուիրի՛ր պատրաստել Աւազանը:

Իսկ Կերդոնը յայտարարեց.

–Թող ոչ ոք չմկրտի՛ իմ մանկանը, այլ միայն՝ Ձերդ սրբութիւնը:

Ապա մօտեցրին Աւազանը, եւ սուրբերը, վեր կենալով ու մէկը՝ ձախ, իսկ միւսն աջում ծնրադրելով, սկսեցին աղօթել.

«Ո՛վ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ բոլոր Ձեզ դիմող անձանց փրկութիւնն ես կամենում: Լսի՛ր Քո ծառաների աղօթքները եւ փառաւորի՛ր Քո անունն այս քաղաքի հրեաների եւ հեթանոսների մէջ, որպէսզի իմանան, որ միայն Դու ես զօրութիւնների Աստուածը»:

Ապա, վեր կենալով աղօթքից, պատուիրեցին, որ մանկանն Աւազան իջեցնեն: Եւ նրան, որ մօտ ութ տարեկան էր, մկրտեցին Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ՝ վերակոչելով Յովհաննէս: Այնուհետեւ սուրբ Յակոբը բացեց նրա գօսացած ձեռքերը, միմեանցից զատեց փաթաթուած ոտքերը եւ, մանկան ձեռքից բռնելով, կանգնեցրեց ու պատուիրեց քայլել: Եւ նա համարձակօրէն սկսեց քայլել: Եւ ովքեր տեսան, սկսեցին փառաւորել Աստծուն: Իսկ մարկիոնականն ու իր դաւանակիցները, մտափոխուելով, փախան այդ քաղաքից:

Յաջորդ օրը սուրբ Հայրապետը մկրտեց նաեւ Կերդոնին, որ վերակոչուեց Պօղոս, նրա կնոջը, որը վերանուանուեց Մարիամ, եւ նրա ամբողջ ընտանիքին ու ժողովրդին: Բոլոր մկրտուողները երեք հազար հարիւր Հոգի էին: Դրանից յետոյ սուրբ Մարուգէն ուրախութեամբ վերադարձաւ իր վանքը՝ օրհնաբանելով Աստծուն: Իսկ Պօղոսը բոլոր նորակնունքների բազմութեամբ իր տանը մեծ խրախճանք սկսեց անել եւ, ափսոսելով Մարուգէի վերադառնալու համար, մարդ ուղարկեց եւ կանչեց նրան: Սուրբը լսեց նրան ու եկաւ նրա տուն: Ապա, միառժամանակ անց, Մարուգէն ասաց.

–Այստե՛ղ բերէք մարկիոնականների կախարդութեան գրքերը,– եւ երբ բերեցին, հրամայեց այրել:

Սրանից յետոյ շատերն էին գալիս սուրբ Յակոբի մօտ՝ աշակերտելու Քրիստոսին: Այս պատճառով սուրբ Հայրապետը խորհեց մեծ եկեղեցի կառուցել, որովհետեւ առաջ ժողովուրդը փոքրաթիւ էր, եւ եկեղեցին՝ փոքրիկ: Եւ, գնալով սուրբ Մարուգէի մօտ, սուրբ Յակոբն ասաց.

–Եթէ Տէրը կամենայ, եկեղեցի կառուցելու մտադրութիւն ունեմ: Վե՛ր կաց իջնենք եւ սուրբ տեղը որոշենք:

Իսկ սուրբ Մարուգէն պատասխանեց.

–Իջնելն անհրաժեշտ է, քանզի եօթերորդ օրը մօտենում է: Բայց արի ինքդ իջիր, եւ Տէրն Իր հրեշտակին կառաքի ու ցոյց կտայ այն տե-

ղը, որտեղ պէտք է կառուցել, որպէսզի այն, որ կռապաշտութեան եւ պիղծ երգերի վայր է եղել, մաքրուի, եւ նրանում մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը պատարագուի:

–Թող քո աղօթքն ինձ վրայ լինի, որպէսզի կատարուի այնպէս, ինչպէս ասացիր,– ասաց սուրբ Յակոբը:

Եւ անմիջապէս, ոտքի կանգնելով, գնաց քաղաք, ժողովեց քաղաքի մեծամեծներին ու նրանց ասաց.

–Դուք ի՞նչ էք կարծում եւ որտե՞ղ էք յարմար գտնում եկեղեցի կառուցելու համար:

Նրանք սուրբին ցոյց տուեցին երեք-չորս տեղ: Իսկ նա մինչեւ գիշեր լուռ էր, ապա գիշերուայ երկրորդ ժամին վեր կացաւ եւ, վերցնելով իւղի շիշը, դուրս եկաւ իր սենեակից: Եւ ահա Տիրոջ հրեշտակը յայտնուեց եւ մօտենալով ողջոյն տուեց նրան:

–Դու ո՞վ ես,– հարցրեց Յակոբը:

Հրեշտակը պատասխանեց.

–Ես Տիրոջից առաքուեցի, որպէսզի քեզ ցոյց տամ եկեղեցու տեղը եւ նրա չափերը:

–Ուրեմն դու իմ առջեւից կգնաս,– ասաց Յակոբը հրեշտակին՝ չզարհուրելով նրա տեսքից, քանզի բազմաթիւ անգամ վարժուել էր հրեշտակային կերպարանքը տեսնելուն:

Հրեշտակը նրա հետ գնաց մինչեւ այն տեղը, որը եղել էր Անտիոքի իշխանի կուստունը, եւ ասաց.

–Ահա սա է եկեղեցու տեղը,– ապա նրան ցոյց տուեց չափը:

Դրանից յետոյ երանելին ձեռնամուխ եղաւ եկեղեցու շինութեան գործին:

Այն օրերում Աստուծոյ սուրբ, Պարսկաստանի կողմերի եպիսկոպոս Մելիտոսը, որ կոչւում է նաեւ Երկրորդ Մելիտոս, Երուսաղէմի ուխտատեղերից վերադառնալիս անցնում էր Մծբին քաղաքով: Տեսնելով Յակոբին, որը սկսել էր եկեղեցին կառուցել՝ նա շատ ուրախացաւ եւ, իր երկրացի վաճառականներից Հարիւր դահեկան[1] վերցնելով, որպէս օգնութիւն յանձնեց եկեղեցուն, որովհետեւ գաւազանից ու Աւետարանից բացի իր մօտ ոչինչ չունէր: Ապա սուրբ Յակոբն ու սուրբ Մարուգէն սուրբ Մելիտոսին մարգարէացան, թէ՝ «արեւելք դառնալուց յետոյ դու պէտք է մարտիրոսութեամբ վախճանուես», ինչը եւ կատարուեց, եւ այդ մասին գրուած է նրա վարքում:

Ահա միմեանց հետ սուրբերի այսպիսի մերձաւորութեան շնորհիւ

1 դահեկան — պարսկական դրամ

© National Library of Armenia

է, որ նրանց տօնը միասին է կարգուած, քանզի սուրբ Յակոբի վարքում պատմուում է թէ՛ Մարուզէի եւ թէ՛ Մելիտոսի մասին:

Այժմ անդրադառնանք սուրբ Յակոբի վարքի յաջորդ պատմութեանը.

Այնպէս եղաւ, որ մեծն Կոստանդիանոսի եւ մեծն Տրդատի մահուանից յետոյ պարսից Շապուհ արքան պատերազմով դիմեց դէպի Միջագետք՝ հռոմէացիների սահմանները: Սակայն սուրբ Յակոբի ազօթքների շնորհիւ Տէրը պահպանեց նրա Մծբին քաղաքը: Սրանից յետոյ տեղի ունեցան հայոց խոսրով արքայի զօրավար Մանաճիհրը իշխանի հետ կապուած այն դէպքերը, որոնց մասին խորենացին գրում է, որ Մանաճիհրը, հայկական հարաւային գնդով եւ կիլիկիացիների զօրքով Ասորեստանի կողմերը գնալով եւ պատերազմելով Բակուր բդեշխի դէմ, սպանեց նրան, իսկ նրա զօրքին ու օգնութեան եկած յարսիկներին հալածեց: Բակուրի որդի Հեշային ձերբակալելով երկաթեայ կապանքներով ուղարկեց խոսրովին, իսկ նրանց իշխանութեան գաւառները սրի մատնեց եւ ոչ միայն՝ կռուողներին, այլեւ՝ պիւղացիներին: Ապա Մծբինի կողմերից բազմաթիւ գերիներ վերցրեց, որոնց թւում եւ՝ Յակոբ մեծ եպիսկոպոսի ութ սարկաւագներին: Նրանց ետեւից գալով Յակոբը Մանաճիհրին փորձեց համոզել՝ արձակել ռամիկ գերիներին, քանզի նրանք ոչնչով մեղաւոր չէին: Բայց Մանաճիհրը, չուզենալով արձակել, պատճառ բերեց արքային: Ապա, երբ Յակոբը դիմեց արքային, Մանաճիհրն աւելի չարացաւ եւ գաւառացիների սադրանքով հրամայեց ծովը նետել նրա ութ սարկաւագներին, որոնք կալանաւորուած էին: Այս մասին լսելով մեծն Յակոբը, սաստիկ բարկացած, վերադարձաւ իր տեղը եւ, ինչպէս Մովսէսը, բարձրանալով լեռան վրայ, որտեղից լաւ էր երեւում Ռշտունեաց ողջ գաւառը, անիծեց Մանաճիհրին ու նրա գաւառը: Եւ անմիջապէս վրայ հասաւ Աստուծոյ դատաստանը, քանզի, Հերովդէսի նման, Մանաճիհրը մեռաւ՝ տեսակ-տեսակ ախտերից բռնուելով, իսկ գաւառի պտղաբեր, ջրարբի հողը փոխուեց աղի ու չոր հողի, երկինքը պղինձ դարձաւ, ծովն էլ, հակառակուելով, ծածկեց արտերի սահմանները: Երբ այս մասին լսեցին մեծ վրթանեան ու խոսրով արքան, խիստ բարկացած՝ հրամայեցին գերիներին արձակել եւ սուրբին դիմել զղջումով ու աղաչանքով, որ թերեւս Աստուծոյ բարկութիւնը դադարի: Ապա Յակոբի՝ այս աշխարհից փոխուելուց յետոյ Մանաճիհրի ժառանգորդն ու որդին ազնիւ զղջումով ու յորդահոս արտասուքներով, նրա բարեխօսութեամբ արժանացաւ իր եւ գաւառի բժշկութեանը:

Սուրբ Յակոբը բազում ճգնութիւններ կրելուց, մեծաթիւ հրաշքներ գործելուց եւ մարմնի մէջ որպէս անմարմին ապրելուց եւ դրանով հրեշտակներին զարմացնելուց յետոյ վերոյիշեալ դէպքերից մէկ տարի անց աննշեց: Եւ նրա՝ այս աշխարհից փոխուելն այսպէս եղաւ. կիրակի օրը նա

եղբայրներին ասաց.

–Այսօր տեսայ հրեշտակին, որն ինձ մարմնիցս ելնել եւ Աստուծոյ մօտ մտնել էր հրաւիրում:

Ապա նրանց պատուիրեց հսկել ողջ գիշեր՝ մինչեւ արեգակի ծագելը: Այնուհետեւ Պատարագի ժամին, փրկական խորհուրդը կատարելիս տեսնելով Սուրբ Հոգուն, աղաչեց, որպէսզի խաղաղութեամբ անցնի իշխանութիւնների եւ պետութիւնների միջով: Եւ, աւարտելով անարատ Պատարագը, դուրս եկաւ զուարթ ու լուսապայծառ երեսով: Իսկ բազմութիւնը, այդ տեսնելով եւ իմանալով սուրբի վերափոխման մասին, սկսեց բարձրաձայն լաց լինել: Սակայն նա հրամայեց լռել եւ, մի փոքր կենդրակրուելով, սկսեց աւետարանել նրանց.

Հեղբայրնե՛ր, լսեցե՛ք ինձ: Յիշեցե՛ք արգելուած պտուղը, որը նախահօր արտաքսուելու եւ դրախտի փոխարէն անիծաբեր երկիրը ժառանգելու պատճառը եղաւ եւ որն Աստծուն եւ Նրա սուրբերին չարչարուելու դրդեց:

Յիշեցե՛ք հալածուած մարգարէներին, որոնք սպանուեցին իրենց մերձաւորների կողմից:

Յիշեցե՛ք Տիրոջ անուան համար հալածուած միւս տղամարդկանց ու կանանց, որոնք արհամարհեցին այս աշխարհի փառքը, դատարկութիւն համարեցին նրա սէրը մանկական խաղի նման եւ մեծամեծ տառապանքներով փոխուեցին աշխարհից:

Յիշեցե՛ք նաեւ առաքեալների, մարտիրոսների բոլոր դասերին եւ բոլոր սուրբերին, որոնք, սաստիկ ու զանազան տանջանքներով իրենց անձերը Քրիստոսի համար մահուան մատնելով, փոխուեցին Քրիստոսի մօտ:

Յիշեցե՛ք հէնց Իրեն՝ մեր Տիրոջը՝ Ողորմածին, Բարերարին, Անմահին, նաեւ՝ մեղաւորներիս համար Նրա համբերութիւնը, որ, անօրէնների հակառակութեան պատճառով նախատուելով, անարգուելով ու ծանակուելով, մահուան մատնուեց, իսկ ապերախտներիս կողմից Երախտաւորն Իր արժանիքների համեմատ փոխարէնը ոչինչ չստացաւ: Բայց աղաչում եմ, մի՛ անտեսէք Քրիստոսի բարի երախտիքը, այլ մնացե՛ք ուղիղ վարքի մէջ, քանզի Նրա բեմի առջեւ ենք կանգնելու՝ իւրաքանչիւրս ըստ մեր գործերի հատուցում ստանալու համար: Ձեր անձերից թօթափեցե՛ք չարիքը եւ մարմիններդ մի՛ խնայէք, որովհետեւ դրանք հեռացնում են Աստծուց:

Եւ արդ, ես Ձեր բոլորի անունից անարատ եմ, որովհետեւ գիշեր–ցերեկ չդադարեցի խօսել, ուսուցանել եւ հաստատել Ձեզ Տիրոջ երկիւղի եւ սիրոյ մէջ, քանզի Ձեր օրերում յափշտակող

© National Library of Armenia

գայլեր ու ստապաստում վարդապետներ են գալու, որոնք չեն խնայելու Քրիստոսի հօտը: Ձեր բոլոր նեղութիւնների մէջ գոհացո՛ղ եղէք, ամրահաստա՛տ մնացէք եւ, ամուր բռնելով իմ ուխտի խրատները, մշտապէս խորհեցէ՛ք Տիրոջ երկիւղն ու սէրը, որպէսզի համբերատարների վարձքը ստանաք մեր Աստուած Քրիստոսից, Որին փա՛ռք յաւիտեանս. ամէն»:

Այս ասելով՝ օրհնեց նրանց, երեք անգամ ծնրադրեց՝ խոստովանելով Ամենասուրբ Երրորդութեանը, եւ ընկնելով հոգին աւանդեց Քրիստոսին: Եւ ահա նրանից անուշահոտութիւն բուրեց, եւ վերեւից նրա սուրբ նշխարների վրայ լոյս էր ճախրում: Իսկ ժողովուրդը սաստիկ ողբում էր, քանզի զրկուել էր սուրբ Հովուից: Այնուհետեւ, աղօթքի կարգ կատարելուց յետոյ, նրան դրեցին գերեզմանի ամենախոր՝ յափշտակողներին անհասանելի վայրում:

Իսկ Ռշտունեաց երկիրը երեք տաբի անէծքի տակ մնաց. մարդ ու անասուն ամլացան, պտղաբեր ծառերը չորացան, եւ անպատում գեղեցկութիւնները խամրեցին: Ինչպէս պատմագիրներից մէկն է ասել, «նախքան Յակոբի անէծքը Ռշտունեաց երկիրը նման էր Աղեմի[1] դրախտին»: Ապա Մանաճիհրի սերնդից մէկը (ոմանք ասում են՝ քոյրը, ոմանք՝ հօրեղբօրորդին), քանի որ Մանաճիհրը մեռել էր, ճանապարհ ընկաւ՝ փնտրելու սուրբի նշխարները եւ ազգի ու գաւառի համար բժշկութիւն խնդրելու: Նա խիստ ճգնութեամբ, երեսն ու ծունկը քերթելու աստիճան գետնաքարշ լինելով, հասաւ տապանին եւ քառասուն օր անդադրում աղօթքներով ողբաց նրա առջեւ: Սուրբ Յակոբը, լսելով նրա պաղատանքները, ողորմեց նրան եւ, իբրեւ կենսատու, մօտեցնելով իր աջը, կտրեց մատի կոճն ու տուեց նրան: Եւ մինչդեռ սպասաւորները սքանչանում էին սրայ վրայ, սուրբը տեսիլքի մէջ օրհնեց նրա ճգնութիւնները ու արձակեց: Եւ նա, ուրախութեամբ հասնելով Աղձնեաց գաւառ՝ Երկաթահանք բլրին, աւետիս տուեց գաւառին: Երբ աւետիսը տարածուեց, ողջ ժողովուրդը խառնուեցաց հասաւ այն տեղը, որ աւետաբերների մեկնումը վայրը լինելու պատճառով կոչւում է Առաքելոց բլուր: Ապա, խումբ-խումբ միմեանց փարուելով, ընկան նշխարներ բերողի ոտքերը, եւ, ի յիշատակ կատարուածի, իւրաքանչիւրը մի քար դրեց բլրի վրայ: Այդ մանր քարերի կարկառակոյտը կայ մինչեւ օրս եւ համապատասխանում է եկած ժողովրդի թուին: Ապա նշխարներն իջեցրին լեռից, որպէսզի տանեն Ռշտունեաց երկիր, սակայն իսկոյն եւեթ արգելուեց, քանզի ոչ ոքի չյաջողուեց ո՛չ գրաստի, ո՛չ էլ մարդու միջոցով տեղաշարժել այն: Երեք օր բազմութիւնը տարակուսանքի մէջ էր... Ապա տեսիլքի մէջ յայտնուեց Աստուծոյ հրեշտակը եւ հրամայեց իջեցնել այնտեղից: Զորակի վրայ մի բարձրավանդակ նկատելով՝ այնտեղ էլ դրեցին սուրբ եկեղեցու

1 Ադեն — Եդեմ

հիմքերը, որտեղ եւ զետեղեցին սուրբի նշխարները: Սուրբ աջի համբաւը տարածուեց ամէնուր, եւ թէ՛ մերձակայքից ու թէ՛ հեռուներից այնտեղ էին հասնում՝ ընծայ բերելով, եւ ողորմութիւն ստանում՝ բժշկուելով տարատեսակ ցաւերից:

Իսկ թէ ինչ եղաւ սուրբի ամբողջ մարմինը Մծբինում, տարբեր կարծիքներ կան, որովհետեւ սուրբի վարքագիրը գրում է. «Նրա մահուանից յետոյ այն քաղաքում հռոմէական զօրքը նուաճեց, եւ պարսից արքան, գալով, ոչ թէ պատերազմով, այլ սիրով նուաճեց այդ քաղաքը»:

Իսկ Բիւզանդը, որը սրանից ժամանակով հեռու չէր, այսպէս է գրում. «Բայց նրա ոսկորները շնորհուեցին Ամիդի քաղաքացիներին, երբ յունաց եւ պարսից թագաւորների միջեւ պատերազմների պատճառով մծբնացիների հետ այստեղից այնտեղ տեղափոխուեցին»:

Նոյն քանի ամենայն մանրամասնութեամբ հաստատում է նաեւ Թէոդորետոսը՝ Փիլոթէոսին ասածի մէջ. «Միաժամանակ անց Մծբին քաղաքի բոլոր բնակիչները գաղթեցին. տարան նաեւ առաջամարտիկի մարմինը, որովհետեւ այն քաղաքը կայսեր կողմից տրուեց պարսից թագաւորութեանը: Թէպէտեւ դժուարանում ու վշտանում էին տարագրութեան համար, բայց գովերգում էին յաղթազգեաց առաքինու զօրութիւնը, որովհետեւ նրա՝ իրենց հետ չլինելու դէպքում բարբարոսների իշխանութեան ներքոյ կլինէին»:

Արդ, եթէ այսպէս էլ եղած լինի, հաւաստի է թւում այն պատմութիւնը, թէ՝ երբ պարսիկները տիրեցին Մծբինին ու նրա շրջաններին, մծբնացիները սուրբի մարմինն իրենց հետ տարան Ամիդ, իսկ այնտեղից՝ չգիտենք, թէ ուր: Յայտնի է հետեւեալը, որ մինչեւ օրս Մծբինում, եկեղեցու մէջ, սուրբի գերեզմանը կայ եւ թափուր է մնում:

Իսկ նրա սուրբ աջի եւ նշխարների մասին, որ Ռշտունիք բերուեցին, «Ծառընտիրը» գրում է, թէ այն տեղը, ուր սուրբ Յակոբը բնակուեց, այժմ կոչւում է Մոգս, այսինքն՝ Մոկաց երկիր: Եւ որովհետեւ այդ տեղը ժամանակներ անց այլազգիների ձեռքն էր ընկել, Հայոց թագաւորը՝ Արծրունեաց տոհմից, գանձեր տալով, գնեց այն եւ փառազարդ եկեղեցի կառուցեց ու Ամենասուրբ Երրորդութեանը փառաբանելու համար քահանաներ ու կրօնաւորներ կարգեց: Սրան յարմար է գալիս սուրբ Գրիգոր Նարեկացու այն պանծալի ներբողեանը, որն Արծրունի թագաւորների օրօք ձօնեց սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետին, ուր ասում է՝ դիմելով Քրիստոսին.

«Այս գովեստի քարը հաստատի՛ր Քո հանգստեան յարկի շինուածքում՝ այս բարի հովուի վկայարանում, իսկ մեզ փոխադրի՛ր այդ արքայական տաճարի գաւթի լուսապաճոյճ բնակարանը»:

© National Library of Armenia

Իսկ սուրբի նշխարների մասին ասում է.

«Հոգով սլացաւ դէպի ակնկալութեան վերամբարձ առհաւատչեան, իսկ մարմնի ոսկորների մասունքներում անսպառ պարգեւներ տնկեց, որով յուսադրեց եւ կենդանի յարութիւնը ցոյց տուեց [մեզ]... Աշխարհը նրանով հանդերձեալի յուսադրութիւնն ունի, իսկ ինքը հաստատուն, աննկուն, նորոգ ու աներեր կանգնել է՝ միջնորդելով երկնքին ու երկրին»:

Իսկ սուրբ Յակոբին նուիրուած շարականում, որը շքեղօրէն գրուել է Թերեւս Գրիգոր Նարեկացու կողմից, ոչ միայն սուրբի ամբողջ վարքն է գեղեցկօրէն նկարագրուում, այլեւ որոշակիօրէն յիշատակուում են նրա նշխարները եւ տաճարը.

«Երկրպագում ենք Քրիստոսի ճգնաւոր եւ պատուական վկայի, որ աշխարհի պարծանքն է եւ մեր բարեխօսը, տոկացած նշխարների առջեւ...

Քո սուրբ տաճարում երկրպագում ենք նշխարներիդ եւ փառաւորում քո հանգստեան յիշատակի օրը. բարեխօսի՛ր Քրիստոսին մեզ՝ քո ոտնը կառարողներիս համար»:



ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՎԱՐՔԸ

Թագաւորական պանծալի անուն մեծն Բասիլիոսը կամ Վասիլիոսը, որ Բարսեղ Կեսարացին է՝ ըստ նախնիներից մէկի ճշմարիտ խօսքի՝ Կաթողիկէ Եկեղեցու պայծառ քահը եւ աւետարանական ճշմարտութեան լուսափայլ արեգակը, որ իր աստուածաբանութեան ճառագայթները սփռեց ամբողջ աշխարհում, վարքով՝ կատարեալ եւ խօսքով՝ գերիմաստ, գրով զօրաւոր եւ աստուածային ու արտաքին գիտութիւնների մէջ՝ գերհմուտ, բոլոր առաքինութիւններով լի, եղաւ Եկեղեցու սիւն, քահանայապետութեան զարդ եւ աստուածպաշտութեան դպրոց, Աստուծոյ այր, Հօր Միածնի պատգամախօս, Հաւատարիմ տնտես եւ Սուրբ Հոգու գրիչ, Ում կողմից սահմանուեց լինել Եկեղեցու ազատարարը բոլոր հերձուածներից, որպէս երկնաւոր շանթ՝ հրեղէն լեզուով ջախջախիչը Արիոսի, Եւնոմիոսի, Սաբէլի, Հոգեմարտ Մակեդոնի, Ապողինարի եւ բոլոր աղանդաւորների գլուխների: Նա եղաւ ոչ միայն կեսարացիների, այլեւ՝ ամբողջ աշխարհի, ոչ միայն իր ժամանակի, այլեւ՝ բոլոր ժամանակների վարդապետը:

Սուրբ Բարսեղը ծնուել է Նիկիայի սուրբ Ժողովի օրերին (ըստ ոմանց՝ 328, իսկ ըստ այլոց՝ 317 թուականին) Կեսարիայում՝ Առաջին Հայքի մայրաքաղաքում, որ Գամիրքի կամ Կապադովկիայի Մաժակն է, Արգէոս լեռան մօտերքում, ազնուական եւ աստուածասէր ընտանիքում: Նախնիները Փոքր Հայքից էին՝ Սեբաստիայից. հայրը՝ համանուն Բասիլիոսը, նէոկեսարացի էր՝ Պոնտոսից, իսկ մայրը՝ Եմեղիան՝ կապադովկացիների Կեսարիայից:

Նրա մօրական պապը Քրիստոսի հաւատքի համար նահատակուել էր Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի հալածանքների ժամանակ, ինչպէս եւ՝ Գրիգոր անունով քեռին, որն այն կողմերի եպիսկոպոսն էր (նրանից է Բարսեղի եղբայր Գրիգոր Նիւսացին ստացել իր անունը): Իսկ մօր մայրը՝ սրբուհի Մակրինան, որից էլ Բարսեղի քոյրը ստացել էր իր Մակրինա անունը, Գրիգոր Սքանչելագործի աշակերտուհին էր:

Բարսեղն ունէր երեք եղբայր՝ Նաւկրատիոս, որ վաղամեռիկ եղաւ 22 տարեկանում, Գրիգոր, որ դարձաւ Նիւսիայի եպիսկոպոս, եւ Պետրոս՝ ծնողների կրտսեր զաւակը, որ Սեբաստիայի եպիսկոպոսը եղաւ. նաեւ վեց քոյր, որոնցից երեքը կոյսեր էին, իսկ երեքը՝ ամուսնացած: Մանկութեան ու պատանութեան տարիներին Բարսեղն իր տատից՝ սրբուհի Մակրինայից, լսեց սուրբ Գրիգոր Սքանչելագործի վարդապետութիւնը, իսկ նրա Մակրինա քոյրը, որ երեւելի եղաւ սրբութեամբ եւ իմաստութեամբ, նոյնպէս մեծապէս սատարեց իր եղբայրների եւ քոյրերի հոգեւոր դաս-

© National Library of Armenia

տիարակութեանը:

Արդ, նրանց բոլորի պարծանքը անդրանիկ եղբայրն էր՝ մեծն Բարսեղը, որ ծնուեց, ինչպէս Սամուէլը, իբրեւ իր սուրբ ծնողների աղօթքների պտուղ, սնուեց աստուածպաշտութեան բոլոր կարգերով, դաստիարակուեց Հօրից՝ իբրեւ առաջին ուսուցչից՝ Սուրբ Գիրքն ու արտաքին դպրութիւնները ուսանելով: Դպրոցում նրա հետ էին նաեւ հայ մանուկներից ոմանք, որոնց յետագայում Բարսեղն ուսումնակից եղաւ Աթէնքում:

Պատահեց, որ մանկութեան տարիներին Բարսեղը մերձիմահ հիւանդացաւ: Հայրը խոր տրտմութեան պահին քնի մէջ տեսաւ Տիրոջը, որ Աւետարանում թագաւորազնին ասուածը երկրորդեց իրեն. «Գնա, քո որդին կենդանի է» [տե՛ս Յովհ. Դ 50]: Նոյն հաւատքով լսելով նա թագաւորազնի պէս ստացաւ իր հաւատքի պտուղը. Բարսեղն առողջացաւ եւ վերադարձաւ իր նախկին կայտառութեանը:

Հօր եւ տատի վախճանուելուց յետոյ, 16 տարեկանում, Բարսեղն իր անձը տուեց առաւել ուսողութեան ոչ միայն կապադովկացիների, այլեւ՝ պաղեստինցիների Կեսարիայում, որ առաւել բարգաւաճ քաղաք էր: Բազում տարիներ այս կողմերում ապրելուց եւ կրթուելուց յետոյ գնաց Կոստանդնուպոլիս՝ թագաւորանիստ քաղաքի ուսումնարաններում առաւելը գտնելու նպատակով: Ըստ ոմանց՝ այստեղ, իսկ ըստ այլոց՝ ասորաց ինների Անտիոքում (ոմանք էլ ասում են՝ Աթէնքում, որտեղից Բիւզանդիա էր եկել), սուրբ Բարսեղն աշակերտեց հեթանոս փիլիսոփայ եւ անուանի վարժապետ Լիբանիոսին:

Երբ, մօտաւորապէս Տիրոջ 343 թուականին, սուրբ Բարսեղը գնաց Աթէնք, այնտեղ հանդիպեց իր գաւառակցին ու ծանօթին՝ Գրիգոր Նազիանզացուն, եւ մտերմացաւ նրա հետ: Միմեանց գործակից լինելով նրանք առաջադիմում էին ամէն բանում: Լինելով կարեւոր գիտութիւնների մէջ համուտ եւ կենցաղավարութեամբ՝ առաքինի՝ նրանք հրեշտակաների պէս էին երեւում աթէնացիների մէջ:

Թէպէտ այն ժամանակ հելլէնացիների Աթէնքում շատ էին իմաստուն վարժապետները, բայց աշակերտների բազմութեամբ ու պերճախօսութեամբ առաւել յայտնի էր Պռոէր կամ Պարոյր (ինչպէս կարծւում է) Սիւնեցին կամ Արծրունին, որին յոյներն անուանում էին Բռօէրէսիոս հայկազուն քրիստոնեայ սոփեստէս: Նրա մասին իր աշակերտը՝ յոյն հեթանոս փիլիսոփայ Եւնապիոսը, «Փիլիսոփաների վարքում» գրում է. «Նա Հայոց աշխարհից էր, այսինքն՝ Հայաստանից, որ սահմանակից է Պարսկաստանին». եւ դարձեալ՝ «Բախտը մանկուց նրան, Հայաստանից հանելով, ձգեց Անտիոք, որովհետեւ ուղիղ Աթէնք չեկաւ: Անտիոքում, ճարտասանութիւն ուսանելով, Պարոյրն Աթէնք՝ Յուլիանոս վարժապետի

մօտ եկաւ Հեփեստիոնի հետ, որի հետ մի հոգի եւ մի մարմին էր: Բայց Յուլիանոսի աչքն առաւել Պարոյրի վրայ էր, որին աշակերտները վարժապետից յետոյ նրա յաջորդ ընտրեցին: Պարոյրին աշակերտեցին պոնտացիները եւ սահմանակից բոլոր ազգերը՝ բիւթանացիները, ասիացիները, եգիպտացիները եւ լիբէացիները, մինչեւ որ ուրիշ ուսուցիչներ նախանձեցին եւ կաշառեցին Անթիպատոսին՝ նրան Աթէնքից հանելու համար»:

Այնպէս եղաւ, որ նրա սքանչելի համբաւի պատճառով Կոստաս կայսրը Պարոյրին հրաւիրեց Գաղղիա եւ իր պալատի մեծամեծներին կենակից ու սեղանակից դարձրեց, մանաւանդ որ առաքինի եւ խստակրօն էր, առոյգ ու գեղապանծ, հասակով բոլորից մի ոտնաչափ բարձր, իսկ հանճարով ու հռետորութեամբ՝ մէն-միակը: Կայսրը մինչեւ անգամ նրան Հռոմ ուղարկեց, որպէսզի հռոմէացիները եւս տեսնեն այսպիսի անգուգական մարդուն: Հռոմում նրանով այնքան սքանչացան եւ պատուեցին, որ մինչեւ իսկ հասակի չափով արձան կանգնեցրին այսպիսի վերտառութեամբ՝ «Հռոմի թագաւորից՝ խօսքի թագաւորին»: Ապա կայսրը նրան արձակեց, որպէսզի գնայ Աթէնք՝ իր վարժապետութեան աթոռը՝ շնորհելով նաեւ պատուի արտաքին շուք՝ արքունական բանակների ոստիկանի կամ իշխանի կոչում, որպէսզի կարողանայ կղզիներից պահանջել ցորենի հարկը՝ աթէնացիների կարիքների համար: Իսկ նրա վախճանի մասին այսպէս է գրում Եւնապիոսը. «Պարոյրը վեր բարձրացաւ մարդկանցից՝ այնչափ եւ այսպիսին լինելով եւ իր խօսքով ու ճառերով լցնելով աշխարհը: Նրան աշակերտեցի հինգ տարի: Նա ութսունհինգ տարեկան էր, բայց՝ ժիր ու յորդառատ խօսքով, ծերութեան օրով անչափ գեղեցիկ ու աստուածային այր, իսկ գործերը՝ մեծամեծ եւ երկնային: Եւ այս՝ նրա՝ իմ վարդապետը լինելու պատճառով չեմ ասում»: Ահա այսպիսի եւ այնչափ այրը՝ Պարոյր Հայկազունը, Բարսեղի եւ Գրիգորի առաջին ու գլխաւոր ուսուցիչը եղաւ Աթէնքում, նրանից յետոյ՝ սոփեստէս Լիբանիոսը, ում ուրացող Յուլիանոսը հեթանոսութեան համար նախապատուութիւն էր տալիս, քան քրիստոնեայ Պարոյրին, ում հանդէպ էլ ղժկամ էին եւ նոյն յոյն իմաստունները:

«Պարոյրի յիշատակը նրանով անմահացաւ,– ասում է Բոլլանդեան Բայերտիոսը,– որ նրա աշակերտները եղան սուրբ Բարսեղը եւ Գրիգորը. նաեւ՝ որ փոքր ի շատէ հալածանքներ անգամ կրեց Յուլիանոսից, մանաւանդ որ չընդունեց նրա ոչ մի պարգեւը՝ գարշելով նրա ամբարշտութիւնից, որովհետեւ, ինչպէս «Քրոնիկոնում» գրում է Հերոնիմոսը, «Յուլիանոսն օրէնք էր սահմանել, որով արգելել էր քրիստոնեաներին ազատ արուեստների վարժապետներ լինել եւ միայն Պարոյրին էր շնորհել ուսուցանել քրիստոնեաներին, սակայն նա ինքնակամ թողեց դպրատունը»:

Այս եղաւ Ուրացողի թագաւորութեան օրերին, իսկ այն, որ դրանից առաջ նա Բարսեղի եւ Գրիգորի հետ վայելել էր Պարոյրի աստուած-

© National Library of Armenia

իմաստ վարժապետութիւնը, իսկ յետոյ չարացել նրա դէմ՝ քրիստոնեայ լինելու համար, վկայում է սուրբ Բարսեղի գիրը՝ ուղղուած Յուլիանոս Ուրացողին. «Յիշեցնում եմ քեզ մեր ուսման փոյթը, որով սուրբ ու գերագոյն ուսմունքը միասին ուսանեցինք Աթէնքում եւ միասին մերձեցանք աստուածեղէն գրքերի վերծանութեանը»:

Աստուածաբան Գրիգորը պատմում է. «Աթէնքում Բարսեղին ուսումնակից հայ ուսանողներ կային Հայաստանից, եւ երբ ուսման նրբին խնդիրների մէջ նրանք նեղը գցեցին Բարսեղին, ես, վրայ հասնելով, նախ իրաւացի համարեցի նրանց, ապա, ճարտարութեամբ Բարսեղի կողմն անցնելով, նրան յաղթող դարձրեցի, որով առաւել ջերմացաւ մեր բարեկամութիւնը»:

Բայց Բարսեղն Աթէնքը չգտաւ այնպիսին, ինչպիսին որ յոյս ունէր տեսնել, քանզի նրա սիրտը վերինն էր խորհում, մինչդեռ աթէնացիները հետամուտ էին երկրաւոր գիտութիւնների եւ աշխարհիկ փառքի ու վայելքների: Նրա հոգին տրտմում էր, եւ Աթէնքը կոչում էր ունայնութիւն եւ սնոտի երջանկութիւն: Իսկ Գրիգորը նրան յորդորում էր չվհատուել մինչեւ ուսման ընթացքն աւարտելը, որից յետոյ համամիտ ու համակամ իրենց անձերը կնուիրեն հոգեւոր վարդապետութեան: Սրանով սփոփուելով՝ Բարսեղը միաժամանակ հանդարտուեց: Նրանց երկուսի՝ Բարսեղի եւ Գրիգորի կենցաղավարութիւնը սքանչելի էր բոլորի աչքում՝ հեռու երիտասարդական ցանկութիւններից ու զբաղումներից եւ զարդարուած առաքինակրօն գործերով: Նրանք ծաղրում եւ այպանում էին հելլենների պաշտամունքները, պանծալով բերկրում էին Քրիստոսի անուամբ եւ քրիստոնէական առաքինութեամբ լցնում աթէնացիների աչքերը:

Սրանից յետոյ, 355 թուականին, Յուլիանոսի՝ Աթէնք գալուց մօտ մէկ տարի անց, Բարսեղը, աւարտելով ուսումը, հեռացաւ Աթէնքից՝ հրաժեշտ տալով Գրիգորին: Ասես մի մարմինը երկու մասի բաժանուեց. այս պատճառով Գրիգորը նրանից յետոյ երկար չմնաց այնտեղ: Եւ նրանց հեռանալուց յետոյ Աթէնքը մնաց որպէս մարմին՝ առանց հոգու:

Արդ, երբ Բարսեղը հայրենիք վերադարձաւ, կեսարացիները, տեսնելով նրան բոլոր գիտութիւններով ու առաքինութիւններով զարդարուած եւ կատարելութեան չափին հասած, ընդունեցին նրան իբրեւ իրենց քաղաքի նորոգիչ ու պահպանիչ: Իսկ նրա քոյրը՝ սքանչելի Մակրինան (ինչպէս գրում է նրանց եղբայր Գրիգոր Նիւսացին), մտահոգուելով, որ չլինի թէ Բարսեղը, երկրաւոր իմաստութեամբ լցուած, զանց առնի հոգեւորը, նորոգում էր նրա սիրտը Քրիստոսի սիրոյ եւ քրիստոնէական կատարելութեան մէջ՝ ինչպէս թէ ինքնակամ ընթացող երիվարին եւս մտրակելով: Եւ այսպէս, Բարսեղը, արհամարհելով աշխարհի փառքն ու աշխարհիկ գիտութիւնները, իր անձն ամբողջովին տուեց աստուածային

իմաստութեան եւ ծայրագոյն խոնարհութեան, ինչպէս Մովսէսը, որ եբրայեցիների մօտ ոչինչ համարեց եգիպտացիների մեծամեծ գանձերը:

Յայտնի չէ, թէ երբ է մկրտուել Բարսեղը: Ստոյգ է թւում այն [կարծիքը], թէ Գրիգոր Աստուածաբանի նման նա մկրտուեց Աթէնքից վերադառնալուց յետոյ, Կեսարիայի Տիանէոս պատուական եպիսկոպոսապետի կողմից, ով նրան Եկեղեցու գրակարդաց ու պաշտօնեայ կարգեց:

Բարսեղը Կեսարիայում երկար չմնաց, այլ, հետեւելով Աւետարանի խօսքին՝ թողնել ամէն ինչ եւ գնալ Քրիստոսի ետեւից, գնաց Աղեքսանդրիա եւ եգիպտացի հայրերի անապատ, շրջեց Պաղեստինում, Ստորին Ասորիքում եւ Միջագետքում՝ միայնակեացների մօտ, եւ, նախանձախնդիր լինելով նեղ եւ անձուկ ճանապարհին, նրանցից քաղեց կրօնաւորական կեանքի բոլոր ծաղիկները: Ինչպէս ինքն է ասում՝ «Ես զարմանում էի նրանց վրայ եւ երանելի համարում այն այրերի կեանքը, որովհետեւ գործով էին յայտնի դարձնում Յիսուսի մահն իրենց անձերում կրելը: Եւ ես կամենում էի իմ կարողութեան չափով հետեւող լինել նրանց»:

Երբ Կեսարիա վերադարձաւ, կամեցան որպէս Եկեղեցու պաշտօնեայ ունենալ նրան, բայց նա փութաց հանդարտուել առանձնութեան մէջ: Նոյն գրութեամբ յորդորում էր Գրիգոր Նազիանզացուն՝ ըստ իրենց նախկին խորհուրդների: Սակայն Գրիգորի ծնողները միաժամանակ չթողեցին նրան, իսկ Բարսեղը, քանի որ այդպիսի արգելք չունէր, առանձնացաւ Պոնտոսի մի կողմում, մանաւանդ որ նրա երանելի մայրը՝ Եմելիան, դստեր՝ Մակրինայի հետ արդէն մտել էր կուսանաց վանք, որ գտնւում էր Նէոկեսարիայից ոչ հեռու: Նէոկեսարացիները Բարսեղին խնդրեցին իր հօր նման դպրոցի վերակացու լինել՝ շատ բաներ խոստանալով, բայց նա ընտրեց անապատի առանձնութիւնը մի լեռան վրայ՝ մայրիների խիտ անտառում՝ պարապելով աղօթքով, պահքով, տքնութեամբ եւ Սուրբ Գրքի ընթերցանութեամբ, կատարելով միայնակեացների ամբողջ ճգնութեան կարգը, սպանելով մարմնի երկրաւոր անդամները, իրեն կրթելով բոլոր ներքին առաքինութիւնների մէջ, հեռանալով աշխարհից եւ մերձենալով Աստծուն:

Այնտեղ 358 թուականին նրան միանում է եւ Գրիգորը: Եւ հաւատքի այս լծակիցները, խօսքով ու գործով յորդորելով միմեանց, ընթանում էին զօրութիւնից զօրութիւն: Ճգնում էին առանձին խուցերում եւ միմեանց հանդիպում հոգեւոր մխիթարութեան համար: Այն ժամանակ եղբայրները ժողովուեցին մեծն Բարսեղի մօտ, նրան ճանաչեցին հոգեւոր հայր ու հոգեւոր կարգերի վարժիչ եւ կրօնաւորեցին նրա ձեռքի տակ: Բարսեղն ամենայն բարեկարգութեամբ հրահանգներ տուեց նրանց գիտնաւոր վարդապետութեամբ հանդերձ՝ տեսականը գործնականի հետ համակցելու համար, աւանդեց նաեւ կանոններ եւ մէկ առ մէկ մեկնեց

© National Library of Armenia

դրանք: Դրանից յետոյ սուրբ Բարսեղի կարգն ու կանոնադրութիւնը հաստատուեց այնտեղ եւ բազում այլ տեղերում, մանաւանդ, երբ իր եպիսկոպոսութիւնից յետոյ բազմացրեց վանքերն ու վանականներին եւ ամբողջացրեց իր կանոնադրութիւնը: Իսկ Գրիգորը որոշ ժամանակ (մօտ երեք տարի) Բարսեղի մօտ մնալուց յետոյ հարկադրուեց վերադառնալ տուն՝ իր ծերունի հօր մօտ, եւ ձեռնադրուել քահանայ, ապա վերադարձաւ Բարսեղի մօտ եւ բռնադատելով նրան իր հետ տարաւ:

Այն օրերին Կեսարիայի Տիանէոս արքեպիսկոպոսը, մահուան գուռը հասնելով, իր մօտ կանչեց Բարսեղին եւ երդուելով նրան ասաց, որ ակամայ է եղել իր սխալուելը եւ Կոստանդինոս կայսեր հրամանով որոշ եպիսկոպոսների միաձայն դաւանութիւնը ստորագրելը, որպէսզի Եկեղեցին չպառակտուի: «Մինչեռ ես,– ասում է,– չեմ հեռացել Նիկիայի 318 սուրբ հայրապետների դաւանանքից եւ քեզ էլ պատուիրում եմ հաստատուն մնալ նրա մէջ»: Այսպէս էր խօսում, որովհետեւ այդպիսի դէպքերի պատճառով զայրակղութեան առիթ էր տուել Բարսեղին եւ այլ ուղղափառների:

Տիանէոսի վախճանուելուց յետոյ կապադովկացիների Կեսարիայի արքեպիսկոպոսութեան աթոռին նստեց Եւսեբիոսը: Վերջինս Բարսեղին քահանայ ձեռնադրեց, իսկ երանելին տրտմեց, որովհետեւ իրեն անարժան էր համարում եւ իր առանձնութիւնը՝ խափանուած: Աստուածաբան Գրիգորը նրան գրեց եւ Աստուծոյ կամքով մխիթարեց՝ իրեն օրինակ բերելով, թէ՝ «Ես եւս հնազանդութեան համար նոյն ծառայութիւնն ընդունեցի»:

Այնուհետեւ եպիսկոպոսապետի հրամանով սուրբ Բարսեղը սկսեց Եկեղեցում քարոզել Աստուծոյ խօսքը եւ ժողովրդին մեկնել Առակաց գիրքը: Բայց չթողեց իր առանձնութիւնը, որքանով այն իրենից էր կախուած, որովհետեւ ազատ պահերին առանձնանում էր տանը՝ աղօթելու եւ ճգնելու: Կեսարացիներից աշակերտներ հաւաքելով՝ նրանց վարժեցնում էր կրօնաւորական կարգերի եւ իր կանոնների մէջ:

Այն օրերին, Կոստանդինոսից յետոյ, Յուլիանոս Ուրացողի թագաւորելու ժամանակ, երբ զաղտնի եւ յայտնի պատերազմներ սկսուեցին Աստուծոյ Եկեղեցու դէմ, Եւսեբիոս Հայրապետի եւ Բարսեղ քահանայի միջեւ զժտութիւն ընկաւ: Աստուածաբանն ասում է, որ եպիսկոպոսը մարդկային թուլութիւն կրեց. թերեւս նախանձեց ժողովրդի աչքում նրա ունեցած պատուին: Եւ որովհետեւ շատ էին նրանք, ովքեր Բարսեղի կողմից էին, Բարսեղը երկիւղեց՝ չլինի թէ մեծ աղմուկ բարձրանայ եպիսկոպոսապետի դէմ (մանաւանդ, ուրիշ եպիսկոպոսներ նոյնպէս դժգոհ էին նրանից), եւ որպէս խաղաղութեան հնար գտաւ իր ցանկալի անապատը եւ կրկին անգամ առանձնացաւ այնտեղ: Նրա հետ առանձնացաւ եւ Գրիգոր Աստուածաբանը, ով եպիսկոպոսապետին հաշտեցրեց Բարսեղի

հետ: Բայց տակաւին երկուսով անպատում մնացին եւս երեք տարի: Այդ ընթացքում Բարսեղը մերթ ընդ մերթ գալիս էր սատարելու Եկեղեցուն, մինչեւ իսկ եպիսկոպոսապետի հրամանով հեռուոր տեղեր՝ Քաղկեդոն, Կոստանդնուպոլիս էր գնում: Զգուշանալով արիոսականների հետ վիճելուց (որոնց գիտէր անզեղջ՝ չարիքից)՝ զօրաւոր խօսքերով գրեց նրանց դէմ:

Ասում են՝ սուրբ Բարսեղի քահանայութեան եւ միայնակեցութեան օրերին են տեղի ունեցել դէպքերը նրա եւ Յուլիանոսի միջեւ, թէպէտ ամանք վերագրում են նրա եպիսկոպոսութեան օրերին: Որովհետեւ ուրացող կայսրը, որ շատ հալածեց Եկեղեցին, առաւելապէս՝ առաջնորդներին ու վարդապետներին, ակնածելով մեծն Բարսեղից՝ հնար մտածեց նրան սէր կեղծաւորել իբրեւ Աթէնքի իր դասակցի եւ շողոքորթ խօսքերով մի թուղթ գրեց նրան: Սուրբը, հասկանալով նրա խորամանկութիւնը, յայտնեց նրա սրտի չարութիւնը, կշտամբեց անզգամութիւնը եւ երբեմնի դաւանած հաւատքի դէմ ընդվզումը: Իսկ ուրացողը լրբաբար կրկին գրեց նրան, թէ՝ «Քրիստոնէական կրօնին անծանօթ չեմ, ընթերցել եմ ձեր գրքերը: Եւ ինչ որ կարդացել եմ, հասկացել, բայց յետոյ արհամարհել եմ: Իսկ դու,– ասում է,– ճանաչէիր այժմ իմ բարձր ինքնակալութիւնը եւ կայսերական աթոռի օրինաւոր ժառանգութիւնը եւ ուղարկէիր ինձ հազար լիտր ոսկի՝ պարսկական պատերազմի պէտքերի համար»:

Սուրբ Բարսեղը նրան պատասխանեց. «Ինչ որ ընթերցել ես, չես հասկացել, որովհետեւ եթէ հասկանայիր, չէիր դատապարտի: Քո կողմից շատ քիչ առաքինութիւն եւ անչափ շատ չարիք է գործուել, բայց ոչ այնքան՝ մեր դէմ, որքան, ինչպէս ասում է, քո գլխին: Սոսկում եմ դողալով, երբ մտածում եմ, որ ծիրանի է զգեստ վրադ եւ գլուխդ՝ թագով պսակուած, որովհետեւ դրանք առանց բարեպաշտութեան տրուեցին քեզ եւ ոչ թէ պատուելի, այլ անպատիւ են ցոյց տալիս գլուխդ: Առաւել ծաղրելի, քան դու ես, ոչ ոք չի տեսել մինչեւ այժմ, քանի որ, վեր բարձրանալով ու մեծանալով, ելար այնտեղ, ուր ձգեցին քեզ անողորմ դեւերն ու չարքերը, որովհետեւ նրանք են, որ, ինչպէս դու սովոր ես պարծենալ, մեղուի պէս թռչելով գլխիդ շուրջ, քեզ համար պսակ բոլորեցին: Արդ, թագաւորելով, սկսեցիր ոչ միայն մեծամեծների վրայ փքուել, այլեւ՝ Աստուծոյ վրայ բարձրամտել եւ բոլորի մօր ու դայեակի՝ Եկեղեցու հանդէպ թշնամանալ: Իսկ ինձանից՝ չնչին մարդուցս, պահանջում ես հազար լիտր ոսկի: Քայց թող հաճոյ թուայ քեզ, ով քաջ, ներել մեզ, որ հազիւ այնքան ինչք ունենք, որ եթէ պէտք լինի սպառել, այս մի օրուան բաւական չի լինի, որովհետեւ խոհարարութեան արուեստը դադարել է մեր տանը, եւ դանակ չի մօտենում արեանը, մեր լաւագոյն կերակուրը բանջարի տեսակն է մի կտոր հացով»:

Պատմում են, որ Յուլիանոսի մահը Պարսկաստանում սուրբ Բար-

© National Library of Armenia

սեղի եւ բոլոր Հաւատացեալների աղօթքներով եղաւ:

Ուրացողից յետոյ Եկեղեցու Հալածանքները շարունակուեցին արիւսեան Վաղէս կայսեր կողմից: Այնժամ Բարսեղը եւ Գրիգորը, ինչպէս ասում է ինքը՝ Աստուածաբանը, Պոնտոսի անապատից շուտափոյթ իջան Կեսարիա՝ սատար լինելու իրենց մայր սուրբ Եկեղեցուն: Այն ժամանակ մեծն Բարսեղը Հաւատացեալների համար եղաւ որպէս պարիսպ եւ հզօր աշտարակ թշնամու դիմաց, որպէս ազարակի փշերն այրող հուր, քանզի ոչ միայն ուղղափառներին ամրացրեց, այլեւ չարափառներին սաստեց եւ ամօթապարտ ետ դարձրեց՝ խօսքով, գործով ու գրով հաւատքի քաջմարտիկ լինելով:

Երբ շատերը տանջանքների, կապանքների, աքսորի ահից կամ Վաղէսի մօտ շնորհ գտնելու յոյսով ստորագրում էին ուղղափառութեան դէմ նրա հրովարտակը, Բարսեղը մեծ զօրութեամբ վառուեց, հոգով զօրացաւ ինքնակալի դէմ, երբ նա, Կոստանդնուպոլսից ելնելով, շարժւում էր դէպի արեւելք՝ համոզուած, որ ոչ ոք չի ընդդիմանայ իր հրամաններին, քանզի խորտակել էր բարբարոսներին: Նրանից առաջ, իրեւ թէ թագաւորի ճանապարհը պատրաստելու համար, եպարքոսը քաղաքից քաղաք էր մտնում, հեռացնում ուղղափառ եպիսկոպոսներին եւ հաստատում չարափառներին, մինչեւ եկաւ կապադովկացիների Կեսարիա, ուր կանչեց Բարսեղին եւ ասաց. «Արդեօք լսե՞լ ես, թէ ինչ եմ արել այն տեղերում, որտեղով անցել եմ: Արդ, ասում եմ քեզ, եթէ լսես ինձ, թագաւորից քեզ փառք ու պատիւներ առնել կտամ, նաեւ՝ Եկեղեցու դեկավարութիւնը: Ապա թէ ոչ, քեզ են սպասում դառնութիւններն ու վիշտը»: Երբ նեղին պատասխանեց. «Ձեզ պէտք է ոչ միայն ետ կանգնել այն չարիքից, որ գործեցիք, այլեւ՝ ապաշխարել: Իսկ մեզ ոչինչ անել չէք կարող, որովհետեւ ոչ մի անցաւոր բարիք չի կարող պատրել աստուածասէրներին, եւ ոչ մի չարիք՝ վախեցնել նրանց, ովքեր վերնային յոյսի ակնկալիքն ունեն: Քրիստոնեան կարող է ցաւել այն բանի համար միայն, որ ի քնէ միայն մէկ մահ է սահմանուած, եւ ինքը չի կարող բազում անգամ մեռնել Ծշմարտութեան համար»:

Եպարքոսը զարմացաւ Աստուծոյ մարդու համարձակութեան վրայ եւ սկսեց մեղմաբար խօսել. «Մեծ ինքնակալի կամքը թեթեւ բան մի՛ համարիր, որ կամենում է լինել քո ժողովրդից, այլ համաձայնիր նաեւ նրան վարդապետ լինել: Իսկ այդ կլինի, եթէ Հաւատոյ Հանգանակից հանես «Համազոյակից»-ը կամ «նոյն Ինքը՝ Հօր քնութիւնից»-ը: Բարսեղը պատասխանեց. «Ծանր է Աստուծոյ Եկեղեցու մէջ ընդունել այդ ինքնակալին: Իհարկէ, մեծ բան է հոգին ապրեցնելը, ոչ՝ որովհետեւ կայսեր է, այլ՝ որովհետեւ մարդու է: Բայց ես այնքան հեռու եմ Հաւատոյ Հանգանակից մի բան պակասեցնելուց կամ աւելացնելուց, որ յանձն չեմ առնի բառերի դասաւորութիւնն իսկ փոփոխել»: Այսպէս հաստատուն կերպով Բարսեղը դիմակայեց Վաղէսին, որ յոխորտանքով Կեսարիա եկաւ եւ ոչինչ չկարողացաւ անել այնտեղ, այլ, հակառակ իր կամքի, սէր ցոյց տալով Բարսեղին ու կեսարացիներին, գլխիկոր հեռացաւ այնտեղից արիոսեան եպիսկոպոսների հետ, որոնք շրջում էին իր հետ:

Երբ Կեսարիայի եպիսկոպոսապետ Եւսեբիոսն այս կեանքից փոխուեց, ամէնքը կամեցան նրա տեղում Բարսեղին դնել: Բարսեղը փութաց գրել Գրիգոր Աստուածաբանին՝ շտապ գալ իր մօտ, իբրեւ թէ հիւանդ է, բայց կամենում էր Կեսարիայի առաջնորդ ընտրել տալ Գրիգորին: Իսկ Գրիգորը, ճանապարհ ընկնելով, երբ լսեց Եւսեբիոսի մահուան մասին, նաեւ՝ մտաբերելով Բարսեղի հնարները, չուզեց գնալ նրա մօտ, այլ շատերին յորդորեց Բարսեղին նստեցնել Հայրապետութեան աթոռին: Այդպէս էլ եղաւ: Բարսեղին ձեռնադրող եպիսկոպոսների մէջ գլխաւորը Գրիգորիոս Ծերունի եպիսկոպոսն էր՝ Գրիգոր Աստուածաբանի Հայրը: Այս եղաւ Տիրոջ 370 թուականին: Իսկ թէ որքա՜ն վայելուչ էր նրա՝ Հայրապետութեան աթոռին նստելը յօգուտ Կաթողիկէ Եկեղեցու, եւ թէ ինչպիսի՜ շնորհով ու իմաստութեամբ կառավարեց իր Հօտը, ո՞վ կարող է պատմել... Թո՛ղ որ բազում նեղութիւններ կրեց մերձաւորների ու հերաւորների երկպառակութիւնների պատճառով, բայց ամէն ինչում մնաց իրեւ հաստատուն վէմ՝ շատ հարցերում գործակից ու խորհրդատու ունենալով Աստուածաբանին, որին ճարտարութեամբ, հակառակ նրա կամքի, եպիսկոպոս ձեռնադրեց, որպէսզի նրա լոյսն առաւել լուսաւորի Աստուծոյ Եկեղեցին:

Մեծ եղան Բարսեղի աշխատութիւնն ու ջանքերը ժամանակի ազրիոսական եւ այլ աղանդներ արմատախիլ անելու գործում: Քանզի նրա նպատակն էր ոչ միայն անաղարտ պահել իր Հօտը, այլեւ՝ սուրբ, անբիծ ու խաղաղութեան մէջ տեսնել ողջ Ընդհանրական Եկեղեցին: Դրա համար թղթեր էր գրում տարբեր վայրեր, առաւելապէս՝ մեծն Աթանաս Աղեքսանդրացուն եւ Հռոմի Հայրապետ Դամասոսին, եւ հանապազօրեայ աղօթքներով ու մտածութեամբ մաշում էր իր անձը, լուսաւոր ու ազդու բառերով ճառեր գրում՝ հերեսիովտեաններին վանելու եւ ուղղափառ վարդապետութիւնը հաստատելու համար: Նաեւ ուղղափառ եպիսկոպոսների երկպառակութիւնը բազմահնար խորհուրդներով դէպի Աստուծոյ միաբանութիւնն ու խաղաղութիւնն էր դարձնում՝ յանձն առնելով կրել թշնամիների բազմապատիկ բամբասանքները: Ծգնում էր հանապազ եւ անձանձրոյթ աշխատում, գրում մեկնութիւններ եւ քարոզում Աստուծոյ խօսքը: Քաջ հովուի եւ տիեզերալոյս վարդապետի բոլոր այլ առաքինի գործերն անհնար է մէկ առ մէկ յիշատակել: Նա շատ հալածանքներ կրեց Վաղէս կայսեր եւ նրա գործակիցների կողմից, սակայն ամէն ինչում յաղթող եղաւ: Մինչեւ իսկ, երբ կայսրը կամեցաւ նրան աքսորելու վճիռ տալ, Աստուած խափանեց, որովհետեւ նոյն գիշեր, երբ

© National Library of Armenia

վճիռն էր գրում, արքունի տան վրայ պատուհաս իջաւ. արքայի որդին մերձիմահ հիւանդացաւ, իսկ կինը, յանկարծակի ցաւերով բռնուելով, տանջւում էր որպէս թէ դահիճների ձեռքում: Սուրբ Եփրեմն աւելացնում է, որ վճիռը ստորագրելու պահին Վաղէսի ձեռքում գրիչը երեք անգամ կոտրուեց, մինչեւ ստիպուած եղաւ դադարեցնել գրելը: Ապա երբ մանկանը բուժելու համար բժիշկներից յոյսը կտրեց, ստիպուած եղաւ ապաւինել սուրբի աղօթքներին եւ միջնորդների միջոցով սուրբ Հայրապետին ետ կանչեց: Նրա գալուց անմիջապէս յետոյ մանկան հիւանդութիւնը մեղմացաւ, բայց երբ Վաղէսը խստասիրտ գտնուեց եւ չդարձաւ իր մոլորութիւնից, դարձեալ մանուկը վտանգուեց: Այնժամ մեծն Բարսեղն ասաց թագաւորին. «Ով կայսր, եթէ հաւատաս իմ հաւատքին եւ ընդունես Եկեղեցու միութիւնը, մանուկդ կապրի»: Եւ երբ նա չհամաձայնեց, Բարսեղն ասաց. «Ուրեմն քող Աստուծոյ կամքը լինի մանկան վրայ»: Այս ասելով՝ հեռացաւ, իսկ մանուկը հոգին աւանդեց:

Իսկ Մոգեստիոս եպարքոսը, ծանր հիւանդանալով, աղաչեց նրան օգնել իրեն: Բարսեղը ձեռքը դրեց նրա վրայ: Եպարքոսն առողջացաւ, ուղղափառութեան դարձաւ եւ եղաւ Բարսեղի լաւագոյն բարեկամներից մէկը: Իսկ Վաղէսը, ակնածելով սուրբից, դադարեցրեց հալածանքները: Մինչդեռ սուրբը տխրեց, որ չարժանացաւ մարտիրոսութեան կամ աքսորի չարչարանքներին: Նա մխիթարական թղթերով քաջալերում էր տաբաշրջուած եպիսկոպոսներին, առաւելապէս՝ Անտիոքի հայրապետ սուրբ Մելիտոսին, որի հետ բարեկամ էր, եւ, նրանից գիր ստանալով, ցնծում էր հոգով: Այն ժամանակ սուրբ Բարսեղը հովւում էր բոլոր այն ուղղափառ Եկեղեցիները, որոնց հովիւներն աքսորուած էին: Գրիգոր Նիւսացին սուրբ Եփրեմի վարքում գրում է, որ ծերունին, Աստուծոյ առաջնորդութեամբ կեսարիա գալով, ծանօթացաւ Եկեղեցու բերան, ոսկեղէն վարդապետութեան խօսնակ Բասիլիոսին եւ ցնծութեան օրհնաւաք ձայնով ողջունեց նրան, որովհետեւ հոգու կորովաբիր աչքերով տեսաւ փայլականացեալ Աղաւնուն, որ, նրա աջ ուսին նստած, նրան թելադրում էր իմաստութեան խօսքեր, որոնք էլ նա ասում էր ժողովրդին: Բարսեղն այն պատուական Աղաւնուց, այսինքն՝ Սուրբ Հոգուց, իմացել էր, որ հեռաւոր երկրից է եկել սուրբ աբբան եւ որ նա Եփրեմ Ասորին է: Եւ երկու սուրբերի համար մեծ միխիթարութիւն եղաւ:

Այնուհետեւ սուրբ Բարսեղն ապրեց մինչեւ Եկեղեցու խաղաղութեան սկիզբը եւ ուղղափառ եպիսկոպոսների աքսորից դառնալը, որի մասին ինքը մարգարէացել էր Սամարիայի եպիսկոպոս Եւսեբիոսին ուղղուած թղթում: Տիրոջ 378 թուականին ուղղափառների հալածիչ Վաղէս կայսրը, բարբարոսներից պարտութիւն կրելով եւ կեանքն ու թագաւորութիւնը մեծապէս վտանգուած տեսնելով, հրաման տուեց աքսորուած եպիսկոպոսներին ետ դարձնել, իսկ ինքը Թրակիայում, գոթերի կողմից

նետահարուելով եւ մի գիւղացու հիւղակ մտնելով, պաշարման մէջ ընկաւ եւ այրուեց՝ անգամ թաղումի չարժանանալով: Յաջորդ տարի թագաւորեց աստուածասէր Թէոդոս Մեծը, որ աքսորից վերադարձրեց մնացած եպիսկոպոսներին եւ խաղաղութիւն հաստատեց Կաթողիկէ Եկեղեցում:

Ահա այսպիսի օրերին վրայ հասաւ սուրբ Հայրապետ Բարսեղի վախճանը 379 կամ 380 թուականի տարեգլխին՝ յունուարի մէկին: Աստուծոյ այր Մովսէսի նման, որ տեսաւ պարգեւական երկիրը, բայց չմտաւ այնտեղ, նոյնպէս էլ մեծն Բարսեղը կրեց Եկեղեցու բոլոր տառապանքներն ու վշտերը, իսկ խաղաղութիւնը չվայելեց, ինչպէս գրում է նրա եղբայրը՝ Գրիգոր Նիւսացին:

Բարսեղի կեանքի ժամանակը եղաւ գրեթէ այն ժամանակահատուածը, որ ընկած է Նիկիայի եւ Կոստանդնուպոլսի սուրբ Ժողովների միջեւ՝ մօտ 56 տարի:

Սուրբ Հայրապետի վախճանի հետ կապուած՝ յիշատակւում է հետեւեալ պատմութիւնը.

Յովսէփ անունով մի հրեայ բժիշկ, որին սուրբ Բարսեղը սիրում եւ միշտ յորդորում էր ի Քրիստոս դառնալ, ոչ մի կերպ չէր համաձայնում, մինչեւ մօտեցան սուրբի փոխման օրերը: Եւ երբ Յովսէփը եկաւ եւ սրտի ցաւով յայտնեց, որ այդ օրը նա պիտի վախճանուի, մեծն Բարսեղն ասաց. «Զգիտես՝ ինչ ես ասում»: Հրեան այլաբանօրէն ասաց. «Հաւատա՛, տէր, քանզի արեգակն արեւմուտքում է այսօր»: Սուրբը նրան ասաց. «Իսկ եթէ ապրեմ մինչեւ առաւօտեան վեցերորդ ժամը, ի՞նչ կանես»: Պատասխանեց՝ կմեռնեմ: «Այո՛, կմեռնես մեղքերի եւ կկենդանանաս իմ Քրիստոսի համար»: Այնժամ հրեան երդուեց, որ ինքը կմկրտուի, եթէ սուրբի ասածները կատարուեն:

Յաջորդ օրը Բարսեղին կենդանի տեսնելով՝ Յովսէփը սարսափեց, ընկաւ նրա ոտքերը եւ, խոստովանելով Քրիստոսին, ասաց. «Այսուհետեւ հրամայի՛ր սուրբ Մկրտութեան կնիքը տալ ինձ ու ընտանիքիս»: Սուրբը, որ մահճի մէջ էր, ասաց նրան. «Ես իմ ձեռքով կմկրտեմ ձեզ»: Իսկ բժիշկը, նրա երակը զննելով, ասաց. «Հա՛յր սուրբ, ընկել ես զօրութիւնից, եւ քնութիւնդ խափան նուաղել է»: «Ունեմ քնութիւնս Կենագործողին, որ զօրացնում է»,- պատասխանեց Բարսեղը: Եւ, այս ասելով, յանկարծ վեր կացաւ, եկաւ եկեղեցի եւ բոլորի առաջ մկրտեց նրան ու նրա ընտանիքին՝ Յովսէփին վերանուանելով Յովհաննէս: Այնուհետեւ երկարեց պաշտամունքի ու Աստուծոյ խօսքի քարոզութեան մէջ, իսկ երեկոյեան, մահճի վրայ բազմելով, ուրախութեամբ հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը: Նրան թաղեցին տաներկու եպիսկոպոսներ, մեծ բազմութեամբ, մի տապանի մէջ, որտեղ էին սուրբ Ղեւոնդ Հայրապետի նշխար-

© National Library of Armenia

ները՝ Սիւքիանոսի վկայարանում:

Սուրբի թաղման յիշատակութիւնից յետոյ, նրա պատուական նշխարների մասին չկայ ոչ մի տեղեկութիւն ո՛չ նախնիների, ո՛չ էլ յետինների մօտ, բայց միայն ասւում է, որ սուրբի գլուխը, աջը եւ կողը գտնւում են Հռոմում, իսկ ոսկորների մի մասը՝ Ֆլանդրացիների Բրուգ քաղաքում՝ ԺԱ դարում նրա անուամբ կառուցուած եկեղեցում: Նոյն դարում, յունաց Ալեքսիս Կոմնենոս կայսեր օրերում, նրանց մօտ սկսուեց սուրբ Բարսեղի տօնի կատարումը յունուարի 30-ին՝ Գրիգոր Աստուածաբանի եւ Յովհան Ոսկեբերանի հետ միասին:



ԳԱՆՁԱՍԱՐ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՎԱՐՔԸ

Այս տիեզերալոյս վարդապետի յաջորդներս պատմում ենք նրա գերաշխարհիկ վարքը՝ յիշատակելով մեծամեծ գործերն ու ոսկեբուխ վարդապետութիւնը:

Երիցս երանելի սուրբ Հայրապետ եւ Եկեղեցու վարդապետ Յովհաննէս Ոսկեբերանը ծնուել է Դ դարի կէսերին ազնուականի ընտանիքում: Նա բարեպաշտ ծնողների զաւակ էր, ազգութեամբ՝ ասորի, Անթոք քաղաքից: Հօր անունը Սէկունդոս էր, որն ասորիների կայսերական զօրավարն էր, մօր անունը՝ Անթուսա: Ունէր մէկ աւագ քոյր: Նրանք ողջ ընտանիքով բարեպաշտ էին, սակայն յայտնի չէ՝ արդեօք սկզբի՞ց էին քրիստոնեայ, թէ՞ յետոյ դարձան: Յովհաննէսի մանկութեան հասակում հայրը մահացաւ, եւ նրա մանկամարդ մայրն այրի մնաց: Նա իր զաւակներին դաստիարակում էր պարկեշտ եւ առաքինի բարքով: Երբ Յովհաննէսը տասը տարեկան դարձաւ, մայրը նրան ուղարկեց ուսանելու: Եւ Յովհաննէսը, ըստ իր զարմանալի բնատուր ձիրքերի եւ ի վերուստ Աստուծոյ տեսչութեան, սքանչելի առաջադիմութեամբ ուսանեց ամէն գիտութիւն եւ իմաստութիւն, նոյնիսկ գերազանցեց ժամանակի բոլոր հեթէն եւ քրիստոնեայ իմաստուններին: Սովորելով նաեւ Աթէնքում իւրացրեց բոլոր օտար ուսմունքները: Տասնութ տարեկանում Անտիոքի Եկեղեցու առաջնորդ Մելիտոս Հայրապետի շնորհիւ նա շուտով հեռացաւ սոփեստական բանորսակներից եւ փութաց ուսումնասիրել Սուրբ Գրքի վարդապետութիւնը: Երանելի Հայրապետը, որն ազգութեամբ Հայ էր, նկատելով պատանի Յովհաննէսի ուշիմութիւնը եւ սէր տածելով նրա հոգու գեղեցկութեան հանդէպ, յորդորեց հեռանալ օտար դպրութիւնից եւ յաճախակի այցելել Հայրապետանոց: Մարգարէական լոյսով կանխատեսելով նրա առաջադիմութիւնը՝ երեք տարում դաստիարակեց բոլոր հոգեւոր կանոններով ու վարդապետութեամբ եւ այդ ընթացքում մկրտեց նրան: Սուրբ Գրքի ուսումնասիրութեան ընթացքում Յովհաննէսը բարեկամացաւ Բասիլիոսի* հետ: Նրանք յաճախ էին հանդիպում: Բասիլիոսը խօսում էր հոգեւոր ճանապարհից եւ միաժամանակ յորդորում, որ, միեւնոյն վանքում բնակուելով եւ միասին ճգնելով, ձգտեն հասու լինել աստուածային իմաստութեանը: Յովհաննէսը նոյնն էր ցանկանում, սակայն մայրը թախանձանքներով եւ ազդու խօսքերով շարժում էր նրա գութը, որ չթողնի իր այրի մօրն անորդի եւ անտերունչ: Այսպէս Յովհաննէսի մտադրութեան իրականացումը հետաձգւում էր: Բայց նա տանն էր ճգնում ինչպէս միակեաց. հանդարտ ու լուռ էր մնում, օրերն

* Ոմանց կարծիքով սա Բարսեղ Կեսարացին է, սակայն, ըստ առաւել ստոյգ ենթադրութեան, խօսքը Անտիոքում սելեւկիացիների եպիսկոպոս Բասիլիոսի մասին է:

© National Library of Armenia

անցկացնում էր աղօթքով եւ Սուրբ Գրքի ընթերցանութեամբ՝ պահքով եւ տքնութեամբ հանդերձ, գետնին քնելով եւ մարմնի փափկութիւնը հիւծելով: Մայրը սիրով թողնում էր նրան այդպէս ապրել, միայն թէ իրենից չբաժանուէր: Եւ երանելի Յովհաննէսը, բացի եկեղեցուց ու հայրապետանոցից, ոչ մի տեղ չէր ցանկանում գնալ: Մկրտուելուց յետոյ նա երբէք չերդուեց, ոչ էլ որեւէ մէկին ստիպեց երդուել, ո՛չ ստեց, ո՛չ էլ անիծեց որեւէ մէկին, ո՛չ խեղկատակութիւն արեց, ո՛չ էլ ծաղրաբանեց:

Յովհաննէսի եւ Բասիլիոսի համբաւն այնպէս տարածուեց, որ ուզում էին նրանց եպիսկոպոս ձեռնադրել: Իմանալով այդ՝ Յովհաննէսը երկիւղեց, թէ կարող է յափշտակուել այդ մտքով: Առաքինի Բասիլիոսն էլ աղաչում էր չբաժանուել միմեանցից եւ խոստանում էր գործակցել թէ՛ ձեռնադրութիւնից խուսափելու եւ թէ՛ եպիսկոպոսութիւն յանձն առնելու դէպքում: Դրանից յետոյ Յովհաննէսը, տեսնելով Բարսեղի հոգու բարւոքութիւնը, նաեւ՝ իրերն անարժան համարելով, հեռացաւ ու թաքնուեց: Իսկ մօր մահից յետոյ երանելին առանձնացաւ Անտիոքի անապատում, ուր վեց տարի անձնատուր եղաւ անօրինակ ճգնութիւնների: Այդ ընթացքում նա իր հրաշալի գրչով ուղերձներ գրեց՝ գովելով եւ ջատագովելով միակեցութիւնը:

Գեւորգ Աղեքսանդրացին պատմում է, թէ այդ շրջանում Յովհաննէսին երեւացին սուրբ Պետրոս ու Յովհաննէս առաքեալները. Պետրոսը նրան փականներ տուեց՝ ի նշան հանդերձեալ քահանայութեան եւ եպիսկոպոսութեան, իսկ Յովհաննէսը՝ մատեան՝ ի նշան Յովհաննէսի՝ Սուրբ Գիրքը կատարեալ մեկնող լինելու: Պատմում է նաեւ, թէ Յովհաննէսի աղօթքով անտիոքացիներից մէկը բժշկուեց գլխի եւ աչքերի անբուժելի հիւանդութիւններից, մէկ ուրիշն էլ՝ բորոտութիւնից, եւ նման այլ դէպքեր: Եւ զարմանալի ոչինչ չկայ, քանի որ սքանչելի է Աստուած իր սուրբերում:

Բայց Աստուծոյ նախախնամութեամբ Յովհաննէսն աշխարհի լոյս եւ Ընդհանրական Եկեղեցու լուսափայլ վարդապետը պիտի լինէր: Աստուած նրան հարկադրեց թողնել անապատը եւ Անտիոք վերադառնալ, քանի որ, խիստ ճգնութիւնից ծանր հիւանդանալով, ակամայ քաղաք իջաւ եւ գտաւ սուրբ Մելիտոսին: Երբ նրա առողջութիւնը վերականգնուեց, սուրբ Մելիտոսը նրան բռնադատեց եւ 380 թուականին սարկաւագ ձեռնադրեց:

Յովհաննէսը յաջողութեամբ առաջադիմում էր վարդապետութեան մէջ թէ՛ խօսքով եւ թէ՛ գրով, եւ ժողովուրդը կենցաղի դառնութիւնից քաղցրանում էր նրա սուրբ կենցաղավարութեամբ:

386 թուականին Մելիտոսին յաջորդած Փլաբիանոս հայրապետը Յովհաննէսին քահանայ ձեռնադրեց, եւ այդ առանց հրաշքի չեղաւ, քանի

զի գիշերային աղօթքի ժամանակ Աստուծոյ հրեշտակը երեւաց հայրապետին եւ պատուիրեց Յովհաննէսին քահանայ ձեռնադրել: Իսկ Յովհաննէսին երեւալով հրեշտակը պատուիրեց չընդդիմանալ, քանզի այդ է Աստուծոյ կամքը: Ձեռնադրութեան պահին Սուրբ Հոգին աղաւնակերպ տեսիլքով իջաւ Յովհաննէսի գլխի վրայ:

Եւ ո՞վ կարող է պատմել ժողովրդի ուրախութիւնն ու Եկեղեցու բարեկարգութիւնը, երբ Յովհաննէս քահանան քարոզում էր ատեանում, քանզի նրա հոգեշունչ ու հոգեբուխ վարդապետութիւնը՝ ոսկեբերան արտասանութեամբ, հոգու եռանդը՝ սքանչելի համեստութեամբ, պերճ ատենախօսութիւնը՝ դիւրիմաց պարզութեամբ, հեզութիւնը՝ զօրաւորութեամբ, բարձրութիւնը՝ խոնարհութեամբ, եւ Հոգու շնորհների բոլոր ձիրքերը, արտափայլելով երանելու խօսքերում եւ գործերում, դէպի նա էին ձգում բոլոր տեսնողներին եւ լսողներին: Ասես նոր «ձայն բարբառոյ» Յովհաննէսը կամ հէնց ինքը՝ Պօղոսը՝ Տարսոնեան փողը լինէր՝ յարութիւն առած, եւ կամ՝ մի երկնաւոր հրեշտակ՝ մարմնով յայտնուած:

Յովհաննէսը նախքան ուսուցանելն իր մէջ էր կրում բոլոր առաքինութիւնները, առաւելապէս՝ խորը խոնարհութիւնն ու Աստուծոյ սիրոյ հուրը եւ, առաքեալների նմանութեամբ, Փրկչին չարչարակից լինելու փափագը, նմանապէս եւ՝ սէրը մերձաւորի հանդէպ՝ պատրաստ լինելով կեանքը զոհել եղբօր համար. եւ այդ՝ առանց շահասիրութեան, առանց աչառութեան ու մարդահաճութեան, հեռու փառասիրութիւնից եւ բոլոր աշխարհիկ մտածութիւններից:

Ջաջ հովուի պէս արի հոգով եւ անպարտելի առաքինութեամբ նա դեղ ու դարման էր անտիոքացիների համար. մէկին խրատում էր, միւսին՝ աղաչում, մերթ յանդիմանում էր, մերթ մխիթարում՝ տանը եւ հրապարակաւ, առաւել եւս քարոզութեան ատեանում՝ բոլորի ներկայութեամբ:

397 թուականին, երբ վախճանուեց Կոստանդնուպոլսի Նեկտարիոս պատրիարքը, շատերն էին յաւակնում այն աթոռին՝ անձամբ կամ այլոց առաջարկութեամբ, բայց ողջ ժողովուրդը, Եկեղեցու միաբանութեամբ հանդերձ, փափագում էր Անտիոքի աշխարհաքարող քահանայ Յովհաննէսին ունենալ որպէս հովիւ ու առաջնորդ: Արկադէոս կայսրն ականատես վկաներից լսել էր սքանչելի Յովհաննէսի գովաբանութիւնը եւ առաւելապէս՝ Եւրոպիոս ներքինապետից, որն արքունական գործերով շրջել էր արեւելեան կողմերում: Նա հրովարտակ առաքեց արեւելեան կոմս Աստերիոսին, որպէսզի լուռ ու մունջ, առանց անտիոքացիների աղմուկն առաջացնելու, Յովհաննէսին ուղարկի Կոստանդնուպոլիս: Յովհաննէսը դեռ Կոստանդնուպոլիս չէր հասել, երբ արդէն այնտեղ Թագաւորի հրամանով եօթանի քաղաքներից եպիսկոպոսներ էին հաւաքուել՝ իրեն ձեռնադրելու:

© National Library of Armenia

398 թուականին Յովհաննէսը Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրուեց, եւ անմիջապէս քաջ հովիւը սկսեց խնամարկել իր հօտը՝ ծաւալելով իր հոգեբուխ վարդապետութիւնը եւ յագեցնելով ծարաւ հոգիները: Նա եկեղեցու հասանելիքից երբէք իր անձին բաժին չէր ընդունում, այլ հրամայում էր ամէն ինչ օգտագործել եկեղեցու եւ աղքատների կարիքները հոգալու համար: Նաեւ հայրապետանոցի ծախսերն էր կրճատում եւ աղքատների ու հիւանդների գանձանակն աւելացնում, որով եւ հիւանդանոցներ շինել տուեց: Իսկ ինքն օրըստօրէ սակաւապէտ էր դառնում եւ իր կերակուրը որպէս ողորմութիւն ընդունում Ողոմպիադա անունով սուրբ եւ աղքատասէր մի սքանչելի այրի կնոջից:

Ոսկեբերանը գրեց ապաշխարութեան, այս անցողիկ կենցաղի, մարդկանց հոգիների փրկութեան եւ յաւիտենական կեանքի մասին, ինչպէս նաեւ մեկնեց Հին եւ Նոր Կտակարանների բոլոր աստուածային գրքերը:

Նա մեղաւորների երաշխաւորն էր. ասում էր եւ գրում. «Որչափ էլ ընկնես, դարձեալ կանգնի՛ր եւ որչափ էլ մեղանչես, դարձի՛ր եւ զղջա՛, եւ մեղքերդ կներուեն: Եւ եթէ մեղքերով բազում անգամ անօրինանաս, բազում անգամ դարձի՛ր ու զղջա՛ եւ կմխիթարուես»: Նա շատերի անյուսութիւնն ամբողջովին վերացրեց, քանզի սատանան յուսահատութեամբ մեղաւորին կորստեան է մատնում եւ թոյլ չի տալիս դառնալ ու ապաշխարել:

Ոսկեբերանը բարդ քերականութեամբ ու բառակապակցութիւններով չէր գրում, քանի որ ժողովուրդը տգէտ էր ու խառնիճաղանջ, այլ ամէն ինչ՝ պարզ ու յստակ խօսքով, որպէսզի ամէն ոք հասկանայ: Նա խիստ պահեցող էր, նոյնիսկ հացն ու գարեջուրը չափ ու կշռով էր ընդունում եւ չափազանց քիչ քնում: Աստուծոյ խօսքը քարոզելիս անաչառ էր. յանդիմանում էր յափշտակողներին եւ ագահներին, արծաթասէրներին ու անողորմներին: Նա շատ մոլորուածների եւ աղանդաւորների դարձի բերեց: Որտեղով որ անցնում էր, անարժան ու այլափառ հոգեւորականներին փոխարինում էր արժանաւորներով եւ ուղղափառներով: Այդ պատճառով հետզհետէ բազմացան սուրբի թշնամիները, քանզի ամէն չարագործ ատում է լոյսը: Այդպիսի չարագործները կարողացան երանելու հանդէպ լիովին պղտորել որոշ եպիսկոպոսների, թագաւորի եւ թագուհու մտքերը: Եւդոքսիա թագուհին բռնութեամբ յափշտակել էր մի այրի կնոջ այգին: Այդ պատճառով հայրապետը սկզբից քաղցրութեամբ խրատում էր եւ ապա յանդիմանեց՝ նրան անուանելով «Հին Յեզաբէլ եւ Նոր Հերովդիադա»: Դրանից յետոյ թագուհին ոխով լցուեց եւ Աստուծոյ արդարադատ քահանայի հանդէպ թշնամացաւ: Եւ, իր չարութիւնն իրագործելու օգնական գտնելով Աղեքսանդրիայի Թէոփիլոս հայրապետին, խոստացաւ, թէ Յովհաննէսին գահընկէց կանի, իսկ նրան կնստեցնի

Կոստանդնուպոլսի աթոռին: Թագուհին եւ Թէոփիլոսը դաւեր նիւթեցին Յովհաննէսի դէմ եւ մեծ ազմուկ առաջացրին: Շատ երեւելի եպիսկոպոսներ եւ առաքինի մարդիկ, խաբուելով ու չարագործների ծուղակն ընկնելով, Թէոփիլոսին յարեցին: Նա դարձաւ Ոսկեբերանին հալածողների եւ ոսոխների գլուխը:

Քաղկեդոն հասնելով՝ Թէոփիլոսը շատ եպիսկոպոսների հաւաքեց իր շուրջ. այնտեղ էին նաեւ իր եպիսկոպոսները: Յովհաննէսին, որպէս դատուողի, կանչեցին եպիսկոպոսական ժողովի: Իսկ նա ասաց. «Թող Թէոփիլոսն այդ ժողովից հեռանայ, եւ մէկ ուրիշը անաչառ դատաւոր լինի, այդ ժամանակ կգամ ձեր ժողովին. քանզի որպէս իմ հանդէպ Թէոփիլոսի թշնամանքի վկայութիւն ունեմ Աղեքսանդրիայում եւ Ալկիայում նրա ասածը, թէ՝ գնում եմ ժողովի, որպէսզի Յովհաննէսին գահընկէց անեմ»: Թէոփիլոսը, տեսնելով որ Քաղկեդոնում ոչինչ չի յաջողւում, գնաց Կոստանդնուպոլիս՝ թագուհուն իր կողմը ձգելու:

Նրանց չարախօսութիւններից եւ զրպարտութիւններից առաջինն այն էր, թէ Յովհաննէսն ընդունում է Որոգինէսի գրուածքները: Այդ տան, անարգ եւ անընդունելի: Երկրորդ՝ թէ իրը եկեղեցու շատ անօթներ է անհետացրել. իրականում նա աղքատներին էր տալիս հներն ու բեկուածները, որոնք եկեղեցուն հարկաւոր չէին: Երրորդ՝ թէ հաղորդութիւնից յետոյ խորանում մեղրով կուլիփայ* է կերել (կամ ջուր է խմել): Եւ չորրորդ՝ թէ ճաշելուց յետոյ երեխաների է մկրտել: Բայց առաւելապէս թագուհին պատճառաբանում էր, թէ Յովհաննէսը քարոզելիս բազմիցս վատաբանում է կանանց՝ կամենալով պախարակել իրեն: Եւ արդարեւ, սուրբը խօսել էր, բայց ոչ թէ՝ ընդդէմ թագուհու, այլ՝ ընդդէմ կանանց մէջ եղած անկարգութիւնների: Ահա այսպիսի կանացի պատճառաբանութեամբ Եւդոքսիան շրջեց անարի Արկադէոս կայսեր միտքը եւ ստիպում էր օր առաջ Յովհաննէսին տապալել աթոռից:

Արդ, քանի որ Թէոփիլոսը երկնչում էր ժողովրդից, կամեցաւ Յովհաննէսին օրինաւոր աքսորել: Նա դարձեալ գնաց Քաղկեդոն եւ այնտեղ ժողով գումարեց: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում ժողովուել էին Ոսկեբերանին կողմնակից քառասուն եպիսկոպոսներ: Մինչդեռ նրանք նստած էին հայրապետանոցում, երանելի Յովհաննէսը, Աստուծոյ հոգով լցուելով, ասաց. «Եղբայրնե՛ր, աղօթեցէ՛ք ինձ համար եւ եթէ սիրում էք Քրիստոսին, թող ոչ ոք իմ պատճառով չլքի՛ իր Եկեղեցին, քանի որ իմ ժամանակը լրացել է: Կարծում եմ՝ պիտի թողնեմ տառապանքով լի կեանքս, քանզի իմացայ բանսարկուի դաւաճանութիւնը, որը չկարողացաւ հանդուրժել իր դէմ ասուած խօսքերիս ծանրութիւնը»: Իսկ եպիս-

* կուլիփայ — հատիկ, խաշած ցորեն

© National Library of Armenia

կոպոսներն արտասուելով համբուրում էին նրա սուրբ գլուխն ու շնորհալի ոսկէ բերանը եւ չէին կարողանում տանել դէպքի ծանրութիւնը, քանզի Թագուհու բռնութիւնն անխուսափելի էր: Կէսը կամենում էր հեռանալ, իսկ միւս կէսը, ինչպէս մեղուները փեթակում, տատանւում էր: Եւ Յովհաննէսն ասաց. «Աղաչում եմ, նստեցէ՛ք ձեր տեղերում, դադրեցրէ՛ք լացն ու մի՛ ճմլէք իմ սիրտը, քանզի իմ կեանքը Քրիստոսն է, եւ մեռնելը՝ շահ: Յիշեցէ՛ք, որ ձեզ միշտ ասում էի, թէ այս կեանքը ճանապարհ է, որի ուրախութիւններն ու տրտմութիւնները միօրինակ անցնում են... Մի՞թէ աւելի լաւն ենք, քան նահապետները, մարգարէները եւ առաքեալները, որ անմահ մնանք այստեղ»: Իսկ երբ նրան ասացին, թէ՝ «Որբ ենք մնում առանց քեզ, իսկ Եկեղեցին՝ այրի», պատասխանեց. «Զարոզչութեան պաշտօնն ինձանից սկիզբ չառաւ, ոչ էլ ինձանով կդադարի: Մովսէսին Ցեսուն չյաջորդե՞ց, Սամուէլին՝ Դաւիթը, Երեմիային՝ Բարուքը, Եղիային՝ Եղիսէն, Պօղոսին՝ Տիմոթէոսը, Տիտոսը, Ապօղոսը եւ այլ անթիւներ»:

Եւ ահա, արքունիքից զօրականներ եկան եւ նրանց հետ՝ մի կոմս՝ երանելի Յովհաննէսին եկեղեցուց եւ հայրապետանոցից հանելու: Բայց ժողովուրդը, իմանալով եղելութիւնը, հսկում էր ողջ գիշեր, որպէսզի չթողնի տանել հայրապետին: Յովհաննէսը, տեսնելով, որ ժողովուրդը չի թողնի իրեն, եւ աղմուկ ու արիւնահեղութիւն կլինի, ծածկաբար յանձնուեց արքունիքի սպասաւորներին:

Նրան աքսորեցին Պրենիտոն՝ Բութանիայում: Այն օրը քաղաքի ժողովուրդն իր քաղցրաւոյժ վարդապետից զրկուելու պատճառով շատ տրտմեց, խռովուեց եւ մեծ աղմուկ բարձրացրեց արքունիքի դէմ: Բազմութիւնը դիմեց դէպի արքունիքի դուռը եւ այնտեղ կոծելով աղաղակում էր. «Թող ե՛տ կանչուի մեր Հայրապետ Յովհաննէսը»: Թէոփիլոսն արքունի զօրականների միջոցով բռնութեամբ գրաւեց քաղաքի գլխաւոր եկեղեցին եւ հրամայեց սրերով ու ըրերով հարուածել ժողովրդին: Արիւնահեղութիւնը չկանխուեց, սակայն բովանդակ քաղաքի աղօթքի գոչումն առ Աստուած յաղթեց բռնակալութեանը: Նոյնիսկ Եւդոքսիա Թագուհու սիրտը մեղմացաւ հասարակութեան բողոքից: Բայց Տէրը Թագուհու սիրտը դարձրեց նաեւ յայտնի հրաշքով, քանզի այն գիշեր ահաւոր երկրաշարժ եղաւ, եւ մեծ սարսափ պատեց նրան: Այդ պատճառով Թագուհին ինքը ստիպեց Արկադէոսին պատուիրակներ յղել եւ Յովհաննէսին իր աթոռին դարձնել: Թագաւորը խոնարհ նամակ գրեց՝ չբմեղանալով, թէ ինքը՛ չարախօսներին ու դաւաճանողներին կողմնակից չէր: Այդօրինակ նամակ գրեց եւ Թագուհին: Յովհաննէսը չէր ուզում վերադառնալ Կոստանդնուպոլիս այնքան ժամանակ, մինչեւ եպիսկոպոսների ժողովը չհոչակէր իր անմեղութիւնը:

Սակայն պատուիրակները, անընդհատ ժամանելով, այնքան բազմացան, որ սուրբ Հայրապետը հարկադրուեց Կոստանդնուպոլիս գնալ: Երանելին, եկեղեցի մտնելով, մխիթարական մի քանի խօսք ասաց ժողովրդին: Իսկ յաջորդ օրը, ճոխաբար զգեստաւորուելով ոսկերուխ վարդապետութեամբ, բոլորին սքանչացրեց իր անոխակալ եւ անայլայլ առաքինութեամբ, որով գոհանում էր Աստծուց՝ անցած դէպքերի համար:

Արդ, Ոսկեբերանի դէմ այս բոլոր խռովութիւնները եղան 403–404 թուականներին: Նրա տարագրութիւնը տեւեց ընդամէնը մի քանի օր. երկրորդ օրը ետ կանչուեց, իսկ երրորդ կամ չորրորդ օրը քաղաք մտաւ: Այնժամ մօտ վաթսուն եպիսկոպոսներ ժողովուեցին եւ հաստատեցին քաջ հովուի անմեղութիւնը՝ բացայայտելով Թէոփիլականների ժողովակի զրպարտութիւնները: Եւ թագաւորական քաղաքում միաժամանակ խաղաղութիւն տիրեց:

Երկու ամիս անց չարը նորից թագուհու մէջ թշնամութիւն արծարծեց Ոսկեբերանի դէմ: Հայրապետը քարոզելիս ազդեցիկ համարձակախօսութեամբ կշտամբում էր մեծերի եւ փոքրերի անկարգութիւնները, իսկ Եւդոքսիան գտնում էր, թէ բոլոր խօսքերում իրեն է խոցում: Այդ օրերին Ոսկեբերանի գրած մի ճառ այս խօսքերով է սկսւում. «Դարձեալ Հերովդիադան մոլեգնում է, դարձեալ խռովւում է ու յոխորտում, դարձեալ կամենում է Յովհաննէսի գլուխը սկուտեղին դնել»:

Ոսկեբերանի հակառակորդները Թէոփիլոսին տեղեկացրին, որ թագուհին մոլեգնութեամբ ու ցասումով է լցուել: Սակայն Թէոփիլոսը երկիւղ եւ չգնաց, այլ իր եպիսկոպոսներին ուղարկեց: Եկան նաեւ այլ առաջնորդներ ասորիներից, պոնտացիներից, փռիւգեցիներից եւ կապադովկեցիներից, երանելու դէմ իրենց ժողովում նորանոր պատճառներ կուտակեցին, թէ նրա վերադարձն ապօրինի էր. նոյնիսկ թագաւորին համոզեցին, որ պատուիրակներ ուղարկի Յովհաննէսի մօտ՝ Եկեղեցին թողնելու համար: Պատուիրակներին Յովհաննէսը պատասխանեց. «Ես Փրկիչ Աստծուց ստացայ այս Եկեղեցին՝ ժողովրդի փրկութիւնը հոգալու, եւ չեմ կարող այն թողնել: Ապա եթէ քո կամքն այդ է, բռնութեամբ ինձ աքսորի՛ր, քանզի այս քաղաքը քո իշխանութեան ներքոյ է: Որպէսզի քո իշխանութիւնն արդարացում լինի ինձ՝ կարգս թողնելու»:

Եւդոքսիան կանչեց Կիպրոսի պատրիարք Եպիփանին եւ նրան բռնադատեց մասնակից լինել Յովհաննէսի անկմանը: Եւ երբ Եպիփանը չհամաձայնեց առանց պատճառի այդպէս վարուել, Եւդոքսիան մոլեգնութեամբ ասաց. «Եթէ Յովհաննէսը չաքսորուի, կուրքերի տաճարները կբացեմ եւ բագիններ կկանգնեցնեմ»: Իսկ Եպիփանը թօթափեց իր օձիքը եւ, ատեանից դուրս գալով, ասաց. «Ես անպարտ եմ քո այդ դատաստանում»: Այնուհետեւ փութաց նաւ նստել եւ գնալ իր աթոռանիստը՝ Կիպրոս: Ասում են, թէ այդ ժամանակ Ոսկեբերանն ու Եպիփանը մարգարէացան, որ սուրբ Հայրապետը Կոստանդնուպոլիս գնալ:

© National Library of Armenia

գարէացան միմեանց մասին. Թագուհու հրամանով ներքինիներից ոմանք Յովհաննէսին ասացին, թէ Եպիփանը կամովին ստորագրեց աքսորման մուրհակում: Լսելով այդ՝ Յովհաննէսը յոյժ տրտմեց եւ այսպէս գրեց նրան. «Ով սքանչելի Եպիփան, դու յօժար եղար իմ անկմանը... Ջե՛ս հասնի քո աթոռին»: Եպիփանն էլ գրեց նրան. «Ով դու, երի՛ցս երանելի Քրիստոսի ճգնաւոր, կյաղթե՛ս ու կյաղթուե՛ս: Եւ ինչպէս, ըստ քո խօսքի, ես չեմ հասնի իմ աթոռին, նոյնպէս եւ դու չես հասնի քո աքսորավայրը»:

Եպիփանը Կիպրոս նաւարկելու ճանապարհին վախճանուեց: Նոյնպէս եւ երանելի Յովհաննէսը երկրորդ արտաքսման միջոցին չժամանեց սահմանուած աքսորավայրը: Արքունի զօրքը եկաւ Հայրապետին կալանելու: Յովհաննէսի ականջին հասել էր Թագուհու սպառնալիքը, թէ մեհեանները կրացի, եւ յօժարութեամբ կամենում էր աքսոր գնալ: Նրան ձերբակալեցին եւ արտաքսեցին Հայոց Կոկիսոն քաղաք, որպէսզի ժողովուրդը նրա վերադարձի յոյսը չունենայ:

Այն օրը Կոստանդնուպոլսում տեղատարափ կարկուտ տեղաց, եւ երկնքից հուր իջաւ ու այրեց պատրիարքարանը: Հուրը երերում էր աթոռի վրայ, եւ այդ պահին հրի միջից ձայն լսուեց. «Մ՛ուր է Աստուծոյ խօսքը պատմողը»: Մի քանի օր անց նրանք, ովքեր չարախօսում էին Յովհաննէսի մասին, սատակուեցին չարաչար մահուամբ, քանի որ ոմանց լեզուները պապանձուեցին, ոմանց աչքերը կուրացան, ոմանք էլ խպառ խելագարուեցին:

Իսկ սուրբ Յովհաննէս Հայրապետը աքսորման ճանապարհով ուրախութեամբ էր ընթանում: Եւ ուր որ իջեւանում էր, անդադար քարոզում էր Աստուծոյ խօսքը եւ ջատերին զօրաւոր նամակներ էր գրում: Դրանցից յայտնի են դառնում նրա համբերութիւնն ու կատարեալ ներողամտութիւնը բոլոր տառապանքներում. նա մինչեւ իսկ գովութեամբ էր խօսում այն մարդկանց մասին, որոնք իրեն աքսոր էին տանում:

405 թուականի ձմռանը Կոկիսոնում Ոսկեբերանը ծանր հիւանդութիւն կրեց, բայց, գարնան սկզբին առողջանալով, դարձեալ սկսեց գրել եւ քարոզել Աստուծոյ խօսքը: Ինչպէս յայտնի է, երանելի Յովհաննէսը, մէկ տարի Կոկիսոնում մնալով, շատ հայ աղքատների կերակրեց ոչ այնքան հացով, որքան՝ խօսքով:

Երբ սուրբի թշնամիները իմացան, որ նա առողջացել է եւ իր հանգիստն է գտել Կոկիսոնում, ջանացին այնտեղից Արաբիսոն ամրոց տեղափոխել: Նրան ուղիղ ճանապարհով չտարան, այլ ձմռան օրերին շրջեցին լեռներում ու անտառներում: Այդ պատճառով նորոգուեց սուրբի հիւանդութիւնը, ինչպէս յայտնի է նրա նամակներից, որոնցում յիշատակում են մինչեւ Արաբիսոն հասնելն իր կրած սոսկալի վշտերը՝ հիւանդութիւնից, աղքատութիւնից եւ աւազակներից:

Արաբիսոնում ոսկեգրիչը գրեց «Ով իր անձին չի վնասում, նրան ոչ ոք չի կարող վնասել» վերտառութեամբ սքանչելի խրատը: Բայց քանի որ ինչպէս Կոկիսոնում, նոյնպէս եւ Արաբիսոնում, Աստուած Ոսկեբերանի շրջանին խօսքի եւ վարդապետութեան շնորհներ տուեց եւ պէս-պէս նշաններով բոլորի առջեւ փառաւորեց, երանելու ոսոխները չկարողացան այդ հանդուրժել եւ թագաւորին հրամայել տուեցին, որ նրան Հայաստանի կողմերից Պոնտոսի սահմանները տանեն:

Երբ արդէն մօտ էին սահմանուած տեղին, սուրբը տկարութիւնից չկարողացաւ առաջ գնալ: Այդ պատճառով, երբ մերձեցան Կոմանա քաղաքին, կամեցան մի տեղ հանգրուանել եւ, քաղաքի դռնից հինգ-վեց մղոն անցնելով, պարիսպներից դուրս օթեւանեցին սուրբ Բասիլիոս եպիսկոպոսի վկայարանում:

Նոյն գիշեր Քրիստոսի նահատակն ու վկան՝ Բասիլիոս եպիսկոպոսը, երեւաց սուրբ Յովհաննէս Ոսկեբերանին եւ ասաց. «Զօրացի՛ր եւ քա՛ջ եղիր, եղբա՛յր, Քրիստոսի՛ ճգնաւոր եւ տիեզերքի՛ վարդապետ, քանզի վաղը միասին կլինենք»: Վկան երեւաց նաեւ իր վկայարանի սպասաւորին եւ ասաց. «Սուրբ Հայրապետ Ոսկեբերանի համար իմ շիրմի մօտ տե՛ղ պատրաստիր»: Այդ տեսիլքից սուրբ Ոսկեբերանը զօրացաւ եւ շատ մխիթարուեց: Յաջորդ օրը Հայրապետը զինուորներին աղաչեց, որ իրեն մինչեւ օրուայ հինգերորդ ժամն այնտեղ թողնեն, սակայն նրանք չանսացին: Իսկ երբ երեսուն ասպարէզ անցնելուց յետոյ տեսան, որ սուրբը մեռնում է, նրա աղաչանքով վերադարձան վկայարան: Այնտեղ հաւատացեալների բազմութիւն էր հաւաքուել: Այնժամ սուրբը ճանապարհի հանդերձները հանեց եւ տուեց այնտեղ գտնուող աղքատներին, իսկ ինքը, ինչպէս ուրախութեան օրերին, նորը հագաւ: Այնուհետեւ, հաղորդուելով սուրբ Խորհրդին, իր վերջին աղօթքն ասաց վկայարանում, ապա, երկարորդելով իր սովորական խօսքը՝ «Փա՛ռք քեզ, Աստուա՛ծ, ամէն ինչի համար», դիւրութեամբ եւ խաղաղութեամբ Աստուծոյ ձեռքն աւանդեց իր հոգին: Եւ չհասաւ աքսորավայր՝ Եպիփանի խօսքի համաձայն, քանի որ Յովհաննէսն ու Եպիփանը երկուսն էլ մարգարէացան, բայց՝ առանց նախանձութեան եւ քէնի, որովհետեւ այդպիսի ախտը հեռու է Աստուծոյ սուրբերից:

Ոսկեբերանը վախճանուեց 407 թուականին: Նրան թաղեցին տեղի քահանաներն ու եպիսկոպոսները Քրիստոսի վկայ Բասիլիոս եպիսկոպոսի գերեզմանի մօտ:

Աստուած ոչ միայն Ոսկեբերանի կենդանութեան օրօք, այլեւ նրա մահուանից յետոյ բազում հրաշքներ գործեց.

Աղեքսանդրիայի պատրիարք Թէոփիլոսը մահանալուց առաջ քա-

© National Library of Armenia

ռասուն օր հոգեվարք ապրեց: Նա աղաղակում էր. «Տեսնում եմ Յովհաննէսին, որ կանգնած է Քրիստոսի առաջ եւ արգելում է իմ հոգու ելքը», եւ, խոստովանելով Յովհաննէսի նկատմամբ ունեցած անիրաւ նախանձը, աւանդեց հոգին:

Եւդոքսիա Թագուհու տապանաքարը երեսուներեք տարի երերաց, մինչեւ որ Յովհաննէսի մարմինը Կոստանդնուպոլիս բերուեց:

Սուրբի Թաղումից յետոյ Կոմանայի եպիսկոպոսը տեսիլքով մի շատ գեղեցիկ ու զարմանալի տաճար տեսաւ, ուր բոլոր Հայրապետները նստած էին պատուական աթոռներին: Հայեացք ձգելով նա այնտեղ Յովհաննէս Ոսկեբերանին չտեսաւ եւ հարցրեց, թէ՝ ո՞ւր է Յովհաննէսը: Նրանք ասացին. «Ո՞ր Յովհաննէսին ես փնտրում՝ Մկրտչի՞ն, թէ՞ Աւետարանչին»: Եպիսկոպոսը պատասխանեց. «Կամենում եմ տեսնել Ոսկեբերանին՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին»: Սուրբ Հայրապետներն ասացին. «Դու փնտրում ես մի լուսաւոր մարդու՝ Յովհաննէսին՝ ապաշխարութեան վարդապետին: Նրան չես կարող տեսնել, քանզի հանապազ սերովբէների հետ աստուածային աթոռի փառքի առջեւ է»:

Ոսկեբերանի մի շարք աշակերտներ նրա մասին պանծալի ներբողներ են յօրինել: Բայց այս տիեզերալոյս վարդապետի անզուգական գովութիւնը նրա ոսկեղէն գրքերում է, որոնք նա ամբարեց Եկեղեցու գանձարանում հաւատացեալների բարեկարգութեան եւ Աստուծոյ փառքի համար:



ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՔՆԱՐԻԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՒ
ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

© National Library of Armenia

ԹԱՍԱՐ ՍՈԿԱՑԻ* (+1398)

Բանն Աստուած երկրի վրայ գցեց Իր սիրոյ հուրը՝ կամենալով նրա բորբոքուելը [տե՛ս Ղուկ. ԺԲ 49]: Եւ եթէ Նա է կամենում, ո՞վ կարող է հակառակուել: Բայց իւրաքանչիւր ոք, անձնիշխան կամք ունենալով, ազատ է ընտրել թէ՛ չարը, թէ՛ բարին: Այս մասին է ասում Յակոբոսը, թէ՝ «Աստուած անփորձելի է չարի համար եւ չի փորձում ոչ ոքի, այլ իւրաքանչիւր ոք փորձւում է՝ հրապուրուելով եւ խաբուելով իր ցանկութիւններից» [Յակոբ. Ա 13–14]. նոյնպէս եւ՝ դէպի բարին ձգտողները, որոնք իրենց անձերում վառելով բորբոքեցին աստուածային սիրոյ հուրը՝ մնալով նրա բարի հեշտութեան մէջ:

Եւ այսպէս իւրաքանչիւր ոք իր ժամանակին արիաբար առաքինացաւ: Զանգի ոմանք մաքրութեամբ կուսութեան մէջ մնացին, իսկ ուրիշները [ճգնելով] ողջախոհութեան հասան. շատերը ողորմութիւնն ընտրեցին եւ աղքատներին տալը սիրեցին, իսկ այլք՝ պահքն ու առանձնական աղօթքը. ոմանք՝ խոնարհութիւնը եւ եղբայրասիրութիւնը, միւսները լռելը [նախընտրեցին], իսկ շատերը՝ ընկերոջ օգտի եւ շահի համար խօսելը: Շատերը յանուն Կենարարի Արեան իրենց արիւնը հեղեցին, շատերը հրի մատնուեցին կամ խեղդամահ եղան ջրում, շատ-շատերն էլ ծեծի ու բանտի, սովի ու ծարաւի, մերկութեան ու աղքատութեան եւ ուրիշ տեսակ-տեսակ տանջանքների եւ տառապանքների մատնուեցին. եւ այս ամէնը՝ Քրիստոսի սիրոյ եւ արքայութեան յոյսի համար, ինչպէս եւ վկայում է սաղմոսերգուն՝ ասելով. «Ամէն օր մեռնում ենք Քեզ համար» [Սաղմ. ԽԴ 22]:

Իսկ մեր նսեմացած ու մթնած օրերում, մեր չարացած ու դառնացած ժամանակներում, որ սպառուել ենք ամենայն բարութիւնից եւ դատարկուել բոլոր առաքինութեան գործերից, [իր բարի վարքով եւ պայծառ խոստովանութեամբ փայլեց] մոկացի մի կին՝ հաւատով քրիստոնեայ, ազգութեամբ՝ հայ, վայելչատես եւ պայծառադէմ, Թամար անունով, որ [մահուանից յետոյ] վերակոչուեց Գոհար, կինը Թումա անունով մի քրիստոնեայի:

Արդ, նոյն Մոկաց գաւառից մի քուրդ չարի ազդմամբ չարաչար տուփանքով ցանկացաւ վայելչազեղ կնոջը եւ կամենում էր նրան խլել ամուսնու ձեռքից, իսկ ամուսնուն՝ սպանել: Այս իմացաւ մեծահաւատ Թամարը եւ յայտնեց իր ամուսնուն: Եւ նրանք, վերցնելով իրենց երեխա-

* Վկայաբանութիւնը վերցուած է «Հայոց նոր վկաները» (ՀՆՎ) (Վաղարշապատ, 1903, էջ 423–429) գրքից:

յին, փախան Աղթամար կղզի:

Ջորս-հինգ տարի անց, մի օր իրենց անհրաժեշտ որոշ իրերի համար ամուսինները կղզուց գնացին Ոստան քաղաք: Երբ անօրէնն քրդերը նրանց տեսան, ճանաչեցին եւ բռնեցին կնոջը՝ բարձր ձայնով աղաղակելով. «Սա մի ժամանակ մահմեդական էր»: Եւ, սուտ ու անիրաւ վկաներ բերելով, բռնեցին ու տարան Ամիրազդնի եւ նրա կնոջ՝ Փաշախաթունի մօտ: Ամիրազդինն անտարբեր գտնուեց Թամարի հանդէպ, սակայն նրա կինը, որ քուրդ էր եւ բնութեամբ՝ չար, լիրբ եւ յանդուգն, նրան խոստացաւ բարիք գործել, եթէ հրաժարուի Քրիստոսի հաւատքից, իսկ թէ ոչ՝ սպառնաց սաստիկ տանջելով կտտամահ անել:

Իսկ բարեսէր Թամարը, լցուած Քրիստոսի սիրոյ աստուածային հրով, ո՛չ խոստումներով համոզուեց եւ ո՛չ էլ սպառնալիքներից վախեցաւ, այլ արիաբար, անահ եւ աներկիւղ, ամենայն համարձակութեամբ պատասխանեց.

–Քա՛ւ լիցի, եթէ ես ուրանամ իմ Քրիստոս Աստծուն, Ում հաւատացել եւ հաւատում եմ: Զանգի Նա է Աստուծոյ Բանը եւ Որդին՝ ծնուած սուրբ Կոյս Մարիամից, Ստեղծողը բոլոր երեւելի եւ աներեւոյթ գոյաւորների, Տէրը եւ Դատաւորը ողջերի ու մեռածների:

Իսկ երբ Թագուհին շարունակեց պարգեւներ խոստանալ եւ սպառնալ, Թամարն ասաց.

–Ինչո՞ւ ես ուշացնում եւ չես կատարում քո սպառնալիքները. ես պատրաստ եմ մեռնել իմ Քրիստոս Աստուծոյ համար, իսկ այն մեծարանքներին, որ խոստանում ես ինձ, իմացի՛ր, որ հաւան չեմ բնաւ: Եթէ անգամ քո տեղը նստեցնես եւ ողջ իշխանութիւնդ ու տիկնութիւնդ ինձ տաս եւ դարձնես աշխարհի դժխուհին, չեմ փոխի Քրիստոսի հանդէպ ունեցած սիրուս հետ: Իսկ սպառնալիքները, որոնցով խոստանում ես ինձ վերացնել չարաչար տանջանքներով, շուտ ի կատար ածիր եւ մի՛ յապաղիր, որովհետեւ Քրիստոսին ես չեմ ուրանայ:

Նրա ասածներից սրտմտած՝ փաշան հրամայեց նրան բանտ գցել եւ անօթի թողնել, մինչեւ համոզուի ուրանալ Քրիստոսին: Եւ նրան Թագուհու մօտից տարան դատաւորի մօտ: Դատաւորի հարցերին էլ Թամարը համարձակ պատասխաններ տուեց՝ նրա սպառնալիքներին պատասխանելով.

–Գիտցի՛ր, որ եթէ ամբողջ մարմինս էլ մաս-մաս կտրատել տաս, ես Քրիստոսին չեմ ուրանայ:

Իսկ դատաւորը փաշայի հրամանով ասաց, որ նրան տանեն բանտ եւ անօթի թողնեն: Թամարն ուրախութեամբ տասն օր անօթի մնաց: Եւ երբ ոմանք ուզում էին նրան հաց ու ջուր տալ, հրաժարւում էր:

© National Library of Armenia

Տասն օր յետոյ Ոստան քաղաքի քրիստոնեայ տանուտէրերը հաւաքուեցին եւ եկան Թագուհու մօտ՝ Թամարին ազատելու համար: Նրանք [փոխարէնը] 1000 դահեկան առաջարկեցին, սակայն Թագուհին չհամոզուեց, այլ մեծ ցասումով հրամայեց Թամարին քաղաքից դուրս հանել եւ քարկոծել:

Եւ նրան տարան իր վախճանի վայրը՝ բազմիցս փորձելով համոզել, որ Քերեւս ուրանայ Քրիստոսին: Սակայն նա առանց սասանուելու մերժում էր եւ դաւանում Քրիստոսին որպէս Աստուած եւ Աստուծոյ Որդի: Եւ մինչ դաւանութիւնն իր շուրթերին էր, մեծ քարով հարուածեցին նրա դէմքին: Իսկ նա, գլխաշորը գցելով երեսին, շրջուեց արեւելք: Այնժամ կուտակուած ամբոխը նրան այնքան խիտ քարերով, որ դրանցով ծածկուեց այն պատուական գոհար Թամարը, որ իրօք Աստուծոյ Գոհարակնը եղաւ: Այսպիսի բարի հաւատքով ու պայծառ խոստովանութեամբ նահատակուեց Թամարը, որ Գոհար վերանուանուեց: Այդ եղաւ սուրբ Գեւորգ զօրավարի տօնի նախօրէին՝ 1398 թուականին, ապրիլի 22-ին:

Իսկ անօրէնները, խիստ փոշմանած, տրտմեցին եւ ամօթով մնացին: Եւ ապա քրիստոնեաներին հրաման տուեցին նրան թաղել պատուով, ինչպէս որ կամենան: Նրան թաղելիս բոլորը տեսան կնոջ զգաստութիւնը, քանի որ իր շապիկն այնպէս էր կարել, որ իրեն քարկոծելիս եւ քարշ տալիս բնաւ չերեւան իր մարմնի մասերը: Այսպիսի հնարներով էր ծածկել իրեն այս ամէնիմաստ ու հանճարեղ կինը: Եւ տեսողները հիացան եւ փառք տուեցին Աստծուն, մանաւանդ, երբ տեսան նրա պայծառ, սուրբ Ստեփանոս Նախավկայի նման հրեշտակակերպ երեսը:

ԱՆԴՐԷԱՍ ՔԱՀԱՆԱՅ* (+1617)

Այնպէս եղաւ, որ պարսից մեծ եւ առաջին Շահաբաս թագաւորը, լսելով զրպարտող մարդկանց, որոնք չարախօսում էին Նախիջեւան քաղաքի բնակիչներին, սաստիկ զայրացաւ նրանց վրայ եւ հրամայեց քաղաքի բոլոր բնակիչներին արտաքսել Ջահրապատ քաղաք, իսկ Նախիջեւանը՝ աւերել, տներն ու բոլոր միւս շինութիւնները քանդել եւ այգիները կոտրատել: Եւ թագաւորի հրամանն անխափան կատարուեց, քանզի, բոլոր բնակիչներին հանելով, քշեցին Ջահրապատ: Աննշան թուով մարդիկ, փախչելով շրջակայ գիւղերը, թաքնուեցին այստեղ ու այնտեղ: Նրանց մէջ էին եւ տէր Անդրէասի ծնողները, որոնք գնացին Ագուլիս գիւղ եւ այնտեղ բնակութիւն հաստատեցին:

Մինչ տէր Անդրէասի մանկութեան տարիներն էին, նրան տուեցին գրերի ուսման, եւ նա սովորեց եկեղեցական բոլոր ուսմունքները: Երբ զարգացաւ եւ չափահաս դարձաւ, նրան մտցրին աշխարհի կարգի մէջ եւ ամուսնացրին: Եւ, ինչպէս գրուած է, ըստ իր անձի եւ ողջ ժողովրդի վկայութեան՝ նրան քահանայ օծեցին: Եւ նա կատարում էր քահանայութեան սպասաւորութիւնը, ինչպէս վայել է քահանայութեան կարգին:

Այդ ժամանակներում Մովսէս վարդապետը (որը յետոյ Էջմիածնի կաթողիկոս դարձաւ) եւ Պօղոս վարդապետը, որոնք Հայոց արեւելեան կողմերում յայտնի էին իբրեւ անբիծ եւ պարկեշտ վարք ունեցողներ, շրջելով երկրից երկիր, անխափան քարոզում էին, եկեղեցիներ շինում, ըստ առաքեալների կարգի քահանաներ կարգում: Մեր հաւատքի ու կրօնի հաստատութեան համար դպրատներ հիմնեցին պատշաճ տեղերում Աստապատ գիւղում եւ Եօթօթում, որպէսզի շրջակայ գիւղերից այնտեղ սովորելու համար մանուկներ հաւաքուեն: Նմանապէս եւ Ագուլիս գիւղում դպրատուն հաստատեցին, իսկ մանուկների վրայ դպրապետ կարգեցին տէր Անդրէասին: Այնտեղ հաւաքուեցին մօտ յիսուն-վաթսուն մանուկներ: Եւ տէր Անդրէասը, որպէս վերակացու, հովւում էր նրանց եւ ուսուցանում մեր Եկեղեցու ընդհանուր ուսմունքը:

Եւ այնպէս եղաւ, որ Շահաբաս թագաւորը եկաւ Ագուլիս գիւղ՝ հետեւեալ պատճառով. օսմանցի մի սարդար՝ Օքուզ Ահմադ փաշայ անունով, բազում զօրքով եկաւ Երեւանի բերդի վրայ, որպէսզի, պարսիկներից

---

* Այս վկայաբանութեան հեղինակն է Առաքել վարդապետ Դաւրիժեցին (տե՛ս «Պատմութիւն», Վաղարշապատ, 1884, էջ 272—279, նաեւ աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Պատմութիւն», Երեւան, 1988, էջ 278—283): Բնագիրը վերատպուած է նաեւ «ՀՆՎ» գրքում (էջ 423—429), ուր ձանօթագրութեան մէջ տրուած են նաեւ ձեռագիր Յայսմաւուրքներում առկայ յաւելումները (տե՛ս էջ 432), որոնք տեղ գտան մեր թարգմանութեան մէջ, իսկ Անդրէաս քահանայի պատմութեանը յաջորդող հատուածը, որ *բուն նիւթին չի պատկանում*, Յայսմաւուրքների նմանութեամբ յապաւուեց:

© National Library of Armenia

գրաւելով. օսմանցիների կողմը դարձնի: Այս պատճառով պարսից Շահաբաս Թագաւորը, ժողովելով պարսից բոլոր զօրքերը, եկաւ Երեւան՝ օգնելու բերդին: Սարդարը, բերդը պաշարելով, երկուսուկէս ամիս պատերազմեց, սակայն չկարողացաւ այն գրաւել: Եկաւ ցուրտ աշուն, եւ նա, ցրտից ու սովից վշտացած, իր ողջ բանակով չուեց-գնաց Կարին քաղաք՝ օսմանցիների աշխարհ: Սարդարին հետապնդելու համար շահը եւս ելաւ Երեւանից ու գնաց Նախիջեւան, այնտեղից էլ՝ Ագուլիս. ահա այս պատճառով շահն Ագուլիս եկաւ: Արդ, սովորութիւն կար, որ շահն ուր էլ մտնէր՝ քաղաք թէ երկիր, տեղի բոլոր բնակիչները խմբովին ելնում էին նրան ընդառաջ՝ իշխաններն ու ժողովուրդը, տղամարդիկ, կանայք եւ աղջիկները, երիտասարդներն ու մանուկները՝ բոլորը զարդարուած ազնիւ ու մեծագին զարդերով, քաղցրահամ մրգերով, համադամ կերակուրներով, անուշահոտութեամբ եւ ծաղկահամ գինիներով: Եւ վայելչահասակ, գեղեցկատես մանուկները, աղջիկներն ու կանայք ոսկէ բաժակով գինի էին մատուցում շահին: Իսկ աշխարհիկ գուսաններն ու երգիչները, առջեւից ընթանալով, քաղցրանուագ երգում էին իրենց յօրինած երգերը: Եկեղեցականներն էլ՝ քահանաները ու պաշտօնեաները, շուրջառ եւ շապիկ հագած, խաչն ու Աւետարանը ձեռքներին, խաչվառը վեր պահած, խունկերով ու մոմերով, զանգերով ու ծնծղաներով ելնում էին շահին ընդառաջ եւ երգելով գնում, մինչեւ հասցնում էին իր իջեւանատեղը:

Արդ, երբ Ագուլիս գիւղի քահանաները, իրենց հանդերձները հագած, եկան շահի առաջ, նրանց հետ էին նաեւ դպրատան մանուկներից, որոնք շապիկ էին հագել եւ, մոմակալ ու մոմ բռնած, գնում էին խաչվառին առընթեր: Եւ մինչ քահանաները երգելով գնում էին շահի առջեւից, շահը նայում էր այս ու այն կողմ եւ, ըստ իր չարայուշ մտքերի ու բարքերի, զննում ամենքին: Եւ զննելիս, մանուկներին նայելով, տեսաւ, որ նրանց գագաթներն ածիլուած են: Դա իրեն խիստ ծանր եւ դժուարին թուաց, քանզի կարծեց, որ այդ ի՛ր համար են արել, որպէսզի մանուկներն իր աչքին վայելչագեղ չերեւան եւ նրանցից, հաւանելով, չվերցնի: Եւ դրանից շահի ցասումն ուղղուեց այն մարդու դէմ, ով ածիլել է մանուկների գլուխը: Իսկ մահմեդական հաւատքի մարդիկ՝ ագուլիսցի երեւելի իշխաններ, որոնք շրջում էին շահի հետ եւ մօտիկից սպասաւորում նրան, քրիստոնեաների դէմ ունեցած բնական նախանձից դրդուած, առաւել եւս զրգռեցին Թագաւորի զայրոյթը քրիստոնեաների հանդէպ: Այդ պատճառով շահը, խիստ յուզուած, իսկոյն հրամայեց փնտրել-գտնել այդ անողին եւ սպանել. եթէ ծնողներն են արել, նրանց սպանել եւ ունեցուածքը յափշտակել, իսկ մանուկներին վերցնել Թագաւորի մօտ ծառայութեան: Թագաւորի մերձաւորները սկսեցին սրան-նրան հարցնել, թէ ո՞վ է այդ արել, սակայն բոլորը պատասխանում էին, թէ չգիտեն: Ապա մէջտեղ բերեցին տէր Անդրէասին եւ ստիպելով պահանջեցին.

–Ասա՛ մեզ, որովհետեւ դու ես մանուկների վերակացուն եւ դու գիտես:

Իսկ տէր Անդրէասը մտքում խորհում էր. «Եթէ ծնողներին պատճառ բռնեմ, նրանց կսպանեն եւ մանուկներին կյափշտակեն, իսկ եթէ՝ մէկ ուրիշին, նրան կսպանեն, եւ դա կմնայ իմ խղճին որպէս անփարատելի յանդիմանութիւն»: Եւ, ըստ սուրբ Աւետարանի վկայութեան, թէ՝ «Լաւ է, որ մի մարդ մեռնի, եւ ամբողջ ժողովուրդը չկորչի» [տե՛ս Յովհ. ԺԸ 14], գերադասեց իր անձը մատնել եւ փրկել շատերին: Այս պատճառով, երբ գինուորները շատ ստիպեցին, տէր Անդրէասն ուրիշներին փրկելու համար ասաց.

–Ես եմ այդ արել:

Զինուորները նրա ասածը տեղեկացրին շահին, որը հրամայեց բռնել եւ կալանքի տակ պահել նրան: Օրեր յետոյ շահը հրամայեց նրան բերել իր առջեւ եւ հարցրեց.

–Ճի՛շտ ասա, ո՞վ է այդ գործն արել:

Տէր Անդրէասն ասաց.

–Ո՛չ ոք, այլ միայն ես:

Երբ շահը տեսաւ, որ ոչ ոքի չմատնեց, խիստ բարկացաւ նրա վրայ եւ հրամայեց տարածել գետնին եւ անխնայ բրածեծ անել: Բազում հարուածներից յետոյ շահն ասաց.

–Այդպիսի վնաս ու յանցանք ես գործել: Եթէ ուզում ես ողջ մնալ, ուրացի՛ր ձեր քրիստոնէական հաւատքը եւ ընդունի՛ր մեր կրօնը՝ ըստ մեր առաջնորդի դաւանութեան, եւ ես քեզ պատիւներ ու հարստութիւն կտամ: Իսկ եթէ չհամաձայնես, քեզ կնետեմ շների եւ գազանների առաջ:

Նա յանձն չառաւ ուրանալ, այլ պատասխանեց.

–Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ:

Այդ լսելով Թագաւորը զայրագին բարկութեամբ հրամայեց դարձեալ բանտ նետել նրան: Իսկ յաջորդ օրը, նորից բերելով իր առաջ, հարցրեց.

–Ուրանո՞ւմ ես քո հաւատքը:

Տէր Անդրէասն ասաց.

–Չեմ ուրանում:

Կրկին անգամ արքան ասաց.

–Քեզ պատիւներ ու հարստութիւն կտամ, եթէ ուրանաս ձեր հաւատքը:

Տէր Անդրէասը պատասխանեց.

© National Library of Armenia

–Ես մարմնաւոր փառքի համար իմ լոյս հաւատքը չեմ ուրանայ:

Եւ Թագաւորը, տեսնելով սուրբի հաստատուն միտքը, դարձեալ հրամայեց բանտ նետել նրան:

Իսկ քրիստոնեաները, Թագաւորի նախարարների մօտ գնալով, բազում գանձեր խոստացան՝ տէր Անդրէասին ազատելու համար, եւ թէպէտ նախարարները երկու–երեք անգամ խնդրեցին, արգան չլսեց: Մեծ աղաչանքներով շահի առաջ ընկնելով՝ նրան արձակել խնդրեց նաեւ ցղնեցի խոջայ Անթրեւի կինը, որին շահը մայր էր ասում, եւ նրա առջեւ պատիւ ունէր: Սակայն նրան եւս չլսեց:

Եւ դարձեալ բերեցին տէր Անդրէասին արքայի առաջ: Շատ անգամներ հարց ու փորձ անելուց, պարգեւներ խոստանալուց եւ տանջանքներով սպառնալուց յետոյ, երբ Թագաւորը տեսաւ, որ չի համաձայնում, հրամայեց սպանել: Իսկ քաջ նահատակն ու ճշմարիտ քահանայ տէր Անդրէասը հաստատուն հաւատով կանգնած էր քրիստոնէութեան հաւատքի անշարժ հիմքի վրայ:

Զինուորները տէր Անդրէասին կապանքներով տարան մահապատժի վայրը: Եւ նա ուրախութեամբ ու յօժարակամ էր գնում: Երբ տեղ հասան, ինքն արձակեց իր գօտին, հանեց հանդերձները եւ ասաց դահիճներին, որ ի կատար ածեն Թագաւորի հրամանը: Սակայն դահիճներն ուշացնում էին՝ յոյս ունենալով, որ կհամաձայնի արքայի առաջարկներին: Այդ ընթացքում Թագաւորը սուրբի մօտ երկու անգամ ուղարկեց իր նախարարներից՝ ասելու, թէ՝ «Մի՛ կորցրու քո գեղեցկութիւնն ու երիտասարդ կեանքը. եկ համաձայնի՛ր իմ խօսքերին եւ ինձանից վերցրո՛ւ պարգեւներ ու հարստութիւն»: Իսկ քաջ նահատակը նրանց բոլոր խօսքերին պատասխանեց.

–Ձեր ունայն խոստումները չեմ ընդունում եւ իմ ճշմարիտ հաւատքը չեմ ուրանում:

Եւ դահիճները, մերկացնելով սրերը, խաղացնում էին նրա վրայ եւ մօտեցնում որովայնին՝ նրան վախեցնելու համար, սակայն նա չէր երկնչում:

Նահատակութեան վայրը եկան սուրբի ծնողները: Աղիողորմ ու յորդաբուխ արցունքներով լալիս էին եւ աղաչելով ասում նրան.

–Մեր քաղցրի՛կ որդեակ, ո՛ր քահանայութեան կարգ առար եւ Քրիստոսի զինուոր եղար: Երբէք չուրանա՛ս Քրիստոսին եւ չլինե՛ս տիրատեացների զինուոր, չթողնե՛ս–Քրիստոսի լուսապայծառ հաւատքը եւ ժամանակաւոր կեանքի համար չզրկուե՛ս յաւիտենական կեանքից: Այլ յիշի՛ր Քրիստոսի ճշմարիտ վկաներին, որոնց պատմութիւնները միշտ ընթերցելով՝ պատմում էիր մեզ: Նրանց պէս դո՛ւ էլ համբերի՛ր, որպէսզի եւ նրանց պսակին արժանանաս:

Փղձկացող սրտով եւ յորդաբուխ արտասուքներով այսպիսի խօսքեր էին ասում սուրբի ծնողները: Իսկ տէր Անդրէասը պատասխանեց նրանց՝ ասելով.

–Հոգ մի՛ արէք, սիրելինե՛րս, քանզի ես մտքով ուրախ եմ եւ ցնծում եմ հոգով ու պատրաստ եմ մարմնով մեռնել Քրիստոսի սիրոյ համար:

Իսկ դահիճներին բազում ժամեր յապաղեցնում էին, որ թերեւս երկմտելով թուլանայ, սակայն սուրբն անդրդուելի էր ճշմարիտ հաւատքի մէջ եւ չէր դադարում շարունակ խաչակնքել: Երբ դահիճները տեսան նրա մտքի հաստատունութիւնը, որ չի դառնայ [իր հաւատքից], այնժամ սրով պատուեցին նրա որովայնը, եւ աղիքները փորից դուրս թափուեցին: Սուրբը մի ձեռքով փորի մէջ էր հաւաքում աղիքները, իսկ միւսով խաչակնքում էր երեսը եւ յիշում Քրիստոսի անունը: Ապա, ծակելով սրունքների ջլերը, պարանով վեր բարձրացրին եւ կախեցին գլխիվայր, սակայն սուրբը մինչեւ մայրամուտ կենդանի մնաց, իսկ երեկոյեան իր մաքուր հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը՝ որպէս անուշահոտ խունկ եւ ընդունելի ճշմարիտ զոհ:

Սուրբի մահից յետոյ շահը հրամայեց մարմինը նետել շինութիւնից դուրս, որ գազաններին ու թռչուններին կեր լինի:

Եւ այն գիշեր Քրիստոս փառաւորեց Իր նահատակին, քանզի մեծ լոյս իջաւ նրա սուրբ մարմնի վրայ՝ որպէս վկայութիւն անմեղութեան եւ Քրիստոսի հանդէպ ունեցած սերտ հաւատքի: Այս տեսնելով՝ շատերը փառաւորեցին Աստծուն Իր անպատում սքանչելիքների համար:

Քրիստոնեաները, վերցնելով [մարմինը], բերեցին Ագուլիսի ներքին եկեղեցին, որ այժմ կոչւում է Խցաճորի եկեղեցի, եւ այնտեղ թաղեցին: Այժմ էլ այնտեղ են թաղուած նրա պատուական նշխարները՝ որպէս բարեխօսութիւն բոլոր քրիստոնեաների համար: Աստուծոյ սուրբ քահանայ տէր Անդրէասի վախճանը եւ մարտիրոսական մահը եղաւ Հայոց ՌԿԶ (1617) թուականի նոյեմբերի 18–ին, որի յիշատակը օրհնութեամբ լինի, եւ նրա աղօթքներով Տէրը մեզ ողորմի. ամէն:

© National Library of Armenia

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՆԻԷԼԵԱՆ* (+1915)

Ներսէս եպիսկոպոսը ծնուել է 1868 թուականին Զէյթունում: Աշխարհիկ անունը Գեւորգ էր: Իր ուսումը ստացաւ նախ Սիսի Մայրավանքում, ապա՝ Պոլսի Սահակեան վարժարանում: Այնուհետեւ հրաւիրուեց Աղանա՝ ուսուցչութեան, իսկ 1890-ին ձեռնադրուեց վարդապետ եւ ստանձնեց Իսքէնդէրունի առաջնորդական փոխանորդութիւնը: Այս պաշտօնը նա վարեց մինչեւ 1895 թուականը, երբ Զէյթունի ապստամբութեան կազմակերպիչներից մէկը լինելու ամբաստանութեամբ համիդեան կառավարութիւնը նրան փոխադրեց Հալէպ եւ շուրջ եօթ ամիս պահեց բանտում: Թէեւ վարդապետը դիմումների շնորհիւ ներման արժանացաւ, սակայն Իսքէնդէրունից վտարուեց եւ հաստատուեց Դամասկոսում: Որոշ ժամանակ անց թուրքահայ պատրիարք Օրմանեան սրբազանի բարեխօսութեամբ նա թերուեց մայրաքաղաք: Սակայն այստեղ էլ շարունակ լրտեսւում եւ հետապնդւում էր: Այստեղ նա անցկացրեց իր կեանքի տասը տարիները՝ լինելով քարոզիչ Սկիւդարի սուրբ Կարապետ եկեղեցում:

Մի անգամ պատրիարքարան գնալու ճանապարհին նրան դարձեալ ձերբակալեցին եւ ուղարկեցին Ելղըզ, ուր ենթարկեցին խիստ հարցաքննութեան: Եւ միայն պատրիարքարանի բարեխօսութիւնները փոքր-ինչ մեղմեցին նրա դէմ յերիւրուած մեղադրանքները:

Մշտահալած հոգեւորականը Կիլիկիոյ կաթողիկոսի ազդու դիմումների շնորհիւ 1907 թուականին թոյլտուութիւն ստացաւ մեկնել Սիս եւ վարել տեսչի պաշտօնը: Սակայն 1909-ի գարնանը, երբ ծայր առաւ կիլիկեան եղեռնը, նա դարձեալ ձերբակալուեց՝ հաճնցիների ինքնապաշտպանութիւնը ղեկավարելու մեղադրանքով: Շուրջ բոլորը կրակ էր ու աւեր, իսկ վարդապետը մօտ 100 օր գտնւում էր Մարաշի եւ Էրզինի բանտերում ու ատեաններում:

Իր «Կախաղանի ստուերը» սրտայոյզ յօդուածում նա նկարագրել է իր կեանքի այդ սեւ օրերը: «Զարդից յետոյ,- գրում է նա,- պատերազմական ատեաններ կազմուեցին Աղանայում, Անտիոքում, Էրզինում, Մարաշում՝ «արիւնարբու ոճրագործներին» ձերբակալելու եւ պատժելու նպատակով: Ոճրագործ համարուեցին նաեւ այն հայերը, ովքեր, ինքնապաշտպանութեան դիմելով, չվարդուելու յանցանքն էին գործել: Ինձ էլ ձերբակալեցին՝ ժամանակին Մարաշում ունեցած մէկ քարոզիս համար: 1909-ի յունիսին հեծեալ ոստիկանները Հաճնից չորս օրուայ ճամփայ տարան ինձ: Բնութիւնը ժպտում էր շուրջս, մինչ ես կախաղանի սեւ փայտի ծանրութիւնն էի զգում ուսերիս: Հաճնի զինուորական հրամանատարը խստօրէն պատուիրել էր, որպէսզի ինձ մեծ զգուշութեամբ անցկացնեն Զէյթունի եւ Ֆոնուչի կիրճերից, որ յանկարծ լեռնական հայերն ինձ առեւանգելու փորձ չանեն: Նախորդ օրուայ ծանդնդախոր ձորի միջից սկսեցինք մեր վերելքը: Ծակոցներն օձի պէս գալարում էին աղիներս: Մշ, այդ ցից ու ժայռոտ զառիվերը կեանքիս Գողգոթայի ամենից դժնդակ խաչակրութեան ճամփան է եղել, որը ես անցայ անտրտունջ, քանզի այդ ճամփան բազմաչարչար ազգիս ճամփան է եղել երէկ ու այսօր եւ գուցէ պիտի լինի յաւիտեան...»:

Տառապանքի հետ եղբայրացած այս պատուական հովիւը չէր դադարում Եղեռնի նախօրէին նպաստ հասցնել զնդաններում հեծող հայորդիներին: Նոյնիսկ 1000 ֆրանկ գումարով ապահովագրեց մահուան վտանգին այնքան ենթակայ իր կեանքը՝ յօգուտ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Վերջապէս, երբ անվերջ դիմումներից յետոյ անմեղ ճանաչուեց, 1910 թուականին դարձաւ Աղանայի թեմի առաջնորդը, իսկ յաջորդ տարի եպիսկոպոսական օծում ստացաւ:

Սրբազանի գաւառային հովուութեան վերջին հանգրուանը եղաւ Եօզղադը, ուր մեկնեց 1914-ի աշնանը՝ կարծես յատուկ ընտրելով այն՝ որպէս եղեռնավայրերից ամենազարհուրելին: Եւ սակայն, հակառակ հոգետագնապ անձկութիւններով լի կենցաղին, Ներսէս եպիսկոպոսը երբէք չդադարեց գրել՝ Սկիւդարի իր մենաստանում գիշերներն անցկացնելով գրասեղանի առջեւ: Աշխատակցում էր Պոլսի եւ Իզմիրի թերթերին իր բանաստեղծութիւններով եւ կրօնաբարոյական յօդուածներով: 1903 թուականին Վիեննայում լոյս ընծայուեց նրա «Կեանքն առանց Հաւատքի» պարզ քարոզների հաւաքածուն, իսկ Աղանայի Ջարդերից յետոյ Պոլսում տպագրուեց «Կաթիլ մը ջուր այրած սիրտերու» գիրքը՝ լի սրտամորմոք յուշերով:

Միշտ հաւատարիմ իր ազգի հանդէպ ունեցած պարտքի զգացմանը՝ սրբազանը սկսեց պաշտօնավարել Անատոլուի խորքերում, որպէսզի առաւել մօտ լինի իր ժողովրդին: Անցեալի փորձը նրան ստիպեց այնտեղ մեկնելիս ապահովութեան համար իր հետ ունենալ պաշտօնական որեւէ փաստաթուղթ: Այդ նպատակով դիմեց իր թուրք ծանօթներից մէկին՝ յանձնարարական ձեռք բերելու յոյսով: Սակայն, ինչպէս եւ պէտք էր սպասել, թուրքական չարաշուք բռնատիրութեան այդ ներկայացուցչից մերժում ստացաւ: Եւ Ներսէս սրբազանը Պոլսից ճանապարհուեց դէպի Եօզղադ՝ ապաւինած Աստծուն:

* Ներսես եպիսկոպոսի վարքը վերցուած է Թէոդիկի «Գողգոթայ թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարին» (Նիւ—Եորք. 1985. էջ 303—305):

© National Library of Armenia

Զանցած մէկ տարի, 1915-ի յուլիսի 23-ին, առաջնորդարան ներխուժեցին ոստիկանները եւ ամենաբիրտ կերպով ձերբակալեցին սրբազանին ու նրա խորհրդականներին եւ տարան բանտ: Հայերով լցուած այդ տանջարանում չորս օր մնալուց յետոյ 482 հոգուց բաղկացած մի խմբի հետ Զէմալ փաշան նրան ուղարկեց Մուամմէր դահճապետի մօտ: Դա քաղաքից վտարուող տղամարդկանց առաջին խումբն էր: Միայն սրբազանն էր կառքով գնում: Ճանապարհին սկսուեցին խժդժութիւնները՝ ամենից առաջ՝ կողոպուտի նպատակով: Թուրքերը նախ դրամ պահանջեցին առաջնորդից, իսկ նա պատասխանեց.

–Դո՛ւք էիք, որ մեզ պատուիրեցիք ոչինչ չվերցնել մեզ հետ, հետեւաբար ընաւ դրամ չունեմ մօտս:

Քարաւանը Սեբաստիա ժամանեց առանց մէկ հոգու, որն ինքը՝ առաջնորդն էր: Եղեռնից մազապուրծ մի հայի վկայութեամբ (որ տեսել էր զոհի բզկտուած հագուստները)՝ Ներսէս եպիսկոպոսին զատում են խմբից եւ մի ծառի տակ յայտնում մահուան դատապարտուելու վճիռը: Վարդապետը գլխաբաց ծունկի է իջնում՝ իր աղերսները վերառաքելու Աստծուն, երբ յանկարծ գնդակահարուած ընկնում է գետնին:

Նա եւս մտաւ լուսապսակ բանակի մէջ այն բազմաչարչար հայ հոգեւորականների, որոնք, նահատակուելով, մնացին խոր ձորերում կամ ճանապարհներին՝ անթաղ ու անշիրիմ:

Հայերի քարաւանը, հասնելով Սեբաստիա եւ մէկ գիշեր բանտում մնալուց յետոյ, Մուամմէրի հրամանով ամբողջապէս սրի քաշուեց:



ՀՈԳԵՒՈՐ ՄԱՐՏԿՈՅԹ

© National Library of Armenia

Վիգէն Ղազարեան

ԹՈՒԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Մեկնութիւններում թուային խորհրդաբանութիւնը հիմնական ունի այլաբանական սրբազան նշանակութիւն, ինչպէս կենդանիներինը եւ բոյսերինը՝ կապուած աւետարանական եւ հինկտակարանային իրականութիւնների հետ: «Գանձասարի» Բ եւ Գ հատորներում մենք խօսել ենք ձեռագիր մատեաններում խորանապատկերի համար նախանշուած գունային եւ գեղագիտական հարցադրումների մասին, որ տալիս են «Խորանների մեկնութիւնները»:

Առաջին իսկ՝ Ստեփանոս Սիւնեցու Մեկնութեան մէջ աչքի է ընկնում **չորս** թուի խորհրդաբանութիւնը (սիմվոլիկան): Այդ թուով հիմնաւորւում է գոյների քանակը խորաններում, քանի որ չորսը համապատասխանում է բնափիլիսոփայութեան մէջ ընդունուած չորս տարրերի թուին: Երկրորդ՝ անանուն, եւ չորրորդ (Վանական Վարդապետին մեր վերագրած ԺԳ դարի) մեկնութիւններում այդ թիւը եռաստիճան խորհուրդ է ստանում՝ բացի չորս տարրերից նշանակելով նաեւ մարդու մարմնի չորս բաղադրամասերը, որոնք էլ, իրենց հերթին, խորհրդանշում են Հօրը, Որդուն, Սուրբ Հոգուն եւ այնուհետեւ՝ միաւորական Աստուածութեանը: Ներսէս Շնորհալու Մեկնութեան մէջ բացի չորս գոյնից չորս թուով են նշանակուած նաեւ ծառերը, միայն թէ այստեղ լրացուցիչ հանդէս են գալիս նաեւ հինգերորդ գոյնը (ծիրանի) եւ հինգերորդ ծառը (արմաւենի): Քանի որ այստեղ չորրորդ խորանը խորհրդանշում է երկրային դրախտը, որը բովանդակում էր չորս տարրերը, ապա այս խորանում նկարուած չորս սիւները եւս խորհրդանշում են չորս տարրերը: Գրիգոր Տաթեւացու Մեկնութեան մէջ չորսը քննւում է նախ միւս թուերի հետ՝ ըստ կանոնների համաձայնութեան (կիսասի առանձին), ապա՝ իբրեւ գոյների թիւ՝ ըստ չորս տարրերի, որոնց աւելացնում է հինգերորդը՝ ոսկին՝ ցոյց տալով երկնային էութիւնը: Այնուհետեւ չորսը հանդէս է գալիս իբրեւ չորս գոյների լրացում՝ չորս աստառ (գունամակերես), որ բաղկացած է երկու լուսաւոր եւ երկու ստուերոտ մասերից՝ մի ծիրանի եւ մի ոսկի, որ ստացւում է տասը, այսինքն՝ խորանների (կանոնների) թիւը՝ ըստ Դ դարի հեղինակ Եւսեբիոս Կեսարացու, որ կազմել է կանոնների համաձայնութեան տախտակները (խորանները): Վերջապէս, չորսը հանդէս է գալիս իբրեւ խորանի կազմած քառանկեան խորհուրդ (Գրիգոր Տաթեւացու ժամանակ խորանների գլխազարդերը սիւների միջեւ գտնուող թուային ցանկերի հետ կազմում էին քառանկիւն, մինչդեռ մինչեւ ԺԱ-ԺԲ դարերն առաւել տարածուած էր կամարաձեւ գլխազարդը): Չորս անկիւնները խորհրդանշում են աշխարհի չորս կողմերը: Չորս է նաեւ կաքաւների թիւն ութերորդ խորանում:

Չորսը Գրիգոր Տաթեւացին համարում է նաեւ գրերի հնչման տրուած գլխաւոր գոյների խորհուրդ, որոնք են՝ կարմիրը, կանաչը, կապոյտը, սեւը: Դրանց աւելանում է նաեւ ոսկէ գիրը («Իսկ ոսկին նշանակ է զանսուտ եւ զանապական բանըն Տեառն ի սմա, որպէս ասաց՝ երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցցեն»:): Վերջապէս, կայ յիշատակարաններին երբեմն կցուող մի նախադրութիւն, որը սկսւում է՝ «Փա՛ռք Ամենասուրբ Երրորդութեան ընդ Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (ՄՄ, ձեռ. 3714, Աւետարան, 1419թ., գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի), եւ տալիս է չորս թուի ամենատարբեր մեկնութիւններ՝ ընդգրկուած ինչպէս «Խորանների մեկնութիւններում», այնպէս էլ՝ Ներսէս Շնորհալու եւ Գրիգոր Տաթեւացու՝ Մատթէոսի Աւետարանի Մեկնութիւնների նախադրութիւններում: Դա մի փառահեղ գովք է Աւետարանների, որոնք չորսն են, եւ չորսն էլ՝ բազում պատճառներով, ինչպէս ասուած է Գրիգոր Խլաթեցու Ցիշատակարանի նախաբանում. նախ՝ որովհետեւ աստուածաշնչեան կենդանիները չորեքկերպեան են (Եզեկիէլի տեսիլքը)՝ մարդ, առիւծ, եզ, արծիւ [տե՛ս Եզեկ. Ա 10]: Աշխարհը բաղկացած է չորս նիւթից՝ հող, ջուր, օդ եւ հուր՝ «թշնամիք անհաշտելիք», այլ ձեռագրերում (Կիլիկիա)՝ «հակառակք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք» (անտիկ փիլիսոփայութեան չորս տարրերը), Աստուածութեան չորս անուանները (Երրորդութիւն, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի), Սեղանի չորս անկիւնները, հոգու չորս առաքինութիւնները (խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն), աշխարհի չորս կողմերը եւ այլն: Ինչպէս տեսնում ենք, չորսը մեծ բովանդակութիւն ունի իր այլաբանական երանգներով: Ընդ որում, այս բոլոր խորհուրդ-

© National Library of Armenia

ները գործում են՝ միացած ինչ-որ աստուածաբանական կապով[1]:

Իր խորհրդաբանութեամբ նոյնքան հարուստ է տասը թիւը: Կանոնների թիւն ընտրուել է տասը, որովհետեւ այն «թիւ է սրբազոյն եւ նուէր Աստուծոյ»[2]:

Տասն են մովսիսեան օրէնքները, տասն են «զգայարանք մարմնոյ»[3] եւ «զաւրութիւնք հոգւոյ», տասն են Արիստոտէլի ստորոգութիւնները (կատեգորիաները) եւ Տիրոջ աղօթքի խօսքերը, Նիկիայի Հաւատոյ հանգանակի հիմնական մասերը, հետեւաբար՝ տասն են նաեւ խորանները: Տասի խորհրդաբանութիւնն աւելի է ընդլայնում Վանական Վարդապետին մեր վերագրած «Խորանների մեկնութիւնը». այսպէս՝ տասն են համարուել մոլորակների թիւը[4] (եօթ մոլորակ եւ մէկ անմոլար, այսինքն՝ Արեգակը, մէկ՝ Լուսինը, եւ մէկ՝ Աստուծոյ խօսքը, որ վարում է նրանց բոլորին. այդ ամէնը միասին ստացւում է տասը), տարուայ ամիսների թիւը (տասը, ինչպէս Հռոմում էր ընդունուած)՝ նշանակելով, որ երկու ամիսները «զուգաւորութիւնք են գարնան եւ աշնան»:

Գրիգոր Տաթեւացին աւելի է հարստացնում տասը թուի խորհրդաբանութիւնը. այսպէս՝ **տասը** բաղկացած է **չորսից** կամ չորս թուերի գումարից, այսինքն՝ 1+2+3+4=10: Այդ պատճառով էլ

1 Չորս թուի հետ կապուած այդ «Փառքը» նոյնութեամբ մեզ հանդիպում է Կիլիկիայում: «Փառքը» լինում է նաեւ ընդարձակ, երբ չորսի խորհուրդն աւարտելուց յետոյ խօսւում է չորս աւետարանիչների մասին: Արդէն Կիլիկիայում «Փառքի» այդ երկու տիպին էլ հանդիպում ենք 1299թ. Դրազարկի մի ձեռագրում (տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, կազմ. Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1964, էջ 213) եւ աւետարանիչների մասին ծանօթութեամբ՝ 1290թ. Դրազարկի մէկ այլ ձեռագրում (Բոստոնի Հանրային գրադարան, հայկ. ձեռ. 3. տե՛ս "A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States", by Avedis K. Sanjian, Berkeley, Los Angeles, London, 1976, p. 353-354: Չորսի մի քանի խորհրդանիշներ՝ չորս տարրերը, տարուայ չորս եղանակները, աշխարհի չորս կողմերը (ըստ Ա. Լոսեւի՝ տարածական չորս պատկերները) նորպլիթագորական ոգով դիտարկում էր Փիլոն Ալեքսանդրացին (տե՛ս А. Ф. Лосев, "История античной эстетики. Поздний эллинизм", Москва, 1980, с. 95):
2 Փիլոն Ալեքսանդրացին (Եբրայեցին) տասի մասին ասում է. «...Քանզի սա է ամենակատար, լիագոյն եւ վերագոյն թիւ՝ առանձինն իւր իսկ աստուածային խորհրդոյ» («Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են՝ Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս՝ ի թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց՝ յեղեալ ի լատին բարբառ...», աշխատ. Հ. Մկրտչի՝ աթոռակալ վարդապետի Մխիթարեան Ուխտին, Վենետիկ, 1826, էջ 330):
3 «Իսկ հինգերեակն զգայութեանց չափ է» (նոյն տեղում):
4 «Բայց այսչափ այժմ աւելի է, զի եւ յաշխարհի տասն ամենայն է եւ ի մարդ. յաշխարհիս են եօթներեակք (մոլորակք) եւ որ ըստ լուսնաւս մի տեսակ, փոփոխելի են ըստ ինքեանց. Աստուծոյ Բանն՝ վարիչ եւ մատակարարն բոլորեցունց» (նոյն տեղում, էջ 331): Ինչպէս տեսնում ենք, Փիլոնի միջոցով նորպլիթագորական ազդեցութիւնն ուղղակի է մեր մեկնիչների վրայ:

տասը կանոնները բաղկացած են չորս թուային համակցութիւններից, այսինքն՝ կանոնները կամ համաձայնութեան տախտակները կազմուած են հետեւեալ կերպ. չորս գումարելիներից նախակարգ է համարւում 4-ը, ապա՝ 3-ը, ապա՝ 2-ը, եւ վերջում՝ 1-ը: Ինչպէս գիտենք, Եւսեբիոս Կեսարացին (մահ. 339 կամ 340թ.) գլխագրել է բոլոր Աւետարանները եւ կազմել այդ գլուխների համարների այսպէս կոչուած համաձայնութեան տախտակներ (աղիւսակներ), որոնցից օգտուելու կարգը բացատրել է ոմն եգիպտացի Կարպիանոսին ուղղուած թղթում: Ըստ այդմ՝ նա նախ համաձայնեցնում է չորս սիւնակում այն գլխահամարները, որոնք համապատասխանում են չորս Աւետարաններում («առաջին խորանն, յորս Դ-ն միաբանին՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս»), ապա՝ նրանք, որոնք համապատասխանում են երեք Աւետարաններում՝ երեք համակցութիւններով («Մատթէոս, Մարկոս, Ղուկաս», «Մատթէոս, Ղուկաս, Յովհաննէս», «Մատթէոս, Մարկոս, Յովհաննէս), ապա՝ այն գլխահամարները, որոնք համապատասխանում են երկու Աւետարաններում՝ հինգ համակցութիւններով («Մատթէոս, Ղուկաս», «Մատթէոս, Մարկոս», «Մատթէոս, Յովհաննէս», «Ղուկաս, Մարկոս», «Ղուկաս, Յովհաննէս), վերջապէս, նա հաշւում է այն գլուխները, որոնք զուգահեռ չունեն միւս Աւետարաններում («առանձնակի խաւսին»)[5]: Գլխահամարները մենք դասաւորեցինք այն կարգով, ինչպէս ներկայացնում է Գրիգոր Տաթեւացին: Այսպիսով, ստացւում է տասն աղիւսակ (4+3+2+1):

Ինչպէս ցոյց է տալիս Կ. Նորդենֆալկը, տասը պահպանելու նպատակով Եւսեբիոսը բաց է թողել «Մարկոս-Ղուկաս-Յովհաննէս» եւ «Մարկոս-Յովհաննէս»[6] համակցութիւնները, քանի որ այդ դէպքում կստացուէր 12: Եւսեբիոսը, ինչպէս երեւում է Կոստանդին կայսեր յիսնամեայ կառավարութեան յոբելեանին նուիրուած ճառից, մեծ ակնածանք ունէր խորհրդաւոր տասը թուի հանդէպ. «Չորս թիւը,- գրում է նա,- տալիս է տասը թիւը: Քանի որ մէկի եւ երկուսի եւ երեքի եւ չորսի գումարը տասն է: ...Վերստին, տասը թիւը, որ բովանդակում է բոլոր թուերի աւարտը եւ իրենով սահման դառնում նրանց վրայ, լիակատար եւ կատարեալ մի թիւ է, որն ընդգրկում է թուերի բոլոր տեսակները եւ չափերը, համամասները, համաձայնու-

5 Տե՛ս C. Nordenfalk, "Die spätantiken Kanontafeln", Texband und Tafelband, Göteborg, 1938, s. 46-47:
6 Տե՛ս նոյն տեղում, էջ 47-48:

© National Library of Armenia

թիւնը եւ դաշնութիւնները»[7]: Տասի կատարելութիւնն ընդունում էին դեռեւս պիւթագորականները (ընդ որում, նրանք էին տասը համարում երկնային մարմինների թիւը, ինչպէս նաեւ մի շարքում էին դնում տասը սկզբունքները, որոնք կազմում էին հինգ զոյգ հակադրութիւններ, որոնք յետագայում Արիստոտէլի մօտ վերածւում են տասը ատորոգութիւնների)[8]: Ներսէս Շնորհալու եւ այլոց Մեկնութիւններում նշուած են արարածների տասը մասերը[9]: Տաթեւացին խօսում է քառանկեան մասին, որն ունի չորս կողմեր, որոնք ցոյց են տալիս աշխարհի չորս կողմերը: Քառանկեան չորս կողմերի եւ նրանց ներդաշնակութեան մասին խօսում է նաեւ Օգոստինոս երանելին. 1, 2, 3, 4 թուերի գումարի մասին (տասը) կայ նաեւ վերջինիս մօտ[10]: Այդ յարաբերութիւնը, ինչպէս տեսանք, տարածի բերում է Գրիգոր Տաթեւացին[11]:

Հետաքրքիր խորհրդաբանութիւն է նաեւ տասի տրոհումը հինգ-հինգ մասերի: Սիւնեցու Մեկնութեան մէջ չորրորդ խորանում հինգական կարմիր եւ կապոյտ մասերի են բաժանուած «եղջիւրք կամարաց անդրէն ի վերայ խոյակաց»՝ նշանակելով հինգ դատողական եւ հինգ օրէնքների տախտակները: Թ եւ Ժ դարերի ձեռագրերի խորանապատկերներում իրօք հանդէս են գալիս հինգական բլթակներով արմաւատերեւներ եզրային սիւների եւ կամարների հանդիպման տեղում: Դրանք էլ համարուած են սեղանի եղջիւրներ (սեղան համարւում էր ինչպէս խորանների կամարադաշտը, այնպէս էլ՝ աղիւսակային սիւնազարդ դաշտը): Ժ-ԺԱ դարերի Մեկնութեան մէջ, հատնանաբար՝ հինգերորդ եւ վեցերորդ խորանների համար, ասւում է, որ այդ եղջիւրներն՝ «առ վերին սեղանն» (կամարադաշտը կամ ուղղանկիւնաձեւ գլխազարդը), խորհրդանշում են Մովսէսին եւ Ահարոնին: Ներսէս Շնորհալու մօտ (եօթերորդ եւ ութերորդ խորան) սիւները հինգ-հինգ մասի են բաժանուած:

Սրանցով չի վերջանում թուային խորհրդաբանութիւնը խորաններում: Իններորդ խորանը Ժ-ԺԱ դարերի Մեկնութեան մէջ համարւում է «խորհրդական» (միստիկ)՝ նշանակելով երեք անգամ երեք, այսինքն՝ համաբարբառ աւետարանիչներին՝ Մատթէոսին, Մարկոսին, Ղուկասին: Էլ աւելի բարդ թուային համակարգ կայ Գրիգոր Տաթեւացու մօտ, որը կատարում է թուային այլաբանական գործողութիւններ չորս եւ տասը սրբազան թուերի հետ՝ ստանալով 24 «գլխաւոր արարածոց», 24 մարգարէների, եբրայական այբուբենի 24 գրերի, Քրիստոսի երկրային կեանքի 33 տարիների, դժոխքում 33 ժամ քարոզութեան թուները եւ այլն: Երեք եւ չորս թուերի բազմապատկումով նա ստանում է առաքեալների, երեքը երեքով բազմապատկելով՝ հրեշտակների ինը դասերի թիւը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ թուային խորհրդաբանութիւնը «Խորանների մեկնութիւններում» նոյնքան էական տեղ է գրաւում, որքան՝ գոյների, թռչունների եւ բոյսերի: Ընդ որում, շատ դէպքերում ելակէտային են համարւում թուերի նորպիւթագորական ակունքները:

7 C. Nordenfalk, "The Beginning of Book Decoration", Beitrage für Swarzenski zum 11 Januar, 1951, Chicago. p. 16

8 Տե՛ս "Антология мировой философии в четырех томах", т. 1, часть 1, Москва, 1969, с. 283; Аристотель, "Сочинения в четырех томах", т. 1, Москва, 1976, с. 76 ("Метафизика", 1, 5):

9 Ըստ Եզնիկի՝ մարդու համար իբրեւ ժառանգութիւն Աստուծոյ ստեղծած աշխարհի մասերն են. «Այլ նախ՝ զերկինս եւ զերկիր եւ զջուրս եւ զծով եւ զօդ եւ զբոյս եւ զտունկս, զգազանս եւ զանասունս եւ զթռչունս» («Եզնըկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 162):

10 Օգոստինոս երանելու մօտ թուային խորհուրդների մասին տե՛ս К. Гилберт, Г. Кун, "История эстетики", Москва, 1960, с. 149-153:

11 Թուում է՝ մեր մեկնիչներն այդ գործողութիւնը (1+2+3+4) փոխառել են Փիլոն Ալեքսանդրացուց եւ Եւսեբիոս Կեսարացուց (տե՛ս Ա. Լոսև, նոյն տեղում, էջ 95. նաեւ՝ Nordenfalk, "The Beginning...", p. 16):

ԳԱՆՁԱՍԱՐ

© National Library of Armenia

Լեւոն Ծակորեան

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԸ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԻՑ

Արդի հայ արուեստաբանութեան եւ մշակութաբանութեան բուն նպատակն է պարզաբանել հայ արուեստի ցանկացած երեւոյթի ակունքներն ու փոխադարձ կապերը յարակից երեւոյթների հետ՝ այն դիտելով հնարաւորին չափ լայն մշակութային ու պատմական տեսանկիւնից, ինչպէս նաեւ՝ բնութագրել տուեալ երեւոյթի արդի վիճակը, այսինքն՝ ժամանակակից մարդու կողմից նրա ընկալումն ու ժամանակակից արուեստի զարգացման ընթացքի վրայ նրա ունեցած ազդեցութիւնը: Այդ առումով շարականը, որպէս հայ միջնադարեան հոգեւոր օրհներգի ժանր, խիստ արժէքաւոր երեւոյթ է հանդիսանում: Մի կողմից՝ այն պատկանում է հայ ազգային հոգեւոր գանձարանի «էքսպորտային» նշանակութիւն ունեցող արժէքների շարքին եւ ի վիճակի է անկեղծ հետաքրքրութիւն յարուցել աշխարհի ցանկացած անկիւնում, միւս կողմից՝ շարականի զարգացման ընթացքը կարող է դիտուել իբրեւ իւրայատուկ նմուշ-օրինակ (մոդել)՝ ամբողջ հայ, եւ ոչ միայն հայ, միջնադարեան արուեստի զարգացման օրինաչափութիւններն ուսումնասիրելու համար:

Աներկբայօրէն է նշել, որ շարականը մեր ժամանակներում բազմաթիւ անպատշաճ կամ, երբեմն, կեղծ գիտական մեկնաբանումների առարկայ է դարձել: Այդ մեկնաբանումները, բնականաբար, որոշակի ազդեցութիւն են ունեցել հասարակական գիտակցութեան կողմից ազգային արուեստի տուեալ ճիւղի ընկալման վրայ: Այնպէս որ, կարելի է պնդել, որ երաժշտաբանաստեղծական արուեստի այդ ժանրի իսկական գեղագիտական հիմունքների վերականգնումն ու բացայայտումն արդի միջնադարագիտութեան մակարդակով, իրօք, հայ արուեստաբանութեան հրատապ ու կարեւոր հիմնահարցերից մէկն է:

Սոյն յօդուածի շրջանակներում մենք հնարաւորութիւն չունենք սպառիչ պատասխաններ տալ բոլոր ծագող հարցերին, այլ կսահ-

մանափակուենք միայն նիւթի ամենաընդհանուր բնութագրումով:

* * *

Շարականների վերաբերեալ ժամանակակից մասնագիտական գրականութեան մէջ ձեւաւորուած պատկերացումը կարելի է ամփոփել մի քանի խօսքով. շարականները հոգեւոր բովանդակութիւն ունեցող երգեր են, որոնց եղանակներն ու բանաստեղծական տեքստերը յօրինուած են եղել ականաւոր գործիչների կողմից (օրինակ՝ Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Մովսէս Խորենացի, Անանիա Շիրակացի), այնպէս էլ աւելի ուշ դարաշրջաններում (ընդհուպ մինչեւ Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի, Յովհաննէս Երզնկացի եւ ուրիշներ): Այսպիսով, տուեալ գործիչներն իրենց դրսեւորել են իբրեւ բանաստեղծներ եւ կոմպոզիտորներ: Շարականների բովանդակութեան վրայ ազդեցութիւն են ունեցել ինչպէս ազգային ազատագրական պայքարի հետ կապուած զգացումները (օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի «Երեք մանկանց» օրհներգներում), այնպէս էլ խոր անձնական ապրումները (նոյն հեղինակի ապաշխարութեան շարականներում): Շարականների եղանակները միջնադարում գրի էին առնում այսպէս կոչուած խազային նշանների օգնութեամբ: Տուեալ նշանների իմաստը ԺԶ-ԺԷ դդ. ծանր ժամանակաշրջանում մոռացուել է, մինչդեռ շարականների եղանակները պահպանուել եւ տարածուել են բանաւոր աւանդոյթի շնորհիւ, իսկ ԺԹդ. վերջապէս գրի են առնուել սովորական նոտային նշանների միջոցով: Նոտաներով գրի առնուած եղանակները, սակայն, ամենայն հաւանականութեամբ, չեն համապատասխանում միջնադարում երգուած նմուշներին, եւ վերջիններիս իսկական, բնագրային տեսքը վերականգնելու համար հարկաւոր է վերծանել խազային նշանները, որոնց նշանակութիւնը մինչեւ օրս էլ մնում է անյայտ՝ չնայած Կոմիտասի եւ մի շարք այլ հետազօտողների ջանքերի:

Պէտք է ասել, որ այն արդիականացնող պատկերացումը, որը միջնադարեան արուեստի երեւոյթները ձգտում է գնահատել նոր ժամանակի արուեստին բնորոշ գեղագիտական չափանիշների տեսանկիւնից, իսկ ազգայինի հասկացութիւնը շփոթում է էթնիկականի հետ, սկզբունքօրէն անընդունելի է եւ չի համապատասխանում շարականի ստեղծման բուն էութեանը: Համաշխարհային միջնադարագիտութիւնն արդէն փաստօրէն ազատուել է այդ տիպի արդիականացնող մօտեցումներից. մեր միջնադարագիտութիւնում,

© National Library of Armenia

սակայն, նման առողջ ընթացքը նոր է սկսւում: Շարականների մասին խոսելիս պէտք է ելնենք այն անհերքելի դրոյթից, որ միջնադարեան հոգեւոր մշակոյթն, ընդհանրապէս ասած, հիմնուած էր մի այնպիսի գեղագիտական ըմբռնման վրայ, որի շրջանակներում ստեղծագործողի անհատական նախաձեռնութեան հնարաւորութիւնները խիստ սահմանափակ էին. նորոյթի որոնումները եւ երեւակայութեան տարրերը համարւում էին հպարտութեան յանցաւոր ու սկզբունքօրէն անընդունելի դրսեւորումներ, եւ ստեղծագործութիւնը հիմնականում հանդիսանում էր որպէս նախօրօք տրուած, Եկեղեցու հայրերի կողմից կանոնականացուած նմուշօրինակների ընդօրինակում: Արուեստագէտի գեղարուեստական հմտութիւնը գնահատւում էր ըստ աստուածաբանական սկզբունքների եւ ծիսական արարողութեան բարդ պայմանների նկատմամբ ցուցաբերած իր հաւատարմութեան: Ասուածը հաշուի առնելով՝ մենք չենք կարող միջնադարեան շարականագրին համարել բանաստեղծ կամ կոմպոզիտոր՝ տուեալ եզրերի արդի իմաստով:

«Հոգեւոր երգ» եզրն առաջին անգամ հանդիպում ենք Պօղոս առաքեալի մօտ. «Սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերո՛վ երգեցէք Տիրոջը» [տե՛ս Եփես. Ե 19]: *Սաղմոսներ* եւ *օրհնութիւններ* ասելով՝ Պօղոսն ի նկատի ունի Աստուածաշնչում զետեղուած տեքստերը՝ Դաւիթ մարգարէի 150 սաղմոսները, ինչպէս նաեւ՝ աստուածաշնչեան զանազան գրքերում իրենց տեղը գտած օրհներգային դրուագները, որոնց ձեւն ու բովանդակութիւնն ինքնին ենթադրում են որոշակի երաժշտական ձեւաւորում (ինչպէս օրինակ՝ Մովսէսի յաղթական երգը [տե՛ս Ելք ԺԵ], Բաբելոնում հնոցի մէջ նետուած եւ հրաշքով փրկուած երեք պատանիների աղօթքը [տե՛ս Դան. Գ 52-90], ս. Աստուածածնի շնորհակալական աղօթքը [տե՛ս Ղուկ. Ա 46-54] եւ այլն), միեւնոյն *հոգեւոր երգեր* եզրն, ըստ ամենայնի, վերաբերում է ինքնուրոյնաբար ստեղծուած երաժշտաբանաստեղծական տեքստերին: Վաղ միջնադարեան հոգեւոր երգի պարզագոյն ու ամենատարածուած տարատեսակը յունարէն կոչւում էր **տրոպարիոն**, ասորերէն՝ **էնէանա**, իսկ հայերէն՝ **կցուրդ**. այն «կցւում» էր աստուածաշնչեան այս կամ այն նմուշօրինակ տեքստին (այսինքն՝ սաղմոսին կամ օրհնութեանը) եւ զարգացնում, վերաշարադրում կամ մեկնաբանում տուեալ նմուշօրինակի գաղափարներն ու մոտիւները՝ երբեմն համադրելով դրանք Աստուածաշնչի այլ գրքերից քաղուած մոտիւների եւ խորհրդանիշերի հետ: Այսպիսով, կցուրդի բովանդակութիւնը լիովին պայմանաւորուած է նմուշօրինակ տեքստի բովանդակութեամբ, այսինքն՝ ինքնուրոյն ստեղծագործութեան մասին այստեղ կարելի է խօսել միայն խիստ սահմանափակ առումով: Հայկական շարականն իրենից ներկայացնում է կցուրդների շարք[1], որն, անկախ նրանից, թէ եկեղեցական օրացոյցի որ օրուայ առթիւ է գրուած, պարունակում է հետեւեալ մասերը (տարբեր շարականներում այս կամ այն մասերը կարող են բացակայել).

1. **Օրհնութիւն**՝ կցուրդ Մովսէսի երգի («Օրհնեացուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» [Ելք ԺԵ 1]): Երգւում է գիշերային ժամին:

2. **Հարց**՝ կցուրդ երեք պատանիների («մանկանց») աղօթքի («Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց» [Դան. Գ 52]):

3. **Մեծացուսցէ**՝ կցուրդ ս. Աստուածածնի երգի («Մեծացուսցէ անձն իմ զՏէր» [Ղուկ. Ա 46]):

4. **Ողորմեա**՝ կցուրդ Սաղմ. Ծ-ի («Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ»):

5. **Տէր յերկնից**՝ կցուրդ Սաղմ. ՃԽԸ-ի («Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից»):

6. **Մանկունք**՝ կցուրդ Սաղմ ՃԺԲ-ի («Օրհնեցէ՛ք, մանկո՛ւնք, զՏէր»): 2-6 մասերը երգւում են առաւօտեան ժամին:

7. **Ճաշու**՝ այս մասի նմուշօրինակ սաղմոսը կամ օրհնութիւնը փոփոխական է՝ նայած արարողութեան բնոյթին: Երգւում է ճաշու ժամին:

8. **Համբարձի**՝ կցուրդ Սաղմ. ՃԻ-ի («Համբարձի զաչս իմ ի լերինս»): Երգւում է երեկոյեան ժամին:

Այս խստօրէն կանոնականացուած կարգի շրջանակներում շարականագիրն իր հմտութիւնն է ցուցաբերում նախ եւ առաջ որպէս աստուածաբան՝ եկեղեցական օրացոյցի տուեալ օրուայ բուն ներքին իմաստը հանդիսացող իրադարձութեան մեկնիչ (աստուածաշնչեան տեքստի ուղղակի վերապատումը շարականներում աննշան տեղ է գրաւում): Շարականներում հանդիպում ենք աստուածաբանական մեկնութեան երկու հիմնական կերպերի: Այդ կերպերից առաջինի համաձայն՝ Քրիստոսի մշտնջենական, աստուածային Էութիւնը վկայող իւրաքանչիւր թեզի հակադրւում է այդ Էութիւնն իր երկրային վարքի եզակի իրադարձութիւնների վրայ բեւեռող հակաթեզ, մինչդեռ կրկներգը՝ կայուն բանաձեւը, որն առանց փոփոխութիւնների կամ աննշան փոփոխութիւններով անցնում է մի երգից միւսը՝ իմաստային կապ հաստատելով աստուածաշնչեան նմուշօրինակի

1 **Շարական եզրի հիմքում ընկած է հէնց շարք արմատը, այսինքն՝ շարականի՝ իբրեւ առանձին օրհներգի մասին տարածուած պատկերացումը սխալ է:**

© National Library of Armenia

հետ, սինթեզում է հակադրուող տարրերը: Որպէս օրինակ կարելի է բերել Աւագ Հինգշաբթուն նուիրուած՝ Սահակ Պարթեւին վերագրուող շարականի հետեւեալ հատուածը, որտեղ նման տեսանկիւնից դիտւում է Վերջին Ընթրիքի խորհուրդը.

«Որ յաթոռ փառաց նստիս ընդ Հօր, այսօր բազմիլ ընդ աշակերտսն յանձն առեր՝ բաշխելով զՄարմին եւ զԱրիւն Քո սուրբ[2]. օրհնեալ զԵկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան»:

Մեկնութեան առաւել տարածուած միւս կերպի համաձայն՝ շարականի միեւնոյն տան սահմաններում համեմատւում են սրբազան պատմութեան տարբեր փուլերում տեղի ունեցած իրադարձութիւնները՝ Հին եւ Նոր Կտակարանների ներքին խորհրդանշական կապը հաստատելու համար: Այդ համակարգում՝ նոյնպէս կրկներգը կատարում է սինթեզող տարրի դեր:

Ասուածի լաւ օրինակ է Պենտեկոստէին նուիրուած շարականներից մէկի հետեւեալ հատուածը (հեղինակ՝ Ներսէս Շնորհալի), որտեղ Հոգեգալստեան իրադարձութիւնը [տե՛ս Գործ. Բ] դիտւում է բաբելոնեան աշտարակաշինութեան հետ ունեցած խորհրդանշական առնչութեամբ [տե՛ս Ծննդ. ԺԱ 7].

«Որ զմիաբանեալսն յաշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց, այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ Վերնատունն: Ամենա՛յն հոգիք, օրհնեցէ՛ք զՀոգին Աստուծոյ»:

Հասկանալի է, որ նման գեղագիտական մօտեցումը բացառում էր անձնական կամ հրատապ ապրումների եւ զգացմունքների անմիջական արտայայտութիւնները: Ասուածը վերաբերում է թէկուզ Մեսրոպ Մաշտոցին վերագրուող՝ Մեծ Պահքի **Հարցերին** («Երեք մանկանց» օրհներգերին), որոնցում որոշ հետազօտողներ տեսնում են հայոց ազգային-ազատագրական պայքարի հիմն, եւ որոնք իրականում գրեթէ ամբողջովին կազմուած են Դաւ. Գ-ից քաղուած բանաձեւերից՝ ոչ մի անմիջական ուղղակի կապ չունենալով հրատապ քաղաքական իրադարձութիւնների հետ[3]: Նմանապէս եւ Մաշտոցին վերագրուող **Ողորմեաները**, որոնցից իւրաքանչիւրը ժամանակակից ընթերցողին կարող է թուալ հոգու խորքից եկող ապաշխարութեան ճիչ, իրականում գրեթէ ամբողջովին հիմնուած

2 Հմմտ. Մատթ. ԻԶ 26-28, Մարկ. ԺԴ 22-25, Ղուկ. ԻԲ 19-20, Յովհ. ԺԳ 5-11:

3 Թերեւս պէտք է նշել, որ շարականներում, ինչպէս եւ բոլոր միջնադարեան վարքագրական աւանդութիւններում, հանդիպում են անմիջականօրէն ազգային-պատմական իրադարձութիւններին առնչուող պահեր: Սակայն չպէտք է անտեսել, որ այդ դէպքերում էլ ստեղծագործութեան շարադրանքը հետեւում է որոշակի բանաձեւերի կանոնական համակարգի, որն ըստ էութեան ունի համաքրիստոնէական բնոյթ:

եան աստուածաշնչեան մէջբերումների վրայ: Դրանում համոզուելու համար բավական է թէկուզեւ ստորեւ բերուած հատուածը համեմատել Սաղմ. ՃԶ-ի կամ Բ Թագ. ԻԲ-ի հետ.

«Ծով մեղաց իմոց զիս ալեկոծէ: Որ ես Նաւապետ բարի, շնորհեա՛ զիս նաւահանգիստ, Հա՛յր ամենակալ»:

Շարականների բանաստեղծական տեքստի խիստ կանոնական բնոյթը ցոյց տալու համար կարելի է բերել հարիւրաւոր այլ օրինակներ: Իհարկէ, ԺԲ-ԺԳդդ., Վերածնութեան գաղափարների ազդեցութեամբ, սկզբնական կանոնն ինչ-որ չափով խախտուեց, որի հետեւանքով շարականների արուեստը հարստացաւ որոշ նոր բանաստեղծական հնարներով, սակայն այդ արուեստի հիմնական գեղագիտական նկարագիրը դրանից չի փոխուել: Նոյնպիսի կանոնական բնոյթ ունի եւ շարականների երաժշտական բաղադրիչը:

Ամբողջ միջնադարեան քրիստոնէական աշխարհում գործում էր «ութ-ձայնի» օրէնքը, ըստ որի եկեղեցական երգացանկը հարկադրաբար սահմանափակւում էր 8 կանոնականացուած եղանակներով՝ «ձայներով» (ասորերէն՝ **ոիշ-քոլո**, յունարէն՝ **իխոի**): Կոնկրետ եղանակների ընտրութիւնը իւրաքանչիւր երկրում, ըստ ամենայնի, պայմանաւորուած էր տեղի ֆոլկլորային աւանդոյթներով: Այդ իսկ պատճառով հայկական «ութ-ձայնը» տարբերւում է յունականից, ասորականից, լատինականից, սլաւոնականից եւ միւսներից, բայց **ութը**, որպէս երաժշտութիւնը համակարգող խորհրդանշական թիւ, ընդհանուր է բոլոր նշուած մշակոյթների համար: Միշտ է, ԺԲ-ԺԳդդ. «նախաոեներսանեան» ժամանակաշրջանում որոշ չափով քայքայուել են նաեւ միջնադարեան «ութ-ձայնի» խիստ կանոնական նորմերը. եկեղեցական երգացանկի մէջ են ներթափանցել նոր եղանակներ, որոնք արհեստականօրէն կցուել են եղած 8 «օրինական» եղանակներին՝ որպէս դրանց ստորաբաժանումներ՝ սրբազան թիւը չխախտելու նպատակով: Այդ լրացուցիչ եղանակների հետ միասին Շարակնոցի երաժշտական միաւորների ընդհանուր թիւը հասնում է 44-ի (ըստ Կոմիտասի հաշւումների՝ 40-ի), այսինքն՝ նոտագրուած Շարակնոցի հսկայական հատորում պարունակուող, արտաքնապէս անսահման հարստութիւնն իրականում սահմանափակւում է ընդամէնը 40-44 տարբեր մեղեդիներով կամ, աւելի ստոյգ ասած, մեղեդիական տիպարներով: Այդ տիպարները, համապատասխանեցուելով զանազան ծաւալ ունեցող բառային տեքստերի, կարող էին ինչ-որ չափով փոփոխուել, սակայն դրանց խորքային ինտոնացիոն հիմքը, որը ներդաշնակ, սինթետիկ ամբող-

© National Library of Armenia

ջութիւն էր կազմում տեքստի շարահիւսական, առոգանական ու կշռութային կառուցուածքի հետ[4], մնում է անփոփոխ: Ուրեմն, կանոնականացուած տիպարների վրայ հիմնուած բանաձեւային մտածողութիւնը պայմանաւորում է ոչ միայն շարականների բանաստեղծական տեքստերի, այլեւ՝ դրանց երաժշտական բաղադրիչի առանձնայատկութիւնները:

Շարականների մասին խօսելիս չի կարելի շրջանցել խազային նշանների խնդիրը: Սկսած Կոմիտասի 1900-ական թուականների աշխատութիւններից՝ համարւում է, որ խազերն ունեն ինչ-որ «մոռացուած» իմաստ: Հետեւաբար, խազերի «բանալին» գտնելուց եւ շարականների խազային տեքստերը վերծանելուց յետոյ մենք ստանալու ենք սկզբունքօրէն նոր արժէք, որն ամենեւին չի համընկնելու շարականների արդի, նոտային ձայնագրութիւններից յայտնի վիճակի հետ[5]:

Իրականում, ինչպէս վաղ միջնադարեան օրհներգը չէր կարող համարուել երաժշտական ստեղծագործութիւն՝ բառիս արդիական իմաստով, այնպէս էլ վաղ միջնադարեան երաժշտական նշանները (եւ այդ թւում, իհարկէ, նաեւ խազերը), գործելով կանոնական, բանաձեւային մտածողութեան պայմաններում, ֆունկցիոնալ առումով ամենեւին նման չէին արդի նոտաներին: «Ութ-ձայնի» կանոնականացուած մեղեդիական տիպարներն ընդհանրապէս գրի չէին առնւում. երգիչ-կատարողները պարտաւորուած էին դրանք յիշել անգիր, իսկ խազերը ծառայում էին այդ տիպարները զանազան բանաստեղծական տեքստերին համապատասխանեցնելուն եւ կատարողական տարբեր ընթերցուածներով հարստացնելուն: Բացի այդ, որոշ բաղադրեալ, համեմատաբար աւելի բարդ կառուցուածք ունեցող խազերը իրենց յատուկ պայմանական նշանների դեր էին

4 Այդ սինթեզի էութեան պարզաբանումը կազմում է մի առանձին գիտական հիմնահարց եւ կապուած է բազմաթիւ տեխնիկական մանրամասնութիւնների հետ, ուստի եւ այստեղ հնարաւորութիւն չունենք դրան անդրադառնալու:

5 Խազերի վերծանութեան մեթոդաբանական հարցերին վերաբերող՝ Կոմիտասի միակ հրապարակուած յօդուածի վերլուծումը ցոյց է տալիս, որ Կոմիտասի պատկերացումները համապատասխանում էին իր ժամանակի եւրոպական նեւմագիտութեան (միջնադարեան բիւզանդական երաժշտական նշանների մասին ուսմունքի) մակարդակին, որն այն ժամանակ բաւական ցածր էր: Միայն 1920-30-ական թուականներին Հ. Թիլեարդի եւ Ի. Վելլէսի ջանքերով գիտութեան այդ բնագաւառը կարողացաւ որոշակի յաջողութիւնների հասնել բիւզանդական նեւմերի էութիւնը բացայայտելու գործում: Հաշվի առնելով, որ հայկական խազերի համակարգը, ըստ էութեան, միջնադարեան երաժշտական նշանների ընդհանուր, միջազգային համակարգի մասնաճիւղ է (խազերը բիւզանդական նեւմերի, ինչպէս նաեւ՝ լատինական եւ պլաւնական նոյնատիպ նշանների նմանութեամբ հանդիսանում են հին յունական առոգանութեան նշանների համակարգի ընդյայնուած տարբերակ)՝ կարելի է պատասխանել խազերի էութեանը վերաբերող հիմնական հարցերին՝ դրանց վրայ տարածելով յարակից նշանային համակարգերի ուսումնասիրութեան արդիւնքում ստացած տուեալները:

խաղում՝ հնարաւորութիւն տալով բոլոր «լրացուցիչ», խիստ «ութ-ձայնից» շեղուող տիպարները միմեանցից տարբերել եւ համակարգել: Այսպիսով, խազային նշանների վերծանութեան ցանկացած փորձ սկզբունքօրէն չի կարող դուրս գալ Շարականոցի նոտային տեքստում պարունակուող ձայնեղանակների եւ դրանց «ստորաբաժանումների» մասին մեր ունեցած պատկերացումների շրջանակներից (իհարկէ, այստեղ խօսքը այս կամ այն չափով դիլետանտական փորձերի մասին չէ, որոնք խազագիտութեան բնագաւառում սակավաթիւ չեն): Հետեւաբար, տուեալ ուղղութեամբ պէտք չէ սպասել որեւէ նոր արժէք: Մենք ամենեւին չենք պնդում, թէ խազերի համակարգը հետազօտողի առջեւ ոչ մի էական խնդիր չի դնում: Խնդիրը, սակայն, կապուած է ոչ թէ նշանների «վերծանման», այլ՝ օրհներգերի շարահիւսութեան, առոգանութեան, կշռոյթի եւ ելեւէջի սինթեզի կազմակերպման մէջ նրանց ունեցած դերի բացայայտման հետ: Նման մօտեցումն, անշուշտ, ունի զուտ ակադեմիական բնոյթ եւ հետազօտողին թեթեւ դափնիներ չի բերի: Միւս կողմից՝ այն, մեր համոզմունքով, լիակատար կերպով համապատասխանում է նիւթի բուն էութեանը:

Այժմ փորձենք ամփոփել ասուածը: Մեր նախնիների կողմից ստեղծուած շարականը բարձր, կանոնական, սինթետիկ հոգեւոր արուեստ է, որի շրջանակներում իսպառ բացառուել են բոլոր «ութ-ձայն», չափից դուրս անհատականացուած դրսեւորումները: Այդ արուեստի խորքային հիմքն ունէր համաքրիստոնէական, այսինքն՝ ինչ-որ չափով վերազգային բնոյթ՝ համաձայն Պօղոս առաքեալի խօսքի. «...այնտեղ չկայ հրեայ, ոչ էլ՝ հեթանոս, թլփատութիւն եւ անթլփատութիւն, բարբարոս, սկիւթացի, ծառայ, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորի մէջ» [Կողոս. Գ 11]: Հայ հոգեւոր երաժշտաբանաստեղծական արուեստը քրիստոնէական աշխարհի միւս երկրների արուեստից առանձնացնող հիմնական գործօններն են գրաբար լեզուն եւ «ութ-ձայնի» հայկական տարբերակը: Երկուսն էլ միջնադարեան կանոնական մտածողութեան համակարգի տեսանկիւնից դիտւում էին որպէս լոկ օժանդակ տարրեր, որոնք միայն չափազանց անկատար միջոցներ են՝ մշտնջենական աստուածային ճշմարտութիւններն արտայայտելու համար: Այս կապակցութեամբ տեղին է յիշել առաքեալների եւ Յիսուս Քրիստոսի հետեւեալ երկխօսութիւնը.

«-Ինչո՞ւ ես առակներով խօսում նրանց (ժողովրդի - Լ. Ց.) հետ:

-Որովհետեւ ձեզ է տրուած իմանալ երկնքի արքայութեան

© National Library of Armenia

խորհուրդները, իսկ նրանց տրուած չէ» [տե՛ս Մատթ. ԺԳ 10-12]»:

Այստեղ կարելի է մէջբերել նաեւ մէկ այլ դրուագ. «...ով որ լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստուծոյ հետ. քանզի չկայ մէկը, որ հասկանայ նրան, բայց նա Հոգով արտայայտում է խորհուրդներ: Բայց ...Եկեղեցու մէջ ուզում եմ հինգ խօսք խօսել մտքով, քան՝ բազում խօսքեր՝ լեզուով» [Ա Կորնթ. ԺԴ 2, 19]: *Լեզուներ* եզրը պէտք է ընկալուի խորհրդական ոգով [հմմտ. Գործ. Բ 4]: «Երկնքի արքայութեան խորհուրդների» լիակատար իմացութիւնը հնարաւոր է միայն խորհրդական (միստիկական) լուսաւորման ճանապարհով՝ առանց լեզուի միջամտութեան: Միջնադարեան արեւելաքրիստոնէական մեծագոյն մտածողներից մէկը՝ Դիոնեսիոս Արեոպագացին, մշակել է **ապոֆատիկ** (անճառելի) աստուածաբանութեան տեսութիւն, որի համաձայն՝ բարձրագոյն Էութեան ճանաչողութեան ճանապարհին հարկաւոր է աստիճանաբար ձերբազատուել բոլոր մասնաւոր բնութագրումներից եւ որակումներից՝ դրանք փոխարինելով բացասաբար՝ հակառակից ելնող բնութագրումների համակարգով: Նման մօտեցումը ճշգրիտ կերպով արտացոլուած է Աստուածածնի **Աւետման** կաւոնի օրհներգերից մէկում (հեղինակ՝ Գրիգոր Պահլաւունի, ԺԲդ.), որտեղ Քրիստոսին բնութագրելու համար կիրառուած է եզրերի հետեւեալ շղթան՝ **անճառ-անժամանակ-անտանելի-աներեւոյթ-անասհման**: Տուեալ ուղղութեամբ յաջորդ տրամաբանական քայլը կլիներ հրաժարուելը որեւէ բառից եւ հասնելը այն լիակատար լռութեանը, որն իր մէջ է պարունակում ողջ «ինֆորմացիան» Աստուծոյ Էութեան մասին: Նման քայլ կատարելը, սակայն, անմատչելի է սովորական մարդու համար: Այդ իսկ պատճառով Դիոնեսիոսը ընդունում է նաեւ աստուածաբանութեան աւելի ցածր, անկատար տարբերակ՝ **կատաֆատիկ** (ճառելի) աստուածաբանութիւնը, որը, Քրիստոսի անուանների նմանութեամբ, կարող է օժանդակ միջոց ծառայել՝ հասարակ մարդկանց աստուածային ճշմարտութիւններին ծանօթացնելու համար: Կարելի է ասել, որ միջնադարեան կանոնական մտածողութեան համակարգում լեզուն եւ ձայնեղանակը կատարում էին հէնց այդպիսի **կատաֆատիկ** միջոցների դեր:

Այսպիսով, միջնադարեան շարականների արուեստում օրհներգերի բանաստեղծական լեզուի գրաբարը եւ «ութ-ձայնի» եղանակների հայկական երանգը, որպէս ընդհանուր սինթետիկ համակարգի լոկ մակերեսային, օժանդակ, մարդու բնութեան արտաքին յատկանիշներով պայմանաւորուած տարրեր, պէտք է դասուեն ոչ

այնքան *ազգային*, որքան *էթնիկական* արժէքների շարքին: Մեր ժամանակներում միջնադարեան արուեստի սինթետիկ ոգին պատշաճապէս չի ընկալուում. ամբողջական համակարգ հանդիսացող, լիակատար եւ համապարփակ քրիստոնէական հաւատքը կորցնելուց յետոյ մենք ի վիճակի ենք լաւագոյն դէպքում ըմբռնել միայն նշուած էթնիկական տարրերը՝ դրանք շփոթելով իսկական ազգային հոգեւոր արժէքների հետ: Բանասէրներն ուսումնասիրում են շարականների բառային տեքստերը, երաժշտագէտները՝ մեղեդիներն ու խազային նշանները, կոմպոզիտորները «ութ-ձայնի» կանոնական եղանակներն օգտագործում են իբրեւ «հումք» ոճական եւ գործիքային պիեսների համար. այդ ամէնը, սակայն, արւում է հիմնականում մակերեսային մակարդակով, առանց նիւթի բուն, սինթետիկ էութիւնը հասկանալու: Սկզբնական ամբողջութեան աւերակների վրայ ծնուած արդի մշակոյթն, իհարկէ, ինքնին որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում՝ որպէս ազգայինի իւրայատուկ դրսեւորում: Այդ նոր *ազգայինը*, սակայն, ունի անչափ աւելի սահմանափակ, *էթնիկականի* հետ համընկնող բնոյթ, եւ դա անխուսափելի է, քանի որ այն հոգեղինացած չէ իսկական քրիստոնէական հաւատքով:



© National Library of Armenia

Ղեւոնդ Ալիշան

ՊԱՏԿԵՐՈՒՍՈՅՑ ԳԻՐՔ

(շարունակութիւն)

53-54. *Իմաստասիրի եւ գինւոյ վիճաբանութիւնն է գրուած*[1] *:*

55. *Երեսին վերեւը՝ կա՛մ յետոյ գծագրած, կա՛մ հին գծերը դիմացը կայ հին եւ կարմիր գծերով նոյնպէս գիրք մի բռնող մէկն, բայց դէմքն խանգարած եւ մաշած է: Վարի կողմն այլ կայ կիսանձն պրակաւոր մի՝ մօրուանի, մազերն նման Յովհ. Մկրտչի նկարուած գլխոյ (Թիւ 25*)*[2]*. կ'օրհնէ դիմացը կեցող աւելի փոքր պրակաւոր մի մանկադէմ վայելուչ. սոսր մազերն այլ՝ ծածանեալ:*



*Թիւ 25**

Հաստըցուցած մեծամռուղ մէկ մի՝ գիրք կամ տոմս ի ձեռին.

56. *Հաւանօրէն է Մատթէոս իր Աւետարանը գրող. պարզ գծաձեւ:*

57. *Թանձր կարմրկէկ գծերով եւ բաւական կենդանի կերպարանօք* ***Եօայի մրգէ*** *(Թիւ 26*),* ***Դանէլ*** *(Թիւ 27*), երրորդն՝ անանուն, քայլողի ձեւով. վարի կողմը՝* ***Ամօվս մրգ՝*** *պրակը երկու ձեռօք տարածած (Թիւ 28*),* ***Միքիա*** *(Թիւ 29*) եւ* ***Յովել:*** *Զգեստներուն վրայ նշանակուած են գունոց անուանքն լզ· կէ·*

---

1 Տուեալ երկը (տե՛ս «Բազմավէպ» Ռ. ԾԴ, էջ 388-390) յապաւում է սոյն վերահրատարակութիւնից՝ վերջինիս նպատակին չառնչուելու պատճառով:

2 Աստղանիշ թուով համարակալուած են մեր յաւելած պատկերները:

© National Library of Armenia



Թիւ 26*



Թիւ 27*



Թիւ 28*



Թիւ 29*

(կանաչ), ոսկի, ալ. եւ շատ տեղ՝ ԸԳ, որ չեմ գիտեր՝ ինչ գոյն նշանակէ:

58. Այս երեսիս վերեւն այլ են Աբգարու եւ ուրիշ երկու փոքր մարգարէք. վարն ալ՝ երեք՝ առանց անուան. ասոնց լուսապսակաց միջոցը թանձր կարմրով կամ սեւականաչով ծեփեր են յետոյ:

59. Վայրի մարդն է, եթէ այսպէս ուզեր է կարծել ընդօրինակողն, եւ ոչ՝ դեւ մի: Այլ ճիւաղին մարմնոյն կիսէն վարը ձեռքերն, գլուխն եւ կրծոց մասն մի՝ սեւաներկ են, մնացեալ մասն՝ կարմիր կամ թանձր աղիւսագոյն:

60. Այս երեսին վերը Հաւասարամասն խաչ մի կայ՝ չորս թեւերն մէկմէկ զոյգ թռչուններով ձեւացած. մէկ կողմը՝ խաչանիշ քահանայական զգեստով անձ մի՝ երկու ձեռօք բռնած պլրակ մի եւ դաստառակ կամ ուրարին փէշը. միւս կողմն այլ՝ քիչ մի ցած, ուրիշ խաչանիշ մի նոյնպիսի. անկի վար՝ ս. Աստուածածին՝ Յիսուս ի գրկին. իր քովն այլ՝ ս. Յովսէփ՝ սրածայր գաւազանաւ. իսկ ի միւս կողմն՝ անճոռնի, թէեւ բաւական ճարտարագիծ, փետրամազ, երկայնաքիթ կլորաչուփ բու հաւն (Թիւ 21):

61-62. Ս. Աստուածածնի ի թաղումն տարուիլն՝ իբրեւ յանկողնի դագաղաւ, զոր վերցնեն ութ լուսապսակ առաքեալք եւ հետեւողք. դագաղին եզերքէն կախուած են այն ամբարիշտ հրէին երկու բազուկներն, որ կ'ուզէր կործանել զդագաղն, եւ հիմա, կռճոպեալ թեւօք ի ծունկ ինկած, թուի ներումն խնդրել: Թղթին միւս երեսն այլ ներկայացնէ Տիրամօր թաղումը, որ վերնոյն պէս բաց երեսօք տեղաւորուի ի գերեզմանի. մէկն՝ թիկունքէն բռնած, իսկ միւսն՝ ոտքերէն. ասոր քով՝ երկու մոմավառ կուսանք. միւսոյն քով այլ՝ երեք անձինք, որոց վերեւն՝ երկու թեւաբարձ հրեշտակք, դիմացն այլ՝ երեք հրեշտակք. իսկ ի միջին կեցած է Քրիստոս խաչանիշ լուսապսակաւն, ի ձեռին խանձարրապատ փոքրիկ մի, որ նշանակէ զհոգի Մօրն, զոր տանի

© National Library of Armenia



Թիւ 22

յերկինս: Այս ամէնքն բացատրեն մեր հարց երգած շարականն ի Վերափոխումն ս. Աստուածածնի. «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին, երանելի առաքեալքն եւ ս. կուսանքն, ջահագգեստիւք պայծառացեալք, լուցանէին զլապտերս իւրեանց... Տեառն իսկ Ինքն գոլով եկեալ բազում հրեշտակօք» եւ այլն: Բոլոր պատկերն նուրբ կապոյտ գծերով է, եւ դէմքերն՝ բաւական

վայելչութեամբ. ամէնքն այլ՝ մարդ եւ հրեշտակ, լուսապսակք են, բաց ի կուսանաց, որոց, թերեւս, բաւական համարուած է գէսն եւ քողն (Թիւ 22):

64. Համբարձումն կամ Յարութիւն Քրիստոսի. Քրիստոս յօդս բազմեալ՝ պրակիկ ի ձախսումն, աջովն օրհնելով. չորս հրեշտակք՝ թեւատարածք եւ



Թիւ 23

63. Պատկերին վրայ գըրածքն վկայեն ինչ ըլլալը. երկու կանայք, խադաբերքն, հրեշտակն նստեալ եւ վէմն գերեզմանին Քրիստոսի, զոր յետոյ մէկն կարմրով գծեր է, մինչ բնաւն կապուտագիծ է (Թիւ 23):

ծնգածալք, չըլլանակ մի ձեւացընեն Յիսուսի բոլորով: Պատկերն Քրիստոսի Համբարձման պատշաճի, բայց ներքեւը ուրիշ անձ չըլլալով՝ մէկն Յարութիւն կարծեր է եւ հինկէկ գրով գրեր

© National Library of Armenia

է. «Մարիամ ու Հրեշտակն յայս տեղս պիտին»:

65. Յիսուս Փրկիչ՝ խաչապսակ բազմեալ յաթոռ չորեքկերպեան, աջովն օրհնելով, Աւետարանն ի ձախում. այս կողմէս՝ կիսանձն Յովհ. Մկրտիչ, յաջակողմն՝ ս. Աստուածածին: Յիսուսի պատմուճանաց վարի կողմերը այլ եւ այլ գոյնանիշ տառեր կան, լ-բ. հ. գ. (լագուարտ. բեհեզ. գնճուֆր): Նշանաւոր է այս պատկերիս ներքեւ մէկ կողմը գծանկար ծնրադիր կրօնաւոր մի, ինչպէս գուշակուի գլխէն վար կախուած կնգուղէն, եւ թուի պատկերացս նկարիչն:

66. Վերեւ՝ Հարեւանցի գծագրած խորան կամ ճակատ մի Աւետարանի, վարն այլ՝ անձ մի՝ մէկ ձեռքը կարկառած:

67. Ծգնաւոր կամ կրօնաւոր մի՝ խաչանիշ կնգղով, երկայն նեղ գաւազանաւ. յաջ կողմն՝ երկայնանիզակ եւ երկայնասրունգ զինաւոր մի. միւս կողմը՝ թագապսակ կոյս մի՝ լայն վերարկուաւ թեւերը ծածկած, եւ վերարկուին վերի մասերն իրարու եկած տեղէն՝ նաւու խարըսխի ձեւով բան մի կախուած. ասոր քով՝ լուսապսակ, անմօրուս, պրակաւոր երիտասարդ մի. ներքեւը՝ երկայնմօրուք, ծունկ դրած աղօթաւոր մի՝ փոքրիկ „պրակ կամ ծրար ի ձեռին (Թիւ 30*). դիմացի կողմէն մեծկակ եւ երկայնամատն ձեռք մի գծագրած է, թուի յետին դրչէ:

68. Մեծ ձեւ մի, դըրսէն՝ վեց կիսաբոլոր, մէջն՝ կիսաբոլորից



Թիւ 30*

գծերն երկայնած եւ յիրար խառնած, ճարտար եւ վայելուչ:

69. Հմայական աղօթքն են, զոր ի սկզբան յիշեցինք[1]:

70–75. Բարոյական խրատքն եւ խառնալեզու ոտանաւոր բանն. վերջի երեսին ներքեւ՝ կարճ յիշատակն նահատակութեան Սիրունի լաճին եւ Թուականն[2]:

Յիշեցինք առաջացուց[3] այս ոտանաւոր գրուածք նիւթն եւ լեզուն. Հեղինակն թուի վերջի կի-

1 Տե՛ս «Գանձասար», Գ, էջ 330:
2 Տե՛ս նույն, էջ 329:
3 Տե՛ս նույն, էջ 230

սուն մէջ յիշուած Թադէոսն. այդ անուամբ ծանօթ է Թօխադցի մղտեսի մի՝ երկլեզու քերթուածներով, եւ սեբաստացի երէց մի եւս: Քննելու է եւ Թադոսի քով յիշուած՝ Հոգւով տկար Ղաւսին, որ այս գրուածին վերջի տան մէջ այլ գրուի Ղաւաս. մի թէ մականո՞ւն Թադոսի, թէ՞ անոր բարեկամ կամ թէ բուն հեղինակ բանիս[1]:

76. Ինն կիսանձն Փոքր մարգարէք, որոց պրակաց վրայ



Թիւ 31*

գրուած են անուանքն, բայց ոմանց՝ ջնջուած, կարդացուին Զաքարայ?, Ամովս, Միքեայ, Յովէլ, Աբդիու (Թիւ 31*), Նաում, Ամբակում (Թիւ 32*):

1 Այս երկը (տե՛ս «Բազմավէպ», Ռ. ԾԴ. էջ 394-396) նույնպես հրապարակում է:



Թիւ 32*

77. Մեծ երկլեզուեան, ժանեւոր, ճիրանաւոր եւ բաշաւոր վիշապ մի (Թիւ 24):

78. Զարդաձեւք բուսեղէնք, որոց մէջ՝ մեծ աքաղաղ հաւ մի. փոքրիկ մի եւս՝ արծուանման մագլօք քառակուսի տուփ կամ տոմս մի բռնած:

79. Երկու գազանք՝ ինձ կամ ընձառիւծ՝ ահարկու աչօք եւ կզակօք:

80. Այլեւայլ կենդանեաց փոքր պատկերք՝ միեղջերու, բորենի եւ այլն, որք սովորաբար Աւետարանի խորանաց եզերքներում նկարուին:

81. Զորս թռչնուհիք եւ երկու զարդախառն թռչունք:

82. Քրիստոս բազմեալ, զոր երկու ծընկածալ հրեշտակք վերցընեն. վերեւ գրուած է՝ եթէ ոչ ի հաւաքողէն, այլ՝ հինկէկ. Տեառըն Եղովբեայ: Ներքեւն այլ

© National Library of Armenia

նոյն ոճով գրուած եւ նկարագծեալ կիսանձը յայտնող. «Առաջին թագաւորն Աղապար, որ եգիտ զբիծ կենդանակերպան. յորդոց Սեթայ»: Ի գլուխն՝ երկայն ճագարաձեւ գոտակ՝ մէկ ձեռն կէս վերուցած, միւսն՝ բան մի ցուցընելու ձեւով. զգեստուց գոյնն գրուի ոսկի, լազուարտ եւ ճնարակ:

83. Այս երեսիս վրայ պատկերքն գունաւորեալ են դեղնակարմիր, բայց քիչ չատ մաշած. յոլ կողմն՝ տասն կամ աւելի անձանց խումբ մի կայ, որոց չատին միայն գլուխք գծագրեալ մօրուաւոր կամ անմօրուս են. երկու կամ երեքն միայն ամբողջ եւ գունաւոր. ասոնց դիմաց, միւս երեսին եզերքին՝ գունաւոր մէկ մի, որոյ ձեռաց ինչ դիրք ունենալն յայտնի չէ: Այս երկու եզերաց մէջ անձ մ'այլ կայ չատ նշանաւոր դիրքով. պատմուճանին ստորոտն կ'երեւի ճերմակ մնացած, վերարկուն նեղ եւ երկայն՝ մէկ թեւէն կախուած. գլուխը սեւցուցեր են, վիզը



Թիւ 24

ծռած, թեւերն այլ գլխէն վեր այնպիսի կերպով բարձրացուցած, որ յուսահատութիւն եւ ողբալ երեւցընէ. միթէ երեմիա՞ մարգարէ: Պատկերիս վերեւն այլ



Թիւ 25

երկու մեծ գլուխք կան սեւանկարք՝ մին մօրուք, միւսն՝ կլոր անմօրուս, բաւական ազդեցիկ (Թիւ 25):

84. Նշանաւոր է եւ այս պատկերս, որ ներկայացընէ խրայելացւոց՝ յանապատին նուաղիլն ծարաւով. Մովսէս կապոյտ կանաչ զգեստուք եւ դեղին

լօդկաւ կ'երկընցընէ զգաւազանը ի վէմն, որ ջնջուած է. ի ձախ կողմն երկայնամօրուս աղաչաւոր մի կայ դեղին վերարկուաւ. յաջկողմն այլ՝ կէս դեղնագոյն եւ այլ անգոյն ծարաւիք՝ աղաչաւոր ձեռօք. վարն այլ՝ ութ նոյնպիսիք, յորոց մին կանաչ գուշպիսիք, յորոց մին կանաչ գուշնաւորած է, փոքր մօրուօք եւ նայի դէպ ի Մովսէս՝ ի գիրկն առած կիսանուաղ աղջիկը կամ տղայն: Երեսին մէկ անկիւնում այլ մեծկակ թեւի գծանկար մի կայ:

85. Այս պատկերս այլ նշանաւոր է. մէկ կողմում կան տասնիւ չափ գլուխք արանց եւ կանանց, որոց դիմաց չորս ամբողջ կանգուն կերպարանք՝ պէսպէս գունաւորեալք. ասոնք այլ աղաչաւոր թուին առ կարմրազգեստ մէկ մի, որ կեցած է ի միւս կողը եւ անոնց դարձած՝ լուսապսակ գլխովն. ձախ ձեռքը վերուցած ցուցընէ բան մի, յաջում՝ թուի նեղ գաւազան: Երեսին պարապ մասին վրայ յետոյ մէկն հարեւանցի եւ անարուեստ գլուխ մի գծագրած է՝ թերեւս նշանակելով վերեւը գրած երկու տողերը.

«Խաբեցա ի տես պատկերին դէմ իգականին Եւ կապեալ գերեցա ես տոռամբ նորին»:

86. Գունաւոր եւ նշանաւոր է եւ այս. վերեւ յաջակողմն՝ **Դաւիթ** քնար ի ձեռին բազմած. դիմացն՝ դեղնազգեստ ծնրադիր ոմն, որոյ առջեւ **Մառաքն** գրուած է, քովն այլ՝ ուրիշ մի կանգուն կեցած. բայց առաջինն թուի Ուռնա, վասն զի ներքեւն նկարած է կալն. փոխանակ այս բառիս գրուած է **յարդն**, բայց ոչ՝ հին. աւելի հին երեւի քովի կարմրագիրն՝ **եզքն են**, զի երկու սեւականաչ եզինք կան ի քառակուսի ոտքով արկղի նման չինուածի մէջ, զոր շրջապատէ մեծ դեղնագոյն բոլորակ մի:

87. Ասկէ առաջինին պատշաճի այս երեսս այլ, զի ներկայացընէ Տապանակին փոխադրութիւնը, զոր յայտնէ եւ գիրն՝ **Տապանակն է. կառքն է.** սայլավար հօտաղն նստած է, երկուք այլ դիմացէն կ'երթան, անոնց առջեւէն՝ վայելչադէմ մօրուանի ծեր մի՝ կապոյտ եւ դեղին գոյներով զգեստաւորած. աւելի առաջ՝ կապոյտ, կանաչ եւ դեղին հագած Դաւիթ՝ քնար ի ձերին եւ ոտքն ի կաքաւ, դէմքն այլ գունաւորեալ, բայց խանգարած է:

88. **Եաայէ մարգարէն,** որոյ միայն գլուխն կ'երեւնայ, վասն զի կու սղոցեն զայն, մարմինը մեքենայի մէջ ծածկած, մեծ քառակուսի չրջանակաւ սղոցով երկու դահիճք՝ լաւ գծագրեալք. Մանասէ թագաւորն՝ կարմրախառն զգեստով, կանաչով բարձր ծածկած աթոռի վրայ

© National Library of Armenia

նստած, իր անդիմութեան զոհը կու դիտէ. բայց դէմքն գրեթէ բոլորովին մաշած է:

89. Մեծ բերանաբաց կէտ ճուկն՝ կապոյտ գունով, կարմիր գծերով. բայց բերնի եղածն յետոյ անարուեստ ծրագիր մ'է. դիմացը հինկէկ կարմրով գրած է **Ծուկեան** է: Կայ մէկ անկեան մէջ գծագրեալ Յովնան մ'այլ՝ ձեռն ի ծնօտի՝ մտածելով. գլուխն վերջէն սեւագծելով այլայլած է: Ուրիշ յետոյ գծագրեալ անարուեստ ինչ այլ կայ:

90. Այս երեսիս ձախակողմը բռնէ երկայն պէսպէս բազմամանուած զարդ մի. յաջակողմն՝ վերեւը գրուածն նշանակէ՝ **Գոտեմարտն Ծակոբայ**. զիրար գրկած երկու անձինք լուսապսակք, մէկուն մէջ խաչի նշմար կայ, որով զՔրիստոս նշանակել տայ հեղինակն:

91. Քառակերպեան աթոռի վրայ բազմած Փրկիչն՝ բիւզանդական կերպով, աջովն օրհնէ. ի ձախում՝ փոքր ծրար. զգեստը ներկեր են ի կապոյտ, լուսապսակին խաչաթեւքն՝ ի կարմիր: Ներքեւ՝ հակառակ դիրքով եւ նորագոյն գրչաւ, որ թուի զհինն այլայլած, կապոյտազգեստ թեւերը տարածած՝ փախչելու դիրքով մէկ մի, զոր հնաձեւ գիրն յայտնէ՝ **Երմիա**:

92. Թուի ի վերնատան տաճարի՝ կանգնած քահանայապետ մի, որ կ'օրհնէ դիմացի երեսը սեւացուցած ծերունին, որ ունի ի գրկին մանուկ մի, որոյ նրբագիծ դէմքն աղջկան թուին. քահանայապետն կարմիր հագած է, քովը՝ ուրիշ մի կանանչագեստ, նոյնպէս մօրուանի:

93. Նման առաջնոյն. քահանայապետն տաճարի միջում է, դիմացը՝ թուին աւելի ծովակիմ եւ Աննա, քան Յովսէփ եւ Մարիամ, որք կ'ընծայեն գառնուկ մի. մասամբ գունաւորեալ է պատկերս:

94. Կարմրագեստ երկայնամօրուս եւ յետոյ գունաւորեալ քահանայապետ կ'օրհնէ ձեռաց տակ կանգնած կոյսը՝ վայելչապէս գծագրեալ եւ գունաւորեալ կապոյտ կանանչ զգեստուք. իսկ փեսային միայն գլուխն գունաւորուած է. չորս այլ նրբագիծ եւ վայելուչ անձինք կան. մէկն, որ ամբողջ գծագրուած է, զարմացական ձեռք վերուցեր է:

95. Տիրամօրն եւ Եղիսաբեթի ողջագուրանքն՝ բարակ գծագրութեամբ, անշուշտ յԱւետարանէ մի ընդօրինակուած:

96. Երեսին վարի կողմն ցուցընէ զՅովսէփ ի քուն, առ որ գայ հրեշտակն (գունաւորեալ)՝ յայտնել Մարեմայ յղութեան սքանչելիքը. իսկ ի վերեւն թուի Յովսէփայ մտածելն արձակել զնա: Սա, որ թուի ի դէմն կանգնած եւ բազկունքը հրաժարական ձեւով կանգնած, կիսամաշ դիմօք չերեւիր կոյս մի. գլխապատն եւ վերարկուն կապոյտ ներկած են:

97. Այս երեսիս մէջ այլեւայլ մասամբ ճարտարապէս բովանդակուած են՝ Քրիստոս ծննդեալ եւ եղեալ ի մսրի, Տիրամայրն կրծնած յանկողնի. աստղն ճառագայթաձեւ. վերեւ՝ հրեշտակն աւետաւոր եւ այլ հրեշտակք. հովիւքն, ներքեւ՝ երեք մոգքն, զորս կ'ընդունի Յովսէփ:

98. Քրիստոսի քառասնօրեայ գալուստն կամ բերումն ի տաճարն. պատկերն ներկայացընէ Սիմէոն ծերունւոյ դարձնելն զՅիսուս առ մայրն, որ կարմիր եւ կապոյտ հագած է. ետեւը կանգնի ս. Յովսէփ. երկուքին միջոց՝ նոյնպէս լուսապսակ կին մի՝ թերեւս Աննա մարգարէուհին, բայց չէ պառաւ:

99. Այս երեսին մէջ տեղը գրաւողն աղիւսագոյն վայելչաձեւ էշն է, վրայինն ոչ է հեծած, այլ՝ նստած, եւ ի հակառակ կողմ դարձած. դէմքն խանգարած ըլլալով՝ չի փարատեր մեր տարակոյսը, թէ արդեօք սրբազան եւ գերագոյն Անձին է, որ յերուսաղէմ կու մտնէ. նոյնպէս ձեռաց դիրքն այլ՝ մէկն՝ դէպ առաջ կարկառած, միւսն՝ ծընկին ներքեւ. զգեստներն՝ կարմիր: Ռոմնոսի՝ երկար տա-

ճարի մի բարակ սիւներով պատ կ'երեւի. որուն դուռը կու բաղխէ կարմրագեստ եւ բոկոտն բոկասրունգ պատանի մի. դիմացի կողմն (որ է իշուն գաւակին եւ նստողին դէմքին) ժայռերու նման կապոյտ բարձրութիւն կայ, որ կարծես թէ տաճարին ճակատը խափանէ. եւ անոր վրայ ելնել ուզող կարծուի մէկ տղայակերպ մի՝ խաչանիշ լուսապսակաւ, որչափ նշմարեմ. սա հեծած է յ'ուսի հասակաւոր մարդու մի երկու ձեռքերն երկընցուցած, որպէս թէ ժայռը կ'ուզէ բռնել, կամ աչքերն կոյր են. միթէ երիքովի՞ կոյրն:

100. Մկրտութիւն Քրիստոսի, զոր երկայն հասակաւ, ճակտին վրայ՝ Յովհաննու ձեռքն, գլխուն վերեւ՝ աղաւնակերպ Ս. Հոգին. ետեւը՝ հինգ հրեշտակք, որ մկրտուողին սրբուելիք կու բերեն. Յիսուս ժայռի մի վրայ կեցած է եւ կոխէ զգլուխ զայն պատող վիշապին, անոր մօտ այլ սատանայի պիտի ըլլայ, բայց ինչ ձեւով է՝ չորոշուիր:

101. Կարմիր վերարկու մի վրան առած՝ մինակուն կեցած է Յիսուս յանապատի. դիմացը՝ փորձիչն, ձեռք երկընցուցած, խօսի. վերը՝ ճանկաւոր ոտքով նոյնն կամ ուրիշ փորձիչ մի՝ քար նետած է՝ իբր ըսելով առ Յիսուս. «Ասա՛, զի հաց լինիցի այն քարն»: Աւոր դիմաց պարապ

© National Library of Armenia

թողուած է եղեր, ուր յետոյ մէկն Յիսուս մի ձեւացուցեր է անարուեստ: Պատկերին մէկ անկիւնը՝ Քրիստոսի ոտից մօտ, երկու կկզած խոզանման կենդանիք գծուած են:

102. Այս երեսի վրայ այլ նկարուած է վերոյգրեալ փորձանքն. Յիսուս, չուրջառի նման կարմիր լօդիկ մի առած ի վրայն, մէկ ձեռքով անոր փէշերը բռնէ, միւսով՝ պրակիկ մի. դիմացը չատ մի քարեր թափած է, աղաչաւորի կերպով կեցած, թասի ձեւով գլխանոցով եւ կոկ հագուած



Թիւ 26

մօրուանի սատանայն, որոյ ոտից կեռիքն եւ լեզուարձակ օձակերպ ցցուած ագին յայտնեն ինչ խայտառակ խաբեբայ հինաւուրց

երեսին վարի կողմն ուրիշ տեսարան մի կայ՝ բաւական նուրբ գծած. առաքելոց նաւակօծիլն է, Պետրոսի՝ ի վերայ ալեաց երթալն եւ վախցած ատեն՝ Յիսուսի բռնելն զնա (Թիւ 26):

103. Հարսանիքն կանայ սեղանի վրայ՝ չատ հաց, քանի մի բաժակք. բազմականք չեն երեւիր, այլ միայն՝ Յիսուս ի միջի, Տիրամայրն՝ աղաչաւոր ի քովն, միւս կողմն այլ՝ փաթթոցաւոր

կանաչազգեստ մէկ մի՝ գուցէ տաճարապետն կամ փեսայն. Տիրամօր կողմէն այլ՝ դունէ մի կէս դուրս ելած ծառայ մի՝ վառած

ճրագ ի ձեռքն. վարի կողմ այլ նկարագծուած են վեց թակոյկքն, որոց մէկուն մէջ լուր լեցընէ ոմն, միւս ոմն այլ բռնէ պթակոյկն (Թիւ 27):

104. Այլակերպութիւն Տեառրն. Մովսէս եւ Եղիա՝ յայծմէ եւ յահեկէ, թմրած աշակերտքն՝ ի ստորոտ լերինն:

105. Ղազարու յարութիւնն, ինչպէս սովորաբար նկարուի յա-



Թիւ 27

ետարանս, առ ոտս Յիսուսի մինակ մէկ քոյրն կայ՝ պագնելով:

106. Յիսուսի մուտքն Երուսաղէմ. այս տեղ այլ նստած է Նա իշուն վրայ, բայց քովընտի. գունաւորեալ անձինք կան չուրջը, բայց չատ մաշուած, մանաւանդ՝ դէմքերն:

107. Ցետին ընթրիքն. հինգ-վեց անձ միայն կ'երեւին. մէկ անմօրուս մի բարձր տեղ նստողի (որոյ դէմքն խանգարած է) գրկել կարծուի, անշուշտ Յովհաննէս՝ «որ անկաւ ըզանջօքն Յիսուսի»:

108. Ոտնլուայն. առաքելոց ոտանք, գունաւորուած ըլլալով, դէմքերնին, որ բաւական բարակ գծագրուած են, խանգարուեր են. Յիսուսն՝ կանաչազգեստ, չափազանց նեղ եւ երկայն:

109. Ցուդայի մատնութիւնն, Քրիստոսի (Որոյ դէմքն խանգարուած է ներկով) ըմբռնումն: Այս պատկերիս գծագրութեան ոճն եւ դէմքերն կու տարբերին յայլոց. թուի յեւրոպական գրոց առնուած:

110. Խաչելութիւն. Յիսուս եւ խաչն կարմիր ներկած են, միայն Քրիստոսի գոգնոցն՝ կանաչ. նոյնպէս գունաւորեալ Տիրամայրն, որոյ քով գրուած է իր զգեստուց գունոց նկատմամբ. խաչին միւս կողմը կեցող եւ լացողն կանաչազգեստ՝ կի՞ն է, թէ՞ Ցովհ. Աւետարանիչ:

111. Թաղումն Քրիստոսի. գունաւորելով խանգարուած է պատկերն. անձանց մէկուն անունն գրուած է Նիկոդէմոս:

112. Նոյնպէս ներկելով խանգարուած է այս պատկերս այլ, որ է Քրիստոսի էջքն ի դժոխս. քարայրի մէջ կեցած է՝

© National Library of Armenia

իբրեւ գետին չկոխելով, Ադամայ ձեռքէն բռնած՝ ազատելու: Գուռնոց խառնակութեան միջէն կ'երեւին նրբագիծ դէմքեր:

113. Գարապ Թողուած է այս երեսս. յետոյ մէկն անշնորհք մարդաձեւ մի գծեր է:

114. Կարմրագիծ Աւետումն. Գաբրիէլ ցուցընէ առ Կոյսն զՍուրբ Հոգին՝ «ի վերայ քո եկեսցէ» ըսելով: Այս պատկերս այլ եւրոպական հնարք է զգեստուց ծալքն շատ լաւ նկարած:

115. Ջորս Աւետարանիչք՝ իրենց նշանակներով. Մատթէոսի հրեշտակն իրեն կլոր բան մի ներկայացընէ. Յովհաննու քով կայ եւ Գրոխորոն, երկուքին միջոց՝ արծիւն:

116. Գարապ Թողուած:

117. Ջորս կլորակք՝ կանաչ եւ կարմիր բազմամանուած զարդուք: Վերեւն՝ երկու կարմրագիծ կենդանիք՝ մէկն՝ եզանման, բայց երկայնացուվ. միւսոյն միայն երկայն եղջիւրները կ'երեւին եւ յայտնեն զայն:

118. Կանաչ ու կարմիր գոյներով երկայն տափակ զարդ մի՝ թուչնովք, բարակ (որսի) չուններով եւ վիշապով ճարտարապէս բազադրած: Այս վերջին երեսին ներքեւ գրուած է Դեղոց խրատն[1]:

1 Տե՛ս «Գանձասար», Գ էջ 330:

© National Library of Armenia